48039



Շ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Պատկեհանոցին
480039

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Ց. ՊՕՅԱՃԵԱՆ

1891

ՀԱՅԿԱԶՈՒՆՅԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۲۶ ذی‌الحجه ۳۰۸ و ۲۰ تموز ۳۰۷ تاریخلی و ۳۸۰ نومرولی رخصتنامه‌سیله نشر اولنمشدر

مصارف آمریقان بیبل شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع اولنمشدر

ՅԱՆԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԱՒԵՏԱՐԱՆ		ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ	...	28	...	1
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ	,,	16	,,	80
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ	,,	24	,,	130
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ	,,	21	,,	214
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ	,,	28	,,	278
ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ				
ԱՌ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՍ	,,	16	,,	360
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ Ա.	,,	16	,,	391
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ Բ.	,,	13	,,	427
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ	,,	6	,,	449
ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ	,,	6	,,	461
ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ	,,	4	,,	472
ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ	,,	4	,,	481
ԱՌ ԹԵՍԱՂՈՆ. Ա.	,,	5	,,	489
ԱՌ ԹԵՍԱՂՈՆ. Բ.	,,	3	,,	496
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Ա.	,,	6	,,	500
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Բ.	,,	4	,,	510
ԱՌ ՏԻՏՈՍ	,,	3	,,	516
ԱՌ ՓԻԼԻՄՈՆ	,,	1	,,	520
ԱՌ ԵԲՐԱՑԵՑԻՍ	,,	13	,,	522
ԹՈՒՂԹ ՅԱԿՈԲՈՒ ԸՆԴՀ.	,,	5	,,	547
ՊԵՏՐՈՍԻ Ա.	,,	5	,,	556
ՊԵՏՐՈՍԻ Բ.	,,	3	,,	565
ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա.	,,	5	,,	571
ՅՈՎՀԱՆՆՈՒ Բ.	,,	1	,,	580
ՅՈՎՀԱՆՆՈՒ Գ.	,,	1	,,	581
ՅՈՒԴԱՅԻ ԸՆԴՀ.	,,	1	,,	582
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀ.	,,	22	,,	585

Ա.ԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի, Դաւիթի որ-
դւոյն, Աբրահամու որդւոյն։
2 Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅա-
կոբ. Յակոբ ծնաւ զՅուդա և զեղբարս նորա.
3 Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա Թամարէ. Փա-
4 րէս ծնաւ զԵսրոն. Եսրոն ծնաւ զԱրամ. Արամ
ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոն.
5 Նաասոն ծնաւ զՍաղմոն. Սաղմոն ծնաւ զԲոոս
Ռահաբէ. Բոոս ծնաւ զՈվբէդ Հռութէ. Ովբէդ
6 ծնաւ զԵսսէ. Եսսէ ծնաւ զԴաւիթ թագաւոր.
Դաւիթ թագաւոր ծնաւ զՍողոմոն Ուրիայի կնո-
7 ջէն. Սողոմոն ծնաւ զՌոբովամ. Ռոբովամ
8 ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ զԱսա. Ասա ծնաւ
զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ. Յով-
9 րամ ծնաւ զՈզիա. Ոզիա ծնաւ զՅովաթամ.
Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ զեզեկիա.
10 Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն.
11 Ամոն ծնաւ զՅովսիա. Յովսիա ծնաւ զՅեքոնիա
և զեղբարս նորա բաբելոնեան գերութեան
12 ատենները. Բաբելոն գերութեան երթալէն ետ-
քը Յեքոնիա ծնաւ զՍաղաթիէլ. Սաղաթիէլ
13 ծնաւ զԶօրաբաբէլ. Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ.
Աբիուդ ծնաւ զեղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱ-
14 զովր. Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱ-
15 քին. Աքին ծնաւ զեղիուդ. Եղիուդ ծնաւ զեղի-
ազար. Եղիազար ծնաւ զՄատթան. Մատթան
16 ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զՅովսէփ, զայր

Մարեւմայ, որմէ ծնաւ Ցիսուս, որ կ'կոչուի Քրիս-
17 տոս։ Արդ բոլոր ազգերն Աբրահամէ մինչեւ Դա-
ւիթ՝ չորեքտասան ազգ, և Դաւիթէ մինչեւ Բա-
բելոնեան գերութիւնը՝ չորեքտասան ազգ, և
Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս՝ չո-
րեքտասան ազգ։

18 Եւ Ցիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս.
Անոր մայրը Մարիամ, Յովսեփայ խոստա, դեռ
իրարու փոյ չեկած՝ Սուրբ Հոգիէն յղացած
19 գտնուեցաւ։ Եւ Յովսէփ անոր այրն արդար
էր եւ ըլլալով և չուզելով խայտառակ ընել զնա,
20 խորհեցաւ գաղտ արձակել զնա։ Եւ մինչ նա
զայս կը խորհէր, ահա Տէրոջը հրեշտակը երազի
մէջ երեւցաւ անոր և ըսաւ, Յովսէփ, որդի
Դաւիթի, մի՛ վախնար առնուլ քեզ քու կինդ
Մարիամ, քանզի այն որ ի նմա ծնած է՝ Սուրբ
21 Հոգիէն է։ Եւ որդի մը պիտի ծնանի, և անոր
անունը *Ցիսուս դնես, քանզի նա պիտի փրկէ
22 իւր ժողովուրդն իրենց մեղքերէն։ Եւ այս ամե-
նը եղաւ որ կատարուի Տէրոջմէ բսուածը մար-
23 գարէին բերնով, որ կ'ըսէ, Ահա կոյսը պիտի
յղանայ և պիտի ծնանի որդի, և անոր անունը
պիտի կոչեն Իմմանուէլ, որ կը թարգմանուի Աս-
24 տուած ընդ մեզ։ Եւ Յովսէփ փունկն արթննա-
լով, ըրաւ ինչպէս որ Տէրոջը հրեշտակն անոր
25 հրամայեց, և իւր կինը փոխն առաւ։ Եւ չէր գի-
տեր զնա մինչեւ ծնաւ իւր անդրանիկ որդին, և
անոր անունը դրաւ Ցիսուս։

ԳԼ. Բ

1 Եւ երբ Ցիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհեմի
մէջ Հերովդէս Թագաւորին օրերը, ահա արեւել-

*Այսինքն՝ Փրկիչ

2 քէն մոգեր եկան Երուսաղէմ, եւ ըսին, Ո՞ր է
Հրեից Թագաւորը որ ծնաւ. քանզի մենք ա-
րեւելքի մէջ տեսանք անոր աստղը, և եկանք
3 երկրպագութիւն ընել անոր։ Եւ երբ Հերովդէս
Թագաւորը լսեց, և բոլոր Երուսա-
4 ղէմ անոր հետ. Եւ ժողվելով բոլոր քահանայա-
պետները և ժողովրդեան դպիրները, հարցուց
5 անոնց Թէ ո՛ր պիտի ծնանէր Քրիստոս։ Եւ ա-
նոնք ըսին անոր, Հրէաստանի Բեթլեհեմի մէջ.
քանզի այսպէս գրուած է մարգարէին ձեռքով.
6 Եւ դուն, Բեթլեհէմ, Յուդայի երկիր, Յուդայի
իշխաններուն մէջ բնաւ փոքր չես. քանզի քեզմէ
պիտի ելլէ իշխան, որ պիտի հովուէ իմ ժողո-
7 վուրդս զԻսրայէլ։ Անոնմէն Հերովդէս գաղտ
կոչեց մոգերը, և ստուգեց անոնցմէ ատեն
8 երեւման աստղը. Եւ զանոնք Բեթլեհէմ ղրկելով
ըսաւ, Գնացէք ստուգեցէք այն մանկան վրայ,
և երբ գտնէք, իմացուցէք ինձ, որ և ես գամ
9 երկրպագութիւն ընեմ անոր։ Եւ երբ անոնք լը-
սեցին ըզ-Թագաւորէն, գնացին. և ահա աստ-
ղը զոր արեւելքի մէջ տեսած էին՝ գնաց անոնց
առջեւէն, մինչեւ եկաւ տեղւոյն վրայ ուր
10 էր մանուկն, երբ տեսան աստղը, մեծ ուրախու-
11 թեամբ ուրախացան։ Եւ տունը մտնելով տեսան
մանուկը իւր մօրը Մարեւմայ հետ, և ինկան
երկրպագութիւն ըրին անոր, և իրենց գանձերը
բանալով ընծաներ տուին անոր. ոսկի և կնդրուկ
12 և գմուռս։ Եւ հրաման առնելով երազի մէջ որ
նորէն չդառնան Հերովդեսի, ուրիշ ճամբով գնա-
ցին իրենց երկիրը։
13 Եւ երբ անկէ գնացին անոնք, ահա Տէրոջը հր-
եշտակը երազի մէջ երեւնալով Յովսեփայ և ըսաւ,
Ելլ, առ մանուկը և անոր մայրը, և փախիր Ե-
գիպտոս, և հոն կեցիր մինչեւ որ ըսեմ քեզ,
քանզի Հերովդէս պիտի փնտռէ մանուկը կորու-

14 սանեկաւ համարւո եւ նա եկաւ, առաւ մանուկը
և անոր մայրը գիշերայն և գնաց Եգիպտոս, և
15 հոն էր մինչև Հերովդեսի մահը. Որպէս զի կա-
տարուի Տէրոջմէ ըսուածը մարգարէին բերնով,
որ կ'ըսէ, Եգիպտոսէ կոչեցի որդիս։
16 Անատեն երբ տեսաւ Հերովդես Թէ *խաբուե-
ցաւ մոգերէն, սաստիկ բարկացաւ, և դրկեց
ջարդեց Բեթլեհեմի և անոր ամէն սահմաններուն
մէջ գտնուած բոլոր տղայք երկու տարեկնէ
վար, այն ժամանակին համեմատ զոր ստուգեց
17 մոգերէն։ Անատեն կատարուեցաւ Երեմիա մար-
18 գարէին բերնով ըսուածը, որ կ'ըսէ, Ռամայի
մէջ ձայն լսուեցաւ, ողբ, լաց և մեծ կոծ. Ռա-
քել կու լար իր որդւոց համար, և չէր ուզեր
մխիթարուիլ, քանզի չկային։
19 Եւ երբ Հերովդես մեռաւ, ահա Տէրոջը հրեշ-
տակը Եգիպտոս երազի մէջ երեւեցաւ Յովսեփայ,
20 եւ ըսաւ, Ել, առ մանուկը և անոր մայրը, և
գնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան անոնք որ
21 մանկան անձը կը խնդրէին։ Եւ նա ելաւ, առաւ
մանուկը և անոր մայրը և եկաւ Իսրայէլի երկի-
22 րը։ Իսկ երբ լսեց Թէ Արքեղայոս Թագաւորեց
Հրէաստանի փոխանակ իր հօրը Հերովդէ, վախ-
ցաւ հոն երթալ. և երազի մէջ հրաման առնելով
23 գնաց Գալիլեայի կողմերը։ Եւ եկաւ բնակեցաւ
Նազարէթ ըսուած քաղաքը, որպէս զի կատար-
ուի մարգարէներուն խօսքը Թէ Նազովրեցի
պիտի կոչուի։

Գլ. Գ

1 Ա յն օրերը Յովհաննէս մկրտիչ եկաւ, և կը քա-
2 րոզէր Հրէաստանի անապատին մէջ, եւ կ'ըսէր,

*Յունն Ծաղրեցաւ.

Ապաշխարեցէք, քանզի երկնից Թագաւորու-
3 Թիւնը մօտեցած է։ Վասն զի այս այն է՝ որուն
համար ըսուի մարգարէին բերնով ըսուեցաւ, որ
կ'ըսէ, Անապատի մէջ կանչողի ձայն, Տէրոջը
ճամբան պատրաստեցէք, ուղղեցէք անոր շա-
4 ւիղները։ Եւ Յովհաննէս ուներ հագուելիք ուղտի
մազէ և իր մէջքը գօտի մաշկեղէն. և անոր
5 կերակուրն էր մարախ և վայրենի մեղր։ Անատեն
Երուսաղէմ և բոլոր Հրէաստան և Յորդանանու-
6 բոլոր կողմերը կ'ելլէին անոր, Եւ կը մկրտուէին
անկէ Յորդանանու մէջ, և կը խոստովանէին
7 իրենց մեղքերը։ Եւ երբ անսաւ փարիսեցիներէն
և սադուկեցիներէն շատերը իր մկրտութեանը
եկած, ըսաւ անոնց, Իժերու ծնունդք, ո՞վ ի-
8 մացուց ձեզ փախչել գալու բարկութենէն։ Ու-
րեմն բերէք պտուղ արժանի ապաշխարութեան.
9 Եւ մի՛ խորհիք դուք յանձինս ձեր ըսել, Թէ
Մենք ունինք հայր զԱբրահամ. քանզի կ'ըսեմ
ձեզ որ Աստուած կարող է այս քարերէն հանել
10 որդիներ Աբրահամու։ Հիմա կացինը կը դրուի
ծառերուն արմատին. ուստի ամէն ծառ որ բարի
պտուղ չբերէր՝ կը կտրուի և կը նետուի կրակը։
11 Ես զձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան
համար, բայց այն որ իմ ետեւէս կու գայ զօրա-
ւոր է քան զիս, և ես անոր կօշիկները կրելու
արժանի չեմ. Նա զձեզ պիտի մկրտէ Հոգւով
12 Սրբով և հրով. Որոյ հեծանոցը իր ձեռքն է,
և իր կալը պիտի մաքրէ և ցորենը պիտի ժողվէ
համբարը, և յարդը պիտի այրէ անշէջ հրով։
13 Անատեն Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ
առ Յովհաննէս մկրտուիլ անկէ։ Եւ Յովհաննէս
14 կ'արգելէր զնա և կ'ըսէր, Ինձ պէտք է քեզնէ
15 մկրտուիլ, և դու ինձ՞ կու գաս։ Յիսուս պա-
տասխան տուաւ և ըսաւ անոր, Թող տուր այժմ,
քանզի այսպէս կը վայելէ մեզ որ բոլոր արդա-

բութիւնը կատարենք. ապա թոյլ տուաւ անոր,
16 եւ երբ Յիսուս մկրտեցաւ, իսկոյն դուրս ելաւ
ջուրէն, և ահա երկինք բացուեցան անոր, և
տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնւոյ պէս կ'իջ-
17 նէր և կու գար անոր վրայ։ Եւ ահա յերկինէ
ձայն էլաւ որ կ'ըսէր, Դա է իմ սիրելի Որդիս,
որուն հաճած եմ։

Գլ. Դ

1 Ապա Հոգին Յիսուս վարեցաւ Սուրբ Հոգիէն յա-
2 նապատ Սատանային փորձուելու։ Եւ քառասուն
տիւ և քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը
անօթեցաւ։
3 Եւ փորձողը մօտենալով անոր ըսաւ, Եթէ Որ-
դի ես Աստուծոյ, ըսէ որ այս քարերն հաց ըլլան։
4 Նա պատասխան տուաւ և ըսաւ, Գրուած է Թէ
Ոչ միայն հացիւ կ'ապրի մարդ, այլ ամէն խօս-
քով որ կ'ելլէ Աստուծոյ բերնէն։
5 Ապա Սատանան առաւ տարաւ զնա սուրբ
քաղաքը, և կեցուց զնա տաճարին աշտարակին
6 վրայ, եւ ըսաւ անոր, Եթէ Որդի ես Աստուծոյ,
ձգեզ ասկէ վար նետէ, քանզի գրուած է Թէ
Իւր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի հա-
մար, և իրենց ձեռաց վրայ պիտի վերցուենն
7 ձգեզ, որպէս զի քարի չզարնես ոտքդ։ Յիսուս
ըսաւ անոր, Դարձեալ գրուած է Թէ Քու Տէր
Աստուածդ չփորձես։
8 Սատանան նորէն առաւ հանեց զնա շատ բարձր
լերան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր
9 Թագաւորութիւնները և անոնց փառքը։ Եւ ը-
սաւ անոր, Ա յս ամէնը քեզի կու տամ, Եթէ
10 իյնաս երկրպագութիւն ընես ինձ։ Անատեն Յի-
սուս ըսաւ անոր, [Երթա] գնա, Սատանայ, քան-
զի գրուած է Թէ Քու Տէր Աստուծոյդ երկրպա-

11 գութիւն ընես, և զնա միայն պաշտես։ Անատեն
Սատանան Թողուց զնա. և ահա հրեշտակներ
եկան և սպասաւորութիւն կ'ընէին անոր։
12 Եւ երբ լսեց Յիսուս Թէ Յովհաննէս մատնուե-
13 ցաւ, ելաւ գնաց Գալիլեա։ Եւ Թողուլով զնազա-
րէթ եկաւ բնակեցաւ Կափառնայում Ծովեզերեայ
տէրէ, Զաբուղոնի և Նեփթաղիմայ սահմաններ-
14 րուն մէջ. Որպէս զի կատարուի Եսայի մարգա-
15 բէին բերնով ըսուած խօսքը, Զաբուղոնի երկիրը
և Նեփթաղիմայ երկիրը, Ծովու ճամբով Յորդա-
նանու անդիի կողմը, Հեթանոսաց Գալիլեան.
16 Խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տե-
սաւ, և լոյս ծագեցաւ անոնց որ մահուան երկրին
17 և սուերին մէջ կը նստէին, Ա յնուհետև Յիսուս
սկսաւ քարոզել և ըսել, Ապաշխարեցէք, քանզի
երկնից Թագաւորութիւնը մօտ է։
18 Երբ Յիսուս կը պտըտէր Գալիլեացւոց ծովուն
քովերը, տեսաւ երկու եղբայրներ, Պետրոս կոչ-
ուած Սիմոնը և անոր եղբայրը զԱնդրէաս, որ
ծովը ուռկան կը նետէին, քանզի ձկնորս էին.
19 Եւ ըսաւ անոնց, Իմ հետևէս եկէք, և ձեզ մար-
20 դոց որսորդ ընեմ. Եւ անոնք իսկոյն Թողուցին
21 ուռկանները և անոր հետևէն գնացին։ Եւ անկէ
յառաջ երթալով տեսաւ ուրիշ երկու եղբայրներ,
Զեբեդեան Յակոբոսը և անոր եղբայրն զՅովհան-
նէս նաւին մէջ իրենց հօրը Զեբեդէոսի հետ, երբ
իրենց ուռկանները կը կարկտէին. և կոչեց զա-
22 նոնք. Եւ անոնք վազվազակի Թողուցին նաւը և
իրենց հայրը, և գնացին անոր հետևէն։
23 Եւ Յիսուս պտըտելով բոլոր Գալիլեա, կը սոր-
վեցուներ անոնց ժողովրդանոցներուն մէջ, և
արքայութեան աւետարանը կը քարոզէր, և ժո-
ղովուրդին մէջ ամէն տեսակ հիւանդութիւն և
24 ամէն տեսակ ցաւ կը բժշկէր։ Եւ անոր համբաւը
տարածուեցաւ բոլոր Սիւրիա, և անոր բերնն

բոլոր հիւանդները որ կերպ կերպ ցաւերով և
տանջանօք կը նեղուէին, և դիւահարները և
լուսնոտները և անդամալոյծները. և բժշկեց զա-
25 նոնք, Եւ շատ ժողովուրդներ անոր հետէն կ'եր-
թային Գալիլեայէ և Դեկապոլսէ և Երուսաղեմէ
և Հրէաստանէ և Յորդանանու անդիի կողմէն,

Գլ. Ե

1 Եւ տեսնելով ժողովուրդը ելաւ լեռը, և երբ
2 նստաւ հոն, աշակերտները գացին քովը. Եւ բե-
րանը բանալով կը սորվեցուներ անոնց և կ'ըսէր
3 Երանի հոգւով աղքատաց, քանզի երկինից Թա-
4 գաւորութիւնն անոնց է։ Երանի սգաւորաց,
5 քանզի անոնք պիտի մխիթարուին։ Երանի հեզոց,
6 վասն զի անոնք պիտի ժառանգեն զերկիր։ Երա-
նի անոնց որ անօթի և ծարաւի են արդարու-
7 թեան, վասն զի անոնք պիտի յագեցնան։ Երանի
ողորմածաց, վասն զի անոնք ողորմութիւն պիտի
8 գտանեն։ Երանի անոնց որ սրտով մաքուր են,
9 քանզի անոնք պիտի տեսնեն զԱստուած։ Երանի
խաղաղարարաց, վասն զի անոնք որդիք Աստու-
10 ծոյ պիտի կոչուին։ Երանի անոնց որ հալածուած
են արդարութեան համար, քանզի երկինից Թա-
11 գաւորութիւնն անոնց է։ Երանի ե՛ձեզ երբ կը
նախատեն զձեզ և կը հալածեն և ամէն տեսակ ա-
մէն կերպ դէշ խօսք կը խօսին ձեր վրայ ինձի
12 համար. ցնծացէք և ուրախ եղէք, քանզի ձեր
վարձքը շատ է երկինքը. վասն զի այս կերպով
հալածեցին մարգարէները որ քան զձեզ առաջ
էին։
13 Դուք էք աղ երկրի. իսկ եթէ աղը կորսըն-
ցնէ իւր համը, ինչով պիտի աղուի. այնուհետև
բանի մը չգայր, միայն թէ դուրս նետուելու և
14 մարդոց ոտքին տակ կոխուելու։ Դուք էք լոյս

աշխարհի. քաղաք մը որ լերան վրայ կեցած է՝
15 չկրնար պահուիլ։ Եւ ճրագը չեն վառեր և դներ
գրուանի տակ, այլ աշտանակի վրայ, և լոյս
16 կու տայ բոլոր անոնց որ տանը մէջ են։ Այնպէս
թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջև, որ
տեսնեն ձեր բարի գործերը, և փառաւորեն ձեր
Հայրը որ երկինքն է։
17 Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մար-
գարէներն արձլու. չեկայ արձլու, այլ կատա-
18 րելու։ Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզ, Մինչև
երկինք և երկիր անցնին, օրէնքէն չոմա մը կամ
նշանագիր մը պիտի չանցնի, մինչև բոլորը կա-
19 տարուի։ Ուստի ով որ այս փոքրագոյն պատ-
ուիրաններուն մին ուրէ, և այնպէս սորվեցնէ
մարդոց, նա փոքր պիտի կոչուի երկնից Թագա-
ւորութեան մէջ. բայց ով որ ընէ և սորվեցնէ,
նա մեծ պիտի կոչուի երկնից Թագաւորութեան
20 մէջ։ Քանզի կ'ըսեմ ձեզ, եթէ ձեր արդարու-
թիւնն աւելի չըլլայ քան դպիրներուն և փարի-
սեցիներուն՝ ուրեմն ընաւ պիտի չմտնէք
երկնից Թագաւորութիւնը։
21 Լսած էք որ բսուներուն նախնիներուն, Սպա-
նութիւն մի՛ ընէր. և ով որ սպանութիւն ընէ,
22 դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ։ Բայց ես
կ'ըսեմ ձեզ, Ով որ իւր եղբօրը բարկանայ տա-
րապարտուց, դատաստանի պարտաւոր պիտի
ըլլայ. և ով որ իւր եղբօրն ըսէ, Ծիմար, պար-
տաւոր պիտի ըլլայ տանջի. և ով որ ՚ի՛ նէ՛ըն
ըսէ Անմիտ, գահնեի հրոյն պարտաւոր պիտի ըլ-
23 լայ։ Ուրեմն, եթէ դու ընծայդ սեղանին վրայ
բերես, և հոն միտդդ գայ թէ դու եղբայրդ փեղ
24 դէմ բան մը ունի, հոն թող դու ընծայդ սեղա-
նին առջև, և գնա հաշտուէ նախ եղբօրդ հետ,
25 և ապա եկու մատուցանել ընծայդ։ Դու ասոնիդ
հետ միաբանէ վաղագոյն մինչ ճամբան ես անոր

հետ. գուցէ ասոնք մտանէ զբեզ դատաւորին,
26 և դատաւորը՝ դահճին, և բանտ դրուիս. ճշմարիտ կ'ըսեմ քեզ, պիտի չելլես անկէ մինչև հատուցանես վերջի նաքարակիսը։
27 Լսած եք որ ըսուեցաւ՝ Շնութիւն մի՛ ըներ։
28 Բայց ես կ'ըսեմ ձեզ, Ով որ կնոջ կը նայի ցանկանալու համար անոր, իր սրտին մէջ շնացաւ
29 անոր հետ։ Արդ եթէ քու աչդ կը գայթակղեցունէ զքեզ, հանէ զայն և նետէ քեզմէ, վասն զի լաւ է քեզ որ անդամներդ մին կորսուի, և
30 բոլոր մարմինդ չնետուի դժոխք։ Եւ եթէ աջ ձեռքդ կը գայթակղեցունէ զքեզ, կտրէ զայն և նետէ քեզմէ, քանզի լաւ է քեզ որ անդամներդ մին կորսուի, և բոլոր մարմինդ չնետուի
31 դժոխք։ Ասկէ՛ւ ըսուեցաւ թէ Ով որ իր կինը կ'արձակէ, թող տայ անոր արձակման թուղթ։
32 Բայց ես կ'ըսեմ ձեզ, Ով որ իր կինը կ'արձակէ առանց պատճառի պոռնկութեան, պատճառ կ'ընէայ անոր չնութիւն ընելու, և ով որ այն արձակուածն առնու՝ չնութիւն կը գործէ։
33 Դարձեալ լսած եք որ ըսուեցաւ նախնիներուն, Սուտ երդում մի՛ ըներ, այլ երդումներդ վճարէ
34 Տէրոջը։ Բայց ես կ'ըսեմ ձեզ, Ամենևին երդում մի՛ ընէք, ոչ երկինէ վասն որ Աստուծոյ աթոռն
35 է, եւ ոչ երկրի վասն որ անոր ոտից պատուանդանն է, և ոչ Երուսաղէմի վասն որ մեծ թագաւորին քաղաքն է։ Եւ ոչ քու գլխուդ վասն
36 երդում ընես, քանզի չես կրնար մազ մը սպիտակ կամ սեւ Ա՛յլ ձեր խօսքն ըլլայ, այոն այո, և ոչն ոչ. և աւելին քան զայս չարէն կուգայ։
37
38 Լսած եք որ ըսուեցաւ, Աչի ընդ աչի և ատամն ընդ ատման։ Բայց ես կ'ըսեմ ձեզ,
39

*Ոմանք՝ ՀԸՅՍՈՒՍ նախնիներուն

Հակառակ մի՛ կենար չարին, այլ եթէ ոք ապտակ
40 զարնէ աջ ծնօտիդ, դարձուր անոր միւսը։ Եւ ով որ կ'ուզէ քեզի հետ դատ վարել և առնուլ
41 չալուիդ, թող տուր անոր վերարկուդ ևս։ Եւ ով որ պահակ բռնէ զքեզ և մղոն մը ձամբայ տանի,
42 գնա անոր հետ երկու։ Քենէ ուզողին տուր, և երես մի՛ դարձներ անկէ որ կ'ուզէ փոխ առնուլ քենէ։
43 Լսած եք որ ըսուեցաւ, Դուն ընկերդ սիրես և
44 թշնամիդ ատես։ Բայց ես կ'ըսեմ ձեզ, Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք զձեզ անիծողները, բարի ըրէք անոնց որ զձեզ կ'ատեն, և աղօթք ըրէք անոնց համար որ զձեզ կը չարչարեն և
45 կը հալածեն. Որպէս զի որդիք ըլլաք ձեր երկնաւոր Հօր. քանզի իր արեւը կը ծագեցունէ թէ չարաց և թէ բարեաց վրայ, և կը ղրկէ անձրև
46 թէ արդարոց և թէ մեղաւորաց վրայ։ Վասն զի եթէ դուք սիրէք զձեզ սիրողները, ի՞նչ վարձք կ'ունենաք. ոչ ապաքէն մաքսաւորք ևս նոյնը
47 կ'ընեն, Եւ եթէ ձեր եղբայրներուն միայն ողջոյն տաք, ի՞նչ աւելի կ'ընէք. ոչ ապաքէն մաքսա-
48 տորք ևս նոյնը կ'ընեն, Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է։

ԳԼ. Զ

1 Զգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջև չընէք անոնց երեւնալու համար, եթէ ոչ վարձք չէք առնուր ձեր Հօրմէն որ երկինքն է։
2 Ուստի երբ ողորմութիւն կ'ընես, առջևդ փող մի՛ հնչեցնեներ, ինչպես կ'ընեն կեղծաւորները ժողովարաններու և փողոցներու մէջ, որպէս զի փառաւորուին մարդոցմէ. ճշմարիտ կ'ըսեմ ձեզ,
3 անոնք իրենց վարձքն առած կ'ըլլեն։ Իսկ երբ դուն ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող

4 չգիտնայ ինչ կը գործէ ալ ձեռքդ. Որպէս զի
փու ողորմութիւնդ ծածուկ ըլլայ, և փու Հայրդ
որ ծածուկը կը տեսնէ, հատուցում պիտի ընէ
քեզ յայտնապէս։
5 Եւ երբ աղօթք կ'ընես, նման չըլլաս կեղծա-
ւորներուն, որ կը սիրեն ժողովրդանոցներու մէջ
և հրապարակներու անկիւնները կայնելով աղօթք
ընել, որպէս զի երևնան մարդոց. Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզ, անոնք իրենց վարձքն առած կ'ըլլան։
6 Իսկ դու երբ աղօթք կ'ընես, մտիր փու ներքին
սենեակդ և փակ դուռդ, և աղօթք ըրէ փու
Հօրդ որ ի ծածուկ. և փու Հայրդ որ ծածուկը
կը տեսնէ, հատուցում պիտի ընէ քեզ յայտնա-
7 պէս։ Եւ երբ աղօթք կ'ընէք, հեթանոսներու
պէս չսաստիս մի՛ ըլլաք, վասն զի կը կարծեն
թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին։
8 Ուրեմն անոնց չնմանիք, քանզի գիտէ ձեր Հայրը
ինչ որ պիտոյ է ձեզ դեռ դուք անկէ չխնդրած։
9 Ուստի աղօթք ըրէք դուք այսպէս։

Ով Հայր մեր որ յերկինս ես, փու անունդ
10 սուրբ ըլլայ։ Գու թագաւորութիւնդ գայ, փու
կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի
11 վրայ։ Մեր հանապազորդ հացը տուր մեզ այսօր։
12 Եւ ներէ մեզ մեր պարտքերը, ինչպէս և մենք
13 կը ներենք մեր պարտապաններուն։ Եւ մի՛ տաներ
զմեզ ի փորձութիւն, այլ ազատէ զմեզ չարէն.
քանզի քոյին է թագաւորութիւնը և զօրու-
թիւնը և փառքը յաւիտեան։ Ամէն։
14 Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց
յանցանքը, ձեր երկնաւոր Հայրն ես կը ներէ
15 ձեզ. Իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց
յանցանքը, ձեր Հայրն ես չներէր ձեզ ձեր յան-
ցանքը։
16 Եւ երբ ծոմ կը պահէք, մի՛ ըլլաք տխուր կեղ-
ծաւորներուն պէս. քանզի իրենց երեսները կ'աւ-

րեն որպէս զի մարդոց երևնան թէ ծոմ կը
պահեն. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Անոնք իրենց
17 վարձքն առած կ'ըլլան։ Բայց դուն երբ ծոմ կը
18 պահես, օծէ գլուխդ և լուա երեսդ, Որ չերևնաս մարդոց իրըև ծոմ պահող, այլ փու Հօրդ որ ի ծածուկ. և փու Հայրդ որ ծածուկը կը տեսնէ, հատուցում պիտի ընէ քեզ*։
19 Մի՛ դիզէք ձեզ գանձեր երկրի վրայ, ուր ցեցը և ժանկը կ'ապականեն, և ուր գողերը պոռ կը
20 ծակեն և կը գողնան. Այլ դիզեցէք ձեզ գանձեր յերկինս, ուր ոչ ցեցը և ոչ ժանկը կ'ապականէ, և ոչ գողերը պոռ կը ծակեն և կը գողնան։
21 Քանզի ուր է ձեր գանձը, հոն պիտի ըլլան նաև
22 ձեր սիրտերը։ Մարմնոյն ճրագն աչքն է. ապա եթէ փու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսա-
23 ւոր կ'ըլլայ. Բայց եթէ փու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեմն եթէ լոյսը որ ի
24 քեզ է խաւար է, խաւարը ո՛րչափ է։ Մարդ չկրնար երկու տերանց ծառայել. քանզի կամ զմին պիտի ատէ և միսը սիրէ, կամ թէմոյն պիտի յարի՝ և միսը պիտի արհամարհէ. չէք կրնար
25 ծառայել Աստուծոյ և մամոնային։ Ուստի կ'ըսեմ ձեզ, Հոգ մի՛ ընէք ձեր կենաց համար թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի խմէք. և ոչ ձեր մարմիններուն համար՝ թէ ինչ պիտի հագնիք. ո՞չ ապագէն կեանքն աւելի է քան զկերակուր,
26 և մարմինը՝ քան զհանդերձ. Նայեցէք երկնից թռչուններուն, որ ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ չեռմարանի մէջ կը ժողվեն, և ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. ո՞չ ապագէն
27 դուք լաւ եք քան զնոսա։ Արդ ձենէ ո՞վ կրնայ հոգ ընելով իւր հասակին վրայ կանգուն մի յա-

*Ոմանք Հրապարակաւ յայտնապէս
†Կամ զմին պիտի մեծարէ

28 հերուէլ, նէ հանդերձի համար ինչո՞ւ հոգ կ'ընէք.
նայեցէք դաշտի չուչաններուն, ինչպէս կ'աճին.
29 ոչ կ'աշխատին և ոչ կը մանեն. բայց կ'ըսեմ ձեզ
որ Սողոմոն իսկ իւր բոլոր փառաւորութեան մէջ
30 չհագուեցաւ անոնց միոյն պէս։ Ուստի եթէ դաշ-
տի խոտը որ այսօր կայ և վաղիւ փուռը կը նետ-
ուի՝ Աստուած այնպէս կը հագուեցունէ, ապա
որչափ և առաւել ձեզ, Թերահաւատներ,
31 Ուրեմն հոգ մի՛ ընէք բսելով, Ի՞նչ պիտի ուտենք,
կամ Ի՞նչ պիտի խմենք, կամ Ի՞նչ պիտի հագ-
32 նինք. (Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները
կը խնդրեն.) վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ
33 թէ այդ բոլոր բաները պիտոյ են ձեզ. Բայց ա-
ռաջ խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը և
անոր արդարութիւնը, և այդ բոլոր բաները պիտի
34 արուին ձեզ. Ուստի վաղուան համար հոգ մի՛
ընէք. քանզի վաղուան օրն իրեն համար հոգ
պիտի ընէ. հերիք է օրուան իւր նեղութիւնը։

Գլ. Է

1 Մի՛ դատէք որ չդատուիք. (2) Քանզի ինչ դա-
տաստանով դատէք, անով պիտի դատուիք. և
3 ինչ չափով չափէք, անով պիտի չափուի ձեզ։ Եւ
ինչո՞ւ համար քոյ եղբօրդ աչքին շիւղը կը տես-
նես, և չես նայիր գերանին որ աչքիդ մէջ է։
4 Կամ ինչպէս կրնաս ըսել քոյ եղբօրդ, Թող
տուր աչքէդ շիւղը հանեմ. և ահա քու աչքիդ
5 մէջ գերան կայ, կեղծաւոր, առաջ քու աչքէդ
հանէ գերանը, և նաքը յստակ պիտի տեսնես որ
հանես շիւղը եղբօրդ աչքէն։
6 Սուրբ բանը չուներուն մի՛ տաք, և ձեր մար-
գարիտները խոզերուն առջև մի՛ նետէք, որ իրենց
ոտից տակ չկոխտոտեն զանոնք, և դառնան պա-
տառեն զձեզ։

7 Խնդրեցէք, և պիտի արուի ձեզ. փնտռեցէք,
և պիտի գտնէք. բաղխեցէք, և պիտի բացուի
8 ձեզ. վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնու,
և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ կը բաղ-
9 խէ՝ պիտի բացուի անոր. Ձեւնէ ո՞ր մարդն է որմէ
որդին հաց խնդրէ, մի՞թէ քարը պիտի տայ անոր.
10 Եւ կամ եթէ ձուկ խնդրէ, մի՞թէ օձ պիտի տայ
11 անոր. Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զա-
ւակներուն ազնիւ ընծաներ տալ գիտէք, որքա՛ն
և առաւել ձեր Հայրը որ երկինքն է՝ բարի բա-
ներ պիտի տայ անոնց որ կը խնդրեն անկէ։
12 Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն
ձեզ, դուք և այնպէս ըրէք անոնց, քանզի այս
են օրէնք և մարգարէք։
13 Մտէք նեղ դուռնէն, քանզի լայն է դուռը և
ընդարձակ ճամբան որ դէպ ի կորուստ կը տանի.
14 և բազումք են որ անկէ կը մտնեն. Քանզի նեղ է
դուռը և անձուկ է ճամբան որ դէպ ի կեանք
կը տանի, և սակաւք են որ զայն կը գտնեն։
15 Զգույշ կեցէք սուտ մարգարէներէն որ ձեզի
կու գան ոչխարի հանդերձներով, բայց ի ներ-
16 քուստ յափշտակող գայլեր են. Անոնց պտղէն
պիտի ճանչնաք զանոնք. Միթէ փուշերէ խաղող
17 կը քաղե՞ն, կամ տատասկէ՝ թուզ. Այսպէս
ամէն բարի ծառ բարի պտուղ կու տայ, և չար
18 ծառ չար պտուղ կու տայ. Բարի ծառը չկրնար
չար պտուղ տալ, և ոչ չար ծառը՝ բարի պտուղ
19 տալ. Ամէն ծառ որ բարի պտուղ չտաք՝ կը կըտ-
20 րուի և կրակը կը նետուի. Ուրեմն իրենց պտղէն
պիտի ճանչնաք զանոնք։
21 Ոչ թէ ամէնը որ կ'ըսէ ինձ, Տէր, Տէր, պիտի
մտնէ երկնից Թագաւորութիւնը, այլ այն որ կը
22 կատարէ իմ երկնաւոր Հօրս կամքը։ Բազումք
այն օրը պիտի ըսեն ինձ, Տէր, Տէր, ո՞չ մարգարէ-
քու անուամբդ մարգարէութիւն ըրինք, և քու

անուամբդ. դևերը հանեցինք, և քու անուամբդ
23 չատ հրաչք ըրինք։ Եւ անոտեն անոնց յայտնա-
պէս պիտի ըսեմ Թէ ես քնաւ չէի ճանչնար զձեզ.
ի բաց կացէք ինէ դուք որ անօրէնութիւն կը
գործէք։
24 Ասդ ով որ իմ այս խօսքերս կը լսէ և կը կա-
տարէ զանոնք, պիտի նմանցնեմ զնա խելացի
25 մարդու որ իւր տունը վիմի վրայ չինեց։ Եւ
անձրև իջաւ և գետերը վազեցին, և հովերը փը-
չեցին, և զարկին այն տան, և չփլաւ, քանզի
26 վիմի վրայ հաստատուած էր։ Եւ ով որ իմ այս
խօսքերս կը լսէ և չկատարեր զանոնք, կը նմանի
անմիտ մարդու որ իւր տունը չինեց աւազի վրայ։
27 Եւ անձրև իջաւ և գետերը վազեցին և հովերը
փչեցին, և զարկին այն տան, և փլաւ, և մեծ էր
անոր կործանումը։
28 Եւ երբ Յիսուս կատարեց այս խօսքերը, ժո-
ղովուրդները կը զարմանային անոր վարդապե-
29 տութեան վրայ։ Քանզի իշխանութիւն ունեցողի
պէս կը սորվեցունէր անոնց, և ոչ Թէ դպիրնե-
րուն պէս։

Գլ. Ը

1 Եւ երբ լեռնէն վար իջաւ, չատ ժողովուրդներ
2 գացին անոր ետևէն։ Եւ ահա բորոտ մը եկաւ,
երկրպագութիւն կ'ընէր անոր և կ'ըսէր, Տէր,
3 եթէ կամիս, կրնաս մաքրել զիս։ Եւ Յիսուս
երկնցունելով իւր ձեռքը դպաւ անոր և ըսաւ.
կամիմ, մաքրուէ։ և չուտ մը անոր բորոտու-
4 թիւնը մաքրուեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ անոր։
Զգոյշ կեցիր, մարդու չըսես, այլ գնա ցոյց
ղքեզ քահանային, և տուր ընծան զոր Մովսէս
պատուիրած է՝ անոնց վկայութիւն ըլլալու հա-
մար։

5 Եւ *երբ կափառնայում մտաւ, հարիւրապետ մը
6 եկաւ, կ'աղաչէր անոր, եւ կ'ըսէր, Տէր, իմ ծա-
ռաս տունը անդամալոյծ պառկած կը տանջուի
7 չարաչար։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Ես կու գամ
8 և կը բժշկեմ զնա։ Եւ հարիւրապետը պատաս-
խան տալով ըսաւ, Տէր, ես արժանի չեմ որ
դուն իմ յարկիս տակ մտնես. միայն Թէ ըսէ
9 խօսքով, և իմ ծառաս պիտի բժշկուի. Քանզի
և ես մարդ եմ ընդ իշխանութեամբ, և ունիմ
հրամանիս տակ զինուորներ. և ասոր կ'ըսեմ, Գնա,
և կ'երթայ. և միւսին Թէ եկու, և կու գայ.
10 և ծառայիս Թէ Բրէ այս բանը, և կ'ընէ։ Յիսուս
երբ լսեց, զարմացաւ, և ըսաւ ետևէն գնա-
ցողներուն, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Իսրայելի մէջ
11 անգամ չգտայ այսչափ հաւատք։ Եւ կ'ըսեմ ձեզ
որ յարևելից և յարևմտից բազումք պիտի գան,
և երկնից Թագաւորութեան մէջ պիտի բազմին
12 Աբրահամու և Իսահակայ և Յակոբայ հետ. Իսկ
Թագաւորութեան որդիքը պիտի հանուին ար-
տաքին խաւարը. հոն պիտի ըլլայ լալ և կրճտել
13 ատամանց։ Եւ Յիսուս ըսաւ հարիւրապետին,
Գնա, և ինչպէս որ հաւատացիր, այնպէս Թող
ըլլայ քեզ. և նոյն ժամուն բժշկուեցաւ անոր
ծառան։
14 Եւ Յիսուս Պետրոսի տունը գալով տեսաւ որ
15 անոր զօքանչը ջերմէ բռնուած կայ էր. Եւ
անոր ձեռքին բռնեց, և ջերմը թողուց զնա. և
նա ոտք եղաւ և Քահանայապետութիւն կ'ընէր
16 երբ իրիկուն եղաւ, չատ դիւահարներ բերին
անոր, և խօսքով հանեց զոգիները, և բոլոր
17 հիւանդները բժշկեց։ Որպէսզի կատարուէր ե-
սայի մարգարէին բերնով ըսած խօսքը, Նա զիմ
հիւանդութիւնները վերցուց և ինք զանոնք տարաւ։

*Ոմն. երբ Յիսուս ... Ոմն. անոր

18 Յիսուս իւր բոլորտիքը չատ ժողովուրդ տես-
նելով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան։
19 Եւ դպիր մը մօտենալով ըսաւ անոր, Վարդա-
պետ, ես քու հետդ պիտի գամ ուր և երթաս։
20 Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջեր ունին,
և երկնից թռչուններըն բոյներ, բայց Որդին մար-
21 դոյ գլուխ չունի, ուր դնէ իւր գլուխը։ Եւ ուրիշ
մը ևս անոր աշակերտներէն էր՝ ըսաւ անոր, Տէր,
ետուր ինձ հրաման, որ երթամ նախ թաղեմ իմ
22 հայրս։ Յիսուս ըսաւ անոր, Եկու իմ հետևէս, և
թող մեռելները թաղեն իրենց մեռելները։
23 Եւ երբ նաւը մտաւ, աշակերտներն անոր ե-
24 տևէն գնացին։ Եւ ահա մեծ ալեկոծութիւն եղաւ
ծովուն մէջ, մինչև նաւն ալիքներէն կը ծած-
25 կուէր։ իսկ ինք կը քնանար։ Եւ աշակերտները
մօտ գնացին, արթընցուցին զնա և ըսին, Տէր,
ազատ զմեզ. մեռ կը կորնչինք։ Եւ ըսաւ ա-
նոնց, Թերահաւատներ, ինչո՞ւ այդչէ վատա-
սիրտ էք. անհաւան եղաւ յաւետից հովերուն և
27 ծովուն, և մեծ խաղաղութիւն եղաւ։ Եւ մար-
դիկը զարմացան և ի՛ըսէին, Ինչպիսի՞ մարդ է
այս որ հովերը և ծովը կը հնազանդին անոր։
28 Եւ երբ միւս կողմը *Գերգեսացւոց երկիրն ան-
ցաւ, երկու դիւահարք պատահեցան անոր գե-
րեզմաններէն ելած, կատաղի չոյժ, մինչև հնար
29 չէր մարդոյ այն ճամբէն անցնել։ Եւ ահա աղա-
ղակեցին և ըսին, Յիսուս, Որդի Աստուծոյ, դուն
մեր հետ ի՞նչ բան ունիս։ եկար տարաժամ տան-
30 ջիլ զմեզ։ Եւ անոնցմէ հեռու երամակ մի կար
31 չատ խոզերու որ կ'արածուէին։ Եւ դևերը կ'ա-
ղաչէին անոր և կ'ըսէին, Եթէ կը հանես զմեզ,
հրաման ետուր մեզ որ երթանք խոզերուն երա-
32 մակը մտնենք։ Եւ ըսաւ անոնց, Գնացէք. և անոնք

*Ոմանք՝ Գադարացւոց

ելան գնացին խոզերուն երամակը մտան, և ահա
բոլոր երամակը դարէն դիմեց ծովը, և ջուրերուն
33 մէջ մեռան։ իսկ խոզապահները փախան, և գա-
ղաքը երթալով բոլորը պատմեցին, և դիւահար-
34 ներուն պատահած բաները։ Եւ ահա բոլոր քա-
ղաքը Յիսուսի դիմացը ելաւ, և երբ տեսան զնա,
աղաչեցին որ երթայ իրենց սահմաններէն։

Գլ. Թ

1 Եւ նաւը մանելով անցաւ յայնկոյս, և եկաւ իւր
2 քաղաքը։ Եւ ահա բերին անոր անդամալոյծ մը,
որ մահճի մէջ պառկած էր։ և Յիսուս տեսնելով
անոնց հաւատքը՝ ըսաւ անդամալուծին, Քաջա-
լերուէ, որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած
3 են։ Եւ ահա դպիրներէն ոմանք իրենց հոգւոյ մէջ
4 ըսին, Հայհոյութիւն կ'ընէ դա։ Եւ Յիսուս իմա-
նալով անոնց խորհուրդներն ըսաւ, Ինչո՞ւ չար
5 կը խորհիք ձեր սրտերուն մէջ։ Քանզի ո՞րն աւե-
լի դիւրին է, ըսել, Քու մեղքերդ ներուած են,
6 թէ՛ ըսել, Ել և քալէ։ Բայց որպէս զի գիտնաք
թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի
վրայ մեղաց թողութիւն տալու, (անհաւան ըսաւ
անդամալուծին,) Ել, առ մահիճդ և գնա տունդ։
7 Եւ նա ելաւ գնաց իւր տունը։ (8) Ժողովուրդ-
ները երբ տեսան, զարմացան, և փառաւորեցին
զԱստուած, որ մարդոյ այնպիսի իշխանութիւն
տուած էր։
9 Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով մարդ մը
տեսաւ Մատթէոս անուն, որ նստած էր մաքս
ընդունելու տեղը, և ըսաւ անոր, Եամէնս եկու։
10 և նա ելաւ անոր հետևեցաւ։ Եւ եղաւ որ երբ
տունը սեղան նստած էր, ահա ուրիշ շատ մաքս-
աւորներ և մեղաւորներ եկած և սեղան նստած
11 էին Յիսուսի և անոր աշակերտաց հետ։ Եւ փա-

բխեցիք երբ տեսան, բսին անոր աշակերտանեբուն, Ինչո՞ւ ձեր վարձապետը մաքսաւորներուն
12 և մեղաւորներուն հետ կ'ուտէ։ Բայց Յիսուս երբ լսեց, ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ
13 պէտք չէ, այլ հիւանդներուն։ Գնացէք, սորվեցէք թէ ի՛նչ է այս խօսքը, Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ զոհ. քանզի չեկայ ես արդարները կոչել, այլ մեղաւորներն ապաշխարութիւն։
14 Աշնաեան Յովհաննու աշակերտներն եկան անոր և բսին, Ինչո՞ւ մենք և փարիսեցիք չատ անգամ
15 կը պահենք, և քու աշակերտներդ չեն պահեր։ Եւ Յիսուս բսաւ անոնց, Միթէ կարելի՞ է որ հարսնեացոյ մանկունք սուգ պահեն մինչ փեսան անոնց հետ է. բայց պիտի գան օրեր երբ փեսան անոնցմէ վերցուի, և անատեն պիտի
16 պահեն։ Եւ ոչ ոք կը դնէ նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ, քանզի այն ոչ անոր լրութիւնն համբ ձգուած է՝ կ'առնու հանդերձէն, և պատռուածն ևս աւելի գէշ կ'ըլլայ։ Եւ ոչ նոր գինին
17 կը դնեն հին տիկերու մէջ. եթէ ոչ՝ տիկերը կը պատռուին և գինին կը թափի, և տիկերը կը կորընչին. այլ նոր գինին կը դնեն նոր տիկերու
18 մէջ, և երկոքին կը պահուին։ Երբ նա անոնց հետ այս բաները կը խօսէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր և կ'ըսէր, Դուստր իմ մինչև հիմա մեռած է, բայց եկու դիր ձեռքդ անոր վրայ, և պիտի
19 ապրի։ Եւ Յիսուս ելաւ և իր աշակերտներուն հետ անոր հետևէն գնաց։
20 Եւ ահա երկոտասանամեայ տեառատես կին մը մօտեցաւ հետևէն և դպաւ անոր հանդերձին քղ-
21 ղանցին. քանզի իր Ճաց մէջ կ'ըսէր, Եթէ միայն
22 դպչիմ անոր հանդերձին, պիտի բժշկուիմ. Բայց

*Ոմանք ըսանին

Յիսուս երբ հոն դարձաւ և տեսաւ զնա, ըսաւ, Քաջալերուէ, դուստր, քու հաւատքդ զքեզ բժշկեց։ և կինը նոյն ժամուն բժշկուեցաւ։
23 Եւ երբ Յիսուս եկաւ իշխանին տունը և տեսաւ
24 փողահարները և խռոված բազմութիւնը, Ըսաւ անոնց, Մեկնէ գնացէք, քանզի մեռած չէ աղ-
25 ջիկը, այլ կը նինջէ. և ծաղր կ'ընէին զնա։ Եւ երբ բազմութիւնը դուրս հանուեցաւ, ինք մտաւ ներս, բռնեց անոր ձեռքէն, և աղջիկը ոտք
26 ելաւ։ Եւ այս լուրը տարածուեցաւ բոլոր այն երկիրը։
27 Եւ երբ Յիսուս անկէ առաջ անցաւ, երկու կոյր գնացին անոր հետևէն, կ'աղաղակէին և կ'ը-
28 սէին, Ողորմէ մեզ, Որդի Դաւիթ։ Եւ երբ տուն եկաւ, կոյրերն եկան անոր. և Յիսուս բսաւ անոնց, Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանն ընել
29 ձեզ. ըսին անոր, Այո, Տէր։ Անատեն դպաւ անոնց աչացը և ըսաւ, Ձեր հաւատոյն պէս ըլլայ
30 ձեզ։ Եւ անոնց աչքերը բացուեցան. և Յիսուս սաստկի պատուիրեց տուաւ անոնց և բսաւ, Զգոյշ
31 կեցէք, մարդ չիմանայ։ Բայց անոնք ելան այն բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարածեցին։
32 Եւ երբ անոնք դուրս ելան, ահա համր դիւա-
33 հար մարդ մը բերին անոր։ Եւ երբ դեւը ելաւ, համրը խօսեցաւ. և ժողովուրդները զարմացան և կ'ըսէին Թէ Իսրայելի մէջ այսպիսի բան բնաւ
34 տեսնուած չէ։ Բայց փարիսեցիները կ'ըսէին Թէ դեւերուն իշխանաւ կը հանէ դա դեւերը։
35 Եւ Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները և գեղերը, և անոնց ժողովրդեանցներուն մէջ կը սորվեցուներ և կը քարոզէր արքայութեան աւետարանը, և կը բժշկէր բոլոր ախտերը և բոլոր
36 հիւանդութիւնները ժողովրդեան մէջ։ Եւ տեսնելով ժողովուրդները գթաց անոնց վրայ, քանզի յոգնած և ցիրուցան եղած էին հովիւ չունեցող

37 ոչխարներու պես։ Անատեն ըսաւ իւր աշակերտներուն, Հունձը չատ է, բայց մշակները՝ քիչ.
38 Ուստի աղաչեցէք հունձին Տէրոջը, որ մշակներ հանէ իւր հունձին։

ԳԼ. Ժ

1 Եւ իրեն քով կոչելով իւր երկոտասան աշակերտներն, իշխանութիւն տուաւ անոնց պիղծ ոգիներու վրայ զանոնք հանել, և ամէն ցաւ և ամէն հիւանդութիւն բժշկել։
2 Եւ երկոտասան առաքելոց անուններն ասոնք են. առաջինը Սիմոն, Պետրոս անուանեալն և անոր եղբայրն Անդրէաս, Յակոբոս Զեբեդեան և անոր եղբայրն Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթողիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեան և Դէբէոս որ Թադէոս անուանեցաւ, Սիմոն Կանանացի և Ցուդա Իսկարիովտացի որ և մատնեց զնա։
5 Ա՛յս երկոտասաններն Յիսուս ղրկեց, և անոնց պատուիրեց ըսելով, Հեթանոսներու ճամբայ մի երթաք և Սամարացիներու քաղաք մի՛ մտնէք,
6 Այլ աւելի իսրայէլի տան կորուսեալ ոչխարներուն գնացէք։ Եւ երբ կ՚երթաք, քարոզեցէք և ըսէք թէ երկինքի թագաւորութիւնը մօտեցած է,
8 Հիւանդները բժշկեցէք, *բորոտները մաքրեցէք, դեւերն հանեցէք. ձրի առած էք, ձրի տուէք։
9 Մի՛ առնաք ոսկի, և մի՛ արծաթ, և մի՛ պղինձ
10 ձեր գօտիներուն մէջ, ոչ ճամբու համար պարկ, և ոչ կրկին հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան. քանզի գործաւորն է իւր կերակրոյն։ Եւ ո՛ր քաղաք կամ գիւղ մտնէք, հարցուցէք թէ ով է արժանի անոր մէջ, և հոն կեցէք մինչև ան-

*Ոմանք՝ մեռելները յարուցէք, բորոտները

12 կոչէք, եւ երբ տունը կը մտնէք, ողջոյն տուէք
13 *անոր։ Եւ եթէ այն տունն արժանի է, ձեր ողջոյնը գայ անոր վրայ. ապա եթէ արժանի չէ,
14 ձեր ողջոյնը ձեզի դառնայ։ Եւ ով որ չընդունի զձեզ և մտիկ չընէ ձեր խօսքը, երբ այն տունէն կամ քաղաքէն կ՚ելլէք, ձեր ոտից փոշին թօթափեցէք։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ, Սոդոմացւոց և Գոմորացւոց երկրին դիւրագոյն պիտի ըլլայ դատաստանին օրը քան այն քաղաքին։
16 Ահա ես կը ղրկեմ զձեզ իբրև ոչխարներ գայլերու մէջ։ ուստի օձերու պէս խորագէտ եղէք, և աղաւնիներու պէս՝ մեմիտ, իսկ մարդոցմէ զգուշացէք, քանզի պիտի մատնեն զձեզ առեանները, և պիտի ծեծեն զձեզ իրենց ժողովրդարանները,
18 նոցներուն մէջ։ Եւ իմ պատճառս համար պիտի տարուիք կուսակալներու և թագաւորներու առջև, ի վկայութիւն անոնց և հեթանոսներուն։
19 Բայց երբ մատնեն զձեզ, հոգ մի՛ ընէք թէ ինչպես կամ ինչ պիտի խօսիք, քանզի պիտի տրուի ձեզ
20 այն ժամուն ինչ որ պիտի խօսիք։ Վասն զի ոչ թէ դուք եք որ կը խօսիք, այլ ձեր Հօրը Հոգին
21 որ կը խօսի ի ձեզ։ Եւ եղբայր զեղբայր մահուան պիտի մատնէ, և հայր՝ զորդի. և որդիք ելնելոց ծնողաց վրայ պիտի կեցեն և սպաննեն զանոնք։
22 Եւ իմ անուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչև վերջը համբերէ՝ նա
23 պիտի ապրի։ Եւ երբ այս քաղաքին մէջ կը հալածեն զձեզ, ուրիշ *տա՛ր փախչիք. քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ, Իսրայէլի քաղաքները պիտի չսպառէք, մինչև Որդին մարդոյ գայ։ Աշակերտն աւելի չէ քան իւր վարդապետը, և ոչ ծառան
25 քան իւր տէրը։ Բաւական է աշակերտին որ իւր վարդապետին պէս ըլլայ, և ծառային՝ իւր տի-

*Ոմանք՝ անոր և ըսէք, Ողջոյն այս տանս

ըոլը պէս. եթէ տանուտերը Բէէղզեբուղ կոչե-
26 ցին, ո՛րչափ եա առաւել անոր ընտանիքը։ Ուստի
մի՛ վախնաք անոնցմէ, քանզի բան մը չկայ ծա-
ծուկ որ չյայտնուի, և գաղանի՝ որ չգիտցուի։
27 Ինչ որ մթով մէջ կ'ըսեմ ձեզ, լուսով մէջ խօսե-
ցէք ըզայն, և ինչ որ ականջ ի վար կը լսէք, տա-
28 նեաց վրայ քարոզեցէք։ Եւ մի՛ վախնաք անոնցմէ
որ մարմինը կը սպաննեն, և հոգին չեն կրնար
սպաննել. այլ մանաւանդ վախցէք անկէ որ կըր-
նայ հոգին և մարմինը կորուսանել դժոխքին մէջ։
29 Ո՞չ սպաչքեն երկու ճնճղուկ մէկ դանկի կը վա-
ճառուին, և անոնցմէ մին չկ'ինար գետին առանց
30 ձեր Հօրը։ Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ան-
31 դամ համրուած են։ Ուրեմն մի՛ վախնաք, +ասէ
32 քան զառատիմ ճնճղուկս լաւ էք դուք։ Արդ ով
որ մարդոց առջև զիս կը դաւանի, և ես պիտի
33 դաւանիմ զնա իմ Հօրս առջև որ յերկինս է։ Եւ
ով որ մարդոց առջև զիս կ'ուրանայ, և ես պիտի
ուրանամ զնա իմ Հօրս առջև որ յերկինս է։
34 Մի՛ կարծէք թէ ես եկայ արկանել երկիր վրայ
խաղաղութիւն. չեկայ արկանել խաղաղութիւն,
35 այլ սուր. քանզի եկայ մարդը իւր հօրմէն զա-
տել, և դուստրը՝ իւր մօրմէն, և հարսը՝ իւր
36 սկեսրէն. եւ մարդուն թշնամիներն անոր ընտա-
37 նիքն են։ Ով որ հայրը կամ մայրը կը
սիրէ աւելի քան զիս, արժանի չէ ինձ. և ով որ
որդին կամ դուստրը կը սիրէ աւելի քան զիս,
38 արժանի չէ ինձ. Եւ ով որ իւր խաչը չառնուր և
39 գայ իմ ետևէս, արժանի չէ ինձ։ Ով որ իւր
անձը կը գտնէ՝ պիտի կորուսանէ զնա. և ով որ
իւր անձը կը կորուսանէ ինծի համար՝ պիտի գտնէ
40 զնա։ Ով որ զձեզ կ'ընդունի՝ զիս կ'ընդունի. և
ով որ զիս կ'ընդունի՝ զիս ղրկողը կ'ընդունի։
41 Ով որ մարգարէ մը կ'ընդունի յանուն մարգա-
րէի՝ մարգարէի վարձք կ'առնու. և ով որ ար-

դար մը կ'ընդունի յանուն արդարոյ՝ արդարոյ
42 վարձք կ'առնու։ Եւ ով որ այս փոքրիկներէն
միոյն բաժակ մը պաղ ջուր միայն կը խմցունէ
յանուն աշակերտի, ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, թէ
պիտի չկորուսանէ իւր վարձքը։

ԳԼ. ԺԱ

1 Եւ եղաւ որ երբ Յիսուս կատարեց պատուէր
տալ իւր երկուտասան աշակերտներուն, գնաց
անկէ անոնց քաղաքներուն մէջ քարոզել և սոր-
վեցունել։
2 Իսկ Յովհաննէս բանտին մէջ երբ լսեց Քրիստոսի
գործերը, իւր աշակերտներէն երկուքը ղրկելով
3 Ըսաւ անոր, Դուն ա՞յն ես որ գալոց էիր, թէ
4 ուրիշի մը սպասենք։ Եւ Յիսուս պատասխան
տալով անոնց ըսաւ, Գնացէք պատմեցէք Յովհան-
5 նու ինչ որ կը լսէք և կը տեսնէք. կոյրերը կը
տեսնեն, կաղերը կը քալեն, բորսաներըը կը մաք-
րուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն
կ'առնուն և աղքատներուն աւետարան կը քա-
6 րոզուի։ Եւ երանի անոր որ իմ վրաս չգայթակ-
ղիր։
7 Եւ երբ անոնք գնացին, Յիսուս սկսաւ ժողո-
վուրդներուն ըսել Յովհաննու համար, Ի՞նչ ելաք
տեսնել անապատի մէջ. եղէգ մը հովին չարժը-
8 ւած։ Այլ ի՞նչ ելաք տեսնել. փափուկ հան-
դերձներ հագած մարդ մը. ահա փափուկ հան-
դերձներ հագնողները թագաւորաց տուներն են։
9 Այլ ի՞նչ ելաք տեսնել. մարգարէ՞. այո, կ'ըսեմ
10 ձեզ, աւելի եա քան զմարգարէ։ Քանզի սա է
որոյ համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս
կը ղրկեմ քու երեսիդ առջև, որ քու ճամբադ
11 պատրաստէ քու առջևդ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ,
կանանց ծնունդներուն մէջ քան զՅովհաննէս

մկրտիչ մեծ եղած չէ, սակայն երկնից թագաւո-
12 րութեան մէջ փոքրագոյնը մեծ է քան զնա։ Եւ
Յովհաննէս մկրտի օրերէն մինչև հիմա երկնից
թագաւորութիւնն ուժով կ'առնուի, և ուժեղ-
13 ներ կը յափշտակեն զնա։ Քանզի բոլոր մարգա-
րէները և օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէ-
14 ութիւն ըրին։ Եւ եթէ կ'ուզէք ընդունել, նա է
15 եղիա որ պիտի գար։ Ով որ լսելու ականջ ունի՝
16 թող լսէ։ Բայց որո՞ւ նմանցնեմ այս ազգը։
կը նմանի տղայոց, որ շուկաները նստելով իրենց
17 ընկերներուն կը կանչեն, Եւ կ'ըսեն, Փող հնչե-
ցուցինք ձեզ, և չկաքաւեցիք. ողբ կարդացինք
18 ձեզ, և կոծ չըրիք։ Վասն զի Յովհաննէս եկաւ,
ոչ կ'ուտէր և ոչ կը խմէր, և կ'ըսեն, Դեւ կայ
19 ի նմա։ Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ և կը խմէ,
և կ'ըսեն, Ահա ուտող և արբեցող մարդ, բարե-
կամ մաքսաւորաց և մեղաւորաց. և իմաստու-
թիւնն արդարացաւ իւր որդիներէն։

20 Անտեղ սկսաւ նախատել այն քաղաքները,
որոց մէջ գործուած էին անոր հրաշներուն չա-
21 տերը, քանզի չապաշխարեցին. Վա՛յ քեզ, Քո-
րազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, քանզի եթէ
ի Տիւրոս և ի Սիդոն եղած ըլլային այն հրաշները
որ ձեր մէջ եղան, շատոնց քրձով և մոխրով ա-
22 պաշխարած պիտի ըլլային, Բայց կ'ըսեմ ձեզ,
Տիւրոսի և Սիդոնի դիւրագոյն պիտի ըլլայ դա-
23 տաստանին օրը քան ձեզ։ Եւ դու, կապառնայ-
ում, որ մինչև երկինք բարձրացած ես, մինչև
դժոխք պիտի իջնես, քանզի եթէ Սոդոմի մէջ
եղած ըլլային այն հրաշները որ ի քեզ եղան,
24 մինչև այս օր դեռ պիտի մնար։ Բայց կ'ըսեմ
ձեզ որ Սոդոմացւոց երկրին դիւրագոյն պիտի
ըլլայ դատաստանին օրը քան քեզ։

25 Յայն ժամանակ պատասխան տուաւ Յիսուս և
ըսաւ, Շնորհակալ եմ քեզնէ, ով Հայր, Տէր երկնի

և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր
իմաստուններէն և գիտուններէն, և յայտնեցիր
26 տղայոց։ Այո՛, ով Հայր, քանզի այսպէս հաճոյ
27 եղաւ քու առջեւդ։ Ամէն բան ինծի տրուեցաւ
իմ Հօրմէս, և ոչ ոք կը ճանչնայ Որդին, բայց
Հայրը, և ոչ ոք կը ճանչնայ Հայրը, բայց Որդին,
28 և նա որուն Որդին կ'ուզէ յայտնել։ Եկէք
ինծի, բոլոր յոգնած և բեռնաւորածներ, և ես
29 պիտի հանգուցանեմ զձեզ։ Առէք իմ լուծս ձեր
վրայ, և սորվեցէք ինէ որ հեզ եմ և խոնարհ
սրտիւ, և ձեր անձերուն հանգիստ պիտի գտնէք։
30 Քանզի իմ լուծս քաղցր է, և իմ բեռս՝ թեթեւ։

ԳԼ. ԺԲ

1 Անտեղն Յիսուս շաբաթ օրը դնաց արտերուն մէ-
ջէն, և անոր աշակերտներն անօթեցան, և սկսան
2 ցորեխ հասկեր քաղել և ուտել։ Փարիսեցիները
երբ տեսան, ըսին անոր, Ահա քու աշակերտներդ
կը գործեն ինչ որ արժան չէ շաբաթ օրը գոր-
3 ծել։ Եւ նա անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացած դուք
ինչ որ ըրաւ Դաւիթ երբ անօթեցաւ ինք և ա-
4 նոնք որ անոր հետ էին։ Ինչպէս մտաւ Աստուծոյ
տունը, և առաջաւորութեան հացերը կերաւ,
զոր ոչ անոր օրէն էր ուտել, և ոչ անոնց որ
5 անոր հետ էին, բայց միայն քահանայից։ Կամ
թէ օրէնքին մէջ կարդացած չէ՞ք, որ քահանայք
շաբաթ օրերը տաճարին մէջ կը պղծեն շաբաթը
6 և անմեղ են։ Բայց կ'ըսեմ ձեզ որ հոս քան
7 զտաճարը մեծ կայ։ Եւ եթէ գիտնայիք թէ ի՛նչ
ըսել է, Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ զոհ, չէիք
8 դատապարտեր անպարտներըս. Քանզի Որդին
մարդոյ տէր է *շաբաթուն։

*Ոմանք՝ շաբաթուն ևս

9 Եւ անտի երթալով եկաւ անոնց ժողովրդա-
10 նոցը։ Եւ հոն մարդ մը կար որով ձեռքը գօսա-
ցած էր. և հարցուցին անոր և ըսին Թէ չարաթ
օրը բժշկել արժա՞ն է, որպէս զի ամբաստանու-
11 Թիւն ընէին անոր վրայ։ Եւ նա ըսաւ անոնց,
Ձնիճ ո՞ր մարդը կայ որ ոչխար մը ունենայ, և
այն իյնայ չարաթ օրը փոսի մէջ, պիտի չբռնէ՞ և
12 վեր հանէ դնու։ Արդ ո՛րչափ աւելի է մարդ քան
ոչխար. ուրեմն չարաթ օրը բարի գործել ար-
13 ժան է։ Անտեղ ըսաւ այն մարդուն, երկինցու
ձեռքդ. և նա երկնցուց, և ողջացաւ միւսին
14 պէս։ Իսկ փարիսեցիք դուրս ելլելով անոր վրայ
խորհուրդ կ'ընէին Թէ ինչպէս կորսուանէին զնա։
15 Եւ Յիսուս երբ գիտցաւ, մեկնեցաւ անտի. և
չատ ժողովուրդներ անոր եւուէին գնացին, և զա-
16 մէնքը բժշկեց։ Եւ սաստիկ պատուիրեց անոնց
17 բնաւ յայտնել զնա։ Որպէս զի կատա-
րուի նայի մարգարէի բերնով ըսուած խօսքը,
18 Ահա իմ ծառաս զոր ընտրեցի, Ե իմ սիրելիս՝
որուն հաճեցաւ իմ անձս. իմ Հոգիս պիտի դնեմ
անոր վրայ, և հեթանոսներուն իրաւունք պիտի
19 պատմէ։ Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի աղաղակէ,
և ոչ ոք պիտի լսէ անոր ձայնը հրապարակներու
20 մէջ։ Ջախջախած եղէգը պիտի չկոտրէ, և ծուխ-
ծեալ պատրոյգը պիտի չմարէ, մինչև որ դա-
21 տաստանն հանէ իր յաղթութիւնն։ Եւ հեթանոսք
անոր անուանը պիտի յուսան։
22 Անտեղ կոյր և համր դիւահար մը բերին անոր,
և բժշկեց զնա, այնպէս որ համրը և կոյրը խօս-
23 սեցաւ և տեսաւ։ Եւ բոլոր ժողովուրդները զար-
մացան և կ'ըսէին, Արդեօք սա՛ է Դաւիթի որդին։
24 Բայց փարիսեցիք երբ լսեցին, ըսին, Ո՛րէլզեբուղ
չհաներ դա դևերը, բայց՝ դևերուն իշխողերուդ
25 իշխանաւ։ Եւ Յիսուս անոնց խորհուրդներն իմա-
նալով ըսաւ անոնց, Ամէն Թագաւորութիւն իրեն

դեմ բաժնուած՝ կ'աւերի. և ամէն քաղաք կամ
26 տուն իրեն դեմ բաժնուած՝ չկրնար կենալ։ Եւ
Եթէ Սատանան կը հանէ զՍատանայ, իրեն դեմ
բաժնուեցաւ. ուստի ինչպէս պիտի կենայ անոր
27 Թագաւորութիւնը։ Եւ Եթէ ես Բէեղզեբուղով
կը հանեմ դևերը, ձեր որդիքն ինչո՞վ կը հանեն.
ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։
28 Բայց Եթէ ես Հոգւով Աստուծոյ կը հանեմ
դևս, ուրեմն Աստուծոյ Թագաւորութիւնը հա-
29 սած է ձեր վրայ։ Կամ ինչպէս կրնայ մարդ հը-
զօրի տուն մտնել, և անոր կարասիներն յափըշ-
տակել, Եթէ նախ հզօրը չկապէ, և ապա կո-
30 զոպէ անոր տունը։ Ով որ իմ հետս չէ հակա-
ակ է ինձ, և ով որ ինձի հետ չժողվէր՝ կը
31 ցրուէ։ Ուստի կ'ըսեմ ձեզ, Ամէն մեղք և հայ-
հոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց հայհոյու-
Թիւնը որ կ'ըլլայ Հոգւոյն Աբեր դէմ՝ պիտի չը-
32 ներուի մարդոց։ Եւ ով որ Որդւոյ մարդոյ դէմ
բան կ'ըսէ՝ պիտի ներուի անոր, բայց ով որ Հոգ-
ւոյն Սրբոյ դէմ կ'ըսէ՝ պիտի չներուի անոր, ոչ
33 այս աշխարհիս և ոչ հանդերձեալին մէջ։ Կամ՝
բարի ըրէք ծառը և անոր պտուղը բարի, և
կամ՝ չար ըրէք ծառը և անոր պտուղը չար.
34 քանզի ծառը պտղէն կը ճանչցուի։ Իժերու ծը-
նունդներ, ինչպէս կրնաք բարի խօսիլ, որ չար
Է։ քանզի սրտին յաւելուածէն կը խօսի բերա-
35 նը։ Բարի մարդը իւր սրտին բարի գանձէն կը
հանէ բարի բաներ, և չար մարդը նէ՛ սրտին չար
36 գանձէն կը հանէ չար բաներ։ Բայց կ'ըսեմ ձեզ
Թէ Ամէն դատարկ խօսքի համար զոր կը խօսին
մարդիկ՝ դատաստանին օրը հաշիւ պիտի տան։
37 Քանզի քու խօսքերէդ պիտի արդարանաս, և քու
խօսքերէդ պիտի դատապարտուիս։
38 Անտեղ դպիրներէն և փարիսեցիներէն ոմանք
պատասխան տուին անոր և ըսին, Վարդապետ,

39 կ'ուզենք նշան աւանել քեզի։ Նա պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Չար և շնացող ազգը նշան կը խնդրէ, և նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէի նշանը։
40 Քանի‌մի‌ որպէս Յովնան երեք օր և երեք գիշեր կէտ ձկան փորին մէջ էր, այնպէս Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս սրտին մէջ երեք օր
41 և երեք գիշեր։ Նինուէի մարդիկ դատաստանին ելլէ դէմ պիտի կենան այս ազգին և պիտի դատապարտեն զայն, քանզի Յովնանու քարոզութեամբ զղջացին. և ահա քան Յովնան մեծ կայ հոս։
42 Հարաւի թագուհին դատաստանին ելլէ դէմ պիտի կենայ այս ազգին և պիտի դատապարտէ զնա, քանզի երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսել, և ահա քան Սողոմոն մեծ կայ հոս։
43 Եւ երբ պիղծ ոգին կ'ելլէ մարդէ, անջուր տեղեր կը պտրտի, հանգիստ կը փնտռէ և չգտնէր։
44 Անառանի կ'ըսէ, Դառնամ նորէն իմ տունս ուսկի եկայ։ և կու գայ կը գտնէ զայն պարապ,
45 մաքրուած և յարդարուած։ Անառանի կ'երթայ և իրեն հետ կ'առնու եօթն այլ ոգի քան զինքը չար, և մտնելով կը բնակին հոն, և այն մարդուն վերջը կ'ըլլայ չար քան զառաջինն. այսպէս պիտի ըլլայ նաև այս չար ազգին։
46 Եւ մինչ նա կը խօսէր Ժողովրդեան, ահա անոր մայրը և եղբայրները դուրսը կեցած էին, և կ'ուզէին խօսել անոր հետ։ Եւ ոմն ըսաւ անոր, Ահա մայրդ և եղբայրներդ դուրսը կեցած են, և կ'ուզեն հետդ խօսիլ։ Եւ նա պատասխան ըսաւ տուաւ և ըսաւ, Ո՞վ է իմ մայրս, և ո՞վ են իմ եղբայրներս։ Եւ ձեռքը դէպ իր աշակերտները երկնցուցնելով ըսաւ, Ահա իմ մայրս և իմ եղբայրներս։ Վասն զի ով որ իմ երկնաւոր Հօրս կամքը կատարէ, նո՛ւն իմ եղբայրս և քոյրս և մայրս։

ԳԼ. ԺԳ

1 Ա‌յն օրը Յիսուս տունէն ելլելով Ծովուն եզերքը
2 նստաւ։ Եւ չատ Ժողովուրդ քովը Ժողովեցան, այնպէս որ նաւը մտաւ և նստաւ, և բոլոր Ժողովուրդը Ծովեզերքը կեցած էր։ Եւ չատ բաներ խօսեցաւ անոնց առակներով, և ըսաւ,
4 Ահա սերմ ցանողը ելաւ սերմ ցանել. և երբ կը ցանէր, ոմանք ճամբուն քով ինկան, և թռչունները եկան և կերան զանոնք։
5 Եւ ուրիշներ ինկան և կերան զանոնք։ Եւ ուրիշ ապառաժուտ տեղերու վրայ ինկան ուր չատ հող չկար, և չուտով բուսան, վասն զի հողը խորութիւն չունէր։
6 Բայց երբ արեւը ծագեցաւ, այրեցան, և արմատ չունէին, չորցան։
7 Եւ ուրիշ ինկան փուշերու մէջ, և փուշերը եկան և հեղձուցին զանոնք։
8 Եւ ուրիշ ինկան ազնիւ հողի մէջ և պտուղ կու տային, որ՝ հարիւր, որ՝ վաթսուն, և որ՝ երեսուն։
9 Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
10 Եւ աշակերտները մտանելով բսին անոր, Ինչո՞ւ համար առակներով կը խօսիս անոնց։
11 Եւ նա պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Անոր համար որ ձեզ արուած է գիտնալ երկնից թագաւորութեան խորհուրդները, և անոնց արուած չէ։
12 Վասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի և պիտի աւելցայ. և ով որ չունի, նաև այն զոր ունի՝
13 պիտի առնուի անկէ։ Անոր համար առակներով կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն և չեն տեսներ,
14 և կը լսեն և չեն լսեր և ի միտ չեն առներ։ Եւ անոնց վրայ կը կատարուի Եսայեայ մարգարէութիւնը որ կ'ըսէ, Լսելով պիտի լսէք և պիտի չիմանաք, և տեսնելով պիտի տեսնէք և պիտի չտեսնէք։
15 Քանզի այս Ժողովրդեան սիրտը թանձրացաւ, և իրենց ականջներով ծանր լսեցին, և իրենց աչքերը գոցեցին, որ մի՛ գուցէ տեսնեն

այօք և լսեն ականջօք և իմանան սրտիւ և դառ-
16 նան, և ես բժշկեմ զանոնք։ Բայց երանի է ձեր
աչաց որ կը տեսնեն, և ձեր ականջաց՝ որ կը
17 լսեն, Քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ շատ մար-
գարէներ և արդարներ փափաքեցան տեսնել ինչ
որ դուք կը տեսնէք, և չտեսան, և լսել ինչ որ
դուք կը լսէք, և չլսեցին։
18 Հիմա դուք սերմ ցանողին առակը լսեցէք։
19 Ով որ Թագաւորութեան խօսքը կը լսէ և ի միտ
չառնուր, չարը կու գայ և կը յափշտակէ անոր
սրտին մէջ ցանուածը. այս այն է որ ճամբուն
20 քով ցանուեցաւ։ Եւ ապառաժուտ տեղերու
վրայ ցանուածն այն է որ երբ կը լսէ խօսքը,
21 իսկոյն ուրախութեամբ կ'ընդունի զայն. Բայց
որովհետև արմատ չունի իւր մէջ, փիլ ժամանակ
կը տեւէ. և երբ նեղութիւն կամ հալածանք ըլլայ
22 խօսքին համար, յուզուզակի կը գայթակղի։ Եւ
փուշերու մէջ ցանուածն այն է որ երբ կը լսէ
խօսքը, աշխարհիս զգայնութիւնը և հարստութեան
խաբէութիւնը խօսքը կը հեղձուցանեն, և կ'ըլլայ
23 անպտուղ։ Իսկ աղէկ հողի մէջ ցանուածն այն է
որ երբ կը լսէ խօսքը, ի միտ կ'առնու, և պտուղ
կու տայ, Է՝ որ հարիւր, Է՝ որ վաթսուն, և Է՝ որ
երեսուն։
24 Ուրիշ առակ մը ևս յառաջ բերաւ անոնց և
ըսաւ, Երկնից Թագաւորութիւնը նմանեցաւ մար-
25 դոյ որ բարի սերմ ցանեց իւր արտին մէջ. Եւ
երբ մարդիկ կը քնանային, Թշնամին եկաւ և ցո-
26 րեներն մէջ ցանեց որոմն և գնաց. Եւ երբ խոտը
բուսաւ և պտուղ բերաւ, անատնն երեւեցաւ
27 նաև որոմը։ Ուստի տանտիրոջ ծառաները մօ-
տեցան և ըսին անոր, Տէր, ո՞չ բարի զուն
քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր, ուրեմն
28 որոմն ուստե՞ ունի։ Եւ նա ըսաւ անոնց, Թշնամի
մարդ ըրած է զայդ։ Ծառաներն ըսին անոր,

29 Հիմա կ'ուզե՞ս որ երթանք քաղենք զայն, իսկ
նա ըսաւ, Ոչ, գուցէ մինչ որոմը քաղէք, ցորենը
30 Եւս անոր հետ խլէք։ Թող տուէք որ աճին եր-
կուքն ի միասին մինչև հնձոց ժամանակ. և հնձոց
ժամանակը պիտի ըսեմ հնձողներուն, Առաջ ո-
րոմը քաղեցէք, և խուրձ խուրձ կապեցէք զայն
այրելու, իսկ ցորենը ժողվեցէք չտեսմարանս։
31 Ուրիշ առակ մի ևս յառաջ բերաւ անոնց և
ըսաւ, Երկնից Թագաւորութիւնը նման է մա-
նանեխոյ հատի, զոր մարդ մը առաւ ցանեց իւր
32 արտին մէջ. Որ փոքր է քան զամենայն սերմա-
նեաց, և երբ աճի, մեծ է քան զամենայն բանջար,
և կ'ըլլայ ծառ, այնպէս որ երկնից Թռչունները
կու գան և կը հանգչին անոր ոստերուն վրայ։
33 Ուրիշ առակ մի ևս ըսաւ անոնց. Երկնից Թա-
գաւորութիւնը նման է խմորոյ, զոր կին մը ա-
ռաւ պահեց երեք գրուշ ալիւր մէջ, մինչև բոլորը
խմորեցաւ։
34 Յիսուս այս ամէն բաներն առակօք խօսեցաւ
ժողովրդեան, և առանց առակի բան մը չէր խօ-
35 սեր անոնց. Որպէս զի կատարուի մարգարէին
բերնով ըսուած խօսքը, Առակներով պիտի բա-
նամ իմ բերանս, աշխարհի սկիզբէն հեռ ծած-
կուած բաներն յառաջ պիտի բերեմ։
36 Անտեղ Յիսուս Թողուց ժողովուրդները, տուն
եկաւ, և աշակերտները մօտեցան անոր և ըսին,
37 Արտին որոմներուն առակը մեկնէ մեզ։ Եւ նա
պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Բարի սերմը
38 ցանողն է Որդին մարդոյ. Եւ արտն է աշխարհս.
իսկ բարի սերմն անոնք են որ Թագաւորութեան
39 որդիք են, իսկ որոմը չարին որդիք են. Եւ Թշ-
նամին որ զայն ցանեց՝ Սատանան է, և հունձքն
է աշխարհիս կատարածը և հնձողք են հրեշտակ-
40 ները։ Արդ ինչպէս որ որոմը կը ժողովուի և կ'այրի
կրակի մէջ, այնպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը։

41 Որդին մարդոյ պիտի դրկէ հրեշտակները, և պիտի ժողվեն անոր թագաւորութենեն բոլոր գայթակղութիւնները և զանոնք որ անօրէնու-
42 թիւն կը գործեն, Եւ կրակի հնոցին մէջ պիտի նետեն զանոնք. հոն պիտի ըլլայ լալ և կրճտել
43 ատամանց։ Այնատեն արեւի պէս պիտի փայլին արդարք իրենց Հօրը թագաւորութեան մէջ։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ։
44 Դարձեալ երկնից թագաւորութիւնը նման է արտի մէջ պահուած գանձի, զոր մարդ մը գըտնելով կը ծածկէ, և ուրախութենէն կ'երթայ կը վաճառէ ինչ որ ունի, և կը գնէ այն արտը։
45 Դարձեալ երկնից թագաւորութիւնը նման է վաճառական մարդու, որ գեղեցիկ մարգարիտներ
46 կը փնտռէ. Եւ պատուական մարգարիտ մը գտնելով գնաց վաճառեց ինչ որ ուներ, և գնեց զայն։
47 Դարձեալ երկնից թագաւորութիւնը նման է ծովը նետուած ուռկանի, որ ամէն տեսակէն կը
48 ժողվէ. Որ երբ լցաւ, ցամաք հանեցին, և նստան ապէկները ամաններու մէջ ժողվեցին և անպետը
49 նետեցին դուրս։ Այսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը. հրեշտակները պիտի ելլեն և արդարներուն
50 մէջէն պիտի զատեն չարերը, Եւ պիտի նետեն զանոնք կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլլայ լալ և կրճտել ատամանց։
51 Ըսաւ անոնց Յիսուս, Հասկըցաք այս ամէնը.
52 ըսին անոր, Այո՛ Տէր։ Նա ըսաւ անոնց, Վասն այսորիկ ամէն դպիր որ երկնից թագաւորութեան աշակերտեալ է՝ նման է տանուտէր մարդոյ որ իր գանձէն կը հանէ նոր և հին բաներ։
53 Եւ երբ կատարեց Յիսուս այս առակները, մեկ-
54 նեցաւ անտի։ Եւ եկաւ իր գաւառը, և կը սորվեցնէր անոնց իրենց ժողովրդանոցին մէջ, մինչև կը զարմանային անոնք և կ'ըսէին, Ուստի՞ ունի սա այս իմաստութիւնը և հրաշները։ Սա

հիւսան որդին չէ՞. անոր մայրը Մարիամ չը՞ կոչուիր, և սորը եղբայրնե՞րն Յակոբոս և Յովսէ
56 և Սիմոն և Յուդա. Եւ սորը քոյրերն ամէնքը մեր քով չէ՞ն. ուստի՞ ունի այս ամէն բաները։
57 Եւ անոր վրայ կը գայթակղէին. բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ բայց
58 միայն իր գաւառին և իր տան մէջ։ Եւ հոն չսիո հրաշք չըրաւ անոնց անհաւատութեան համար։

ԳԼ. ՃԳ

1 Ա՛նատեն Հերովդէս չորրորդապետն լսեց Յիսուսի
2 համբաւը. Եւ իր ծառաներուն ըսաւ, Յովհաննէս մկրտիչ է նա, մեռելներէն յարութիւն ա-
3 ռած է, և անոր համար հրաշք կ'ըլլան անով։
Քանզի Հերովդէս զՅովհաննէս բռնած՝ կապած և բանտը դրած էր զնա իր եղբօրը Փիլիպպոսի
4 կնոջ Հերովդիայի համար, վասն զի Յովհաննէս
5 կ'ըսէր անոր, Չեղ օրինաւոր չէ քեզ ունենալ զնա։
6 Ուստի կ'ուզէր սպաննել զնա, բայց ժողովրդէն կը վախնար, քանզի իրեն մարգարէ կ'ընդունէին զնա։ Եւ երբ Հերովդեսի ծննդեան օրը
7 եղաւ, Հերովդիայի դուստրը խաղաց հանդիսի մէջ, և հաճելի եղաւ Հերովդէս։ Ուստի երդմամբ խոստացաւ տալ անոր ինչ որ ուզէր։
8 Բայց Եւ նա առաջ իր մօրմէն խրատուելով ըսաւ, Տուր ինձ հոս Յովհաննու մկրտչին գլուխը
9 սկուտեղի վրայ։ Եւ թագաւորը տրամեցաւ։ բայց երդմանց համար և իրեն հետ նստողներուն հա-
10 մար հրամայեց բրաւ տալ։ Եւ Խոր դրկելով գլուխ
11 թատեց զՅովհաննէս բանտին մէջ։ Եւ անոր գլուխը բերուեցաւ սկուտեղը և տրուեցաւ աղջկան,
12 և նա տարաւ իր մօրը։ Եւ անոր աշակերտները եկան և մարմինը վերցուցնելով թաղեցին, և գնացին պատմեցին Յիսուսի։

13 Եւ երբ լսեց Ցիսուս, անկէ նաւով անապատ տեղ մը գնաց առանձին. երբ լսեցին ժողովուրդները, գնացին հետ անոր ոտքով քաղաքներէն։
14 Եւ *երբ դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով գթաց անոնց վրայ, և բժշկեց անոնց հիւանդները։
15 Եւ իրիկուան առեն աշակերտներն եկան անոր և ըսին, Հոս անապատ տեղ է, և օրը տարաժամեալ է. արձակէ ժողովուրդները, որ գեղերը երթան և իրենց կերակուր գնեն։ Եւ Ցիսուս ըսաւ անոնց, Հարկ չէ որ առնք երթան, դուք առէք առանց որ ուտեն։ Եւ նոքա ըսին անոր. Հոս ոչինչ բան չունինք, բայց միայն հինգ նկատ նակ և երկու ձուկ։ Եւ ըսաւ անոնց. Հոս առ իս բերէք զանոնք։ Եւ հրամայեց ըրաւ ժողովրդեան խոտին վրայ նստել. և հինգ նկատնակը և երկու ձուկն առաւ, և դէպ երկինք նայելով օրհնեց, և կոտրելով նկատնակները տուաւ աշակերտներուն, և աշակերտները՝ ժողովրդեան։ Եւ ամենքը կերան և յագեցան. և ուրացած կտորտանքը վերցուցին երկոտասան կողով լի։ Եւ անոնք որ կերան՝ էին իբրև հինգ հազար այր, թող կանայս և զանուկուս։
22 †Եւ աշակերտները մութացուց վաղվաղակի նաւը մտնել, և իրմէ առաջ անդին կողմն անցնել, մինչև որ ինք ժողովուրդներն արձակէր։
23 Եւ ժողովուրդներն արձակելէն ետքը լեռը ելաւ առանձին աղօթք ընել. և երբ երեկոյ եղաւ, 24 հոն էր միայն։ Իսկ նաւն արդէն ծովուն մէջ կը 25 ծփէր, քանզի ընդդէմ էր հովը։ Եւ գիշերուան չորրորդ պահուն Ցիսուս գնաց դէպ ի նոսա 26 ծովուն վրայ քալելով։ Եւ աշակերտները երբ

*Յհ.՝ երբ Ցիսուս †Յհ.՝ Եւ Ցիսուս

տեսան զնա որ ծովուն վրայ կը քալէր, խռովեցան, և ըսին թէ Աչքի երեւոյթ է. և առ ահին 27 աղաղակեցին։ Եւ իսկոյն Ցիսուս խօսեցաւ անոնց 28 և ըսաւ, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք։ Պետրոս պատասխան տուաւ անոր և ըսաւ, Տէր, եթէ դուն ես, հրամայեմ ըզէ ինձ որ քեզի գամ 29 ջուրերուն վրայ։ Եւ նա ըսաւ, Եկ, իսկ Պետրոս նաւէն իջաւ, ջուրերուն վրայ քալելոց որ Ցիսուսի 30 գալ երթար։ Բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ, և երբ սկսաւ ընկղմիլ, աղաղակեց և ըսաւ, 31 Տէր, ազատ զիս։ Եւ Ցիսուս իսկոյն իր ձեռքը երկնցուց, բռնեց զնա և ըսաւ անոր, Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար։ Եւ երբ նաւը ելան, 33 հովը դադարեցաւ։ Եւ անոնք որ նաւուն մէջ էին՝ եկան երկրպագութիւն ըրին անոր և ըսին, Արդարև Որդի Աստուծոյ ես դուն։
34 Եւ անդին կողմն անցնելով Գեննեսարէթի երկիրը հասան։ Եւ երբ այն տեղի մարդիկը ճանչցան զնա, շուրջ զրկեցին բոլոր շրջակայ տեղուանքը, 36 և բոլոր հիւանդները բերին անոր։ Եւ կ՚աղաչէին անոր, միայն իբր հանդերձին քղանցին դպչիլ. և անոնք որ դպան՝ բժշկեցան։

ԳԼ. ԺԵ

1 Ա՛նատեն Ցիսուսի եկան դպիրները և փարիսեցի-
2 ները որ Երուսաղէմէ էին, և ըսին, Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերուն աւանդութիւնը զանց կ՚ընեն, քանզի իրենց ձեռքը չեն լուար, երբ
3 հաց կ՚ուտեն։ Եւ նա պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Իսկ դուք ինչո՞ւ համար Աստուծոյ պատուիրանը զանց կ՚ընէք ձեր աւանդութեան պատ-
4 ճառաւ։ Քանզի Աստուած պատուիրեց ըսելով, 5 Պատւէ հայրդ և մայրդ պատուէ. Եւ, Ով որ է՛ր հայրը կամ մայրն անիծէ, մահու թող մեռանի։

6 Բայց գուք կ'ըսէք, Ով որ Ընդ Հօրը կամ Մօրն
ըսէ Թէ Այն զոր ինէ պիտի չհաս՝ Ասոնցմով
պրոբլեմ ընծայ է, և իւր Հայրը կամ իւր Մայրը
չպատուէ, ազատ է. և այսպէս ձեր ուսանդուե-
7 թեան պատճառաւ Աստուծոյ պատուիրանը խա-
փանած էք. Կեղծաւորներ, ազեկ մարգարէա-
8 թիւն ըրաւ ձեր վրայ Եսայի և բաւ, Այս ժողո-
վուրդը ձեր շրթամբ կը պատուէ զիս, բայց
9 իրենց սիրտը հեռացած պատուած է ինէ. Եւ
ի զուր կը պաշտեն զիս՝ մարդոյ պատուիրած
բաներն ԸՆԸ վարդապետութիւն սորվեցնելով։
10 Եւ Ժողովուրդները կոչելով իրեն բաւ անոնց,
11 Լսեցէք և ի մէա առէք. Ոչ Թէ ինչ որ բերան
կը մտնէ՝ կը պղծէ զմարդ, այլ ինչ որ բերնէ
կ'ելլէ՝ այն կը պղծէ զմարդ։
12 Աշնաեն աշակերտները եկան ըսին անոր, Դի-
տե՞ս որ փարիսեցիները գայթակղեցան երբ լսեցին
13 այն խօսքը։ Եւ նա պատասխան տալով բաւ,
Ամէն տունկ որ իմ երկնաւոր Հայրս անկած չէ՝
14 պիտի խլուի։ Թողէք զանոնք. էրէռ+ կոյր են,
կոյրերու առաջնորդ. իսկ եթէ կոյրը կոյրի ա-
15 ռաջնորդէ, երկուքը փոսը պիտի իյնան։ Եւ Պետ-
րոս պատասխան տալով բաւ անոր, Մեկնէ մեզ
16 այս առակը։ Բաւ Յիսուս, Եւ գո՞ք ասկաւին
17 անմիտ էք։ Եւ չէ՞ք հասկնար Թէ ամէն ինչ որ
բերան կը մտնէ փորը կ'երթայ և արտաքնոց կը
18 նետուի։ Բայց ինչ որ բերնէ կ'ելլէ՝ սրտէ յառաջ
19 կու գայ, և այն կը պղծէ զմարդ։ Զանազի սրտէ
կ'ելլեն չար խորհուրդներ, սպանութիւններ, շը-
նութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ,
20 սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ։ Ասոնք
են որ կը պղծեն զմարդ, բայց անլուայ ձեռօք
հաց ուտել չպղծեր զմարդ։

*Ոմանք բերնով կը մեկնեցայ ինձ, և շրթամբ

21 Եւ Յիսուս անկէ ելլելով Տիւրոսի և Սիդոնի
22 կողմերը գնաց։ Եւ ահա Քանանացի կին մը այն
սահմաններէն կ'աղաղակեր անոր և կ'ըսէր,
Ողորմի ինձ, Տէր, որդի Դաւիթի, դուստրս դիւին
23 սաստկի կը չարչարուի։ Եւ նա բնաւ պատասխան
չտուաւ անոր։ և աշակերտները մտենալով կ'ա-
ղաչէին անոր և կ'ըսէին, Արձակէ զդա, վասն զի
24 մեր ետևէն կ'աղաղակէ։ Եւ նա պատասխան
տուաւ և բաւ, Ես ուրիշ չղրկուեցայ բայց միայն
25 իսրայելի տան կորուսեալ ոչխարներուն։ Եւ նա
եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր և կ'ըսէր,
26 Տէր, օգնէ ինձ։ Եւ նա պատասխան տուաւ և
բաւ, Ադեկ չէ ազգ հացն առնուլ և շուներուն
27 նետել։ Եւ նա բաւ, Այո, Տէր, քանզի և շուն-
ք կը կերակրին իրենց տիրոջը սեղանէն ինկած փըշ-
28 րանօքը։ Անառեն Յիսուս պատասխան տուաւ ա-
նոր և բաւ, Ով կին, քու հաւատքդ մեծ է,
ինչպէս կամիս այնպէս ըլլայ քեզ։ և նոյնժամայն
բժշկեցաւ անոր դուստրը։
29 Եւ Յիսուս անկէ գնաց, Գալիլեայի ծովեզերը
30 եկաւ, և լեռը ելլելով նոստաւ հոն։ Եւ եկան ա-
նոր բազում ժողովուրդներ, որ իրենց հետ ունէին
կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ
շատեր, և նետեցին զանոնք Յիսուսի ոտքը, և
31 բժշկեց զանոնք։ Այնպէս որ ժողովուրդները
զարմացան, տեսնելով որ համրերը կը խօսէին,
հաշմանդամները կը բժշկուէին, կոյրերը կը քա-
լէին և կոյրերը կը տեսնէին, և Իսրայէլի Աստ-
ուածը կը փառաւորէին։
32 Եւ Յիսուս իր աշակերտները կոչելով բաւ,
Կը գթամ այդ ժողովուրդեան վրայ, քանզի արդէն
երեք օր է որ իմ քովս են, և բան չունին ու-
տելու. և զանոնք անօթի արձակել չեմ ուզեր,
33 գուցէ ճամբան մարին։ Իսկ աշակերտները ըսին
անոր, Մենք անապատի մէջ ուստե՞ պիտի ունե-

նանք այնչափ հաց, որ այսչափ բազմութիւն յա-
34 գեցունենք։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Քանի՞ նը-
կանակ ունիք։ Եւ անոնք ըսին, Եօթը, և քանի
35 մը մանր ձուկեր։ Եւ հրամայեց բազմովրդեան
36 գետնի վրայ նստելու։ Եւ եօթը նկանակը և ձու-
կերն առաւ, գոհացաւ և կոտրեց և տուաւ աշա-
կերտներուն, և աշակերտները՝ ժողովրդեան։
37 Կերան ամէնքը և յագեցան, և եօթն զամբիւղ
38 լի աւելցած կտորտանքը վերցուցին։ Եւ անոնք
որ կերան՝ չորս հազար այր էին, Թողի զկանայս
և զմանկունս։
39 Եւ երբ արձակեց ժողովուրդը, նաւը մտաւ և
եկաւ Մագադայի սահմանները։

ԳԼ. ԺԶ

1 Եւ փարիսեցիք և սադուկեցիք եկան անոր,
փորձելով կը խնդրէին անկէ յերկինէ նշան ցու-
2 ցընել անոնց։ Նա պատասխան տուաւ և ըսաւ
անոնց, Երբ երեկոյ կ'ըլլայ, կ'ըսէք Թէ Պարզ
3 պիտի ըլլայ, քանզի երկինքը կարմրած են։ Եւ ա-
ռաւօտուն՝ Այսօր մըրիկ պիտի ըլլայ, քանզի
երկինքը միգապատ և կարմրած են։ Կեղծաւոր-
ներ, երկինքը երեսը գիտէք քննել, բայց ժամա-
4 նակներուն նշանները չէ՞ք կրնար ճշդել։ Չար
և շնացող ազգը նշան կը խնդրէ, և ո՛րէ՛ն նշան
պիտի չտրուի անոր, բայց Յովնան մարգարէին
նշանը։ Եւ Թողուց զանոնք և գնաց։
5 Եւ երբ անոր աշակերտները անդիի կողմն ան-
6 ցան, հաց առնուլ մոռցած էին։ Եւ Յիսուս ըսաւ
անոնց, Նայեցէք և զգուշացէք փարիսեցւոց և
7 սադուկեցւոց խմորէն։ Անոնք իրենց մէջ կը
խորհէին և կ'ըսէին Թէ Հաց չբերինք մեր հետ։
8 Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով ըսաւ
անոնց, Ինչո՞ւ կը խորհիք ձեր մէջ, Թերահա-

9 ւատներ, Թէ հաց չունիք։ Տակաւին չէ՞ք հաս-
կրնար և չէ՞ք յիշեր հինգ նկանակին հինգ հազա-
10 րին, և քանի կողով վերցուցիք։ Եւ ո՛չ եօթն
նկանակը՝ չորս հազարին, և քանի զամբիւղ վեր-
11 ցուցիք։ Ինչպէս չէք հասկնար Թէ ես հացի հա-
մար չըսի ձեզ փարիսեցւոց և սադուկեցւոց խը-
12 մորէն զգուշանալ։ Անսուեն հասկցան Թէ հացի
խմորէն զգուշանալ չըսաւ, այլ փարիսեցւոց և
սադուկեցւոց վարդապետութենէն։
13 Եւ Յիսուս փիլիպպոսի կեսարիոյ կողմերն եր-
Թալով իր աշակերտներուն հարցուց և ըսաւ,
Մարդիկ ո՞վ կ'ըսեն Թէ եմ ես Որդի մարդոյ։
14 Եւ անոնք ըսին, Ոմանք Յ'ըսէն Թէ Յովհաննէս մկրտիչ ես, այլք՝ Եղիա, և այլք՝ Երեմիա կամ
15 մարգարէներէն մին։ Ըսաւ անոնց, Իսկ դուք
16 ինծի համար ո՞վ կ'ըսէք Թէ եմ։ Սիմոն Պետրոս
պատասխան տուաւ և ըսաւ, Դուն ես Քրիստոս,
17 կենդանի Աստուծոյ Որդին։ Եւ Յիսուս պատաս-
խան տուաւ և ըսաւ անոր, Երանի քեզ, Սիմոն,
որդի Յովնանու։ քանզի մարմին և արիւն չյայտ-
18 նեց քեզ զայս, այլ իմ Հայրս որ յերկինս է։ Եւ
ես կ'ըսեմ քեզ որ Դուն Պետրոս ես, և այս
վիմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, և դժո-
19 խոց դուռները պիտի չյաղթեն անոր։ Եւ երկինից
Թագաւորութեան բանալիները պիտի տամ քեզ։
և ինչ որ երկրի վրայ կապես՝ կապուած պիտի
ըլլայ յերկինս։ և ինչ որ երկրի վրայ արձակես՝
20 արձակուած պիտի ըլլայ յերկինս։ Անսուեն պատ-
ուիրեց աշակերտներուն մարգու չըսել Թէ ինք
Քրիստոսն է։
21 Ա՛յնուհետև սկսաւ Յիսուս իր աշակերտներուն
ցուցնել Թէ պէտք էր նմա երուսաղէմ երԹալ,

---

*Ա՛յնէն վէմ
†Ո՛մանք՝ Յիսուս Քրիստոսն

և չառ չարչարանք կրել Ծերերէն և քահանայապետներէն և դպիրներէն, և սպաննուիլ, և երբորդ օրը յարուներուն առնուլ։ Եւ Պետրոս մէկդի առաւ զնա, և սկսաւ յանդիմանել զնա և ըսել, Քաւ լիցի քեզ, Տէր, այդ բանը քեզի չըլլայ։ Եւ նա դառնալով ըսաւ Պետրոսի, Նախ գնա, Սատանայ, գայթակղութիւն ես դուն ինծ. քանզի Աստուծոյ բաները չես մտածեր, այլ մարդոց բաները։

Անառնն Յիսուս ըսաւ իւր աշակերտներուն, Եթէ ոք իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող ուրանայ իւր անձը և վերցունէ իւր խաչը և գայ ետեւէս։ Վասն զի ով որ կ'ուզէ ապրեցունել իւր անձը, պիտի կորսուանէ զնա. և ով որ ինծի համար կը կորսուանէ իւր անձը, պիտի գտնէ զնա։ Քանզի ինչ կը շահի մարդ եթէ բոլոր աշխարհ շահի և իւր անձը կորսուանի, կամ իւր անձին համար ինչ ազատուիլ պիտի տայ մարդ։ Վասն զի Որդին մարդոյ իւր Հօրը փառօք պիտի գայ իւր հրեշտակներուն հետ, և անառնն իւրաքանչիւրոյ իւր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ Հոս ներկայ եղողներէն կան ոմանք որ մահուան համը պիտի չառնուն, մինչև տեսնեն Որդին մարդոյ եկած իւր Թագաւորութեամբ։

ԳԼ. ԺԷ

Եւ վեց օր ետքը Յիսուս իրեն հետ առաւ զՊետրոս և զՅակոբոս և անոր եղբայրը Յովհաննէս, և զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին։ Եւ անոնց առջև այլակերպեցաւ, և անոր երեսը փայլեցաւ արեգական պէս, և հանդերձներն ևղան ոսպիսակ լուսոյ պէս։ Եւ ահա երևեցան անոնց Մովսէս և Եղիա և կը խօսէին անոր հետ։ Պետրոս

առաքան առաւ Պետրոս և ըսաւ Յիսուսի, Տէր, աղէկ է որ հոս կենանք. եթէ կամիս, երեք առաջաւոր շինենք հոս, մին՝ քեզ, և մին՝ Մովսէսի։ և մին՝ Եղիայի։ Եւ մինչ նա կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ. և ահա ամպէն ձայն եկաւ ըսելով, Գա է իմ սիրելի Որդիս որուն հաճած եմ, առուր մերի ըրէք։ Աշակերտները երբ լսեցին, ինկան երեսի վրայ և վախցան յոյժ։ Եւ Յիսուս մտենալով դպաւ անոնց և ըսաւ, Ելէք և մի վախնաք։ Վերցուցին իրենց աչքերնին և ոչ ոք տեսան, բայց միայն Յիսուս։

Եւ երբ այն լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց և ըսաւ, Այդ տեսիլը մարդու մի ըսէք, մինչև Որդին մարդոյ մեռելներէն յարներէն տառնուի։ Եւ աշակերտներն հարցուցին անոր և ըսին, Ուրեմն ինչո՞ համար գրիչները կ'ըսեն Թէ Պետք է որ նախ եղիա գայ։ Պատասխան առաւ Յիսուս և ըսաւ անոնց, Արդարև նախ Եղիա կու գայ և ամէն բան կը կարգադրէ։ Բայց կ'ըսեմ ձեզ որ Եղիա արդէն եկած է, և չճանչցան զնա, այլ ինչ որ կամեցան՝ ըրին անոր. այնպես նաև Որդին մարդոյ պիտի չարչարուի ատոնցմէ։ Անառնն հասկցան աշակերտները Թէ Մկրտիչ Յովհաննու համար ըսաւ անոնց։

Եւ երբ ժողովրդեան քով եկան, մարդ մը մօտեցաւ անոր, և ծունր դնելով կ'ըսէր, Տէր, ողորմէ որդւոյս, որ կը լուսնոտի և չարաչար կը տանջուի, քանզի չատ անգամ կրակի մէջ կ'իյնայ և չատ անգամ ջրի մէջ։ Եւ աշակերտներուդ բերի գնա, և չկրցան բժշկել գնա։ Յիսուս պատասխան առաւ և ըսաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև երբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև երբ պիտի համբերեմ ձեզ. հոս բերէք զնա։ Եւ Յիսուս սաստեց անոր, և դևը ելաւ

18 անկէ, և բժշկեցաւ աղայն նոյնժամայն։ Անառանձ
ալակերտներն առանձին Յիսուսի գալ երկրպագին
19 ըսելն, Մենք ընդէ՞ր չկրցանք հանել զնա։ Եւ Յի-
սուս ըսաւ անոնց, Ձեր թերահաւատութեան հա-
մար. քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ, եթէ մանանե-
խոյ հատի չափ հաւատք ունենաք, այս լերան
պիտի ըսէք, Ասկէ անդին փոխադրուէ, և պիտի
փոխադրուի. և բան մը անձնաւրէն պիտի չըլլայ
20 ձեզ։ Սակայն այս տեսակն ուրիշ բնաւ չ՚ելլեր,
բայց միայն աղօթիւք և ծոմապահութեամբ։
21 Եւ երբ անոնք Գալիլեայի մէջ կը պտրտէին,
Յիսուս ըսաւ անոնց, Որդին մարդոյ պիտի մատ-
22 նուի մարդոց ձեռքը, Եւ պիտի սպանանեն զնա,
և երրորդ օրը յարութիւն պիտի առնու։ և
տրտմեցան յոյժ։
23 Երբ անոնք Կափառնայում եկան, երկդրամ-
ներուն առնողները եկան Պետրոսի և ըսին,
Ձեր վարդապետը երկդրամները չը՞տաուցաներ։
24 ԵՒ նա ըսաւ, Այո, կը տաուցանէ։ Եւ երբ տուն
մտաւ, Յիսուս անոր առջև ելաւ և ըսաւ, Ի՞նչպէս
կ՚երևնայ քեզ, Սիմոն, երկրիս թագաւորները
որմէ՞ կ՚առնուն հարկը կամ տուրքը. իրենց որ-
25 դիներէ՞ն թէ օտարներէն։ Պետրոս ըսաւ անոր
թէ Օտարներէն։ Յիսուս ըսաւ անոր, Ուրեմն
26 որդիք ազատ են։ Բայց որպէս զի չգայթակղե-
ցունենք զանոնք, գնա ծովը և կարթ նետէ, և
առաջին ձուկը որ կ՚ելլէ առ, և անոր բերանը
բանալով սատեր մը պիտի գտնես. առ զայն,
տուր անոնց ինծի և քեզի համար։

ԳԼ. ԺԸ

1 Այն ժամանակ աշակերտները Յիսուսի գալ եկան
և ըսին, Ո՞վ է մեծ երկնից թագաւորութեան
2 մէջ։ Եւ Յիսուս աղայ մը կոչեց իրեն, անոնց

3 մէջտեղ կեցուց զնա, Եւ ըսաւ, Ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզ, եթէ չդառնաք և աղոց պէս չըլլաք, երկ-
նից թագաւորութիւնը բնաւ պիտի չմանեք։
4 Ուստի ով որ իւր անձն այս աղուն պէս խոնար-
հեցունէ, նա է մեծ երկնից թագաւորութեան
5 մէջ։ Եւ ով որ այսպիսի աղայ մը ընդունի իմ
6 անուամբս, զիս կ՚ընդունի։ Եւ ով որ գայթակ-
ղեցուէ այս փոքրիկներէն մին որ ինծ կը հաւա-
տան, լաւ է նմա որ պարանոցէն իյնու երկանի
քար կախուի, և ընկղմի ծովուն անդունդը։
7 Վա՜յ աշխարհի գայթակղութեանց պատճառաւ.
վասն զի հարկ է գալ գայթակղութեանց, բայց
վա՜յ այն մարդուն որոյ ձեռօք գայթակղութիւնը
8 կու գայ։ Արդ եթէ քու ձեռքդ կամ ոտքդ կը
գայթակղեցունէ զքեզ, կտրէ զայն և նետէ քեզնէ.
լաւ է քեզ խեղ կամ կաղ մտնել ի կեանս, քան
երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ և յաւի-
9 տենական կրակին մէջ նետուիլ։ Եւ եթէ աչքդ
կը գայթակղեցունէ զքեզ, հանէ զայն և նետէ
քեզնէ. լաւ է քեզ միաչանի մտնել ի կեանս, քան
երկու աչք ունենալ և կրակին գեհենը նե-
տուիլ։
10 Զգույշ կեցէք որ չանարգէք այս փոքրիկներէն
մին. քանզի կ՚ըսեմ ձեզ որ երկնից մէջ անոնց
հրեշտակները միշտ կը տեսանեն իմ Հօրս երեսը
11 որ յերկինս է։ Քանզի Որդին մարդոյ եկաւ կոր-
12 ուստը փրկել։ Ի՞նչպէս կ՚երևի ձեզ. եթէ մարդ
մը հարիւր ոչխար ունենայ, և անոնց մին մոլորի,
իննսունևվեցը *լեռները չի՞ թողուր, և
13 չ՚երթար մոլորածը խնդրել։ Եւ եթէ գտնելու
բլլայ զնա, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ որ աւելի ուրախ
կ՚ըլլայ անոր վրայ, քան իննսունևիններն որ մո-
14 լորած չեն։ Այսպէս նաև ձեր երկնաւոր Հօրը

*Ոմանք չի՞ թողուր, և լեռները

չհաճիը որ այս փոքրիկներէն մին կորսուի։
15 Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, դնա
յանգիմանէ զնա երբ դու և նա միայն եք. եթէ
16 լսէ քեզ, շահեցար քու եղբայրդ։ Իսկ եթէ չլսէ
ՙէ՛, առ քու հետդ մէ՛ կամ երկուս, որ
երկու կամ երեք վկաներու բերնէ ամէն բան
17 հաստատուի։ Եւ եթէ անոնց ալ չլսէ, եկեղե-
ցւոյն ըսէ. իսկ եթէ եկեղեցւոյն ալ չլսէ, հեթա-
նոսի և մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։
18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, երկրի վրայ ինչ որ կա-
պէք, կապուած պիտի ըլլայ յերկինս. և երկրի
վրայ ինչ որ արձակէք, արձակուած պիտի ըլլայ
19 յերկինս։ Դարձեալ կ'ըսեմ ձեզ, եթէ ձեռնէ եր-
կու հոգի երկրի վրայ միաբանին, ամէն ինչ բանի
համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս
20 որ յերկինս է։ Քանզի ուր երկու կամ երեք
հոգի ժողովուած ըլլան իմ անուանս, հոն եմ
21 Անտեղ Պետրոս մօտեցաւ անոր և ըսաւ, Տէր,
քանի՞ անգամ եթէ եղբայրս ինծի դէմ մեղանչէ
22 Ներեմ անոր. մինչև եօթին անգամ։ Ցիսուս ը-
սաւ անոր, Չեմ ըսեր քեզ Թէ մինչև եօթին ան-
գամ, այլ մինչև եօթանասուն անգամ եօթին։
23 Վասն որոյ երկինց Թագաւորութիւնը կը նմանի
Թագաւորի, որ իր ծառաներէն հաշիւ առնուլ
24 ուզեց։ Եւ երբ սկսաւ առնուլ, տասն հազար
25 տալանդի պարտական մը բերուեցաւ անոր։ Բայց
որովհետև հատուցանելու կարողութիւն չունէր,
տէրը հրաման ըրաւ որ վաճառուէր նա և անոր
կինը և որդիքը և բոլոր ինչ որ ունէր, և հա-
26 տուցուէր պարտքը։ Իսկ ծառան անոր առջև կը-
նաալով երկրպագութիւն կ'ընէր և կ'ըսէր, Տէր,
համբերէ ինծի, և բոլորը կը հատուցանեմ քեզ։
27 Եւ այն ծառային տէրն անոր գթալով արձակեց
28 զնա, և պարտքը չնորհեց անոր։ Եւ այն ծառան

եկաւ գտաւ իր ծառայակիցներէն մին որ հարիւր
դահեկան պարտական էր անոր, և բռնելով զնա
կը խեղդէր և կ'ըսէր, Հատո ինծի պարտքդ զոր
20 ունիս։ Ուստի անոր ծառայակիցն ինկաւ անոր
ոտքը, կ'աղաչէր անոր և կ'ըսէր. Համբերէ ինծ
30 և կը հատուցանեմ *քեզ։ Եւ նա չէր ուզեր, այլ
գնաց, բանտը դրաւ զնա, մինչև հատուցաներ
31 պարտքը։ Երբ անոր ծառայակիցները տեսան
ինչ որ եղաւ, արամեցան յոյժ, և եկան իրենց
32 տիրոջը հասկցուցին ամէնայն ինչ որ եղաւ։ Անա-
տեն անոր տէրը կանչեց զնա և ըսաւ անոր, Չար
ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզի չնորհեցի,
33 վասն զի աղաչեցիր ինծ. Ո՞չ ես պէտք չէր քեզ
ես քու ծառայակցիդ ողորմէր, ինչպէս ես քեզ
34 ողորմեցայ։ Եւ անոր տէրը բարկանալով դահիճ-
ներուն մատնեց զնա, մինչև բոլոր պարտքը հա-
35 տուցանէր։ Այսպէս իմ երկնաւոր Հայրս պիտի
ընէ ձեզ, եթէ ձեր սրտերէն չէք ներեր իւրա-
քանչիւր իր եղբօրն անոնց յանցանքը։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ երբ Յիսուս այս խօսքերը կատարեց,
Գալիլեայէ եկաւ և եկաւ Հրէաստանի սահմանն
2 Յորդանանու անդին կողմը։ Եւ անոր ե-
տևէն չատ ժողովուրդներ գացին, և հոն բժշկեց
զանոնք։
3 Եւ փարիսեցիները մօտենալով անոր կը փոր-
ձէին զնա և կ'ըսէին Թէ Արդեօք է որ մարդ իւր
4 կինն արձակէ ամէն պատճառի համար։ Եւ նա
պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Չէ՞ք կար-
դացած Թէ նա որ ի սկզբանէ ստեղծեց, արու և
5 էգ ստեղծեց զանոնք և ըսաւ, Ասոր համար մարդ

*Ոմանք՝ ամէնը քեզ

Է՞ր հայրը և մայրը պիտի թողու և իր կնոջը
պիտի յարի, և երկուքը մի մարմին պիտի ըլլան։
6 Ուստի այլ ևս երկուք չեն, այլ մի մարմին. ու-
րեմն այն ղոր Աստուած միաւորեց՝ մարդ թող
7 չդառնայ։ Ըսին անոր, Հապա Մովսէս ինչո՞ւ համար
պատուիրեց արձակման թուղթ տալ և արձակել։
8 Ըսաւ անոնց, Մովսէս ձեր խստասրտութեան հա-
մար հրաման տուաւ ձեզ արձակել ձեր կիները,
9 բայց սկիզբէն այնպէս չեղաւ։ Սակայն կ՚ըսեմ
ձեզ, Ով որ առանց պոռնկութեան պատճառի
իր կինն արձակէ և ուրիշ մը առնու, շնութիւն
կ՚ընէ. և ով որ արձակուածն առնու՝ շնութիւն
10 կ՚ընէ։ Աշակերտներն ըսին անոր, Եթէ այդպիսի
բան կայ առն և կնոջ մէջտեղ, լաւ է չամուսնա-
11 նալ։ Ըսաւ նա անոնց, Ամէնքը բաւական չեն
12 այդ բանին, այլ անոնք՝ որոց տրուած է։ Վասն
զի կան ներքինիք որ էրէնց մօրը որովայնէն ծը-
նան այնպէս, և կան ներքինիք՝ որ ի մարդկանէ
ևղան ներքինի, և կան ներքինիք՝ որ ինքնիք
ներքինի ըրին երկնից թագաւորութեան համար։
Ով որ կրնայ առնել՝ թող առնէ։
13 Անոնք մանր տղայք բերուեցան անոր, որ
անոնց վրայ ձեռք դնէր և աղօթք ընէր, և աշա-
14 կերտները կը յանդիմանէին զանոնք։ Բայց Յի-
սուս ըսաւ, Թող տուէք այդ մանր տղայոց, և
մի՛ արգիլէք ձեզի գալ առ իս, քանզի երկնից
15 թագաւորութիւնն այդպիսեաց է։ Եւ անոնց
վրայ ձեռք դնելէն ետքը մեկնեցաւ անտի։
16 Եւ ահա ոմն մօտենալով ըսաւ անոր, Վարդա-
պետ բարի, ի՞նչ բարի գործեմ, որ յաւի-
17 տենական կեանքն ընդունիմ։ Եւ նա ըսաւ անոր,
Ինչո՞ւ բարի կ՚անուանես զիս։ չիք բարի բայց մի,
որ է Աստուած։ Իսկ եթէ կամիս մտանել ի կեանս,
18 պահէ պատուիրանները։ Ըսաւ անոր, Որո՞նք.
և Յիսուս ըսաւ, Առնք. Մի՛ սպանաներ, Մի՛

չնար, Մի՛ գողնար, Սուտ վկայութիւն մի՛ ըներ,
19 Զու հայրդ և մայրդ պատուէ, և, Զու ընկերդ
20 սիրես զոյ անձիդ պէս։ Պատանին ըսաւ անոր,
Այդ ամէնը մանկութենէս հետէ պահած եմ. ու-
21 րիշ ի՞նչ բանով պակաս եմ։ Ըսաւ անոր Յիսուս,
Եթէ կամիս կատարեալ ըլլալ, գնա վաճառէ ինչ
որ ունիս և տուր աղքատաց, և գանձ պիտի ու-
22 նենաս յերկինս, և եկու իմ հետևէս։ Երբ պա-
տանին լսեց այս խօսքը, արտասո գնաց, քանզի
շատ ստացուած ունէր։
23 Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, Ճշմարիտ
կ՚ըսեմ ձեզ որ հարուստը դժուարաւ պիտի մտնէ
24 երկնից թագաւորութիւնը։ Դարձեալ կ՚ըսեմ
ձեզ, Դիւրին է որ *ուղտն ասեղի ծակէն անցնի,
քան թէ հարուստ Աստուծոյ թագաւորութիւնը
25 մտնէ։ Աշակերտները երբ լսեցին, շատ զարմացան
26 և ըսին, Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ։ Յիսուս ա-
նոնց նայելով ըսաւ, Մարդոց կողմանէ անկարին
է այդ, բայց Աստուծոյ կողմանէ ամէն բան հնա-
րաւոր է։
27 Անոնտեն Պետրոս պատասխան տուաւ և ըսաւ
անոր, Ահա մենք ամէն բան թողինք և քու ե-
տևէդ եկանք. ուստի մեզ ի՞նչ պիտի ըլլայ։
28 Ըսաւ անոնց Յիսուս, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ թէ
դուք որ իմ հետևէս եկաք, †ի միւսանգամ գա-
լըստեան երբ Որդին մարդոյ նստի իր փառաց
աթոռոյն, դուք ևս երկոտասան աթոռներու վրայ
պիտի նստիք իսրայելի երկոտասան ցեղերը դա-
29 տելու։ Եւ ով որ թողուց տուներ, կամ եղբայր-
ներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ
կին, կամ որդիներ, կամ արտեր իր անուանս
համար, հարիւրապատիկ պիտի առնու, և յաւի-

*Ոմանք պարանը
†Ոմանք վերստին ծննդեան մէջ

30 անուանի կ'ըսէք պիտի ժառանգէ, բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և յետիններ՝ առաջին։

Գ.Լ. Ի

1 Քանզի երկնից թագաւորութիւնը նման է տանուտէր մարդու, որ առաւօտուն կանուխ ելաւ իր
2 այգւոյն համար մշակներ բռնել։ Եւ մշակներուն հետ օրը մի դահեկանի սակարկութիւն ըրաւ, և
3 զանոնք գրկից իր այգին։ Եւ ժամը երեքին առնելներուն ելաւ ուրիշներ տեսաւ, որ չուկային մէջ
4 պարապ կեցած էին։ Եւ բսաւ անոնց, Դուք ևս գացէք այգին, և ինչ որ արժան է կու տամ
5 ձեզ։ Անոնք ևս գացին։ Եւ նորէն ժամը վեցին և ժամը իննին տանէներուն ելաւ այնպէս ըրաւ։
6 Եւ մնացեալներուդ ժամուն տանէնները ելաւ, ուրիշներ գտաւ որ պարապ կեցած էին, և անոնց
բսաւ, Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կեցած էք։
7 Ըսին անոր, Վասն զի ոչ ոք մեզ վարձու բռնեց մեզ։ Բսաւ անոնց, Դուք ևս այգին գացէք, և ինչ որ
8 արժան է պիտի առնուք։ Եւ երբ երեկոյ եղաւ, այգւոյն տէրն բսաւ իր անտեսին, Մշակները կանչէ, և անոնց վարձքը տուր՝ յետիններէն
9 սկսելով մինչև առաջիններուն։ Եւ երբ եկան անոնք որ մնացեալներուդ ժամուն ձեռնամ եղեն, մէն մի
10 դահեկան առին։ Եւ առաջիններուն գալով կը կարծէին թէ աւելի պիտի առնուին, և անոնք ևս
11 առին մէն մի դահեկան։ Երբ առին, տան տիրոջ
12 դէմ տրտնջել կ'ըսէին և կ'ըսէին թէ Այդ յետինք մի ժամ գործեցին, և անոնք հաւասար
13 ըրիր մեզ որ օրուան ծանրութիւնը և տօթը կրեցինք։ Նա պատասխան տուաւ անոնցմէ մէյն և բսաւ, Բնիկը, ես չեմ գրկիր ձեզ։ Ոչ ապագրէն դուն իմ հետս մի դահեկանի սակարկութիւն

14 ըրիր։ Առ քուկդ և գնա։ կ'ուզեմ այս յետինին
15 տալ ինչպէս քեզ։ Մի՞թէ իշխանութիւն չունի՞մ իմ բաներուս վրայ ինչ որ կամիմ ընել։ կամ
նէթ չու այդպէս չար է որ ես բարերար եմ,
16 Այսպէս յետինք առաջին պիտի ըլլան, և առաջինք՝ յետին։ զանոնք կոչուածները շատ են, բայց
ընտրուածները՝ քիչ։
17 Եւ երբ Յիսուս Երուսաղէմ կ'երթէր, ճամբան երկուասան աշակերտներն իրեն հետ առաւ ա-
18 ռանձին, և բսաւ անոնց, Ահա երուսաղէմ կ'երթանք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն և դպիրներուն, և ի մահ պիտի
19 դատապարտեն զինք, Եւ հեթանոսներուն պիտի մատնեն զինք, ծաղր ընել և ծեծել և ի խաչ հանել։ և երրորդ օրը յարութիւն պիտի առնու։
20 Անատեն Զեբեդեայ որդւոց մայրը իր որդւոց հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ'ընէր և բան
21 մի կը խնդրէր անկէ։ Եւ նա բսաւ անոր, Ինչ կ'ուզես։ Բսաւ անոր, Ըսէ որ այս իմ երկու որդիքս, մին՝ աջ կողմդ և մէյը՝ ձախ կողմդ,
22 նստին քու թագաւորութեանդ մէջ։ Պատասխան առաւ Յիսուս և բսաւ, Չէք գիտեր ինչ կը խնդրէք։ կրնա՞ք խմել այն բաժակը զոր ես պիտի խմեմ, կամ այն մկրտութեամբս մկրտուիլ զոր
23 ես պիտի մկրտուիմ։ բսին անոր, Կրնանք։ Եւ բսաւ անոնց, Իմ բաժակս պիտի խմէք, և այն մկրտութեամբ զոր ես մկրտուիմ եմ պիտի մկրտուիք։ բայց իմ աջ կողմս և ձախ կողմս
նստել իմս չէ տալ, այլ որոց պատրաստուած է
24 իմ Հօրմէս։ Եւ երբ ժէս տասն աշակերտները լը-
25 սեցին, բարկացան այն երկու եղբայրներուն։ Իսկ Յիսուս իրեն կոչեց զանոնք և բսաւ, Գիտէք որ ազգաց իշխանները կը տիրեն անոնց, և մեծա-
26 մեծները կ'իշխեն անոնց։ Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, այլ ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ՝

27 Թող ըլլայ ձեր ապաաւորը. եւ ձենէ ով որ ա-
աջին ըլլալ կ'ուզէ՝ Թող ըլլայ ձեր ծառան.
28 ինչպէս Որդին մարդոյ չեկաւ ապաաւորութիւն
ընդունելէ, այլ ապաաւորութիւն ընել եւ իւր
կեանքը չաւերուն համար փրկանք տալ.
29 Եւ երբ անոնք երիքովէ ելան, մեծ բազմա-
30 թիւն անոր եւեւէն գնաց. եւ ահա ճամբուն քով
երկու կոյր նստած էին. երբ լսեցին թէ Յիսուս
կ'անցնէր, աղաղակեցին եւ ըսին, Ողորմէ մեզ,
31 Տէր, Որդի Դաւիթ· եւ բազմութիւնը կը յան-
դիմանէր զանոնք որ լռէին, բայց անոնք եա ա-
ւելի կ'աղաղակէին եւ կ'ըսէին, Ողորմէ մեզ, Տէր,
32 Որդի Դաւիթ· Եւ Յիսուս զկայ առնելով կոչեց
զանոնք եւ բաւ, Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզ·
33 Ըսին անոր, Տէր, որ մեր աչուըները բացուին·
34 եւ Յիսուս գթալով դպաւ անոնց աչուըներուն,
եւ իսկոյն բացուեցան անոնց աչուըները, եւ անոր
եւեւէն գացին·

Գլ· ԻԱ

1 Եւ երբ Երուսաղէմի մօտեցան եւ եկան Բեթփա-
գէ դէպ ի Ձիթենեաց լեռը, անաւեն Յիսուս խր-
2 ւկերաներէն երկուքը զրկեց· եւ ըսաւ անոնց,
Գնացէք այդ ձեր դիմացի գիւղը, եւ չուտ մը պի-
տի գտնէք կապած էշ մը եւ անոր հետ յաւանակ
3 մը· արձակեցէք զանոնք եւ բերէք ինծի· Եւ եթէ
ոք բան մը ըսէ ձեզ, ըսէք թէ Տէրոջը պիտոյ են·
4 եւ իսկոյն պիտի զրկէ զանոնք· Ա,յս ամէն բաները
եղան, որ կատարուի մարգարէին խօսքը որ կ'ըսէ,
5 Ըսէք Սիոնի դստեր, Ահա քու թագաւորդ կու
գայ քեզ հեզ, եւ իշուս վրայ հեծած, եւ իշու ձա-
6 գի, յաւանակի, վրայ· Աշակերտները գնացին, եւ
ինչպէս որ Յիսուս անոնց պատուիրած էր՝ ըրին·
7 Եւ բերին էշը եւ յաւանակը, եւ անոնց վրայ դրին

իրենց հանգերձները, եւ *նստաւ անոնց վրայ·
8 Եւ ժողովուրդին շատերն իրենց հանգերձները
ճամբուն վրայ տարածեցին, եւ ուրիշները ծառ-
ըն ձիւղեր կը կտրէին եւ ճամբուն վրայ կը տա-
9 րածէին· Եւ ժողովուրդները որ առջեւէն եւ ետեւէն
կ'երթային՝ կ'աղաղակէին եւ կ'ըսէին, Ովսաննա
Որդւոյ Դաւիթի, օրհնեալ որ գայ յանուն Տէրոջն·
Ովսաննա ի բարձունս·
10 Եւ երբ նա Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը
11 շարժեցաւ եւ ըսաւ, Ո՞վ է սա· Եւ ժողովուրդները
ըսին, Սա է Յիսուս մարգարէն Գալիլեայի Նա-
զարէթէ·
12 Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, եւ դուրս
հանեց բոլոր անոնք որ տաճարին մէջ կը վաճա-
ռէին եւ կը գնէին, եւ ստակ փոխողներուն սե-
ղանները եւ աղաւնի վաճառողներուն աթոռները
13 կործանեց· Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ իմ
տունս աղօթքի տուն պիտի կոչուի, բայց դուք
աւազակներու սպր բրիք ղա·
14 Եւ տաճարին մէջ կոյրեր եւ կաղեր եկան անոր,
15 և բժշկեց զանոնք· Երբ քահանայապետները եւ
դպիրները տեսան անոր հրաշները, եւ զաղջս որ
տաճարին մէջ կ'աղաղակէին եւ կ'ըսէին, Ովսաննա
16 Որդւոյ Դաւիթի, բարկացան· Եւ ըսին անոր, Կը
լսե՞ս ինչ կ'ըսեն զոքա· Եւ Յիսուս բաւ անոնց,
Այո, բնաւ չէ՞ք կարդացած, Թէ Մանկանց և
կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր·
17 Եւ թողուց զանոնք, քաղաքէն դուրս ելաւ
նէա ելաւ, և գիշերը հոն կեցաւ·
18 Եւ առաւօտուն երբ քաղաքը կը դառնար, ա-
19 նօթեցաւ· Եւ ճամբուն վրայ թզենի մը տեսնելով
գնաց մօտ և անոր վրայ ուրիշ բան չգտաւ բայց
միայն տերև· և ըսաւ անոր, Այսուհետև քենէ

*Ոմանք՝ նստուցին

պատուղ չբերայ յաւիտեան. և իսկոյն չորացաւ թզե-
20 նին։ Եւ աշակերտները երբ տեսան, զարմա-
ցան և ըսին թէ ինչպէս չուտ չորացաւ թզենին։
21 Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոնց,
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, եթէ հաւատաք ունենաք
և չերկմտիք, ոչ միայն պիտի ընէք ինչ որ այդ
թզենուն եղաւ, այլև եթէ այս լերան ըսէք, Սի
22 ինկիր ի ծով, պիտի ըլլայ. Եւ ամէն ինչ որ
աղօթքի մէջ հաւատալով կը խնդրէք՝ պիտի առ-
նուք։

23 Եւ երբ տաճարը եկաւ, քահանայապետները և
ժողովրդեան ծերերն անոր մօտեցան, երբ կը
սորվեցնէր, և ըսին, Ո՞ր իշխանութեամբ կ'ը-
նես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզ այդ իշխա-
24 նութիւնը։ Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ
անոնց, Ես ես բան մը հարցունեմ ձեզ, զոր եթէ
ինծի ըսէք, և ես պիտի ըսեմ ձեզ թէ ինչ իշ-
25 խանութեամբ կ'ընեմ այս բաները։ Յովհաննու
մկրտութիւնն ուսա՞ն էր. յերկինէ՞ թէ ի մարդ-
կանէ։ Եւ անոնք իրենց մէջ կը խորհէին և կ'ը-
26 սէին, եթէ ըսենք, Յերկինէ, պիտի ըսէ մեզ թէ
Ապա ինչո՞ւ չհաւատացիք անոր։ իսկ եթէ ըսենք,
ի մարդկանէ, ժողովուրդին կը վախնանք, քանզի
ամէնքն զՅովհաննէս իբրև մարգարէ կ'ընդունին։
27 Եւ պատասխան ետուին Յիսուսի, ըսին, Չենք դի-
տեր։ Եւ ես ըսաւ անոնց, Եւ ես չեմ ըսեր ձեզ
թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները։
28 Բայց ի՞նչպէս կ'երևի ձեզ. մարդ մը երկու
որդի ունէր, և գնաց ըսաւ առաջինին, Որդեակ,
29 դնա այսօր գործէ այգիս։ Նա պատասխան
տուաւ և ըսաւ, Չեմ ուզեր Երթալ, բայց յետոյ
30 զղջացաւ և գնաց։ Մի՛սին ևս գնաց և այնպէս
ըսաւ։ և նա պատասխան տուաւ և ըսաւ, Կ'եր-
31 թամ, տէր. և չգնաց։ Ա՞ր այս երկուքէն հօր
կատարեց Ե՞ր հօրը կամքը։ Ըսին անոր, Առաջինը։

Ցիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ
մաքսաւորք և պոռնիկք կանխեն ձեզ յերկն-
32 քնութիւն Աստուծոյ թագաւորութիւնը։ Քանզի Յով-
հաննէս եկաւ ձեզ արդարութեան ճանապարհեան,
և դուք չհաւատացիք անոր, բայց մաքսաւորք
և պոռնիկք հաւատացին անոր. և դուք տեսաք
և յետոյ չզղջացիք հաւատալ անոր։
33 Այլ առակ ևս լսեցէք. Տանուտէր մարդ մը
կար որ այգի տնկեց և ցանգով պատեց զայն,
և անոր մէջ հնձան փորեց և աշտարակ շինեց,
և յանձնեց զայն մշակներու, և ինք գնաց օտար
34 երկիր։ Երբ պտղոց ժամանակը մատչեաւ, իր
ծառաները ղրկեց մշակներուն, անոր պտուղներն
35 առնուլ։ Եւ մշակները բռնեցին անոր ծառա-
ները, զմին ծեծեցին, զմիւսն սպաննեցին, ուրիշ
36 մը քարկոծեցին։ Նորէն ղրկեց ուրիշ ծառաներ
աւելի քան զառաջինն, և ըրին անոնց ինչպէս
37 պէտ։ Վերջապէս ղրկեց անոնց իր որդին ըսե-
38 լով, Թերևս ամչնան իմ որդիէս։ Բայց մշակները
երբ տեսան որդին, ըսին իրարու, Սա է ժառան-
գը. եկէք սպաննենք զնա և տիրենք անոր ժա-
39 ռանգութեանը։ Եւ առին զնա, սպրծին դուրս
40 հանեցին և սպաննեցին։ Ուստի երբ տիրոջն այրը
41 գայ, ի՞նչ պիտի ընէ այն մշակներուն։ Ըսին ա-
նոր, Այն չարերը չարաչար պիտի կորսուանէ, և
այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու որ պտու-
42 ղներն իրենց ժամանակին պիտի տան անոր։ Ըսաւ
անոնց Յիսուս, Բնաւ չկ'ը կարդացած գրքին
մէջ, Գործը զոր շինողք անարգեցին, նա եղաւ
գլուխ անկեան. Տէրմէ եղաւ այս և զարմանալի
43 է յաչս մեր։ Վասն որոյ կ'ըսեմ ձեզ, որ Աստու-
ծոյ թագաւորութիւնը պիտի առնուի ձենէ, և
պիտի արուի այնպիսի ազգի մը որ անոր պտուղ-
44 ները բերէ։ Եւ ով որ այս քարիս վրայ կ'ինայ պի-
տի կտրաթի, և որու վրայ կ'ինայ՝ պիտի փշրէ զնա,

45 Եւ երբ քահանայապետները և փարիսեցիք լը-
սեցին անոր առակներն, իմացան Թէ իրենց հա-
46 մար կ'ըսէր։ Եւ կը փնտռէին Ըէ Էէզուս բռնեն
գնա, բայց ժողովուրդէն վախցան, քանզի իբրև
մարգարէ կ'ընդունէին գնա։

ԳԼ. ԻԲ

1 Պարձեալ պատասխան առաւ Յիսուս և ըսաւ
2 անոնց առակօք, Երկինից Թագաւորութիւնը կը
նմանի Թագաւոր մարդու, որ իւր որդւոյն համար
3 հարսանիք ըրաւ։ Եւ ղրկեց իւր ծառանները կան-
չել հարսանիք հրաւիրեալները, և անոնք չկամե-
4 ցան գալ։ Դարձեալ ղրկեց ուրիշ ծառաներ և
ըսաւ, Ըսէք հրաւիրելոց, Ահա ճաշս պատրաս-
տեցի, զուարակներս և գէր անասուններս դե-
նուած են, և ամենայն ինչ պատրաստ է. հար-
5 սանիք եկէք։ Բայց անոնք անհոգութիւն ընելով
գացին, մին՝ իւր արտը, և միսը՝ իւր առուտու-
6 րը։ Եւ ուրիշներն անոր ծառաները բռնեցին,
7 նախատեցին և սպաննեցին։ Եւ Թագաւորը երբ
լսեց, բարկացաւ, և ղրկեց իւր զօրքը և սատա-
կեց այն ապստամբները, և անոնց քաղաքն այրեց։
8 Ապա ծառաներուն ըսաւ իւր ծառաներուն, Հարսանիքը
պատրաստ է, բայց հրաւիրեալները չէին արժանի։
9 Ուստի գնացէք ճամբաները գլուխները, և որչ որ
10 գտնէք՝ հարսանիք հրաւիրեցէք։ Եւ այն ծառա-
ներն ելան ճամբաներուն վրայ, և որչ որ գտան,
Թէ չար և Թէ բարի, ամէնքը ժողվեցին, և հար-
11 սանիքը լցաւ հարսնեւորներով։ Եւ Թագաւորը
երբ մտաւ տեսնել հարսնեւորները, հոն տեսաւ
մարդ մը որ հարսանեաց հանդերձ հագած չէր։
12 Եւ ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար հոս մտար՝
առանց ունենալու հանդերձ հարսանեաց. և նա
13 պապանձեցաւ։ Անսաեն Թագաւորն ըսաւ սպա-

սաւորներուն, Կապեցէք ասոր ոտքը և ձեռքը,
և առէք և հանեցէք զնա դուրսի խաւարը. հոն
14 պիտի ըլայ լալ և կրճտել ատամանց. Քանզի
բազումք են կոչեցեալք և սակաւ են ընտրեալք։
15 Ապաեն փարիսեցիք գնացին խորհուրդ ըրին,
16 Թէ ինչպէս անոր որոգայթ դնէին խօսքով։ Եւ
իրենց աշակերտները Հերովդեսեաններուն հետ
ղրկեցին անոր և ըսին, Վարդապետ, գիտենք որ
ճշմարիտ ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամ-
բան կը սորվեցնես, և մարդու համար հոգդ
17 չէ, քանզի մարդոց աչառութիւն չես ըներ. Ուս-
ա՛ր ըսէ մեզ, ի՞նչպէս կ'երևի քեզ, կայսեր հարկ
18 տալ արժա՞ն է Թէ ոչ։ Յիսուս գիտնալով անոնց
խորամանկութիւնն ըսաւ, Ընդէ՞ր կը փորձէք
19 զիս, կեղծաւորներ. Ցուցէք ինձ հարկին դրամը։
20 Եւ անոնք դահեկան մը բերին անոր։ Եւ ըսաւ
21 անոնց, Որո՞ւ է այս պատկերը և գիրը։ Ըսին ա-
նոր, Կայսեր։ Ապաեն ըսաւ անոնց, Ուրեմն
առէք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աս-
22 տուծոյ։ Երբ լսեցին, զարմացան, և Թողին զնա
և գնացին։
23 Նոյն օրը եկան առ նա սադուկեցիք որ կ'ըսեն
24 Թէ չկայ յարութիւն, և անոր հարցուցին Ըսելով,
Վարդապետ, Մովսես ըսաւ, ԵԹԷ մարդ մը ա-
ռանց զաւակի մեռնի, անոր եղբայրն առնու
25 անոր կինը, և հանէ զաւակ իւր եղբօրը։ Աքդ
եօթն եղբարք կային մեր մէջ, և առաջինն առա-
կին և մեռաւ, և զաւակ չունենալուն համար
26 Թողուց իւր կինը իւր եղբօրը։ Նոյնպէս և երկ-
27 րորդը և երրորդը, մինչև եօթներորդը։ Յետ
28 ամենեցուն մեռաւ կինը։ Ուրեմն ի յարութեան
այն եօթնէն որո՞ւ կին պիտի ըլայ, քանզի ա-
29 մէնքն ունեցան զնա կին։ Եւ Յիսուս պատասխան
տալով ըսաւ անոնց, Դուք մոլորեալ էք, որ ոչ
գիրքերը գիտէք և ոչ Աստուծոյ զօրութիւնը։

30 Քանզի ի յարութեան ոչ կին կ'առնուն, և ոչ
էրկան կը տրուին, այլ երկնից մէջ Աստուծոյ
31 հրեշտակներուն պէս են։ Բայց մեռելներուն յա-
րութիւն առնելուն համար չէ՞ք կարդացած Աս-
32 տուծմէ ձեզի բսուած խօսքը. Ես եմ Աստուած
Աբրահամու, և Աստուած Իսահակայ, և Աստուած
Յակոբայ։ Աստուած մեռելոց Աստուած չէ, այլ՝
33 կենդանեաց։ Եւ ժողովուրդները լսելով կը զար-
մանային անոր վարդապետութեան վրայ։
34 Բայց փարիսեցիք երբ լսեցին թէ պատասխա-
նած նա զսադուկեցիս, իրմէ ժողովեցան։
35 Եւ անոնցմէ մին, օրինական մը, հարցուց փոր-
36 ձելով զնա և բսաւ, Վարդապետ, ո՞ր պատուի-
37 րանը մեծ է յօրէնս։ Եւ Յիսուս բսաւ անոր, Կաւ
Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու
38 բոլոր անձովդ և քու բոլոր մտօքդ։ Այս է ա-
39 ռաջին և մեծ պատուիրան։ Եւ երկրորդը նման
40 անոր, Կաւ ընկերդ սիրես քու անձիդ պէս։ Այս
երկու պատուիրանին կախուած են ամենայն օ-
րէնք և մարգարէք։
41 Եւ երբ փարիսեցիք ժողվեցան, Յիսուս հար-
42 ցուց անոնց և բսաւ, Քրիստոսի վրայ ի՞նչ կարծիք
ունիք։ որո՞ որդի է նա։ Ըսին անոր, Դաւիթ։
43 Բսաւ անոնց Յիսուս, Ապա ի՞նչպէս Դաւիթ Հոգ-
44 ւով Տէր կը կոչէ զնա և կ'ըսէ։ Տէրը իմ Տէրոջս
բսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև քու թշնամի-
45 ներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։ Ուրեմն
եթէ Դաւիթ Տէր կը կոչէ զնա, ի՞նչպէս անոր
46 որդին կ'ըլլայ նա։ Եւ ոչ ոք կրնար պատասխա-
նել անոր խօսք մը. և այն օրէն հետէ ոչ ոք կը
համարձակէր անոր բան մը հարցունել։

ԳԼ. ԻԳ

1 Ապատեն Յիսուս խօսեցաւ ժողովուրդներուն

2 և իր աշակերտներուն և բսաւ, Մովսէսի աթոռը
3 դպիրները և փարիսեցիները նստած են. Ուրեմն
ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք՝ պահեցէք և ըրէք,
բայց անոնց գործերուն պէս մի՛ ընէք, վասն զի
4 կ'ըսեն և չեն ըներ։ Քանզի ծանր և դժուարակիր
բեռներ կը կապեն և կը դնեն մարդոց ուսերուն
վրայ, և իրենց մատով չեն ուզեր շարժել զա-
5 նոնք։ Եւ իրենց ամէն գործը կ'ընեն մարդոց
երեւնալու համար։ կը լայնցունեն իրենց գրատա-
ռակները և կ'երկնցունեն իրենց հանդերձներուն
6 քղանցները։ Առաջին բարձրութիւնը կը սիրեն
լրեթիրս, և ժողովրդանոցներուն մէջ՝ առաջին
7 աթոռները, և չուկաներու մէջ՝ ողջոյնները, Եւ
Թարբի կոչուիլ ի մարդկանէ։ Բայց դուք
Թարբի մի՛ կոչուիք, քանզի ձեր Ուսուցիչը մի է,
այսինքն՝ Քրիստոս, և դուք ամէնքդ եղբայր էք։
9 Եւ երկրի վրայ Հայր մի՛ կոչէք ձեզ, քանզի ձեր
10 Հայրը մի է որ յերկինս է։ Եւ դուք ուսուցիչներ
մի՛ կոչուիք, քանզի ձեր Ուսուցիչը մի է, այսինքն՝
11 Քրիստոս։ Եւ ձեզմէ մեծը պիտի ըլլայ ձեր սպա-
12 սաւորը։ Ով որ իր անձը կը բարձրացունէ՝ պի-
տի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհե-
ցունէ՝ պիտի բարձրանայ։
13 Բայց վայ ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարի-
սեցիներ, որ երկնից Թագաւորութիւնը մարդոց
առջեւ կը փակէք. քանզի դուք չէք մտներ, և
14 մտնողները չէք Թողուր որ մտնեն։ Վայ ձեզ,
կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ, որ այրի-
ներուն տուները կ'ուտէք, և Հաւատոյ երեւցնելու
համար կ'երկարէք աղօթքը. վասն որոյ տուչի
15 դատապարտութիւն պիտի ընդունիք։ Վայ ձեզ,
կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ, որ ծով և
ցամաք կը պտրտիք Նոթադատ մը ընել, և երբ
ըլլայ, գեհենի որդի կ'ընէք զնա կրկին եւս տուչի
16 քան զձեզ։ Վայ ձեզ, կոյր առաջնորդներ, որ

կ'ըսէք թէ Ով որ տաճարին վրայ երդուայ ընէ՛
բան մը չէ, բայց ով որ ոսկւոյն վրայ երդուայ
ընէ որ տաճարին մէջ է՝ պարտաւոր կ'ըլլայ։
17 Ցիմարք և կոյրք, որը մեծ է. ոսկէն եթէ տա-
18 ճարը որ կը սրբացունէ ոսկին։ Եւ թէ, Ով որ
սեղանին վրայ երդուայ ընէ՛ բան մը չէ, բայց ով
որ երդուայ ընէ պատարագին վրայ որ սեղանին
19 վրայ է՝ պարտաւոր կ'ըլլայ։ Ցիմարք և կոյրք,
որը մեծ է. պատարագը թէ սեղանը որ կը սրբ-
20 բացունէ պատարագը։ Ուստի ով որ սեղանին
վրայ երդուայ ընէ, երդուայ կ'ընէ անոր վրայ և
21 ամէն բանի վրայ որ անոր վրայ է. Եւ ով որ
տաճարին վրայ երդուայ ընէ, երդուայ կ'ընէ ա-
22 նոր վրայ և անոր մէջ բնակողին վրայ. Եւ ով որ
երկնից վրայ երդուայ ընէ, երդուայ կ'ընէ Ա-
ստուծոյ աթոռին վրայ և անոր վրայ նստողին վր-
23 րայ։ Վայ ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարիսե-
ցիներ, որ անանխով և սամիթ և չամանի տասա-
նորդը կու տաք, և կը թողուք օրինաց ծանր
ծանր բաները, դատաստանը և ողորմութիւնը
և հաւատքը. ասոնք պարտ էր ընել, և զանոնք
24 չթողուլ։ Կոյր առաջնորդներ, որ մժղուկը կը
25 քամէք և ուղտը կը կլանէք։ Վայ ձեզ, կեղծա-
ւոր դպիրներ և փարիսեցիներ, որ բաժակին և
պնակին դուրսը կը մաքրէք, և ներքուստ լի են
26 յափշտակութեամբ և *անիրաւութեամբ։ Կոյր
փարիսեցի, մաքրէ նախ բաժակին և պնակին
27 ներսը, որ անոնց դուրսը ևս մաքուր ըլլայ։ Վայ
ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ, որ
կը նմանիք բռնեալ գերեզմաններու, որ արտա-
քուստ գեղեցիկ կ'երևին, և ներքուստ լի են
մեռելներու ոսկրներով և ամէն պղծութեամբ։
28 Նոյնպէս և դուք արտաքուստ արդար կ'երևիք

*Ոմն.՝ անբարեխառնութեամբ

մարդոց, և ներքուստ լի էք կեղծաւորութեամբ
29 և անօրէնութեամբ։ Վայ ձեզ, կեղծաւոր դպիր-
ներ և փարիսեցիներ, որ կը շինէք մարգարէից
տապանները, և կը զարդարէք արդարոց գերեզ-
30 մանները, Եւ կ'ըսէք, Եթէ մեր հայրերուն օրերն
ըլլայինք, մասնակից չէինք ըլլար անոնց հետ
31 մարգարէներուն արեան։ Ուրեմն դուք ձեր վրայ
կը վկայէք թէ զաւակներ էք անոնց որ մարգա-
32 րէները կը սպաննէին։ Ո՜հ, դուք ձեր հայրե-
33 րուն չափը լցէք։ Օձեր, խիթերու ծնունդներ,
ինչպէս պիտի փախչիք գեհենին դատապարտու-
34 թենէն, Վասն որոյ ահա ես կը խրկեմ ձեզ մար-
գարէներ և իմաստուններ և դպիրներ, և ա-
նոնցմէ զմեռ պիտի սպաննէք և խաչ հանէք,
և զոմանս ձեր ժողովրդականցներուն մէջ պիտի
35 ծեծէք, և հալածէք քաղաքէ քաղաք, Որպէս զի
երկրի վրայ թափուած բոլոր արդար արիւն գայ
ձեր վրայ, Արեղի արդարոյ սպանեալին մինչև ցար-
իւն Բարաքիայի որդւոյն Զաքարիայ զոր սպան-
36 նեցիք տաճարին և սեղանոյն մէջտեղ։ Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ, Այս ամէն բաները պիտի գան այս
ազգին վրայ։
37 Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէ-
ները կը սպաննեիր, և քրկուածներն առ քեզ
կը քարկոծէիր, քանի՛ անգամ քու որդիքդ կա-
մեցայ ժողվել ինչպէս հաւը կը ժողվէ իր ձագե-
38 րը թևերուն տակ, և դուք չկամեցաք։ Ահա ձեր
39 տունը աւերակ պիտի մնայ ձեզ. Քանի կ'ըսեմ
ձեզ որ այսուհետև պիտի չտեսնէք զիս, մինչև
ըսէք, Օրհնեալ որ կու գայ յանուն Տեառն։

ԳԼ. ԻԹ

1 Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար,
և աշակերտներն անոր քով գնացին տաճարին

2 չէ՞ք անոր ցուցնելու։ Եւ Յիսուս անոնց բսաւ,
Ձի՞ք տեսներ այս ամէնը. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ,
պիտի չմնայ հոս քար քարի վրայ որ չքակուի։
3 Եւ երբ նստած էր նա Ձիթենեաց լեռը, աշա-
կերտներն եկան անոր առանձին և ըսին, Ըսէ
մեզ, երբ պիտի ըլլան այդ բաները. և ի՞նչ պի-
տի ըլլայ քու գալստեանդ և աշխարհիս կատա-
4 րածին նշանը։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և
բսաւ անոնց, Զգոյշ կեցէք, գուցէ ոք խաբէ
5 զձեզ. Քանզի շատերը պիտի գան իմ անունովս
և ըսեն Թէ ես եմ Քրիստոսը, և պիտի մոլորե-
6 ցունեն շատերը։ Եւ պիտի լսէք պատերազմներ
և պատերազմներու լուրեր. զգոյշ կեցէք որ չը-
խռովիք. քանզի պէտք է որ այն ամէն բաներն
7 ըլլան, բայց դեռ կատարած չէ։ Վասն զի ազգ
ազգի վրայ պիտի ելլէ, և թագաւորութիւն՝ թա-
գաւորութեան վրայ, և տեղ տեղ սովք և սրա-
8 ծութիւնք և երկրաշարժք պիտի ըլլան։ Բայց
9 ասոնք ամէնը սկիզբն են երկունց։ Անոնք նե-
ղութեան պիտի մատնեն զձեզ և պիտի սպաննեն
զձեզ, և իմ անունս համար ատելի պիտի ըլլաք
10 բոլոր ազգաց։ Եւ անոնք շատերը պիտի գայ-
թակղին, և պիտի մատնեն զիրար և պիտի ատեն
11 զիրար։ Եւ շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն
12 և պիտի մոլորեցունեն շատերը։ Եւ անօրէնու-
թեան բազմանալուն համար շատերուն սէրը պի-
13 տի պաղի։ Բայց ով որ մինչև ի սպառ համբերէ՝
14 պիտի ապրի։ Եւ արքայութեան այս աւետարանը
պիտի քարոզուի բովանդակ աշխարհ՝ բոլոր ազ-
գերուն իւ վկայութիւն, և ապա վախճանը պիտի
գայ։
15 Ուստի երբ տեսնէք աւերածին պղծութիւնը
որ Դանիէլ մարգարէն բսնով բսուած է, Թէ
սուրբ տեղը կը կենայ, (ով որ կարդայ՝ Թող
16 հասկընայ.) Անոնք անոնք որ Հրէաստանի մէջ

17 են՝ լեռները Թող փախչին. Եւ նա որ տանեաց
վրայ է՝ Թող չիջնէ իւր տունէն բան մը առնուլ.
18 Եւ նա որ արտն է՝ Թող նա չդառնայ իւր հան-
19 դերձներն առնուլ։ Բայց վայ այն օրերը յղիաց
20 և ծծատուց։ Եւ աղօթք ըրէք որ ձեր փախուս-
21 ար ձմեռը չըլայ, և ոչ շաբաթ օրը. Քանզի ան-
տանն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլայ, որ
նմանը եղած չէ աշխարհի սկիզբէն մինչև յարդ,
22 և ոչ պիտի ըլայ։ Եւ եթէ այն օրերը չնուազեին,
բնաւ մարմին մը պիտի չազատէր. բայց ընտրելոց
23 համար այն օրերը պիտի նուազին։ Անտանն եթէ
ոք ըսէ ձեզ Թէ Ահա աստ է Քրիստոս կամ անդ,
24 մի հաւատաք. Քանզի սուտ քրիստոսներ և սուտ
մարգարէներ պիտի ելլեն, և մեծ նշաններ և հր-
բաներ պիտի ցուցնեն, որ եթէ հնար էր, բնա-
25 րհաներն անգամ մոլորեցունէին։ Ահա առաջուց
26 ըսի ձեզ։ Ուստի եթէ ըսեն ձեզ Թէ Ահա անա-
պատն է, մի ելլէք. և Ըե՛ Ահա ներքին սենեակ-
27 ներուն մէջ է, մի հաւատաք։ Վասն զի ինչպէս
որ փայլակն յարևելից կ՚ելլէ և մինչև արևմտեան
կ՚երևի, այնպէս պիտի ըլայ Որդւոյ մարդոյ գա-
28 լստեան։ Քանզի ուր մեռած մարմին կայ, հոն
պիտի ժողովին արծուիք։
29 Եւ վաղվաղակի այն նեղութեան օրերէն ետքը
արեգակը պիտի խաւարի, և լուսին պիտի չտայ
իւր լոյսը, և աստղք յերկինից պիտի իյնան, և
30 զօրութիւնք երկնից պիտի շարժին։ Եւ անտանն
Որդւոյ մարդոյ նշանը պիտի երևի յերկինս, և
անտանն երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, և
պիտի տեսնեն Որդին մարդոյ երկնից ամպերուն
31 վրայ եկած զօրութեամբ և մեծ փառօք։ Եւ պի-
տի զրկէ նա իւր հրեշտակները մեծաձայն փողով,
և պիտի ժողվեն անոր ընտրեալները չորս հովե-
րէն, երկնից մէկ ծայրէն մինչև միւս ծայրը։
32 Թզենիէն սորվեցէք առակը. երբ անոր ոստերը

կը կակղանան և տերևները կը ցցուին, գիտէք
33 Թէ մօտ է ամառը։ Նոյնպէս և դուք երբ տես-
նէք բոլոր այս բաները, գիտցէք Թէ մօտ է առ-
34 դուռս։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ այս ազգը պիտի
35 չանցնի մինչև այս ամէն բաները ըլլան։ Երկինք
և երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս քնաւ
պիտի չանցնին։

36 Իսկ այն օրուան և այն ժամուն համար ոչ ոք
գիտէ, և ոչ երկնից *հրեշտակները, բայց միայն
37 Հայրս։ Բայց ինչպէս եղաւ Նոյի օրերը, Որդւոյ
38 մարդոյ գալուստն ալ պիտի ըլլայ այնպէս։ Ջան-
զի ինչպէս էին այն օրերը Ջրհեղեղէն առաջ, կ'ու-
տէին, կ'ըմպէին, կին կ'առնուին և երկան կը
տրուէին, մինչև այն օրը որ Նոյ մտաւ տապանը,
39 Եւ չգիտցան մինչև Ջրհեղեղը եկաւ և զնոնց ա-
մէնքը։ Որդւոյ մարդոյ գալուստն ալ պիտի ըլ-
40 լայ այնպէս։ Անոնցմէ երէք երկու հոգի արտի մը
մէջ են, մին պիտի առնուի և միւսը Թողուի։
41 Եւ երէք կին մէկ աղօրյոյ մէջ ալալու վրայ
գտնուին, մին պիտի առնուի և միւսը Թողուի։
42 Ուրեմն արթուն կեցէք, քանզի չէք գիտեր
43 Թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ։ Բայց զայս
գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար Թէ գի-
շերուան որ պահուն գողը կու գայ, արթուն կը
44 կենար և չէր Թողուր ծակել իր տունը։ Ուստի
և դուք պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդ-
45 ոյ կու գայ այնպիսի ժամու որ դուք չէք կար-
ծեր։ Ուստի ո՞վ է այն հաւատարիմ և խմաստուն
ծառան զոր իր տէրը դրաւ իր ծառաներուն
46 վրայ, որ տուներն անոնց կերակուր տար։ Երանի
է այն ծառային, զոր իր տէրը երբ գայ այնպէս
47 ըրած գտնէ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ իր բոլոր
48 ընչից վրայ պիտի կեցունէ զնա։ Ապա եթէ այն

*Ոմն.՝ հրեշտակները և ոչ Որդին

չար ծառան ըսէ իր սրտին մէջ, Իմ տէրս կ'ու-
49 շացունէ իր գալը։ Եւ սկսի ծեծել իր ծառա-
յակիցները, և արբեցողներու հետ ուտել և ըմ-
50 պել, Ա,ն ծառային տէրը պիտի գայ այնպէս օր
մը որ չսպասեր, և այնպէս ժամ մը որ չգիտեր,
51 Եւ ընդ մէջ պիտի կարէ զնա, և կեղծաւորնե-
րուն հետ պիտի դնէ անոր բաժինը։ Հոն պիտի
ըլլայ լալ և կրճտել ատամունց։

ԳԼ. ԻԵ

1 Ապա երկնից թագաւորութիւնը պիտի նմանի
տասն կուսանաց, որ իրենց լապտերներն առնելով
2 ելան դիմաւորել փեսան։ Ասոնցմէ հինգն խմաս-
3 տուն էին, և հինգն՝ յիմար։ Յիմարներն առին ի-
րենց լապտերները, և իրենց հետ ձէթ չառին։
4 Բայց խմաստուններն առին իրենց լապտերներուն
5 հետ ամաններով ձէթ։ Եւ երբ փեսան ուշացաւ,
6 ամէնքը թմրեցան և քնացան։ Եւ կէս գիշերին
ձայն եղաւ, Ահա փեսան կու գայ. ելէք դիմաւո-
7 րել զնա։ Ապա Ա,ստանք բոլոր կուսանք ելան և իրենց
8 լապտերները կազմեցին։ Եւ յիմարներն ըսին խ-
մաստուններուն, Տուէք մեզ ձեր իւղէն, քանզի
9 մեր լապտերները կը մարին։ Պատասխան տուին
խմաստուններն և ըսին, Մի գուցէ մեզ և ձեզ
չբաւէ. այլ գնացէք մանաւանդ վաճառականնե-
10 րուն և գնեցէք ձեզի համար։ Երբ անոնք գնա-
ցին գնել, եկաւ փեսան, և պատրաստքն մտան
անոր հետ հարսանիքը, և փակուեցաւ դուռը։
11 Ցետոյ միւս կուսանք եկան և ըսին, Տէր, Տէր,
12 բաց մեզ։ Բայց նա պատասխան տուաւ և ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ Չէմ ճանչնար զձեզ։
13 Ուրեմն արթուն կեցէք, քանզի ոչ գիտէք օրը
և ոչ *ժամը։

*Ոմն.՝ ժամը, օրուն մէջ Որդին մարդոյ կու գայ

14 Քանզի ինչպէս օտար երկիր գնացող մարդ մը կոչէց իւր ծառաներըը, և իւր տացուածն յանձ-
15 նեց անոնց։ Միոյն տուաւ հինգ տաղանդ, և միոյն՝ երկու, և միոյն՝ մի, իւրաքանչիւրոյ ըստ
16 իւր կարողութեան, և իսկոյն ճամբայ ելաւ։ Եւ այն որ հինգ տաղանդն առած էր՝ գնաց անոնց-
մով գործ ըրաւ, և ուրիշ հինգ տաղանդ չահե-
17 ցաւ։ Նմանապէս այն որ երկուքն առած էր՝ ու-
18 րիշ երկու ևս շահեցաւ։ Իսկ այն որ առած էր
զմին՝ գնաց փորեց գետինը, և թաքցուց իւր տէ-
19 րոյն արծաթը։ Շատ ժամանակ ետքը եկաւ ծա-
ռաներուն տէրը և հաշիւ պահանջեց անոնցմէ։
20 Եւ հինգ տաղանդն առնողը եկաւ ուրիշ հինգ
տաղանդ ևս բերաւ, և ըսաւ, Տէր, հինգ տա-
ղանդ յանձնեցիր ինձ, ահա այլ հինգ տաղանդ
21 ևս անոնց վրայ շահեցայ։ Ըսաւ անոր տէրը, Ազ-
նիւ, բարի և հաւատարիմ ծառայ. դու որ սա-
կաւուն մէջ հաւատարիմ եղար՝ շատ բաներու
վրայ պիտի կեցունեմ զքեզ. մուտ գու տիրոջդ
22 ուրախութիւնը։ Երկու տաղանդն առնողը եկաւ
և ըսաւ, Տէր, երկու տաղանդ յանձնեցիր ինձ,
ահա այլ երկու տաղանդ ևս անոնց վրայ շահե-
23 ցայ։ Ըսաւ անոր տէրը, Ազնիւ, բարի և հաւա-
տարիմ ծառայ. դու որ սակաւուն մէջ հաւա-
տարիմ եղար, շատ բաներու վրայ պիտի կեցու-
նեմ զքեզ. մուտ գու տիրոջդ ուրախութիւնը։
24 Մէկ տաղանդն առնողը եկաւ և ըսաւ, Տէր, գի-
տէի թէ դուն խիստ մարդ ես, կը հնձես՝ ուստի
25 չսերմանեցիր, և կը ժողվես՝ ուր չցանեցիր. Ուս-
տի վախնալով գնացի թաքուցի գու տաղանդդ.
26 գետնին տակ. ահա գունդ քեզ։ Պատասխան
տուաւ անոր տէրը և ըսաւ անոր, Չար և ծոյլ
ծառայ, գիտէիր թէ կը հնձեմ՝ ուստի չսերմա-
27 նեցի, և կը ժողվեմ՝ ուր չցանեցի. Ուրեմն պարտ
էր քեզ իմ արծաթիս սեղանաւորներուն տալ,

28 որ երբ գայի, չահով առնուի իմ։ Արդ առէք
ատկէ տաղանդը, և տուէք անոր որ տասը տա-
29 ղանդ ունի։ Քանզի այն ամենուն որ ունի՝ պիտի
տրուի, և պիտի ուելնայ, և անկէ որ չունի՝ նաև
30 այն զոր ունի պիտի առնուի։ Եւ այդ անպիտան
ծառան հանեցէք արտաքին խաւարը. հոն պիտի
լլլայ լալ և կրճտալ ատամունց։
31 Եւ երբ Որդին մարդոյ գայ իւր փառօք և բո-
լոր *սուրբ հրեշտակներն անոր հետ, անառեն
32 պիտի նստի իւր փառաց աթոռը. Եւ անոր առ-
ջեւ պիտի ժողովին բոլոր ազգերը, և զանոնք
պիտի զատէ իրարմէ, ինչպէս հովիւ կը զատէ ոչ-
33 խարներն այծերէն. Եւ ոչխարները պիտի կե-
ցունի իւր աջ կողմը, և այծերը՝ ձախ կողմը։
34 Անառեն Թագաւորը պիտի ըսէ անոնց որ աջ
կողմն են, Եկէք, օրհնեալք Հօր իմոյ, ոչխարհի
սկիզբէն ձեզի համար պատրաստուած Թագաւո-
35 րութիւնը ժառանգեցէք. Քանզի քաղցեալ էի,
և տուիք ինձ ուտել. ծարաւի էի, և արբուցիք
36 ինձ. օտարական էի, և ներս առիք զիս. Մերկ
էի, և հագուեցուցիք զիս. հիւանդ էի, և հոգ
տեսնել զիս. բանտի մէջ էի, և եկաք առ իս։
37 Անառեն արդարները պատասխան պիտի տան ա-
նոր և ըսեն, Տէր, երբ տեսանք զքեզ քաղցեալ
և կերակրեցինք, կամ ծարաւի՝ և արբուցինք.
38 Երբ տեսանք զքեզ օտարական և ներս առինք,
39 կամ մերկ՝ և հագուեցուցինք. Երբ տեսանք
զքեզ հիւանդ կամ բանտի մէջ, և եկանք առ
40 քեզ։ Եւ Թագաւորը պատասխան տալով պիտի
ըսէ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Որովհետև
այս իմ եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն
ըրիք, ինձ ըրիք։
41 Անառեն անոնց որ ձախակողմն են՝ պիտի ըսէ,

*Ոմանք լսենին

Մէկդի գնացէք ինէ, անիծեալներ, ի հուրն յաւիտենական որ պատրաստուած է Սատանային և
42 անոր հրեշտակներուն, քանզի քաղցեալ էի, և չտուիք ինձ ուտել. ծարաւի էի, և չպրեցուիք
43 ինձ. օտարական էի, և չառիք զիս ներս. մերկ էի, և չհագուեցուցիք զիս. հիւանդ և բանտի
44 մէջ էի, և չեկաք տեսնել զիս։ Անոնն ալ անոնք պատասխան պիտի տան և ըսեն, Տէր, ե՞րբ տեսանք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ օտար
կամ մերկ կամ հիւանդ կամ բանտի մէջ, և
45 սպասաւորութիւն չըրինք քեզ։ Անոնն պատասխան պիտի տայ անոնց և ըսէ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Որովհետև այս փոքրագոյններէն մէկն
չըրիք, և ոչ ինձ ըրիք։
46 Եւ ասոնք պիտի երթան ի տանջանս յաւիտենական, իսկ արդարք՝ ի կեանս յաւիտենական։

Գլ. ԻԶ

1 Եւ երբ կատարեց Յիսուս այս բոլոր խօսքերը,
2 ըսաւ իւր աշակերտներուն, Գիտէք որ երկու օր
ետքը զատիկ կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը մատնուի խաչը հլլել։
3 Անոնն քահանայապետները և դպիրները և
ժողովրդեան ծերերը ժողովեցան ի սրահ քա-
4 հանայապետին, որոյ անունն էր Կայիափաս. Եւ
խորհուրդ ըրին նենգութեամբ բռնել զՅիսուս և
5 սպաննել։ Բայց կ'ըսէին Թէ Ոչ տօնին առնենք,
որ խռովութիւն չըլլայ ժողովրդեան մէջ։
6 Եւ երբ Յիսուս Բեթանիա էր բորոտ Սիմոնի
7 տունը, եկաւ անոր կին մը որ ունէր շիշ մը
ծանրագին իւղ, և թափեց անոր գլխուն վրայ
8 երբ նա սեղան նստած էր։ Եւ անոր աշակերտ-

*Ոմանք, տան անոր

նները տեսնելով զայրացան և ըսին, Ինչո՞ւ ըլլար
9 այս կորուստը. Կրնար այդ իւղը կրնաք վաճառ-
10 ուիլ ծանրագնի, և տրուիլ աղքատաց։ Եւ Յիսուս իմանալով ըսաւ անոնց, Ինչո՞ւ անհանգիստ
կ'ընէք կինը. քանզի բարի գործ մը գործեց դա
11 ինձ։ Վասն զի աղքատներն ունիք միշտ ձեր
12 հետ, բայց զիս չունիք միշտ։ Քանզի դա որ թափեց այդ իւղն իմ մարմնոյս վրայ՝ իմ թաղմանս
13 համար ըրաւ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ ըրլոր աշխարհ ուր և քարոզուի այս աւետարանը,
պիտի խօսուի նաև ինչ որ ըրաւ դա անոր յիշատակին համար։
14 Անոնն մին յերկոտասանից որ կը կոչուէր Յուդա Իսկարիովացի, գնաց քահանայապետ-
15 ներուն և ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք տալ ինձ, և ես
մատնեմ զնա ձեզ. և անոնք երեսուն արծաթ *խոստացան անոր։ Եւ այնուհետև պատե-
16 հութիւն կը փնտռէր մատնել զնա անոնց։
17 Եւ բաղարջակերաց առաջին օրը աշակերտներն եկան Յիսուսի և ըսին անոր, Ո՞ր կ'ուզես որ
18 պատրաստենք քեզ ուտել զատիկը։ Եւ նա ըսաւ, Գնացէք քաղաքն այս ինչ մարդուն և ըսէք
անոր, Վարդապետը կ'ըսէ, Ժամանակս մօտ է. աշակերտներուս հետ քու քովդ պիտի ընեմ
19 զատիկը։ Եւ աշակերտներն ըրին ինչպես որ Յիսուս հրամայեց ըրաւ անոնց, և պատրաստեցին զատիկը։
20 Եւ երբ երեկոյ եղաւ, նստաւ սեղան երկոտա-
21 սանից հետ։ Եւ մինչ կ'ուտէին, ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ ձեզնէ մին պիտի մատնէ զիս։
22 Եւ չատ տրտմեցան, և անոնցմէ իւրաքանչիւրն
23 սկսաւ ըսել անոր, Տէր, միթէ՞ ե՛ս եմ։ Նա պատասխան տուաւ և ըսաւ, Այն որ իմ հետս իւր

*Կամ, կընտրեին

ձեռքը պնակը մխեց, նա պիտի մատնէ զիս։
24 Արդարև Որդին մարդոյ կ'երթայ ինչպես որ
գրուած է անոր համար, բայց վա՛յ այն մարդուն
որով ձեռնօք կը մատնուի Որդին մարդոյ. լաւ էր
25 այն մարդուն որ ծնած չըլլար։ Պատասխան առաւ
Յուդա որ պիտի մատնէր զնա և ըսաւ, Վարդապետ, միթէ ե՞ս եմ. ըսաւ անոր, Դուն ըսիր։
26 Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ,
օրհնեց և կոտրեց, և առաւ աշակերտներուն և
27 ըսաւ, Առէ՛ք, կերէ՛ք. այս է մարմին իմ։ Եւ
բաժակն առաւ, գոհացաւ, և տուաւ անոնց և
28 ըսաւ, Ամէնքդ խմեցէ՛ք ասկէ. Քանզի այս է
արիւն իմ նոր ուխտի, որ բազմաց համար կը
29 թափուի ի թողութիւն մեղաց։ Բայց կ'ըսեմ
ձեզ, Այսուհետև որթոյ բերքէն չեմ
խմեր մինչև այն օրը՝ երբ ձեր հետ նոր խմիր
զայն իմ հօրս Թագաւորութեան մէջ։
30 Եւ օրհնութիւն մը երգելէն ետքը ելան Ձի-
31 թենեաց լեռը։ Անատեն Յիսուս ըսաւ անոնց,
Դուք ամէնքդ այս գիշեր պիտի գայթակղիք իմ
վրաս. վասն զի գրուած է թէ Հովիւը պիտի
զարնեմ, և հօտին ոչխարները պիտի ցրուին։
32 Բայց յարութիւն առնելէս ետքը յառաջ քան
զձեզ Գալիլեա պիտի երթամ։ Պատասխան առաւ
Պետրոս և ըսաւ անոր, Թէպետ ամէնեքդին գայ-
34 թակղին քու վրադ, բայց ես չեմ պիտի չգայ-
թակղիմ։ Յիսուս ըսաւ անոր, Ճշմարիտ կ'ըսեմ
քեզ, Այս գիշեր դեռ հաւը չհաստած երեք ան-
35 գամ պիտի ուրանաս զիս։ Ըսաւ անոր Պետրոս,
Թէև քեզի հետ մեռնելու ըլլամ, չեմ զքեզ
պիտի չուրանամ. այսպէս կ'ըսէին նաև բոլոր
աշակերտները։
36 Անատեն Յիսուս եկաւ անոնց հետ տեղ մը
որոյ անունն էր Գեթսեմանի, և ըսաւ աշակերտ-
ներուն, Նստեցէ՛ք հոս մինչև ես երթամ հոն

37 աղօթք ընեմ։ Եւ իրեն հետ առնելով զՊետրոս
և Զերեդեայ երկու որդիքը, սկսաւ տրտմիլ և
38 վշտանալ։ Անատեն ըսաւ անոնց, Իմ անձս
տրտում է մինչև ի մահ. հոս կեցէ՛ք և ինծի հետ
39 արթուն մնացէ՛ք։ Եւ փոչ մը յառաջ երթալով
երեսին վրայ ինկաւ և աղօթք ըրաւ ըսելով,
Ով Հայր իմ, եթէ հնար է, թող անցնի ինէ այս
բաժակը. բայց ոչ թէ ինչպես ես կամիմ, այլ
40 ինչպես դուն։ Եւ եկաւ աշակերտներուն և գտաւ
զանոնք ի քուն, և ըսաւ Պետրոսի, Այդպես մի
41 ժամ չկրցա՞ք ինծի հետ արթուն կենալ։ Ար-
թուն կեցէ՛ք և աղօթք ըրէ՛ք որ փորձութեան
մէջ չմտնէ՛ք. հոգին յօժար է, բայց մարմինը
42 տկար։ Դարձեալ երկրորդ անգամ գնաց աղօթք
ըրաւ ըսելով, Ով Հայր իմ, եթէ անհնար է որ
այս բաժակն անցնի ինէ մինչև չխմիմ անկէ,
43 թող քու կամքդ ըլլայ։ Եւ եկաւ դարձեալ ի քուն
գտաւ զանոնք, քանզի անոնց աչքերը ծան-
44 րացած էին։ Եւ թողուց զանոնք, և դարձեալ
գնաց երրորդ անգամ աղօթք ըրաւ նոյն խօսքն
45 ըսելով։ Անատեն եկաւ իր աշակերտներուն և
ըսաւ անոնց, Այսուհետև ննջեցէ՛ք և հանգչեցուք.
ահա հասաւ ժամը, և Որդին մարդոյ կը մատ-
46 նուի մեղաւորներուն ձեռքը։ Ելէ՛ք երթանք
ասկէ. ահա մատեցաւ այն որ զիս պիտի մատնէ։
47 Եւ մինչդեռ նա կը խօսէր դարձ, ահա Յուդա,
մին յերկուասանէից, եկաւ, և անոր հետ մեծ
բազմութիւն սուսերօք և բրօք քահանայապետ-
48 ներէն և ժողովրդեան ծերերէն։ Եւ անոր մատ-
նիչն անոնց նշան առած էր ըսելով, Զով որ ես
49 համբուրեմ՝ նա է, բռնեցէ՛ք զնա։ Եւ իսկոյն
մատնելով Յիսուսի ըսաւ, Ողջո՛ւյն քեզ, վար-
50 դապետ, և համբուրեց զնա։ Եւ Յիսուս ըսաւ
անոր, Ընկեր, ինչո՞ւ համար եկար դուն։ Անա-
տեն մատեցան, ձեռք զարկին Յիսուսի և բռնե-

51 ցին զնա։ Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն մին
ձեռքը երկնցուց և սուրը հանելով զարկաւ քա-
հանայապետին ծառային, և մէկի կտրեց անոր
52 ականջը։ Անոնց Յիսուս ըսաւ անոր, Դարձուր
սուրդ իր տեղը, քանի որ ամէնքը որ սուր կ'առ-
53 նուն՝ սրով պիտի կորսուին։ Կը կարծե՞ս թէ
կարող չեմ հիմա իմ Հօրս աղաչել, և ինծի հաս-
ցնել աւելի քան երկոտասան *գունդ հրեշտա-
54 կաց։ Բայց ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը,
թէ պէտք է այսպէս ըլլայ։
55 Անոնց Յիսուս ըսաւ այն բազմութեան, Իբր
թէ աւազակի՞ վրայ ելաք սուներով և բիւրք
բռնել զիս. ամէն օր տաճարին մէջ ձեր հետ կը
56 նստէի և կ'ուսուցանէի, և չբռնեցիք զիս։ Բայց
բոլոր այս բաներն եղան որ կատարուին մարգա-
րէից գիրքերը։ Անոնց բոլոր աշակերտները
թողին զնա և փախան։
57 Եւ անոնք որ բռնեցին զՅիսուս՝ տարին Կայիա-
փա քահանայապետին, ուր գրագիրները և ծե-
58 րերը ժողոված էին։ Եւ Պետրոս հեռուէն անոր
հետևեցաւ մինչև քահանայապետին գաւիթը,
և ներս մտնելով սպասաւորներուն հետ նստաւ
59 տեսնել վախճանը։ Իսկ քահանայապետք և ծերք
և բոլոր ժողովը սուտ վկայութիւն կը փնտռէին
60 Յիսուսի դէմ, որ սպաննէին զնա։ Եւ չգտան.
Թէև շատ սուտ վկաներ եկան, բայց չգտան.
61 յետոյ երկու սուտ վկայք եկան, և ըսին Թէ
Սա ըսաւ, Ես կրնամ Աստուծոյ տաճարը քա-
62 կել, և երեք օրուան մէջ չնեղ զայն։ Եւ քա-
հանայապետը ոտք ելլելով ըսաւ անոր, Պատաս-
խան չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն սասնք քեզի
63 դէմ։ Եւ Յիսուս լուռ կը կենար։ Պատասխան
տուաւ քահանայապետը և ըսաւ անոր, Կ'երդ-

*Յոյն. լեգէոն

մընցնեմ զքեզ Յաստուած կենդանի որ ըսես
մեզ, Թէ դո՞ւ ես Քրիստոս, Աստուծոյ Որդին։
64 Յիսուս ըսաւ անոր, Դուն ըսիր. բայց կ'ըսեմ
ձեզ, Ապառհետև պիտի տեսնէք զՈրդին մարդոյ
Զօրութեան աջ կողմը նստած, և երկինից սէ-
65 ներուն վրայ եկած։ Անոնց քահանայապետը պատառեց հանդերձները և ըսաւ, Հայհոյութիւն
ըրաւ. այլ ևս ի՞նչ պէտք են մեզ վկաներ. ահա
66 հիմա լսեցիք սուրբ հայհոյութիւնը. ի՞նչպէս կը
Թուի ձեզ։ Պատասխան տուին և ըսին, Մահա-
67 պարտ է։ Անոնք Թքին անոր երեսը, և ծե-
ծեցին զնա բռնցքի. և ոմանք ապտակ զարնելով
68 ըսին, Մարգարէացիր մեզ, դուն Քրիստոս, ո՞վ
է այն որ զարկաւ քեզ։
69 Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստած էր, և
աղախին մը եկաւ անոր և ըսաւ, Դու ևս Գա-
70 լիլեացի Յիսուսի հետ էիր։ Բայց նա ամենուն
առջև ուրացաւ և ըսաւ, Չեմ գիտեր ինչ կը
71 խօսիս։ Եւ երբ դուռը ելաւ, ուրիշ աղ-ջիկ մը
տեսաւ զնա, և հոն եղողներուն ըսաւ, Սա ևս
72 Յիսուսի Նազովրեցւոյ հետ էր։ Եւ Պետրոս դար-
ձեալ երդումով ընձելով ուրացաւ, Թէ ես այն
73 մարդը չեմ ճանչնար։ Եւ քիչ հետք հոն եղող-
ները եկան և ըսին Պետրոսի, Արդարև դու ևս
անոնցմէ ես, քանի խօսուածդ իսկ յայտնի
74 կ'ընէ զքեզ։ Անոնցմէ սկսաւ անիծել և երդ-
նուլ ըսելով Թէ ես այն մարդը չեմ ճանչնար. և
75 իսկոյն հաւ խօսեցաւ։ Եւ Պետրոս յիշեց Յի-
սուսի խօսքը որ անոր ըսած էր Թէ Դեռ հաւ
չխօսած երիցս պիտի ուրանաս զիս. և դուրս
ելլելով լացաւ դառնապէս։

ԳԼ. ԻԿ

1 Երբ առաւօտ եղաւ, բոլոր քահանայապետք և

ժողովրդեան Ծերերը խորհուրդ ըրին
2 Համար սպաննել զնա։ Եւ կապելով զնա տա-
ըին, և տուին Պոնտացի Պիղատոսի կուսակալին
ձեռքը։
3 Այնժամեն Յուդա որ մատնեց զնա, տեսնելով
Թէ դատապարտեցաւ, զղջացաւ, և երեսուն
արծաթը էտ դարձուց քահանայապետներուն
4 և Ծերերուն, եւ ըսաւ, Մեղայ, վասն զի մատ-
նեցի անմեղ արիւն։ Եւ անոնք ըսին, Մեզ ի՞նչ
5 փոյթ, դուն տես։ Եւ արծաթը նետեց տաճարը
6 և դուրս ելաւ, և գնաց խեղդեց զինքը։ Իսկ
քահանայապետներն առնելով զարծաթն ըսին,
Արժան չէ զնել զայդ *կորբանը, քանզի արեան
7 գին է։ Ուստի խորհուրդ ըրին, և անով գնեցին
բրտին ագարակը օտարներու գերեզմանատան
8 համար։ Ա՛յս պատճառաւ այն ագարակը կոչ-
9 ուեցաւ Ագարակ արեան մինչև յայսօր։ Անա-
տեն կատարուեցաւ †ներեմիա մարգարէին բեր-
նով ըսուած խօսքը. Եւ առին երեսուն ար-
ծաթը գին կորուածէն գինը, զոր իսպառկի որ-
10 դիներէն ոմա՛ն գին կարծեցին, Եւ առին զայն
բրտի ագարակին, ինչպէս որ հրաման ըրաւ ինձ
Տէր։
11 Եւ Յիսուս կուսակալին առջև կեցաւ. և կու-
սակալը հարցուց անոր և ըսաւ, Դո՞ւ ես Հրեից
Թագաւորը։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Դուն կը-
12 սես։ Եւ մինչ կ'ամբաստանուէր քահանայապետ-
ներէն և Ծերերէն, բնաւ պատասխան չտուաւ։
13 Այնժամեն Պիղատոս ըսաւ անոր, Չե՞ս լսեր Թէ
14 որչափ քեզի դէմ կը վկայեն ասոնք։ Եւ ամե-
նևին պատասխան չտուաւ անոր, մինչև չատ
զարմացաւ կուսակալը։

*Աչխ.՝ տաճարին գանձանակը
†Ոմա՛ն լատին Երեմիա

15 Բայց կուսակալը սովորութիւն ունէր ամէն
տաեն կապեալ մը արձակել ժողովրդեան զով
16 որ ուզէին։ Անատեն բարբեր ասնուն երևելի
17 բանտարկեալ մը ունէին։ Երբ ժողովեցան, ըսաւ
անոնց Պիղատոս, Որը կ'ուզէք որ արձակեմ
ձեզ. Յիսաբարբա՞, Թէ զՅիսուս որ Քրիստոս
18 կ'ըսուի։ Քանզի գիտէր Թէ առ նախանձու մատ-
նեցին զնա։
19 Եւ երբ նա նստած էր աստեանը, անոր կինը
մարդ ղրկեց անոր և ըսաւ, Դուն այն արդարոյն
հետ բան չունենաս, քանզի բազում անգ ան-
ցան ընդ իս այսօր երազիս մէջ անոր համար։
20 Բայց քահանայապետք և Ծերք համոզեցին
ժողովուրդը խնդրել զԲարաբբա և զՅիսուս կո-
21 րուսանել։ Պատասխան տուաւ կուսակալը և ը-
սաւ անոնց, Ա՛յս երկուքին որը կ'ուզէք որ
արձակեմ ձեզ։ Եւ անոնք ըսին, ԶԲարաբբաս։
22 Ըսաւ անոնց Պիղատոս, Ասա ի՞նչ ընեմ զՅի-
23 սուս որ Քրիստոս կ'ըսուի։ Ամենքն ըսին անոր,
Թող խաչուի։ Եւ կուսակալն ըսաւ, Բայց ի՞նչ
չար գործ ըրաւ։ Եւ անոնք աւ աւաւել կ'աղա-
24 կէին և կ'ըսէին, Թող խաչուի։ Եւ Պիղատոս
տեսնելով Թէ օգուտ չըլլար, այլ աւ աւելի
խռովութիւն կ'ըլլայ, ջուր առաւ, լուաց ձեռ-
ուրները ժողովրդեան առջև և ըսաւ, Անպարտ
եմ ես այդ արդարոյն արիւնէն. դուք խորհե-
25 ցէք։ Եւ բոլոր ժողովուրդը պատասխան տալով
ըսաւ, Անոր արիւնը մեր վրայ և մեր որդւոց
26 վրայ ըլլայ։ Անատեն զբարաբբա արձակեց ա-
նոնց, և զՅիսուս ծեծելով տուաւ անոնց ձեռքը
որ խաչուէր։
27 Անատեն կուսակալին զինուորներն առին զՅի-
սուս պալատը, և բոլոր վ[illegible]
28 ժողովեցին անոր վրայ. Եւ մերկացուցնելով զնա՝
29 կարմիր վերարկու հագուցին անոր, Եւ փուչերէ

պսակ հիւսելով գրին անոր գլխուը, և եղեգ մը անոր աջ ձեռքը. և ի ծունր իյնալով անոր առջեւ՝ ծաղր կ'ընէին ղնա, և կ'ըսէին, Ողջոյն
30 քեզ, Հրեից Թագաւոր։ Եւ թքնելով անոր վրայ՝ եղեգը կ'առնուին և կը ծեծէին անոր գլխուը։ Եւ երբ ծաղր ըրին ղնա, վերարկուն հա-
31 նեցին վրայէն և իւր հանդերձներն հագուցին անոր, և տարին զնա հանել ի խաչ։
32 Եւ գտնը ելլելով՝ Կիւրենացի մարդ մը գտան Սիմոն անուն, զնա բռնեցին պսակ որ վերցու-
33 նէր անոր խաչը։ Եւ եկան Գողգոթա բսուած
34 տեղը, որ է գանկի տեղ։ Եւ տուին անոր խմել լեղւով խառնեալ գինւոյ. և երբ համն առաւ,
35 չէր ուզեր խմել։ Եւ ի խաչ հանելով զնա, բաժանեցին անոր հանդերձները վիճակաւ. [որ մարգարէին բսուածը կատարուի, Իմ հանդերձներս բաժանեցին իրենց մէջ, և պատմուճանիս
36 վրայ վիճակ արկին։] Եւ նստած կը պահէին
37 զնա։ Եւ անոր գլխուն վրայ գրին անոր յանցանքը գրուած, Թէ Սա է Յիսուս, Հրեից Թա-
38 գաւորը։ Անոնն անոր հետ երկու աւազակ խաչուեցան, մին՝ յաջմէ և միսն՝ ի ձախմէ։
39 Եւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր,
40 կը շարժէին իրենց գլխուը, եւ կ'ըսէին, Դուն որ տաճարը կը քակէիր և երեք օրուան մէջ կը շինէիր, ազատէ զքեզ. եթէ Որդի ես Աստուծոյ,
41 էջ խաչէդ։ Նոյնպես և քահանայապետք դպիրներուն և ծերերուն հետ ծաղր ընելով կ'ըսէին,
42 Ուրիշներն ազատեց, ղինք չէ կարող ազատել. եթէ իսրայելի Թագաւոր է, թող այժմ իջնէ
43 խաչէն, և հաւատանք անոր։ Աստուծոյ յուսացած է, հիմա թող փրկէ զնա եթէ կամի զդա.
44 քանզի ըսաւ, Թէ Որդի Աստուծոյ եմ։ Անոր հետ խաչուած աւազակներն ևս նոյնպես կը նախատէին զնա։

45 Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժամ
46 բոլոր երկրի վրայ խաւար եղաւ։ Եւ իններորդ ժամուն առեներորդ Յիսուս մեծ ձայնիւ աղաղակեց և ըսաւ, Էլի, Էլի, լամա սաբաքթանի. որ
47 ըսել է, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր Թողեր զիս։ Ոմանք անոնցմէ որ հոն կեցած էին, երբ լսեցին, կ'ըսէին, Զեղիա կը կանչէ զա-
48 նա։ Վազվազակի անոնցմէ մին վազեց սպունգ առաւ, լեցուց քացախով, և եղեգի անցնելով տուաւ անոր խմել։ Եւ միւսները կ'ըսէին, Թող,
49 տեսնենք Թէ Եղիա կու գայ ազատել զդա։
50 Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնիւ աղաղակեց և աւանգեց հոգին։
51 Եւ ահա տաճարին վարագոյրը վերուստ ի վայր երկու ճեղքեցաւ, և երկիրը շարժեցաւ, և քա-
52 րերը պատառեցան, Եւ գերեզմանները բացուեցան, և շատ սուրբ նիջեցելոց մարմիններ յա-
53 րութիւն առին, Եւ գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետքը, մտան սուրբ քաղաքը և երևցան շատերուն։
54 Բայց հարիւրապետը և անոր հետ զՅիսուս պահողները, երբ տեսան երկրաշարժը և ինչ որ եղան, շատ վախցան և ըսին, Արդարև Աստուծոյ Որդի էր զա։
55 Եւ կային հոն շատ կանայք որ հեռուէն կը նայէին, որ Գալիլեայէ Յիսուսի հետէն եկան ա-
56 նոր ծառայութիւն ընելու. Որոց մէջ էր Մարիամ Մագդալենացի և Յակոբոսի և Յովսեփի մայրը Մարիամ և Զեբեդեայ որդւոց մայրը։
57 Եւ երբ երեկոյ եղաւ, Արիմաթիայէ եկաւ հարուստ մարդ մը որոյ անուն Յովսէփ էր, որ և
58 ինք Յիսուսի աշակերտ էր։ Սա Պիղատոսի գովի երթալով խնդրեց Յիսուսի մարմինը. Անառեն
59 Պիղատոս հրամայեց տալ մարմինը։ Եւ Յովսէփ
60 առաւ մարմինը, պատեց մաքուր կտաւով, Եւ

դրաւ իւր նոր գերեզմանին մէջ զոր փորած էր
ի վիմի. և գերեզմանին դուռը մեծ քար մը
61 թաւալելով գնաց, Եւ հոն էր Մարիամ Մագ-
դաղինացի և միւս Մարիամ որ կը նստէին գե-
րեզմանին դիմացը։
62 Եւ հետեւեալ օրը որ ուրբաթէն ետքն էր,
քահանայապետները և փարիսեցիները ժողովե-
63 ցան Պիղատոսի քով, Եւ ըսին, Տէր, կը յիշենք
որ այն մոլորեցուցիչը իր կենդանութեան ատեն
կ'ըսէր Թէ երեք օր ետքը յարութիւն կ'առ-
64 նեմ, Ուստի հրաման տուր զգուշանալ գերեզ-
մանին մինչև երրորդ օրը. գուցէ աշակերտները
գիշերով գան, գողնան զնա, և ըսեն ժողովուր-
դեան Թէ Մեռելներէն յարութիւն առաւ. և
յետին մոլորութիւնն ըլլայ չար քան զառաջինն։
65 Պիղատոս ըսաւ անոնց, Ունիք պահապան զին-
ուորներ. գնացէք զգուշացէք ինչպէս որ գի-
66 տէք։ Եւ անոնք գնացին զգուշացան գերեզմանին,
քարը կնքելով և պահապան զինուորները դնելով։

Գլ. Իզ

1 Եւ շաբաթ գիշերը յորում միաշաբաթին կը
լուսնար, եկաւ Մարիամ Մագդաղինացի և միւս
2 Մարիամը տեսնել գերեզմանը։ Եւ ահա մեծ
երկրաշարժ եղաւ, քանզի Տէրոջը հրեշտակն իջ-
նելով յերկնից գնաց դարձին ի բաց թաւալեցուց
3 քարը, և անոր վրայ նստաւ։ Եւ անոր տեսիլն
էր փայլակի պէս, և անոր հանդերձները՝ ձիան
4 պէս սպիտակ։ Եւ անոր ահէն պահապանները
5 խռովեցան, և եղան իբրև մեռելոյ։ Պատասխան
տուաւ հրեշտակը և ըսաւ կանանց, Մի երկնչիք,
չիք, քանզի գիտեմ որ կը փնտռէք զՅեսուս
6 որ խաչուեցաւ։ Չոս չէ, քանզի յարութիւն ա-
ռաւ, ինչպէս որ ըսաւ։ եկէք տեսէք տեղն ուր

7 Տէրը պառկած էր։ Եւ վաղվաղակի գնացէք ըսէք
անոր աշակերտներուն Թէ Յարեաւ ի մեռելոց,
և ահա յառաջ քան զձեզ կ'երթայ Գալիլեա,
8 հոն պիտի տեսնէք զնա. ահա ըսի ձեզ։ Եւ ա-
նոնք ելան վաղվաղակի գերեզմանէն ահիւ և
մեծ ուրախութեամբ և կ'ընթանային պատմել
աշակերտներուն։
9 Եւ երբ կ'երթային պատմել անոր աշակերտ-
ներուն, ահա Յիսուս անոնց դիմացը ելաւ և
ըսաւ, Ողջոյն ընդ ձեզ։ Եւ անոնք մօտենալով
բռնեցին անոր ոտքերը, և երկրպագութիւն
10 ըրին անոր։ Անտեն Յիսուս ըսաւ անոնց, Մի
վախնաք, գնացէք իմ եղբայրներուս ըսէք որ
Գալիլեա երթան, և հոն պիտի տեսնեն զիս։
11 Երբ անոնք կ'երթային, ահա պահապան զին-
ուորներէն ոմանք քաղաքը եկան, և պատմեցին
12 քահանայապետներուն բոլոր ինչ որ եղաւ։ Եւ
անոնք ծերերուն հետ ժողովելով և խորհուրդ
13 ընելով չատ ստակ տուին զինուորներուն, Եւ ը-
սին, Ըսէք Թէ Անոր աշակերտները գալով գի-
շերը գողցան զնա մինչ մենք կը քնանայինք։
14 Եւ եթէ այդ բանը կուսակալին ականջն հասնի,
մենք կը համձեցունենք զնա, և զձեզ *ապահով
15 կ'ընենք։ Եւ անոնք առան առին և ըրին ինչ-
պէս սորվեցան. և այս ձայնը Հրէից մէջ տա-
րածուեցաւ մինչև ցայսօր։
16 Իսկ միւսնասուն աշակերտները գնացին Գալիլեա
այն լեռը ուր ժամադիր եղած էր անոնց Յի-
17 սուս։ Եւ երբ տեսան զնա, երկրպագութիւն ը-
18 րին անոր, բայց ոմանք յերկուացան։ Եւ Յիսուս
մօտենալով խօսեցաւ անոնց և ըսաւ, Ամէն իշ-
խանութիւն տրուեցաւ ինձ յերկինս և յերկրի։
19 Ուրեմն գնացէք աշակերտեցէք բոլոր ազգերը,

*Յոյն. անհոգ

մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգ-
20 ւոյն Սրբոյ. Սորովեցուցէք անոնց պահել ամէն
ինչ որ պատուիրեցի ձեզ. և ահա ձեր հետ եմ
ես ամէն օր մինչև ի կատարած աշխարհիս
Ամէն։

ԱԻԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդ-
2 ւոյն Աստուծոյ, ինչպէս գրուած է ի մարգարէս,
Ահա ես կը դրկեմ քու երեսիդ առջև իմ դես-
պանս, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու
3 առջևդ։ Անապատի մէջ կոչողին ձայնը, Տէրոջը
ճամբան պատրաստեցէք, ուղղեցէք անոր շա-
4 ւիղները։ Յովհաննէս անապատին մէջ կը մկըր-
տէր, և կը քարոզէր ապաշխարութեան մկրտու-
5 թիւն ի թողութիւն մեղաց։ Եւ բոլոր Հրէաս-
տանի երկիրը և Երուսաղէմացիք կ'երթային ա-
նոր, և ամէնքը կը մկրտուէին անկէ Յորդանան
6 գետին մէջ խոստովանելով իրենց մեղքերը։ Եւ
Յովհաննէս հագած էր ուղտի մազ, և իւր մէջքը
կաշիէ գօտի. և անոր կերակուրն էր մարախ և
7 վայրենի մեղր։ Եւ կը քարոզէր և կ'ըսէր, Իմ
հետևս գան նիս զօրաւորը կու գայ, որուն ես
արժանի չեմ ծռիլ և կօշիկներուն կապերն ար-

8 ձակել։ Ես զձեզ Ջրով մկրտեցի, բայց նա պիտի
մկրտէ զձեզ Հոգւով Սրբով։
9 Եւ եղաւ որ այն օրերը եկաւ Յիսուս Գալիլ-
եայի Նազարէթէն, և մկրտուեցաւ ի Յովհաննէ
10 Յորդանանու մէջ։ Եւ իսկոյն երբ ջուրէն ելաւ,
տեսաւ զերկինս բացուած, և զՀոգին աղաւնւոյ
11 պէս՝ որ անոր վրայ կ'իջնէր։ Եւ եկաւ յերկինց
ձայն որ կ'ըսէր, Դուս ես իմ սիրելի Որդիս, ո-
րուն հաճած եմ։
12 Եւ իսկոյն Հոգին հանեց զնա անապատ.
13 Եւ հոն էր քառասուն օր անապատին մէջ Սա-
տանայէն փորձուած. և գազաններու հետ էր,
և հրեշտակք սպասաւորութիւն կ'ընէին անոր։
14 Եւ Յովհաննու մատնուելէն ետքը Յիսուս Գա-
լիլիա եկաւ, կը քարոզէր Աստուծոյ աւետարա-
15 ն Թեան աւետարանը և կ'ըսէր, Թէ ժամանակը
լրացած է, և Աստուծոյ Թագաւորութիւնը մօ-
տեցած է. ապաշխարեցէք և հաւատացէք աւե-
տարանին։
16 Երբ Գալիլեացւոց ծովուն եզերքը կը պտրտէր,
տեսաւ զՍիմոն և Սիմոնի եղբայրը զԱնդրէաս
17 ծովը ուռկան նետած, քանզի ձկնորս էին։ Եւ
Յիսուս ըսաւ անոնց, Իմ հետևէս եկէք, և ես
18 ընեմ զձեզ որ մարդու որսորդ ըլլաք։ Անոնք
Թողին վաղվաղակի իրենց ուռկանները և գնացին
19 անոր հետևէն։ Եւ անկէ քիչ մը առաջ երթալով
տեսաւ զՅակոբոս Զեբեդեայի և անոր եղբայրն
զՅովհաննէս, որ նոյնպես նաւին մէջ ուռկանները
20 կը յարդարէին։ Եւ իսկոյն կոչեց զանոնք, և ա-
նոնք իրենց հայրն զԶեբեդէոս վարձկաններուն
հետ նաւին մէջ Թողուլ գնացին անոր հետևէն։
21 Եւ մտան կափառնայում. և իսկոյն շաբաթ օրը
22 ժողովրդանոցը մտնելով կ'ուսուցանէր։ Եւ կը
զարմանային անոր վարդապետութեան վրայ,
քանզի իրրև իշխանութիւն ունեցող կը սորվե-

23 ցուներէ անոնց, և ոչ դպիրներուն պէս։ Եւ ա-
նոնց ժողովրդանոցին մէջ մարդ մը կար, որ ու-
24 նէր պիղծ ոգի, և աղաղակեց ըսելով, Թող
տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս
Նազովրեցի՛։ Մի՞թէ զմեզ կորսուանելո՞ եկար։ Գի-
25 տեմ զքեզ ով ես, Սուրբ Աստուծոյ։ Եւ Յիսուս
սաստեց անոր ըսելով, Պապանձէ՛ և ել ասկէ՛։
26 Եւ պիղծ ոգին սաստիկ ցնցեց զնա, և մեծ ձայ-
27 նիւ աղաղակեց և ելաւ անկէ։ Եւ ամէնքը զար-
մացան, այնպէս որ կը հարցունէին իրարու և
կ'ըսէին, Ա՛յս ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն
է այս, որ իշխանութեամբ պիղծ ոգիներուն ևս
28 կը հրամայէ, և կը հնազանդին անոր։ Եւ վազվա-
գակի եղաւ անոր համբաւը Գալիլեացւոց բոլոր
կողմերը։

29 Եւ իսկոյն ելլելով ժողովրդանոցէն մտան Սի-
մոնի և Անդրէի տունը Յակոբայ և Յովհաննու
30 հետ։ Եւ Սիմոնի զոքանչը ջերմ բռնուած պառ-
31 կած էր, և չուտով անոր համար ըսին անոր։ Եւ
ձեռնառ մօտեցաւ բռնեց անոր ձեռքէն, վերցուց
զնա. և վազվազակի թողուց զնա ջերմը, և անոնց
սպասաւորութիւն կ'ընէր։

32 Եւ երբ երեկոյ եղաւ, մինչ արեգակը կը մտնէր,
բոլոր հիւանդները և դիւահարները կը բերէին
33 անոր։ Եւ բոլոր քաղաքը դուռը ժողոված էր։
34 Եւ շատ հիւանդներ բժշկեց կերպ կերպ ցաւերէ,
և շատ դևեր հանեց, և դևերուն խօսել չէր
տար, քանզի կը ճանչնային զնա։

35 Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով յառաջ
քան լուսնալը ելաւ և գնաց անապատ տեղ մը,
36 և հոն աղօթք կ'ընէր։ Եւ Սիմոն և որ անոր հետ
37 էին զնացին անոր հետևէն։ Եւ երբ գտան զնա,
38 ըսին անոր Թէ Ամէնքը կը փնտռեն զքեզ։ Եւ
ըսաւ անոնց, Եկէ՛ երթանք մերձակայ գիւղա-
քաղաքները, որ հոն ևս քարոզեմ, քանզի այս

39 բանիս համար եկած եմ։ Եւ անոնց ժողովրդա-
նոցներուն մէջ կը քարոզէր բոլոր Գալիլեա, և
դևեր կը հանէր։

40 Բորոտ մը եկաւ անոր, կ'աղաչէր, ծունր կը
դնէր և կ'ըսէր անոր, Եթէ կամիս կրնաս զիս
41 մաքրել։ Եւ Յիսուս գթալով երկնցուց ձեռքը,
դպաւ անոր, և ըսաւ անոր, Կամի՛մ, մաքրուի՛ր։
42 Եւ երբ այս ըսաւ անոր, իսկոյն զնաց անկէ բո-
43 րոտութիւնը, և մաքրուեցաւ։ Եւ սաստիկ պատ-
ուէր տալով անոր իսկ և իսկ դուրս հանեց, և
44 ըսաւ անոր, Զգոյշ եղիր, մարդու բան չըսես,
այլ ցոյց զքեզ քահանային, և տուր փու մաք-
րութեանդ ընծան, զոր պատուիրեց Մովսէս անոնց
45 վկայութեան համար։ Բայց նա ելլելով սկսաւ
քարոզել յոյժ և բանը տարածել, այնպէս որ
այլ ևս չէր կրնար նա յայտնի քաղաք մը մտնել,
այլ դուրսը էր անապատ տեղեր. և ամէն կողմէ
կու գային անոր։

ԳԼ. Բ

1 Եւ դարձեալ մտաւ Կափառնայում քանի մը օր
2 ետքը. Եւ լսուեցաւ Թէ տան մէջ էր, և վազ-
վազակի շատ մարդիկ ժողովեցան, այնպէս որ
տեղ չկար, և ոչ դրան քով. և կը խօսէր անոնց
3 Ա՛ռաւ-ը֊նոյ խօսքը։ Եւ կու գային անոր, կը բերէին
4 չորս մարդ վերցուած անդամալոյծ մը։ Եւ երբ
բազմութենէն չէին կրնար մօտենալ անոր, քա-
կեցին տանը տակը յարկը ուր Յիսուս էր, և ծակ բա-
նալով իջուցին մահիճը որուն վրայ պառկած
5 էր անդամալոյծը։ Եւ Յիսուս անոնց հաւատքը
տեսնելով ըսաւ անդամալոյծին, Որդեակ, քու
6 մեղքերդ քեզի ներուած են։ Եւ կային դպիրնե-
րէն ոմանք որ հոն նստած էին, և իրենց սրտե-
7 րուն մէջ կը խորհէին ընդդէմ, Ինչո՞ւ համար այս-

պիսի հայհոյութիւններ կը խօսի սա. ո՞վ կրնայ մեղաց թողութիւն տալ, բայց միայն Աստուած։
8 Եւ Յիսուս իսկոյն խմաճալով իր հոգւոյն մէջ թէ անոնք այնպէս կը խորհէին յանձինս, ըսաւ ա-
նոնց, Ա՛յդ ի՞նչ կը խորհիք ձեր սրտերուն մէջ։
9 Ո՞րն աւելի դիւրին է, անդամալուծին ըսել, Քու մեղքերդ նեղուած են, թէ ըսել, Ել, մահիճդ
10 առ և քալէ։ Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղաց
11 թողութիւն տալու, (ըսաւ անդամալուծին,) Քեզ
12 կ'ըսեմ, Ել, մահիճդ առ և տունդ գնա։ Եւ նա իսկոյն ելաւ, և մահիճն առնելով դուրս ելաւ ա-
ժենուն առջեւ, այնպէս որ ամէնքն ապշած մնա-
ցին, և փառք տուին Աստուծոյ, և ըսին թէ Այսպիսի բան ամենևին տեսած չենք։
13 Եւ ելաւ դարձեալ ծովեզերը, և բոլոր ժողո-
վուրդը կու գային անոր, և կ'ուսուցանէր զա-
14 նոնք։ Եւ երբ կ'անցնէր, տեսաւ զՂևի Ալփեան, որ մաքս ընդունելուն տեղը նստած էր, և ըսաւ
անոր, Եկ իմ ետևէս։ և նա ելաւ գնաց անոր
15 ետևէն։ Եւ եղաւ որ երբ սեղան նստած էր անոր տունը, շատ մաքսաւորներ և մեղաւորներ ևս
սեղան նստած էին Յիսուսի և անոր աշակերտնե-
րուն հետ. քանզի բազումք էին, և անոր ետևէն
16 կ'երթային։ Եւ դպիրները և փարիսեցիները երբ տեսան թէ մաքսաւորներուն և մեղաւորներուն
հետ կ'ուտէր նա, ըսին անոր աշակերտներուն,
Ինչո՞ւ համար մաքսաւորներուն և մեղաւորնե-
17 րուն հետ կ'ուտէ և կը խմէ։ Եւ Յիսուս երբ լսեց, ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք
չէ, այլ հիւանդներուն. ես արդարները կոչելու
չեկայ, այլ մեղաւորները*։
18 Եւ Յովհաննու և փարիսեցւոց աշակերտները

*Ոմանք՝ կ'առնէ զանձին, ապաչխարութեան

ծոմ կը պահէին. և եկան և ըսին անոր, Ինչո՞ւ Յովհաննու և փարիսեցւոց աշակերտները ծոմ
կը պահեն, և քու աշակերտներդ ծոմ չեն պահեր։
19 Եւ Յիսուս ըսաւ անոնց, Միթէ հնար է որ առա-
գաստի մանկունք, մինչ փեսան անոնց հետ է, ծոմ պահեն. որչափ ժամանակ փեսան իրենց
20 հետ ունին, հնար չէ ծոմ պահել։ Բայց օրեր պիտի գան երբ փեսան անոնցմէ վերցուի, ապա
21 այն օրը ծոմ պիտի պահեն։ Ոչ ոք կը դնէ նոր լաթի կտոր կապուտ հին հանդերձի վրայ. ա-
պա թէ ոչ այն նորը որ անոր լրութեան համար
դրուած էր՝ կ'առնու հինէն, և պատառումը ևս
22 աւելի գէշ կ'ըլլայ։ Նաև ոչ ոք նոր գինին կը դնէ հին տիկերու մէջ. եթէ ոչ՝ նոր գինին տիկերը կը
պատռէ, և գինին կը թափի և տիկերը կը կորն-
չին. այլ նոր գինին նոր տիկերու մէջ գրուելու է։
23 Եւ եղաւ որ շաբաթ օրը ինք պատերէն կ'անց-
նէր, և աշակերտները որ կ'երթային՝ սկսան ցո-
24 րէն հասկեր քաղել։ Եւ փարիսեցիք ըսին անոր,
25 Տես, շաբաթ օրը ի՞նչ կ'ընեն, որ չէ արժան։ Եւ նա ըսաւ անոնց, Բնաւ չէք կարդացած դուք
ինչ որ ըրաւ Դաւիթ երբ պէտք եղաւ, և անօ-
26 թեցաւ նա և անոնք որ անոր հետ էին. Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապե-
տին օրը, և առաջաւորութեան հացերը կերաւ,
և առաւ անոնց ևս որ անոր հետ էին, զոր ոչ
ուրիշ օրինաւոր է ուտել, բայց միայն քահանա-
27 յից։ Եւ ըսաւ անոնց, Շաբաթը մարդոյ համար
28 եղաւ, և ոչ թէ մարդ՝ շաբաթուան համար։ Ուրեմն Որդին մարդոյ տէր է շաբաթուան ևս։

Գլ. Գ

1 Եւ դարձեալ ժողովրդանոցը մտաւ, և հոն մարդ
2 մը կար որոյ ձեռքը գօսացած էր։ Եւ անոր

կը սպասէին Թէ արդեօք չաբաթ օրը պիտի բժշկէր զնա, որ անոր վրայ ամբաստանութիւն
3 ընէին։ Եւ բսաւ մարդուն որոյ ձեռքը գօսացեալ
4 էր, Ել, ժէյտեղ [*]։ Եւ բսաւ անոնց, Շաբաթ օրը բարի՞ք ընել արժան է Թէ չարի՞ք ընել, հոգի մը ապրեցունե՞լ Թէ մեռցունել. բայց անոնք
5 լուռ կեցան։ Եւ ցնոսս բարկութեամբ չուրջանակի անոնց վրայ նայելով, անոնց սրտերուն կուրութեան համար տրտմած, բսաւ այն մարդուն, Երկնցու ձեռքդ. և նա երկնցուց, և անոր
6 ձեռքը *ողջացաւ։ Եւ վարխսեցիք Հերովդեսեանց հետ վաղվաղակի դուրս ելլելով, խորհուրդ կ'ընէին անոր դէմ Թէ ինչպէս կորուսանէին զնա։
7 Բայց Յիսուս իր աշակերտներով գնաց ծովեզրը, և շատ բազմութիւն գնացին անոր եւ Գալիլեայէ, և Հրէաստանէ,
8 Եւ Երուսաղէմէ, և Իդումէէ, և Յորդանանու անդիի կողմէն. և անոնք որ Տիւրոսի և Սիդոնի շրջակայ տեղերէն էին, շատ բազմութիւն երբ լսեցին ինչ որ կ'ընէր,
9 եկան անոր։ Եւ իր աշակերտներուն բսաւ որ իրեն նաւակ մը պատրաստ կենար բազմութեան
10 համար, որ չնեղչին զնա։ Քանզի շատերը բժշկեց, այնպէս որ ցաւ ունեցողներն անոր վրայ կը դիզ-
11 ուէին որ դպչէին անոր։ Եւ պիղծ ոգիները երբ կը տեսնէին զնա, կ'իյնային անոր առջև, և կ'ա-
12 զաղակէին և կ'ըսէին, Դուն ես Աստուծոյ Որդին. և նա կը սաստէր յոյժ անոնց, որ չյայտնէին զնա։
13 Եւ լեռը ելլելով կոչեց իրեն զորս և կամեցաւ,
14 և գնացին անոր քով։ Եւ երկոտասան հոգի որոշեց, որ իրեն հետ ըլլային, և որ զրկէր զանոնք
15 քարոզել, Եւ իշխանութիւն ունենալ ցաւեր
16 բժշկելու և դևեր հանելու։ Եւ Սիմոնի անունը

[*] Ոմանք, ողջացաւ միւսին պէս

17 Պետրոս դրաւ. Եւ Զեբեդեան Յակոբոսի և Յովհաննու եղբօր Յակոբոսի անունները դրաւ Բո-
18 ներգէս, որ է Որդիք որոտման. Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթողիմէոս, և զՄատթէոս, և զԹովմաս, և զՅակոբոս Ալփեան, և զԹադդէոս, և զՍիմոն Կանանացի, Եւ զՅուդա Իսկարիովացի, որ և մատնեց զնա։
20 Տուն մը եկան, և դարձեալ խռնեցաւ ժողովուրդը մինչև կարող չըլլալ անոնց հաց ուտել։
21 Եւ երբ իրենները լսեցին, ելան բռնել զնա, քանզի կ'ըսէին Թէ Մոլեգնեալ է։ Եւ այն դպիրները որ Երուսաղէմէ իջած էին, կ'ըսէին Թէ Բէեղզեբուղ կայ ի սմա, և դևերուն իշխանաւը
23 կը հանէ դևերը։ Եւ իրեն կոչելով զանոնք առակներով կ'ըսէր անոնց, Ի՞նչպէս կրնայ Սատա-
24 նայ զսատանայ հանել, Եւ եթէ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժնուի, այն թագաւորութիւնը
25 չկրնար կենալ։ Եւ եթէ տուն մը իրեն դէմ բաժ-
26 նուի, այն տունը չկրնար կենալ։ Եւ եթէ Սատանան իրեն դէմ ելաւ և բաժնուած է, չկրնար
27 կենալ, այլ անոր վերջը հասած է։ Ոչ ոք կրնայ հզօրի տուն մտնելով յափշտակել անոր կարասին, եթէ նախ չկապէ հզօրը, ապա կողոպտէ
28 անոր տունը։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ բոլոր մեղքեր պիտի ներուին մարդոց որդիներուն, և
29 հայհոյութիւններ՝ որչափ և հայհոյեն. Բայց ով որ հայհոյէ Հոգւոյն Սրբոյ դէմ, թողութիւն պիտի չունենայ յաւիտեան, այլ յաւիտենական դա-
30 տաստանի պարտաւոր պիտի ըլլայ։ Վասն զի կ'ըսէին Թէ Պիղծ ոգի կայ ինձմ։
31 Ցետոյ անոր մայրը և եղբայրները եկան, և դուրսը կենալով մարդ զրկեցին և կը կոչէին զնա։
32 Եւ ժողովուրդն անոր բոլորտիքը նստած էր, և բսին անոր Թէ Ահա մայրդ և եղբայրներդ դուրսը կ'փնդրեն զքեզ։ Եւ նա պատաս-

ման առաւ անոնց և ըսաւ, Ո՞վ է իմ մայրս
34 կամ եղբայրներս։ Եւ իւր բոլորտիքը նստողներուն նայելով ըսաւ, Ահա իմ մայրս և իմ եղ-
35 բայրներս։ Վասն զի ով որ կը կատարէ Աստուծոյ կամքը, նա է իմ եղբայրս և քոյրս և մայրս։

Գլ. Դ

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել ծովեզերքը, և շատ բազմութիւն ժողովեցաւ անոր քով, այնպէս որ նաւը մտաւ և նստաւ ի ծովուն, և բոլոր ժողո-
2 վուրդը ցամաքը ծովուն եզերքն էր։ Եւ անոնց շատ բաներ կը սորվեցուներ առակներով, և ի՛ր-
3 սէր անոնց իւր վարդապետութեան մէջ, Լսեցէք։
4 Ահա սերմ ցանողը ելաւ սերմ ցանել։ Եւ երբ կը ցանէր, ոմն ինկաւ ճամբուն քով, և *թռչուն-
5 ները եկան և կերան զայն։ Եւ ուրիշն ինկաւ ապառաժուտ տեղ ուր շատ հող չկար։ Եւ վաղվա-
6 զակի բուսաւ, վասն զի հողը խորութիւն չուներ։
7 Բայց երբ արեւը ծագեց, այրեցաւ, և որովհետև արմատ չունէր, չորացաւ։ Եւ ուրիշն ինկաւ փուշերու մէջ, և փուշերը ելան և հեղձուցին զայն,
8 և պտուղ չտուաւ։ Եւ ուրիշն ինկաւ ազէկ հողի մէջ, և կու տար պտուղ, որ ելաւ և աճեցաւ, և կը բերէր փոխանակ միով երեսուն, և փոխանակ միով վաթսուն, և փոխանակ միով հարիւր։
9 Եւ ի՛ր ըսէր, Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
10 Եւ երբ առանձին էր, անոնք որ անոր քով էին՝ երկոտասանից հետ հարցուցին անոր այն
11 առակը։ Եւ ըսաւ անոնց, Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են՝ ամէն բան առակ-
12 ներով կ'ըլլայ։ Որ տեսնելով տեսնեն և չտեսնեն,

*Յոյն՝, երկնից թռչունները

և լսելով լսեն և չիմանան, գի մի գուցէ դառ-
13 նան, և թողութիւն ըլլայ անոնց մեղաց։ Եւ ըսաւ անոնց, Այս առակը չէ՞ք գիտեր. ուրեմն ինչպէս
14 պիտի գիտնաք բոլոր առակները։ Սերմ ցանողը
15 կը ցանէ խօսքը։ Եւ ճամբուն քովինները անոնք են որոց մէջ խօսքը կը ցանուի, և երբ կը լսեն, վաղվաղակի կու գայ Սատանան և կը հանէ անոնց
16 սրտերուն մէջ ցանուած խօսքը։ Նոյնպէս ապառաժուտ տեղերու վրայ ցանուածներն անոնք են, որ երբ կը լսեն խօսքը, իսկոյն կ'ընդունին զայն
17 ուրախութեամբ։ Եւ իրենց մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տեւեն. յետոյ երբ նեղութիւն կամ հալածանք ըլլայ խօսքին համար,
18 վաղվաղակի կը գայթակղին։ Եւ փուշերուն մէջ ցանուածներն անոնք են, որ երբ կը լսեն խօսքը,
19 Աշխարհիս զբաղմունքը և հարստութեան խաբէութիւնները և ուրիշ բաներու ցանկութիւնները մէջ մտնելով կը հեղձուցանեն խօսքը, և կ'ըլլայ անպտուղ։ Եւ բարւոք հողի մէջ ցանուածներն
20 անոնք են, որ կը լսեն խօսքը և կ'ընդունին, և կու տան պտուղ փոխանակ միով երեսուն, և փոխանակ միով վաթսուն, և փոխանակ միով հարիւր։
21 Եւ ըսաւ անոնց, Մի՞թէ կու գայ ճրագ որ գրուանի կամ մահճի տակ գրուի. ո՞չ թէ ասթաղին
22 որպէս զի աչառնակի վրայ գրուի. Քանզի չկայ ծածուկ, որ չյայտնուի. և եղած չէ գաղտնի որ չգայ
23 ի յայտ։ Եթէ ոք լսելու ականջ ունի՝ թող լսէ։
24 Եւ ըսաւ անոնց, Տեսէք ինչ կը լսէք. ինչ չափով որ կը չափէք, նոյն չափով պիտի չափուի ձեզ,
25 և պիտի աւելցուի ձեզ որ կը լսէք. Վասն զի ով որ ունի՝ անոր պիտի տրուի. և ով որ չունի՝ ինչ որ ունի այն ևս պիտի առնուի անկէ։
26 Եւ կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնն այսպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ սերմ դնէ,

27 Եւ քանայ և արթննայ գիշեր և ցերեկ, և սերմը
28 բուսանի և աճի, Ե՛ ինք չգիտեր թէ ինչպես։ Քանզի
հողն ինքնին պտուղ կու տայ, առաջ՝ խոտը,
յետոյ՝ հասկը, և ապա՝ լեցուն ցորենը հասկին
29 մէջ։ Եւ երբ պտուղը հասնի, իսկոյն կը ղրկէ
մանգաղ, քանզի հնձոյ ատենն հասած է։
30 Եւ կ'ըսէր, Աստուծոյ Թագաւորութիւնն ի՞նչ
բանի նմանցունենք, կամ ի՞նչ առակով ցուցը-
31 նենք զայն։ Նման է մանանխոյ հատի, որ երբ
հողի մէջ կը ցանուի, փոքրագոյն է քան զամէ-
32 նայն սերմանիս երկրի։ Եւ երբ ցանուի՝ կը բուս-
նի և կ'ըլլայ մեծ քան զամենայն բանջար, և մե-
ծամեծ ոստեր կ'արձակէ, այնպէս որ բուսական
կ'ըլլայ երկնից թռչուններուն անոր հովանւոյն
տակ բնակել։
33 Եւ այսպէս շատ առակներով կը խօսէր խօսքն
34 անոնց, որչափ որ կրնային լսել։ Եւ առանց ա-
ռակի բան մը չէր խօսեր անոնց, բայց առան-
ձին իւր աշակերտներուն կը մեկնէր ամէնը։
35 Եւ այն օրը երբ երեկոյ կ'ըլլար, ըսաւ անոնց,
36 Նէ՛ւ Յովհան անդիի կողմն անցնինք։ Եւ անոնք
ժողովուրդը թողուլ առին զնա ինչպէս որ էր
նաւուն մէջ, և ուրիշ նաւակներ ևս կային անոր
37 հետ։ Եւ հովի մեծ փոթորիկ եղաւ, և ալիքը
նաւուն վրայ կու գային, այնպէս որ գրեթէ կը
38 լեցուէր։ Եւ նա նաւուն խելաց կողմը բարձի
վրայ կը քնանար։ արթնցուցին զնա և կ'ըսէին
անոր, Վարդապետ, փրթի՛ չէ՞ քեզ որ կը կոր-
39 սուինք։ Եւ ելլելով սաստեց հովին, և Յովհան
ըսաւ, Դադարէ, կարկէ՛։ և հովը դադարեցաւ,
40 և եղաւ մեծ խաղաղութիւն։ Եւ ըսաւ անոնց,
Ընդի՞ւր այդպէս վատասիրտ եք, ի՞նչպես հա-
ւատք չունիք։ Եւ անոնք վախցան յոյժ և կ'ը-
սէին իրարու, Արդեօք ո՞վ է սա որ հովը և Յովը
կը հնազանդին ասոր։

Գլ. Ե

1 Եւ եկան Յովհան անդիի մարդը *Գադարացւոց
2 երկիրը։ Եւ երբ նաւէն ելաւ նա, գերեզմաններէն
պատահեցաւ անոր մարդ մը որ պիղծ ոգի ունէր։
3 Որոյ բնակած տեղը գերեզմաններուն մէջ էր, և
4 չղթայով իսկ մարդ չէր կրնար կապել զնա։ Քանզի
շատ անգամ ոտնակապօք և չղթայիւք կապուած
էր, բայց նա չղթաները խզած և ոտնակապերը
խորտակած էր, և ոչ ոք կարող էր նուաճել
5 զնա։ Եւ միշտ գիշեր †գերեզմաններուն
մէջ և լեռներուն մէջ՝ կ'աղաղակէր, և իւր մար-
6 մինը կը պատառէր քարերով։ երբ հեռուէն տե-
սաւ զԻսուս, վազեց և երկրպագութիւն ըրաւ
7 անոր, Եւ մեծ ձայնիւ աղաղակեց և ըսաւ, Դուն
ինծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աս-
տուծոյ բարձրելոյ, կ'երդմնցնեմ զքեզ Աստու-
8 ծով, մի տանջեր զիս։ (Քանզի կ'ըսէր անոր,
9 Պիղծ ոգի, ել այդ մարդէն)։ Եւ հարցուց անոր
Թէ Անունդ ի՞նչ է։ և ըսաւ անոր։ Իմ անունս
10 Լեգէոն է քանզի մենք բազում ենք։ Եւ ‡կ'ա-
ղաչէին զնա յոյժ չղրկել զանոնք այն երկրէն
11 դուրս։ Եւ կար հոն լերան մօտ խաղերու մեծ ե-
12 րամակ մը արօտական։ Եւ բոլոր դեւերն աղաչե-
ցին զնա և ըսին, Խոզերուն ղրկէ զմեզ, որ անոնց
13 մէջ մտնենք։ Եւ Յիսուս իսկոյն հրաման տուաւ
անոնց։ և երբ ելան պիղծ ոգիները, մտան խոզե-
րուն մէջ և երամակը վազեց դարձեալ Յովը, (էին
իբրև երկու հազար,) և Յովհան մէջ հեղձան։ Եւ
խոզաբածները փախան, և պատմեցին քաղաքը

*Ոմն+, Գերգեսացւոց
†Ոմն+, լեռներուն մէջ և գերեզմաններուն մէջ
‡Կամ, կ'աղաչէր

և ագարակները. և հարբ[ի]ն եկան տեսնել թէ
15 ինչ էր որ եղաւ. Եւ եկան Յիսուսի, և տեսան որ
դիւահարը որ լեգէոն ունէր՝ հագուած և զգաս-
16 տացած կը նստէր, և վախցան. Եւ անոնք որ
տեսած էին՝ պատմեցին անոնց թէ ինչ եղաւ
17 դիւահարին, նաև խոզերուն վրայ. Եւ սկսան ա-
18 ղաչել զնա որ երթար իրենց սահմաններէն. Եւ
երբ նա նաւը մտաւ, այն որ դիւահար եղած էր՝
19 կ'աղաչէր զնա անոր հետ ըլլալ. Եւ Յիսուս թոյլ
չտուաւ անոր, այլ բսաւ անոր, Գնա քու տունդ
քու ընտանեացդ, և պատմէ անոնց ինչ որ ըրաւ
20 քեզ Տէր և ողորմեցաւ քեզ. Եւ նա գնաց, և
սկսաւ Դեկապոլսի մէջ քարոզել ինչ որ Յիսուս
ըրաւ անոր. և ամէնքը կը զարմանային։
21 Եւ երբ Յիսուս անցաւ միւսանդամ նաւով ՚ի՛ո-
վսն անդին կողմը, շատ բազմութիւն ժողովեցաւ
22 անոր քով, և նա ծովեզերքն էր։ Եւ ահա մի՛ա
ղովրդապետներէն մին կու գար, որուն անունն էր
Յայրոս, և երբ տեսաւ զնա, ինկաւ անոր ոտքը.
23 Եւ կ'աղաչէր զնա յոյժ և կ'ըսէր թէ Աղջիկս
մեռնելու մօտ է, գաս, ձեռք դնես անոր վրայ,
24 որպէս զի ապառի, և պիտի ապրի։ Եւ գնաց ա-
նոր հետ, և շատ բազմութիւն անոր հետևէն կ'ե-
թային և կը նեղէին զնա։
25 Եւ կին մը որ երկտասան ամ արեան տեսա-
26 տեսութիւնն մէջ էր, Եւ չատ բան չարչարուեր
բժիշկներէ, և իր բոլոր ինչքը տուած էր, և օ-
գուտ չէր գտած, այլ և առաւել չարացած էր,
27 երբ լսեց Յիսուսի վրայ, եկաւ անոր հետևէն բազ-
28 մութեան մէջ, և անոր հանդերձին դպաւ. Զան-
զի կ'ըսէր, Եթէ միայն անոր հանդերձներուն
29 դպչիմ, պիտի բժշկուիմ։ Եւ վաղվաղակի ցամա-
քեցաւ անոր արեան աղբիւրը, և իր մարմնոյն
30 մէջ իմացաւ թէ բժշկուեցաւ տանջանքէն։ Եւ
Յիսուս իսկ և իսկ գիտնալով յանձին՝ զոր զօրու-

թիւնը որ իրմէ ելաւ, դարձաւ բազմութեան մէջ
31 և բսաւ, Ո՞վ դպաւ իմ հանդերձներուս։ Եւ ա-
շակերտներն ըսին անոր, Կը տեսնես որ բազմու-
թիւնը կը նեղէ զքեզ, և կ'ըսես թէ Ո՞վ դպաւ
32 ղս։ Եւ կը նայէր չուրջ որ այս բանն ընողը
33 տեսնէր։ Եւ կինը վախցաւ և դողաց, քանզի գի-
տէր թէ իրեն ինչ եղաւ, և եկաւ ինկաւ անոր
առջև, և ամէն ճշմարտութիւնն բսաւ անոր։
34 Եւ Յիսուս բսաւ անոր, Դուստր, հաւատքդ բր-
ժշկեց զքեզ. գնա խաղաղութեամբ, և բժշկուած
եղիր քու տանջանքէդ։
35 Երբ նա դեռ կը խօսէր, ժողովրդապետին տու-
նէն մարդ եկան և ըսին թէ Դուստրդ մեռաւ,
36 այլ ևս ինչո՞ւ կը յոգնեցնուես վարդապետը։ Իսկ
Յիսուս երբ լսուած խօսքը լսեց, բսաւ ժողովըր-
37 դապետին, Մի վախնար, միայն հաւատա։ Եւ ոչ
ոք թող տուաւ իրեն հետ երթալ, բայց միայն
Պետրոս և զեակոբոս եղբայրն Յովհ-
38 հաննէսու։ Եւ ժողովրդապետին տունը գալով տե-
սաւ աղմուկ և սաստիկ լացողներ և ազաղակող-
39 ներ։ Եւ ներս մտնելով բսաւ անոնց, Ընդէ՞ր
խռովիալ եք և կու լաք. մանուկը մեռած չէ,
40 այլ կը ննջէ։ Եւ ծաղր կ'ընէին զնա. բայց նա ա-
մէնքը դուրս հանելով հրեն հետ առաւ մանկան
հայրը և մայրը և զանոնք որ իրեն հետ էին, և
41 մտաւ հոն ուր պառկած էր մանուկը։ Եւ մանկան
ձեռքէն բռնելով բսաւ անոր, Տալիթա, կումի,
որ կը թարգմանուի, Աղջիկ դուս, (քեզի կ'ըսեմ,)
42 և իր եւ իսկոյն աղջիկը ոտք եկաւ և կը քալէր,
քանզի երկոտասանամեայ էր. և զարմացան մեծ
43 զարմանօք։ Եւ սաստիկ պատուէր տուաւ անոնց
որ մարդ չգիտնար այս բանը, և բսաւ ուտելիք
տալ անոր։

Գլ. Գ

1 Եւ անկէ ելլելով եկաւ իւր երկիրը, և աշակերտ-
2 ները գնացին անոր ետեւէն։ Եւ երբ շաբաթ օրը
հասաւ, սկսաւ ժողովրդանոցին մէջ սորվեցնել.
և շատերը լսելով կը զարմանային և կ'ըսէին,
Ուսա՞ն ունի սա այս բաները, կամ այս ի՞նչ ի-
մաստութիւն է սորը տրուած, որ այսպիսի հր-
3 թաչք կ'ըլլան սորը ձեռքով։ Հիսը չէ՞ սա, Մա-
րիամու որդին, և Յակոբոսի և Յովսեսի և Յու-
դայի և Սիմոնի եղբայրը. և սորը քոյրերն հոս
մեր քով չե՞ն. և կը գայթակղէին անոր վրայ։
4 Բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը անպա-
տիւ չէ բայց միայն իր երկրին մէջ և իր ազգա-
5 կաններուն և իր տան մէջ։ Եւ չէր կրնար հոն
և ոչ հրաչք մը ընել, միայն քանի մը հիւանդաց
վրայ ձեռք դրաւ և բժշկեց զանո՛ւ։ Եւ կը զար-
մանար անոնց անհաւատութեան վրայ. և չրջա-
կայ գիւղերը պարտելով կը սորվեցնէր։
7 Եւ իրեն կոչեց երկոտասաններըը, և սկսաւ ե՛ր-
կու երկու զրկել զանոնք, և իշխանութիւն
8 տուաւ անոնց պիղծ ոգիներու վրայ։ Եւ պատ-
ուիրեց անոնց ճամբու համար բան չառնուել, բայց
միայն գաւազան մը. ոչ պարկ, ոչ հաց, ոչ տակ
9 իրենց գօտիներուն մէջ, Այլ հողաթափ հագնել.
10 և ըսաւ, Կրկին հանդերձ մի հագնիք։ Եւ ըսաւ
անոնց, Որ տունն մտնէք, հոն կեցէք մինչև
11 անկէ ելլէք։ Եւ անոնք որ չեն ընդունիր զձեզ
և չեն լսեր ձեզ, երբ անկէ կ'ելլէք, Թօթափե-
ցէք փոշին որ ձեր ոտից տակն է անոնց վկայու-
թեան համար։ *Ձշմարիտ կ'ըսեմ ձեզ, Սոդո-
մայեց և Գոմորացւոց աւելի դիւրին պիտի ըլլայ
դատաստանին օրը քան թէ այն քաղաքին։"

*Ոմանք լսուին

12 Եւ անոնք ելլելով կը քարոզէին որ ապաշա-
13 րէին մարդիկ։ Եւ շատ դևեր կը հանէին, և շատ
հիւանդները իւղով կ'օծանէին և կը բժշկէին զա-
նո՛նք։
14 Եւ Հերովդէս Թագաւորը լսեց, (քանզի անոր
անունը յայտնի եղաւ,) և կ'ըսէր Թէ Յովհաննէս
մկրտիչ մեռելներէն յարութիւն առած է, և ա-
15 նոր համար հրաչներ կ'ըլլան անով։ Ուրիշները
կ'ըսէին Թէ Եղիա է. և այլք կ'ըսէին Թէ Մար-
16 գարէ ումն է, կամ մարգարէից միոյն պէս։ Բայց
երբ Հերովդէս լսեց, ըսաւ, Սա է Յովհաննէս որոյ
գլուխը կարեցի ես, մեռելներէն յարութիւն ա-
ռած է։
17 Քանզի Հերովդէս ինք հաղ զրկեց բռնեց զՅով-
հաննէս, և կապեց բանտը դրաւ իր եղբօրը փի-
լիպպոսի կնոջ Հերովդիայի համար, քանզի իրեն
18 կին առած էր զնա։ Վասն զի Յովհաննէս կ'ըսէր
Հերովդէսի, Օրինաւոր չէ քեզ քու եղբօրդ կինն
19 ունենալ։ Եւ Հերովդիաս ոխ ունէր անոր դէմ,
20 և կ'ուզէր սպաննել զնա և չէր կարող. Քանզի
Հերովդէս կը վախնար Յովհաննէ, գիտնալով Թէ
արդար և սուրբ մարդ էր նա. և անոր բերանը
կը նայեր, և անկէ լսելով չատ բան կ'ընէր, և
21 քաղցրութեամբ կը լսէր անոր։ Եւ երբ յարմար
օր մը եղաւ, որ Հերովդէս իր ծննդեան օրը
ընթրիք կ'ընէր իր նախարարներուն և հազա-
22 րապետներուն և գալիլեայի մեծամեծներուն, Եւ
Հերովդիայի աղջիկը հոն մտնելով խա-
ղաց, և հաճելի եղաւ Հերովդէսի և բազմականաց։
Թագաւորն ըսաւ աղջկան, Խնդրէ ինէ զինչ և
23 կամիս, և պիտի տամ քեզ։ Եւ անոր երդուաւ
ըսաւ ըսելով, Ինչ որ խնդրես ինէ՝ պիտի տամ
24 քեզ մինչև Թագաւորութեանս կէսը։ Եւ նա
դուրս ելլելով ըսաւ իր մօրը, Ինչ ուզեմ.
25 և նա ըսաւ, Յովհաննու մկրտչի գլուխը։ Եւ մու-

Թով Թագաւորին քով մաս և խնդրեց ըսելով,
Կ'ուզեմ որ անդէն տաս ինձ սկսեղ վրայ
26 Յովհաննու մկրտչի գլուխը։ Ու Թագաւորը
տրտմեցաւ յոյժ, բայց երդմանց համար և իր
հետ նստողներուն համար չուզեց անոր Խնդրէը
27 մերժել։ Ու Թագաւորն իսկոյն դահիճ զրկեց, և
հրաման ըրաւ անոր գլուխը բերել։ և նա գնաց
28 բանտին մէջ գլխատեց զնա, Ու բերաւ անոր
գլուխը սկսեղը և տուաւ աղջկան, և աղջիկը
29 տուաւ զայն իւր մօրը։ Ու անոր աշակերտները
լսելով եկան վերցուցին անոր մարմինը և գերեզ-
մանի մէջ դրին։
30 Ու առաքեալներն Յիսուսի քով ժողովեցան,
և պատմեցին անոր ինչ որ ըրին և ինչ որ սոր-
31 վեցուցին։ Ու նա ըսաւ անոնց, Եկէք դուք ա-
ռանձին անապատ տեղ մը և քիչ մը հանգչեցէք։
քանզի շատերը կային որ կու գային և կ'երթային.
և հաց ուտելու անգամ ժամանակ չէին ունենար։
32 Ու նաւով անապատ տեղ մը գնացին առանձին։
33 Ու ժողովրդեանը տեսան զանոնք որ կ'երթային,
և շատերը ճանչցան զնա, և հետի բոլոր քաղաք-
ներէն հոն կը վազէին, և անոնցմէ առաջ հասնե-
34 լով անոր քով ժողովեցան։ Ու Յիսուս երբ
դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով գթաց
անոնց վրայ, քանզի հովիւ չունեցող ոչխարներու
պէս էին. և սկսաւ շատ բաներ սորվեցնել ա-
նոնց։
35 Ու երբ ժամանակը շատ ուշացաւ, աշակերտ-
ները եկան անոր և ըսին, Այս տեղ անապատ է,
36 և ժամանակն ուշացած է. Արձակէ ժողովուրդը
որ երթան շուրջ ագարակները և գիւղերը և իրենց
37 հաց գնեն, քանզի ուտելու բան չունին։ Բայց նա
պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Դուք տուէք
դոցա ուտել։ Ու ըսին անոր, Երթանք երկու
հարիւր դահեկանի հաց գնե՞նք և տանք տանոց

38 որ ուտեն։ Ըսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք,
գնացէք նայեցէք։ և երբ գիտցան, ըսին, Հինգ,
39 և երկու ձուկն։ Ու հրաման ըրաւ անոնց ամէն-
քը դալար խոտին վրայ դունդ դունդ նստեցու-
40 նել։ Ու դաս դաս նստան, ուր հարիւր և ուր
41 յիսուն։ Ու հինգ նկանակը և երկու ձուկն առաւ
և նայելով յերկինս օրհնեց, և մանրեց նկանակ-
ները և տուաւ աշակերտներուն, որ անոնց առջև
42 դնեն, Նաև երկու ձուկը բաժնեց ամենուն։ Ու
43 ամէնքը կերան և յագեցան. Ու երկոտասան
կոդով լեցուն կտորտուանք վերցուցին, և ձուկե-
44 րէն ևս։ Ու այն հացկերէն ուտողներն էին իբրև
հինգ հազար այր։
45 Ու վազվազակի ստիպեցուց աշակերտները նաւ
մտնել, և յառաջ քան զնա միւս կողմը Բեթ-
սայիդա անցնել, մինչև որ ինք ժողովուրդն ար-
46 ձակէր։ Ու անոնցմէ զատուելով լեռը ելաւ ա-
47 ղօթք ընել։ Ու երբ երեկոյ եղաւ, նաւը ծովուն
48 մէջ էր, և ինք միայն էր ցամաքը։ Ու տեսաւ
զանոնք որ կը տագնապէին հակառակ քի վարելու
տաեն, քանզի հովը դէմ էր անոնց. և գի-
շերուան չորրորդ պահուն մօտ ծովուն վրայ քա-
լելով կու գայ անոնց, և կ'ուզէր անցնել զանոնք։
49 Անոնք երբ տեսան որ ծովուն վրայ կը քալէր,
կարծեցին թէ ուչքի երեւոյթ էր, և աղաղակե-
50 ցին. Քանզի ամէնքը տեսան զնա և խռովեցան.
և նա վազվազակի խօսեցաւ անոնց հետ և ըսաւ
անոնց, Քաջալերուեցէք, ես եմ, մի՛ վախնաք։
51 Ու նաւը ելաւ անոնց քով, և հովը դադարեցաւ.
և անոնք իրենց մտաց մէջ ապշած էին յոյժ և
52 կը զարմանային. վասն զի չհմացան հացովը որ ե-
ղաւ հացին վրայ, քանզի անոնց սիրտը թմրած
էր։
53 Ու միւս կողմն անցնելով հասան Գեննեսարեթի
54 երկիրը և դիտեղեցին նաւը։ Ու երբ նաւէն ե-

55 լան, այ՝ պէղէ մոբէլէն խսկայն ճանչցան դնա. Եւ
ասդին անդին վազելով բոլոր չրջակայ տեղւանքն,
սկսան մահիճներով հիւանդներ բերել ուր և կը
56 լսէին թէ էր՝ Եւ ուր և կը մտնէր, գիւղերը կամ
քաղաքները կամ ագարակները, հրապարակներ-
րու մէջ կը դնէին հիւանդները, և կ՝աղաչէին
դնա որ գոնէ անոր հանդերձին փղանցին դպչէին.
և անոնք որ դպան՝ բժշկեցան։

Գլ. Ի

1 Եւ անոր քով Ժողովեցան փարիսեցիք և դպիր-
2 ներէն ոմանք որ Երուսադէմէ եկած էին։ Եւ
երբ տեսան որ անոր աշակերտներէն ոմանք
պիղծ, այսինքն անլուայ, ձեռօք հաց կ՝ուտէին,
3 մեղադրեցին։ Քանզի փարիսեցիք և բոլոր
Հրեայք մինչև որ ագէկ մը չլուան իրենց ձեռուը-
ներըը, հաց չեն ուտեր, քանզի ծերերուն աւան-
4 դութիւնը կը բռնեն։ Եւ երբ կո՝ չան չուկայէն,
եթէ չլուացուին, չեն ուտեր։ և ուրիշ շատ բա-
ներ կան որ ընդունած են և կը բռնեն, այսինքն
բաժակներու և ստամանաց և պղնձէ ամաններու
5 և անկողիններու լուացմունք։ Անոնուն փարի-
սեցիք և դպիրք հարցուցին անոր, Թէ Ընդ՞ը
քու աշակերտներդ չեն երթար ըստ աւանդու-
թեան ծերոց, այլ անլուայ ձեռօք հաց կ՝ուտեն։
6 Եւ նա պատասխան տուաւ և ըսաւ անոնց,
Բարւոք մարգարէացաւ Եսայի ձեզ, կեղծաւոր-
ներուդ համար, ինչպէս որ գրուած է, Այս ժո-
ղովուրդը ձոյն բերանով կը պատուէ զիս, բայց
7 անոնց սիրտը հեռացած պատուած է ինէ. Եւ
ի զուր կը պաշտեն զիս, մարդոց պատուիրած
բաներն ՚ի վարդապետութիւն սորվեցունելով։
8 Վասն զի Աստուծոյ պատուիրանը թողուլ, մար-
դոց աւանդութիւնը կը բռնէք, ինչպես ստաման-

ներու և բաժակներու լուացմունք, և ասոնց
9 նման շատ ուրիշ բաներ կ՝ընէք։ Եւ ըսաւ անոնց,
Աղէկ կ՝անարդէք Աստուծոյ պատուիրանը որ ձեր
10 աւանդութիւնը պահէք։ Քանզի Մովսէս ըսաւ,
Քու հայրդ և մայրդ պատուէ։ և Ով որ չ՝ը
հայրը կամ մայրն անիծէ՝ մեռնի։
11 Բայց դուք կ՝ըսէք, Եթէ ոք չ՝ը հօրը կամ մօրն
ըսէ, Այն բանը զոր ինէ պիտի չտես, Ատրուճան
տալօ՝ կորբան է, (որ ըսել է ընծայ,) ուրեմն
12 կ՝ըլլայ։ Եւ այլ ևս թող չէք տար անոր բան մը
13 ընել իւր հօրը կամ իւր մօրը։ Եւ Աստուծոյ խօս-
քը կը խափանէք ձեր աւանդութեամբ զոր կ՝ա-
ւանդէք։ և ասոր նման ուրիշ շատ բաներ կ՝ընէք։
14 Եւ բոլոր Ժողովուրդը կոչելով իրեն ըսաւ ա-
15 նոնց, Լսեցէք ինձ ամէնքդ և հասկցէք։ Բան
մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ, և
կարող ըլլայ պղծել զնա, այլ այն բաները որ
անկէ կ՝ելլեն, անոնք են որ կը պղծեն զմարդ։
16 Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
17 Եւ երբ այն բազմութենէն ղատեղուեալ տուն
մտաւ, աշակերտներն հարցուցին անոր այն ա-
18 ռակին համար։ Եւ ըսաւ անոնց, Դո՞ք ևս այդ-
պէս անմիտ էք։ չէ՞ք հասկնար Թէ ամէն ինչ
որ դուրսէն մարդուն ներսէն դին կը մտնէ,
19 չկրնար պղծել զնա։ վասն զի ոչ Թէ անոր սրտին
մէջ կը մտնէ, այլ փորը, և արտաքնոց կ՝ելլէ,
20 և կը մաքրէ բոլոր կերակուրները։ Եւ կ՝ըսէր Թէ
Ինչ որ կ՝ելլէ մարդուն ներսէն՝ այն կը պղծէ
21 զմարդ։ Քանզի ներսէն, մարդոց սրտէն, կ՝ելլեն
չար խորհուրդներ, շնութիւնք, պոռնկութիւնք,
22 սպանութիւնք, Գողութիւնք, ագահութիւնք,
չարութիւնք, նենգութիւն, գիշութիւն, չարակ-
նութիւն, հպարտութիւն, ախտաբաւանութիւն,
23 անզգամութիւն։ Այս բոլոր չար բաները կ՝ելլեն
ներսէն, և կը պղծեն զմարդ։

24 Եւ անկէ ելլելով գնաց Տիւրոսի և Սիդոնի
սահմաններըը, և տուն մը մտնելով չէր ուզեր
մարդու յայտնուիլ, բայց չկրցաւ ծածկուիլ·
25 Քանզի կին մը որոյ դուստրը պիղծ ոգի ունէր՝
լսեց անոր վրայ, և եկաւ ինկաւ անոր ոտքը·
26 Եւ այն կինը Հեթանոս էր, ազգով Փիւնիկ Ասո-
րի, և կ'աղաչէր զնա հանել դեւը իր դստերէն·
27 Եւ Յիսուս ըսաւ անոր, Թոյլ տուր որ առաջ
մանկունք յագենան, քանզի ադէկ չէ ժողոյոց
հացն առնուլ և շուներուն նետել· նա պա-
տասխան տուաւ և ըսաւ անոր, Այո, Տէր,
քանզի շունք կը կերակրին սեղանին տակ ժողոյոց
փշրանքէն· Եւ ըսաւ անոր, Այդ խօսքիդ համար
30 գնա, դեւը ելաւ քու դստերդ· Եւ Ան՝ իր
տունը երթալով գտաւ որ դեւը ելած, և աղ-
ջիկը պառկած էր անկողնին վրայ·
31 Եւ նորէն Տիւրոսի և Սիդոնի սահմաններէն
ելլելով եկաւ Գալիլեայի ծովեզրը Դեկապոլսի
32 սահմաններուն մէջէն· Եւ բերին անոր առջև
գոնի խուլ և դժուարախօս, և կ'աղաչէին որ
33 անոր վրայ ձեռք դնէր· Եւ առնելով զնա մէկուն-
ժողովուրդէն, իր մատուներըը դրաւ անոր ա-
կանջներուն մէջ և թքաւ, և դպաւ անոր լե-
34 զուին, Եւ երկինք նայելով հառաչեց և ըսաւ
35 անոր, Եփփաթա, (որ ըսել է բացուէ·) Եւ խո-
հոյն բացուեցան անոր ականջները, և քակուե-
ցաւ անոր լեզուին կապը, և ուղիղ կը խօսէր·
36 Եւ պատուիրեց անոնց մարդու չըսել· և որ-
չափ նա կը պատուիրէր անոնց, անոնք ևս աւելի
37 կը քարոզէին· Եւ կը զարմանային յոյժ և կ'ը-
սէին, Ամէն բան ադէկ ըրաւ ատ, որ խուլերուն
լսել կու տայ և համրերուն խօսել·

*Յոան· Յոյն

ԳԼ· Ը

1 Այն օրերը ժողովուրդը չատ էր յոյժ, և ուտե-
լու բան չունէր, Յիսուս աշակերտները կոչեց
2 իրեն և ըսաւ անոնց, Կը գթամ այդ ժողովրդեան
վրայ, քանզի արդ երեք օր է որ իմ քովս են,
3 և բան չունին ուտելու· Եւ եթէ անոնք զրկեմ
առանձ իրենց առներնին, ճամբան պիտի մաբին,
քանզի առանցմէ ոմանք հեռու տեղէ եկած են·
4 Եւ աշակերտները պատասխան տուին անոր, Այս
անապատիս մէջ ուտե՞ կրնայ մարդ հացով յա-
5 գեցնել առանդր· Եւ հարցուց անոնց, Քանի՞
6 նկանակ ունիք· և անոնք ըսին, Եօթն· Եւ հրա-
ման ըրաւ ժողովրդեան գետնին վրայ նստել,
առաւ եօթն նկանակը, գոհացաւ և կտրեց և
տուաւ աշակերտներուն դնել ժողովրդեան առջև,
7 և դրին· Եւ քանի մը մանր ձուկեր ունէին, և
օրհնեց և ըսաւ զանոնք ևս դնել անոնց առջև·
8 Եւ կերան և յագեցան, և աւելցած կտորները
9 վերցուցին եօթն զամբիւղ· Եւ ուտողներն էին
10 իրր չորս հազար, և արձակեց զանոնք· Եւ վազ-
վաղակի նաւը մտնելով աշակերտներուն հետ
եկաւ Դալմանութայի կողմերը·
11 Եւ փարիսեցիք ելլելով սկսան անոր հետ վիճել
և փորձելով զնա անկէ նշան կը խնդրէին յերկ-
12 նից· Եւ նա իր հոգւոյն մէջ հառաչելով ըսաւ,
Ընդէ՞ր այս ազգը նշան կը խնդրէ· Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզ որ այս ազգին նշան պիտի չտրուի· Եւ
զանոնք թողլով դարձեալ նաւը մտաւ, և գնաց
Յովհան միւս կողմը·
14 Եւ հաց առնուլ մոռցած էին, և նաւուն մէջ
15 իրենց հետ նկանակ մը միայն ունէին· Եւ կը պատ-
ուիրէր անոնց և կ'ըսէր, Նայեցէք և զգուշացէք
16 փարիսեցւոց խմորէն և Հերովդեսի խմորէն· Եւ
իրարու հետ կը խորհէին և կ'ըսէին Թէ վասն զի

17 հաց չունիք՝ իսկ Յիսուս անոնց ԽորհուրդԸ դիտեալով՝ ըսաւ անոնց, ԸնդՀ*ը կը խորհիք Թէ հաց չունիք. տակաւին չՀ*ք հասկնար և չՀ*ք իմա-
18 նար, Թմրած՞ են դեռ ձեր սիրտերը։ ԱչՀ* ունիք և չՀ*ք տեսներ, և ականջներ ունիք և չՀ*ք լսեր,
19 և չՀ*ք յիշեր։ երբ հինգ նկանակը հինգ հազարին կոտրեցի, քանի՞ կողով լեցուն կտորուանք վեր-
20 ցուցիք։ Ըսին անոր, Երկոտասան։ Եւ երբ եօթն նկ*նակը չորս հազարին կոտրեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կտորուանք վերցուցիք։ և անոնք ըսին,
21 Եօթն։ Եւ ըսաւ անոնց, Ասպա ի՞նչպէս չՀ*ք հասկընար։

22 Եւ ԲեԹսայիդա եկաւ, և անոր առՀ*ւ կոյր մը
23 բերին, և կ'աղաչէին զնա զպչել անոր։ Եւ նա կոյրին ձեռքէն բռնելով դիւղէն դուրս հանեց, և անոր աչՀ*ըններուն Թքնելով ձեռքը դրաւ անոր վրայ, և կը հարցունէր անոր Թէ բան մը
24 կը տեսնէր։ Եւ նա նայեցաւ և կ'ըսէր, Մարդիկ
25 կը տեսնեմ որ կը պարպին ծառերու պէս։ Նորէն ձեռքը դրաւ անոր աչՀ* վրայ, և նայել տուաւ անոր։ և ողջացաւ և ամէն բան հասարձակ կը
26 տեսնէր։ Ցետոյ զրկելով զնա իր տունը ըսաւ, Դիւղը մի՛ մտներ, և գիւղին մէջ մարդու մի՛ ըսեր։
27 Եւ Յիսուս աչակերտներուն հետ եղաւ փիլիպպոսի կեսարիոյ գիւղերը, և ճամբան կը հարցընէր աչակերտներուն և կ'ըսէր անոնց, Ինծի հա-
28 մար ո՞վ կ'ըսեն մարդիկ Թէ եմ։ Եւ անոնք պատասխան տուին Ը ըէՆ, ՈՀ*՝ ՅովՀաննէս Մկրտիչ, և այլք՝ Եղիա, իսկ այլք՝ մարգարէներէն
29 մին։ Եւ նա ըսաւ անոնց, Իսկ դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք Թէ եմ։ Պատասխան տուաւ
30 Պետրոս և ըսաւ անոր, Դուն ես ԲրիստոսՆ։ Եւ սաստիկ պատուիրեց անոնց մարդու բան չըսել անոր համար։
31 Եւ սկսաւ սորվեցունել անոնց, Թէ Պարտ էր

Որդւոյ մարդոյ շատ չարչարանք կրել, և երէցներէն և քահանայապետներէն և դպիրներէն մերժուիլ և սպանուիլ, և երեք օր ետքը յա-
32 րուԹիւն առնուլ։ Եւ այս խօսքը յայտնի խօսեցաւ։ Եւ Պետրոս մեկուսի առաւ զնա, և սկսաւ
33 յանդիմանել զնա։ Եւ նա դարձաւ և իւր աչակերտներուն նայելով յանդիմանեց զՊետրոս և ըսաւ, Ետիս գնա, Սատանայ, քանզի դուն Աստուծոյ բաները չես խորհիր, այլ մարդոց բաները։
34 Եւ ժողովուրդը իւր աչակերտներուն հետ կոչելով իրեն ըսաւ անոնց, Ով որ կ'ուզէ իմ ետևէս գալ, Թող ուրանայ իւր անձը, և վերցունէ իւր
35 խաչը, և գայ իմ ետևէս։ Վասն զի ով որ կ'ուզէ իւր անձն ապրեցունել, պիտի կորուսանէ զնա, և ով որ ինծի և աւետարանին համար կորու-
36 սանէ իւր անձը, պիտի ապրեցունէ զնա։ Քանզի ի՞նչ օգուտ է մարդոյ Եթէ բոլոր աշխարՀ չահի,
37 և իւր անձը կորուսանէ։ կամ իւր անձին համար
38 ի՞նչ փրկանք պիտի տայ մարդ։ Վասն զի ով որ զիս և իմ խօսքս Ը---նէ, ամօՐ համարի այս շնացող և մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ևս ամօՐ պիտի համարի Ը---նել զնա երբ գայ իւր Հօրը փառօք սուրբ հրեշտակներուն հետ։
39 Եւ ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ հոս գտնուողներէն կան ոմանք որ մահուան համը պիտի չառնուն, մինչև տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը զօրութեամբ եկած։

Գլ. Թ

1 Եւ վեց օր ետքը Յիսուս իրեն հետ առաւ զՊետրոս և զՅակոբոս և զՅովՀաննէս, և բարձր լեռը հանեց զանոնք առանձին, և անոնց առջև այ-
2 լակերպեցաւ։ Եւ անոր հանդերձները եղան փայլուն սպիտակ յոյժ, այնպես որ երկրի վրայ Թա-

3 փիլ մը չկրնար այնպէս սպիտակացնել, եւ
Եղիա Մովսէսի հետ երեւեցաւ անոնց, եւ կը խո-
4 սէին Յիսուսի հետ։ Եւ Պետրոս պատասխան
տուաւ եւ ըսաւ Յիսուսի, Ռաբբի, լաւ է մեզ հոս
կենալ. եւ երեք առաջաւոր շինենք, մին՝ քեզ,
5 եւ մին՝ Մովսէսի, եւ մին՝ Եղիայի. վասն զի չէր
6 գիտեր ինչ խօսէր, քանզի զարհուրած էին։ Եւ
ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, եւ ձայն եկաւ
ամպէն ըսելով, Դա է իմ սիրելի Որդիս, ասոր
7 լսեցէք։ Եւ երբ յանկարծ ապին անդին նայե-
ցան, այլ ոք չտեսան, բայց միայն Յիսուս իրենց
8 հետ։ Եւ երբ լեռնէն կ'իջնէին, պատուիրեց ա-
նոնց մարդու չպատմել ինչ որ տեսան, բայց
միայն երբ Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն
9 առնուր։ Եւ անոնք այն խօսքը պահեցին, եւ կը
հարցունէին իրարու Թէ ի՞նչ էր մեռելներէն յա-
10 րութիւն առնուլ։ Եւ հարցուցին անոր եւ ըսին,
Ի՞նչ է այն զոր դպիրները կ'ըսեն Թէ Պէտք է որ
11 առաջ Եղիա գայ։ Նա պատասխան տուաւ եւ
ըսաւ անոնց, Էն Աբրահամ առաջ Եղիա կու գայ,
եւ ամէն բան կը կարգադրէ. եւ Թէ, ինչպէս
գրուած է Որդւոյ մարդոյ համար, շատ չարչա-
12 րանք պիտի կրէ եւ անարգուի։ Բայց կ'ըսեմ ձեզ
Թէ Եղիա եկաւ, եւ ինչ որ կամեցան ըրին անոր,
ինչպես որ գրուած է անոր համար։
13 Եւ աշակերտներուն գալով տեսաւ շատ
ժողովուրդ անոնց բոլորտիքը եւ դպիրները, որ
14 կը վիճէին անոնց հետ։ Եւ իսկոյն բոլոր ժողո-
վուրդը երբ տեսան նրա, զարմացան յոյժ, եւ
15 յառաջ վազելով ողջոյն կու տային անոր։ Եւ
հարցուց դպիրներուն Թէ ի՞նչ կը վիճէիք անոնց
16 հետ։ Եւ ժողովուրդէն ոմն պատասխան տալով
ըսաւ, Վարդապետ, առ քեզ բերի որդիս, որ
17 համր ոգի ունի։ Եւ ուր և հասնի անոր՝ կը
գգհանէ զնա, և նա կը փրփրի և ակռաները կը

կրճտէ և կը ցամաքի. և ըսի աշակերտներուդ
18 հանել զնա և չկրցան։ Պատասխան տուաւ ա-
նոնց և ըսաւ, Ով անհաւատ ազգ, մինչեւ ե՞րբ
ձեզի հետ ըլլամ, մինչեւ ե՞րբ համբերեմ ձեզ.
19 բերէք զնա առ իս։ Եւ բերին զնա անոր. երբ
զնա տեսաւ զնա, վարդապետի ըշ ոգին սարսեց
զնա, և գետին իյնալով կը թաւալէր և կը փրփ-
20 րէր։ Եւ Յիսուս հարցուց անոր հօրը և ըսաւ,
Ո՞րչափ ժամանակ է որ այդ բանը եղաւ անոր։
21 Եւ նա ըսաւ, Ի մանկութենէ. Եւ շատ անգամ
հրով և ջրով մէջ կը նետէ զդա որ կորուսանէ.
բայց եթէ կարող ես, օգնէ մեզ գթալով մեր
22 վրայ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, եթէ կարող ես
հաւատալ, ամէն բան հնարաւոր է անոր որ կը
23 հաւատայ։ Եւ ակռան հայրն իսկոյն աղաղակեց
և ըսաւ արտասուօք, Կը հաւատամ, Տէր, օգնէ
24 անհաւատութեանս։ Յիսուս երբ տեսաւ որ ժո-
ղովուրդը վրան կը դիզուէր, սաստեց պիղծ ոգ-
ւոյն և ըսաւ անոր, Համր և խուլ ոգի, կը հրա-
մայեմ քեզ, ել ատկէ, և այլ ևս չմտնես ի դա-
25 ւր։ Եւ աղաղակելով սաստիկ սարսեց զնա և ելաւ. և
զդան եղաւ մեռելի պէս, այնպէս որ շատերն ը-
26 սին Թէ մեռաւ։ Եւ Յիսուս անոր ձեռքէն բռնե-
27 լով վերցուց զնա. և նա կանգնեցաւ։ Եւ երբ նա
տուն մտաւ, աշակերտներն առանձին հարցուցին
անոր ըսելով, Մենք ընդ՞ինչ չկրցանք հանել զնա։
28 Եւ ըսաւ անոնց, Այդ տեսակին հնար չէ ուրիշ
բանով ելլել, բայց միայն աղօթիւք և պահոմով։
29 Եւ անկէ ելլելով գալիլեայէ կ'անցնէին, և չէր
30 ուզեր որ մարդ գիտնար։ Զանգի կը սորվեցնէր
իւր աշակերտներուն և կ'ըսէր անոնց Թէ Որդին
մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, և պիտի
սպանանեն զնա. և երբ սպանուի, երրորդ օրը յա-
31 րութիւն պիտի առնու։ Եւ անոնք չէին հասկնար
այն խօսքը, և կը վախնային հարցնել անոր։

32 Եւ եկաւ կափառնայում, և երբ տուն մտաւ
հարցուց անոնց, Ի՞նչ կը վիճէիք ճամբան իրարու
33 հետ։ Եւ անոնք լուռ կեցան, քանզի ճամբան
34 իրարու հետ կը վիճէին Թէ ո՛վ մեծ է։ Եւ երբ
նստաւ, կոչեց երկոտասաններըը և ըսաւ անոնց,
Եթէ ոք կ'ուզէ առաջինն ըլլալ, ամենուն յետինը
35 պիտի ըլլայ և ամենուն սպասաւորը։ Եւ առնլով
մը առաւ կեցուց անոնց մէջ, և գրկին առնլով
36 ըսաւ անոնց, Ով որ այսպիսի տղոյց մին ընդունի յանուն իմ, զիս կ'ընդունի. և
ով որ զիս ընդունի, ոչ Թէ զիս կ'ընդունի, այլ
37 զիս ղրկողը։ Պատասխան տուաւ անոր Յովհաննէս և ըսաւ, Վարդապետ, տեսանք զոմն որ
քու անուամբդ դևեր կը հանէր, և մեր հետևիլն
չկամեցաւ, և արգելեցինք զնա, վասն զի մեր
38 հետևիլն չկամեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ, Մի՛ արգելէք
զնա, քանզի չկայ մարդ որ իմ անուամբս հրաշք
39 գործէ, և կարենայ իսկոյն հայհոյել զիս. Քանզի
40 ով որ *մեզի հակառակ չէ, մեր՝ կողմն է։ Վասն
զի ով որ բաժակ մը ջուր խմցունէ ձեզ Քրիստոսին եղբ, ճշմարիտ
41 կ'ըսեմ ձեզ, իւր վարձքը պիտի չկորսուանի։ Եւ
ով որ գայթակղեցունէ այս փոքրիկներէն մին
որ կը հաւատան ինձ, լաւ էր անոր որ երկանի
քար կախուէր անոր վզին, և ծովը նետուէր։
42 Եւ եթէ քու ձեռքդ կը գայթակղեցունէ զքեզ,
կտրէ զայն. լաւ է քեզ խեղ մտնել ի կեանս,
քան երկու ձեռք ունենալ և գեհենն երթալ
43 ի հուրն անշէջ, Ուր անոնց որդը չմեռնիր և
44 կրակը չմարիր։ Եւ եթէ քու ոտքդ կը գայթակղեցունէ զքեզ, կտրէ զայն. լաւ է քեզ
կաղ մտնել ի կեանս, քան երկու ոտք ունենալ

*Ոմանք, ձեզի հակառակ չէ, ձեր
†Ոմանք, այս

45 և նետուիլ գեհենն ի հուրն անշէջ, Ուր անոնց
46 որդը չմեռնիր և կրակը չմարիր։ Եւ եթէ քու
աչքդ կը գայթակղեցունէ զքեզ, հանի զայն.
լաւ է քեզ միականի մտնել Աստուծոյ Թագաւորութիւնը, քան երկու աչք ունենալ և կրակին
47 գեհենը նետուիլ, Ուր անոնց որդը չմեռնիր և
48 կրակը չմարիր։ Քանզի ամէն մարդ կրակով պիտի
49 ազուի, և ամէն զոհ աղով պիտի ազուի։ Աղը
լաւ է, բայց եթէ աղն անհամի, ինչո՞վ պիտի
համեմիք զայն։ Ձեր անձին մէջ աղ ունեցէք, և իրարու հետ խաղաղութիւն ըրէք։

Գլ. Ժ

1 Եւ անկէ ելլելով եկաւ Հրէաստանի սահմաններէն,
յայնկոյս Յորդանանու, և նորէն ժողովուրդները
կը ժողովէին անոր քովը. և ինչպես սովորութիւն
ունէր, դարձեալ կը սորվեցուներ անոնց։
2 Եւ փարիսեցիք եկան, և փորձելով զնա կը
հարցնէին անոր Թէ Արժա՞ն է առն արձակել
3 իւր կնոջ։ Եւ նա պատասխան տուաւ և ըսաւ
4 անոնց, Մովսէս ի՞նչ պատուիրեց ձեզ։ Եւ անոնք
ըսին, Մովսէս հրաման տուաւ արձակման գիր
5 գրել և արձակել։ Եւ Յիսուս պատասխան տա-
ւալ ըսաւ անոնց, Ձեր սրտին կարծրութեան հա-
6 մար գրեց ձեզ այդ պատուիրբը։ Բայց սակզբա-
գործութեան սկիզբէն Աստուած զանոնք արու
7 և էգ ըրաւ, Ե ըսաւ, Վասն այսորիկ մարդ իւր
8 հայրը և մայրը Թողու և իւր կնոջը յարի, Եւ
երկուքը ըլլան մի մարմին. ուստի այլևս երկու
9 չեն, այլ մի մարմին. Ուրեմն այն զոր Աստուած
10 միաւորեց, մարդ Թող չդատե։ Եւ տունը դար-
ձեալ աշակերտները նոյն բանը հարցուցին անոր։
11 Եւ ըսաւ անոնց, Ով որ իւր կինը արձակէ և ու-
12 րիշ մը առնու, անոր դէմ շնութիւն կ'ընէ։ Եւ

կին մը եթէ զաւուէ իւր առնէն և ուրիշ առն
ըլայ, չնուիթիւն կ'ընէ,
13 Եւ մանր ապուչ բերին անոր, որ անոնց դպչէր,
բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները:
14 Յիսուս երբ տեսաւ, բարկանալով ըսաւ անոնց,
Թող տուէք այդ մանր ապուչոց որ ինծի գան, և
մի՛ արգիլէք զանոնք, քանզի Աստուծոյ թագա-
15 ւորութիւնն այդպիսեաց է: Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզ, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը փոքր-
րիկ տղու պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ
16 անոր մէջ: Եւ առաւ զանոնք գիրկը, ձեռք դրաւ
անոնց վրայ և օրհնեց զանոնք:
17 Եւ երբ դուրս ելաւ ճամբուն մէջ, ահա մարդ
մը վազեց և ծունր դնելով անոր առջև կը հար-
ցընէր անոր Ե՛յ-էէր, վարդապետ բարի, ի՞նչ
բնեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ:
18 Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ կը կոչես զիս բարի.
19 չկայ բարի բաց ի միոյն, որ է Աստուած: Պատ-
ուիրանները գիտես. Մի՛ շնար, Մի՛ սպանաներ,
Մի՛ գողնար, Մի՛ սուտ վկայեր, Մի՛ զրկեր,
20 Հայրդ և մայրդ պատուէ: Նա պատասխան տուաւ
և ըսաւ անոր, Վարդապետ, ատոնք ամէնը պա-
21 հած եմ ի մանկութենէ: Եւ Յիսուս նայելով ա-
նոր, սիրեց զնա, և ըսաւ անոր, Բան մը պակաս
է քեզ. գնա, ինչ որ ունիս վաճառէ և տուր աղ-
քատաց, և զանձ պիտի ունենաս յերկինս, և
22 խայր վերդարձ և եկ իմ հետևեալս: Եւ նա այս
խօսքին համար խաժռռելով գնաց տրտմած,
23 քանզի շատ ստացուած ունէր: Եւ Յիսուս նայե-
լով շուրջ ըսաւ իւր աշակերտներուն, Որչափ
դժուարին է անոնց որ հարստութիւն ունին
24 Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: Եւ աշա-
կերտները զարմացած կին անոր խօսքին վրայ.
բայց Յիսուս դարձեալ պատասխան տալով ըսաւ
անոնց, Որդեակք, երէից հարստութեան յուսա-

ցողներուն մըչտի դժուարին է մտնել Աստուա-
25 ծոյ թագաւորութիւնը: Դիւրին է ուղտու ասեղի
ծակէն անցնիլ, քան մեծատան Աստուծոյ թա-
26 գաւորութիւնը մտնել: Եւ անոնք կը զարմանային
յոյժ և կ'ըսէին իրարու, Իսկ ո՞վ կրնայ փրկուիլ:
27 Եւ Յիսուս նայելով անոնց ըսաւ, Մարդոց կող-
մանէ անհնարին է այդ, բայց ոչ Աստուծոյ կող-
մանէ, քանզի Աստուծոյ կողմանէ ամէն բան
28 հնարաւոր է: Պետրոս սկսաւ ըսել անոր, Ահա
մենք ամէն բան թողինք և եկանք քու հետևդ:
29 Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ, Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ, Չկայ ոք որ թողուց տուն, կամ
եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր,
կամ կին, կամ որդիներ, կամ արտեր ինծի հա-
30 մար և աւետարանին համար, Ին չառնու հարիւ-
րապատիկ հիմա այս ատեն տուներ, և եղբայր-
ներ, և քոյրեր, և մայրեր, և որդիներ, և ար-
տեր հալածանօք հանդերձ, և գալու աշխարհին
31 մէջ յաւիտենական կեանք: Բայց շատ առաջին-
ներ պիտի ըլլան յետին, և յետիններ՝ առաջին:
32 Եւ անոնք դեռ յերուսաղէմ կ'ելլէին և ճամ-
բան էին. և Յիսուս քան զնոսա առաջ կ'երթար,
և անոնք կը զարմանային, և հետևէն երթալով
կը վախնային: Եւ դարձեալ իրեն քով առնելով
երկոտասաններն սկսաւ ըսել անոնց ինչ բաներ
33 որ պիտի պատահէին անոր. Ե՛ը-ը, Ահա երու-
սաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի մատ-
նուի քահանայապետներուն և դպիրներուն, և ի
նուի քահանայապետներուն և դպիրներուն, և ի
մահ պիտի դատապարտեն զնա, և պիտի մատնեն
34 զնա հեթանոսաց: Եւ ծաղր պիտի բընեն զնա և
ծեծեն, և անոր վրայ պիտի թքընեն, և սպա-
նեն զնա, և երրորդ օրը յարութիւն պիտի
առնու:
35 Եւ անոր քով գնացին Յակոբոս և Յովհաննէս,
Զեբեդէոսի որդիքը, և ըսին, Վարդապետ, կ'ու-

36 զինք որ ինչ որ խնդրենք ՚ էնէ՛ ընես մեզ, եւ
նա ըսաւ անոնց, Ի՞նչ կ՚ուզէք որ ընեմ ձեզ։
37 Եւ անոնք ըսին անոր, Շնորհէ մեզ որ նստինք,
մէնակ մին աջ կողմէդ, և մէսը՝ ձախ կողմէդ, քու
38 փառացդ մէջ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Չէք գի-
տեր ինչ կը խնդրէք։ կրնա՞ք խմել բաժակը զոր
ես կը խմեմ, և մկրտուիլ այն մկրտութեամբ ո-
39 րով ես կը մկրտուիմ։ Եւ անոնք ըսին անոր,
կրնանք։ և Յիսուս ըսաւ անոնց, Բաժակը զոր
ես կը խմեմ՝ պիտի խմէք, և այն մկրտութեամբ
40 որով ես կը մկրտուիմ՝ պիտի մկրտուիք, Բայց
իմ աջ կողմս և ձախ կողմս նստել իմս չէ տալ,
41 այլ որոց պատրաստուած է։ Եւ երբ Տա-
սանս առաքեալները լսեցին, սկսան բարկանալ Յակոբո-
42 սի և Յովհաննու։ Իսկ Յիսուս իրեն կոչեց զա-
նոնք և ըսաւ անոնց, Գիտէք որ աղգաց իշխան
համարուածները կը տիրեն անոնց, և անոնց մե-
43 ծամեծները կ՚իշխեն անոնց։ Բայց ձեր մէջ այն-
պէս պիտի չըլլայ, այլ ձենէ ով որ մեծ ըլլալ
44 կ՚ուզէ՝ ըլլայ ձեր սպասաւորը։ Եւ ձենէ ով որ
առաջին ըլլալ կ՚ուզէ՝ ըլլայ ամենուն ծառայ։
45 Քանզի Որդին մարդոյ ևս չեկաւ սպասաւորու-
թիւն ընդունել, այլ սպասաւորութիւն ընել, և
իւր կեանքը տալ չատերուն համար փրկանք։
46 Եւ եկան Երիքով։ և երբ Երիքովէ կ՚ելլէր ա-
շակերտներովը և շատ բազմութեամբ, Տիմէի որ-
դին կոյր Բարթիմէոս ճամբուն քով նստած էր
47 մուրալու։ Եւ երբ լսեց Թէ Յիսուս Նազովրեցին
էր, սկսաւ աղաղակել և ըսել, Յիսուս, որդի
48 Դաւթի, ողորմէ ինձ։ Եւ շատերը կը յանդիմա-
նէին զնա որ լռէր, բայց նա աւելի ևս կ՚աղա-
49 ղակէր, Որդի Դաւթի, ողորմէ ինձ։ Եւ Յիսուս
դէպ առնելով հրամայեց կոչել զնա։ Կուգեցին կոյրը
և ըսին անոր, Քաջ եղիր, էլ, կը կոչէ զքեզ։
50 Եւ նա իւր հանդերձը նետելով ելաւ և եկաւ Յի-

51 սուսին։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ
անոր, Ի՞նչ կ՚ուզես որ ընեմ քեզ։ Ըսաւ անոր
52 կոյրը, Ռաբբունի, որ այնըներս բացուին։ Եւ
Յիսուս ըսաւ անոր, Գնա, քու հաւատքդ բժշ-
կեց զքեզ։ և իսկոյն բացուեցան անոր աչքերնե-
րը, և կ՚երթար ճամբան Յիսուսի հետևէն։

Գլ. ԺԱ.

1 Եւ երբ մօտեցան Յերուսաղէմ ի Բեթփագէ և
ի Բեթանիա դէպ ի Ձիթենեաց լեռը, Յիսուս իւր
2 աշակերտներէն երկուքը ղրկեց, Եւ ըսաւ անոնց,
Գնացէք այդ գիւղը որ ձեր դիմացն է։ և երբ հոն
մտնէք, իսկ և իսկ պիտի գտնէք կապուած յա-
ւանակ մը, որուն վրայ մարդ նստած չէ։ արձա-
3 կեցէք զնա և բերէք։ Եւ եթէ ոք ըսէ ձեզ Թէ
Ի՞նչ կ՚ընէք զայդ, ըսէք Թէ Տէրոջը պիտոյ է։
4 և վաղվաղակի պիտի ղրկէ զնա հոս։ Գնացին և
գտան յաւանակը դուրսը փողոցին մէջ դրսի
5 քով կապուած, և որ կեցեր էին զնա, Եւ հոն կե-
ցողներէն ոմանք ըսին անոնց, Ի՞նչ կ՚ընէք որ
6 կ՚արձակէք յաւանակը։ Եւ անոնք ըսին անոնց
ինչպէս որ Յիսուս պատուիրած էր, և Թոյլ տուին
7 անոնց։ Եւ յաւանակը բերին Յիսուսի, և դրին
անոր վրայ իրենց հանդերձները, և նստաւ անոր
8 վրայ։ Եւ շատերն իրենց հանդերձները տարա-
ծեցին ճամբուն վրայ, և ուրիշ ծառերէն ոստեր
9 կը կտրէին և ճամբուն վրայ կը տարածէին։ Եւ
անոնք որ յառաջ և յետոյ կ՚երթային՝ կ՚աղա-
ղակէին և կ՚ըսէին, Ովսաննա։ Օրհնեալ որ գայ
10 յանուն Տեառն։ Օրհնեալ է մեր հօրը Դաւթի
թագաւորութիւնը որ *կու գայ։ Ովսաննա ի բար-
ձունս։

*Ոմանք, Տէրոջը անուամբ կու գայ

11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ և տաճարը, և
դիտեց չուրջ ամէն բան. և որովհետև արդէն
երեկոյացեալ էր ժամը, ելաւ Բեթանիա նայ երկո-
տասանից հետ։
12 Եւ ի վաղիւն երբ ելան Բեթանիայէ կ'ելլէին, անօ-
13 թեցաւ։ Եւ տեսնելով ի հեռուստ թզենի մի տե-
րեւալից եկաւ որ թերեւս բան մը գտնէր անոր
վրայ. և երբ անոր գալ գնաց, բայց ի տերեւներէ
ուրիշ բան չգտաւ, քանզի դեռ թզոյ ժամանակ
14 չէր։ *Եւ պատասխան տուաւ և ըսաւ անոր, Այ-
սուհետև մարդ քենէ պատուղ չուտէ յաւիտեան.
և աշակերտները լսեցին։
15 Եւ եկան Երուսաղէմ. և Յիսուս տաճարը մըտ-
նելով սկսաւ դուրս հանել զանոնք որ տաճարին
մէջ կը վաճառէին և կը գնէին. և կոթռանեց
ստակ փոխողներուն սեղանները և ատուկի վա-
16 ճառողներուն աթոռները, Եւ թող չէր տար որ
17 մարդ տաճարէն ման մը անցուներ։ Եւ կը սոր-
վեցուներ և կ'ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ Իմ
տունս տուն աղօթից պիտի կոչուի բոլոր ազգաց,
18 բայց դուք աւազակներու այր ըրիք զայն։ Եւ
գրիչները և քահանայապետները լսելով զայս
կը խնդրէին թէ ինչպես կորսուանկին զնա, քանզի
կը վախնային անկէ. վասն զի բոլոր ժողովուրդը
զարմացած էր անոր վարդապետութեան վրայ։
19 Եւ երբ երեկոյ եղաւ, դուրս ելաւ քաղաքէն։
20 Եւ առաւօտուն երբ անդր կ'անցնէին, տեսան
21 թզենին արմատէն չորցած։ Եւ յիշեց Պետրոս և
ըսաւ անոր, Րաբբի, ահա թզենին զոր անիծեցիր՝
22 չորցած է։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ
23 անոնց, Ունիցիք հաւատք ունեցէք Քանզի
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ով որ այս լերան ըսէ, Եղ
և ծովը ինկիր, և չերկմտի իւր սրտին մէջ, այլ

*Ոմանք, Եւ Յիսուս

հաւատայ թէ ինչ որ ըսէ կ'ըլլայ, պիտի ըլլայ
24 անոր ինչ որ ըսէ։ Վասն որոյ կ'ըսեմ ձեզ, Ինչ որ
աղօթիւք կը խնդրէք, հաւատացէք թէ պիտի
25 առնուք, և պիտի ըլլայ ձեզ։ Եւ երբ աղօթքի
կը կենաք, ներեցէք եթէ մարդու դէմ բան մը
ունիք, որպէս զի նաև ձեր Հայրը որ յերկինս է
26 ներէ ձեզ ձեր յանցանքը։ Իսկ եթէ դուք չէք
ներեր, նաև ձեր Հայրը որ յերկինս է՝ պիտի
չներէ ձեր յանցանքը։
27 Եւ միւսանգամ Երուսաղէմ եկան, և երբ տա-
ճարին մէջ կը պտըտէր, քահանայապետները և
28 դպիրները և ծերերը եկան անոր, Եւ ըսին անոր,
Ո՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, և ո՞վ
տուաւ քեզ այդ իշխանութիւնը, որ այդ բաներն
29 ընես։ Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց,
Եւ ես բան մը հարցնեմ ձեզ, և ինձ պատաս-
խան տաք ինձ, ես ալ պիտի ըսեմ ձեզ թէ ինչ
30 իշխանութեամբ կ'ընեմ այս բաները. Յովհաննու
մկրտութիւնը յերկինքէ՞ եր թէ ի մարդկանէ.
31 պատասխան տուէք ինձ։ Եւ անոնք իրենց մէջ
կը խորհէին և կ'ըսէին, Եթէ ըսենք, Յերկինքէ,
պիտի ըսէ, Ապա ընդէր չհաւատացիք անոր.
32 Իսկ եթէ ըսենք, Ի մարդկանէ. Ժողովուրդէն
կը վախնային, քանզի ամէնքը *գիտէին զՅովհան-
33 նէս թէ մարդապէ մարգարէ էր։ Եւ պատասխան
տալով ըսին Յիսուսի, Չենք գիտեր։ Եւ Յիսուս
պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Եւ ես չեմ
ըսեր ձեզ թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այս
բաները։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ։ Ըսէր,
Մարդ մը այգի տնկեց, և ցանգով պատեց զայն,

*Յոյն. ունէին

և գուբ հնձան փորեց, և աշտարակ չինեց, և
մշակներու յանձնեց զայն, և ինք գնաց օտար
2 երկիր։ Եւ ժամանակին ծառայ մը ղրկեց մշակ-
ներուն, որ մշակներէն առնուր այգւոյն պտղէն։
3 Իսկ անոնք բռնեցին, ծեծեցին զնա և արձակե-
4 ցին ունայն։ Դարձեալ ուրիշ ծառայ ղրկեց ա-
նոնց, և զնա քարկոծելով կառափնատեցին և
5 արձակեցին անարգեալ։ Եւ դարձեալ ուրիշ մը
ղրկեց, և զնա սպաննեցին. և շատ ուրիշներ
զրկեց, յորոց զոմանս ծեծեցին և զայլս սպաննե-
6 ցին։ Ուստի սիրելի որդի մը ունէր, զնա ևս զրր-
կեց անոնց յետոյ ըսելով, Թէպէտ ամչնան իմ որ-
7 դիէս։ Բայց այն մշակներն ըսին իրարու, Սա է
ժառանգը. եկէք սպաննենք զնա, և մեր ըլլայ
8 ժառանգութիւնը։ Եւ բռնեցին զնա և սպաննե-
9 ցին, և այգիէն դուրս հանեցին։ Ուստի այգւոյն
տէրն ի՞նչ պիտի ընէ. պիտի գայ և կորսուանէ
10 մշակները, և այգին պիտի տայ ուրիշներու։ Եւ
չէ՞ք կարդացած սա գիրը, Թէ Այն քարը զոր
չինողներն անարգեցին, նա եղաւ գլուխ անկեան.
11 Տէրոջմէ եղաւ այս, և զարմանալի է յաչս մեր։
12 Եւ կը խնդրէին բռնել զնա, բայց ժողովուր-
դէն վախցան, քանզի իմացան Թէ իրենց համար
ըսաւ այն առակը. և թողին զնա և գնացին։
13 Եւ վարուեցնելոցներէն և Հերովդեսեաններէն ու-
14 մանք ղրկեցին անոր, խօսքով բռնել զնա։ Եւ
անոնք եկան և ըսին անոր, Վարդապետ, գի-
տենք Թէ ճշմարիտ ես, և մարդու համար վոյթ
չէ քեզ, քանզի մարդոց ակնառութիւն չես ըներ,
այլ ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սոր-
վեցնես։ կայսեր տուրք տալ արժա՞ն է Թէ ոչ,
15 տա՞նք Թէ չտանք։ Եւ Յիսուս գիտնալով անոնց
կեղծաւորութիւնն ըսաւ անոնց, Ընդէ՞ր կը փոր-
ձէք զիս. բերէք ինձ դահեկան մի որ տեսնեմ։
16 Եւ անոնք բերին. և ըսաւ անոնց, Որմի՞ է այս

17 պատկերը և գիրը։ Եւ անոնք ըսին անոր, Կայ-
սեր։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց,
Տուէք գկայսերն կայսեր, և գԱստուծոյն Աս-
տուծոյ. և զարմացան անոր վրայ։
18 Եւ եկան անոր սադուկեցիք, որ կ'ըսեն Թէ
յարութիւն չկայ, և հարցուցին անոր ըսելով,
19 Վարդապետ, Մովսէս գրից մեզ որ եթէ ուրուք
եղբայրը մեռնի, և կին թողու, և զաւակ չթո-
ղու, անոր եղբայրն առնու անոր կինը, և իր
20 եղբօրը զաւակ յարուցանէ. Արդ եօթն եղբարք
կային, և առաջինը կին առաւ և մեռաւ և զա-
21 ւակ չթողուց։ Եւ երկրորդն առաւ զնա և մե-
ռաւ, և նա ևս չթողուց զաւակ. Նոյնպէս և եր-
22 րորդը։ Եւ եօթանեքեան առին զնա և զաւակ
23 չթողին. Յետ աւերեցան մեռաւ և կինը։ Արդ
ի յարութեան, երբ յառնեն, անոնցմէ որո՞ւ կինը
պիտի ըլլայ. քանզի եօթանեքեան ունեցան զնա։
24 Եւ Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Ո՞չ
ապաքէն սոսկ համար մոլորած եք, որ ոչ Գիր-
25 քը գիտէք և ոչ Աստուծոյ զօրութիւնը։ Քանզի
երբ մեռելներէն յարութիւն առնուն, ոչ կին
կ'առնուն և ոչ ամն կը տրուին, այլ երկնից
26 հրեշտակներուն պէս են։ Բայց մեռելոց համար
Թէ յարութիւն կ'առնուն, Մովսիսի գրքին մէջ
չէ՞ք կարդացած մարդուն վրայ, ինչպէս Աս-
տուած անոր խօսեցաւ ըսելով, Ես եմ Աստուած
Աբրահամու, և Աստուած Իսահակայ, և Աստուած
27 Յակոբայ։ Մեռելոց Աստուած չէ նա, այլ կեն-
դանեաց. ուրեմն դուք չատ մոլորեալ եք։
28 Եւ դպիրներէն մին եկաւ, և ունկն դնելով ա-
նոնց երբ կը վիճէին, երբ տեսաւ Թէ աղէկ պա-
տասխան տուաւ անոնց, հարցուց անոր Ե՞րբ,
29 Ո՞րն է բոլոր պատուիրաններուն առաջինը։ Եւ
Յիսուս պատասխանեց անոր, Բոլոր պատուի-
րաններուն առաջինն այս է. Լսէ, ով Իսրայէլ,

30 մեր Տէր Աստուածն է մի Տէր. Եւ քու Տէր Աստուածդ սիրես ի բոլոր սրտէ, և ի բոլոր անձնէ, և ի բոլոր մտաց, և ի բոլոր զօրութենէ.
31 այս է առաջին պատուիրան: Եւ երկրորդն՝ սմին նման, Թու. ընկերդ սիրես քու անձիդ պէս.
32 քան զոսա մեծ ուրիշ պատուիրան չկայ: Եւ դպիրն ըսաւ անոր, Բարւոք է, վարդապետ, ուղիղ խօսեցար Թէ մի է Աստուած, և չիք այլ
33 բաց ի նմանէ. Եւ սիրելն զնա ի բոլոր սրտէ, և ի բոլոր մտաց, և ի բոլոր անձնէ, և ի բոլոր զօրութենէ, և ընկերը սիրել իւր անձին պէս աւելի
34 է քան զամենայն ողջակէզս և զզոհս: Եւ Յիսուս տեսանելով որ խնամտութեամբ պատասխան տուաւ, ըսաւ անոր, Չես հեռի Աստուծոյ Թագաւորութենէն. և այլ ևս ոչ չէր համարձակեր
35 բան մը հարցնել անոր: Եւ Յիսուս երբ ատաճարին մէջ կը սորվեցնէր, պատասխան տուաւ և ըսաւ, Դպիրներն ինչպէս
36 կ'ըսեն Թէ Քրիստոս Դաւիթի որդի է: Եւ ինք Դաւիթ Հոգւով Սրբով կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նիստ իմ աջ կողմս, մինչև զու Թշնամի-
37 ներդ ոտիդց պատուանդան ընեմ: Արդ Դաւիթ նոյն ինքն զնա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անոր որդին է: և ժողովուրդն չաւերը յօժարութեամբ մտիկ կ'ընէին անոր:
38 Եւ իւր վարդապետութեան մէջ կ'ըսէր անոնց, Զգուշացէք դպիրներէն, որ կ'ուզեն փառաւոր հանդերձներով պտըտիլ, և ողջոյններ ի՛ հրապարակ
39 շուկաներու մէջ, Եւ առաջին աթոռները ժողովրդանոցներու մէջ, և առաջին բազմոցները՝
40 յընթրիս. Որ կ'ուտեն այրիներուն տուները, և ծաղոյց երևնալու համար կ'երկարեն աղօթքը. ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին:
41 Եւ Յիսուս գանձանակին դիմացը նստած կը նայէր Թէ ժողովուրդն ինչպէս ստակ կը նետէր

գանձանակը. և չատ հարուստներ չատ բան նե-
42 տեցին: Աղքատ այրի մի ևս եկաւ և նետեց երե-
43 կու լումայ որ նաքարակիս մի է: Եւ աշակերտները կոչելով իրեն ըսաւ անոնց, Ձշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ այս աղքատ այրին աւելի նետեց քան
44 զամէնը որ ոտ՝ նետեցին գանձանակը. Քանզի ամէնքն իրենց աւելորդէն նետեցին, բայց սա իւր չքաւորութենէն ինչ որ ունէր՝ բոլորը նետեց, իւր բոլոր ապրուստը:

ԳԼ. ՅԳ

1 Եւ երբ ատաճարէն դուրս կ'ելլէր, աշակերտներէն մին ըսաւ անոր, Վարդապետ, տես որպիսի՛ քա-
2 րեր են և որպիսի՛ շինուածք: Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոր, Կը տեսնե՞ս այդ մեծ շէնքը. քար քարի վրայ պիտի չմնայ որ չքակտի:
3 Եւ երբ նա Ձիթենեաց լերան ատաճարին դիմացը նստած էր, Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և
4 Անդրէաս հարցուցին անոր առանձին, Ըսէ մեզ ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ նշան պիտի
5 ըլլայ, երբ այդ ամէն բաները կատարուին: Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց և սկսաւ ըսել, Զգույշ կեցէք, մի գուցէ խաբէ ոք զձեզ.
6 Քանզի չատերը պիտի գան իմ անուամբս և ըսեն Թէ ես եմ Քրիստոսը, և չատերը պիտի մոլորե-
7 ցունեն: Բայց երբ լսէք պատերազմներ և պատերազմներու լուրեր, մի՛ խռովիք, քանզի պարտ
8 է լինել, բայց դեռ չէ կատարած: Վասն զի պիտի ելլէ ազգ ազգի վրայ, և Թագաւորութիւն Թագաւորութեան վրայ, և տեղ տեղ պիտի ըլլան երկրաշարժներ, պիտի ըլլան նաև սովեր և խռովութիւններ. ասոնք սկիզբն են երկանց:
9 Զգուշացէք ձեր անձերուն, քանզի առաքեալներու պիտի մատնեն զձեզ, և ժողովրդանոցներու մէջ

պիտի ծնծեն զձեզ, և իմ անուանս համար պիտի
կենաք կուսակալներու և թագաւորներու առջև
10 անոնց վկայութեան համար. Եւ առաջ պէտք է
11 որ աւետարանը քարոզուի բոլոր ազգաց։ Բայց
երբ տանին զձեզ մատնել, յառաջագոյն մի՛ հո-
գաք և մի՛ խորհիք թէ ինչ պիտի խօսիք, այլ
այն ժամուն ինչ որ տրուի ձեզ՝ զայն խօսեցէք.
քանզի ոչ թէ դուք էք որ կը խօսիք, այլ Հոգին
12 Սուրբ։ Եւ եղբայր զեղբայր պիտի մատնէ ի մահ,
և հայր՝ զորդի, և որդիք պիտի ելլեն չէնչոց ծնող-
13 ոց վրայ և սպանանեն զանոնք։ Եւ իմ անուանս
համար ատելի պիտի ըլլաք ամենուն. բայց ով որ
14 համբերէ մինչև ի վախճան՝ նա պիտի ապրի։ Եւ երբ
տեսնէք աւերածին պղծութիւնը որ Դանիէլ
մարգարէին բերնով ըսուած է, թէ կը կենայ
ուր չէ արժան. (ով որ կարդայ՝ թող հասկնայ.)
անատին անոնք որ Հրէաստանի մէջ են՝ թող
15 փախչին լեռները։ Եւ ով որ տանիսայ վրայ է՝
թող չիջնէ տուն, և չմտնէ իւր տունէն բան մը
16 առնուլ. Եւ ով որ արտն է՝ թող ետ չդառնայ
17 առնուլ իւր հանդերձը։ Բայց վա՛յ յղեաց և
18 ծծնառաց այն օրերը։ Ես աղօթք ըրէք որ ձեր
19 փախուստը չըլլայ ձմեռը. Քանզի այն օրերը պիտի
ըլլայ այնպիսի նեղութիւն, որոյ նմանը եղած չէ
Աստուծոյ արարածոց սկիզբէն մինչև յայժմ, և
20 այլ ևս պիտի չըլլայ։ Եւ եթէ Տէրը չկարճեցուներ
այն օրերը, բնաւ մարմին մը պիտի չապրէր. բայց
ընտրելոց համար զորս ընտրեց՝ կարճեցուց այն
21 օրերը։ Եւ անատեն եթէ ոք ըսէ ձեզ, Ահա աստ է
22 Քրիստոս, կամ, Ահա անդ, մի՛ հաւատաք. Քանզի
պիտի ելլեն սուտ Քրիստոսներ և սուտ մարգա-
րէներ և պիտի ցուցնեն նշաններ և հրաշներ, որ
եթէ հնար էր՝ ընտրեալներն ևս մոլորեցնէին։
23 Իսկ դուք զգոյշ եղէք. ահա յառաջագոյն ըսի
ձեզ ամէնը։

24 Բայց այն օրերը՝ այն նեղութենէն ետքը արե-
գակը պիտի խաւարի, և լուսին պիտի չտայ իւր
25 լոյսը, Եւ աստեղք յերկինէ պիտի թօթափին, և
26 զօրութիւնները պիտի չարժին յերկինս։ Եւ անա-
տեն պիտի տեսանեն զՈրդին մարդոյ եկած յամպս
27 մեծ զօրութեամբ և փառօք։ Եւ անատեն պիտի
զրկէ իւր հրեշտակները և պիտի ժողովէ իւր
ընտրեալները չորս հովիտէն, երկրի ծայրէն մինչև
28 երկինից ծայրը։ Թզենիէն սորվեցէք առակը. երբ
անոր ոստերը կը կակղանան և տերևները կը ցըց-
29 ուին, գիտէք թէ մօտ է ամառը։ Նոյնպէս և
դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք
30 որ մերձ է առ դուռս։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ
այս ազգը պիտի չանցնի, մինչև այս ամէն բաները
31 ըլլան։ Երկինք և երկիր պիտի անցնին, բայց իմ
32 խօսքերս բնաւ պիտի չանցնին։ Իսկ այն օրուան
և ժամուն համար ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք
33 յերկինս և ոչ Որդի, բայց միայն Հայր։ Զգոյշ
կեցէք, հսկեցէք և աղօթք ըրէք, քանզի չէք
34 գիտեր ե՛րբ է ժամանակը։ Ինչպես օտար երկիր
գնացող մարդ մը կը թողու իւր տունը, և իշխա-
նութիւն կու տայ իւր ծառաներուն, և իւրա-
քանչիւրոյ իւր գործը, և դռնապանին կը պատ-
35 ուիրէ որ արթուն կենայ. Ուրեմն արթուն կեցէք,
քանզի չէք գիտեր թէ երբ կու գայ տանուտերը.
երեկոյին, թէ կէս գիշերին, թէ ի հաւախօսն և
36 թէ առաւօտուն. Մի գուցէ յանկարծ գայ և
37 դտնէ զձեզ ի քուն։ Եւ ինչ որ կ'ըսեմ ձեզ՝ ամե-
նուն կ'ըսեմ, Արթուն կեցէք։

ԳԼ. ԺԴ

1 Եւ երկու օր ետքը զատիկ էը և բաղարջակերք.
և քահանայապետք և դպիրք կը խնդրէին թէ
ինչպես նենգութեամբ բռնեն զնա և սպաննեն։

2 Բայց կ'ըսէին Թէ Ոչ ասոնին տեղը, որ Ժողովրդեան մէջ խռովութիւն չըլլար։
3 Եւ երբ էր նա ի Բեթանիա Սիմոնի բորոտի տունը բազմեալ, եկաւ կին մը որ ունէր չիւ մը պատուական նարդոսի իւղ մեծագին, և կոտրեց չիւը և անոր գլխուն վրայ թափեց։ Եւ կային ոմանք որ կը զայրանային և կ'ըսէին, Ինչո՞ւ համար
5 եղաւ այդ իւղոյն կորուստը. Քանզի այդ [իւղը] կրնար վաճառուիլ աւելի քան երեք հարիւր դահեկանի և արուիլ աղքատաց. և սաստիկ կը յանդիմանէին զնա։ Բայց Յիսուս ըսաւ, Թոյլ տուէք զնոր, ընդէ՞ր անհանգիստ կ'ընէք զդա. բարի
7 գործ մը գործեց յիս։ Քանզի աղքատներն համապատ ունիք ձեր հետ, և երբ ուզէք, կրնաք բարիք ընել անոնց, բայց զիս չունիք հանապատ։
8 Ինչ որ ունէր դա՝ ըրաւ. յառաջագոյն օծեց իմ
9 մարմինս թաղմանս համար։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Թէ բոլոր աշխարհ ուր և քարոզուի այս աւետարանը, պիտի խօսուի նաև ինչ որ ըրաւ դա սոյն յիշատակին համար։
10 Եւ Յուդա Իսկարիովտացին, երկոտասաններէն մին, գնաց քահանայապետներուն մատնել զնա
11 անոնց։ Եւ անոնք լսելով ուրախացան, և խոստացան տալ տալ անոր. և նա կը խնդրէր Թէ ինչպես պատեհութեամբ մատնէր զնա։
12 Եւ բաղարջակերաց առաջին օրը երբ զատիկը կը մորթէին, աշակերտներն ըսին անոր, Ո՞ր կողմ
13 երթանք պատրաստենք որ ուտես զատիկը։ Եւ ղրկեց աշակերտներէն երկուքը և ըսաւ անոնց, Գնացէք քաղաքը, և պիտի պատահի ձեզ մարդ մը որ սրուիչ չրոյ տարոյր կը տանի, գնացէք
14 անոր հետևէն, Եւ ուր մտնէ՝ տանտիրոջն ըսէք, Վարդապետը կ'ըսէ, Ո՞ր է օթևանը ուր աշա-
15 կերտներուս հետ ուտեմ զատիկը։ Եւ նա մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ ձեզ յարդարեալ և

16 պատրաստ, հոն պատրաստեցէք մեզ։ Եւ աշակերտները գնացին և մտան քաղաքը, և ինչպէս որ անոնց ըսաւ, այնպէս գտան, և պատրաստեցին զատիկը։
17 Եւ երբ երեկոյ եղաւ, երկոտասանից հետ եկաւ։
18 Եւ երբ սեղան նստան և կ'ուտէին, ըսաւ Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ ձեզմէ մին որ հիմ իմ
19 հետս կ'ուտէ՝ պիտի մատնէ զիս։ Եւ անոնք սկսան տրտմիլ, և մի ըստ միոջէ ըսել անոր, Միթէ ե՞ս
20 եմ, և ուրիշ մը Միթէ ե՞ս եմ։ Նա պատասխանեց տուաւ և ըսաւ անոնց, Այդ երկոտասանեայն մին՝
21 որ ինծի հետ ի՛ս չի՛ս մխեց պնակը։ Արդարև Որդին մարդոյ կ'երթայ ինչպես որ գրուած է անոր համար, բայց վա՛յ այն մարդուն որով ձեռամբ Որդին մարդոյ կը մատնուի. լաւ էր այն մարդուն Թէ չէր ծնած։
22 Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս առաւ հաց, օրհնեց և կոտրեց, և տուաւ անոնց և ըսաւ,
23 *Առէ՛ք, այս է մարմին իմ։ Եւ բաժակն առաւ, գոհացաւ, և տուաւ անոնց, և ամենքը խմեցին
24 անկէ։ Եւ ըսաւ անոնց, Այս է արիւն իմ նոր
25 ուխտի, որ շատերու համար կը թափուի։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, այսուհետև որթոյ բերքին չեմ խմեր մինչև այն օրը նոր խմեմ զայն Աստուծոյ Թագաւորութեան մէջ։
26 Եւ օրհնութիւն մը երգելէն ետքը ելան Ձի-
27 թենեաց լեռը։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Դուք ամենքդին այս գիշեր պիտի գայթակղիք ինձ. քանզի գրուած է Թէ Հովիւը պիտի զարնեմ, և
28 ոչխարները պիտի ցրուին։ Բայց յարութենէս ետքը նախ քան զձեզ պիտի երթամ Գալիլեա։
29 Իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ ամենքդին
30 գայթակղին, բայց ես ոչ։ Եւ Յիսուս ըսաւ անոր,

*Որմէ՛, Առէ՛ք, կերէ՛ք

ձչմարիտ կ'ըսեմ ձեզ, որ դուն այս գիշեր ձեռ-
քաւը երկու անգամ չխօսած՝ երիցս պիտի ու-
31 րանա զիս։ Բայց Պետրոս աւելի կը պնդէր և
կ'ըսէր, Թէև ձեզի հետ մեռնիլ հարկ ըլլայ ինձ,
քեզ պիտի չուրանամ ձբեզ։ Նոյնպես կ'ըսէին
ամէնքը։

32 Եկան այն տեղը որոյ անունն էր Գեթսեմանի,
և ըսաւ աշակերտներուն, Հոս նստեք մինչև ես
33 աղօթք ընեմ։ Եւ իրեն հետ առնելով Պետ-
րոս և Յակոբոս և Յովհաննէս, սկսաւ խռովիլ
34 և հոգալ։ Անոնց ըսաւ անոնց, Իմ անձս մա-
հու չափ տրտում է. հոս մնացեք և արթնուն
35 կեցէք։ Եւ քիչ մը յառաջ երթալով՝ ինք երեսին
վրայ գետին ինկաւ և աղօթք ըրաւ, որ եթէ
36 հնար է, անցնի անկէ ժամը։ Եւ ըսաւ, Աբբայ
Հայր, ամէն բան հնարաւոր է քեզ, այս բաժակն
անցուր ինձ։ բայց ոչ թէ որպէս ես կամիմ, այլ
37 որպէս դուն։ Եւ եկաւ և գտաւ զանոնք ի քուն,
և ըսաւ Պետրոսի, Սիմոն, կը քնանա՞ս. չկրցար
38 ժամ մի արթնութիւն։ Արթնուն կեցէք և ա-
ղօթք ըրէք, որ փորձութեան մէջ չմտնէք։ Հո-
39 գին յօժար է, բայց մարմինը տկար։ Եւ դարձ-
եալ գնաց աղօթք ըրաւ նոյն խօսքն ըսելով։
40 Եւ դարձաւ և զանոնք նորէն գտաւ ի քուն,
քանզի անոնց այուգները ծանրացած էին, և
չէին գիտեր թէ ինչ պատասխան ասյին անոր։
41 Երրորդ անգամ եկաւ և ըսաւ անոնց, Այսու-
հետև ննջեցէք և հանգչեցուք։ բաւական է,
ժամը հասաւ. ահա Որդին մարդոյ կը մատնուի
42 մեղաւորաց ձեռքը։ Ելէք երթանք, ահա մատ-
նեցաւ նա որ զիս պիտի մատնէ։
43 Եւ մինչդեռ նա կը խօսէր դարձ, իսկոյն Ցու-
դա, մին յերկոտասանից, եկաւ, և անոր հետ
քահանայապետներուն և դպիրներուն և ծերե-
րուն կողմէն շատ բազմութիւն սուսերօք և

44 բոլոք։ Եւ անոր մատնիչն անոնց նշան առած էր
ըսելով, Ով որ ես համբուրեմ՝ նա է, բռնեցէք
45 զնա և զգուշութեամբ տարէք։ Եւ նա գալով
իսկոյն մատեցաւ անոր և ըսաւ, Ռաբբի, Ռաբբի,
46 և համբուրեց զնա։ Եւ անոնք ձեռք զարկին ա-
47 նոր և բռնեցին զնա։ Եւ քովը կեցողներէն մին
սուրը քաշեց և զարկաւ քահանայապետին ծա-
48 ռան, և մկկդի հանեց անոր ականջը։ Եւ Յիսուս
պատասխան տալով ըսաւ անոնց, Իբր թէ աւա-
զակի՞ վրայ ելաք սուսերօք և բրօք բռնել զիս։
49 Ամէն օր ձեր քովը էի և ուսուցանեի մէջ կը տր-
վեցուներէի, և չբռնեցիք զիս։ բայց որպէս զի
50 կատարուին գիրքն։ Անատն բոլոր աշակերտները
51 թողին զնա և փախան։ Եւ երիտասարդ մը անոր
հետևեն կ'երթար մերկ հաբեան վրայ կտաւ մը
52 առած, և երիտասարդները բռնեցին զնա։ Իսկ
նա կտաւը թողուց և մերկ փախաւ անոնցմէ։
53 Եւ տարին զՅիսուս առ քահանայապետն, և
անոր քով ժողովեցան բոլոր քահանայապետները
54 և ծերերը և դպիրները։ Եւ Պետրոս ի հեռուստ
անոր հետևեն գնաց մինչև ներս քահանայապետին
գաւիթը, և նստաւ սպասաւորներուն հետ, և
55 կրակին քով կը տաքնար։ Իսկ քահանայապետ-
ները և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ վկայու-
թիւն կը փնտռէին սպանանել զնա, և չէին գտներ։
56 Քանզի շատերը սուտ վկայութիւն կու տային
անոր դէմ, և վկայութիւնները չբաղ-
57 մանային։ Եւ ոմանք ելան սուտ վկայու-
թիւն կ'ընէին անոր դէմ և կ'ըսէին Թէ Մենք
58 լսեցինք առէլ որ կ'ըսէր, Ես այդ ձեռագործ
տաճարը պիտի քակեմ, և երեք օրուան մէջ
պիտի չհիմեմ ուրիշ մը առանց ձեռագործի։
59 Բայց և այնպէս անոնց վկայութիւնն համաձայն
60 չէր։ Եւ քահանայապետը մէջտեղ ոտք ելլելով
հարցուց Յիսուսի և ըսաւ, Պատասխան չես

61 տար. ի՞նչ կը վկայեն տասնք քեզի դէմ՝ բայց
նա լուռ կը կենար և պատասխան չէր տար։
Քահանայապետը դարձեալ կը հարցնէր անոր
և կ՚ըսէր, Դո՞ւ ես Քրիստոս, Որդի Աստուծոյ
62 օրհնելոյ։ Եւ Յիսուս ըսաւ, Ես եմ. և պիտի
տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը
63 նստած, և երկնից ամպերով եկած։ Եւ քահա-
նայապետը պատառեց իւր հանդերձները և ը-
64 սաւ, Այլ ևս ի՞նչ պիտոյ են մեզ վկաներ։ Լսե-
ցիք սրբոց հայհոյութիւնը. ինչպես կ՚երևայ
ձեզ։ Եւ ամենքը դատապարտեցին զնա Թէ Մա-
հապարտ է։
65 Եւ սկսան Թքանել անոր և երեսը
ծածկել և բռնցի ծեծել և ըսել, Մարգարէա-
ցիր։ Եւ սպասաւորներն ապտակ կը զարնէին
անոր։
66 Եւ Պետրոս վարը գաւիթն էր, և քահանայա-
պետին աղախիններէն մին եկաւ, եւ տեսնելով
67 զՊետրոս որ կը տաքնար, նայեցաւ անոր և ը-
սաւ, Եւ դուն Յիսուսի Նազովրեցւոյ հետ էիր։
68 Բայց նա ուրացաւ և ըսաւ, Չեմ գիտեր և չեմ
հասկնար Թէ ինչ կը խօսիս դուն. և երբ դուրս
69 ելաւ գաւթին դէմն ածէլ, հաւ խօսեցաւ։ Եւ
աղախինը նորէն տեսաւ զնա, և սկսաւ չորրդ
70 կեցողներուն ըսել Թէ Ե՛ս ան անոնցմէ է. Եւ
նա դարձեալ ուրացաւ։ Եւ փոչ մը ետքը չորրդ
կեցողները դարձեալ ըսին Պետրոսի, Արդարև
դուն անոնցմէ ես, քանզի Գալիլեացի ես, և
71 խօսուածդ իսկ նման է անոնց։ Բայց նա սկսաւ
անիծանել և երդնուլ ըսելով Թէ ես այն մարդը
72 չեմ ճանչնար, որոյ համար դուք կ՚ըսէք։ Եւ
իսկոյն երկրորդ անգամ հաւ խօսեցաւ, և Պետ-
րոս յիշեց այն խօսքը զոր Յիսուս ըսած էր ա-
նոր Թէ Դեռ հաւը երկու անգամ չխօսած
դուն երիցս պիտի ուրանաս զիս, և սկսաւ լալ։

Գլ. ԺԵ

1 Եւ իսկ և իսկ առաւօտուն քահանայապետները
ծերերուն և դպիրներուն հետ և բոլոր ժողովքը
խորհուրդ բրին, զՅիսուս կապեցին և տարին
մատնեցին Պիղատոսի։ Եւ Պիղատոս հարցուց
անոր Ն ըսո՞ւ, Դո՞ւ ես Հրեից Թագաւորը։ Եւ նա
պատասխան տալով ըսաւ անոր, Դուն կ՚ըսես։
3 Եւ քահանայապետները չատ ամբաստանութիւն
4 կ՚ընէին անոր վրայ։ Եւ Պիղատոս դարձեալ
հարցուց անոր ըսելով, Պատասխան չե՞ս տար.
5 տես որչափ կը վկայեն քեզի դէմ։ Եւ Յիսուս
տակաւին պատասխան չտուաւ, մինչև զարմացաւ
Պիղատոս։
6 Բայց ամեն տաեղը կ՚արձակէր անոնց կալ-
7 ուածՄը, զով որ անոնք ուզէին։ Եւ Յորդ Ը
կար Բարաբբաս անուն կապուած իւր խռովարար
ընկերներուն հետ, որ խռովութեան ատեն մար-
8 դասպանութիւն ըրած էին։ Եւ ժողովուրդն ա-
ղաղակելով սկսաւ խնդրել որ ըներ ինչպես միշտ
9 կ՚ընէր անոնց։ Եւ Պիղատոս պատասխան տուաւ
անոնց և ըսաւ, Կ՚ուզէ՞ք որ Հրեից Թագաւորն
10 արձակեմ ձեզ։ Քանզի գիտեր Թէ քահանայա-
պետները առ նախանձու մատնած էին զնա։
11 Բայց քահանայապետները գրգռեցին ժողովուրդը
Ենչբէրէ Մանաւանդ արձակել իրենց զԲարաբբաս։
12 Դարձեալ Պիղատոս պատասխան տուաւ և ըսաւ
անոնց, Իսկ Հրեից Թագաւոր կոչուածն ի՞նչ
13 կ՚ուզէք որ ընեմ։ Եւ անոնք դարձեալ կ՚աղա-
14 ղակէին, Խաչը հանի զնա։ Պիղատոս ըսաւ անոնց,
Բայց ի՞նչ չար գործ ըրած է. և անոնք ևս
աւելի կ՚աղաղակէին Ն՛ըսէնէն, Խաչը հանի զնա։
15 Եւ Պիղատոս կամելով ժողովուրդը գոհ ընել
արձակեց անոնց զԲարաբբաս, և զՅիսուս ծեծե-
լով ձեռք տուաւ որ խաչուէր։

16 Եւ զնուռներըն տարին զնա ներս գաւիթը,
այսինքն պալատը, և կոչեցին բոլոր գունդը
17 միանգամայն։ Եւ հագուցին անոր ծիրանիներ, և
18 փշեղէն պսակ հիւսելով դրին անոր ՚ի գլուխը, եւ
սկսան ողջոյն տալ անոր Ն ըսելլ, Ողջ լեր, ար-
19 քայ Հրեից։ Եւ անոր գլուխը եղեգով կը ծե-
ծէին և կը թքնէին անոր, և ՚ի ծունր իջնալով
20 երկրպագութիւն կ՚ընէին անոր։ Եւ երբ ծաղր
բրին զնա, հանեցին ծիրանիները ՚ի իւր հանդերձ-
ներն հագուցին անոր, և դուրս հանեցին զնա
՚ի խաչ հանել։
21 Եւ զՍիմոն Կիւրենացի, Ալեքսանդրոսի և Ռու-
փոսի հայրը, որ անկէ կ՚անցնէր արտէն եկած,
22 պահակ բռնեցին որ անոր խաչը վերցուներ։ Եւ
տարին զնա Գողգոթա Ն տեղը (որ կը
23 թարգմանուի Գանկի տեղ.) Եւ տուին անոր
դմբաւով խառնած գինի որ խմէր, բայց նա չա-
24 ւաւ։ Եւ խաչը հանեցին զնա, և անոր հանդերձ-
ները բաժնեցին վիճակ նետելով անոնց վրայ Թէ
25 ով ինչ պիտի առնուր։ Երբորդ ժամ էր, և խաչը
26 հանեցին զնա։ Եւ անոր յանցանաց գիրը գրուած
27 էր Ն Հրէից Թագաւորն է։ Եւ անոր աջ կողմէն,
28 և միւսը՝ ձախ կողմէն։ Եւ կատարուեցաւ գիրը
որ կ՚ըսէ Թէ Անօրէններու հետ համարուեցաւ։
29 Եւ անոնք որ կ՚անցնէին՝ կը հայհոյէին անոր,
կը շարժէին իրենց գլուխը և կ՚ըսէին, ՎաՀ որ
30 աւերեր կը քակէիր, և երեք օրուան մէջ կը շի-
նէիր։ Ազատէ զքեզ և իջ խաչէդ։ (31) Նոյնպէս
և քահանայապետները դպիրներուն հետ իրենց
մէջ ծաղր բնելով կ՚ըսէին, Ուրիշներն ազատեց,
32 զինք չկրնար ազատել։ Այդ Քրիստոսը, Իսրայելի
Թագաւորը, Թող հիմա վար իջնէ խաչէն, որ
տեսնենք և հաւատանք։ Եւ անոր հետ խաչը ել-
լողները կը նախատէին զնա։

33 Եւ երբ վեցերորդ ժամ եղաւ, բոլոր երկրի
34 վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամ։ Եւ
իններորդ ժամուն Յիսուս մեծ ձայնիւ աղաղա-
կեց և ըսաւ, Ելոի, Ելոի, լամա՞ սաբաքթանի,
որ կը Թարգմանուի, Աստուած իմ, Աստուած
35 իմ, ընդէ՞ր Թողեր զիս։ Եւ ոմանք կեցողներէն
անոնք երբ լսեցին, կ՚ըսէին Թէ զԷլիա կը կոչէ։
36 Եւ ան վազեց սպունգ մը լցուց քացախով, և
անցնելով եղեգան տուաւ անոր որ խմէր, և
ըսաւ, Թող, տեսնենք Թէ եղիա կու գայ վար
իջեցունել զդա։
37 Եւ Յիսուս մեծ ձայն հանեց և աւանդեց հոգին։
38 Եւ տաճարին վարագոյրը երկու պատառեցաւ
39 վերուստ ի վայր։ Եւ հարիւրապետը որ անոր
դիմացը կեցած էր, տեսնելով որ այսպէս աղա-
ղակելով աւանդեց հոգին, ըսաւ, Արդարև Որդի
40 Աստուծոյ էր այս մարդը։ Կային և կանայք որ
՚ի հեռուստ կը նայէին, ընդ որս էր Մարիամ
Մագդաղենացի, և փոքրն Յակոբոսի և Յովսեայ
41 մայրը Մարիամ, և Սողովմէ, Որք երբ Գալիլեա էր, անոր եաւէն կ՚երթային, և սպա-
սաւորութիւն կ՚ընէին անոր։ Նաև ուրիշ շատ
կանայք որ անոր հետ երուսաղէմ եկած էին։
42 Եւ երբ երեկոյ եղաւ, այն էր ու րբաթ,
43 այսինքն շաբաթուն առաջին օրն էր, Յովսէփ
Արիմաթացի, երեւելի խորհրդական մը, որ և ինք
կը սպասէր Աստուծոյ Թագաւորութեանը, եկաւ
և համարձակելով մտաւ Պիղատոսի քով, և
44 խնդրեց Յիսուսի մարմինը։ Եւ Պիղատոս զար-
մացաւ որ արդէն մեռած էր. և կոչելով իրեն
հարիւրապետը՝ հարցուց անոր Թէ շատ ատեն է
45 որ մեռաւ։ Եւ երբ ուսոյն իմացաւ հարիւրապե-
46 տէն, շնորհեց մարմինը Յովսեփայ։ Եւ Յովսէփ
գնեց կտաւ, և վար իջեցունելով զնա պատեց
կտաւով, և դրաւ գերեզմանի մէջ որ քարէ

փորուած էր, և քար մը թաւալեցուց գերեզ-
47 մանին դուռը։ Իսկ Մարիամ Մագդաղենացի
և Յովսեսի Հայրը Մարիամ տեսան ուր
դրուեցաւ։

ԳԼ. ԻԶ

1 Եւ երբ շաբաթն անցաւ, Մարիամ Մագդաղե-
նացի և Յակոբոսի Հայրը Մարիամ և Սողոմէ
2 խունկեր գնեցին, որ գային օծել զնա։ Եւ միա-
շաբաթի առաւօտուն շատ կանուխ մինչ արեւը
3 կը ծագէր, եկան գերեզմանը, եւ կ'ըսէին իրա-
րու, Ո՞վ պիտի թաւալեցունէ մեզ քարը գերեզ-
4 մանին դռնէն, (եւ նայեցան տեսան որ քարը
5 թաւալեցուցեալ էր,) քանզի մեծ էր յոյժ։ Եւ
ներս մանելով գերեզմանը, տեսան երիտասարդ-
մը որ աջ կողմը նստած էր սպիտակ պատմուճան
6 հագած, և զարհուրեցան։ Եւ նա ըսաւ անոնց,
Մի զարհուրիք. զՅիսուս Նազովրեցին կը խընդ-
րէք, որ խաչուեցաւ. նա յարեաւ, հոս չէ. ահա
7 տեղն ուր դրին զնա։ Բայց գնացէք, ըսէք անոր
աշակերտներուն և Պետրոսի, Թէ ահա յառաջ
քան զձեզ կ'երթայ Գալիլեա, հոն պիտի տեսնէք
8 դնա ինչպես որ ըսաւ ձեզ։ Եւ անոնք դողով և
ապշութեամբ բռնուած *ելան և փախան գե-
րեզմանէն, և մարդու բան չըսին, քանզի կը
վախնային։

9 Յետոյ միշաբաթի առաւօտուն յարութիւն
առած երևեցաւ նախ Մարիամու Մագդաղե-
10 նացւոյն, որմէ եօթն դեւ հանած էր։ Նա գնաց
պատմեց անոնց որ անոր հետ էին, երբ սուգ
11 կ'ընէին և կու լային։ Իսկ անոնք երբ լսեցին Թէ
կենդանի էր և երևեցաւ նմա, չհաւատացին։

*Ոմանք, վազվզակի ելան

12 Յետոյ ուրիշ կերպարանօք երևեցաւ անոնցմէ
13 երկուց որ հետ արար կ'երթային եւ անոնք
գնացին պատմեցին ուրիշներուն. և անոնց ևս
չհաւատացին։

14 Յետոյ երևեցաւ միտասանից երբ սեղան նըս-
տած էին, և յանդիմանեց անոնց անհաւատու-
թիւնը և խստասրտութիւնը, վասն զի չհաւա-
տացին անոնց որոց երևեցաւ յետ յարութեան
իւրոյ ի մեռելոց։

15 Եւ ըսաւ անոնց, Գնացէք բոլոր աշխարհ, և
16 քարոզեցէք աւետարանը բոլոր արարածոց։ Ով
որ հաւատայ և մկրտուի՝ պիտի փրկուի, և ով
17 որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի։ Եւ անոնք
որ կը հաւատան, սա նշաններն անոնց հետ պիտի
երթան. իմ անուամբս դեւեր պիտի հանեն, նոր
18 լեզուներ պիտի խօսին, Օձեր պիտի բռնեն իրենց
ձեռքը, և եթէ մահացու ինչ խմեն, պիտի
չվնասէ անոնց. հիւանդներու վրայ ձեռք պիտի
դնեն, և անոնք պիտի առողջանան։

19 Արդ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը համ-
բարձաւ յերկինս, և Աստուծոյ աջ կողմը
20 նստաւ։ Եւ անոնք երթան և ամէն տեղ կը քարո-
զէին, և Տէրը գործակից էր անոնց, և խօսքը
կը հաստատէր այն նշաններով որ անոնց հետ
կ'երթային։ Ամէն։

Ա.ԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Որովհետև չատերը ձեռն արկին կարգել այն
2 բաներուն պատմութիւնը որ հաստատ գիտցուած
3 են մեր մէջ, ինչպէս որ ականատեսք և սպասաւ-
4 որք բանին աւանդեցին մեզ ի սկզբանէ, ես և ես,
5 որ ի սկզբանէ այն ամէն բաներուն ուշադիւթեամբ
6 գրել քեզ, քաջդ Թէոփիլէ, Որ խնդասա այն բա-
7 ներուն ստուգութիւնը զորս ուսար։
8 Հրէաստանի Հերովդէս Թագաւորին օրերը
9 քահանայ մը կար Աբիայի դասակարգութենէն
10 Զաքարիա անուն, որոյ կինն էր ի դստերաց Ա-
11 հարոնի, և անոր անունը Եղիսաբէթ։ Եւ երկու-
12 քեան արդար էին Աստուծոյ առջև, և Տէրոջը
13 բոլոր պատուիրանները և իրաւանց մէջ կը գա-
14 լէին անարատութեամբ։ Եւ զաւակ չունէին,
15 քանզի Եղիսաբէթ ամուլ էր, և երկուքեան ան-
16 ցեալ էին զաւուրքը։
17 Եւ երբ անոր դասակարգութեան օրերը հա-
18 սան, և քահանայական պաշտօնը կը կատարէր նա
19 Աստուծոյ առջև, ըստ սովորութեան քահանայու-
20 թեան անոր բնաւ Տէրոջը տաճարը մտնել խնկար-
21 կութիւն ընել։ Եւ ժողովրդեան բոլոր բազմու-
22 թիւնը դուրսը աղօթքի կեցած էին խնկով ատենը։
23 Եւ երևեցաւ անոր Տէրոջը հրեշտակը, որ կեցած

12 էր խնկոյ սեղանին աջ կողմը։ Եւ Զաքարիա երբ
13 տեսաւ, չխոթեցաւ, և ահ բնաւ անոր վրայ։ Եւ
հրեշտակն ըսաւ անոր, Մի՛ վախնար, Զաքարիա,
քանզի քու աղօթքդ լսուեցաւ, և կինդ Եղիսա-
14 բեթ որդի մը պիտի ծնանի քեզ, և անոր անունը
*Յովհաննէս դնես։ Եւ ուրախութիւն և ցնծու-
թիւն պիտի ըլլայ քեզ, և շատերը պիտի ուրա-
15 խանան անոր ծնանելուն վրայ։ Քանզի Տէրոջը
առջև մեծ պիտի ըլլայ, և գինի և օղի պիտի չխմէ,
և դեռ իւր մօրը որովայնէն Հոգւով Սրբով պիտի
16 լցուի, Եւ Իսրայելի որդիներէն շատերը պիտի
17 դարձնէ իրենց Տէր Աստուծոյն։ Եւ ինք անոր
առջևէն պիտի գայ հոգւով և զօրութեամբ
Եղիայի, հաշտ սիրտերը որդւոց վրայ դարձնելու,
և անհնազանդներն՝ արդարներուն խոհա-
18 կութեանը, որ պատրաստ Տէրոջը բարեկազմ
19 ժողովուրդ։ Եւ Զաքարիա ըսաւ հրեշտակին,
Ինչո՞վ գիտնամ զայդ, քանզի ես ծեր եմ, և
20 կինս անցեալ զաւուրքի։ Եւ հրեշտակը պատաս-
խան տալով ըսաւ անոր, Ես եմ Գաբրիէլ որ
Աստուծոյ առջև կը կենամ, և զրկուեցայ ըսել
21 քեզ և այս բաներուն աւետիսը տալ քեզ։ Եւ
ահա համր պիտի ըլլաս դուն, և պիտի չկրնաս
խօսել մինչև այն օրը որ այս բաներն ըլլան,
քանզի չհաւատացիր խօսքիս, որ պիտի կատար-
22 ուին իրենց ժամանակին։ Եւ ժողովուրդը կը սպա-
սէր Զաքարիայի, և կը զարմանային անոր յամե-
23 լուն վրայ տաճարին մէջ։ Եւ երբ դուրս եկաւ,
չէր կրնար խօսել անոնց հետ, և իմացան թէ
տաճարին մէջ տեսիլ տեսած էր։ և նա նշա-
նացի կը խօսէր անոնց հետ, և համր կը կենար։
24 Եւ եղաւ որ երբ անոր պաշտօնին օրերը լցան,
գնաց իւր տունը։ Եւ այն օրերէն ետքը անոր

*Ա.յովհ.ն, Տէրոջը շնորհքը

կինը եղիսաբեթ յղացաւ, և հինգ ամիս կը պա-
25 հէր զինք, և կ'ըսէր, Այսպէս բրաւ ինձ Տէր այս
օրերս, որ նայեցաւ իմ ՚ի վրաս նախատինքս վերցու-
նել մարդոց մէջ։
26 Եւ վեցերորդ ամսուն մէկ Գաբրիէլ հրեշտակ
ղրկուեցաւ Աստուծմէ Գալիլեայի քաղաք մը որուն
27 անուն Նազարէթ էր, Կուսի մը որ խօսեալ էր
մարդու մը որուն անունն էր Յովսէփ Դաւթի տու-
28 նէն, և կուսին անունն էր Մարիամ։ Եւ հրեշ-
տակը գալով ըսաւ անոր, Ողջոյն քեզ, շնորհըն-
կալ իմա, Տէրը քու հետդ է։ դուն կանանց մէջ
29 օրհնեալ ես։ Եւ նա տեսնելով՝ չփոթեցաւ անոր
խօսքին վրայ, և կը խորհէր ի միտս իւր Թէ որ-
30 պիսի բան պիտի ըլլար այս ողջոյնը։ Եւ հրեշտակն
ըսաւ անոր, Մի՛ երկնչիր, Մարիամ, քանզի
31 շնորհք գտար Աստուծմէ։ Եւ ահա պիտի յղանաս
և որդի մը պիտի ծնանիս, և անոր անունը Ցի-
32 սուս պիտի դնես։ Նա մեծ պիտի ըլլայ, և Որդի
Բարձրելոյն պիտի կոչուի, և Տէր Աստուած պիտի
տայ անոր իւր հօրը Դաւթի աթոռը, և թագաբա-
33 ռան վրայ պիտի թագաւորէ յաւիտեան, Եւ անոր
34 թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ։ Եւ
Մարիամ ըսաւ հրեշտակին, Ինչպէս պիտի ըլլայ
35 այդ, քանզի ես այր չեմ գիտեր։ Եւ հրեշտակը
պատասխան տալով ըսաւ անոր, Հոգին Սուրբ
պիտի գայ ի քեզ, և Բարձրելոյն զօրութիւնը հո-
վանի պիտի ըլլայ քու վրադ։ ուստի այն սուրբը
որ քենէ պիտի ծնանի՝ Որդի Աստուծոյ պիտի
36 կոչուի։ Եւ ահա քու ազգականդ Եղիսաբեթ, նա
իւր պառաւութեան առեն որդի մը յղացած է,
և այս վեցերորդ ամիսն է անոր որ ամուլ կոչ-
37 ուած էր։ Քանզի Աստուծոյ կողմանէ բան մը ան-
38 հնարին չէ։ Եւ Մարիամ ըսաւ, Ահաւասիկ կամ
աղախին Տէառն, քու խօսքիդ պէս Թող ըլլայ
ինձ։ Եւ հրեշտակը գնաց անոր քովէն։

39 Այն օրերը հղաւ Մարիամ և գնաց փութա-
40 պէս լեռնակողմը, ՚ի Յուդայի քաղաք մը, Եւ մտաւ
Զաքարիայի տունը և ողջոյն տուաւ Եղիսաբեթի։
41 Եւ եղաւ երբ լսեց Եղիսաբեթ Մարիամայ ող-
ջոյնը, խաղաց մանուկն անոր որովայնին մէջ,
42 և Եղիսաբեթ լցաւ Սուրբ Հոգւով, Եւ բարձր
ձայնիւ գոչեց և ըսաւ, Օրհնեալ ես դուն ի կա-
43 նայս, և օրհնեալ է քու որովայնիդ պտուղը։ Եւ
ուստի՞ եղաւ ինձ այս, որ իմ Տէրոջս մայրը գայ
44 առ իս։ Վասն զի ահա երբ քու ողջոյնիդ ձայնը
եկաւ ականջս, ցնծացով խաղաց մանուկը որո-
45 վայնիս մէջ։ Եւ երանի անոր որ *հաւատացած
է, քանզի՝ պիտի կատարուին այն բաները որ
46 Տէրոջմէ ըսուեցան անոր։ Եւ Մարիամ ըսաւ,
47 Մեծացուցանէ անձն իմ զՏէր, Եւ ցնծացաւ
48 հոգիս յԱստուած Փրկիչ իմ, Քանզի նայեցաւ
իւր ազախնոյն խոնարհութեանը, վասն զի ահա
այսուհետև բոլոր ազգերը երանի պիտի տան
49 ինձ, Քանզի մեծամեծ բաներ ըրաւ ինձ Հզօրը,
50 և սուրբ է անուն նորա։ Եւ անոր ողորմութիւնն
51 անկէ վախցողներուն վրայ է ազգէ յազգ։ Իւր
բազկաւը զօրութիւն ցուցուց, ցրուեց ամբար-
52 տաւանները իրենց սրտին խորհրդովը։ Հզօրներն
էջէնց աթոռներէն իջուցուց, և բարձրացուց խո-
53 նարհները։ Անօթիները բարութեամբ լցուց, և
54 հարուստներն արձակեց ունայն։ Օգնութիւն ը-
րաւ իւր ծառային Իսրայէլի՝ յիշելով է՞ ողոր-
55 մութիւնը, Ինչպէս խօսեցաւ մեր հայրերուն,
Աբրահամու և անոր զաւակին յաւիտեան։
56 Եւ Մարիամ կեցաւ անոր քով իբր երեք ա-
միս, և դարձաւ իւր տունը։
57 Եւ եղիսաբեթի ծննդելու ժամանակը լցաւ,
58 և որդի մը ծնաւ։ Եւ լսեցին անոնք որ անոր

*Կամ, հաւատացած է Թէ

բոլորտիքը կը բնակէին, և անոր ազգականները,
Թէ Տէրը ցուցուց անոր վրայ իւր մեծ ողորմու-
Թիւնը, և կ'ուրախանային անոր հետ։
59 Եւ եղաւ որ ութերորդ օրը եկան թլփատել
մանուկը, և իր հօրը անուամբ Զաքարիա կը
60 կոչէին զնա։ Իսկ անոր մայրը պատասխան տուաւ
61 և ըսաւ, Ոչ, այլ Յովհաննէս պիտի կոչուի։ Եւ
անոր ըսին Թէ Քու ազգականներուդ մէջ չկայ
62 ոք որ այս անուամբ կը կոչուի։ Կ'անդրադարձին ա-
նոր հօրը Թէ ինչ անուամբ կ'ուզէր կոչել զնա։
63 Եւ նա տախտակ խնդրեց և գրեց ըսելով, Յով-
հաննէս է տուրը անունը։ Եւ ամէնքը զարմացան։
64 Եւ իսկոյն բացուեցաւ անոր բերանը և անոր
65 լեզուն, և կը խօսէր և կ'օրհնէր զԱստուած։ Եւ
ահ բնակաւ ամէնուն վրայ որ անոնց բոլորտիքը
կը բնակէին, և այս բոլոր բաները կը խօսուէին
66 Հրէաստանի բոլոր լեռնակողմը։ Եւ բոլոր լսող-
ները դրին իրենց սիրտերուն մէջ, և կ'ըսէին,
Արդեօք այս տղան ի՞նչ պիտի ըլլայ։ Եւ Տէրոջը
ձեռքն էր անոր հետ։
67 Եւ անոր հայրը Զաքարիա Հոգւով Սրբով լցո-
68 ւաւծ մարգարէացաւ և ըսաւ, Օրհնեալ Տէր
Աստուած Իսրայէլի, որ եղաւ յայցելութիւն և
69 փրկութիւն բրաւ իւր ժողովրդեան, Եւ հանեց
մեզ փրկութեան եղջիւր իւր Դաւթի
70 տունէն, Ինչպէս որ խօսեցաւ բերանով սրբոց,
որ աշխարհի սկիզբէն հետէ անոր մարգարէներն
71 էին, Փրկութիւն մեր թշնամիներէն և բոլոր մեզ
72 ատողներուն ձեռքէն, Ողորմութիւն ընել մեր
73 հայրերուն հետ, և յիշել իւր սուրբ ուխտը, Այն
երդումը զոր բրաւ մեր հօրը Աբրահամու, ասաւ
74 մեզ որ Մեր թշնամիներուն ձեռքէն ազատելով
75 առանց երկիւղի պաշտենք զնա Սրբութեամբ և
արդարութեամբ անոր առջև մեր կեանքի բոլոր
76 օրերուն մէջ։ Եւ դուն, ով մանուկ, Բարձրելոյն

մարգարէն պիտի կոչուիս, քանզի Տէրոջը երեսին
առջևէն պիտի երթաս պատրաստել անոր ճամ-
77 բաները, Անոր ժողովրդեան տալ գիտութիւն
78 փրկութեան ի թողութիւն մեղաց իւրեանց, Մեր
Աստուծոյն գթած ողորմութեան համար, որով
Արեգակ աբխազէն ի բարձանց այցելութիւն բրաւ
79 մեզ, Խաւարի և մահուան սուերի մէջ նստող-
ներուն լոյս տալ, ԵՒ ուղղել զոտս մեր խաղա-
ղութեան ճամբուն մէջ։
80 Եւ մանուկը կը մեծնար և կը զօրանար հոգ-
ւով, և անապատներու մէջ էր մինչեւ այն օրը
որ երևեցաւ Իսրայէլի։

Գլ. Բ

1 Եւ եղաւ որ այն օրերը հրաման ելաւ Օգոստոս
2 կայսերէ գրել բոլոր աշխարհ։ Այս առաջին աշ-
խարհագիրն եղաւ ի կուսակալութեան Կիւրենէ-
3 նոյ Սիւրիոյ վրայ։ Եւ ամէնքը կ'երթային աշ-
խարհագիրը մտնել իւրաքանչիւր իւր քաղաքը։
4 Ելաւ նաև Յովսէփ Գալիլեայէ, Նազարէթ քա-
ղաքէն, դէպ ի Հրէաստան Դաւթի քաղաքը որ
Բեթլեհեմ կը կոչուի, վասն զի Դաւթի տունէն
5 և ազգատոհմէն էր, Աշխարհագիրը մտնել Մա-
րեամ հանդերձ, որ անոր խօսակալ էր, և էր
6 յղի։ Եւ եղաւ երբ անոնք հոն էին, անոր ծնանե-
7 լու օրերը լցան։ Եւ ծնաւ իւր անդրանիկ որ-
դին, և պատեց խանձարրօք և պառկեցուց
զնա մսրոյ մէջ, քանզի տեղ չկար անոնց յի-
ւրևանին։
8 Եւ այն տեղ կային դաշտի մէջ կեցած հովիւ-
ներ, որ իրենց հօտերուն գիշերուան պահպանու-
9 թիւնը կ'ընէին։ Եւ ահա Տէրոջը հրեշտակն իջաւ
անոնց, և Տէրոջը փառքը ծագեց անոնց բոլոր-
10 տիքը, և վախցան չափ։ Եւ հրեշտակն ըսաւ

անոնց, Մի՛ վախնաք, քանզի ահա ես աւետիս
կու տամ ձեզ մեծ ուրախութեան, որ բոլոր ժո-
11 ղովրդեան պիտի ըլլայ. վասն զի այսօր Դաւիթի
քաղաքը փրկիչ ծնաւ ձեզ, որ է Օծեալ Տէր,
12 Եւ այս նշան ըլլայ ձեզ. մանուկ մը պիտի գտնէք
պատեալ ի խանձարուրս Ե մսրոյ մէջ պառկած,
13 Եւ իսկոյն այն հրեշտակին հետ եղաւ բազմութիւն
երկնային զօրաց, որ կ'օրհնէին զԱստուած և կ'ը-
14 սէին, Փառք ի բարձունս Աստուծոյ, և երկրի
15 վրայ խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ
եղաւ որ երբ հրեշտակներն անոնցմէ վերացան
յերկինս, հովիւներն ըսին իրարու, եկէք երթանք
մինչև Բեթլեհեմ, և տեսնենք ի՛նչ է այս որ
16 եղաւ, զոր Տէրը ցուցուց մեզ։ Եւ եկան փու-
թով, և գտան զՄարիամ և զՅովսէփ և մանուկը
17 մսրոյն մէջ պառկած։ Եւ երբ տեսան, իմացուցին
այն խօսքին վրայ որ այս մանկան համար ըսուե-
18 ցաւ անոնց։ Եւ ամէնքը որ կը լսէին՝ կը զարմա-
նային այն բաներուն վրայ զոր հովիւները կ'ըսէին
19 անոնց։ Բայց Մարիամ այս ամէն բաները կը պա-
20 հէր, և կը խորհէր իւր սրտին մէջ։ Եւ հովիւները
դարձան, կը փառաւորէին և կ'օրհնէին զԱստ-
ուած այն ամէն բաներուն համար զոր լսեցին և
տեսան, ինչպէս որ ըսուած էր անոնց։
21 Եւ երբ ութ օրերը լրացան *մանուկը Քրիստ-
ոսին, անոր անունը դրուեցաւ Յիսուս, որ
հրեշտակին կոչուած էր, մինչդեռ նա յղացած
չէր յորովայնին։
22 Եւ ըստ օրինաց Մովսիսի երբ †անոնց մաքրու-
թեան օրերը լցան, Երուսաղէմ տարին հանել
23 զնա Տէրոջը առնէ, ինչպես որ գրուած է Տէրոջը
օրինաց մէջ, Թէ Ամէն արու որ կը բանայ զար-

*Ոմանք, զնա
†Ոմանք, անոր

24 գանդ՝ սուրբ Տեառն կոչուի, Եւ ինչպէս ըսուած
է Տէրոջը օրինաց մէջ, տալ ընծայ զոյգ մը տատ-
25 րակ, և կամ ազաւնւոց երկու ձագ։ Եւ ահա
Երուսաղէմի մէջ մարդ մը կար որուն անունն էր
Սիմէոն, և այն մարդն արդար և երկիւղած էր,
և կը սպասէր Իսրայէլի մխիթարութեան. և Հո-
26 գին Սուրբ էր ինքնիր Եւ անոր յայտնուած էր
ի Հոգւոյն Սրբոյ Թէ մահ պիտի չտեսնէր, մինչև
27 տեսնէր Տէրոջը Օծեալը։ Եւ Հոգւով տաճարը
եկաւ. և երբ ծնողքը բերին զՅիսուս մանուկն
որ բնա սովորութեան օրինաց ընեն անոր հա-
28 մար, Նա առաւ զնա իւր գիրկը, և օրհնեց
29 զԱստուած և ըսաւ, Եւ արդ, ով Տէր, արձակես
քու ծառագ խաղաղութեամբ ըստ բանի քումմ.
30 Վասն զի աչքերնս տեսան քու փրկութիւնդ,
31 Զոր բոլոր ժողովրդոց առջև պատրաստեցիր,
32 Լոյս ի լուսաւորել զհեթանոս, և փառք քու
33 ժողովրդեանդ Իսրայէլի։ Եւ Յովսէփ և անոր
մայրը զարմացած էին այն բաներուն վրայ որ
34 անոր համար կը խօսուէին։ Եւ Սիմէոն օրհնեց
զանոնք, և անոր մօրը Մարիամայ ըսաւ, Ահա
կը կենայ սա ի գլորումն և ի կանգնումն բազմաց
35 Իսրայէլի մէջ, և ի նշան հակառակութեան. Եւ
քու սրտիդ ևս սուր պիտի անցնի. որ չատ սրտերէ
խորհուրդներ յայտնուին։
36 Եւ հոն էր Աննա մարգարէ, փանուէլի դուստ-
րը, Ասերայ ցեղէն. սա անցեալ էր յոյժ զա-
ւուրքք՝ երկան հետ եօթը տարի տպրած ըլլալով
37 իւր կուսութեան ժամանակէն, Եւ էր այրի իբր
ութսուն և չորքսանհայ, որ չէր մեկներ տաճա-
րէն, այլ ծոմով և աղօթիւք Աստուծոյ ծառայու-
38 թիւն կ'ընէր գայդ և գցերեկ։ Եւ սա նոյն ժա-
մուն եկաւ, և գոհութիւն կու տար Տէրոջը, և
անոր վրայ կը խօսէր այն ամենուն որ Երու-
սաղէմի մէջ կը սպասէին փրկութեան։

39 Եւ երբ ամէն բան կատարեցին Տէրոջը օրինաց
համեմատ, դարձան Գալիլեա իրենց քաղաքը
40 Նազարէթ։ Եւ մանուկը կ'աճէր և կը զօրանար
հոգւով, լի իմաստութեամբ, և Աստուծոյ շնորհքն
անոր վրայ էր։
41 Եւ անոր ծնողքն ամէն տարի զատիկ ուսնին
42 կ'երթային Երուսաղէմ։ Եւ երբ եղաւ երկոտա-
սանամեայ, բան սովորութեան ուսնին երթ անոնք
43 Երուսաղէմ եղան, Եւ երբ կատարեցին օրերը և
կը դառնային, Յիսուս մանուկը Ձնաց Երուսա-
44 ղէմ. և Յովսէփ և անոր մայրը չէին գիտեր. Այլ
կարծելով թէ ուղեկիցներուն հետ էր նայ, մի
օրուան ճամբայ գնացին, և կը փնտռէին զնա
էրէնց ազգականներուն և ծանօթներուն մէջ։
45 Եւ երբ չգտան, դարձան անդրէն Երուսաղէմ
46 խնդրել զնա։ Եւ եղաւ որ երեք օր ետքը տա-
ճարին մէջ գտան զնա, որ վարդապետներուն
հետ նստած էր, և կը լսէր անոնցմէ և կը հար-
47 ցընէր անոնց։ Եւ ամենքը որ կը լսէին անկէ
կը զարմանային անոր իմաստութեանը և պա-
48 տասխաններուն վրայ։ Եւ երբ տեսան զնա, սքան-
չացան. և անոր մայրն ըսաւ անոր, Որդեակ, ինչո՞ւ
համար մեզի այդպէս ըրիր. ահա հայրդ և ես
49 չատ տառապելով կը փնտռէինք զքեզ։ Եւ ըսաւ
անոնց, Ձիս ընդհ՚ր կը փնտռէիք, չէի՞ք գիտեր
50 թէ պարտ է ինձ իմ Հօրս *տունն ըլլալ։ Եւ ա-
51 նոնք չհասկցան խօսքը զոր ըսաւ անոնց։ Եւ
իջաւ անոնց հետ և գնաց Նազարէթ, և հնազանդ
էր անոնց. բայց անոր մայրն այս ամէն խօսքերը
կը պահէր իւր սրտին մէջ։
52 Եւ Յիսուս կը զարգանար իմաստութեամբ և
հասակաւ, և շնորհք ֆդնելով Աստուծմէ և
ի մարդկանէ։

*կամ, իջոքներուն մէջ

ԳԼ. Գ

1 Տիբերիոս կայսեր թագաւորութեան հնգետա-
սաներորդ տարին, ի կուսակալութեան Պոնտացի
Պիղատոսի Հրէաստանի վրայ, և ի չորրորդպե-
տութեան Հերովդէ Գալիլեացւոց վրայ, և ի չոր-
րորդպետութեան անոր եղբօրը Փիլիպպոսի Իտու-
բացւոց և Տրաքոնացւոց երկրին վրայ, և ի չոր-
րորդպետութեան Լիսանեայ Աբիլինացւոց վրայ,
2 Ե- ի քահանայապետութեան Աննայի և Կայիա-
փայ, Աստուծոյ խօսքը եղաւ Զաքարիայի որդ-
3 ւոյն Յովհաննու վրայ անապատին մէջ։ Եւ եկաւ
նա Յորդանանու բոլոր կողմերը, և կը քարոզէր
մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մե-
4 ղաց . ինչպես որ նայեալ մարգարէի խօսքերուն
գրքին մէջ գրուած է ըսելով, Անապատի մէջ
կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստա-
5 ցէք, անոր շաւիղներն ուղղեցէք. Ամէն ձոր
պիտի լցուի, և ամէն լեռ և բլուր պիտի խո-
նարհի, և ծուռը պիտի ուղղուի, և խորտու-
6 բոտ տեղեր պիտի բլլան հարթ ճանապարհ . Եւ
ամէն մարմին պիտի տեսնէ Աստուծոյ փրկու-
թիւնը։
7 Եւ ժողովրդոց որ անկէ մկրտուելու կ'ելլէին՝
ըսաւ , Ծնունդ-ք իժից , ով իմացուց ձեզ փախ-
8 չել գալու բարկութենէն, Ուրեմն ապաշխարու-
թեան արժանի պտուղներ բերէք, և մի սկսիք
ըսել յանձինս Թէ Մենք հայր ունինք մեզ զնբ-
ռահար, քանզի կ'ըսեմ ձեզ որ Աստուած կարող
է այս քարերէն հանել Աբրահամու որդիներ։
9 Եւ արդ կայինը կը դրուի ծառերուն արմատին
քով . ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէ՝
10 կը կարուի և կը նետուի ի հուր։ Եւ ժողովուրդ-
ները կը հարցնէին անոր և կ'ըսէին, Ուրեմն
11 ինչ ընենք, Պատասխան առաւ և ըսաւ անոնց,

Ով որ երկու հանդերձ ունի՝ թող չքնաղ տայ չունեցողին, և ով որ կերակուր ունի՝ նոյնպէս ընէ։
12 Մաքսաւորք ևս եկան մկրտիլ, և ըսին անոր,
13 վարդապետ, մենք ի՞նչ ընենք։ Եւ նա ըսաւ անոնց, Մի՛ պահանջէք աւելի քան զոր հրամայուած է ձեզ։
14 Զինուորք ևս կը հարցնէին ա-նոր և կ'ըսէին, Եւ մենք ի՞նչ ընենք։ Ըսաւ ա-նոնց, Մի՛ զոք հարստահարէք, և խրդո-ւէք զրպարտութիւն մի՛ ընէք, և բաւականացէք ձեր թոշակով։
15 Երբ ժողովուրդը կը սպասէր, և ամէնքն իրենց սրտերուն մէջ կը խորհէին Յովհաննու համար թէ
16 Միթէ սա է Քրիստոսն, Յովհաննէս պատասխան տուաւ ամենուն և ըսաւ, Ես կը մկրտեմ զձեզ ջրով, բայց գան զիս աւելի զօրաւորը կու գայ, որուն ես կօշիկներուն կապերը քակել չեմ արժանի, նա պիտի մկրտէ զձեզ Հոգւով Սրբով և
17 հրով։ Որուն հեծանոցը իւր ձեռքն է, և պիտի մաքրէ իւր կալը, և ցորենը պիտի ժողովէ իւր չտեմարանը, և յարդը պիտի այրէ անշէջ հրով։
18 Ուրիշ շատ բաներ ևս կը քարոզէր ժողովուրդը յորդորելով։
19 Բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանուելով անկէ իւր *եղբօրը կնոջ Հերովդեայի համար, և բոլոր չարութիւններուն համար զոր Հերովդէս
20 գործեց, Ա՛յն ամենուն վրայ սա ևս աւելցուց, որ զՅովհաննէս բանտի մէջ փակեց։
21 Եւ երբ բոլոր ժողովուրդը մկրտեցաւ, և Յիսուս ևս մկրտուելով աղօթք կ'ընէր, երկինք
22 բացուեցաւ, Եւ Հոգին Սուրբ մարմնաւոր տեսլեամբ իջաւ անոր վրայ աղաւնւոյ պէս, և եկաւ յերկինից ձայն որ կ'ըսէր, Դու ես իմ սիրելի Որդիս, քեզմէ հաճեցայ։

*Ոմանք, եղբօրը՝ փիլիպպոսի

23 Եւ ինքն Յիսուս սկսած էր ըլլալ գրեթէ երեսնամեայ, որ (ինչպէս կը կարծուէր) էր որդի
24 Յովսեփայ, որ Հեզեայ, որ Մատաթիայ, որ Ղեւեայ, որ Մեղքեայ, որ Յաննեայ, որ Յովսեփայ,
25 Որ Մատաթիայ, որ Ամովսայ, որ Նաւումայ, որ
26 Եսղեայ, որ Նաագէի, Որ Մաաթայ, որ Մաաթիայ, որ Սեմէեայ, որ Յովսեփայ, որ Յուդայ,
27 որ Յովհաննայ, որ Բեսայի, որ Զօրաբաբելի, որ Սաղաթիէլի, որ Ներեայ,
28 Որ Մեղքեայ, որ Ադդեայ, որ Կոսամայ, որ Եղմադդայ, որ Իրայ, Որ Յովսեփ, որ Եղիազարու,
29 որ Յովրիմի, որ Մատաթայ, որ Ղեւեայ, Որ Սիմէոնի, որ Յուդայի, որ Յովսեփայ, որ Յոնիայ,
31 Նաւ, որ Եղիակիմայ, Որ Մելէայ, որ Մայնանայ, որ Մատաթայ, որ Նաթանու, որ Դաւիթ,
32 Որ Յեսսեայ, որ Ովբեդի, որ Բոոսի, որ Սաղմոնի, որ Նաասոնի, Որ Ամինադաբայ, որ Արամայ, որ Եսրոնի, որ Փարեսի, որ Յուդայի,
34 Որ Յակոբայ, որ Իսահակայ, որ Աբրահամու,
35 որ Թարայի, որ Նաքորայ, Որ Սերուգայ, որ Ռագաւայ, որ Փաղեկայ, որ Եբերայ, որ Սա-
36 զայի, Որ կայնանու, որ Արփաքսադայ, որ Սե-
37 մայ, որ Նոյի, որ Ղամեքայ, Որ Մաթուսալայի, որ Ենովքայ, որ Յարեդի, որ Մաղաղիէլի,
38 Որ կայնանու, Որ Ենովսայ, որ Սեթայ, որ Ադամայ, որ Աստուծոյ։

Գլ. Դ

1 Եւ Յիսուս Հոգւով Սրբով լցուած դարձաւ Յորդանէն, և ի Հոգւոյն վարեցաւ յանապատս,
2 Եւ փառասուն օր փորձեցաւ Սատանայէն. և այն օրերը բան չկերաւ, և այն օրերուն կատարուելէն եաքը անօթեցաւ։
3 Եւ Սատանան ըսաւ անոր, Եթէ Որդի ես Աս-

4 տուծոյ, ըսէ այդ քարին որ հաց ըլլայ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ անոր և ըսաւ, Գրուած է Թէ Ոչ հացիւ միայն կ'ապրի մարդ, այլ Աստուծոյ ամէն խօսքով։

5 Եւ Սատանան հանելով զնա բարձր լեռ մը, ցուցուց անոր ի վայրկեան ժամանակի աշխարհի
6 բոլոր թագաւորութիւնները։ Եւ Սատանան ըսաւ անոր, Ձեզ ամէն իշխանութիւնը և անոր փառքը պիտի տամ քեզ, քանզի ինձ յանձնուած է, և
7 որուն որ կամիմ կու տամ զայն։ Ուստի եթէ երկրպագութիւն ընես իմ առջեւս, ամէնն ըլլայ
8 քեզ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ անոր և ըսաւ, *Գրուած է Թէ Քու Տէր Աստուծոդ երկրպագութիւն ընես, և զնա միայն պաշտես։

9 Եւ տարաւ զնա Երուսաղէմ և կեցուց տաճարին աշտարակին վրայ, և ըսաւ անոր, Եթէ Որդի
10 ես Աստուծոյ, վար նետէ զքեզ ասկէ։ Քանզի գրուած է Թէ Իւր հրեշտակներուն պիտի պատ-
11 ուիրէ քեզի հասնիլ որ պահեն զքեզ։ Եւ իրենց ձեռաց վրայ պիտի վերցունեն զքեզ, որ քարի
12 չյարձնես ոտքդ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Ըսուած է Թէ Քու Տէր Աստուածդ
13 չփորձես։ Եւ երբ Սատանան կատարեց ամէն փորձութիւնը, ժամանակ մը ետ կեցաւ անկէ։

14 Եւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն Գալիլեա դարձաւ, և անոր համբաւը տարածեցաւ այն գաւա-
15 ռին ամէն կողմերը։ Եւ անոնց ժողովրդանոցներուն մէջ կը սորվեցուներ, և կը փառաւորուէր ամենէն։

16 Եւ եկաւ Նազարէթ ուր սնած էր, և ըստ իւր սովորութեան շաբաթ օրը մտաւ ժողովրդանոցը,
17 և ելաւ կարդալ։ Եւ տուին անոր Եսայեայ մարգարէի գիրքը։ և երբ բացաւ գիրքը, գտաւ այն

*Ծանձ, եթէ գնաս, Սատանայ, վասն զի գրուած

18 տեղն ուր գրուած էր, Տէրոջը Հոգին իմ վրաս է. *քանզի օծեց զիս, աւետարանել աղքատաց զրկեց
19 զիս, բժշկել սրտիւ բեկեալները, Քարոզել գերեալաց Թողութիւն և կուրաց տեսանել, հարստահարեալներն արձակել յազատութիւն, քարոզել
20 Տէրոջը ընդունելի տարին։ Եւ գիրքը գոցելով տուաւ սպասաւորին և նստաւ. և ամենեցուն որ ժողովրդանոցին մէջ էին՝ աչուընէրն ի նա յա-
21 ռեալ կը նայէին։ Եւ սկսաւ ըսել անոնց, Այսօր
22 լցաւ այս գրուածն յականջս ձեր։ Եւ ամէնքը կը վկայէին անոր, և կը զարմանային շնորհաց խօսքերուն վրայ որ կ'ելլէին անոր բերնէն, և
23 կ'ըսէին, Ո՞չ սա է որդին Յովսեփայ։ Եւ ըսաւ անոնց, Ապագային պիտի ըսէք ինձ այս առակը, Բժիշկ, բժշկեա զանձն քոյ. որչափ բան լսեցինք Թէ եղաւ ի Կափառնայում, հոս ևս ըրէ քոյ-
24 քաղաքիդ մէջ։ Եւ ըսաւ, Ձշմարիտ կ'ըսեմ ձեզ,
25 Թէ Մարգարէ ընդունելի չէ իւր քաղաքը։ Եւ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Թէ շատ այրիներ կային Եղիայի օրերը Իսրայելի մէջ, երբ երեք տարի և վեց ամիս փակեցան երկինքը, այնպէս որ մեծ սով
26 եղաւ բոլոր երկրին մէջ։ Եւ եղիա անոնցմէ մարդու չղրկուեցաւ, բայց միայն Սիդոնացւոց Սա-
27 րեպթա քաղաքին մէջ այրի կնոջ մը։ Եւ շատ բորոտներ կային Իսրայելի մէջ Եղիսէ մարգարէին ատենը, և անոնցմէ ոչ ոք մաքրուեցաւ, բայց
28 միայն Նեեման Ասորի։ Եւ ժողովրդանոցին մէջ ամենքը լցան բարկութեամբ երբ լսեցին այս խօս-
29 քերը։ Եւ ելան հանեցին զնա քաղաքէն դուրս, և տարին զնա մինչև լերան արտևանը որուն վրայ շինուած էր անոնց քաղաքը, որպէս զի բարձր
30 տեղէն վար նետեին զնա։ Բայց նա անոնց մէջէն անցաւ գնաց։

*Կամ, վասն որոյ

31 Եւ իջաւ Փալիլեայի կափառնայում քաղաքը,
32 և շաբաթ օրերը կը սորվեցուներ անոնց։ Եւ կը
զարմանային անոր վարդապետութեան վրայ,
33 քանզի իշխանութեամբ էր անոր խօսքը։ Եւ ժո-
ղովրդանոցին մէջ մարդ մը կար, որ ունէր պիղծ
34 դիւի ոգի, և մեծ ձայնով աղաղակեց՝ Ըսելով,
Թոյլ տուր, մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս
Նազովրեցի։ Մի՞թէ կորսնցնել կուգա զմեզ։ Գի-
35 տեմ զքեզ ով ես, Սուրբ Աստուծոյ։ Եւ Յի-
սուս սաստեց անոր ըսելով, Պապանձէ և ել ա-
կէ. և զգետնեց զնա դևն ի մէջի, և ելաւ անկէ,
36 և չվնասեց անոր։ Եւ զարմանք եկաւ ամենուն
վրայ, և իրարու հետ կը խօսէին և կ'ըսէին, Ի՞նչ
խօսք է այս, որ իշխանութեամբ և զօրութեամբ
37 կը հրամայէ պիղծ ոգիներուն, և կ'ելլեն։ Եւ ա-
նոր համբաւը տարածեցաւ չրխակայ գաւառին
բոլոր տեղերը։
38 Եւ ժողովրդանոցէն ելլելով մտաւ Սիմոնի տու-
39 նը։ Եւ Սիմոնի զոքանչը կը տագնապէր սաստիկ
40 ջերմեռանդ, և աղաչեցին զնա անոր համար։ Եւ
Ձեռնոտ կենալով առ նմա սաստեց ջերման, որ
Թողուց զնա. և վազվազակի ելաւ և կը սպասա-
ւորէր անոնց։
41 Եւ երբ արեւը կը մտնէր, ամենքը որ ունէին
հիւանդներ պէսպէս ցաւօք, բերին զանոնք ա-
նոր. և նա անոնցմէ իւրաքանչիւրին վրայ ձեռք
42 դնելով բժշկեց զանոնք։ Դեռ ևս կ'ելլէին շա-
տերէն, կ'աղաղակէին և կ'ըսէին Թէ Դու ես
Քրիստոս, Աստուծոյ Որդին։ Եւ նա կը սաստէր և
չէր Թողուր անոնց խօսիլ, քանզի գիտէին Թէ
նա է Քրիստոսն։
43 Եւ երբ տիւ եղաւ, ելաւ և գնաց անապատ
տեղ, և ժողովուրդները կը փնտռէին զնա, և ե-
կան մինչև առ նա, և կը տարհէին զնա որ իրենց-
44 մէ չերթար, բայց նա ըսաւ անոնց, Պարտ է ինձ

ուրիշ քաղաքներու ևս աւետարանել Աստուծոյ
Թագաւորութիւնը, քանզի առ այս ղրկուած եմ։
45 Եւ Գալիլեայի ժողովրդանոցներուն մէջ կը քարո-
զէր։

Գլ. Ե

1 Եւ եղաւ որ երբ ժողովուրդը դիզուեցաւ անոր
բոլորտիքը լսել Աստուծոյ խօսքը, ինք կեցած
2 էր Գեննեսարեթի ծովակին քով։ Եւ տեսաւ եր-
կու նաւ որ կեցած էին ծովակին քով, և ձկնորս-
ները ելլելով անոնց մէջէն կը լուային ուռկաննե-
3 րը։ Եւ մտաւ նա այն նաւերէն մին որ Սիմոնին
էր, և աղաչեց զնա ցամաքէն քիչ մը հեռու տա-
նել. և նստելով կը սորվեցուներ ժողովուրդը
նաւէն։
4 Եւ երբ դադարեցաւ խօսելէ, ըսաւ Սիմոնի,
Առաջ տար Դէպ ի խորը, և նետեցէք ձեր
5 ուռկանները որսոյ համար։ Եւ Սիմոն պատաս-
խան տալով ըսաւ անոր, Վարդապետ, բոլոր գի-
շերս աշխատեցանք և բան մը չբռնեցինք, բայց
6 քու խօսքիդ համար նետեմ ուռկանը։ Եւ երբ
բրին զայն, փակեցին ի մէջ մեծ բազմութիւն
7 ձկանց, մինչև կը պատռտուէր անոնց ուռկանը։ Եւ
կ'անդրադարձին իրենց ընկերներուն որ միւս նա-
ւուն մէջ էին՝ գալ օգնել անոնց. և եկան և եր-
կու նաւերն ևս լցուցին, մինչև մատ էին ընկըղ-
8 մել։ Սիմոն Պետրոս երբ տեսաւ, ինկաւ առ
Յիսուսի ծնրատ և ըսաւ, Տէր, ի բաց գնա ինէ,
9 քանզի մեղաւոր մարդ եմ ևս։ Վասն զի սաստա-
Թիւն պատեց զնա և ամենքը որ անոր հետ էին
10 ձուկերուն որսին համար զոր բռնեցին. Նոյն-
պէս և Զեբեդեոսի որդիքը, զՅակոբոս և զՅով-
հաննէս, որ Սիմոնի ընկերներն էին։ Եւ Յիսուս
ըսաւ Սիմոնի, Մի՛ վախնար, այսուհետև մարդոց
11 որսորդ պիտի ըլլաս։ Եւ նաւերը ցամաք հա-

նելով ամէն բան Թողին և գնացին անոր
հետեւելն։
12 Եւ եղաւ որ երբ նա քաղաքի մը մէջ էր, ահա
մարդ մը լի բորոտութեամբ, երբ տեսաւ զՅի-
սուս, երեսի վրայ իյնալով աղաչեց զնա և ըսաւ,
13 Տէր, եթէ կամիս, կրնաս մաքրել զիս։ Եւ Յիսուս
երկնցունելով ձեռքը դպաւ անոր, և ըսաւ,
կամիմ, մաքրուէ։ Եւ իսկոյն գնաց ամէն բորո-
14 սութիւնը։ Եւ նա պատուիրեց անոր մարդու
չըսել, այլ ըսաւ, Գնա ցոյց զքեզ քահանային և
տուր մաքրութեանդ ընծան, ինչպէս պատուիրեց
15 Մովսէս անոնց վկայութեան համար։ Եւ անոր
համբաւն աւելի կը տարածուէր. և չատ ժողո-
վուրդներ կը ժողովէին լսել, և բժշկուիլ անով
16 իրենց հիւանդութիւններէն։ Եւ նա խոյս կուտար
անապատ տեղեր և աղօթք կ'ընէր։
17 Եւ եղաւ որ օր մը ինք կը սորվեցունէր, և
նստած էին փարիսեցիք և օրինաց վարդապետք,
որ Գալիլեայի և Հրէաստանի և Երուսաղեմի բո-
լոր գիւղաքաղաքներէն ժողոված էին. և Տէ-
18 րոջը զօրութիւնը Ներէին էր բժշկել զանոնք։ Եւ
ահա մարդիկ անդամալոյծ մը բերին մահճով, և
հնար կը խնդրէին թէ ինչպես մտծանեին զնա
19 ի ներքս, և դնեին անոր առջեւ։ Եւ երբ բազմու-
թենէն չէին գտներ թէ ուստի մտծանեին զնա
ի ներքս, ելան տանիքը, և կղմինտրներէն մահ-
20 ճով իջուցին զնա ի մէջ Յիսուսի առջեւ։ Եւ նա
տեսնելով անոնց հաւատքն ըսաւ անոր, Այր
21 դու, քու մեղքերդ ներուած են քեզ։ Եւ դպիրք
և փարիսեցիք սկսան խորհել և ըսել, Ո՞վ է սա
որ հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղաց
22 Թողութիւն տալ, բայց միայն Աստուած։ Եւ Ի-
սուս իմանալով անոնց խորհուրդները պատաս-
խան առաւ և ըսաւ անոնց, Ինչ կը խորհիք ձեր
23 սրտերուն մէջ։ Ո՞րն աւելի դիւրին է, ըսել թէ

մեղքերդ քեզի ներուած են, թէ ըսել ել և
24 քալէ։ Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ
իշխանութիւն ունի երկրի վրայ մեղաց Թողու-
թիւն տալու, ըսաւ անդամալոյծին, Կ'ըսեմ քեզ,
25 ել, առ մահճիդ և գնա տունդ։ Եւ նա իսկոյն ե-
լաւ անոնց առջեւ, և վրան առաւ ինչ բանի վրայ
որ պառկած էր, և գնաց իր տունը, և փառք
26 կուտար Աստուծոյ։ Եւ ամէնքն ապշած մնացին,
և փառք կուտային Աստուծոյ, և լի ահիւ կ'ը-
սէին թէ Այսօր նորանման բաներ տեսանք։
27 Եւ յետ այսորիկ ելաւ առիւ, և տեսաւ մաքս-
աւորը մը որոյ անունն էր Ղեւի, որ նստած էր
մաքս ընդունելու տեղը, և ըսաւ անոր, Ե-
28 կուեալ։ Եւ նա թողուց ամէնը և ելաւ գնաց
29 անոր հետեւեցաւ։ Եւ Ղեւի անոր մեծ կազմութիւն
իր տունը. և չատ բազմութիւն կար մաքսա-
ւորներու և ուրիշներու որ անոնց հետ սեղան
30 նստած էին։ Եւ անոնց դպիրները և փարիսեցիք
տրտունջ կ'ընէին անոր աշակերտներուն և կ'ը-
սէին, Ընդ՞ինչ մաքսաւորներուն և մեղաւորնե-
31 րուն հետ կ'ուտէք և կը խմէք։ Եւ Յիսուս պա-
տասխան տալով ըսաւ անոնց, Ոչ է պէտք բժիշկ
32 ողջոց, այլ հիւանդաց. Ես չեկայ կոչել արդար-
ները, այլ մեղաւորներն յապաշխարութիւն։
33 Եւ անոնք ըսին անոր, Ընդ՞ինչ Յովհաննու աշա-
կերտները չատ անգամ ծոմ կը պահեն և աղօթք
կ'ընեն, նոյնպես և փարիսեցւոցը, և քոյդ կ'ու-
34 տեն և կը խմեն։ Եւ նա ըսաւ անոնց, Կրնա՞ք
մանկանց առագաստի ծոմ պահել տալ մինչ
35 անոնց հետ է փեսան։ Բայց պիտի գան օրեր, և
երբ փեսան վերցուի անոնցմէ, ապա այն օրերը
36 ծոմ պիտի պահեն։ Առակ մի ևս ըսաւ անոնց,
Թէ Ոչ ոք կ'արկանէ նոր հանդերձէ կտորտ
հին հանդերձի վրայ. ապա Թէ ոչ կը պատառէ
նաև նորը, և ոչ հնոյն հետ կը միաբանի կտորտը

37 որ նորէն է՝ եւ ոչ ոք նոր գինին կը դնէ հին
տիկերու մէջ. ապա թէ ոչ նոր գինին կը պատա-
ռէ *տիկերը, ինք կը թափի և տիկերը կը
38 կորնչին. Այլ նոր գինին դրուելու է նոր տիկե-
39 րու մէջ, և երկոքեան կը պահուին: Եւ ոչ ոք
հին ։։։ խմելէն ետքը կ՚ուզէ անմիջապէս նորը,
քանզի կ՚ըսէ թէ հինը լաւագոյն է։

Գլ. Զ

1 Եւ եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը ինք
արտերէն կ՚անցնէր, և աշակերտները ցորեան
հասկեր կորզելով կը ուտէին իրենց ափերուն մէջ
2 և կ՚ուտէին: Եւ փարիսեցիներէն ոմանք ըսին
անոնց, ինչո՞ւ կ՚ընէք զոր ընել արժան չէ շա-
3 բաթ օրը: Եւ Յիսուս պատասխան տալով անոնց
ըսաւ, Չէ՞ք կարդացած դուք ինչ որ Դաւիթ
ըրաւ, երբ անօթեցաւ ինք և որ անոր հետ էին.
4 Ինչպէս մտաւ նա Աստուծոյ տունը, և առաւ ա-
ռաջաւորութեան հացերը և կերաւ. և տուաւ
անոնց և ոչ անոր հետ էին, զոր չէր օրէնք ուտել,
5 բայց միայն քահանայից: Եւ ըսաւ անոնց, Որդին
մարդոյ Տէրը է նաև շաբաթուս:
6 Եւ եղաւ որ ուրիշ շաբաթ օր մը ինք ժողո-
վրդեանցը մտաւ և կը սորվեցուներ. և հոն
մարդ մը կար որոյ աջ ձեռքը գօսացեալ էր:
7 Եւ գրիչքն և փարիսեցիք կը սպասէին անոր թէ
շաբաթ օրը կը բժշկէ՞ը ըլլայ, որպէս զի չարախօ-
8 սութիւն գտնեն անոր դէմ: Իսկ նա գիտնալով
անոնց խորհուրդները, ըսաւ այն մարդուն որոյ
ձեռքը գօսացեալ էր, Ել, կանգնէ մէջտեղ. և
9 նա ելաւ կանգնեցաւ: Անատեն Յիսուս ըսաւ ա-
նոնց, Հարցնեմ ձեզ. Շաբաթ օր ի՞նչ արժան է,

*Յունաե, հին տիկերը

բարի՞ ընել քան չար գործել, հոգի մը ապրեցու-
10 նե՞լ քան կորուսանել: Եւ նայելով չորքն ամե-
նուն վրայ, ըսաւ անոր, Երկնցուր ձեռքդ: Եւ
նա ըրաւ այնպէս, և անոր ձեռքը ողջացաւ
11 իբրև միւսը: Եւ անոնք կատաղութեամբ լցան, և
իրարու հետ կը խօսէին թէ ինչ ընէին Յիսուսի:
12 Եւ եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթք ը-
նել, և բոլոր գիշերն անցուց աղօթք ընելով
13 Աստուծոյ: Եւ երբ առաւօտ եղաւ, կոչեց աշա-
կերտները, և ընտրեց անոնցմէ երկոտասան հո-
14 գի, զորս և առաքեալ անուանեց. ԶՍիմոն զոր
և Պետրոս անուանեց, և անոր եղբայրը զԱնդ-
րեաս, զՅակոբոս և զՅովհաննէս, զՓիլիպպոս և
15 զԲարթողիմէոս, Զմատթէոս և զԹովմաս, և
զՅակոբոս Ալփեան և զՍիմոն որ կը կոչուէր Նա-
16 խանձայոյզ, Յակոբոսի Եղբայրն զՅուդա և զՅու-
17 դա Իսկարիովտացի որ և եղաւ մատնիչ: Եւ ա-
նոնց հետ իջնելով կեցաւ տափարակ տեղ մը,
նաև աշակերտներուն ժողովը և մեծ բազմութիւն
ժողովրդեան բոլոր Հրէաստանէ և Երուսաղէմէ
18 և Տիւրոսի և Սիդոնի ծովեզերքէն, Որ եկան լսել
անոր և բժշկուիլ իրենց հիւանդութիւն-
ներէն. և անոնք որ պիղծ ոգիներէ կը նեղուէին
19 էին և կը բժշկուէին: Եւ բոլոր ժողովուրդը
կ՚ուզէր դպչիլ անոր, քանզի զօրութիւն կ՚ելլէր
անկէ և կը բժշկէր ամենքը:
20 Եւ նա դէպ իր աշակերտները վերցուց աչ-
քերը և ըսաւ, Երանի չէք ազքատացդ, վասն
21 զի ձեր է Աստուծոյ թագաւորութիւնը: Երանի
չէք որ հիմա անօթի էք, քանզի պիտի յագե-
նաք: Երանի չէք որ հիմա կուլաք, քանզի պիտի
22 խնդաք: Երանի է ձեզ երբ աստեն զձեզ մարդիկ,
և երբ որոշեն զձեզ և նախատեն, և հանեն ա-
23 նուն չար ձեր վրայ վասն Որդւոյ մարդոյ: Ուրախ
եղէք դուք այն օրը և ցնծացէք, զի ահա ձեր

վարձքը չառ է յերկինս. վասն զի անոնց հայրերն
24 այդպէս կ'ընէին մարգարէներուն։ Բայց վայ ձեզ
մեծատանց, վասն զի առած եք ձեր մխիթարու-
25 թիւնը։ Վայ ձեզ որ յագեալ եք, վասն զի պիտի
անօթենաք։ Վայ ձեզ որ կը ծիծաղիք այժմ,
26 վասն զի պիտի սգաք և լաք։ Վայ ձեզ երբ բարի
խօսին *մարդիկ ձեր վրայ, վասն զի անոնց հայ-
րերն այդպէս կ'ընէին սուտ մարգարէներուն։
27 Բայց կ'ըսեմ ձեզ որ կը լսէք, Սիրեցէք ձեր
թշնամիները, բարի ըրէք զձեզ ատողներուն,
28 Օրհնեցէք զձեզ անիծողները, աղօթք ըրէք ձեզ
29 նեղութիւն տուողներուն համար։ Անոր որ կը
զարնէ զքո ծնօտիդ՝ մատեցուր նաև միւսը. և
անկէ որ քու վերարկուդ կը հանէ քենէ, մի՛
30 արգիլեր նաև շապիկդ։ Այն ամենուն որ քենէ
կը խնդրէ՝ տուր, և ինչ որ կ'առնու ոք քենէ՝
31 մի՛ պահանջեր։ Եւ ինչպես կամիք թէ ընեն ձեզ
32 մարդիկ, և դուք այնպես ըրէք անոնց։ Եւ եթէ
դուք սիրէք զձեզ սիրողները, ի՞նչ շնորհ կ'ու-
նենաք. վասն զի մեղաւորք ևս կը սիրեն զիրենք
33 սիրողները։ Եւ եթէ ձեր բարերարներուն բարի
ընէք, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղա-
34 ւորք ևս կ'ընեն զնոյն։ Եւ եթէ փոխ տաք այն-
պիսի մարդոց յորոց յոյս ունիք առնուլ, ի՞նչ
շնորհ կ'ունենաք. քանզի մեղաւորք ևս փոխ
կու տան մեղաւորաց, որ նոյն չափով առնուն
35 ետու։ Այլ սիրեցէք զուք ձեր թշնամիները, և
բարի ըրէք, և փոխ առէք առանց յուսալու
բան մը, և ձեր վարձքը չառ պիտի ըլլայ, և
բարձրելոյն որդիք պիտի ըլլաք. քանզի բարերար
36 է նա ապերախտներուն և չարերուն։ Ուրեմն
գթած եղէք ինչպես որ ձեր Հայրն ևս գթած է։
37 Մի՛ դատէք, և պիտի չդատուիք. մի՛ դատա-

*Ոմանք, բոլոր մարդիկ

պարտիք, և պիտի չդատապարտուիք. ներեցէք,
38 և պիտի ներուի ձեզ. Տուէք, և պիտի տրուի
ձեզ. չափ բարւոք, կոխուած, ջնդուած, զե-
ղուն, պիտի տրուի ձեր գոգը. քանզի այն չա-
փով որով կը չափէք՝ պիտի չափուի ձեզ։
39 Առակ մի ևս ըսաւ անոնց, Միթէ կոյրը կրնա՞յ
առաջնորդել կուրը, ո՞չ ապաքէն երկոքեան
40 պիտի իյնան ի խորխորատ։ Աշակերտը չէ մեծ
քան իւր վարդապետը, բայց ամէն կատարեալ
վարժուած կ'ըլլայ իբրև իւր վարդապետը։
41 Եւ ընդ՞ի՛նչ կը տեսնես շիւղը որ եղբօրդ աչքին
մէջ է, և չես նշմարեր գերանը որ ե՛ք աչքիդ
42 մէջ։ կամ ի՞նչպես կրնաս ըսել քու եղբօրդ,
Եղբայր, թո՛ղ հանեմ շիւղը որ քու աչքիդ մէջ
է, և դուն չես տեսներ քու աչքիդ մէջ գերանը։
կեղծաւոր, հանի՛ նախ գերանը քու աչքէդ, և
ապա յստակ պիտի տեսնես հանել շիւղը որ է
43 եղբօրդ աչքին մէջ։ Քանզի չկայ բարի ծառ որ
չար պտուղ բերէ, և ոչ չար ծառ որ բարի
44 պտուղ բերէ։ Վասն զի ամէն ծառ կը ճանչցուի
իւր պտղէն. քանզի փուշերէ չեն քաղեր թուզ,
45 և ոչ մարդկէ կը ժողովեն խաղող։ Բարի մարդ
իւր սրտին բարի գանձէն կը բղխէ բարին, և չար
մարդ իւր սրտին չար գանձէն կը բղխէ չարը.
քանզի ի յառատութենէ սրտի խօսի բերան։
46 Եւ ընդ՞ի կը կոչէք զիս, Տէր, Տէր, և ինչ որ
47 կ'ըսեմ չէք կատարեր։ Ամէն ոք որ կու գայ
առ իս և կը լսէ իմ խօսքերս և կը կատարէ
48 զանոնք, ցուցնեմ ձեզ թէ որու կը նմանի։ Կը
նմանի տուն շինող մարդու, որ փորեց և խորհց,
և հիմը դրաւ վիմի վրայ. և երբ յուրերն յոր-
դեցին, գետը զարկաւ տանը, և չկրցաւ շար-
ժել զայն, վասն զի վիմի վրայ հաստատուած էր։
49 Բայց ով որ լո՛ւ խօսէրս կը լսէ և չկատարեր, կը
նմանի մարդոյ որ հողի վրայ առանց հիման շինեց

տուն, որուն զարկաւ գետը, և վաղվաղակի փլաւ, և այն տան կործանումը մեծ էր։

Գլ. Ի

1 Եւ երբ իւր բոլոր խօսքը կատարեց ժողովրդեան
2 ականջին, մտաւ Կափառնայում։ Եւ ծանր հիւանդացած մի էր մեռնելու հարիւրապետի մը
3 ծառայ որ սիրելի էր անոր։ Երբ Յիսուսի վրայ լսեց, Հրեաներէն երէց մը ծերերը ղրկելով աղա-
4 չեց զնա գալ ապրեցունել իւր ծառան։ Եւ անոնք եկան Յիսուսի և թախանձանօք կ'աղաչէին զնա և կ'ըսէին Թէ Արժանի է նա որուն այս
5 ընէհն ընես. Քանզի կը սիրէ մեր ազգը, և ժո-
6 ղովրդանոցը նա չինեց մեզ։ Եւ Յիսուս գնաց անոնց հետ։ Երբ չատ հեռու չէր տունէն, հարիւրապետը ղրկեց անոր բարեկամներ, և ըսաւ անոր, Տէր, մի՛ յոգնիր, քանզի արժանի չեմ որ իմ
7 յարկիս տակ մտնես. Վասն որոյ և ես արժանի չհամարեցայ զիս գալ առ քեզ, այլ ըսէ բանիւ,
8 և պիտի բժշկուի ծառաս. Քանզի և ես մարդ եմ ընդ իշխանութեամբ և հրամայեմ տակ ունիմ զինուորներ. և ասոր կ'ըսեմ, Գնա, և կ'երթայ. և միւսին Թէ Եկ, և կու գայ. և ծառայիս Թէ
9 Ընէ զայս, և կ'ընէ։ Յիսուս լսելով ասոնք զարմացաւ անոր վրայ. և իւր հետէն գնացող ժողովրդեան դարձաւ և ըսաւ, Կ'ըսեմ ձեզ, որ Իսրայէլի մէջ անգամ չգտայ այսչափ հաւատք։
10 Եւ պատգամաւորները տուն դարձան, և գտան հիւանդ ծառան առողջացած։
11 Եւ եղաւ որ հետեւեալ օրը քաղաք մը կ'երթար որոյ անունն էր Նային, և անոր հետ կ'երթային
12 աշակերտներէն չատերը և մեծ բազմութիւն։ Եւ երբ մտեցաւ քաղաքին դրան, ահա մեռեալ մը դուրս կը հանէին, իւր մօրը միամօր որդին, և

նա այրի էր, և քաղաքին չատ ժողովուրդն անոր
13 հետ էր։ Եւ Տէրը տեսնելով զնա, գթաց անոր
14 վրայ, և ըսաւ անոր, Մի՛ լար։ Եւ մտենալով դպաւ դագաղին, և տանողներն զկայ առին։ Եւ ըսաւ, Ով պատանի, կ'ըսեմ քեզ, Նո-
15 Եւ մեռեալը եկաւ նստաւ, և սկսաւ խօսել, և
16 տուաւ զնա իւր մօրը։ Եւ ամենքին բռնութեան ահ, և կը փառաւորէին զԱստուած ըսելով Թէ Մեծ մարգարէ եկած է մեր մէջ, և Թէ Աստուած
17 այցելութիւն ըրաւ իւր ժողովրդեան։ Եւ այս ձայնն անոր վրայ եկաւ բոլոր Հրէաստան և բոլոր չրջակայ տեղեր։
18 Եւ պատմեցին Յովհաննու անոր աշակերտներն
19 այս ամէն բաներուն վրայ։ Եւ Յովհաննէս կոչեց իրեն իւր աշակերտներէն երկուքը, և ղրկեց ՏԷՐՆԻ Յիսուսի ըսելով, Դուն ան՞ն ես որ գալոց էիր,
20 Թէ սպասենք ուրիշի։ Եւ այն մարդիկը եկան անոր և ըսին, Յովհաննէս Մկրտիչ ղրկեց զմեզ առ քեզ, և կ'ըսէ, Դուն ան՞ն ես որ գալոց էիր, Թէ սպա-
21 սենք ուրիշի։ Եւ նոյնժամայն բժշկեց չատերն էրէց հիւանդութիւններէն, և հարուածներէն և չար ոգիներէն, և չատ կոյրերու չնորհեց տեսու-
22 թիւն։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Գնացէք պատմեցէք Յովհաննու ինչ որ տեսաք և լսեցիք. որ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորսաները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռեալք կը յառնեն, աղքատաց
23 աւետարան կը քարոզուի։ Եւ երանի անոր որ իմ վրաս չգայթակղիր։
24 Եւ երբ Յովհաննեսի ղրկուած մարդիկ գնացին, Յիսուս սկսաւ ըսել ժողովրդոց Յովհաննու հա-
մար, Ի՞նչ ելաք տեսնել անապատին մէջ, հովին
25 չարժուած եղե՞ք։ Ապա ի՞նչ ելաք տեսնել, փափուկ հանդերձներ հագած մարդ։ ահա անոնք որ փառաւոր հանդերձներով և փափկութեան

26 մէջ են՝ Թագաւորական պատանեաց են։ Այլ
ինչ ելաք տեսանել, մարգարէ՞. այո, կ'ըսեմ ձեզ,
27 աւելի ևս քան զմարգարէ։ Քանզի սա է որոյ
համար գրուած է, Ահա ես իմ դիւցազնս կը ղրկեմ
քոյ երեսիդ առջևէն, որ պատրաստէ քոյ ճամ-
28 բադ քոյ առջեւդ։ Քանզի կ'ըսեմ ձեզ, կանանց
ծնունդներուն մէջ չկայ մարգարէ մեծ քան զՅով-
հաննէս մկրտիչ. սակայն Աստուծոյ Թագաւորու-
Թեան մէջ փոքրագոյնը մեծ է քան զնա։
29 Եւ բոլոր ժողովուրդը և մաքսաւորները երբ
լսեցին, արդարացուցին զԱստուած, որ Ցովհան-
30 նու մկրտութեամբ մկրտուեցան։ Բայց փարիսե-
ցիք և օրինականք իրենց անձին դէմ Աստուծոյ
խորհուրդն անարգեցին, որ անկէ չմկրտուեցան։
31 *Ուստի որո՞ւ նմանցուցնեմ այս ազգին մար-
դիկը, և որո՞ւ կը նմանին։ Կը նմանին տղայոց,
32 որ նստելով չուկաները կը կանչեն իրարու և կ'ը-
սեն, Փող հնչեցուցինք ձեզ՝ և չպարեցիք, ողբ
33 կարդացինք ձեզ՝ և չլացիք։ Զաան զի Ցովհաննէս
մկրտիչ եկաւ, ոչ հաց կ'ուտէր և ոչ գինի կը խմէր,
34 և կ'ըսէք, Դեւ կայ ի նմա։ Որդին մարդոյ եկաւ,
կ'ուտէ և կը խմէ, և կ'ըսէք, Ահա այր կերող և
արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց։
35 Եւ իմաստութիւնն արդարացաւ իւր բոլոր որ-
դիներէն։
36 Փարիսեցիներէն ոմն կ'աղաչէր զնա իրեն հետ
հաց ուտել. և նա մտաւ փարիսեցւոյն տունը և
37 նստաւ սեղան։ Եւ ահա մեղաւոր կին մը կար
քաղաքին մէջ, և երբ իմացաւ Թէ նա սեղան
նստած էր փարիսեցւոյն տունը, բերաւ շիշ մը
38 անուշահոտ իւղ, Եւ եռնի կոտնին անոր ոտուը-
ներուն քով կեցած կուլար, և արտասուօք
սկսաւ անոր ոտուրները Թրջել, և կը սրբէր

*Ոմանք, Եւ Տէրը ըսաւ, Ուստի

գլխուն մազերովը, և կը համբուրէր անոր ոտուը-
39 ները, և իւղով կ'օծէր։ Երբ սեռաւ փարիսե-
ցին որ հրաւիրած էր զնա, կ'ըսէր իւր մտքին
մէջ, Եթէ մարգարէ էր սա, պիտի գիտնար Թէ
ով և որպիսի կին է որ կը դպչի անոր, քանզի
40 մեղաւոր է։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և
ըսաւ անոր, Սիմոն, բան մը ունիմ ըսել քեզ։
41 Եւ նա ըսաւ, Ըսէ, վարդապետ։ Ե՛ ըսաւ, Փո-
խատու մը ունէր երկու պարտատեր, մին հինգ
հարիւր դահեկան պարտք ունէր, և միսը՝ յի-
42 սուն։ Եւ որովհետև հատուցանելու [արդեօք]
չունէին, երկոցունց ևս ներեց։ Հիմա ըսէ,
43 անոնցմէ ո՞րն աւելի պիտի սիրէ զնա։ Պատասխան
տուաւ Սիմոն և ըսաւ, Ինձ այնպէս կը Թուի Թէ
որու որ շատ ներեց։ Եւ նա ըսաւ անոր, Ուղիղ
44 դատեցիր։ Եւ դառնալով դէպ ի կինն ըսաւ Սի-
մոնի, Կը տեսնե՞ս այս կինը. ես մտայ քու տունդ,
դու ոտից ջուր չտուիր, բայց սա իւր արտասուօք
45 Թրջեց ոտուրներս, և *մազերովը սրբեց։ Դու
համբոյր մը չտուիր ինձ, բայց սա, յորմէ հետէ
մտած եմ հոս չդադարեցաւ ոտուրներս համբու-
46 րելէ։ Դու չօծեցիր իմ գլուխս ձիթով, բայց սա
47 օծեց ոտուրներս անուշահոտ իւղով։ Վասն որոյ
կ'ըսեմ քեզ, Ներուած են սորա շատ մեղքերը,
քանզի շատ սիրեց. բայց որու քիչ կը ներուի,
48 քիչ կը սիրէ։ Եւ ըսաւ անոր, Քու մեղքերդ
49 ներուած են։ Եւ անոր հետ սեղան նստողներն
սկսան իրենց մէջ ըսել, Ո՞վ է սա որ մեղաց
50 իսկ Թողութիւն կու տայ։ Եւ նա ըսաւ կնոջը,
Քու հաւատքդ †փրկեց զքեզ, գնա խաղաղու-
Թեամբ։

*Ոմանք, գլխուն մազերովը
†Կամ, բժշկեց

ԳԼ. Ը

1 Եւ եղաւ որ այնուհետեւ ինք փաղաքի փաղաք
և գիւղի գիւղ պտրտելով կը քարոզէր, և կ'ա-
ւետարանէր Աստուծոյ Թագաւորութիւնը, և
2 երկոտասանք անոր հետ էին, Նաև կանայք
ոմանք որ չար ոգիներէ և հիւանդութիւններէ
բժշկուած էին, Մարիամ որ Մագդաղինացի կը
3 կոչուէր, որմէ եօթն դեւ ելած էր, Եւ Յովհաննու,
Հերովդեսի տան վերակացուին Քուզայի կնոջ, և
Շուշան և ուրիշ շատեր, որ իրենց ստացուածքն
*անոր ծառայութիւն կ'ընէին։
4 Եւ երբ մեծ բազմութիւն ժողովեցաւ և շատ
քաղաքներէ եկան անոր, առակով ըսաւ անոնց,
5 Սերմ ցանող մը ելաւ իր սերմը ցանել. և մինչ
կը ցանէր, ոմն ինկաւ ճամբուն վրայ և ոտքէ փա-
կոխուեցաւ, և երկնից թռչունները կերան զայն։
6 Եւ ուրիշն ինկաւ ապառաժի վրայ, և երբ բու-
սաւ, խակ և խոլ չորցաւ՝ վասն զի հեղ չուներ։
7 Եւ ուրիշն ինկաւ փուշերուն մէջ, և փու-
8 շերն անոր հետ բուսնելով հեղձուցին զնա։ Եւ
ուրիշն ինկաւ ազէկ հողի մէջ, և բուսնելով հա-
րիւրապատիկ պտուղ տուաւ։ Երբ այս բաները
կ'ըսէր, կ'աղաղակէր, Ով որ լսելու ականջ ունի՝
թող լսէ։
9 Եւ աշակերտները կը հարցնէին անոր ըսելով
10 թէ Ի՞նչ պիտի ըլլար այն առակը։ Եւ նա ըսաւ,
Ձեզ տրուած է գիտնալ Աստուծոյ Թագաւորու-
թեան խորհուրդները, բայց ուրիշներուն առակ-
ներով կը խօսիմ, որ տեսնելով՝ չտեսնեն, և լսե-
լով՝ չհասկնան։
11 Արդ առակն այս է. սերմն Աստուծոյ խօսքն
12 է։ Եւ ճամբուն վրայիններն անոնք են, որ կը

*Ո՛նոնց, անոնց

լսեն, և յետոյ Սատանան կու գայ, կը հանէ
խօսքն անոնց սրտին, որ մի գուցէ հաւատան
13 և փրկուին։ Եւ ապառաժին վրայիններն անոնք
են, որ երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին
խօսքը, բայց արմատ չունին, ժամանակ մը կը
հաւատան, և փորձութեան ատեն կը հեռանան։
14 Եւ փուշերուն մէջ ինկածն անոնք են, որ կը
լսեն, բայց հոգերով և հարստութեամբ և այս
կենաց ցանկութիւններով պրպտելէ կը հեղձնուն
15 և կ'ըլլան անպտուղ։ Իսկ ազէկ հողի մէջ ին-
կածն անոնք են, որ բարի և յօժար սրտիւ
լսելով կ'ընդունին խօսքը և պտուղ կու տան
համբերութեամբ։
16 Ոչ ոք վառելով ճրագ կը թագուցանէ սամանի
տակ կամ կը դնէ ընդ մահճօք, այլ կը դնէ աշ-
տանակի վրայ, որ ներս մտնողները լոյս տեսնեն։
17 Վասն զի չիք ինչ ծածուկ որ չյայտնուի, և ոչ
18 գաղտնիք՝ որ չգիտցուի և չգայ ի յայտ։ Ուստի
տեսէք թէ ինչպէս կը լսէք, քանզի ով որ ունի,
պիտի տրուի անոր, և ով որ չունի, այն ևս զոր
կը կարծէ թէ ունի՝ պիտի առնուի անկէ։
19 Եւ անոր մայրը և եղբայրները եկան անոր, և
բազմութենէն չէին կրնար երթալ անոր քով։
20 Եւ անոր լմնցուցին ըսելով, Մայրդ և եղբայր-
ներդ դուրսը կեցած են, և կ'ուզեն տեսնել
21 զքեզ։ Եւ նա պատասխան տալով ըսաւ անոնց,
Իմ մայրս և իմ եղբայրներս ասոնք են որ Աս-
տուծոյ խօսքը կը լսեն և կը կատարեն զայն։
22 Եւ եղաւ օր մը ինք նաւ մտաւ և աշա-
կերտներն ևս, և ըսաւ անոնց, Ծովակին միւս
կողմն անցնինք։ և ճամբայ ելան։ Եւ մինչ կը
նաւէին, քնացաւ նա։ և հովի մրրիկ իջաւ ծովա-
կին վրայ, և նաւը կը լցուէր, և էին ի վտանգի։
24 Եւ մօտենալով արթնցուցին զնա և ըսին, Վար-
դապետ, վարդապետ, ահա կը կորչինք։ Եւ նա

եւաւ սաստիկ հովին եւ չուրերուն խռովութիւնը, եւ հանդարտեցան, եւ եղաւ խաղաղութիւն։
25 Եւ ըսաւ անոնց, Ո՞ր է ձեր հաւատքը։ Եւ անոնք զարհուրելով զարմացան, եւ կ՚ըսէին իրարու, Ով է արդեօք սա որ հովերուն եւ չուրին իսկ հրաման կու տայ, եւ կը հնազանդին սմա։
26 Եւ նաւելով իջան *Գադարացւոց երկիրը, որ է
27 հանդէպ Գալիլեայի։ Եւ երբ ցամաք ելաւ, պատահեցաւ այն քաղաքէն մարդ մը որ շատ ժամանակէ հետէ դեւեր ունէր. եւ հանդերձ չէր հագներ, եւ ոչ տան մէջ կը բնակէր, այլ գերեզմաններու մէջ։
28 Երբ Յիսուսը տեսնելով գիմաւս աղաղակից եւ ինկաւ անոր առջեւ, եւ բարձր ձայնիւ ըսաւ, Դուն իմ հետս ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ. կ՚աղաչեմ զքեզ, մի՛ տանջեր
29 զիս։ Վասն զի հրամայեց պիղծ ոգւոյն ելլել այն մարդէն, զանգի շատ ատեն էր որ յափշտակած էր զնա, եւ կը պահուէր չղթայիւք եւ ոտնակապօք կապուած, բայց կապերը կը խորտակէր եւ
30 կը տարուէր դեւէն յանապատ։ Հարցուց անոր Յիսուս եւ ըսաւ, Ի՞նչ է անունդ։ Եւ նա ըսաւ,
31 Լեգէոն. զանգի շատ դեւեր մտած էին ի նմա։ Եւ կ՚աղաչէին զնա հրաման չընել անոնց երթալ անդունդ։ Եւ կար հոն շատ խոզերու երամակ մը
32 որ կ՚արածուէին լեռը. եւ աղաչեցին զնա հրաման տալ իրենց մտնել անոնց մէջ. եւ հրաման
33 տուաւ անոնց։ Եւ դեւերը ելլելով մարդէն, մտան խոզերուն մէջ, եւ երամակը գիմից գահճին ծո-
34 վակը եւ հեղձաւ։ Եւ խոզարածները տեսնելով ինչ որ եղաւ՝ փախան, եւ պատմեցին քաղաքը
35 եւ ագարակները։ Եւ ժողովէին ելան տեսնել ինչ որ եղած էր, եւ եկան Յիսուսի, եւ գտան այն մարդն ուսուի դեւերը ելած էին՝ հագուած, եւ ղգաս-

*Ոմանք, Գեդգեսացւոց

ուացեալ նստած առ ոտս Յիսուսի, եւ վախցան։
36 Եւ անոնք որ տեսած էին՝ պատմեցին անոնց թէ
37 ինչպէս ազատեցաւ դիւահարը։ Եւ Գադարացւոց չրջակայ տեղերուն բոլոր բազմութիւնը կ՚աղաչէր զնա, երթալ իրենցմէ, զանգի մեծ ահի բռնուած էին։ Եւ նա նաւ մտնելով դարձաւ։
38 Եւ մարդն ուսուի դեւերը ելած էին՝ կ՚աղաչէր զնա անոր հետ
39 ըլլալ, բայց Յիսուս արձակեց զնա եւ ըսաւ, Դարձիր քու տունդ, եւ պատմէ ինչ որ Աստուած ըրաւ քեզ։ Եւ նա գնաց, եւ բոլոր քաղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս ըրաւ իրեն։
40 Եւ երբ Յիսուս էտ դարձաւ, ժողովուրդն ընդունեց զնա, զանգի ամէնքը կը սպասէին անոր։
41 Եւ ահա Յայրոս անուն մարդ մը եկաւ, եւ նա իշխան էր ժողովրդեանցին. եւ իյնալով Յիսուսի
42 ոտքը կ՚աղաչէր զնա գալ իր տունը. Զանգի միամոր դուստր մը ունէր իբր երկոտասանամեայ, որ մեռնելու մօտ էր։ Եւ երբ կ՚երթար նա, բազմութիւնը կը նեղէր զնա։
43 Եւ կին մը որ էր ի տեառտեսութեան արեան երկոտասան տարիէ հետէ, եւ իր բոլոր ստացուածքը վատնած էր բժիշկներու, եւ ոչ ումեքէ
44 հնար եղած էր անոր բժշկուիլ, Մօտենալով յետուստ՝ դպաւ անոր հանդերձին փղանցին, եւ իս-
45 կոյն դադարեցաւ անոր արեան հոսումը։ Եւ Յիսուս ըսաւ, Ո՞վ էր որ դպաւ ինձ։ Երբ ամէնքը կ՚ուրանային, ըսին Պետրոս եւ որ անոր հետ էին, Վարդապետ, բազմութիւնը կը պնդէ եւ կը նեղէ
46 զքեզ, եւ կ՚ըսե՞ս թէ Ով դպաւ ինձ։ Եւ Յիսուս ըսաւ, Ոմն դպաւ ինձ, զանգի իմացայ որ զօ-
47 րութիւն ելաւ ինէ։ Երբ կինը տեսաւ թէ չծածկուեցաւ, դողալով եկաւ եւ ինկաւ անոր առջեւ, եւ պատմեց անոր բոլոր ժողովրդեան առջեւ թէ ինչ բանի համար դպած էր անոր, եւ թէ ինչ-
48 պէս բժշկուեցաւ առ ժամայն։ Եւ Յիսուս ըսաւ

անոր, ձայնելերուե, դուստր, հաւատքդ բժշկեց զքեզ, գնա խաղաղութեամբ։
49 Երբ նա դեռ կը խօսէր, մարդ մկաւ Ժողովրդապետին տունէն և ըսաւ անոր, Դուստրդ մեռաւ, այլ Ե՛ս մի՛ յոգնեցուներ վարդապետը։
50 Բայց Յիսուս երբ լսեց, պատասխան տուաւ անոր և ըսաւ, Մի՛ վախնար, միայն հաւատա, և պիտի ապրի։
51 Եւ երբ տունը մտաւ, ուրիշ մարդ չթողուց որ մտնէր, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և աղջկան հայրը և մայրը։
52 Եւ ամէնքը կուլային և կ'ողբային անոր վրայ. բայց նա ըսաւ, Մի՛ լաք, մեռած չէ նա, այլ կը
53 ննջէ։ Եւ անոնք ծաղր կ'ընէին զնա, քանզի գիտէին թէ մեռաւ։
54 Եւ նա ամէնքը դուրս հանեց լսլով բռնեց անոր ձեռքէն և բարբառեցաւ ըսելով, Մանուկ դուստր, կաց։
55 Եւ անոր հոգին դարձաւ, և կանգնեցաւ վաղվաղակի։ Եւ Յիսուս հրամայեց տալ անոր ուտել։
56 Եւ անոր ծնողքն ապշած մնացին։ Եւ նա պատուիրեց անոնց մարդու չըսել ինչ որ եղաւ։

Գլ. Թ

1 Եւ կոչելով երկոտասան *աշակերտներն իրեն՝ տուաւ անոնց զօրութիւն և իշխանութիւն բոլոր
2 դեւերուն վրայ և բժշկել հիւանդութիւններ։ Եւ զրկեց զանոնք քարոզել Աստուծոյ թագաւորութիւնը
3 և բժշկել ախտաժէտները։ Եւ ըսաւ անոնց, բան մը մի՛ առնուք ի ճանապարհ, մի՛ գաւազան և մի՛ պարկ, մի՛ հաց և մի՛ արծաթ, և ոչ
4 երկուն հանդերձ ունենաք։ Եւ որ տունն մտնէք,
5 մնացէք անկէ և երթաք անկէ։ Եւ անոնք որ չեն ընդունիր զձեզ, երբ կ'երթաք այն քաղաքէն,

*Ուրիշ, առաքեալները

ձեր ոտից փոշին անգամ թօթափեցէք անոնց
6 դէմ ի վկայութիւն։ Եւ անոնք ելան և գիւղ գիւղ կը պտըտէին, և կը քարոզէին աւետարանը և բժշկութիւններ կը կատարէին ամէն տեղ։
7 Եւ Հերովդէս չորրորդապետ լսելով բոլոր գործերը, տարակուսանաց մէջ էր, քանզի ոմանք
8 ըսած էին թէ Յովհաննէս յարութիւն առաւ մեռելներէն, և ոմանք՝ թէ Եղիա յայտնուեցաւ, և ուրիշները՝ թէ Առաջին մարգարէներէն մին
9 յարեաւ։ Եւ Հերովդէս ըսաւ, ԶՅովհաննէս ես գլխատեցի, իսկ սա ո՞վ պիտի ըլլայ, որոյ վրայ այսպիսի բաներ կը լսեմ։ Եւ կ'ուզէր տեսանել զնա։
10 Եւ առաքեալները դարձան և պատմեցին անոր ինչ որ ըրին։ Եւ առաւ զանոնք, և առանձին անապատ տեղ խոյս տուաւ քաղաքի մը մօտ
11 որոյ անուն էր Բեթսայիդա։ Եւ ժողովուրդները երբ իմացան, գնացին անոր հետէն, և զանոնք ընդունելով կը խօսէր անոնց Աստուծոյ թագաւորութեան վրայ, և զանոնք որ բժշկութեան կարօտ էին՝ կը բժշկէր։
12 Եւ երբ օրը սկսաւ երեկոյանալ, երկոտասանք եկան և ըսին անոր, Արձակէ ժողովուրդները, որ երթան չորակայ գիւղերը և ագարակները, իջևանին և կերակուր գտնեն, քանզի հոս ա-
13 նապատ տեղ ենք։ Ըսաւ անոնց, Դուք տուէք ատոնց ուտել։ Եւ անոնք ըսին, Մենք չունինք աւելի քան հինգ նկանակ և երկու ձուկ, բայց եթէ երթանք բոլոր այդ ժողովրդեան համար
14 կերակուր գնենք։ Քանզի էին արք իբրև հինգ հազար։ Եւ ըսաւ աշակերտներուն, Նստուցէք
15 ատոնք դաս դաս, յիսուն յիսուն։ Եւ այնպես
16 ըրին և նստուցին ամէնքը։ Եւ առնելով այն հինգ նկանակը և երկու ձուկը, և նայելով դէպ յերկինս, օրհնեց զանոնք և կարեց, և կուտար աշակերտներուն դնել ժողովրդեան առջև։ Եւ
17

ամէնքը կերան և յագեցան, և աւելցած կո-
տորները վերցուցին երկոտասան կողով։
18 Եւ եղաւ որ երբ նա առանձին աղօթք կ'ընէր,
աշակերտներն անոր հետ էին, և հարցուց անոնց
ըսելով, Ժողովուրդներն ինծի համար ո՞վ կ'ըսեն
19 թէ եմ։ Եւ անոնք պատասխան տալով ըսին,
Ոմանք՝ Յովհաննէս մկրտիչ, և ուրիշներ՝ Եղիա,
և այլք՝ թէ Առաջին մարգարէներէն մին յարու-
20 թիւն առած է։ Եւ նա ըսաւ անոնց, Իսկ դուք
ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ։ Պատասխան
տուաւ Պետրոս և ըսաւ, Աստուծոյ Քրիստոսը։
21 Եւ նա խստիւ պատուիրեց անոնց մարդու չըսել
22 զայս, եւ ըսաւ թէ Պարտ է Որդւոյ մարդոյ շատ
չարչարանք կրել, և մերժուիլ ծերերէն և քա-
հանայապետներէն և դպիրներէն և սպանուիլ,
23 և երրորդ օրը յառնել։ Եւ ամենուն կ'ըսէր, Եթէ
ոք կ'ուզէ իմ ետևէս գալ, թող ուրանայ իւր
անձը, և վերցունէ ամէն օր իւր խաչը, և գայ
24 իմ ետևէս։ Վասն զի ով որ կ'ուզէ ապրեցունել
իւր անձը՝ պիտի կորսուանի զնա. և ով որ ին-
ծի համար կորսուանի իւր անձը՝ պիտի ապրեցու-
25 նէ զնա։ Ի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ բո-
լոր աշխարհ շահի, և իւր անձը կորսուանի կամ
26 տուժէ։ Վասն զի ով որ ամօթ համարի զիս և
զիս և իմ խօսքերս, Որդին մարդոյ ևս ամօթ
պիտի համարի զնա երբ գայ իւր և Հօրը
27 և սուրբ հրեշտակներուն փառօք։ Բայց ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ, որ հոս կեցողներէն կան ոմանք որ
պիտի չճաշակեն զմահ, մինչև տեսնեն Աստուծոյ
Թագաւորութիւնը։
28 Եւ եղաւ որ այս խօսքերէն գրեթէ ութ օր ետքը
առնելով զՊետրոս և զՅովհաննէս և զՅակոբոս՝
29 լեռը ելաւ աղօթք ընել։ Եւ երբ աղօթք կ'ընէր,
անոր երեսին տեսիլն եղաւ ուրիշ կերպ, և անոր
30 հանդերձը եղաւ սպիտակ փայլուն։ Եւ ահա անոր

հետ կը խօսէին երկու մարդիկ, որ էին Մովսէս
31 և Եղիա, փառօք երեւցած, և կը խօսէին անոր
ելից վրայ զոր Հանդերձեալ էր կատարել Յերու-
32 սաղէմ։ Բայց Պետրոս և որ անոր հետ էին՝ քնով
ծանրացած էին, և երբ արթնցան, տեսան անոր
փառքը և այն երկու մարդիկը որ անոր քով կե-
33 ցած էին։ Եւ եղաւ որ երբ անոնք զատուեցան
անոր քովէն, Պետրոս ըսաւ Յիսուսի, Վարդա-
պետ, բարւոք է մեզ հոս ըլլալ, և չնենք երեք
տաղաւար, մի քեզ, և մի Մովսէսի, և մի
34 Եղիայի։ վասն զի չէր գիտեր ինչ կը խօսէր։ Եւ
մինչ Դա այս բաները կը խօսէր, ամպ մը եկաւ և
հովանի եղաւ անոնց վրայ, և երբ ամպին տակ
35 մտան, վախցան։ Եւ ձայն եղաւ ամպէն ըսե-
36 լով, Դա է իմ սիրելի Որդիս, զաւոր լսեցէք։ Եւ
երբ այն ձայնը եղաւ, Յիսուս գտնուեցաւ միայն։
Եւ անոնք լուռ կեցան, և այն բաներէն ոչինչ
տեսան այն օրերը՝ մարդու բան չպատմեցին։
37 Եւ եղաւ որ հետևեալ օրը երբ անոնք լեռնէն
վար իջան, շատ ժողովուրդ անոր դիմացը ելաւ։
38 Եւ ահա ժողովրդէն մարդ մը աղաղակեց և ը-
սաւ, Վարդապետ, կ'աղաչեմ զքեզ, նայէ իմ
39 որդւոյս, քանզի միակը իմ է։ Եւ ահա ոգի մը
կը բռնէ զնա, և նա յանկարծ կը գոչէ, և ցնցե-
լով կը փրփրեցունէ զնա, և հազիւ կը մեկնի ան-
40 կէ՝ խորտակելով զնա։ Եւ աշակերտներուդ աղա-
41 չեցի հանել զնա և չկրցան։ Պատասխան տուաւ
Յիսուս և ըսաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ,
մինչև երբ ձեզի հետ պիտի ըլլամ և համբերեմ
42 ձեզ. բեր հոս քու որդիդ։ Եւ երբ դեռ կը մո-
տենար, դևը գետին զարկաւ զնա և սաստիկ
43 ցնցեց։ Իսկ Յիսուս սաստեց պիղծ ոգւոյն, և
44 բժշկեց տղան, և տուաւ զնա իւր հօրը։ Եւ ա-
մէնքը կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գոր-
ծերուն վրայ։

Եւ մինչ ամէնքը կը զարմանային բոլոր գործերուն վրայ զոր կ'ընէր Յիսուս, ըսաւ նա իր աշակերտներուն, Դուք այս խօսքերը դրէք ձեր ականջը, վասն զի Որդին մարդոյ պիտի մատնուի
45 մարդոց ձեռքը։ Բայց անոնք չէին խմանար այն խօսքը, և անոնցմէ ծածկուած էր որ չհասկնային, և կը վախնային այն խօսքին համար հարցընել անոր։
46 Թորհուրդ մը մտաւ անոնց մէջ թէ ո՛վ մեծ էր
47 արդեօք անոնց մէջ։ Իսկ Յիսուս անոնց սրտին խորհուրդն իմանալով, տղայ մը առաւ և իրեն
48 քով կեցուց զնա, Եւ ըսաւ անոնց, Ով որ այս տղան իմ անուանս կ'ընդունի՝ զիս կ'ընդունի. և ով որ զիս կ'ընդունի՝ կ'ընդունի զիս ղրկողը. վասն զի ով որ ձեր ամենուն մէջ փոքրիկ է, նա պիտի ըլլայ մեծ։
49 Պատասխան տուաւ Յովհաննէս և ըսաւ, վարդապետ, տեսանք մարդ մը որ քու անուանդ դևեր կը հանէր, և արգիլեցինք զնա, քանզի մեր
50 հետ չպտըտիր։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Մի՛ արգիլէք, քանզի ով որ *հակառակ չէ մեզ՝ մեր կողմէն է։
51 Եւ եղաւ որ երբ կը կատարուէին անոր ամբարձման օրերը, ինքն ևս †հաստատ որո-
52 շեց երթալու երթալ։ Եւ իր երեսին առջևէն ղրկեց պատգամաւորներ, որ երթ գնացին, մատ-
53 բացւոց մէկ գիւղը մտան անոր համար պատրաստութիւն ընել։ Եւ չընդունեցին զնա, վասն զի անոր երեսն ուղղած էր երթալ յերուսաղէմ։
54 Երբ աշակերտներն, Յակոբոս և Յովհաննէս, տեսան, ըսին, Տէր, կ'ուզե՞ս որ ըսենք, և կրակ իջնէ յերկնից և սատակէ զանոնք, ինչպես Ելիա-

*Ոմանք, հակառակ չէ ձեզ՝ ձեր
†Ուրիշ. երեսը հաստատեց

55 և եղիա, Եւ դարձաւ սաստեց անոնց ըսելով,
56 Չէք գիտեր թէ ինչ հոգւոյ եք դուք։ Վասն զի Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորսուանել, այլ փրկել։ Եւ գնացին ուրիշ գիւղ։
57 Եւ երբ կ'երթային ի ճանապարհին, մարդ մը ըսաւ անոր, Տէր, քու եեւէդ գամ ուր և երթաս։
58 Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջ ունին, և երկնից թռչունները՝ բոյն, բայց Որդին մարդոյ չունի ուր դնէ իր գլուխը։
59 Ուրիշի մի ևս ըսաւ, Ելի՛ իմ եեւէս։ Եւ նա ըսաւ, Տէր, հրաման տուր ինձ նախ երթալ թա-
60 ղել հայրս։ Յիսուս ըսաւ անոր, Թոյլ տուր մեռելոց թաղել իրենց մեռեալները, բայց դու գնա քարոզէ Աստուծոյ թագաւորութիւնը։
61 Ուրիշ մի ևս ըսաւ, Տէր, ես քու եեւէդ պիտի գամ, բայց հրաման տուր ինձ նախ հրաժա-
62 րական ողջոյն տալ անոնց որ տանս մէջ են։ Յիսուս ըսաւ անոր, Ոչ ոք որ ձեռքը մաճին վրայ կը դնէ և նայի՝ յարմար է Աստուծոյ թագաւորութեան։

Գլ. Ժ

1 Յետ այսորիկ Տէրը որոշեց այլ եւս հոթանասունն, և ղրկեց զանոնք իր առջևէն երկու երկու բոլոր քաղաքները և տեղերը ուր ինք պիտի երթար։
2 Ու ի՛նչպէս անոնց, Հունձքը բազում է՛ն, և մշակները՝ սակաւ. ուստի աղաչեցէք հնձոց Տէրոջը որ
3 մշակներ հանի իր հնձոյն։ Գնացէք. ահա ես կը
4 ղրկեմ զձեզ իբրև գառինս ի մէջ գայլոց։ Ձեր հնաբ քսակ մի՛ առնուր, և ոչ պարկ, և ոչ կօշիկներ, և ի ճանապարհին մարդու ողջոյն մի՛ տաք։

*Ոմանք լուծին

5 Եւ ո՛ր տուն մտնէք, ըսէք նախ, *Ողջոյն այս
6 տան։ Եւ եթէ կայ հոն †մարդ արժանի ողջոյնի՛, ձեր ողջոյնը պիտի հանգչի անոր վրայ, ապա թէ
7 ոչ՝ պիտի դառնայ ի ձեզ։ Եւ մնացէք այն տան մէջ, և կերէք և խմեցէք անոնցմէ, քանզի մշակն արժանի է իւր վարձուց. տուէք տուն մի՛ փոխ-
8 ուիր։ Եւ ո՛ր քաղաք մտնէք և ընդունին զձեզ,
9 ինչ որ դրուի ձեր առջև կերէք. Եւ բժշկեցէք անոր մէջ հիւանդները, և ըսէք անոնց, Աստու-
10 ծոյ թագաւորութիւնը մօտեցած է ձեզ։ Բայց ո՛ր քաղաք մտնէք և չընդունին զձեզ, ելլելով անոր
11 հրապարակներն ըսէք, Փոշին իսկ որ ձեր քաղաքէն փակած է յոտս մեր, կը թօթափենք ձեզ. միայն թէ գոյս գիտացէք որ Աստուծոյ թագաւո-
12 րութիւնը մօտեցած է ձեզ։ Կ՚ըսեմ ձեզ որ այն օրը Սոդոմի դաշտավաճառը դիւրագոյն պիտի ըլլայ
13 քան այն քաղաքին։ Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, քանզի եթէ Տիւրոսի և Սի-
դոնի մէջ եղած ըլլային այն հրաշները որ ձեր մէջ
14 եղան, ժամու ևս պրկօք պատմուքով կ՚ին՝ նըս-
15 տելով ի գետրփ և ի մոխիր։ Բայց դաստաստանին օրը Տիւրոսի և Սիդոնի դիւրագոյն պիտի ըլլայ քան ձեզ։ Եւ դուն, Կափառնայում՝, որ մինչեւ
16 յերկինս բարձրացած ես, մինչև ի դժոխս պիտի իջնես։ Ով որ կը լսէ ձեզ՝ ինձ կը լսէ. և ով որ կը մերժէ զձեզ՝ զիս կը մերժէ. և ով որ զիս կը
17 մերժէ՝ կը մերժէ զիս ղրկողը։ Եւ եօթանասուն աշխէրտները դարձան ուրա-
խութեամբ և ըսին, Տէր, քու անուանդ դեւերն
18 ևս կը հնազանդին մեզ։ Եւ ըսաւ անոնց, Կը
տեսնէի զՍատանայ փայլակի պէս յերկնից վար
19 ինկած։ Ահա իշխանութիւն կու տամ ձեզ կոխել

*Յոյն. խաղաղութիւն
†Յոյն. խաղաղութեան որդի

օձեր և կարիճներ և թշնամւոյն բոլոր զօրութիւ-
20 նը, և բան մը պիտի չվնասէ ձեզ։ Բայց դուք մի՛ ուրախանաք որ ջրդ ոգիները կը հնազանդին
ձեզ, այլ ուրախացէք որ ձեր անունները
գրուած են յերկինս։
21 Նոյն ժամուն Յիսուս ուրախացաւ հոգւով և
ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկնի
և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր ի-
մաստուններէն և գիտուններէն, և յայտնեցիր
տղայոց. այո, ով Հայր, քանզի քու առջևդ այս-
22 պէս հաճոյ եղաւ։ Ամէն բան տրուեցաւ ինձ իմ
Հօրմէս. և ոչ ոք գիտէ թէ ով է Որդին, բայց
միայն Հայր, և թէ ով է Հայր, բայց միայն Որ-
դին, և նա որուն Որդին կամի յայտնել։
23 Եւ աշակերտներուն դառնալով առանձին ըսաւ,
Երանի աչաց որ կը տեսնեն ինչ որ դուք կը տես-
24 նէք. Քանզի կ՚ըսեմ ձեզ, Թէ շատ մարգարէներ
և թագաւորներ ցանկացան տեսնել ինչ որ դուք
կը տեսնէք՝ և չտեսան, և լսել ինչ որ դուք կը
լսէք՝ և չլսեցին։
25 Եւ ահա օրինական մը ելաւ, և փորձելով զնա
ըսաւ, Վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական
26 կեանքը ժառանգեմ։ Եւ նա ըսաւ անոր, Օրինաց
27 մէջ ի՞նչ գրուած է. ինչպէս կը կարդաս։ Նա պատասխան տուաւ և ըսաւ, Քու Տէր Աստուածդ
սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ
և քու բոլոր զօրութեամբդ և քու բոլոր
մտածութ, և քու անձիդ պէս։ Եւ նա ը-
28 սաւ անոր, Ուղիղ պատասխան տուիր. զայդ ըրէ
29 և պիտի ապրիս։ Իսկ նա կամելով արդարացնել
զինք՝ ըսաւ Յիսուսի, Բայց ո՞վ է իմ ընկեր։
30 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ, Մարդ մը
Երուսաղէմէ յԵրիքով կ՚իջնէր, և ինկաւ է չէ-
աւազակաց, որ մերկացուցին զնա և վիրաւորե-
31 լով թողլն զնա կիսամահ և գնացին։ Եւ պատա-

հեցաւ որ քահանայ մը այն ճամբէն կ'իջնէր, և
32 տեսնելով դնա՝ անդին կողմէն անցաւ։ Նոյնպէս
և Ղեւտացի մը այն տեղ հասնելով դնաց և տե-
33 սաւ, և անդին կողմէն անցաւ։ Բայց Սամարացի
մը որ կը ճանապարհորդէր՝ եկաւ անոր քովՀ, և
34 տեսնելով դնա գթաց, եւ մօտեցաւ տաւեց անոր
վէրքը՝ վրան ձէթ և գինի թափելով, և իր
գրաստուն վրայ դնելով տարաւ դնա պանդոկ
35 մը, և հոգ տարաւ անոր։ Եւ հետեւեալ օրը երբ
կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց տուաւ
պանդոկապետին և ըսաւ անոր, Հոգ տար անոր,
և ինչ որ աւելի ծախք ընես, ի դարձիս կը հա-
36 տուցանեմ քեզ, Հիմա այն երեքէն որը կ'երեւ-
ւի քեզ ընկերը ըլլալ աւազակներուն չէ՞ հյ-
37 նողին։ Եւ նա ըսաւ, Նա որ ողորմութիւն ըրաւ
անոր։ Անատեն Յիսուս ըսաւ անոր, Գնա և
դու այնպես ըրէ։
38 Եւ եղաւ որ երբ անոնք կ'երթային, ինք մտաւ
գիւղ մը, և կին մը Մարթա անուն ընկալաւ դնա
39 իւր տունը։ Եւ նա ունէր քոյր մի, որուն անունն
էր Մարիամ, որ եկաւ նստաւ առ ոտս Յիսուսի
40 և կը լսէր անոր խօսքերը։ Բայց Մարթա զբաղ-
եալ էր բազում սպասու։ եկաւ և ըսաւ, Տէր,
փոյթ չէ՞ քեզ որ քոյրս միայն թողուց դիս ի սպա-
սաւորութեան։ ուստի ըսէ անոր որ օգնէ ինձ։
41 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոր,
Մարթա, Մարթա, դուն կը հոգաս և բազմօք
42 զբաղեալ ես, Բայց մի ինչ պիտոյ է, և Մա-
րիամ այն բարի մասն ընտրեց, որ անկէ պիտի
չառնուի։

Գլ. Ժ.Ա

1 Եւ եղաւ որ տեղ մը աղօթք կ'ընէր, և երբ դա-
դարեցաւ, աշակերտներէն մին ըսաւ անոր, Տէր,

աղօթք ընել սորվեցուր մեզ, ինչպես Յովհաննէս
2 սորվեցուց իւր աշակերտներուն։ Եւ ըսաւ անոնց,
Երբ աղօթք կ'ընէք՝ ըսէք։ Ով Հայր *մեր որ
յերկինս ես՝ քու անունդ սուրբ ըլլայ։ քու թա-
գաւորութիւնդ գայ։ *քու կամքդ ըլլայ, ինչպես
3 յերկինս՝ նոյնպես և յերկրի։ Մեր հանապազորդ
4 հացը տուր մեզ օր ըստ օրէ։ Եւ ներէ մեզ մեր
մեղքերը, քանզի մենք ևս կը ներենք ամենուն
որ մեզի պարտական են։ և զմեզ փորձութեան
մի՛ տաներ, *այլ փրկէ զմեզ չարէն։
5 Եւ ըսաւ անոնց, Ձեզնէ ո՞վ է որ բարեկամ մը
ունենայ, և երթայ առ նա ի մէջ գիշերի և ըսէ
անոր, Բարեկամ, երկը նկանակ փոխ տուր
6 ինձ, քանզի բարեկամս եկաւ առ իս ճամբէ, և
7 բան մը չունիմ անոր առնէ դնելու։ Եւ նա ներ-
սէն պատասխան տայ և ըսէ, Ձիս մի յոգնեցու-
ներ. արդէն դուռը գոցուած է, և մանկունքս
ինծի հետ անկողնի մէջ են, չեմ կրնար ելլել և
8 հաց տալ քեզ։ Կ'ըսեմ ձեզ, Թէև բարեկամու-
թեան համար չելլէ տայ անոր, սակայն անոր
թեան համար չելլէ տայ անոր, սակայն անոր
թախանձանաց համար պիտի ելլէ, և ինչ որ պի-
9 տոյ է՝ տայ անոր։ Եւ ես կ'ըսեմ ձեզ, Խընդ-
րեցէք և պիտի տրուի ձեզ, փնտռեցէք և պիտի
գտնէք, բաղխեցէք և պիտի բացուի ձեզ։
10 Վասն զի ամէնը որ կը խնդրէ՝ կ'առնու, և
ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ կը բաղ-
11 խէ՝ պիտի բացուի անոր։ Ձեզնէ ո՞վ է այն
հայրը որմէ որդին հաց խնդրէ, միթէ քար կու
տայ անոր։ կամ եթէ ձուկ խնդրէ, միթէ փոխա-
նակ ձկան օձ կու տայ անոր։ Եւ կամ եթէ ձու
12 նակ ձկան օձ կու տայ անոր։ Եւ կամ եթէ ձու
13 խնդրէ, միթէ կարի՞ճ կու տայ անոր։ Ուստի ե-
թէ դուք որ չար եք՝ ձեր զաւակներուն բարի
պարգեւներ տալ գիտէք, որչափ ևս առաւել

*Ոմանք լրանէն

չէը հայրը պիտի տայ յերկինից Սուրբ Հոգին առնոց որ անկէ կը խնդրեն։

14 Եւ դէմ մը կը հաներ, և նա համր էր. և եղաւ որ երբ դևը ելաւ, համրը խօսեցաւ, և ժողո-
15 վուրդները զարմացան։ Բայց անոնցմէ ոմանք ըսին, Դևերուն Բէեղզեբուղ իշխանաւ կը հանէ
16 դա դևերը։ Եւ այլք փորձելով յերկինից նշան կը
17 խնդրէին անկէ։ Բայց նա գիտնալով անոնց խոր-հուրդներն ըսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնեալ կ'աւերի, և տուն *իրեն
18 դէմ բաժնուած կը կործանի։ Ապա եթէ Սատա-նան իրեն դէմ բաժնուած է, անոր թագաւո-րութիւնն ինչպէս պիտի կենայ. վասն զի կ'ըսէք
19 Թէ Բէեղզեբուղաւ կը հանեմ դևերը, իսկ եթէ ես Բէեղզեբուղաւ կը հանեմ դևերը, ձեր որդիք ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր
20 դատաւորները. Բայց եթէ մատովն Աստուծոյ կը հանեմ ես դևերը, ուրեմն Աստուծոյ թագա-
21 ւորութիւնը հասած է ձեր վրայ։ Երբ հզօր մը սպառազինեալ կը պահէ իր բակը, անոր բաները
22 ի խաղաղութեան կը մնան։ Բայց երբ զան նմա աւելի զօրաւորը վրայ գալով յաղթէ անոր, կ'առնու անոր սպառազինութիւնը յոր յուսա-
23 ցած էր, և անոր աւարը կը բաժնէ։ Ով որ իմ հետս չէ՝ հակառակ է ինձ, և ով որ ինձի հետ չժողովէ՝ կը ցրուէ։

24 Երբ պիղծ ոգին կ'ելլէ մարդէ, կը պտրտի անջուր տեղեր, և կը փնտռէ հանգիստ. և երբ չգտնէր, կ'ըսէ, Դառնամ նորէն տունս ուրտի-
25 ելայ. Եւ կու գայ կը գտնէ զայն մաքրուած և
26 յարդարուած։ Անատեն կ'երթայ և կ'առնու իրեն հետ եօթն ուրիշ ոգի չար քան զինքն, և մտնե-լով հոն կը բնակին, և այն մարդուն վերջինը կ'ըլլայ չար քան զառաջինն։

*Յոյն. տան

27 Եւ եղաւ որ երբ նա այս բաները կը խօսէր, ժողովրդէն կին մը ձայնը վերցուց և ըսաւ անոր, Երանի որովայնին որ կրեց զքեզ, և սաեանց՝ որ
28 դիեցուցին զքեզ։ Եւ նա ըսաւ, Մանաւանդ Թէ երանի անոնց որ Աստուծոյ խօսքը կը լսեն և կը պահեն։

29 Եւ երբ ժողովուրդները ժեռ վրայ կը դիզուէին, սկսաւ ըսել, Այս ազգը չար է. Նշան կը խնդրէ, և ոչ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն
30 Յովնան մարգարէին նշանը։ Քանի ինչպէս Յով-նան նշան եղաւ Նինուէացւոց, այնպէս Որդին
31 մարդոյ պիտի ըլլայ այս ազգին։ Հարաւի թագու-հին դատաստանին ժամը պիտի կրկէ այս ազգին մար-դոց դէմ, և պիտի դատապարտէ զնոսա, քանզի երկրի ծայրերէն եկաւ լսել Սողոմոնի իմաստու-թիւնը, և ահա քան զՍողոմոն մեծ կայ հոս։
32 Նինուէի մարդիկը դատաստանին ժամը պիտի կրկեն այս ազգին դէմ, և պիտի դատապարտեն զայ, քանզի զղջացին Յովնանու քարոզութեամբ, և ահա քան զՅովնան մեծ կայ հոս։

33 Ոչ ոք կը վառէ ճրագ և կը դնէ ծածուկ տեղ, և ոչ ընդ գրուանաւ, այլ աչառնակի վրայ, որ
34 ներս մտնողները լոյս տեսնեն։ Մարմնոյ ճրագն է աչքը. ուստի երբ աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ. բայց երբ ժլտ
35 վատ է, մարմինդ ևս մութ կ'ըլլայ։ Ուրեմն զգույշ եղիր, որ լոյսը որ ի քեզ է՝ խաւար չըլ-
36 լայ։ Արդ եթէ բոլոր մարմինդ լուսաւոր է և մութ մաս չունի, բոլորը լուսաւոր կ'ըլլայ, ինչ-պէս երբ ճրագ մը կը լուսաւորէ զքեզ իր պայ-ծառութեամբ։

37 Եւ երբ ասոնք կը խօսէր, փարիսեցի մը կ'աղա-չէր զնա որ ճաշ ուտէր անոր քով. և նա մտաւ
38 բազմեցաւ։ Իսկ փարիսեցին երբ տեսաւ, զարմա-ցաւ որ նախ չլուացուեցաւ յառաջ քան զճաշն։

39 Եւ Տէրը ըսաւ անոր, Հիմա դուք, փարիսեցիք,
բաժակին և պնակին դուրսը կը մաքրէք, և ձեր
ներսը լի է յափշտակութեամբ և չարութեամբ։
40 Ցիմարներ, մի՞ ապաքէն նա որ արտաքինն ըրաւ՝
41 ըրաւ նաև ներքինը։ Սակայն այն որ ներքին է
տուէք ողորմութիւն, և ահա ամէնայն ինչ մա-
42 քուր է ձեզ։ Բայց վայ ձեզ փարիսեցւոց, որ կը
տասանորդէք դանդաղն և զիխդինայ և ամէն
բանջար, և զանց կ'ընէք իրաւունքը և Աստուծոյ
սէրը. ասոնք պարտ էր ընել և զանոնք չձողուլ։
43 Վայ ձեզ փարիսեցւոց, որ կը սիրէք ժողովրդա-
նցներու մէջ առաջին աթոռները, և չուկանե-
44 րու մէջ ողջոյնները։ Վայ ձեզ, կեղծաւոր դպիր-
ներ և փարիսեցիներ, որ նման եք անյայտ գե-
րեզմաններու, որոց վրայ մարդիկ կը քալեն և
չեն գիտեր։
45 Եւ օրինականներէն մին պատասխան տալով ը-
սաւ անոր, Վարդապետ, այդ խօսքերն ըսելով
46 մեզ ևս կը Թշնամանես։ Եւ նա ըսաւ, Ձեզ ևս
վայ օրինականացդ, որ դժուարակիր բեռներ կը
բառնաք մարդոց, և դուք ձեր մատանց միովը
47 չէք դպիր այն բեռանց։ Վայ ձեզ որ մարգարէ-
ներուն գերեզմանները կը շինէք, և ձեր հայրերն
48 սպաննեցին զանոնք։ Ուրեմն կը վկայէք և կա-
մակից էք ձեր հարց գործերուն. քանզի անոնք
սպաննեցին զնոսա, և դուք անոնց գերեզման-
49 ները կը շինէք։ Վասն որոյ ըսաւ Աստուծոյ ի-
մաստութիւնը, Պիտի ղրկեմ անոնց մարգարէներ
և առաքեալներ, և անոնցմէ որը պիտի սպաննեն
50 և որը հալածեն. Որպէս զի բոլոր մարդարէնե-
րուն արիւնը որ աշխարհի սկիզբէն հեւած թափ-
51 ուած է պահանջուի այս ազգէն, Աբելի արիւնէն
մինչև յարիւնն Զաքարիայի, որ սպաննուեցաւ
ի մէջ սեղանոյն և տաճարին. ճշմարիտ կ'ըսեմ
52 ձեզ, Պիտի պահանջուի այս ազգէն վայ ձեզ

օրինականացդ, որ վերցուցիք գիտութեան բա-
նալին. դուք չմտաք, և մտնողներն ևս արգե-
լեցիք։
53 Եւ երբ այս բաները կ'ըսէր անոնց, գրիչները
և փարիսեցիները սկսան դարձել, և շատ բաներ
54 բռնի վրայ հարց և փորձ ընել ինքն։ Եւ դարան
պատրաստելով անոր, կը խնդրէին բան որսալ
անոր բերնէն, որպէս զի ամբաստանութիւն ը-
նեն անոր վրայ։

ԳԼ. ԺԲ

1 Այս միջոցին երբ բիւրաւոր ժողովուրդներ ժո-
ղովեցան անոր վրայ մինչև զիրար կոխել, սկսաւ
ըսել իր աշակերտներուն, Նախ զգոյշ պահեցէք
զձեզ փարիսեցւոց խմորէն, որ է կեղծաւորու-
2 թիւն։ Վասն զի չկայ ծածուկ որ չյայտնուի, և
3 գաղտնի որ չգիտցուի. Ուստի ինչ որ ըսիք ի
խաւարի պիտի լսուի ի լոյս. և ինչ որ խօսեցաք
յականջ ներքին սենեակներու մէջ պիտի քա-
4 րոզուի տանեաց վրայ։ Բայց կ'ըսեմ ձեզ, իմ
բարեկամներուս, Մի՛ վախնաք անոնցմէ որ կը
սպանանեն զմարմին, և այնուհետև կարողութիւն
5 չունին աւելի բան ընել։ Այլ ցուցնեմ ձեզ Թէ
որմէ պիտի վախնաք. վախցէք անկէ որ յետ
սպանանելոյ ունի իշխանութիւն նետելու ի գեհ-
6 եան. այո, կ'ըսեմ ձեզ, Անկէ վախցէք։ Ո՞չ ա-
պաքէն հինգ ճնճղուկ երկու դանկի կը վաճառին,
և անոնցմէ մին մոռցուած չէ Աստուծոյ առջև։
7 Բայց ձեր գլխուն բոլոր մազերն անգամ համ-
րուած են. ուրեմն մի՛ վախնաք, Ձեզի լաւ էք
8 դուք քան զբազում ճնճղուկս։ Եւ կ'ըսեմ ձեզ,
Ամէնը որ ինձ կը դաւանի մարդոց առջև, Որդին
մարդոյ ևս պիտի դաւանի զնա Աստուծոյ հրեշ-
9 տակներուն առջև. Բայց ով որ կ'ուրանայ զիս

մարդոց առջև, ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջև։ Եւ ամէնը որ բան կ'ըսէ Որդւոյ մարդոյ դէմ, պիտի ներուի անոր, բայց ով որ հայհոյութիւն կ'ընէ Հոգւոյն Սրբոյ դէմ, պիտի չներուի անոր։ Եւ երբ տանին զձեզ ժողովրդանոցները և իշխանութիւններու և պետութիւններու առջև, մի՛ հոգաք թէ ինչպես կամ ինչ պատասխան պիտի տաք, կամ ինչ պիտի ըսէք. վասն զի Հոգին Սուրբ պիտի սորվեցնէ ձեզ նոյն ժամուն ինչ որ պարտ է խօսիլ։

Ժողովուրդէն մարդ մը ըսաւ անոր, Վարդապետ, ըսէ եղբօրս բաժնել ինծի հետ ժառանգութիւնը։ Եւ նա ըսաւ անոր, Այր դու, ո՞վ կացուց զիս դատաւոր կամ բաժանարար ձեր վրայ։ Եւ ըսաւ անոնց, Ցեսէք և զգուշացէք ամէն տեսակ ագահութենէ. քանի մարդուս ստացուածներուն առատութենէն կեանքը չէ անոր կեանքը։ Եւ առակ մը խօսեցաւ անոնց ըսելով, Հարուստ մարդու մը արտերն առատ բերք տուին։ Եւ նա կը խորհէր ինքնիրեն և կ'ըսէր, Ի՞նչ ընեմ, վասն զի չունիմ ուր ժողովեմ բերքս։ Եւ ըսաւ, Զայս ընեմ. քակեմ չանարաններս և աւելի մեծ շինեմ, և հոն ժողովեմ բոլոր բերքս և բարիքս։ Եւ ըսեմ անձիս, Անձն, ունիս բազում բարիս չա տարիներու համար ժողոված. հանգիր, կեր, խմէ և ուրախ լեր։ Բայց Աստուած ըսաւ անոր, Անմիտ, այս գիշեր հոգիդ պիտի պահանջուի քեզմէ, ուստի այն բաները զորս պատրաստեցիր՝ որո՞ւ պիտի ըլլան։ Այսպէս է նա որ իր անձին համար գանձ կը դիզէ, և չհարստանար յԱստուած։

Եւ ըսաւ աշակերտներուն, Վասն որոյ կ'ըսեմ ձեզ, Մի՛ հոգաք ձեր ոգւոյն համար, թէ ինչ ուտէք, և ոչ մարմնոյն համար՝ թէ ինչ հագնիք. ոգին առաւել է քան զկերակուր, և մարմինն քան զհանդերձ։ Նայեցէք ագռաւներուն, որ ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն, որ ոչ չտեմարան ունին և ոչ համբարանոց, և Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՛րչափ աւելի լաւ էք քան զթռչունս։ Եւ ձեզմէ ո՞վ հոգալով կրնայ կանգուն մը յաւելուլ իւր հասակին վրայ։ Իսկ եթէ ի փոքուն չէք կարող, ուրիշ բաներու համար ինչո՞ւ կը հոգաք։ Նայեցէք շուշաններուն, ինչպես կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ կը մանեն, բայց կ'ըսեմ ձեզ որ Սողոմոն անգամ իւր բոլոր փառաւորութեան մէջ չհագաւ անոնց մէկն պէս։ Ուստի եթէ խոտ որ այսօր դաշտի մէջ է և վաղիւ ի հնոց կը նետուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, ո՛րչափ եւս աւելի զձեզ, Թերահաւատք։ Ուստի դուք մի՛ խնդրէք թէ ինչ պիտի ուտէք և ինչ պիտի խմէք, և մի՛ չիմարիք. վասն զի աշխարհին ազգերը կը խնդրեն այդ բոլոր բաները. և ձեր Հայրը գիտէ թէ այդ բաները պիտոյ են ձեզ։ Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք, և այդ բոլոր բաները պիտի տրուին ձեզ։ Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, քանզի ձեր Հայրը հաճեցաւ տալ ձեզ թագաւորութիւնը։ Վաճառեցէք ձեր ստացուածը և տուէք ողորմութիւն, և պատրաստեցէք ձեզ չկնանալու քսակներ, և գանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող կը մտանէ և ոչ ցեց կ'ապականէ. Քանզի ուր է ձեր գանձը, ձեր սիրտն ևս հոն պիտի ըլլան։ Ձեր մէջք գօտեւորած ըլլան, և ճրագները վառած. Եւ դուք նման այն մարդոց որ կը սպասեն իրենց տիրոջը, թէ երբ պիտի դառնայ ի հարսանեաց. որ երբ գայ և բաղխէ դրան, երթ տերը գայ, գանձ արթուն. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ գօտին պիտի կապէ և նստուցանէ զանոնք սեղան, և առաջ անցնելով սպա-

38 սաւորութիւն պիտի ընէ անոնց։ Եւ եթէ ՚ի՛ր-
ուսան երկրորդ պահուն գայ կամ երրորդ պահուն
գայ և գտնէ այնպես, երանելի են այն ծառա-
39 ները։ Բայց զայս գիտցէք, որ եթէ տանուտ-
աերը գիտնար թէ որ ժամ կու գայ գողը, ար-
թնուն կը կենար և չէր թողուր ծակել իր տու-
40 նը։ Ուրեմն դուք ևս պատրաստ կեցէք, քանի
որ դուն մարդոյ կու գայ ի ժամու յորում չէք
կարծեր։
41 Եւ Պետրոս բսաւ անոր, Տէր, այդ առակը կ՚ը-
42 սես մե՞զ թէ ամենուն։ Եւ Տէրը բսաւ, Ուրեմն
ո՞վ է այն հաւատարիմ և խելամուտն ծառան,
որը տէրը պիտի դնէ իւր գերդաստանին վրայ,
43 որ առանին ժամոյ կերակուր տայ։ Երանի է այն
ծառային, որը տէրը, երբ գայ, այնպէս գըտ-
44 գտնէ ձշմարիտ կ՚ըսեմ ձեզ, որ իւր բոլոր ընչից
45 վրայ պիտի կեցունէ զնա։ Իսկ եթէ այն ծառան
ըսէ իւր սրտին մէջ, Տէրս կը յապնայ գալ։ և
սկսի ծեծել ծառաները և աղախինները, և ու-
46 տել և ըմպել և արբենալ, Այն ծառային տէրը
պիտի գայ ոչ՚ակնկ օր յորում չսպասեր, և ոչ-
ակնկ ժամ յորում չգիտեր, և պիտի կտրէ զնա
ընդ մէջ, և դնէ անոր բաժինն անհաւատարիմ-
47 ներուս հետ։ Եւ այն ծառան որ իւր տիրոջը կամ-
քը գիտէ և չպատրաստուիր, և ոչ ի գործ կը
48 դնէ անոր կամքը, շատ ծեծ պիտի ուտէ։ Բայց
այն որ չգիտեր և ծեծի արժանի բան մը կ՚ընէ,
քիչ ծեծ պիտի ուտէ։ որովհետև շատ տրուեցաւ,
շատ պիտի խնդրուի անկէ, և որուն աւելի
յանձնուեցաւ, նա աւելի պիտի պահանջուի
անկէ։
49 Ես եկայ արկանել կրակ երկրի վրայ, և ի՞նչ
50 կ՚ուզեմ եթէ արդէն բորբոքած է։ Բայց մկըր-
տութիւն մը ունիմ մկրտուելու, և ի՞նչպես կը
51 տագնապիմ մինչև կատարուի։ Կը կարծէք թէ

ես երկրի վրայ խաղաղութի՚ւն տալու եկայ։ կ՚ը-
52 սեմ ձեզ, Ոչ, այլ բաժանումն։ Քանզի այսուհե-
տեւ մի տան մէջ հինգը պիտի բլան բաժանուել,
երեքն՝ երկուսէն, և երկուքն՝ երեքէն։
53 Հայրը պիտի բաժնուի յորդւոյն, և որդին հօր-
մէն, մայրը՝ դստերէն, և դուռտրը՝ մօրմէն, կե-
սուրը՝ հարսէն, և հարսը՝ իւր կեսրէնն։
54 Եւ բսաւ ժողովուրդներուն, Երբ արեւմտից
կողմանէ ամպ ելած կը տեսնէք, իսկոյն կ՚ըսէք
55 թէ Անձրեւ պիտի գայ, և այնպես կ՚ըլլայ։ Եւ
երբ հարաւային հովը կը փչէ, կ՚ըսէք թէ Տաք
56 պիտի ըլլայ, և կ՚ըլլայ այնպես։ Կեղծաւորներ,
երկրի և երկնից երեսը քննել գիտէք, իսկ այս
57 ժամանակին ի՞նչպես չէք քններ։ Եւ ընդ՚ինք դուք
58 ձենէն չէք դատեր զիրաւն, երբ ոսոխդ հետ
կ՚երթաս առ իշխանն, ճամբան ջանա զերծանել
անկէ, գուցէ ձգէ զքեզ դատաւորին առջեւ, և
դատաւորը մատնէ զքեզ դահճի, և դահիճը դնէ
59 ի բանտ։ կ՚ըսեմ քեզ, Բնաւ պիտի չելլես անկէ
մինչև հատուցանես վերջին լուման։

ԳԼ. ԺԳ

1 Եւ սոյնիսկ անատեն մեռ գանուելով պատմեցին
անոր Գալիլացւոց վրայ, որոց արիւնը Պիղատոս
2 խառնեց անոնց զոհերուն հետ։ Եւ ՚ի՛նուս պա-
տասխան տալով ըսաւ անոնց, Կը կարծէ՚ք թէ
այն Գալիլեացիք քան զբոլոր Գալիլեացիս աւելի
3 մեղաւոր էին, որ այսպիսի բաներ կրեցին։ կ՚ըսեմ
ձեզ, Ոչ։ այլ եթէ չապաշխարէք, դուք ամենես-
4 քեան նոյնպես պիտի կորնչիք։ կամ թէ այն
ութեւտասն հոգիք որոց վրայ ինկաւ Սելոյամի
մէջ աշտարակը և սպանեց զանոնք, կը կարծէ՚ք
թէ անոնք աւելի յանցաւոր էին քան զամենեսին
5 որ կը բնակին Երուսաղէմ։ կ՚ըսեմ ձեզ, Ոչ։

այլ ևթէ չասալխարէք, ամենեքեան նոյնպէս պիտի կորնչիք։
6 Նաև սա առակին ըսաւ. Մարդ մը իւր այգւոյն մէջ անկած էր Թզենի մը, և եկաւ պտուղ խնդրել
7 անկէ և չգտաւ։ Ուստի ըսաւ այգեպանին, Ահա երեք տարի է որ կու գամ այդ Թզենւոյն վրայ խնդրել պտուղ, և չեմ գտներ. կարէ զայն, ընդ-
8 դէ՞ր խափանէ գետինը։ Նա պատասխան առաւ և ըսաւ անոր, Տէր, Թող զայս այս տարի ևս,
9 մինչև բրեմ առոր չուրջը և դնեմ աղբ, Թերևս պտուղ տայ, ապա թէ ոչ գալ ՚ետքն կրնաս զայն
10 Եւ ինք Ժողովրդանոցներէն մին կը սորվեցու-
11 նէր չաբաթ օրը։ Եւ ահա կին մը կար, որ հիւանդութեան ոգի ունէր ութեւտասն տարիէ հետէ, և էր կարկամեալ և ամենևին չէր կրնար կենալ
12 ուղիղ։ Եւ Յիսուս տեսնելով զնա կոչեց և ըսաւ անոր, Կին դուս, արձակուած ես հիւանդութենէդ։
13 Եւ ձեռքը դրաւ անոր վրայ, և առժամայն ուղ-
14 ղեցաւ և կը փառաւորէր զԱստուած։ Իսկ Ժողովրդանոցին իշխանը պատասխան առաւ բարկանալով որ Յիսուս բժշկեց չաբաթ օրը, և ըսաւ Ժողովրդեան, Վեց օր կայ յորս արժան է գործել, ուստի այն օրերը եկէք բժշկուեցէք, և ոչ
15 թէ չաբաթ օրը։ Անառեն Տէրը պատասխան առաւ անոր և ըսաւ, *Կեղծաւոր, ձեներ իւրաքանչիւր ոք չարձակեր չաբաթ օրը իւր եզը
16 կամ էշը մսրէն որ տանի տայ ջուր։ Իսկ զայս, որ դուստր էր Աբրահամու, ահա Սատանան կապեց ութեւտասն ամ, չէ՞ վայելեր որ չաբաթ օր արձակուէր այն կապէն։ Եւ երբ ըսաւ զայս, անոր
17 հակառակ կեցողներուն ամենքը յամօթ եղան. և բոլոր Ժողովուրդը կ'ուրախանար այն ամէն փառաւոր գործերուն համար որ կ'ըլլային անկէ։

*Ոմն., կեղծաւորները

18 Եւ ըսաւ, Աստուծոյ Թագաւորութիւնը ի՞նչ բանի կը նմանի, և ի՞նչ բանի նմանցունեմ զնա։
19 Նման է մանանխոյ հատի, զոր մարդ մը առաւ ձեռքը իւր պարտէզը, և աճեցաւ և եղաւ ծառ մեծ, և երկնից Թռչունները բնակեցան անոր ոստերուն վրայ։
20 Դարձեալ ըսաւ, Ի՞նչ բանի նմանցունեմ Աս-
21 տուծոյ Թագաւորութիւնը։ Նման է խմորոյ զոր կին մը առաւ Թաքցոյց երեք գրիւ ալիւր մէջ մինչև ամենայն խմորեցաւ։
22 Եւ քաղաքները և գիւղերը չրջելով կը սորվե-
23 ցուներ, և դէպ յերուսաղէմ ճամբայ կ'ընէր։ Եւ մարդ մը ըսաւ անոր, Տէր, սակա՞ւ են անոնք որ պիտի փրկուին։ Եւ նա ըսաւ անոնց,
24 Ջանացէք մանել նեղ դռնէն, քանզի կ'ըսեմ ձեզ որ շա-
25 տերը պիտի խնդրեն մանել և պիտի չկրնան։ Ցետ որոյ տանուտէրը ելլէ և փակէ դուռը, և դուք սկսիք կենալ դուրսը, և բաղխել դուռը և ըսել, Տէր, Տէր, բաց մեզ. և նա պատասխան տալով պիտի ըսէ ձեզ, Չեմ ճանչնար զձեզ ուստի՛ էք։
26 Անտեն պիտի սկսիք ըսել, Մենք կերանք և խմեցինք քու առջեւդ, և դուն սորվեցուցիր մեր
27 փողոցներուն մէջ։ Եւ նա պիտի ըսէ, Կ'ըսեմ ձեզ, Չեմ ճանչնար զձեզ ուստի՛ էք, ի բաց կա-
28 ցեք ինէ բոլոր անիրաւութիւն գործողներ։ Հոն պիտի ըլլայ լալ և կրճտել ատամանց, երբ տեսնէք զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ և բոլոր մարգարէները Աստուծոյ Թագաւորութեան մէջ,
29 և զձեզ դուրս հանուած։ Եւ պիտի գան յարեւելից և յարևմտից և հիւսիսէն և հարաւէն, և պիտի բազմին Աստուծոյ Թագաւորութեան մէջ։
30 Եւ ահա կան յետինք որ պիտի ըլլան առաջինք, և կան առաջինք որ պիտի ըլլան յետին։
31 Նոյն օրը փարիսեցիներէն ոմանք եկան և ըսին անոր, Ել և գնա ասկէ, քանզի Հերովդէս կ'ուզէ

32 սպանանել զքեզ, եւ նա բաւ անոնց, Գնացէ՛ք,
ըսէ՛ք այն աղուէսուն, Ահա ես դեւեր կը հանեմ
եւ բժշկութիւնները կը կատարեմ այսօր և վաղիւ,
33 և երրորդ օրը պիտի կատարուիմ։ Սակայն պարտ
է որ այսօր և վաղիւ և միւս օր պարտիմ, վասն զի
հնար չէ որ մարգարէ մը երուսաղէմէ դուրս
34 կորնչի։ Ով երուսաղէմ, երուսաղէմ, որ մար-
գարէները կը սպաննէիր, և կը քարկոծէիր զըր-
կուածներն առ քեզ, քանի՛ցս անգամ կամեցայ
ժողովել քու մանկունդրդ, ինչպես հաւ իւր ձո՛ղ-
երը ձագերը թեւերուն տակ, և դուք չկամեցաք։
35 Ահա ձեր տունը պիտի մնայ ձեզ աւերակ. սակայն
կ՚ըսեմ ձեզ, որ այլևս պիտի չտեսնէք զիս, մինչև
գայ ժամանակ որ ըսէք, Օրհնեալ որ գայ յանուն
Տեառն։

ԳԼ. ԻԳ

1 Եւ երբ որ երբ չաբաթ օր մտաւ փարիսեցւոց
գլխաւորներէն մէկուն տունը ուտել հաց, եւ ա-
2 նոնք կը սպասէին անոր։ Եւ ահա հոն ջրդռլաւ
3 մարդ մը կար անոր առջեւ։ Եւ Յիսուս պատաս-
խան տուաւ և խօսեցաւ օրինականաց և փարի-
սեցւոց ըսելով, Արժա՞ն է չաբաթ օրը բժշկել,
4 եւ նոքա լուռ կեցան։ Եւ նա բռնեց զնա, բժըշ-
5 կեց և արձակեց։ Եւ պատասխան տալով ըսաւ
անոնց, Ձեզնէ որո՞ւ եղը կամ եզը երբ հօրը կ՚ին-
6 նայ, իսկոյն չհաներ զնա չաբաթ օրը։ Եւ այս
բաներուն չկրցան անոր պատասխան տալ։
7 Ասակ մը բաւ նաեւ այն հրաւիրուած մարդ-
կոց, երբ տեսաւ թէ ինչպես առաջին բազմոց-
8 ները կ՚ընտրէին, և ըսաւ անոնց, Երբ կը հրա-
ւիրուիս յաւէրքի ի հարսանիս, մի՛ նստիր առա-
ջին բազմոցին վրայ. գուցէ քան զքեզ աւելի
9 պատուաւոր մը հրաւիրուած ըլլայ անկէ. եւ նա

որ զքեզ և զնա հրաւիրեց, գայ ըսէ քեզ, Տե-
ղի տուր սորա, և այնուհետև սկսիս ամօթով
10 յետին տեղը բռնել։ Այլ երբ կը հրաւիրուիս,
գնա նստէ յետին տեղը, որ երբ զքեզ հրաւիրո-
ղը գայ, ըսէ քեզ, Բարեկա՛մ, ի վե՛ր մտիր։
անտանն քու բարձակիցներուդ առջեւ փառաք ըլ-
11 լայ քեզ, վասն զի ով որ իւր անձը կը բարձրա-
ցունէ պիտի խոնարհի, և ով որ իւր անձը կը
խոնարհեցունէ պիտի բարձրանայ։
12 Նաեւ հրաւիրողին զնա ըսաւ, Երբ ճաշ կամ
ընթերք կ՚ընես, մի՛ կոչեր բարեկամներդ, և ոչ
եղբայրներդ, և ոչ ազգականներդ, և ոչ հա-
րուստ դրացիներդ, գուցէ անոնք ևս փոխարէն
13 հրաւիրեն զքեզ, և հատուցում ըլլայ քեզ։ Այլ
երբ հացկերոյթ կ՚ընես, հրաւիրէ՛ աղքատներ,
14 խեղճեր, կաղեր և կոյրեր։ Եւ երանելի պիտի ըլ-
լաս, քանզի անոնք չեն կրնար փոխարէն հատու-
ցանել քեզ. վասն զի արդարներուն յարութեան
առնեն փոխարէնը պիտի հատուցուի քեզ։
15 Եւ սեղան նստողներէն մին երբ լսեց այս խօս-
ք, բաւ անոր, Երանի անոր որ Աստուծոյ թա-
16 գաւորութեան մէջ պիտի ուտէ ճաշ։ Եւ նա ը-
սաւ անոր, Մարդ մը մեծ ընթերք ըրաւ և հրա-
17 ւիրեց շատ մարդիկ։ Եւ ընթերցոց ատենը ղրկեց
իւր ծառան կոչել հրաւիրուածներն ըսելով,
Եկէ՛ք, վասն զի ահաւասիկ ամէնայն ինչ պատ-
18 րաստ է։ Եւ ամէնքը միանգամայն սկսան հրա-
ժարիլ։ Առաջինն ըսաւ անոր, Ես արտ գնեցի,
և հարկ է ելլել տեսնել զայն, կ՚աղաչեմ զքեզ
19 համարէ զիս հրաժարեալ։ Եւ միւսն ըսաւ, Հինգ
զոյգ եզանց գնեցի, և կ՚երթամ փորձել զանոնք.
20 կ՚աղաչեմ զքեզ համարէ զիս հրաժարեալ։ Եւ
միւսն ըսաւ, Կին առի, և վասն այնորիկ չեմ
21 կրնար գալ։ Եւ ծառան եկաւ և պատմեց այս
բաները տիրոջը։ Այնուհետև բարկացաւ տանուտէրը

և ըսաւ Ծառային, Փութով եկ քաղաքին հրա-
պարակները և փողոցները, և մացուր հոս աղ-
22 քատները և խեղդները և կաղերը և կոյրերը, Եւ
Ծառան ըսաւ, Տէր, եղաւ ինչ որ հրամայեցիր,
23 և տակաւին կայ տեղ։ Եւ տէրը ըսաւ Ծառային,
Ել ճամբաները և ցանգերը, և ստիպէ մտնել հա-
24 տիպէ մտնել հա, որ տունս լցուի։ Քանզի կ'ը-
սեմ ձեզ որ այն հրաւիրուածներէն և ոչ մին
պիտի ճաշակէ յիմնիբեացս։
25 Եւ չատ ժողովուրդներ կ'երթային անոր հետ.
26 և դառնալով ըսաւ անոնց, Եթէ ոք կու գայ առ
ինս, և չատեր իւր հայրը և մայրը և կինը և զա-
ւակները և եղբայրները և քոյրերը, նաև իւր
27 անձն անգամ, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ Եւ
ով որ չվերցունէր իւր խաչը և գար իմ ետևէս,
28 չկրնար իմ աշակերտս ըլլալ։ Վասն զի ձեզնէ ո՞վ
ուզելով աշտարակ մը չինել, առաջ չնստիր և
հաշուեր ծախքը, թէ կարողութիւն ունի՞ կատա-
29 րել զայն։ Մի գուցէ երբ հիմը դնէ և չկրնայ
կատարել, բոլոր տեսնողները սկսին ծաղրել
30 զինս, Եւ ըսել Թէ Այս մարդը սկսաւ չինել և
31 չկրցաւ կատարել։ Կամ Թէ ո՞ր թագաւոր երթա-
լով պատերազմել ուրիշ թագաւորի հետ, առաջ
չնստիր և խորհիր, Թէ կրնա՞յ արդեօք տասն
հազարաւ դէմ դնել անոր որ քսան հազարաւ
32 կու գայ անոր վրայ։ Ապա Թէ ոչ, մինչդեռ հե-
ռու է նա, դեսպան ղրկելով կը խնդրէ խաղա-
33 ղութիւն։ Ահա այսպէս ձեզնէ իւրաքանչիւր ոք,
եթէ չհրաժարիր իւր բոլոր ստացուածքէն, չկրնար
34 իմ աշակերտս ըլլալ։ Բարւոք է աղը, բայց եթէ
35 աղն անհամի, ինչո՞վ պիտի համեմի։ Ոչ ի հող և
ոչ յաղբ օգտակար է, այլ դուրս կը նետուին զայն։
Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորները և մեղաւորները կը մո-
2 տենային անոր լսելու համար անկէ։ Եւ փարիսե-
ցիք և դպիրք կը տրտնջէին և կ'ըսէին, Սա մե-
ղաւորները կ'ընդունի, և կ'ուտէ անոնց հետ։
3 Եւ նա խօսեցաւ անոնց այս առակն ըսելով,
4 Ձեզնէ ո՞վ է այն մարդը որ ունենայ հարիւր ոչ-
խար, և կորուսանի անոնց մին, ո՞չ ապաքէն
կը թողու անապատին մէջ իննսունն և ինը և
կ'երթայ այն կորուսեալին համար, մինչև գտնէ
5 զնա։ Եւ երբ կը գտնէ, ուրախանալով կը դնէ
6 զնա իւր ուսերուն վրայ, Եւ տուն գալով կը կոչէ
բարեկամները և դրացիները, և կ'ըսէ անոնց,
Ուրախ եղէք ինծի հետ, քանզի գտայ կորուսեալ
7 ոչխարս։ Կ'ըսեմ ձեզ որ այսպէս ուրախութիւն
պիտի ըլլայ յերկինս մի մեղաւորի համար որ կ'ա-
պաշխարէ, քան իննսունն և ինն արդարոց համար
8 որոց չէ պիտոյ ապաշխարութիւն։ Կամ Թէ ո՞վ է
այն կինը որ տասն դրամ ունենայ, և եթէ դրամ
մի կորուսանէ, ո՞չ ապաքէն կը վառէ ճրագ, և
կ'աւլէ տունը և կը փնտռէ զգուշութեամբ, մինչև
9 գտնէ։ Եւ երբ կը գտնէ, կը կոչէ բարեկամները
և դրացիները, և կ'ըսէ, Ուրախ եղէք ինծի հետ,
10 քանզի գտայ դրամս զոր կորուսի։ Այնպէս, կ'ը-
սեմ ձեզ, ուրախութիւն կ'ըլլայ հաստատոյն հրեշ-
տակներուն առջև մի մեղաւորի համար որ կ'ա-
պաշխարէ։
11 Եւ ըսաւ, Մարդ մը ունէր երկու որդի.
12 Եւ անոնց կրտսերն ըսաւ հօրը, Հայր, տուր ինծ
ստացուածէդ բաժինը որ կ'ինայ ինձ։ և նա
13 բաժնեց անոնց ինչ որ ունէր։ Եւ չատ օրեր չան-
ցան, կրտսեր որդին ժողովեց ամէնը և գնաց հե-
ռաւոր երկիր, և հոն ապրելով անառակութեամբ
14 վատնեց ինչ որ ունէր։ Եւ երբ ապառնց ամէնը,

սաստիկ սով եղաւ այն երկրին մէջ, և ինք սկսաւ
15 չքաւորել։ Եւ գնաց յարեցաւ այն երկրին քա-
ղաքացիներէն միոյն, և նա ղրկեց զնա իւր ագա-
16 րակը արածել խոզեր։ Եւ կը փափաքէր իւր փորը
լեցունել եղջերէն զոր խոզերը կ'ուտէին, և ոչ ոք
17 կու տար անոր։ Եւ ինք իրեն գալով ըսաւ, Քանի՛
վարձկանաց կան հօրս տունը հացակից, և ես հոս
18 սովամահ կը կորնչիմ։ Յառնեմ երթամ հօրս, և
ըսեմ անոր, Հայր, մեղայ յերկինս և առաջի քու,
19 Եւ այլևս արժանի չեմ կոչուիլ քու որդի։ ըրէ
20 զիս քու վարձկաններէդ միոյն պէս։ Եւ կայա-
եկաւ իւր հօրը։ և մինչդեռ հեռագոյն էր, տե-
սաւ զնա հայրը և գթաց, և վազելով ինկաւ
21 անոր պարանոցին վրայ և համբուրեց զնա։ Եւ
որդին ըսաւ անոր, Հայր, մեղայ յերկինս և ա-
ռաջի քու, և այլևս արժանի չեմ կոչուիլ քու
22 որդի։ Բայց հայրն ըսաւ իւր ծառաներուն, Հա-
նեցէք առաջին պատուհանը և հագուցէք անոր,
և մատանի դրէք անոր ձեռքը, և կօշիկներ՝ անոր
23 ոտքը։ Եւ բերէք պարարտ զուարակը, մորթեւ-
24 ցէք, և ուտենք և ուրախ ըլլանք։ Վասն զի այս
իմ որդիս մեռեալ էր և ողջացաւ, կորուսեալ
25 էր և գտնուեցաւ։ և սկսան ուրախ ըլլալ։ Եւ
անոր մեծ որդին ագարակն էր, և երբ կու գար
և մօտեցաւ տանը, լսեց նուագարաններուն և
26 պարերուն ձայնը։ Եւ իրեն կոչելով ծառաներէն
27 մին, կը հարցնէր թէ այս ինչ է։ Եւ նա ըսաւ
անոր, Եղբայրդ եկաւ, և հայրդ մորթեց պա-
րարտ զուարակը, քանզի ողջամբ ընկալաւ զնա։
28 Իսկ նա բարկացաւ և չէր ուզեր մտնել։ ուստի
29 հայրը դուրս ելլելով կ'աղաչէր զնա։ Եւ նա պա-
տասխան տալով ըսաւ հօրը, Ահա այսչափ տարի
է որ կը ծառայեմ քեզ, և ընաւ չեմայ քու խօս-
քէդ, և երբեք ուլ մը չտուիր ինձ, որ ուրախ
30 ըլլայի բարեկամներուս հետ։ Բայց երբ եկաւ քու

այդ որդիդ որ բոզերու հետ կերաւ քու ստաց-
ուածդ, անոր մորթեցիր պարարտ զուարակը։
31 Եւ նա ըսաւ անոր, Որդեակ, դուն միշտ իմ հետս
32 ես, և ինչ որ ունիմ քուկդ է։ Սակայն պարտ
էր ուրախ ըլլալ և խնդալ, քանզի այս քու եղ-
բայրդ մեռեալ էր և ողջացաւ, կորուսեալ էր
և գտնուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ իւր աշակերտներուն ևս ըսաւ, Հարուստ
մարդ մը կար, որ անտես մը ունէր, և անոր
վրայ գանգատ եղաւ անոր որպէս թէ իւր ինչքը
2 կը վատնէր։ Ուստի կանչեց զնա և ըսաւ անոր,
Ի՞նչ է այս որ կը լսեմ քեզի համար. տուր քու
անտեսութեանդ հաշիւը, քանզի չես կրնար այլ
3 ևս անտես ըլլալ։ Եւ անտէն ըսաւ իւր մտքին
մէջ, Ի՞նչ ընեմ, քանզի տէրս ինձ կ'առնու
անտեսութիւնը. *Հողագործութիւն չեմ կրնար
4 ընել՝, մուրալ կ'ամչնամ. Գիտեմ ինչ պիտի ը-
նեմ, որպէս զի երբ մերժուիմ անտեսութենէս,
5 ընդունին զիս իրենց տուներ։ Եւ իւր տէրոջը
պարտապաններէն մի առ մի կոչելով իրեն՝ ըսաւ
առաջինոյն, Դուն ո՞րչափ պարտք ունիս իմ տի-
6 րոջս։ Եւ նա ըսաւ, Հարիւր մար ձէթ։ Եւ ըսաւ
անոր, Առ գիրդ և նստէ գրէ վաղվազակի յի-
7 սուն։ Յետոյ ըսաւ միւսոյն, Եւ դուն ո՞րչափ
պարտք ունիս։ Եւ նա ըսաւ, Հարիւր քոռ ցո-
րեն։ Եւ ըսաւ անոր, Առ գիրդ և գրէ ութսուն։
8 Եւ տէրը գովեց անիրաւ անտեսը, որ խմաստու-
թեամբ ըրաւ. վասն զի այս աշխարհիս որդիքն
իրենց ցեղին մէջ խմաստնագոյն են քան զորդիս
9 լուսոյ։ Եւ ես կ'ըսեմ ձեզ, Բարեկամներ ըրէք

*Յոյն. չեմ կրնար ըրել

ձեզ անկրաւ մամոնային, որ *երբ նա պակսի,
10 ընդունին զձեզ յաւիտենական յարկերը։ Ով որ
է սակաւուն հաւատարիմ է՝ է բազմին եւս հաւա-
տարիմ է. եւ ով որ է սակաւուն անիրաւ է՝
11 է բազմին եւս անիրաւ է։ Ուստի եթէ անիրաւ
մամոնային մէջ չեղաք հաւատարիմ, ճշմարիտ
12 հարստութիւնն ով՞ պիտի հաւատայ ձեզ։ Եւ եթէ
օտարին բանին մէջ հաւատարիմ չեղաք, ո՞վ պի-
13 տի տայ ձեզ ձերը։ Ծառայ մը կրնար երկու տե-
րանց ծառայել, քանզի կամ զմին պիտի ատէ
եւ միւսը սիրէ, կամ մէմոյն պիտի յարէ՝ եւ միւսն
արհամարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ
եւ մամոնային։
14 Եւ փարիսեցիք եւս, որ արծաթասէր էին, լսե-
15 լով այս ամէնը կ'անգոնէին զնա։ Եւ ըսաւ ա-
նոնց, Դուք եք որ մարդոց առջեւ կ'արդարացու-
նէք զձեզ, բայց Աստուած գիտէ ձեր սիրտերը.
քանզի այն որ մարդոց մէջ բարձր է՝ Աստուծոյ
16 առջեւ պիղծ է։ Օրէնքը եւ մարգարէք մինչեւ Յով-
հաննէս էին. այնուհետեւ Աստուծոյ Թագաւորու-
թիւնը կը քարոզուի, եւ իւրաքանչիւր ոք կը փու-
17 թայ մտնել անոր մէջ։ Դիւրին է որ երկինք եւ
երկիր անցնին, քան թէ օրէնքէն նշանագիր մի
18 իյնայ։ Ով որ արձակէ իւր կինը եւ ուրիշ մը առ-
նու, կը շնայ, եւ ով որ յառնի արձակուած կին
մը առնու՝ կը շնայ։
19 Հարուստ մարդ մը կար որ կը հագնէր ծիրանի
եւ բեհեզ, եւ ամէն օր կը զուարճանար փառաւո-
20 րապէս։ Եւ Ղազարոս անուն աղքատ մը կար լի
21 վիրօք, որ անոր դրան առջեւ դրուած էր, եւ
կը փափաքէր լնուլ իւր փորն է փշրանաց որ
կ'իյնային այն մեծատան սեղանէն. նաեւ շուները

*Այլ՝ երբ, ձեր կարօտութեան ժամանակը
թերեւս, մին պիտի մեծարէ

22 կու գային և կը լիզէին անոր վէրքերը։ Եւ եղաւ
որ այն աղքատը մեռաւ, և հրեշտակները տարին
զնա Աբրահամու գոգը. մեռաւ և մեծատունը և
23 թաղեցաւ։ Եւ դժոխքին մէջ մինչ է տանջանս
էր, վերցնելով իւր աչքերը տեսաւ է հե-
ռուստ զԱբրահամ, և զՂազարոս անոր գոգը։
24 Եւ ազաղակեց և ըսաւ, Հայր Աբրահամ, ողոր-
մէ ինձ և ղրկէ զՂազարոս, որ թաթխէ իւր
մատին ծայրն է ջուր, և զովացունէ լեզուս,
25 քանզի կը տանջուիմ այս բոցին մէջ։ Եւ Աբրա-
համ ըսաւ, Որդեակ, յիշէ որ դուն առիր քու
կենացդ մէջ քու բարիդ, նոյնպէս և Ղազարոս
չարիք. հիմա նա [հոս] կը մխիթարուի, և դուն
26 կը տանջուիս։ Եւ է վերայ այսր ամենայնի մեր և
ձեր մէջ մեծ անդունդ կայ հաստատուած, այն-
պէս որ ոտկէ առ ձեզ անցնել ուզողներ չկրնան,
27 և ոչ ոտկէ առ մեզ էալ ուզողներ անցնին։ Եւ նա
ըսաւ, Ուրեմն կ'աղաչեմ գըթիլ, հայր, որ իմ
28 հօրս տունը ղրկես զնա, զանգի հինգ եղբայր ու-
նիմ, որ երթիլով վկայութիւն տայ անոնց, զի մի՛
գուցէ անոնք ևս գան այս չարչարանաց տեղը։
29 Եւ Աբրահամ ըսաւ անոր, Անոնք ունին զՄովսէս
30 և մարգարէները, թող անոնց լսեն։ Եւ նա ըսաւ,
Ոչ, հայր Աբրահամ, այլ եթէ մեռելներէն ոք
31 երթայ անոնց, պիտի ապաշխարեն։ Եւ նա ըսաւ
անոր, Եթէ Մովսէսի և մարգարէից չեն լսեր, և
ոչ, եթէ մեռելներէն ոք յառնէ, պիտի համոզ-
ուին։

ԳԼ. ԺԷ

1 Եւ ըսաւ իւր աշակերտներուն, Անհնար է որ
գայթակղութիւններ չգան. բայց վայ անոր, որով
2 ձեւօք կու գան։ Լաւ է նմա, որ անոր պարա-
նոցին լծուն երկանաքար կախուի, և նա ծովը

նետուի, քան թէ այս փոքրներէն մին կորնչի-
3 լեցուիլ։ Զգուշացէք ձեր անձերուն։ Երէ քոյ-
եղբայրդ մեղանչի քեզի դէմ, յանդիմանէ զնա.
4 և եթէ ապաշխարէ, ներէ նմա։ Եւ եթէ օրը
եօթն անգամ մեղանչի քեզի դէմ, և օրը եօթն
անգամ դառնայ քեզ և ըսէ, Կ'ապաշխարեմ,
ներէս անոր։
5 Եւ առաքեալներն ըսին Տէրոջը, Աւելցուր մեր
6 հաւատքը։ Եւ Տէրը ըսաւ, Եթէ ունենայիք հա-
ւատս իբրև մանանեխոյ հատ, կրնայիք ըսել այս
թթենւոյն, Խլուէ և անկուէ ծովուն մէջ, և
պիտի հնազանդէր ձեզ։
7 Բայց ձեզնէ ո՞վ է այն հարկը որ ունի երկրագործ
կամ հովիւ ծառայ, և որ երբ ագարակէն դառ-
նայ, իսկոյն ըսէ անոր Թէ Անցիր, նստէ սեղան.
8 Այլ ո՞չ ապաքէն կ'ըսէ անոր Թէ Պատրաստէ
ընթրիքս, և գօտիդ կապած սպասաւորէ ինձ,
մինչև ուտեմ և խմեմ, և ապա դուն ես կերբ և
9 խմէ։ Միթէ շնորհակալ կ'ըլլայ այն ծառային,
որ կատարեց իրեն հրամայուածները. չեմ կարծեր։
10 Նոյնպէս և դուք երբ ընէք բոլոր հրամայուած-
ները ձեզ, ըսէք Թէ Անպիտան ծառաներ ենք,
քանզի ինչ որ պարտական էինք ընել՝ ըրինք։
11 Եւ եղաւ որ երբ ինք Երուսաղէմ կ'երթար,
12 կ'անցնէր ընդ մէջ Սամարիոյ և Գալիլեայի։ Եւ
երբ պիտի մտնէր գիւղ մը, տասն բորոտ մարդիկ
13 հանդիպեցան անոր, որ կայնեցան հեռուն, Եւ
վերցուցին իրենց ձայնը և ըսին, Յիսուս վարդա-
14 պետ, ողորմէ մեզ։ Եւ տեսնելով բսաւ անոնց,
Գնացէք դուք, ցուցէք զձեզ քահանայից։ Եւ
15 եղաւ որ երբ կ'երթային, մաքրուեցան։ Եւ ա-
նոնցմէ մին, երբ տեսաւ Թէ բժշկուեցաւ, դար-
ձաւ և մեծ ձայնով փառք կու տար Աստուծոյ.
16 Եւ երեսի վրայ իյնալով անոր ոտքը՝ շնորհակալ
17 կ'ըլլար անոր. և նա Սամարացի էր։ Պատասխան

տուաւ Յիսուս և ըսաւ, Ո՞չ տասնքէն տասն էին
18 որ մաքրուեցան, իսկ այն ինը ո՞ւր են։ Բայ այս
օտարազգիէն չդտնուեցաւն որ դառնա-
19 լով Աստուծոյ փառք տային։ Եւ ըսաւ անոր, Ել
գնա, քու հաւատքդ բժշկեց զքեզ։
20 Եւ երբ փարիսեցիք հարցուցին անոր Թէ Աս-
տուծոյ Թագաւորութիւնը ե՞րբ պիտի գար, պա-
տասխան տուաւ անոնց և ըսաւ, Աստուծոյ Թա-
գաւորութիւնը չգար դիտելեն երևցած բաներով.
21 Եւ պիտի չըսեն Թէ Ահա աստ է, կամ Ահա ան-
քանզի ահա Աստուծոյ Թագաւորութիւնն ի՛ներքս
ի ձեզ է։
22 Աշակերտներուն ևս ըսաւ, Օրեր պիտի գան որ
պիտի փափաքիք տեսնել Որդւոյ մարդոյ օրերէն
23 մին, և պիտի չտեսնէք։ Եւ ի՛նքն ձեզ Թէ
Ահա աստ է, կամ Ահա անդ, մի՛ երթաք և մի՛
24 հետևիք անոնց։ Վասն զի ինչպես փայլակը փայ-
լատակելով երկնից ծակ ըլլս կու տայ ի ծագաց
մինչև ի ծագս երկնից, նոյնպես պիտի ըլլայ Որ-
25 դին մարդոյ իւր ի՛մ-ա-ր-ի-ն օրը։ Միայն Թէ պէտք
է որ առաջ չատ չարչարանք կրէ և մերժուի այս
26 ազգէն։ Եւ ինչպես որ Նոյի օրերը եղաւ, նոյնպես
27 պիտի ըլլայ նաև Որդւոյ մարդոյ օրերը։ Կ'ուտէին,
կը խմէին, կին կ'առնուեին, տղայ կը տրուէին,
մինչև այն օրը որ Նոյ մտաւ տապանը, և չգիտ-
28 ցին եկաւ և կորոյս ամենքը։ Նմանապէս, ինչ-
պես Ղովտայ օրերը եղաւ, կ'ուտէին, կը խմէին,
կը գնէին, կը վաճառէին, կը տնկէին, կը շինէին.
29 Բայց այն օրը որ Ղովտ ելաւ Սոդոմէ, կրակ և
30 ծծումբ տեղաց յերկնից և կորոյս բոլորը։ Նոյն-
պես պիտի ըլլայ այն օրը յորում Որդին մարդոյ
31 պիտի յայտնուի։ Այն օրը ով որ տանեակ վրայ է
և անոր կարասիները տան մէջ, Թող վար չիջնէ
առնուլ զանոնք. և ով որ արտն է, նոյնպես
32 Թող չդառնայ հետ։ Յիշեցէք Ղովտայ կինը։

33 Ով որ կ'ուզէ իւր կեանքն ապրեցուցանել՝ պիտի
կորուսանէ զնա, և ով որ կը կորուսանի՝ պիտի
34 ապրեցուցանէ զնա։ Կ'ըսեմ ձեզ, Այն գիշերը ԵՒ
երկու հոգի մի անկողնի մէջ են, մին պիտի առ-
35 նուի և միւսը թողուի։ Ե- ԵՒ երկու կին իրա-
սին կ'աղան, մին պիտի առնուի և միւսը թողուի։
Ե ԵՒ երկու հոգի են արտի մը մէջ, մին պիտի
36 առնուի և միւսը թողուի։ Եւ պատասխան տուին
37 ըսին անոր, Տէր, ո՞ւր ՝ւէրէ ըլլայ այս։ Եւ նա
ըսաւ անոնց, Ուր մարմին կայ, հոն պիտի ժողո-
վին արծուիք։

Գլ. ԺԸ

1 Ա՛նոնց առակ մի ևս ըսաւ առ այս Թէ պարտ է
յաւիտեան ժամ աղօթք ընել և չձանձրանալ,
2 Ըսաւ, Դատաւոր մը մէջ կար դատաւոր մը, որ
Աստուծմէ չէր վախնար և մարդէ չէր ամչնար։
3 Եւ նոյն քաղաքին մէջ կար այրի մը, որ անոր
կու գար և կ'ըսէր, Իրաւունք ըրէ ինձ Ե ազդէ
4 դէս իմ ոսոխս։ Եւ նա ժամանակ մը չէր ուզեր
ըրել անոր, բայց յետոյ ըսաւ իւր մտքին մէջ, Թէև
Աստուծմէ չեմ վախնար և մարդէ չեմ ամչնար,
5 Գոնե այս այրւոյն զիս ձանձրացուցնելուն համար
իրաւունք ընեմ անոր, որ չգայ Թախանձէ զիս
6 հանապազ։ Եւ Տէրը ըսաւ, Լսեցէք ինչ կ'ըսէ
7 անիրաւ դատաւորը։ Իսկ Աստուած իրաւունք
պիտի չընէ՞ իւր ընտրեալներուն որ գոյգ և գոյ-
ընկ կ'աղաղակեն անոր, Թէպէտ երկայնամիտ ևս
8 ըլլայ անոնց։ Կ'ըսեմ ձեզ որ իրաւունք պիտի ընէ
անոնց վազվազակի։ բայց Որդին մարդոյ երբ գայ,
հաւատք պիտի գանէ՞ արդեօք երկրի վրայ։
9 Եւ ոմանց, որ կը պանծային յանձինս Թէ ար-
դար են, և կ'անարգէին զայլս, ըսաւ սա առակը։
10 Երկու մարդ ասճարը եղան աղօթք ընել, մին

11 փարիսեցի և միւսը մաքսաւոր։ Փարիսեցին կայ-
նած էր, և առանձին այսպէս աղօթք կ'ընէր։
Աստուած իմ, գոհանամ ղքեզն որ ուրիշ մարդոց
պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, և կամ
12 այս մաքսաւորին պէս։ Աչ չաբաթը երկու ան-
գամ ծոմ կը պահեմ, և կու տամ տասանորդ
13 յամենայնէ զոր ունիմ։ Եւ մաքսաւորը հեռուն
կայնած էր, և չէր ուզեր աչքն անգամ վերցու-
նել յերկինս, այլ իւր կուրծքը բաղխելով կ'ը-
14 սէր, Աստուած, ողորմէ ինձ մեղաւորիս կ'ըսեմ
ձեզ Թէ սա գնաց վմիան առելի արդարացած քան
իւր ատեր։ վասն զի ով որ իւր անձը կը բարձրա-
ցունէ՝ պիտի խոնարհի, և ով որ իւր անձը կը
խոնարհեցունէ՝ պիտի բարձրանայ։
15 Նաև մանուկներ բերին անոր, որ անոնց դպչէր։
և աշակերտները տեսնելով կը յանդիմանէին զա-
16 նոնք։ Բայց Յիսուս իրեն կոչելով զանոնք ըսաւ,
Թողէք այդ մանկանց գալ առ իս, և մի՛ արգե-
լուք զդոսա, քանզի այդպիսեաց է Աստուծոյ
17 Թագաւորութիւնը։ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ով որ
չընդունիր Աստուծոյ Թագաւորութիւնն իբրև
մանուկ, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ։
18 Եւ իշխան մը հարցուց անոր և ըսաւ, Վար-
դապետ բարի, ի՞նչ գործեմ որ յաւիտենական
19 կեանքը ժառանգեմ։ Եւ Յիսուս ըսաւ անոր,
ինչո՞ւ կ'անուանես զիս բարի։ չէ բարի բաց ի
20 միոյն ոչ է Աստուած։ Գիտես պատուիրանները։
Մի՛ շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողնար, Մի՛ սուտ
21 վկայեր, Պատուեա զհայր քո և զմայր։ Եւ նա
ըսաւ, Ամենք ամէնը պահած եմ ի մանկութենէս
22 Եւ Յիսուս լսելով զայս ըսաւ անոր, Դեռ մի ևս
պակաս է քեզ. վաճառէ բոլոր ստացուածդ և
բաշխէ աղքատաց, և գանձ պիտի ունենաս յեր-
23 կինս, և եկ իմ հետևէս։ Նա երբ լսեց զայս,
24 տրտմեցաւ, քանզի շատ հարուստ էր։ Եւ Յիսուս

երբ տեսաւ զնա արտաքոյ, բսաւ, Ո՞րչափ դժուար է անոնց որ հարստութիւն ունին մտնել Աստուածոյ
25 Թագաւորութիւնը։ Դանդի դիւրին է որ ուղտն անցնի ասղի ծակէն, քան թէ հարուստը
26 մտնէ Աստուծոյ Թագաւորութիւնը։ Եւ անոնք որ լսեցին կ'ըսէին, Իսկ ո՞վ կրնայ փրկուիլ։ Եւ
27 նա բսաւ, Մարդոյ կողմանէ անհնարինքն հնա-
28 րաւոր են Աստուծոյ կողմանէ։ Եւ Պետրոս բսաւ, Ահա մենք ամէն բան թողինք և եկանք քու ե-
29 տեւիդ։ Եւ նա բսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ Ոչ ոք կայ որ թողուց տուն, կամ
30 ծնողս, կամ եղբայրներ, կամ կին, կամ որդիս Աստուծոյ Թագաւորութեան համար, Որ չառնու բազմապատիկ յաւախս և հանդերձեալ աշխարհին
31 մէջ յաւիտենական կեանք։ Եւ երկոտասաներեքն առնելով իրեն քով բսաւ անոնց, Ահա մենք կ'ելլենք Երուսաղէմ, և
32 մարգարէից բերնով Որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի կատարուին։ Դանդի պիտի
33 մատնուի հեթանոսաց, և ծաղր պիտի ըլլայ և պիտի նախատուի, և պիտի թքնեն անոր, Եւ
34 պիտի ծեծեն և սպանանեն զնա, և երրորդ օրը պիտի յառնէ։ Բայց անոնք այս բաներէն և ոչ մին հասկցան. և այս խօսքը ծածկուած էր անոնցմէ, և ինչ որ կ'ըսէր չէին իմանար։
35 Եւ եղաւ որ երբ նա կը մօտենար Յերիքով,
36 կոյր մը ճամբուն քով նստած էր մուրացիկ, երբ լսեց բազմութեան անցնելը, հարցուց Թէ Ի՞նչ
37 էր այն։ Եւ բսին անոր Թէ Յիսուս Նազովրեցի
38 կ'անցնի։ Ուստի աղաղակեց և բսաւ, Յիսուս,
39 Որդի Դաւիթի, ողորմէ ինձ։ Եւ անոնք որ առջևէն կ'երթային կը յանդիմանէին զնա, որ լռէր։ Բայց նա աւելի կ'աղաղակէր, Որդի Դաւիթի, ողորմէ
40 ինձ։ Եւ Յիսուս կենալով հրաման ըրաւ բերել զնա իրեն, և երբ մօտեցաւ նա, հարցուց անոր

41 և բսաւ, Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզ։ Եւ նա
42 բսաւ, Տէր, որ այուբերս բացուին։ Եւ Յիսուս բսաւ անոր, Թող բացուին. քու հաւատքդ բժշկեց
43 զքեզ։ Եւ իսկոյն անոր այուբերը բացուեցան, և կ'երթար անոր հետևէն, և փառք կու տար Աստուծոյ։ և բոլոր ժողովուրդը տեսնելով կ'օրհնէին զԱստուած։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտնելով երիքովէ կ'անցնէր։ (2) Եւ ահա մարդ մը կար Զակքեոս անուն որ մաքսապետ էր
3 և էր հարուստ։ Եւ կ'ուզէր տեսնել Թէ ով էր Յիսուս, և չէր կրնար բազմութենէն, քանզի
4 կարճ էր հասակաւ։ Եւ յառաջ վազելով ելաւ Ժանաւթենւոյ մը վրայ, որ տեսնէր զնա. վասն զի
5 անկէ պիտի անցնէր։ Եւ երբ Յիսուս եկաւ այն տեղը, վեր նայելով տեսաւ զնա, և բսաւ անոր, Զակքեոս, փութա, էջ տակէն, քանզի պարտ է ինձ
6 այսօր քու տունդ կենալ։ Եւ փութալով վար
7 իջաւ, և ուրախութեամբ ընկալաւ զնա։ Երբ ամէնքը տեսան, կը տրտնջէին և կ'ըսէին Թէ
8 Մեղաւոր մարդու քով մտաւ իջևան ընել։ Եւ Զակքեոս կեցաւ և բսաւ Տէրոջը, Տէր, ահա
տացուածիս կէսը կու տամ աղքատաց, և եթէ զրպարտութեամբ զրկեցի զոք, չորեքպատիկ
9 կը հատուցանեմ։ Եւ Յիսուս բսաւ անոր, Այսօր փրկութիւն եղաւ այս տան, քանզի և սա Աբրա-
10 համու որդի է։ Վասն զի Որդի մարդոյ եկաւ որ կորուսեալը փնտռէ և փրկէ։
11 Եւ երբ անոնք այս բաները կը լսէին, առաք մի և բսաւ իւր Երուսաղէմ մտնելուն համար, և անոնց այնպէս կարծելուն համար Թէ Աստուածոյ Թագաւորութիւնն առժամայն պիտի յայտ-
12 նուէր։ Ուստի բսաւ, Ազնուական մը հեռու եր-

կիը գնաց իրեն թագաւորութիւն առնուլ և
13 դառնալ։ Եւ իւր ասան ծառաները կոչելով
տուաւ անոնց ասան մնաս, և ըսաւ անոնց, Ցար-
14 գեցէք ապրած մինչև ես գամ։ Եւ անոր քաղա-
քացիները կ'ատէին զնա, և դեսպանները ղրկեցին
անոր ետևէն ըսելով Թէ Չենք ուզեր որ Թագա-
15 ւորէ դա մեր վրայ։ Եւ եղաւ որ երբ նա Թագա-
ւորութիւնն առնելով ետ դարձաւ, կոչել տուաւ
այն ծառաները որոց ասակ տուած էր, որ գիտ-
16 նար Թէ ով ինչ չափած էր։ Եւ եկաւ առաջինը
և ըսաւ, Տէր, քու մնասդ չահեցաւ ասան մնաս։
17 Եւ ըսաւ անոր, Աղնիւ, բարի ծառայ, որովհետև
ի սակաւուն հաւատարիմ եղար, իշխանութիւն
18 ունեցիր ասան քաղաքի վրայ։ Եւ երկրորդը եկաւ
19 և ըսաւ, Տէր, մնասդ չահեցաւ հինգ մնաս։ Եւ
ըսաւ անոր, Եւ դու եղիր հինգ քաղաքի վրայ։
20 Եւ ուրիշ մը եկաւ և ըսաւ, Տէր, ահա մնասդ
21 զոր Թաշկինակի մէջ ծրարած կը պահէի։ Քանզի
կը վախնայի քենէ, վասն զի դու խիստ մարդ ես,
կը վերցնանես զոր չդրիր, և կը հնձես զոր չսեր-
22 մանեցիր։ Եւ նա ըսաւ անոր, Ըռա բերնէդ պիտի
դատեմ զքեզ, ծառայ չար։ գիտէիր Թէ ես խիստ
մարդ եմ, կը վերցնանեմ զոր չդրի, և կը հնձեմ
23 զոր չսերմանեցի։ Եւ ընդէր չտուիր իմ ասակս
սեղանաւորներուն, որ երբ ես գայի, տոկոսովք
24 պահանջէի զայն։ Եւ հոն կեցողներուն ըսաւ,
Առէք ասկէ մնասը և տուէք անոր որ ունի
25 ասան մնաս։ Եւ ըսին անոր, Տէր, ասան մնաս
26 ունի նա։ Քանզի կ'ըսեմ ձեզ, Թէ ամէն ունեցո-
ղին պիտի տրուի, և չունեցողէն պիտի առնուի
27 նաև ինչ որ ունի, բայց այն իմ Թշնամիներս որ
չեմ ուզեր որ իրենց վրայ Թագաւորեմ, բերէք
28 հոս և սպաննեցէք իմ առջևս։ Եւ այս բաները
խօսելէն ետքը՝ յառաջ գնաց ելլել յԵրուսաղէմ։
29 Եւ եղաւ որ երբ մօտեցաւ ի Բեթփագէ և ի Բե-

թանիա դէպ այն լեռը որ կը կոչուի Ձիթենեաց,
30 ղրկեց աշակերտներէն երկուքը, ևս ըսաւ, Գնա-
ցէք գիւղը որ դիմացն է, և երբ մտնէք հոն,
պիտի գտնէք կապուած յաւանակ, որոյ վրայ
ըստ մարդ նստած չէ. արձակեցէք զնա և բե-
31 րէք։ Եւ եթէ ոք հարցնէ ձեզ Թէ Ընդէ՞ր կ'ար-
ձակէք, այսպէս ըսէք անոր, Թէ Տէրոջը պիտոյ
32 է։ Երբ գնացին անոնք որ ղրկուեցան, գտան
33 ինչպես որ անոնց բսած էր։ Եւ երբ կ'արձակէին
յաւանակը, անոր տէրերն ըսին անոնց, Ընդէ՞ր
34 կ'արձակէք այդ յաւանակը։ Եւ անոնք ըսին,
35 Տէրոջը պիտոյ է։ Եւ բերին զնա Յիսուսի, և իրենց
հանդերձները դնելով յաւանակին վրայ՝ հեծուցին
36 զՅիսուս։ Եւ երբ կ'երթար, ճամբուն վրայ կը տա-
37 րածէին իրենց հանդերձները։ Եւ երբ մօտեցաւ
նա, և կիջնէր Ձիթենեաց լերան զուռ ի վայրէն,
աշակերտներուն բոլոր բազմութիւնն սկսաւ ու-
րախութեամբ օրհնել զԱստուած բարձր ձայնիւ
այն բոլոր հրաշներուն համար զոր տեսած էին։
38 Եւ կ'ըսէին, Օրհնեալ է Թագաւորդ որ կու գայ
յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս, և
39 փառք ի բարձունս։ Եւ բազմութեան մէջ փա-
րիսեցիներէն ոմանք ըսին անոր, Վարդապետ,
40 յանդիմանէ այդ քու աշակերտներդ։ Եւ նա
պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Կ'ըսեմ ձեզ,
Եթէատոնք լռեն, քարերը պիտի աղաղակեն։
41 Եւ երբ մօտեցաւ, տեսնելով քաղաքը լացաւ
42 անոր վրայ և ըսաւ, Գոնէ այս քու օրուանդ մէջ
գիտնայիր քու խաղաղութիւնդ, բայց հիմա ծած-
43 կեցաւ քու աչուըներէդ։ Քանզի օրեր պիտի գան
քու վրադ, որ Թշնամիներդ չուրջանակի պատնէշ
պիտի չինեն, և պիտի պաշարեն զքեզ, և ամէն
44 կողմանէ պիտի նեղեն զքեզ։ Եւ հիմնայատակ
պիտի ընեն զքեզ և որդիներդ որ ի քեզ, և
քար քարի վրայ ամենևին պիտի չթողուն ի քեզ

վասն զի չՀանչցար քոյ այցելութեանդ ժամանակիդ։
45 Եւ տաճարը մտնելով սկսաւ դուրս հանել
46 անոր մէջ վաճառողները և գնողները. Եւ ըսաւ անոնց, Գրուած է Թէ իմ տունս աղօթքի տուն է, բայց դուք աւազակներու այր ըրիք զայն։
47 Եւ ամէն օր տաճարին մէջ կ'ուսուցանէր. բայց քահանայապետները և դպիրները և ժողովրդեան գլխաւորները կը խնդրէին Թէ ինչպես կորսուցա-
48 նէին զնա, Եւ չէին գտներ Թէ ինչ ընէին, քանզի բոլոր ժողովուրդն անոր կապուած էր լսել։

ԳԼ. Ի

1 Եւ եղաւ որ այն օրերէն մին, երբ տաճարին մէջ կ'ուսուցանէր ժողովրդեան և կը քարոզէր աւետարանը, քահանայապետները և դպիրները
2 ծերերուն հետ վրայ հասան. Եւ խօսեցան անոր ըսելով, Ըսէ մեզ ինչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, կամ ով է որ տուաւ քեզ այդ
3 իշխանութիւնը։ Պատասխան տուաւ և ըսաւ ա-
4 նոնց, Եւ ես բան մը հարցնեմ ձեզ, և ըսէք
5 ինձ. Յովհաննու մկրտութիւնը յերկինէ՞ էր Թէ
6 ի մարդկանէ։ Եւ անոնք իրենց մէջ խորհեցան և ըսին, Եթէ ըսենք, Յերկինէ, պիտի ըսէ, Իսկ ընդհ՚ր չհաւատացիք անոր. ապա եթէ ըսենք, Ի մարդկանէ, բոլոր ժողովուրդը պիտի քարկոծէ
7 զմեզ. քանզի հաստատ համոզուած են Թէ Յով-
8 հաննէս մարգարէ էր։ Եւ պատասխան տուին Թէ չեն գիտեր ուսանի էր։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Եւ ես չեմ ըսեր ձեզ Թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները։
9 Եւ սկսաւ ըսել սա առակը ժողովրդեան. Մարդ մը անկեց այգի և յանձնեց գործաւորներու, և ինք երթալով օտար երկիր մնաց շատ

10 ժամանակ։ Եւ ժամանակին ղրկեց ծառայ մը գործաւորուն որ տային նմա այգւոյն պտղէն. իսկ գործաւորները ծեծեցին զնա և արձակեցին ունայն։
11 Եւ ղրկեց ուրիշ ծառայ մը. իսկ անոնք զնա ևս ծեծեցին, անարգեցին և արձակեցին ունայն։
12 Եւ ղրկեց երրորդ մի ևս. իսկ անոնք զնա ևս
13 վիրաւորեցին և հանեցին դուրս։ Անտեռն այգւոյն տէրն ըսաւ, Ինչ ընեմ. ղրկեմ իմ սիրելի
14 որդիս, Թերևս զնա տեսնելով ամչնան։ Բայց գործաւորները երբ տեսան զնա, խորհուրդ ընդարձակ հետ ընելով, Սա է ժառանգը, եկէք սպաննենք զնա որ մերն ըլլայ ժառանգութիւնը։
15 Եւ դուրս հանեցին զնա այգիէն և սպաննեցին. ուստի այգւոյն տէրն ինչ պիտի ընէ անոնց։
16 Պիտի գայ և կորուսանի այն գործաւորները, և պիտի տայ այգին ալլոց։ Երբ ալս լսեցին, ըսին, Թող
17 լիցի։ Եւ ինք անոնց նայելով ըսաւ, Ապա ինչ է այս գրուածը, Թէ Քարը զոր չհնողները մեր-
18 ժեցին, նա եղաւ գլուխ անկեան։ Ամէնը որ այն քարին վրայ իյնայ՝ պիտի խորտակի, և որու-
19 վրայ իյնայ՝ պիտի փշրէ զնա։ Եւ քահանայապետները և դպիրները կը խնդրէին Թէ ի՛նչ-
նդ ժամուն ձեռք մէկին ինա, բայց վախցան ժողովուրդէն, քանզի իմացան Թէ այն առակն ըսաւ իրենց համար։
20 Եւ չեթող յարմար ատենէ սպասելով, ղրկեցին քանի մը խարեբայ մարդիկ որ կեղծաւորու-
Թեամբ արդար կը ձեւացնէին զիրենք, որպէս զի խօսքով բռնեին զնա մատնել զնա տէրու-
21 թեան և կուսակալին իշխանութեան։ Եւ հարցուցին անոր ըսելով, Վարդապետ, գիտենք որ ուղիղ կը խօսիս և կը սորվեցնես, և ա-
ոութիւն չես ըներ, այլ ճշմարտութեամբ կ'ու-
22 սուցանես Աստուծոյ ճամբան։ Արժան է մեզ
23 Կայսեր հարկ տալ Թէ ոչ։ Եւ խմանալով անոնց

խորամանկութիւնն՝ ըսաւ անոնց, Ընդէ՞ր կը
24 փորձէք զիս. Ցուցէք ինձ դահեկան մը։ Որո՞ց
պատկերը և գիրն ունի։ Պատասխան տուին և
25 ըսին, Կայսերո՛ց։ Եւ նա ըսաւ անոնց, Ուրեմն
տուէք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աս-
26 տուծոյ։ Եւ չկրցան յօսգով բանիվ զնա ժողո-
վրդեան առջև, և զարմանալով անոր պատաս-
խանւոյն վրայ լուռ կեցան։
27 Եւ եկան սադուկեցիներէն ոմանք, որ կը
պնդէին թէ չիք յարութիւն, և հարցուցին անոր
28 Ըսելով, Վարդապետ, Մովսէս գրեց մեզ, Եթէ
ուրուք եղբայրը որ ունի կին՝ մեռնի, և ըլայ
անորդի մեռած առներ, անոր եղբայրն առնու
29 այն կինը և հանէ զաւակ իւր եղբօրըն։ Արդ
եօթն եղբարք կային. և առաջինը կին առնելով
30 մեռաւ անորդի։ Երկրորդն ևս առաւ այն կինը,
31 և նա ևս մեռաւ անորդի։ Երրորդն ևս առաւ
զնա, Նմանապէս եօթանեքին, և չթողին որդի և
32 մեռան։ Ետքն ամենեցուն մեռաւ և կինըս (33) Ու-
րեմն ի յարութեան անոնցմէ որո՞ւ կին պիտի ըլ-
34 լայ, քանզի եօթանեքին ունեցան զնա կին։ Եւ
Ցիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Այս
աշխարհիս որդիք կին կ'առնուին և առն կը
35 տրուին։ Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան
հասնիլ այն աշխարհին և յարութեան ի մեռելոց՝
36 ոչ կին կ'առնուին և ոչ առն կը տրուին. Վասն զի
այլևս չեն կրնար մեռնիլ, քանզի հաւասար են
հրեշտակաց, և որդիք են Աստուծոյ, վասն զի
37 յարութեան որդիք են։ Բայց թէ մեռելք կը
յառնեն, Մովսէս ևս իմացուց մարինուին պա-
տմութիւնն մէջ, երբ կը կոչէ Տէրը Աստուած Աբ-
րահամու և Աստուած Իսահակայ և Աստուած
38 Յակոբայ։ Եւ Աստուած չէ Ա՛ռ՛ո՛ռ՛ած մեռելոց,
այլ՝ կենդանեաց, քանզի ամենքը կենդանի են
39 անոր։ Եւ դպիրներէն ոմանք պատասխան տուին

40 և ըսին, Վարդապետ, ազնիւ ըսիր։ Եւ այլևս
ոչ ոք կը համարձակէր բան մը հարցնել անոր։
41 Եւ ըսաւ անոնց, Ի՞նչպէս կ'ըսեն Թէ Քրիստոս
42 որդի է Դաւիթի. Եւ ինք Դաւիթ Սաղմոսաց գրքին
մէջ կ'ըսէ, Տէրը ըսաւ իմ Տէրոջս, Նըստ իմ աջ
43 կողմս, Մինչև զոյ թշնամիները ընեմ պատուան-
44 դան ոտիդ։ Ուրեմն Դաւիթ որ Տէր կը կոչէ զնա,
ի՞նչպէս անոր որդին է նա։
45 Եւ բոլոր ժողովրդեան առջև ըսաւ իւր աշա-
46 կերտներուն, Զգուշացէք դպիրներէն, որ կ'ուզեն
պտռտուր հանդերձներով չըլլիլ, և շուկաներուն
մէջ ողջոյնները կը սիրեն, և ժողովրդանոցներու
մէջ՝ առաջին աթոռները, և առաջին բազմոցներն՝
47 յընթրիս. Որ կ'ուտեն այրիներուն տուները, և
Տըպրոց երևնալու համար կ'երկարեն աղօթքը.
ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ըն-
դունին։

ԳԼ. ԻԱ

1 Եւ նայելով տեսաւ հարուստները որ իրենց ըն-
2 ծանները կը նետէին գանձանակը։ Տեսաւ նաև
անանկ այրի մը, որ նետեց հոն երկու լումայ։
3 Եւ ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ այս աղքատ
4 այրին քան զամենեսին աւելի նետեց. Քանզի
անոնց ամենքն իրենց աւելորդէն նետեցին Աս-
տուծոյ ընծաներուն մէջ, բայց սա իւր չքաւո-
րութենէն բոլոր ապրուստը զոր ունէր՝ նետեց։
5 Եւ երբ ոմանք տաճարին համար կ'ըսէին Թէ
Գեղեցիկ քարերով և նուէրներով զարդարուած
6 է, ըսաւ, Այդ զոր կը տեսնէք, օրեր պիտի գան
որ պիտի չմնայ քար քարի վրայ որ չքակուի։
7 Հարցուցին անոր և ըսին, Վարդապետ, Երբ
պիտի ըլլայ այդ, և ի՞նչ է նշանը երբ այդ ըլլայ։
8 Եւ նա ըսաւ, Զգոյշ կեցէք, չխաբուիք, քանզի

չաւերը պիտի գան յանուն իմ և ըսեն Թէ Ես եմ
Քրիստոս, և ժամանակը մօտեցած է. ուրեմն չեր-
9 Թաք անոնց հետեւիլն։ Բայց երբ լսէք պատերազմ-
ներ և խռովութիւններ, մի՛ վհատիք, քանզի
պէտք է որ առաջ աւոնք ըլլան, բայց չէ առժա-
10 մայն վախճան։ Անտեն ըսաւ անոնց, Ազգ ազգի
վրայ պիտի ելլէ, և թագաւորութիւն՝ թագաւո-
11 րութեան վրայ. Ու տեղ տեղ պիտի ըլլան մեծ
երկրաշարժներ և սովք և սրաձգութիւնք, նաև
սոսկալի բաներ և մեծ նշաններ պիտի ըլլան յերկ-
12 նից։ Բայց յառաջ քան զայս ամենայն պիտի մեներ
իրենց ձեռուընին ի ձեզ և հալածեն, և պիտի
մատնեն ժողովրդանոցներու և բանտերու, և
իմ անուանս համար պիտի տարուիք առաջի
13 թագաւորաց և կուսակալաց։ Ու այս ի՞նչէր
14 յեղայ պիտի ըլլան ձեզ ի վկայութիւն։ Ուստի
դիրէք ձեր սրտին մէջ չխորհիլ յառաջագոյն տալ
15 պատասխանի։ Վասն զի ես պիտի տամ ձեզ բե-
րան և իմաստութիւն, որուն պիտի չկրնան հա-
կառակ խօսել կամ դէմ կենալ ձեր բոլոր հա-
16 կառակորդները։ Ու պիտի մատնուիք ի ծնողաց
և յեղբարց և յազգականաց և ի բարեկամաց, և
17 պիտի սպանեն ձեզնէ. Ու իմ անուանս համար
18 ատելի պիտի ըլլաք ամենուն. Բայց մազ մը ձեր
19 գլխէն պիտի չկորսուի։ Ձեր համբերութեամբ
պիտի ստանաք ձեր հոգիները։
20 Ու երբ տեսնէք զերուսաղէմ չորս կողմանէ
պաշարեալ զօրօք, անտեն գիտցէք Թէ մօտ է
21 աւերը։ Անտեն անոնք որ Հրէաստանի
մէջ են՝ թող փախչին լեռները, և որ անոր մէջ
են՝ թող հեռանան, և անոնք որ ագարակներն
22 են՝ թող չմտնեն անոր մէջ։ Վասն զի այն օրերը
վրէժխնդրութեան օրեր են, որ բոլոր գրուած-
23 ները կատարուին։ Բայց վայ յղեաց և սնուցուց
այն օրերը, քանզի մեծ նեղութիւն պիտի ըլլայ

երկրին վրայ, և բարկութիւն ալեաց այս ժո-
24 ղովրդեան. Ու պիտի իյնան ի սուր սուսերի և
պիտի տարուին գերի բոլոր ազգաց մէջ, և Երու-
սաղէմ կոխան պիտի ըլլայ ազգաց, մինչև լրա-
25 նան ազգերուն ժամանակները։ Ու պիտի ըլլան
նշաններ յարեգական և ի լուսնի և յաստեղս,
և երկրի վրայ ազգերը պիտի տագնապին տա-
26 չութեամբ, և ծով և ալիք պիտի գոռան. Մար-
դոց սիրտերը պիտի նուաղին յերկիւղէ և ի
կատածանաց աշխարհի վրայ գալու իրաց, քան-
27 զի զօրութիւնք երկնից պիտի չարժին։ Ու անա-
տեն պիտի տեսնեն զՈրդին մարդոյ եկած յամպս
28 զօրութեամբ և մեծ փառօք։ Ու երբ սոսկ
սկսին ըլլալ, եղէք և բարձրացուցէք ձեր գլուխ-
ները, քանզի մօտ է ձեր փրկութիւնը։
29 Ու ըսաւ անոնց առակ մի. Ցեղաբ թզենին և
30 ամէն ծառ. Երբ կը բողբոջին, տեսնելով կ'ի-
մանաք դուք ձեզմէն Թէ մօտ է արդէն ամառը։
31 Նոյնպէս և դուք երբ տեսնէք այս բաները ե-
ղած, գիտցէք Թէ մօտ է Աստուծոյ Թագաւո-
32 րութիւնը։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ այս ազգը
33 պիտի չանցնի, մինչև ըլլայ այս ամէնը։ Երկինք և
երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ
34 պիտի չանցնին։ Իսկ դուք զգուշացէք ձեր ան-
ձերուն, մի գուցէ ծանրանան ձեր սիրտերը
չուայտութեամբ և արբեցութեամբ և աշխարհա-
յին հոգովք, և յանկարծ այն օր հասնի ձեր
35 վրայ։ Քանզի իբրև որոգայթ պիտի հասնի ամե-
նուն վրայ որ կը բնակին բոլոր երկրիս երեսին
36 վրայ։ Ուստի արթուն կեցէք, և աղօթք ըրէք
ամէն ատեն, որ արժանի ըլլաք ազատիլ այն
բոլոր բաներէն որ պիտի ըլլան և կենալ Որդւոյ
մարդոյ առջև։
37 Ու ցերեկ կը սորվեցուներ տաճարին մէջ, և
գիշերները կ'ելլէր կը կենար Ձիթենեաց կոչուած

38 լեռը։ Եւ բոլոր ժողովուրդն առաւօտուն կանուխ անոր կ'երթային տաճարը լսել անոր։

Գլ. ԻԲ

1 Բաղարջակերաց տօնը մօտեցաւ որ զատիկ կը
2 կոչուէր։ Եւ քահանայապետները և դպիրները
կը խնդրէին թէ ինչպես սպաննանէին զնա, քանզի
կը վախնային ժողովուրդէն։
3 Եւ Սատանան մտաւ ի Ցուդա որ կը կոչուէր
4 Իսկարիովտացի և էր երկուտասանից թուին։ Եւ
գնաց քահանայապետներուն և իշխաններուն
հետ խօսք ըրաւ թէ ինչպես մատնէր զնա անոնց։
5 Եւ անոնք ուրախացան և խոստացան տալ
6 տալ անոր։ Եւ նա յանձն առաւ, և կը խնդրէր
պատեհութիւն մատնել զնա անոնց մեկուսի
ամբոխէն։
7 Եւ բաղարջակերաց օրը եկաւ, յորում օրէն
8 էր զոհուլ զատիկը։ Եւ ղրկեց զՊետրոս և
զՅովհաննէս և ըսաւ, Գնացէք պատրաստեցէք
9 մեզ զատիկը որ ուտենք։ Եւ անոնք ըսին անոր,
10 Ո՞ւր կ'ուզես որ պատրաստենք։ Եւ ըսաւ անոնց,
Ահա երբ մտնէք քաղաքը, պիտի պատահի ձեզ
մարդ մը որ բարձակալ ունի ջրոյ սափոր։ գնացէք
11 անոր հետևէն այն տունը ուր կը մտնէ նա։ Եւ
ըսէք այն տան տիրոջը, Վարդապետը կ'ըսէ
քեզ, Ո՞ր է օթևանն ուր այակերաններուս հետ
12 ուտեմ զատիկը։ Եւ նա պիտի ցուցնէ ձեզ մեծ
վերնատուն մի յարդարեալ, հոն պատրաստե-
13 ցէք։ Եւ գնացին գտան ինչպես որ ըսաւ անոնց,
և պատրաստեցին զատիկը։
14 Եւ երբ ժամը հասաւ, սեղան նստաւ, և եր-
15 կոտասան առաքեալք անոր հետ։ Եւ ըսաւ ա-
նոնց, փափաքելով փափաքեցայ ուտել այս զա-
տիկը ձեզի հետ յառաջ քան չարչարուելս։

16 Քանզի կ'ըսեմ ձեզ որ այլ եւս բնաւ պիտի չու-
տեմ ասկէ, մինչև կատարուի Աստուծոյ թագա-
17 ւորութեան մէջ։ Եւ առաւ բաժակը, գոհացաւ
և ըսաւ, Առէք զայս և բաժնեցէք ձեր մէջ։
18 Քանզի կ'ըսեմ ձեզ որ պիտի չխմեմ բնաւ ի
բերոյ որթոյ մինչև որ գայ Աստուծոյ թագա-
ւորութիւնը։
19 Եւ առաւ հաց, գոհացաւ, կտրեց և տուաւ
անոնց և ըսաւ, Այս է մարմին իմ, որ ձեզի
համար տրուած է։ զայս ըրէք զիս յիշելու հա-
20 մար։ Նոյնպես ---- բաժակը յետ ընթրեաց և
ըսաւ, Այս բաժակը նոր ուխտ է իմ արիւնովս,
որ ձեզի համար կը թափուի։
21 Բայց ահա ձիս մատնողին ձեռքն ինծի հետ է
22 այս սեղանը։ Եւ արդարև Որդին մարդոյ կ'եր-
թայ ինչպես սահմանուած է, բայց վա՛յ այն
23 մարդուն որոյ ձեռօք կը մատնուի նա։ Եւ ա-
նոնք սկսան իրենց մէջ հարցնել թէ իրենցմէ
ով էր որ պիտի ընէր զայն։
24 Վէճ մի եւս եղաւ անոնց մէջ թէ ով մեծ պիտի
25 համարուի անոնցմէ։ Եւ նա ըսաւ անոնց, Ազգաց
թագաւորները կը տիրեն անոնց, և անոնք որ
26 կ'իշխեն անոնց՝ բարերար կը կոչուին։ Բայց դուք
այնպես պիտի չըլլաք, այլ այն որ մեծ է ի ձեզ՝
ըլլայ իբրև կրտսերը, և առաջնորդն՝ իբրև սպա-
27 սաւորը։ Քանզի ո՞վ է մեծ, բազմականը թէ սպա-
սաւորը։ ո՞չ սպասքէն բազմականը։ սակայն ես ձեր
28 մէջ եմ իբրև սպասաւոր։ Եւ դուք եք որ միշտ
կը կենայիք ինծի հետ իմ փորձութիւններուս
29 մէջ։ Եւ ես կ'ուխտեմ ձեզ [illegible] ինչպես որ իմ Հայրս ուխտեց ինձ թագաւորու-
30 թիւն մը։ Որ դուք իմ սեղանէս ուտէք և խմէք
իմ թագաւորութեանս մէջ, և աթոռներու վրայ
նստիք դատել Իսրայելի երկոտասան ցեղերը։
31 Եւ Տէրը ըսաւ, Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա Սատանան

32 խնդրեց զձեզ, խարբելել իբրև զցորեան, բայց
եւ աղաչեցի քեզի համար որ հաւատքդ չպակսի.
և դուն երբ դառնաս, հաստատէ զոե եղբայր-
33 ներդ։ իսկ նա ըսաւ անոր, Տէր, ես պատրաստ
34 եմ քեզի հետ երթալ և՛ ի բանտ և՛ ի մահ։ Եւ
նա ըսաւ, Պետրոս, կ'ըսեմ քեզ, որ այսօր հաւը
պիտի չկանչի, մինչև դուն երիցս ուրանաս ըսելէ
թէ չես ճանչնար զիս։
35 Եւ ըսաւ անոնց, երբ զրկեցի զձեզ առանց
քսակի և պարկի և կօշկաց, բանի մը կարօտ
36 եղա՞ք։ Եւ անոնք ըսին, Ոչ բանի մը։ Ետոյ
ըսաւ, Բայց հիմա ով որ քսակ ունի թող առնու,
նոյնպես և պարկը. և ով որ սուր չունի, թող
վաճառէ իւր հանդերձը և սուր մը գնէ իրեն.
37 Քանզի կ'ըսեմ ձեզ թէ պէտք է որ նաև այս
գրուածը կատարուի իմ վրաս, Եւ անօրէններու
հետ համարուեցաւ. քանզի ինչ որ ինծի համար է
38 վճարում է։ Եւ անոնք ըսին, Տէր, ահա հոս եր-
կու սուր կան. և նա ըսաւ անոնց, Բաւական են։
39 Եւ ելաւ ըստ սովորութեան գնաց Ձիթենեաց
լեռը, աշակերտներն ևս գնացին անոր հետևելէն։
40 Երբ հոն հասաւ, ըսաւ անոնց, Աղօթք ըրէք որ
41 փորձութեան մէջ չմտնէք։ Եւ ինք անոնցմէ
զատուեցաւ իբր քարընկիծ մի, և ծունր դնելով
42 աղօթք կ'ընէր, Ես կ'ըսէր, Հայր, եթէ կամիս,
անցուր ինձ այս բաժակը. բայց ոչ թէ իմ կամքս,
43 այլ քուդ թող ըլլայ։ Եւ հրեշտակ մը երևեցաւ
անոր յերկինքէ և կը զօրացուներ զնա. և սաստիկ
նեղութեան մէջ ըլլալով՝ աւելի եռանդուածութ
44 կ'աղօթէր։ Եւ անոր քրտինքն արեան մեծ կա-
թիլներու պէս եղաւ, և կը թափէր գետին։
45 Եւ աղօթքէն ելլելով եկաւ աշակերտներուն
քովը, և գտաւ զանոնք տրտմութենէն ի քուն.
46 Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք. ելէք ա-
ղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք։

47 Եւ երբ դեռ կը խօսէր, ահա բազմութիւն մը,
և Յուդա կոչուածն ևս, մին յերկոտասանից,
կ'երթար անոնց առջևէն, և ծխտելի մօտեցաւ
48 համբուրել զնա։ Բայց Յիսուս ըսաւ անոր,
Յուդա, համբուրելո՞վ կը մատնես զՈրդին մարդ-
49 դոյ։ Երբ անոնք որ բոլորտիքն էին տեսան ինչ
որ պիտի ըլլար, ըսին անոր, Տէր, զարնե՞նք
50 սրով։ Եւ անոնցմէ մին զարկաւ քահանայապե-
տին ծառային և մէկդի հանեց անոր ա՛ջ ական-
51 ջը։ Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ, Թոյլ
տուէք մինչեւ այդ տեղը։ Եւ դպաւ անոր ա-
52 կանջին և բժշկեց զայն։ Եւ Յիսուս ըսաւ իրեն
վրայ եկող քահանայապետներուն և տաճարին
իշխաններուն և Ծերերուն, Իբր թէ աւազակի՞
53 վրայ ելաք սուսերօք և բրօք։ Ամէն օր ձեզի
հետ էի տաճարին մէջ, և ձեռք չմեկնեցիք ինձ.
բայց այս է ձեր ժամանակը և խաւարին իշխա-
նութիւնը։
54 Եւ բռնելով զնա տարին և մուծին քահանա-
յապետին տունը։ Պետրոս ևս ի հեռուստա կ'եր-
55 թար անոր հետևէն։ Երբ կրակ վառեցին դուռ-
ին մէջ և ի միասին նստան, Պետրոս ևս նստաւ
56 անոնց մէջ։ Աղախին մը տեսնելով զնա որ կրա-
կին քով նստած էր, նայեցաւ անոր և ըսաւ,
57 Եւ սա անոր հետ էր։ Բայց Պետրոս ուրացաւ
զնա և ըսաւ, Կին դու, ես չեմ ճանչնար զնա։
58 Եւ փոչ մը հաքը ուրիշ մը տեսաւ զնա և ը-
սաւ, Եւ դու անոնցմէ ես։ Եւ Պետրոս ըսաւ,
59 Այլ դու, ես չեմ անոնցմէ։ Եւ իբր ժամ մը
հաքը ուրիշ մի ևս կը պնդէր և կ'ըսէր, Ար-
դարև սա ևս անոր հետ էր, վասն զի Գալիլ-
60 հացի է։ Բայց Պետրոս ըսաւ, Այր դու, չեմ
գիտեր ինչ կ'ըսես դուն։ Եւ մինչ կ'ըսէր գայլ,
61 վաղվաղակի հաւ խօսեցաւ։ Եւ Տէրը դարձաւ
և նայեցաւ Պետրոսի. և Պետրոս յիշեց Տէրոջը

խօսքը որ անոր ըսած էր Թէ Դեւս հաւը չխօսած
62 երիցս պիտի ուրանաս զիս։ Եւ Պետրոս դուրս
ելլելով լացաւ դառնապէս։
63 Եւ այն մարդիկը որ զՅեսուս կը պահէին, ծաղր
64 կ՚ընէին զնա և կը ծեծէին. Եւ անոր երեսը ծած-
կելով կը հանէին նմա ապտակ, և կը հարցնէին
անոր ըսելով, Մարգարէացիր, ո՞վ է որ զքեզ
65 քեզ։ Եւ ուրիշ շատ բաներ կ՚ըսէին անոր հայ-
հոյելով։
66 Եւ երբ առաւօտ եղաւ, ժողովրդեան ծերա-
կոյտը, քահանայապետները և դպիրները ժողո-
վեցան, և տարին զնա իրենց առեւանը և ըսին,
67 Եթէ դուս Քրիստոսն, ըսէ մեզ։ Բայց անոնց,
68 Եթէ ըսեմ ևս ձեզ, պիտի չհաւատաք. Եւ եթէ
բան ևս հարցնեմ ձեզ, պատասխան պիտի չտաք
69 ինձ, և ոչ պիտի արձակէք զիս։ Այսուհետև Որ-
դին մարդոյ պիտի նստի Աստուծոյ զօրութեան
70 աջ կողմն։ Եւ ամենքն ըսին, Ուրեմն դուն Աս-
տուծոյ Որդի՞ն ես։ Եւ նա ըսաւ անոնց, Դուք
71 կ՚ըսէք Թէ ես եմ։ Եւ անոնք ըսին, Այլ ևս
ի՞նչ պէտք է մեզ վկայութիւն, քանզի մենք
մեզմէն լսեցինք ատոր բերնէն։

ԳԼ. ԻԹ

1 Եւ անոնց բոլոր բազմութիւնը ոտք ելլելով տա-
2 րին զնա Պիղատոսի. Եւ սկսան ամբաստանու-
թիւն ընել անոր վրայ և ըսել, Գտանք զսա որ
կը մոլորեցուներ Ազգը, և կ՚արգելէր կայսեր
հարկ տալէ, և իրեն համար կ՚ըսէր Թէ Քրիստոս
3 Ե թագաւոր է։ Իսկ Պիղատոս հարցուց անոր և
ըսաւ, Չրէից թագաւորը դուս ես։ Եւ նա պա-
տասխան տուաւ անոր և ըսաւ, Դուն կ՚ըսես։
4 Անատեն Պիղատոս ըսաւ քահանայապետներուն
և ժողովրդոց, Ես չանցանք չեմ գտներ այս

5 մարդուն վրայ։ Բայց անոնք կը պնդէին և կ՚ը-
սէին Թէ կը խռովէ ժողովուրդը, և բոլոր Հրեաս-
տանի մէջ կը սորվեցունէ, Գալիլեայէ սկսեալ
6 մինչև հոս։ Եւ Պիղատոս երբ լսեց Գալիլեայի
համար, հարցուց Թէ Գալիլեացի՞ էր այդ մարդը։
7 Եւ երբ իմացաւ Թէ Հերովդէի իշխանութենէն էր,
ղրկեց զնա Հերովդէի, քանզի և նա Երուսաղէմ
էր այն օրերը։
8 Եւ Հերովդէս երբ տեսաւ զՅեսուս, շատ ուրա-
խացաւ, վասն զի ի բազմաց հետէ կը փափաքէր
տեսնել զնա, քանզի շատ բաներ լսած էր անոր
վրայ, և կը յուսար անոր ձեռօք նշան մը կա-
9 տարուած տեսնել։ Եւ շատ խօսքերով կը հարցնէր
զնա, բայց նա բնաւ պատասխան չտուաւ անոր։
10 Նաև քահանայապետները և դպիրները կեցած
էին, և սաստիկ ամբաստանութիւն կ՚ընէին անոր
11 վրայ։ Իսկ Հերովդէս անարգեց զնա իր զօրա-
կաններուն հետ, և ծաղրելէն ետքը հագուց անոր
փառաւոր հանդերձներ, և դարձեալ ղրկեց Պի-
12 ղատոսի։ Եւ այն օրը Պիղատոս և Հերովդէս բա-
րեկամ եղան իրարու, քանզի առաջ Թշնամու-
թիւն կար անոնց մէջ։
13 Եւ Պիղատոս կոչեց քահանայապետները և իշ-
14 խանները և ժողովուրդը, Եւ ըսաւ անոնց, Այս
մարդը բերիք իմ առջև իբրև մոլորեցուցիչ
ժողովրդեան, և ահա ես ձեր առջև քննութիւն
ընելով չգտայ այդ մարդուն վրայ յանցանք ո-
15 րոց վասն կ՚ամբաստանէք զդա. Եւ ոչ Հերովդէս,
քանզի անոր ղրկեցի զձեզ, և ահա մահու
16 արժանի գործ բրած չէ դա. Ուրեմն պատիժ
17 տամ ատոր և արձակեմ, իսկ ստիպեմ տեսնել
18 պարտ էր արձակել զդա անոնց։ Եւ բոլոր բազ-
մութիւնն ի միասին աղաղակեցին ըսելով, Բարձ
19 զդա, և արձակէ մեզ զԲարաբբաս, Որ քաղաքին
մէջ եղած խռովութեան և մարդասպանութեան

20 համար բանա դրուած էր, Եւ Պիղատոս ուզելով
արձակել զՅիսուս դարձեալ խօսեցաւ անոնց,
21 Բայց անոնք կ՚աղաղակէին և կ՚ըսէին, Խաչ
22 հանէ զդա, խաչ հանէ։ Եւ նա երրորդ անգամ
ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ ըրած է դա.
ես ասոր վրայ մահու արժանի չգտայ.
23 ուրեմն պատիժ տամ ասոր և արձակեմ, Իսկ
անոնք մեծաձայն աղաղակներով կը պնդէին, և
կը խնդրէին որ խաչուէ նա. և անոնց և քահա-
24 նայապետներուն ձայները զօրացան։ Եւ Պիղա-
տոս վճռեց որ անոնց խնդիրն ի գործ դրուէր։
25 Եւ ՚ի դէպ զոր անոնք կը խնդրէին, և որ խռո-
վութեան և մարդասպանութեան համար բանա
դրուած էր՝ արձակեց անոնց, և զՅիսուս մատ-
նեց անոնց կամացը։
26 Եւ երբ կը տանէին զնա, մարդ մը բռնեցին
Սիմոն անուն, կիւրենացի, որ արտէն կու գար,
և խաչը դրին անոր վրայ բերել զկնի Յիսուսի։
27 Եւ անոր հետևէն կ՚երթար մեծ բազմութիւն ժո-
ղովրդեան, նաև կանանց, որ կ՚ողբային և կո-
28 չային անոր համար։ Եւ Յիսուս դարձաւ անոնց
և ըսաւ, Դաուերք Երուսաղէմի, մի՛ լար իմ
վրաս, այլ լացէք ձեր անձերուն վրայ և ձեր
29 որդւոց վրայ։ Քանզի ահա օրեր կու գան յորս
պիտի ըսեն, Երանի ամլոց և որովայնից որ
30 չծնան, և սաներանց որ չդիեցուցին։ Անառեն
պիտի սկսին ըսել լերանց, Ինկէք մեր վրայ, և
31 բլուրներուն՝ ծածկեցէք զմեզ։ Վասն զի եթէ
դալար փայտին այսպէս կ՚ընեն, հապա չորին
ի՞նչ պիտի ըլլայ։
32 Ուրիշ երկու ևս, չարագործք, բերուեցան
33 անոր հետ սպանուելու։ Երբ գնացին Գագաթ
կոչուած տեղը, հոն հանեցին զնա ի խաչ, և այն
չարագործները ևս, մին՝ յաջմէ, և միւսն՝ ի
34 ձախմէ։ Եւ ըսաւ Յիսուս, Հայր, Թող դոցա,

քանզի չեն գիտեր ինչ կ՚ընեն։ Եւ երբ կը բա-
ժանէին անոր հանդերձները, ընկեցին վիճակ։
35 Եւ ժողովուրդը կայնած կը նայէր. իշխաններն
ևս անոնց հետ կը նախատէին զնա, և կ՚ըսէին,
Ուրիշներն ազատեց, Թող զինք՝ ազատէ, եթէ
36 դա է Քրիստոս, Աստուծոյ ընտրեալը։ Զօր կ՚ը-
նէին զնա և գինւոլները, առէլք կու գային, կը
37 մատուցանէին անոր քացախ, Եւ կ՚ըսէին, եթէ
դու ես Հրեից Թագաւորն, ազատէ քու անձդ։
38 Եւ էր գրուած դիր անոր վրայ Յունարէն և Լա-
տիներէն և Երբայերէրէն գիրերով, Թէ Սա է
արքայն Հրեից։
39 Եւ կախուած չարագործներէն մին կը հայհոյէր
զնա և կ՚ըսէր, եթէ դու ես Քրիստոսն, ազատէ
40 քու անձդ և զմեզ։ Եւ իսկ միւսը պատասխան
տուաւ և յանդիմանելով զնա՝ ըսաւ, Դուն Ա-
ստուծմէ չե՞ս վախնար, քանզի նոյն դատապար-
41 տութեան մէջ ես։ Եւ մենք իրաւամբ, քանզի
ահա մեր գործերուն արժանի հատուցումը կ՚առ-
42 նենք. բայց սա չար բան մը չըրաւ։ Եւ ըսաւ
Յիսուսի, Տէր, յիշէ զիս, երբ գաս արքայու-
43 թեամբդ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Ճշմարիտ կ՚ը-
սեմ քեզ, Դուն այսօր ինծի հետ պիտի ըլլաս
ի դրախտին։
44 Եւ ժամն էր իբրև վեցերորդ, և բոլոր երկրի
վրայ եղաւ խաւար մինչև իններորդ ժամ. և
45 արեգակը խաւարեցաւ, և տաճարին վարագոյրը
46 ցեղաւ. Եւ Յիսուս աղաղակեց ի ձայն մեծ և
ըսաւ, Հայր, քու ձեռքդ կ՚աւանդեմ հոգիս։
Եւ երբ զայս ըսաւ, աւանդեց հոգին։
47 Եւ հարիւրապետը տեսնելով ինչ որ եղաւ՝
փառք տուաւ Աստուծոյ և ըսաւ, Արդարև այս
48 մարդն արդար էր։ Եւ բոլոր բազմութիւնը որ
այս տեսիլը դիտելու համար ժողովուել էր՝ տես-
նելով ինչ որ եղաւ, կը բաղխէին իրենց կուրծքը

49 և կը դառնային՝ նաև անոր բոլոր ծանօթները
հեռուն կայնած էին, նոյնպէս և կանայք որ ա-
նոր հետէն եկած էին Գալիլեայէ, և կը տեսնէին
այս բաները։
50 Եւ ահա մարդ մը Յովսէփ անուն՝ որ խորհրդա-
51 դական էր, այր բարի և արդար, (Սա չէր մաս-
նակից անոնց խորհրդոյն և գործին, Հրէից Արի-
մաթիա քաղաքէն, որ և ինքն իսկ կը սպասէր
52 Աստուծոյ թագաւորութեան)։ Սա գնաց առ Պի-
53 ղատոս և խնդրեց Յիսուսի մարմինը, եւ իջու-
ցանելով զնա խաչէն՝ պատեց կտաւով և դրաւ
քարէ փորուած գերեզմանի մէջ, ուր բնաւ մարդ
54 դրուած չէր։ Եւ այն օր ուրբաթ էր, և շաբաթը
պիտի *սկսէր։
55 Եւ անոր հետէն գնացին կանայք որ եկած էին
անոր հետ Գալիլեայէ, և տեսան գերեզմանը և
56 թէ ինչպէս դրուեցաւ անոր մարմինը։ Եւ դառ-
նալով խունկեր և իւղեր պատրաստեցին, և շա-
բաթի օրը հանգարտեցան ըստ պատուիրանին։

Գլ. ԻԴ

1 Եւ ի միաշաբաթուն, առաւօտուն չատ կանուխ,
եկան գերեզմանը, և բերին խունկերը զոր
պատրաստած էին, և ուրիշ կանայք ևս անոնց
2 հետ։ Եւ գտան քարը գերեզմանէն մեկնի թա-
3 ւալած։ Եւ ներս մտնելով չգտան Տէր Յիսուսի
4 մարմինը։ Եւ եղաւ որ երբ անոնք ի տարակուսի
էին այս բանին համար, ահա արք երկու լուսա-
5 զոր հանդերձներով հասան առ նոսա։ Եւ երբ
ահիւ լցուած իրենց երեսները խոնարհեցուցին
ի գետին, այն *արքն ըսին անոնց, Ընդէ՞ր կը
6 փնտռէք կենդանին մեռելոց հետ։ Հոս չէ նա,

*Ցոան. լուսնար

այլ յարեաւ։ յիշեցէք ինչպէս խօսեցաւ ձեզ,
7 երբ դեռ Գալիլեա էր, Ըսելով Թէ Պարտ է Որ-
դւոյ մարդոյ մատնուիլ մեղաւոր մարդոց ձեռքը
8 և ի խաչ ելլել, և երրորդ օրը յառնել։ Եւ
9 յիշեցին անոր խօսքը։ Եւ դառնալով գերեզմա-
նէն պատմեցին այս ամէնը մեսասանից և բոլոր
10 ուրիշներուն։ Եւ էին Մարիամ Մագդաղենացի
և Յովհաննա և Յակոբոսի Հայրը Մարիամ, և
անոնց հետ ուրիշներ, որ պատմեցին այս բաներն
11 առաքելոցն։ Եւ անոնց առջեւ չտպտպութիւն
երեւեցաւ անոնց խօսքը, և չէին հաւատար անոնց։
12 Բայց Պետրոս ելաւ վազեց դէպ ի գերեզմանը, և
ծռելով նայեցաւ և տեսաւ որ միայն կտաւները
կային։ և գնաց իր մտքին մէջ զարմանալով ե-
ղածին վրայ։
13 Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը գիւղ մը
կերթային, որ հեռու էր երուսաղեմէ վաթսուն
14 ասպարէզ, և անոր անունն էր Էմմաուս։ Եւ
անոնք կը խօսէին իրարու հետ այս բոլոր ցաւից
15 վրայ։ Եւ եղաւ որ երբ անոնք կը խօսէին և կը
խորհէին, ինքն Յիսուս մօտենալով կերթար
16 անոնց հետ։ Բայց անոնց աչքերը բռնուած
17 էին, որ չճանչային զնաւ։ Եւ ըսաւ անոնց, Ի՞նչ
են այդ խօսքերը զոր փալլով կը խօսիք իրա-
18 րու հետ, և տրտմած էք։ Պատասխան տուաւ
անոնցմէ մին որուն անունն էր Կղեոպասս, և ըսաւ
անոր, Դո՞ւ միայն կաս յերուսաղէմ, և չես գի-
19 տեր Թէ ինչեր եղան հոն այս օրերս։ Եւ նա ըսաւ
անոնց, Ի՞նչ։ Եւ անոնք ըսին անոր, Յիսուսի
Նազովրեցւոյ համար, որ Աստուծոյ և բոլոր ժո-
ղովրդեան առջեւ գործով և բանիւ եղաւ զօրա-
20 ւոր մարգարէ. Ի՛նչպէս քահանայապետք և իշ-
խանք մեր մատնեցին զնա ի մահ դատապարտի
21 և հանեցին ի խաչ։ Իսկ մենք կը յուսայինք Թէ
նա էր որ պիտի ազատէր զիսրայէլ. և ի վերայ

այսր ամենայնի այս երրորդ օր է որ այս բաներն
22 եղան։ Նաև զարմացուցին զմեզ մեներ կանայք
ոմանք, որ առաւօտուն կանուխ գնացին գերեզ-
23 մանը, եւ չգտանելով անոր մարմինը եկան և ըսին
թէ հրեշտակներու տեսիլ ևս տեսան, որ ըսած
24 են թէ կենդանի է նա։ Եւ մերիններէն ոմանք
գնացին գերեզմանը և գտան այնպէս, ինչպէս
25 ըսին կանայք, միայն չտեսան զնա։ Եւ նա ըսաւ
անոնց, Ով անխոհ և թուլասիրտք ի հաւատալ
այն բոլոր բաներուն զորս խօսեցան մարգարէք.
26 Ո՞չ պարտքն պարտ էր Քրիստոսի կրել այս չար-
27 չարանքը և մտնել իւր փառքը։ Եւ սկսելով
Մովսեսէ և բոլոր մարգարէներէն կը մեկներ ա-
նոնց, ինչ որ ՚ի գրոցն էր իրեն համար բոլոր գրոց
28 մէջ։ Երբ մօտեցան գիւղին ուր կ'երթային, ինք
ևս կը ցուցնէր որպէս թէ պիտի երթար աւելի
29 հեռու տեղ։ Բայց սաստկացին զնա և ըսին, Մեր
քով կեցիր, քանզի իրիկունը մօտ է և իջած է
30 օրը. և մտաւ կենալ անոնց հետ։ Եւ եղաւ որ
երբ նա սեղան նստաւ անոնց հետ, առաւ հացը,
31 օրհնեց, և կտրելով տուաւ անոնց։ Անտանին
անոնց աչուըները բացուեցան և ճանչցան զնա,
32 և նա անհետացաւ եղաւ անոնցմէ։ Եւ կ'ըսէին
իրարու, Ո՞չ ապաքէն մեր սիրտերը կը բորբո-
քէին ի մեզ, երբ մեզի հետ կը խօսէր ճամբան,
և կը մեկնէր մեզ գիրքերը։
33 Եւ հոն նոյնժամայն դարձան Երուսաղէմ, և
գտան ժողովեալ ի միասին մեներուն և որ ա-
34 նոնց հետ էին, Որ կ'ըսէին Թէ Արդարև յար-
35 եաւ Տէր, և երեւեցաւ Սիմոնի։ Եւ անոնք պատ-
մեցին ինչ որ ճամբան եղաւ, և Թէ ինչպէս
ճանչցուց զինք անոնց երբ հացը կը կտրեր։
36 Եւ մինչ կը խօսէին այս բաներըն, ինքն ՚ի միտս
կեցաւ անոնց մէջ և ըսաւ անոնց, Խաղաղու-
37 թիւն ընդ ձեզ։ Բայց անոնք զարհուրելով կը

վախնային, և կը կարծէին Թէ ոգի կը տեսնէին։
38 Եւ ըսաւ անոնց, Ընդէ՞ր խռովեալ եք, և ընդ-
դէ՞ր խորհուրդներ կ'ելլեն ձեր սիրտերուն մէջ։
39 Տեսէք ձեռուըներս և ոտուըներս, որ ես ինքն
եմ. չօշափեցէք զիս և տեսէք, վասն զի ոգին
մարմին և ոսկր չունի, ինչպես զիս կը տեսնէք
40 որ ունիմ։ Եւ այս ըսելով ցուցուց իւր ձեռուը-
41 ները և ոտուըներն անոնց։ Եւ երբ տակաւին
չէին հաւատար էրէնց ուրախութենէն և զար-
մացեալ էին, ըսաւ անոնց, Ունի՞ք հոս կերա-
42 կուր։ Եւ անոնք տուին անոր կտոր մը խորոված
43 ձուկ և խորիսխ մեղու։ Եւ առաւ կերաւ անոնց
44 առջև։ Եւ ըսաւ անոնց, Ա՛յս են խօսքերը զորս
խօսեցայ ձեզ, երբ դեռ ձեզի հետ էի, Թէ
պէտք է որ կատարուին բոլոր գրուածներն ին-
ձի համար յօրէնս Մովսիսի և ի մարգարէս և
45 ի սաղմոսս։ Անտանին բացաւ անոնց միտքն ի-
46 մանալ զգիրս։ Եւ ըսաւ անոնց Թէ Այսպէս
գրուած է, և այսպէս պարտ էր Քրիստոսի չար-
չարուիլ, և երրորդ օրը միւռելներէն յառնել.
47 Եւ քարոզուիլ անոր անուամբ ապաշխարութիւն
և մեղաց թողութիւն բոլոր ազգերու մէջ,
48 սկսեալ յերուսաղէմ։ Եւ դուք եք վկայ ա-
49 սոնց։ Եւ ահա ես կը ղրկեմ իմ Հօրս խոստումը
ձեր վրայ, բայց դուք նստեցէք Երուսաղէմ քա-
ղաքին մէջ, մինչև որ վերէն զօրութիւն առնուք
ձեր վրայ։
50 Եւ հանեց զանոնք մինչև Բեթանիա, և վեր-
51 ցուննելով իւր ձեռուըներն օրհնեց զանոնք։ Եւ
եղաւ որ երբ կ'օրհնէր զանոնք, զատուեցաւ
52 անոնցմէ և կ'ելլէր վեր յերկինս։ Եւ անոնք
երկրպագութիւն ընելով անոր դարձան յերու-
53 սաղէմ մեծ ուրախութեամբ։ Եւ տաճարին մէջ
էին հանապազ, և կը գովէին և կ'օրհնէին
զԱստուած։ Ամէն։

Ա.ԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

—

ԳԼՈՒԽ Ա

1 Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստ-
2 ուած, և Աստուած էր Բանն։ Նա էր ի սկզբանէ
3 առ Աստուած։ Ամէն բան անով եղաւ, և ա-
ռանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։
4 Կեանքն անով էր, և կեանքը մարդոց լոյսն էր։
5 Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր, և խա-
ւարը չեղաւ անոր հասու։
6 Աստուծմէ ղրկուած մարդ մը կար, որուն
7 անունն էր Յովհաննէս։ Սա եկաւ ի վկայու-
թիւն որ վկայէր Լուսոյն համար, որպէս զի
8 ամենքին հաւատային անոր միջոցաւ։ Նա չէր
այն Լոյսը, այլ ե՛կաւ որ վկայէր Լուսոյն հա-
մար։
9 Ճշմարիտ Լոյսն այն էր, որ *կը լուսաւորէ աշ-
10 խարհ եկող՝ բոլոր մարդիկ։ Աշխարհի էր, և
աշխարհ անով եղաւ, և աշխարհ չճանչցաւ զնա։
11 Եկաւ առ իւրան, և իւրքն չընկալան զնա։
12 Բայց որք ընկալան զնա, իշխանութիւն տուաւ
անոնց լինել որդիս Աստուծոյ, անոնց որ կը հա-

*Կամ, աշխարհ գալով՝ կը լուսաւորէ

13 ւատան յանուն Նորա։ Որք ոչ յարենէ և ոչ
ի կամաց մարմնոյ և ոչ ի կամաց առն, այլ Աս-
14 տուծմէ ծնան։ Եւ Բանն մարմին եղաւ և բնա-
կեցաւ ի մեզ, և տեսանք անոր փառքն իրրև
զփառս միածնէ ի Հօրէ լի շնորհօք և ճշմար-
տութեամբ։
15 Յովհաննէս վկայեց անոր համար և աղաղակեց
ըսելով, Սա է որոյ համար կ'ըսէի, Ան որ իմ
ետեւէս կու գայ՝ քան զիս յառաջ եղաւ, վասն
16 զի յառաջ էր քան զիս։ Եւ անոր լրութենէն
մեք ամենքիս առինք շնորհս փոխանակ շնոր-
17 հաց։ Քանզի օրէնքը տրուեցաւ Մովսէսի ձեռօք,
բայց շնորհք և ճշմարտութիւն եղան ի ձեռն Յի-
18 սուսի Քրիստոսի։ ԶԱստուած ոչ ոք տեսած է
երբեք, բայց միածին Որդին որ Հօրը ծոցն է՝
նա պատմեց։
19 Եւ Յովհաննու վկայութիւնն այս է երբ Հրեայք
ղրկեցին Երուսաղէմէ քահանաներ և Ղեւացիք-
20 ներ հարցնել անոր թէ Դու ո՞վ ես։ Եւ նա
խոստովանեցաւ և չուրացաւ։ Խոստովանեցաւ
21 թէ Ես չեմ Քրիստոսն։ Եւ հարցուցին անոր, Հա-
պա ինչ, Եղիա՞ ես։ Եւ ըսաւ, Չեմ։ Ան մար-
22 գարէ՞ն ես։ Պատասխան տուաւ թէ Ոչ։ Անա-
տեն ըսին անոր, Դու ո՞վ ես։ ըսէ մեզ, որ պա-
տասխան տանինք զմեզ ղրկողներուն։ Դու ինչ
23 կ'ըսես քեզի համար։ Ըսաւ, Ես ձայն եմ անոր
որ անապատին մէջ կ'աղաղակէ, Ուղղեցէք Տէ-
րոջը ճանապարհը, ինչպես ըսաւ Եսայի մարգարէն։
24 Եւ այն ղրկուածներն էին փարիսեցիներէն։
25 Եւ հարցուցին անոր ըսելով, Ընդէ՞ր կը մկրտես
ուրեմն, եթէ դու չես Քրիստոսն, և ոչ Եղիա,
26 և ոչ մարգարէն։ Պատասխան տուաւ անոնց
Յովհաննէս և ըսաւ, Ես ջրով կը մկրտեմ, բայց
27 ձեր մէջ կայ զոր դուք չէք ճանչնար։ Նա է որ
իմ ետեւէս կու գայ, որ յառաջ եղաւ քան զիս,

28 որոյ ես արժանի չեմ քակել կօշկին կապը։ Այս
բաները եղան Բեթաբարայի մէջ յայնկոյս Յոր-
դանանու ուր Յովհաննէս կը կենար և կը մկըր-
տէր։
29 Ի վաղիւ անդր Յովհաննէս տեսաւ զՅիսուս որ
կու գար անոր և ըսաւ, Ահա Գառն Աստուծոյ
30 որ բառնայ զմեղս աշխարհի։ Սա է որոյ համար
կ'ըսէի, Իմ ետեւէս կու գայ մարդ մը որ յառաջ
եղաւ քան զիս, վասն զի յառաջ իսկ էր քան զիս։
31 Եւ ես չէի ճանչնար զնա, բայց սա պատճառաւ
եկայ ես մկրտել յերկի, որ նա յայտնուէր Իս-
32 րայէլի։ Եւ Յովհաննէս վկայեց ըսելով Թէ կը
տեսնեմ զՀոգին որ կ'իջնէր յերկնից իբրև գա-
33 ղաւնի, և կը հանգչէր անոր վրայ։ Եւ ես չէի
ճանչնար զնա, բայց որ զրկեց զիս մկրտել յերկի,
նա ըսաւ ինձ, Որոյ վրայ տեսնես զՀոգին, որ
կ'իջնէ և կը հանգչի անոր վրայ, նա է որ կը
34 մկրտէ Հոգւով Սրբով։ Եւ ես տեսայ, և վկայեցի
Թէ սա է Որդին Աստուծոյ։
35 Ի վաղիւ անդր դարձեալ Յովհաննէս կեցած
36 էր, և անոր աշակերտներէն երկուքը։ Եւ նայե-
լով Յիսուսի որ կը գնայր ըսաւ, Ահա Գառն
37 Աստուծոյ։ Եւ լսեցին անոնք երկու աշակերտները
մինչ կը խօսէր, և գնացին Յիսուսի հետեւեն։
38 Յիսուս երբ դարձաւ և տեսաւ զանոնք որ հետ-
ևէն կու գային՝ ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզեք։ Եւ
անոնք ըսին անոր, Ռաբբի, որ թարգմանուելով
կը նշանակէ վարդապետ, ո՞ւր է քու օթևանդ։
39 Ըսաւ անոնց, Եկէք և տեսէք։ Եւ տեսան
ուր էր անոր օթևանը, և այն օր անոր քով կե-
40 ցան, քանզի էր ժամին իբրև տասներորդ։ Սիմոն
Պետրոսի եղբայրն Անդրէաս էր մին այն երկու-
քեն որ լսեցին ի Յովհաննէ և գնացին անոր հե-
41 տեւէն։ Սա կը գտնէ նախ իւր եղբայրը Սիմոն
և կ'ըսէ անոր, Գտանք զՄեսիա, որ կը թարգ-

42 մանուի *Քրիստոս։ Եւ տարաւ զնա առ Յիսուս։
Յիսուս նայելով անոր ըսաւ, Դուն ես Սիմոն որ-
դի Յովնանու։ դուն պիտի կոչուիս Կեփաս, որ կը
թարգմանուի †Պետրոս։
43 Ի վաղիւ անդր Յիսուս կամեցաւ Գալիլեա ել-
լել, և գտնելով զՓիլիպպոս ըսաւ անոր, Ել
44 իմ ետեւէս։ Եւ Փիլիպպոս էր Բեթսայիդայէ,
45 Անդրէի և Պետրոսի քաղաքէն։ Փիլիպպոս կը
գտնէ զՆաթանայէլ և կ'ըսէ անոր, Որոյ համար
Մովսէս գրեց յօրէնս և մարգարէք ևս, գտանք
զ—, այսինքն զՅիսուս Նազովրեցի, զորդին Յով-
46 սեփայ։ Եւ Նաթանայէլ ըսաւ անոր, Մի՞թէ
հնա՞ր է որ բարի բան մը ըլլայ Նազարեթէ։ Ըսաւ
47 անոր Փիլիպպոս, եկ և տես։ Յիսուս երբ տեսաւ
զՆաթանայէլ որ կու գար առ նա, ըսաւ անոր
համար, Ահա արդարև իսրայէլացի, յորում նեն-
48 գութիւն չկայ։ Նաթանայէլ ըսաւ անոր, Ուստի՞
կը ճանչնաս զիս։ Պատասխան տուաւ Յիսուս և
ըսաւ անոր, Դեռ Փիլիպպոսի զքեզ չկոչած, դուն
49 որ թզենւոյն տակն էիր, տեսայ զքեզ։ Պատաս-
խան տուաւ Նաթանայէլ և ըսաւ անոր, Ռաբբի,
դու ես Աստուծոյ Որդին, դու ես Իսրայելի Թա-
50 գաւորը։ Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ ա-
նոր, Վասն զի ըսի քեզ, Թէ տեսայ զքեզ Թզենւ-
ոյն տակ, կը հաւատաս։ քան զայս աւելի մեծ
51 բաներ պիտի տեսնես։ Եւ ըսաւ անոր, Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, այսուհետև պիտի տեսնէք
զերկինս բացուած, և Աստուծոյ հրեշտակները
որ կ'ելլեն և կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ։

---

*Այսինքն՝ Օծեալ
†Այսինքն՝ Վէմ

Գլ. Բ

1 Եւ երրորդ օրը հարսանիք կար Գալիլեայի կա-
2 նա Յովսէփ, և Յիսուսի մայրն հոն էր։ Յիսուս
ևս կոչուեցաւ այն հարսանիքը, նաև անոր ա-
3 շակերտները։ Եւ երբ գինին պակասեցաւ, Յի-
4 սուսի մայրն ըսաւ անոր, Գինի չունին։ Յիսուս
ըսաւ անոր, Կին դու, դուն իմ հետս ի՞նչ բան
5 ունիս. իմ ժամանակս դեռ հասած չէ։ Անոր
մայրն ըսաւ սպասաւորներուն, Ինչ որ ըսէ ձեզ՝
6 ըրէք։ Հոն հրէից մաքրուելու սովորութեան հա-
մեմատ դրուած էին վեց թաղկիք, որոց իւրա-
7 քանչիւրը կը տանէր երկու կամ երեք մարս։ Յի-
8 սուս ըսաւ անոնց, Լցէք այդ թաղկիները ջրով։
Եւ լցին զանոնք մինչև ի բերան։ Եւ ըսաւ ա-
նոնց, Հիմա հանեցէք և տարէք սեղանապետին։
9 Եւ անոնք տարին։ Եւ սեղանապետը երբ ճա-
շակեց գինի եղած ջուրը, և չէր գիտեր թէ
ուսկէ էր, բայց սպասաւորները որ հանած էին
ջուրը՝ գիտէին, սեղանապետը կը խօսի փեսային,
10 Եւ կ'ըսէ անոր, Ամէն մարդ բարւոք գինին ա-
ռաջ կը մատուցանէ, և երբ կ'արբենան, ապա
տարտնագոյնը. Բայց դուն բարւոք գինին մինչև
11 ցարդ պահեցիր։ Յիսուս հրաշներուն սկիզբն այս
ըրաւ Գալիլեայի Կանա Յովսէփ, և յայտնեց իր
փառքը, և անոր աշակերտներն հաւատացին
անոր։
12 Ա՛յնուհետև Յիսուս կափառնայում իջաւ ինք
և իր մայրը և եղբայրները և աշակերտները,
և շատ օրեր չկեցան հոն։
13 Եւ հրէից զատիկը մօտ էր, և Յիսուս երու-
14 սաղէմ եկաւ։ Եւ տաճարին մէջ գտաւ արջառ
և ոչխար և աղաւնի վաճառողները, նաև սակ
15 փոխողները որ նստած էին։ Եւ չուանէ խարա-
զան շինելով դուրս հանեց տաճարէն ամէնքը,

նաև ոչխարները և արջառները, և սակ փո-
խողներուն պղինձները ցիրուցան ըրաւ, և սե-
16 ղանները կործանեց։ Եւ ացուկի վաճառողնե-
րուն ըսաւ, Վերցուցէք առտնէ ասկէ, իմ Հօրս
17 տունը մի՛ ընէք տուն վաճառի։ Եւ անոր աշա-
կերտներն յիշեցին թէ գրուած է, Քու տանդ
նախանձը կերաու զիս։
18 Անսանն պատասխան տուին Հրեաները և ըսին
անոր, Ի՞նչ նշան կը ցուցնես մեզ, որ կ'ընես
19 այդ բաները։ Պատասխան տուաւ Յիսուս և ը-
սաւ անոնց, Քակեցէք այս տաճարը, և երեք
20 օրուան մէջ պիտի կանգնեմ զայն։ Եւ Հրեաներն
ըսին, Քառասուն և վեց տարուան մէջ չինուե-
ցաւ այս տաճարը, և դուն երեք օրուան մէջ
21 պիտի կանգնե՞ս զայն։ Բայց նա իւր մարմնոյն
22 տաճարին համար կ'ըսէր։ Ուստի երբ մեռելնե-
րէն յարեաւ, աշակերտներն յիշեցին թէ բսած
էր *զայս, և հաւատացին գրոյն և խօսքին զոր
ըսաւ Յիսուս։
23 Եւ երբ զատկի ատենն Երուսաղէմ էր, շատ
մարդիկ տեսնելով անոր հրաշները հաւատացին
24 անոր անուանը։ Բայց ինք Յիսուս չէր հա-
ւատար անոնց իւր անձը, քանզի գիտէր ամէն
25 մարդ։ Եւ պէտք չէր որ վկայէր ոք անոր մար-
դու համար, քանզի ինք գիտէր թէ ինչ կար
ի մարդն։

Գլ. Գ

1 Եւ փարիսեցիներէն մարդ մը կար Նիկոդեմոս
2 անուն որ իշխան էր Հրէից։ Սա եկաւ †առ Յի-
սուս՝ գիշերայն և ըսաւ անոր, Ռաբբի, գիտենք
որ դուն Աստուծմէ եկած ես վարդապետ, քանի

*Ոմանք, զայս իրենց †Ոմանք, առ նա

զի ոչ օք կրնայ ընել այդ հրաշները զորս դուն
3 կ'ընես, եթէ Աստուած չէ անոր հետ։ Պատաս-
խան տուաւ Յիսուս և ըսաւ անոր, Ճշմարիտ
Ճշմարիտ կ'ըսեմ քեզ, եթէ մարդ *վերստին
չծնանի, չկրնար տեսնել Աստուծոյ թագաւո-
4 րութիւնը։ Նիկոդեմոս ըսաւ անոր, Ինչպէս
կրնայ ծնանիլ մարդ որ ծեր է. միթէ հնարք է
5 կրկին մօրը որովայնը մտնել և ծնանիլ։ Յիսուս
պատասխան տուաւ, Ճշմարիտ Ճշմարիտ կ'ըսեմ
քեզ, եթէ մարդ չծնանի ի ջուրէ և ի Հոգւոյ,
չկրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը։
6 Մարմինէ ծնածը մարմին է, և ի Հոգւոյն ծնածն
7 հոգի է։ Դուք մի՛ զարմանար որ ըսի քեզ, Պարտ
8 է ձեզ վերստին ծնանիլ։ Հովն ուր կամ կը փչէ,
և անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուստի
կու գայ կամ ուր կ'երթայ. սոյնպէս է այն
9 ամէնը որ կը ծնանի ի Հոգւոյն։ Պատասխան
տուաւ Նիկոդեմոս և ըսաւ անոր, Ինչպէս
10 կրնայ ըլլալ այդ։ Պատասխան տուաւ Յիսուս
և ըսաւ անոր, Դուն վարդապետ ես Իսրայելի,
11 և չե՞ս գիտեր զայդ։ Ճշմարիտ Ճշմարիտ կ'ըսեմ
քեզ, Թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, և ինչ որ
տեսանք՝ կը վկայենք, և մեր վկայութիւնը չես
12 ընդունիր։ Եթէ երկրաւորներուն ըսի ձեզ և չէք
հաւատար, ինչպէս պիտի հաւատաք եթէ երկ-
13 նաւորներուն ըսեմ ձեզ։ Եւ ոչ ոք ելաւ յերկինս,
բայց նա միայն որ յերկնից էջաւ, Որդին մարդոյ
14 որ է յերկինս։ Եւ ինչպէս որ Մովսէս բարձրա-
ցուց զօձն անապատին մէջ, այնպէս պարտ է
15 Որդւոյ մարդոյ բարձրանալ, Որպէս զի ամէնը
որ անոր հաւատայ՝ չկորսուի, այլ յաւիտենական
16 կեանք ունենայ։ Քանզի Աստուած այնպէս սի-
րեց զաշխարհ, մինչև իւր միածին Որդին տուաւ,

*Կամ, վերէն

որպէս զի ամէնը որ անոր հաւատայ՝ չկորսուի,
17 այլ յաւիտենական կեանք ունենայ։ Վասն զի
Աստուած չղրկեց իւր Որդին յաշխարհ որ դատէ
18 զաշխարհ, այլ որ աշխարհ փրկուի անով։ Ով
որ կը հաւատայ անոր՝ չդատապարտուիր. և ով
որ չհաւատար՝ արդէն իսկ դատապարտուած է,
քանզի չհաւատաց Աստուծոյ միածին Որդւոյն
19 անուանը։ Եւ այս է դատապարտութիւնը, որ
լոյսը եկաւ յաշխարհ, և մարդիկ սիրեցին խա-
ւարը քան զլոյսն աւելի, քանզի անոնց գործերը
20 չար էին։ Վասն զի ամէնը որ չար կը գործէ՝
կ'ատէ լոյսը, և չգայ առ լոյսն որ չյանդիման-
21 ուին իւր գործերը։ Բայց ով որ ճշմարտութիւնն
կը գործէ՝ կու գայ առ լոյսն, որ յայտնի ըլլան
իւր գործերը թէ Աստուծով գործուեցան։
22 Ետև այսորիկ եկաւ Յիսուս և անոր աշակերտ-
ներն Հրէաստանի երկիրը, և հոն կը կենար ա-
23 նոնց հետ, և կը մկրտէր։ Յովհաննէս ևս կը
մկրտէր յԱյնոն մօտիկ Սաղիմի մօտ, քանզի շատ ջուր
24 կար հոն, և կու գային և կը մկրտուէին. Քանզի
Յովհաննէս դեռ բանտ դրուած չէր։
25 Անտահն խնդիր եղաւ Յովհաննու աշակերտնե-
26 րէն *Հրէից հետ մաքրութեան վրայ։ Եւ եկան
Յովհաննու և ըսին անոր, Ռաբբի, նա որ քեզի
հետ էր յայնկոյս Յորդանանու, որուն դուն
վկայեցիր, ահա կը մկրտէ նա, և ամէնքը կու գան
27 առ նա։ Պատասխան տուաւ Յովհաննէս և ըսաւ,
Մարդ չկրնար բան մը առնուլ, եթէ տրուած չէ
28 անոր յերկնից։ Դուք ձեզի կը վկայէք ինձ Թէ
ըսի, Ես Քրիստոսը չեմ, այլ ղրկուած եմ անոր
29 առջևէն։ Ով որ ունի հարսը՝ նա է փեսային, իսկ
փեսային բարեկամը որ կը կենայ և կը լսէ անոր,
ուրախութեամբ կ'ուրախանայ փեսային ձայնին
համար. ուստի այս իմ ուրախութիւնս լցուած է։

*Կամ, Հրէի մը

30 Պէտք է որ նա աճի, բայց ես նուազիմ։ (31) Ան
որ վերէն կու գայ՝ ի վեր է քան զամենայն. ան
որ յերկրէ է՝ երկրաւոր է, և յերկրէ կը խօսի.
ան որ յերկինից կու գայ՝ ի վեր է քան զամենայն.
32 Եւ ինչ որ տեսաւ և լսեց՝ զայն կը վկայէ, և
33 անոր վկայութիւնը ոչ ոք կ'ընդունի։ Ով որ անոր
վկայութիւնը կ'ընդունի՝ կնքեց թէ Աստուած
34 ճշմարիտ է։ Վասն զի այն զոր Աստուած դրկեց՝
Աստուծոյ խօսքերը կը խօսի, քանզի Աստուած
35 անոր չտար Հոգին չափով։ Հայրը կը սիրէ Որդին,
36 և ամէն բան անոր ձեռքը տուած է։ Ով որ Որ-
դւոյն կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի.
և ով որ Որդւոյն չհնազանդիր՝ կեանք պիտի
չտեսնէ, այլ Աստուծոյ բարկութիւնը կը մնայ
անոր վրայ։

Գլ. Դ

1 Արդ երբ Տէրը իմացաւ որ փարիսեցիք լսած էին
թէ Յիսուս քան զՅովհաննէս աւելի աշակերտներ
2 կ'ընէր և կը մկրտէր, (թէպէտ ոչ թէ Յիսուս ինք
3 կը մկրտեր, այլ աշակերտները), Թողուց զԼրէաս-
4 տան և գնաց միւսանգամ ի Գալիլեա։ Եւ հարկ
5 եղաւ որ անցնէր Սամարիայէ։ Ուստի եկաւ Սա-
մարացւոց քաղաք մը որոյ անուն էր Սուքքար,
մօտ այն տեղւոյն զոր Յակոբ տուաւ իւր որդւոյն
6 Յովսեփայ. Եւ հոն Յակոբայ աղբիւր կար։ Եւ Յի-
սուս ճամբէն յոգնած ըլլալով նստաւ այն աղբիւր
վրայ. ԵՒ ժամ էր իբրև վեցերորդ։
7 Սամարիայէ կին մը եկաւ ջուր հանել։ Յիսուս
8 ըսաւ անոր, Տուր ինձ ըմպել. (Քանզի աշա-
կերտները քաղաք գնացած էին կերակուր գնել։
9 Անսաեն Սամարացի կինն ըսաւ անոր, Դուն որ
Հրեայ ես՝ ինչպէս կը խնդրես խմել ինձ, Սա-
մարացի կնոջէ. վասն զի Հրեայք չեն հաղորդիր

10 Յամարացւոց հետ։ Յիսուս պատասխան տուաւ
և ըսաւ անոր, Եթէ գիտնայիր դուն Աստուծոյ
պարգեւը, և թէ ով է նա որ կ'ըսէ քեզ, Տուր
ինձ խմել, դուն պիտի խնդրէիր անկէ, և նա
11 պիտի տար քեզ կենդանի ջուր։ Կինը ըսաւ անոր,
Տէր, դուն դոյլ ալ չունիս, և այս ջրհորը խոր է.
ուրեմն ուսկի՞ պիտի ունենաս այն կենդանի ջուրը։
12 Մեր Հայր դուն աւելի մեծ ես քան զՅակոբ մեր Յակոբ,
որ այս ջրհորը տուաւ մեզ, և ասկէ խմեց ինք և
13 անոր որդիքը և անոր անասունները։ Պատաս-
խան տուաւ Յիսուս և ըսաւ անոր, Ամէն որ
այդ ջուրէն խմէ՝ պիտի ծարաւի մնայ դարձեալ,
14 բայց ով որ խմէ այն ջուրէն զոր ես պիտի տամ
անոր՝ յաւիտեան պիտի չծարաւի. Այլ այն ջուրը
զոր ես պիտի տամ անոր՝ պիտի ըլլայ ինձմէ ջրոյ
աղբիւր որ կը բղխէ յաւիտենական կեանց հա-
15 մար։ Կինն ըսաւ անոր, Տէր, տուր ինձ այն ջուրը
16 որ չծարաւիմ, և չգամ հոս ջուր հանել։ Յիսուս
17 ըսաւ անոր, Գնա կոչէ արդ, և եկ հոս։ Կինը
պատասխան տալով ըսաւ, Ես այր չունիմ։
Յի-
սուս ըսաւ անոր, Աղէկ ըսիր թէ Այր չունիմ,
18 Քանզի դուն հինգ այր ունեցած ես, և այն զոր
հիմա ունիս՝ քու այրդ չէ. ուրեմն ըսիր ճշդի։
19 Կինն ըսաւ անոր, Տէր, կը տեսնեմ որ դուն
20 մարգարէ ես։ Մեր հայրերն այս լերան վրայ եր-
կիր պագին, և դուք կ'ըսէք թէ Երուսաղէմ հիմ
21 է տեղն, որ պարտ է երկիր պագանել։ Յիսուս
ըսաւ անոր, Կին դուն, հաւատա ինձ որ ժամանակ
22 կու գայ, երբ ոչ այս լերան վրայ, և ոչ Երու-
սաղէմ պիտի երկրպագէք Հօր։ Դուք կ'երկրպա-
գէք այնմ զոր չէք ճանչնար. մենք կ'երկրպա-
գենք այնմ զոր կը ճանչնանք. քանզի փրկու-
23 թիւնը Հրեաներէն է։ Բայց ժամանակ կու գայ
և արդէն իսկ է, որ ճշմարիտ երկրպագուք պիտի
երկրպագեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ,

քանզի և Հայր այնպիսի երկրպագուներ կ'ուզէ
24 իրեն։ Աստուած Հոգի է, և անոր երկրպագող-
ներն ալ պարտին հոգւով և ճշմարտութեամբ
25 երկիր պագանել։ Կինն ըսաւ անոր, Գիտեմ որ
կու գայ Մեսիան որ Քրիստոս կ'ըսուի։ երբ նա
26 գայ, ամէն բան պիտի պատմէ մեզ։ Յիսուս ըսաւ
27 անոր, Ես այն եմ որ քեզի հետ կը խօսիմ։ Եւ
ասոր վրայ եկան անոր աշակերտները, և զար-
մացան որ այ՜ կինոջ հետ կը խօսէր։ բայց անոնցմէ
ոչ ոք ըսաւ թէ ի՞նչ կ'ուզես, կամ ի՞նչ կը խօ-
28 սիս ասոր հետ։ Անատեն կինը թողուց իւր սա-
29 փորը և գնաց քաղաքը, և ըսաւ մարդոց, Եկէք
տեսէք մարդ մը որ ըսաւ ինձ ամենայն զոր
30 գործած եմ։ միթէ նա՞ է Քրիստոսը։ Եւ անոնք
ելան քաղաքէն և կու գային անոր։
31 Եւ այս միջոցին աշակերտները կ'աղաչէին անոր
32 և կ'ըսէին, Ռաբբի, հա՛ կեր։ Նա ըսաւ անոնց,
Ես ունիմ ուտելու կերակուր զոր դուք չէք գի-
33 տեր։ Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու,
34 Միթէ մարդ ասոր ուտելու բան մը բերա՞ւ։ Յի-
սուս ըսաւ անոնց, Իմ կերակուրս այն է որ զիս
ղրկողին կամքն ընեմ, և անոր գործը կատարեմ։
35 Մի՞ ապաքէն կ'ըսէք դուք թէ Ա՛յլ ևս չորս ամիս
կայ, և հունձք կու գայ։ Ահա ես կ'ըսեմ ձեզ,
վերցուցէք ձեր աչուըները և նայեցէք արտե-
36 րուն, որ արդէն սպիտակացեալ են ի հունձ։ Եւ
այն որ կը հնձէ՝ վարձք կ'առնու, և յաւիտեան-
ական կենաց համար պտուղ կը ժողովէ, որպէս զի
սերմանողը և հնձողն ուրախանան ի միասին։
37 Վասն զի յայսմ ճշմարիտ է այն խօսքը թէ Ու-
38 րիշը կը սերմանէ և ուրիշը կը հնձէ։ Ես զրկեցի
զձեզ հնձել զոր դուք չաշխատեցաք. ուրիշներն
աշխատեցան, և դուք անոնց աշխատանաց մէջ
մտաք։
39 Եւ այն քաղաքէն շատ Սամարացիք հաւատա-

ցին անոր այն կնոջ խօսքին համար որ վկայեց,
ըսելով թէ ինչ որ ես գործած էի՝ բոլորն ըսաւ
40 ինձ։ Եւ երբ Սամարացիք եկան անոր, կ'աղաչէին
զնա իրենց քով մնալ. և երկու օր հոն կեցաւ։
41 Եւ այլեւս շատեր հաւատացին անոր իր խօսքին
42 համար։ Եւ կ'ըսէին կնոջը, Այլեւս հետև ոչ թէ
քու խօսքիդ համար կը հաւատանք, քանզի մենք
մեզի լսեցինք, և գիտենք թէ դա է Ճշմարտա-
պէս աշխարհի Փրկիչը Քրիստոս։
43 Եւ յետ այն երկու աւուր ելաւ անկէ և գնաց
44 Գալիլեա։ Քանզի Յիսուս ինք վկայեց թէ Մար-
45 գարէ պատիւ չունենար իր գաւառին մէջ։ Եւ
երբ Գալիլեա եկաւ, ընկալան զնա Գալիլեացիք
որ տեսած էին բոլոր ինչ որ ըրաւ յերուսաղէմ
տօնին ատենը. վասն զի անոնք ևս գնացած էին
այն տօնին։
46 Եւ Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց կանա
Գալիլեա, ուր ըրած էր ջուրը գինի. և հոն ազ-
նուական մի կար, որուն որդին հիւանդ էր ի կա-
47 փառնայում։ Սա լսելով թէ Յիսուս Հրեաստա-
նէ Գալիլեա եկած էր, եկաւ անոր և կ'աղաչէր
որ իջնէր և բժշկէր իւր որդին, վասն զի մեռ-
48 նելու մօտ էր։ Անատեն Յիսուս ըսաւ անոր, Եթէ
նշաններ և հրաշներ չտեսնէք, բնաւ պիտի չհա-
49 ւատաք։ Ազնուականն ըսաւ անոր, Տէր, էջ,
50 մինչդեռ մեռած չէ մանուկս։ Յիսուս ըսաւ ա-
նոր, Գնա, որդիդ կենդանի է։ Եւ մարդն հա-
ւատաց խօսքին զոր Յիսուս ըսաւ անոր, և գնաց։
51 Եւ մինչ կ'իջնէր, անոր ծառաները դիմաւորեցին
զնա, և աւետիս տուին ըսելով թէ Մանուկդ
52 կենդանի է։ Ուստի հարցուց անոնց ժամը յո-
րում առողջացաւ, և ըսին անոր, Երէկ ճաշնե-
53 րորդ ժամուն թողուց զնա ջերմն։ Անատեն գի-
տցաւ անոր հայրը թէ այն ժամն էր յորում Յի-
սուս ըսաւ անոր թէ Որդիդ կենդանի է. և հա-

54 ասացաք ինքն և անոր բոլոր տուներ։ Այս դարձեալ երկրորդ հրայն էր զոր Յիսուս ըրաւ, երբ Հրէաստանէ եկաւ ի Գալիլեա։

ԳԼ. Ե

1 Ետ այսորիկ տօն էր Հրէից, և Յիսուս ելաւ
2 յԵրուսաղէմ։ Եւ Երուսաղէմ Ոչխարաց դրան
քով կայ աւազան մը, որ Եբրայեցերէն կը կոչ-
3 ուի Բեթհեզդա, հինգ սրահներու։ Ասոնց մէջ
պառկած էր բազմութիւն յոյժ հիւանդաց, կու-
րաց, կաղաց, գօսացելոց, որ կը սպասէին ջրոյն
4 յուզմանը։ Վասն զի ժամանակ ժամանակ հրեշ-
տակ կ'իջնէր աւազանը և կը յուզէր ջուրերը,
և ով որ յետ յուզման ջրոյն կը մտնէր նախ,
5 կը բժշկուէր ինչ հիւանդութիւն որ ունէր։ Եւ
հոն մարդ մը կար, որ երեսունևութ տարիէ
6 հետէ հիւանդութիւն ունէր։ Յիսուս երբ տեսաւ
զնա պառկած, և գիտցաւ թէ բաւմամանակ-
7 եայ էր, ըսաւ անոր, Կամիս առողջանալ։ Հի-
ւանդը պատասխան տուաւ անոր, Տէր, մարդ
չունիմ որ երբ ջուրերը կը յուզուին, Նեակ զիս
աւազանը. այլ մինչ ես կը դանդաղիմ, ջան
8 զիս առաջ կ'իջնէ ուրիշ մը։ Յիսուս ըսաւ անոր,
9 Ել, առ մահիճդ և քալէ։ Եւ իսկոյն առողջա-
ցաւ մարդը, և մահիճը վերցուընելով կը քալէր։
10 Եւ այն օր շաբաթ էր։ Անոնք Հրէայք ըսին
բժշկուած մարդուն, Շաբաթ է, Ս արժան չէ որ
11 մահիճդ վերցունես։ Պատասխան տուաւ անոնց Ն
ըսաւ, Նա որ զիս բժշկեց՝ ըսաւ ինձ, Մահիճդ
12 առ և քալէ։ Ուստի հարցուցին անոր, Ո՞վ է այն
13 մարդը որ ըսաւ քեզ, Մահիճդ առ և քալէ։ Եւ
բժշկուողը չէր գիտեր թէ ով էր նա, քանզի
Յիսուս խոյս տուաւ, վասն զի բազմութիւն կար
14 հոն։ Ետոյ Յիսուս գտնելով զնա տաճարին մէջ

ըսաւ անոր, Ահա բժշկուեցար, այլ ևս մի՛ մեղ
15 դանչէր, որ ևս աւելի չար չպատահի քեզ։ Գնաց
մարդը, և պատմեց Հրէից թէ Յիսուս էր որ
բժշկեց զնա։
16 Եւ այս պատճառաւ Հրեայք կը հալածէին զՅի-
սուս, և կը խնդրէին սպաննել զնա, որ չաբաթ
17 օրը կ'ընէր ասոնք։ Եւ Յիսուս պատասխան
տուաւ անոնց, Իմ Հայրն մինչև ցայժմ կը գոր-
18 ծէ, ես ևս կը գործեմ։ Ա յս պատճառաւ ևս
աւելի կը խնդրէին Հրեայք սպաննել զնա, վասն
զի ոչ միայն կը լուծէր չաբաթ օրը, այլ և Հայր
իւր կ'ասէր զԱստուած, և այսպէս կ'ընէր
19 զինք հաւասար Աստուծոյ։ Իսկ Յիսուս պատաս-
խան տուաւ և ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ, Որդին ինքնին չկրնար բան մը ը-
նել, միայն ինչ որ տեսնէ թէ Հայրը կ'ընէ.
վասն զի ինչ որ նա կ'ընէ, նմանապէս Որդին
20 կ'ընէ նոյնը։ Քանզի Հայրը կը սիրէ զՈրդին, և
ամէն բան կը ցուցնէ անոր ինչ որ ինք կ'ընէ. և
քան զսոսա աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ
21 անոր, որպէս զի դուք զարմանաք։ Վասն
զի ինչպէս որ Հայրը կը յարուցանէ զմեռեալս
և կենդանի կ'ընէ, նոյնպէս Որդին զորս կամի
22 կը կենդանացունէ։ Քանզի Հայրը չդատեր ոքեք,
23 այլ ամէն դատաստան տուաւ Որդուն, Որպես
զի ամենքը պատուեն զՈրդին, ինչպէս կը պատ-
ուեն զՀայր։ ով որ չպատուեր զՈրդին՝ չպատ-
24 ուեր զՀայր որ զրկեց զնա։ Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ թէ Ով որ կը լսէ իմ խօսքս և կը
հաւատայ անոր որ զրկեց զիս՝ յաւիտենական
կեանք ունի, և դատաստանի տակ չկ-
25 ենար, այլ անցած է ի մահուանէ ի կեանս։ Ճշմա-
րիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ ժամանակ պիտի
գայ և արդէն իսկ է, երբ մեռեալք պիտի լսեն
Աստուծոյ Որդւոյն ձայնը, և անոնք որ կը լսեն՝

26 պիտի ապրին, վասն զի ինչպես Հայր կեանս
ունի յանձին իւրում, նոյնպես Որդւոյն տուաւ
27 կեանս ունենալ յանձին իւրում. Եւ դատաս-
տան ընելու ևս իշխանութիւն տուաւ նմին,
28 քանզի Որդի մարդոյ է նա։ Ընդ այս մի՛ զար-
մանայք, քանզի ժամանակ պիտի գայ երբ ամե-
ք որ գերեզմանների մէջ են՝ պիտի լսեն ա-
29 նոր ձայնը, Եւ պիտի գան դուրս, անոնք որ
բարի գործած են՝ ի յարութիւն կենաց, և ա-
նոնք որ չար գործած են՝ ի յարութիւն դատա-
30 պարտութեան։ Ես յանձնէ բան մը չեմ կրնար
ընել. ինչպես կը լսեմ՝ այնպես կը դատեմ, և
դատաստանս արդար է, քանզի ես չեմ խնդրեր
իմ կամքս, այլ *նոր կամքը որ ղրկեց զիս։
31 Եթէ ես ինծի համար վկայեմ, ճշմարիտ չէ վկա-
32 յութիւնս։ Ուրիշ է որ ինծի համար կը վկայէ.
և ես գիտեմ թէ ճշմարիտ է վկայութիւնը զոր
33 նա վկայեց ինծի համար։ Դուք ղրկեցիք առ-
34 հաննու, և նա վկայեց ճշմարտութեան։ Բայց
ես ոչ թէ ի մարդկանէ կ՚առնեմ վկայութիւն,
35 այլ կ՚ըսեմասոնք որ դուք փրկուիք։ Նա
ճրագ էր որ կը վառէր և կը լոյս կու տար, և
դուք քիչ առեն կամեցաք անոր լուսովը ուրա-
36 խանալ։ Բայց ես քան զՅովհաննու վկայու-ԹԻՒՆն
մեծ ևս վկայութիւն ունիմ, քանզի այն գոր-
ծերը զոր Հայր տուաւ ինձ որ կատարեմ զա-
նոնք, այն գործերը զոր ես կը գործեմ՝ կը
37 վկայեն ինծի համար թէ Հայրը ղրկեց զիս։ Եւ
Հայրը որ ղրկեց զիս, նա վկայեց ինծի համար.
դուք բնաւ անոր ձայնը չլսեցիք, և ոչ անոր
38 կերպարանքը տեսաք։ Եւ ոչ անոր խօսքը ձեր
մէջ բնակած ունիք, քանզի անոր զոր նա ղրր-
39 կեց՝ չէք հաւատար։ Գիրքերը քննեցէք, քանզի

*Ոմանք, Հօրը

դուք նոքօք կը համարիք ունենալ յաւիտենա-
կան կեանք, և բուն անոնք են որ կը վկայեն
40 ինծի համար։ Եւ դուք չէք ուզեր գալ առ ի-
41 որ կեանք ունենաք։ Ես փառք չեմ առներ
42 ի մարդկանէ։ Բայց գիտեմ զձեզ որ Աստուծոյ
43 սէրը չունիք ի ձեզ։ Ես իմ Հօրս անուամբ եկայ,
և զիս չէք ընդունիր. Եթէ այլ ոք գայ իւր
44 անուամբ, պիտի ընդունիք զնա։ Դուք ինչպես
կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ՚առնուք,
և այն փառքը որ ի միոյն Աստուծոյ է՝ չէք
45 խնդրեր։ Մի՛ կարծէք թէ ես ամբաստանութիւն
պիտի ընեմ ձեզի համար Հօրը. կայ որ ամբաս-
տանութիւն կ՚ընէ ձեզի համար, Մովսէս, յոր
46 դուք յուսացած էք։ Վասն զի եթէ դուք Մով-
սեսի հաւատայիք, ինձ Եւս պիտի հաւատայիք,
47 քանզի նա գրեց ինծի համար։ Բայց եթէ անոր
գրուածներուն չէք հաւատար, իմ խօսքերուս
ինչպես պիտի հաւատաք։

Գլ. Զ

1 Ցետ այսորիկ Յիսուս գնաց յայնկոյս Գալիլեայի,
2 այսինքն Տիբերիոյ, Յովհան. Եւ յաս Հոդովուրդ
կ՚երթար անոր հետևէն, քանզի կը տեսնէին հրաշ-
3 ները զորս կ՚ընէր հիւանդաց վրայ։ Եւ Յիսուս
լեռը ելաւ, և հոն նստաւ աշակերտներուն հետ։
4 Եւ մօտ էր Հրէից զատկի տօնը։
5 Յիսուս երբ վեր վերցուց Իւր աչուընները և
տեսաւ որ շատ Հոդովուրդ կու գար իրեն, ըսաւ
Փիլիպպոսի, Ուստի՞ գնենք հաց որ ասոնք ու-
6 տեն։ Եւ զայս կ՚ըսէր փորձելու համար զնա,
7 քանզի ինք գիտէր ինչ պիտի ընէր։ Փիլիպպոս
պատասխան տուաւ անոր, Երկու հարիւր դահե-
կանի հաց բաւական չէ ասոնց, որ իւրաքանչիւր
8 քիչ մը առնու։ Աշակերտներէն մին, Սիմոնի

9 Պետրոսի եղբայրն, Անդրեաս, ըսաւ անոր, Հոս
պատանի մը կայ որ հինգ գարեղէն հաց և երկու
ձուկ ունի, բայց անոնք ինչ պիտի ըլլան այդչափ
10 մարդոց։ Իսկ Յիսուս ըսաւ, Նստուցէք այդ մարդիկը։ Եւ այն տեղ շատ խոտ կար, և մարդիկը
11 նստան թուով իբրև հինգ հազար։ Եւ Յիսուս
հացերն առաւ և գոհացաւ, և աշակերտներուն
բաժնեց, և աշակերտները՝ նստողներուն, նոյն-
12 պէս և ձուկերէն՝ որչափ և կամեցան։ Եւ երբ
յագեցան, ըսաւ իր աշակերտներուն, Ժողովեցէք աւելցած կտորները որ բան չկորսուի։
13 Ուստի ժողովեցին, և լցին երկոտասան կողով
այն հինգ գարեղէն հացերու կտորներէն, որ
14 ուտողներէն աւելցան։ Իսկ մարդիկը երբ տեսան
հրաշքը զոր ըրաւ Յիսուս՝ կ'ըսէին Թէ Սա է
ճշմարտապէս մարգարէն որ աշխարհ պիտի գար։
15 Եւ Յիսուս գիտնալով Թէ պիտի գային յանկարծակի զինք որ Թագաւոր ընէին, դարձեալ առան-
16 ձին գնաց լեռը։ Եւ երբ երեկոյ եղաւ, աշակերտ-
17 ներն իջան ծովեզերը։ Եւ մանելով նաւը կ'երթային
յայնկոյս ծովուն Կափառնայում։ Եւ արդէն նսե-
18 մացած էր, և Յիսուս դեռ եկած չէր անոնց։ Եւ
19 ծովը կը յուզէր հովին սաստիկ փչելէն։ Եւ երբ
Թիմաարելով գնացին իբր քսանհինգ կամ երե-
սուն ասպարէզ, տեսան զՅիսուս որ ծովուն վրայ
20 քալելով կը մօտենար նաւին, և վախցան։ Բայց
21 նա բսաւ անոնց, Ես եմ, մի՛ երկնչիք։ Անոնք
կամեցան առնուլ զնա նաւը։ և նոյն հասաւ
իսկոյն յերկիրն ուր կ'երթային։
22 Հետեւեալ օրը ժողովուրդը որ էր յայնկոյս ծո-
ւոյն և տեսած էր Թէ ուրիշ նաւակ չկար հոն
բաց ի միոյն յոր մտած էին անոր աշակերտները,
և Թէ Յիսուս նաւակը մտած չէր իր աշակերտ-
ներուն հետ, այլ աշակերտները միայն գնացած
23 էին, (Բայց Տիբերիայէ ուրիշ նաւակներ եկան

այն տեղւոյն մօտ ուր Տէրոջը գոհանալէն ետքը
24 կերած էին հացը,) Անգամն ժողովուրդը տես-
նելով Թէ ոչ Յիսուս հոն էր, և ոչ անոր աշա-
կերտները, իրենք ևս մտան նաւերը և եկան
25 կափառնայում խնդրել զՅիսուս։ Եւ երբ գտան
զնա յայնկոյս ծովուն, ըսին անոր, Ռաբբի, ե՞րբ
26 եկար հոս։ Յիսուս պատասխան տուաւ անոնց և
ըսաւ, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Դուք զիս
կը խնդրէք, ոչ Թէ վասն զի հրաշք տեսաք, այլ
27 վասն զի կերաք հացերէն և յագեցաք։ Գործեցէք
գործեցեք ոչ Թէ կորստական կերակրոյն համար,
այլ այն կերակրոյն համար որ կը մնայ ի կեանս
յաւիտենից, Ե՛ զոր Որդին մարդոյ պիտի տայ
28 ձեզ. քանզի Հայրն Աստուած կնքեց զնա։ Անա-
տեն ըսին անոր, Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գոր-
29 ծերը գործենք։ Պատասխան տուաւ Յիսուս և
ըսաւ անոնց, Այս է Աստուծոյ գործը, որ հա-
30 ւատաք անոր զոր նա ղրկեց։ Ըսին անոր, Բայց
դուն ի՞նչ նշան կ'ընես որ տեսնենք և հաւա-
31 տանք քեզ. ի՞նչ կը գործես։ Մեր հայրերն ա-
նապատին մէջ կերան զմանանայն, ինչպէս որ
գրուած է, Հաց յերկնից տուաւ անոնց ուտել։
32 Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզ Թէ Մովսէս չտուաւ ձեզ երկնաւոր
հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզ ճշմարիտ
33 երկնաւոր հացը։ Քանզի Աստուծմէ պատրաստ հացն
այն է որ յերկնից կ'իջնէ, և կեանք կու տայ
34 աշխարհին։ Ուստի ըսին անոր, Տէր, յամենայն
35 ժամ տուր մեզ այդ հացը։ Եւ Յիսուս ըսաւ
անոնց, Ես եմ կենաց հացը. ով որ կուգայ
առ իս՝ երբեք պիտի չանօթենայ, և ով որ կը հա-
36 ւատայ յիս՝ պիտի չծարաւի։ Բայց ես ըսի ձեզ
Թէ դուք զիս տեսաք և, և չէք հաւատար։
37 Ամէն զոր Հայրը կու տայ ինձ՝ պիտի գայ
առ իս, և զայն որ կու գայ առ իս՝ ընտ. դուրս

38 պիտի չհանեմ. Քանզի ես իմով յերկինից ոչ որ
իմ կամքս ընեմ, այլ անոր կամքը որ ղրկեց
39 զիս։ Եւ զիս ղրկող Հօրը կամքն այս է որ ա-
մէնը զոր տուաւ ինձ՝ չկորուսանեմ անկէ, այլ
40 յարուցանեմ զնա վերջին օրը։ Քանզի այս
ղրկողին կամքն այս է, որ ամէնը որ կը տեսնէ
զՈրդին և կը հաւատայ անոր՝ յաւիտենական
կեանք ունենայ, և ես յարուցանեմ զնա վեր-
ջին օրը։
41 Ուստի Հրեաները կը տրտնջէին անոր դէմ,
վասն զի ըսաւ Թէ ես եմ հացն իջեալ յերկնից.
42 Եւ կ'ըսէին, Ո՞չ ապաքէն սա է Յիսուս որդին
Յովսեփայ, այն որոյ հայրը և մայրը կը ճանչնանք
մենք, ուրեմն ի՞նչպէս կ'ըսէ սա Թէ ես յերկինից
43 իջայ։ Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց,
44 Մի՛ քրթմնջէք իրարու հետ։ Ոչ ոք կրնայ գալ
առ իս, եթէ ոչ Հայրը որ զիս ղրկեց՝ ձգէ զնա. և
45 ես պիտի յարուցանեմ զնա վերջին օրը։ Գրուած
է ի մարգարէս, Եւ ամենեքին պիտի ըլլան ուսեալ
յԱստուծոյ։ Ամէնը որ կը լսէ Հօրմէն և կը սորվի՝
46 կու գայ առ իս։ Ոչ Թէ ոչ ոք տեսած է զՀայր
եթէ ոչ որ յԱստուծոյ է՝ նա տեսած է զՀայր։
47 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ Ով որ կը հա-
48 ւատայ յիս՝ ունի յաւիտենական կեանք։ Ես եմ
49 հացն կենաց։ Ձեր հայրերն անապատին մէջ կերան
50 զմանանայն և մեռան։ Այս այն հացն է որ յերկ-
նից կ'իջնէ, որպէս եթէ ուսէ ոք, պիտի չմեռնի։
51 Ես եմ հացն կենդանի որ յերկնից իջայ։ (52) Եթէ
ոք ուսէ այս հացէն, պիտի ապրի յաւիտեան. և
հացը զոր ես պիտի տամ իմ մարմինս է, զոր ես
պիտի տամ վասն կենաց աշխարհի։
53 Ուստի Հրեայք կը վիճէին իրարու հետ և կ'ը-
սէին, Ի՞նչպէս կրնայ սա տալ մեզ իւր մարմինն
54 ուսել։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճըշ-
մարիտ կ'ըսեմ ձեզ, Եթէ չուսէք Որդւոյ մար-

դոյ մարմինը և չխմէք անոր արիւնը, չէք ու-
55 նենար կեանք յանձինս ձեր։ Ով որ ուսէ իմ
մարմինս և խմէ իմ արիւնս, կ'ունենայ յաւի-
տենական կեանք, և ես պիտի յարուցանեմ
56 զնա վերջին օրը։ Քանզի իմ մարմինս ճշմարիտ
կերակուր է, և իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է։
57 Ով որ կ'ուսէ իմ մարմինս և կը խմէ իմ
արիւնս, նա յիս կը բնակի և ես՝ ի նմա։
58 Ինչպէս կենդանի Հայրը ղրկեց զիս, և ես կեն-
դանի եմ Հօրը ձեռօք, այսպէս և նա որ կ'ու-
սէ զիս, նա ևս կենդանի կը մնայ իմ ձեռօքս։
59 Այս է այն հացը որ յերկնից իջած է. ոչ որպէս
ձեր հայրերը կերան զմանանայն և մեռան. ով
որ ուսէ այս հացը՝ պիտի ապրի յաւիտեան։
60 Զայս ըսաւ ժողովրդականցին մէջ, երբ կ'ու-
սուցանէր ի Կափառնայում։
61 Եւ աշակերտներէն շատերը երբ լսեցին, ըսին,
Խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ լսել ատոր։
62 Յիսուս իմանալով յանձին Թէ աշակերտները կը
տրտնջէին այն բանին համար, ըսաւ անոնց,
63 Այդ կը գայթակղեցնէ՞ զձեզ։ Ապա ի՞նչ պիտի
ըլլէ, եթէ տեսնէք զՈրդին մարդոյ որ ելլէ
64 ուր էր առաջ։ Հոգին է կենդանարար, մարմինն
օգուտ չունի. այն խօսքերը զոր ես *կը խօսիմ
ձեզ՝ հոգի են և կեանք։ Բայց ձեզնէ կան ոմանք
որ չեն հաւատար։ Քանզի Յիսուս ի սկզբանէ
գիտէր Թէ ով էին անոնք որ չէին հաւատար, և
65 ով էր այն որ պիտի մատնէր զնա. Ես կ'ըսեր,
վասն այսորիկ ըսի ձեզ Թէ ոչ ոք կրնայ գալ
առ իս, եթէ տրուած չըլլայ անոր իմ Հօրմէս։
67 Ա՛յս պատճառաւ անոր աշակերտներէն շատե-
րը ետ գնացին, և այլ ևս չէին երթար անոր հետ։
68 Անատեն Յիսուս ըսաւ երկոտասանից, Միթէ և

*Ոմն., խօսեցայ

69 դո՞ք կամիք երթալ։ Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր, Տէր, որո՞ւր պիտի երթանք,
70 դուն յաւիտենական կենաց խօսքեր ունիս. Եւ մենք հաւատացինք և գիտցանք թէ դու ես
71 Քրիստոսն, Աստուծոյ Որդին։ Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ո՞չ ես ընտրեցի զձեզ երկոտասանդ, և ձեզմէ ես մին սատանայ է։ Զայս
72 կ՚ըսէր Իսկարիովացի Սիմոնեան Յուդայի հայրը, քանզի նա էր որ պիտի մատնէր զնա, և էր մին յերկոտասանից։

Գլ. Ե

1 Եւ յետ այսորիկ կը շրջէր Յիսուս Գալիլեայի մէջ, քանզի չէր ուզեր Հրէաստանի մէջ շրջիլ, վասն զի Հրեայք կ՚ուզէին սպաննել զնա։
2 Եւ մօտ էր Հրէից տաղաւարահարաց տօնը։
3 Ուստի անոր եղբայրներն ըսին անոր, Կէ տակէ և գնա Հրէաստան, որ աշակերտներդ ես տես-
4 նեն գործերը զոր կ՚ընես. Քանզի չկայ մարդ որ բան մը ընէ ի ծածուկ, և ինք ուզէ յայտնի ըլլալ. եթէ դուն այդ բաները կ՚ընես, յայտնէ
5 զքեզ աշխարհի։ Քանզի անոր եղբայրներն ես
6 չէին հաւատար անոր։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժա-
7 մանակը միշտ պատրաստ է։ Աշխարհ զձեզ չկրնար ատել, բայց զիս կ՚ատէ, քանզի ես կը վկայեմ անոր համար թէ անոր գործերը չար
8 են։ Դուք ելէք այս տօնին, ես [դեռ] չեմ ելլեր այս տօնին, քանզի իմ ժամանակս դեռ լցուած
9 չէ։ Զայս ըսելով անոնց՝ ինք մնաց Գալիլեա։
10 Բայց երբ անոր եղբայրները ելան, յետոյ ինք ևս ելաւ տօնին, ոչ թէ յայտնի՝ այլ ի ծածուկ։

*Ոմանք, կենդանի Աստուծոյ

11 Եւ Հրեայք տօնին տաեղը կը փնտռէին զնա,
12 և կ՚ըսէին, Ո՞ւր է նա։ Եւ քրթմնջիւն բազում էր ժողովրդեան մէջ անոր վրայ։ Ոմանք կ՚ըսէին թէ Ազնիւ է. այլք կ՚ըսէին, Ոչ, այլ կը մոլորեց-
13 ուցանէ ժողովուրդը։ Սակայն ոչ ոք համարձակ կը խօսէր անոր վրայ առ ահին Հրէից։
14 Իսկ երբ տօնն ընդմիջեցաւ, Յիսուս ելաւ տա-
15 ճարը և կը սորվեցուներ, Եւ Հրեայք կը զարմանային և կ՚ըսէին, Ի՞նչպէս գիտէ սա
16 որ ուսեալ չէ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց և ըսաւ, Իմ վարդապետութիւնս իմս չէ,
17 այլ զիս զրկողինն է։ Եթէ ոք կ՚ուզէ ընել անոր կամքը, պիտի գիտնայ այս վարդապետութեան համար թէ Աստուծմէ՞ է արդեօք կամ թէ ես
18 յանձնէ կը խօսիմ։ Ան որ յանձնէ կը խօսի՝ կը խնդրէ իւր անձին փառքը, բայց այն որ կը խնդրէ զինք զրկողին փառքը, նա ճշմարիտ է,
19 և անիրաւութիւն չկայ անոր մէջ։ Մովսէս չտուաւ ձեզ օրէնքը, և ձեզմէ ոչ ոք կը պահէ
20 օրէնքը։ Ինչո՞ւ կը խնդրէք սպաննել զիս։ Պատասխան տուաւ ժողովուրդը և ըսաւ, Դև կայ
21 ի քեզ։ ով կը խնդրէ սպաննել զքեզ։ Պատաս-
22 խան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց, Գործ մը գործեցի, և ամէնքդ զարմացած էք։ Արդ Մովսես թլփատութիւնը տուաւ ձեզ, որ ոչ թէ
23 Մովսէսէ՛ն՝ այլ նախնիներէն, և շաբաթ օր մարդ կը թլփատէք. եթէ շաբաթ օր մարդ կ՚առնու թլփատութիւն որ Մովսէսի օրէնքը չկոտրուի, կը բարկանա՞ք ինծ որ ես շաբաթ օր
24 ամբողջ մարդ մը բժշկեցի։ Մի՛ բան ալ դատէք, այլ արդար դատաստան րնէք։
25 Ուստեն Երուսաղէմացիներէն ոմանք կ՚ըսէին, Ո՞չ ասպէն սա է զոր կը խնդրեն սպաննել։
26 Եւ ահա յայտնի կը խօսի, և բան մը չեն ըսեր անոր. միթէ իշխանները գիտցած են թէ որ-

27 դարձ. Քրիստոսն է սա՝ Սակայն մենք զսա գի-
տենք ուսան է՝ բայց Քրիստոս երբ գայ՝ ոչ ոք
28 գիտէ ուսան է։ Եւ Յիսուս մինչ կ'ուսուցանէր՝
տաճարին մէջ աղաղակեց ըսելով՝ Ե՛ւ զիս գի-
տէք, և՛ ուսան եմ գիտէք։ և ես ինձէն եկած
չեմ՝ այլ այն որ զիս ղրկեց՝ Ճշմարիտ է, զոր
29 դուք չէք գիտեր՝ բայց ես գիտեմ ղնա, քանզի
30 ես անկէ եմ, և նա ղրկեց զիս։ Ուսան կը
խնդրէին բռնել ղնա, բայց ոչ ոք ձեռք մխեց
ի նա, քանզի դեռ հասած չէր անոր ժամա-
31 նակը։ Եւ ժողովուրդէն չատ մարդիկ հաւատա-
ցին անոր, և կ'ըսէին, Քրիստոս երբ գայ, քան
զսա աւելի՞ նշանները պիտի ընէ, որչափ սա
կ'ընէ։
32 Փարիսեցիք լսեցին ժողովրդեան այս քրթմնջ-
ելիները անոր վրայ։ և փարիսեցիք և քահա-
նայապետք սպասաւորները ղրկեցին բռնել ղնա։
33 Իսկ Յիսուս ըսաւ, Փոքր մ'ևս ժամանակ ևս
ձեզի հետ եմ, և կ'երթամ առ այն որ ղրկեց
34 զիս։ Զիս պիտի փնտռէք և պիտի չգտնէք, և
35 ուր ես եմ՝ դուք չէք կրնար գալ։ Ուսանեն
Հրեայք ըսին իրարու, Ո՞ւր պիտի երթայ սա,
որ մենք պիտի չգտնենք ղնա։ Միթէ Ի՛ելթա-
նոսաց մէջ ցիրուցան եղածներո՞ւն պիտի երթայ
36 և Հեթանոսներուն սորվեցուցե՞ւ։ Ինչ է այն
խօսքը զոր ըսաւ, Զիս պիտի փնտռէք և պիտի
չգտնէք, և ուր ես եմ՝ դուք չէք կրնար գալ։
37 Յօնին վերջին մեծ օրը Յիսուս կեցած կ'աղա-
ղակէր և կ'ըսէր, Եթէ ոք ծարաւի է՝ թող գայ
38 առ ես և խմէ։ Ով որ կը հաւատայ ինձ, ինչպես
կ'ըսեն գիրք, կենդանի ջրոյ գետեր պիտի բղխեն
39 անոր որովայնէն։ Զայս ըսաւ Հոգւոյն համար

*Ո՞հաւ, ըսաւ անոնց
†Ցոտն. Ցունաց

զոր անոր հաւատացողները պիտի առնուին,
վասն զի Սուրբ Հոգին դեռ չէր, քանզի
40 Յիսուս դեռ չէր փառաւորուած։ Ժողովուրդէն
չատ մարդիկ երբ լսեցին այս խօսքը, կ'ըսէին,
41 Արդարև սա է մարգարէն։ Այլք կ'ըսէին, Սա է
Քրիստոս։ Այլք ևս կ'ըսէին, Միթէ Գալիլեայէ՞
42 կու գայ Քրիստոս։ Ո՞չ ապաքէն գիրքը կ'ըսէ թէ
Քրիստոս կու գայ ի զաւակէ Դաւթի և Բեթղե-
43 հէմի գիւղէն ուր էր Դաւիթ։ Ուսան ժողովրդեան
44 մէջ երկպառակութիւն եղաւ անոր համար։ Եւ
անոնցմէ ումանք կամեցան բռնել ղնա, բայց ոչ ոք
ձեռք մխեց ի նա։
45 Եւ սպասաւորները դարձեան եկան քահանայա-
պետներուն և փարիսեցիներուն։ և ասոնք ըսին
46 անոնց, Ընդէ՞ր հա՛ չբերիք ղնա։ Պատասխան
տուին սպասաւորները, Երբէք այնպես չխօսեցաւ
47 մարդ, ինչպես այս մարդը։ Անսաեն փարիսեցիք
պատասխան տուին անոնց և ըսին, Միթէ և դո՞ւք
48 մոլորեցաք։ Իշխաններէն կամ փարիսեցիներէն
49 ոք հաւատաց՞ անոր։ Բայց այս խաճամուժ ամ-
50 բոխը որ չգիտեր օրէնքը՝ նզովեալ է։ Նիկոդեմոս
որ ա՛ռաջուց գիշերային եկած էր առ նա և էր ա-
51 նոնցմէ մին, ըսաւ անոնց, Միթէ մեր օրէնքը
կը դատե՞ զոք, եթէ նախ չլսէ անկէ, և չգիտայ
52 Թէ ինչ կ'ընէ։ Պատասխան տուին և ըսին անոր,
Միթէ դո՞ւ ևս Գալիլեայէ ես։ քննէ և տես որ
53 Գալիլեայէ մարգարէ չհղիր։ Եւ գնաց իւրաքան-
չիւր ոք իւր տունը։

Գլ. Ը

1 Եւ Յիսուս գնաց Ձիթենեաց լեռը։ (2) Եւ առա-
ւօտուն դարձեալ եկաւ տաճարը, և բոլոր ժո-
ղովուրդը կու գար անոր, և ինք նստած կը սոր-
3 վեցուներ անոնց։ Եւ դպիրք և փարիսեցիք բե-

բին անոր չնուիճեան մէջ բռնուած կին մը, և
4 կեցուցնելով զնա ի մէջ՝ Ըսին անոր, Վարդա-
պետ, այս կինը մինչ ի գործի անդ չնուիճեան
5 էր՝ բռնուեցաւ. Եւ Մովսէս պատուիրեց մեզ
յօրէնս զայսպիսիս քարկոծել. արդ դուն ի՞նչ
6 կ'ըսես։ Զայս կ'ըսէին փորձելով զնա, որ ամ-
բաստանութիւն ունենային անոր վրայ. բայց Ի-
սուս ի վայր ծռելով կը գրէր մատամբ գետինը,
7 Սակայն երբ կը պնդէին հարցնելով զնա, վեր
նայեցաւ և ըսաւ անոնց, Ձեզնէ անմեղը նախ
8 նա թող նետէ քար ատոր վրայ։ Եւ դարձեալ
9 ի վայր ծռելով կը գրէր գետինը։ Եւ անոնք լսե-
լով և էջէնջ ըզձէն յանդիմանուելով՝ մի ըստ
մէնջէ կ'ելլէին դուրս, ծերերէն սկսեալ մինչև
յետիններն. և Ցիսուս մնաց միայն, և կինը կա-
10 ցած ի մէջ։ Եւ Ցիսուս վեր նայելով և բաց ի
կնոջէն չտեսնելով զոք, ըսաւ անոր, Կին դու,
ո՞ւր են որ կ'ամբաստանէին զքեզ. ո՞չ ոք դա-
11 տապարտեց զքեզ։ Եւ նա ըսաւ, Ոչ ոք, Տէր։
Եւ Ցիսուս ըսաւ անոր, Եւ ոչ ես կը դատա-
պարտեմ զքեզ. գնա և այսուհետև մի՛ մե-
ղանչեր։

12 Արդ Ցիսուս դարձեալ խօսեցաւ անոնց և
ըսաւ, Ես եմ լոյս աշխարհի. ով որ իմ հետևիս
կու գայ՝ խաւարի մէջ պիտի չքալէ, այլ պիտի
13 ունենայ կենաց լոյսը։ Իսկ փարիսեցիք ըսին
անոր, Դուն քու անձիդ համար կը վկայես, քու
14 վկայութիւնդ ճշմարիտ չէ։ Պատասխան տուաւ
Ցիսուս և ըսաւ անոնց, Թէև ես իմ անձիս հա-
մար վկայեմ, իմ վկայութիւնս ճշմարիտ է,
քանզի գիտեմ ուստի եկայ և ուր կ'երթամ.
բայց դուք չէք գիտեր ուստի կու գամ կամ ուր
15 կ'երթամ։ Դուք ըստ մարմնոյ կը դատէք, Ես
16 կը դատեմ ոչ զոք։ Եւ եթէ դատեմ ես, իմ
դատաստանս ճշմարիտ է, քանզի ես միայն չեմ,

17 այլ ես և Հայրը որ զրկեց զիս։ Եւ ձեր օրինաց
մէջ ևս գրուած է Թէ երկու մարդոյ վկայու-
18 թիւնը ճշմարիտ է։ Ես եմ որ իմ անձիս համար
կը վկայեմ, և կը վկայէ ինծի համար նաև Հայրը
19 որ զրկեց զիս։ Անտանի ըսին անոր, Ո՞ւր է քու
Հայրդ։ Ցիսուս պատասխան տուաւ, Ոչ զիս
գիտէք և ոչ իմ Հայրս. եթէ զիս գիտնայիք, իմ
Հայրս ևս պիտի գիտնայիք։
20 Ցիսուս այս խօսքերը խօսեցաւ գանձատունը,
երբ կը սորվեցնէր տաճարին մէջ. և ոչ ոք
բռնեց զնա, քանզի դեռ անոր ժամանակն հա-
սած չէր։
21 Ցետոյ Ցիսուս դարձեալ ըսաւ անոնց, Ես
կ'երթամ, և զիս պիտի փնտռէք, և պիտի մեռ-
նիք ձեր մեղաց մէջ. ուր ես կ'երթամ, դուք
22 չէք կրնար գալ։ Ուստի Հրեաները կ'ըսէին,
Մի՞թէ զիւրովի՞ն պիտի երթայ, որ կ'ըսէ Թէ
23 Ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ։ Եւ ը-
սաւ անոնց, Դուք ի ներքուստս եք, ես ի վերուստ
եմ. դուք այս աշխարհէս եք, ես այս աշխարհէս
24 չեմ. Ուստի ըսի ձեզ Թէ ձեր մեղաց
մէջ պիտի մեռնիք, քանզի եթէ չհաւատաք Թէ
25 ես եմ, պիտի մեռնիք ձեր մեղաց մէջ։ Անտանի
ըսին անոր, Դու ո՞վ ես։ Ցիսուս ըսաւ ա-
26 նոնց, Ինչ որ ի սկզբանէ կը խօսիմ ձեզ։ Շատ
բաներ ունիմ ձեզի համար խօսել և դատել.
բայց այն որ զիս զրկեց՝ ճշմարիտ է, և ես ինչ
27 որ առնէ լսեցի, զոյն կը խօսիմ յաշխարհի։ Անոնք
չհմացան Թէ Հօրը համար կ'ըսէր անոնց։
28 Իսկ Ցիսուս ըսաւ անոնց, Երբ զՈրդին մարդոյ
բարձրացունէք, անտանի պիտի գիտնաք Թէ ես
եմ, և յանձնէ բան մը չեմ ըներ, այլ ինչպէս
29 սորվեցուց ինձ Հայրս՝ այնպէս կը խօսիմ։ Եւ զիս
զրկողն իմ հետս է. Հայրը չթողուց զիս միայն.
վասն զի ես կ'ընեմ միշտ ինչ որ հաճելի է նմա։

30 Երբ խօսեցաւ ասոնք, չատ մարդիկ հաւատա-
31 ցին անոր։ Անատեն Յիսուս ըսաւ իրեն հաւա-
սացող Հրեից, Եթէ դուք կենաք իմ խօսքիս
32 մէջ, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. Եւ
ճշմարտութիւնը պիտի գիտնաք, և այն ճշմար-
33 տութիւնը պիտի ազատէ զձեզ։ Պատասխան
տուին անոր, Մենք զաւակ ենք Աբրահամու, և
ոչ ումիք երբէք ծառայեցինք. դուն ի՞նչպէս
34 կ'ըսես Թէ Ազատ պիտի ըլլաք։ Յիսուս պատաս-
խան տուաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզ Թէ Ամէնը որ մեղք կը գործէ, ծառայ է
35 մեղաց։ Եւ ծառան չմնար տան մէջ յաւիտեան,
36 բայց որդին կը մնայ յաւիտեան։ Ուստի եթէ
Որդին ազատէ զձեզ, ճշմարտապէս ազատ պիտի
37 ըլլաք։ Գիտեմ որ զաւակ էք Աբրահամու, բայց
կը խնդրէք սպաննել զիս, վասն զի իմ խօսքս
38 տեղի չունի ի ձեզ։ Ես ինչ որ տեսայ իմ Հօրս
քովՀ՝ զայն կը խօսիմ. և դուք ևս ինչ որ տեսաք
39 ձեր հօրը քովՀ՝ զայն կ'ընէք։ Պատասխան տուին
և ըսին անոր, Մեր հայրն Աբրահամ է։ Ըսաւ
անոնց Յիսուս, Եթէ ըլլայիք որդիք Աբրահամու,
40 Աբրահամու գործերը կը գործէիք։ Բայց հիմա
կը խնդրէք սպաննել զիս, մարդ մը որ խօսեցայ
ձեզ ճշմարտութիւնը, զոր լսեցի Աստուծմէ. Աբ-
41 րահամ չըրաւ զայդ։ Դուք կ'ընէք ձեր հօրը
գործերը։ Անոնք ըսին անոր, Մենք չծնած
չենք պոռնկութենէ, մենք մի Հայր միայն ունինք
42 որ է Աստուած։ Յիսուս ըսաւ անոնց, Եթէ Աս-
տուած ձեր Հայրն ըլլար, կը սիրէիք զիս. քանզի
ես Աստուծմէ ելայ և եկայ. և ոչ Թէ ես յանձնէ
43 եկայ, այլ նա զրկեց զիս։ Ինչո՞ւ համար չէք
հասկնար դուք իմ ասացուածս. վասն զի չէք
44 կրնար լսել իմ խօսքս։ Դուք չէր հօրմէն Սա-
տանայէն էք, և կ'ուզէք ընել ձեր հօրը բաղ-
ձանքը. նա մարդասպան էր ի սկզբանէ հետէ, և

չկեցաւ ի ճշմարտութեան, քանզի ճշմարտութիւն
չկայ ի նմա. երբ նա սուտ խօսի, բուն ի-
րեններէն կը խօսի, քանզի սուտաւոր է նա և ա-
45 նոր հայրը։ Բայց որովհետև ես ճշմարտութիւն
46 կը խօսիմ, չէք հաւատար ինձ։ Ձեզմէ ո՞վ կրնայ
յանդիմանել զիս մեղաց համար. իսկ եթէ ես
ճշմարտութիւն կը խօսիմ, ընդՔ՞ը չէք հաւատար
47 ինձ։ Ով որ Աստուծմէ է՝ կը լսէ Աստուծոյ խօս-
քերը. դուք վասն այնորիկ չէք լսեր, վասն զի
48 չէք Աստուծմէ։ Պատասխան տուին Հրեայք և
ըսին անոր, Ո՞չ ապաքէն ազէկ կ'ըսենք մենք
49 Թէ դուն Սամարացի ես, և դև կայ ի քեզ։ Յի-
սուս պատասխան տուաւ Ես՝ — Դև չկայ յիս,
այլ ես կը պատուեմ իմ Հայրս, և դուք զիս
50 կ'անարգեք։ Իսկ ես իմ փառքս չեմ խնդրեր.
51 կայ որ կը խնդրէ և կը դատէ։ Ճշմարիտ ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզ, եթէ ոք պահէ իմ խօսքս,
52 մահ պիտի չտեսնէ յաւիտեան։ Անատեն Հրեա-
ներն ըսին անոր, Հիմա գիտցանք Թէ դև կայ
ի քեզ. Աբրահամ մեռաւ և մարգարէները, և
դուն կ'ըսես, Եթէ ոք պահէ իմ խօսքս, յա-
53 ւիտեան պիտի չճաշակէ զմահ։ Մի՞թէ դու աւելի՞
մեծ ես քան հայրն մեր Աբրահամ որ մեռաւ, և
մարգարէք ևս մեռան. դու զո՞վ կ'ընես զքեզ։
54 Յիսուս պատասխան տուաւ, Եթէ ես փառաւո-
րեմ զիս, իմ փառքս ոչինչ է. զիս փառաւորողն
է Հայրս, որոյ համար դուք կ'ըսէք Թէ *Մեր
55 Աստուածն է. Եւ չէք ճանչնար զնա, բայց ես
գիտեմ զնա. և եթէ ըսեմ Թէ չեմ գիտեր զնա,
ձեզի պէս սուտաւոս կ'ըլլամ. այլ ես գիտեմ
56 զնա, և կը պահեմ անոր խօսքը։ Ձեր հայրն
Աբրահամ ցանկացաւ տեսնել իմ օրս, և տեսաւ,
57 և ուրախ եղաւ։ Իսկ Հրեայք ըսին անոր, Դու

*Ոմանք, Ձեր

տակաւին չխնամեայ չես, և զԱբրահամ՝ տե-
58 սար։ Ցիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ
կ՚ըսեմ ձեզ, Յառաջ քան զի ինքն Աբրահամու-
59 եմ էա՝ Անասեան քարեր վերցուցին նետել անոր
վրայ. բայց Ցիսուս ծածկուեցաւ, և անոնց մէ-
ջէն անցնելով՝ ելաւ տաճարէն դուրս, և այնպէս
գնաց։

Գլ. Թ

1 Եւ երբ կ՚անցնէր, տեսաւ մարդ մը ի ծնէ կոյր։
2 Եւ աշակերտներն հարցուցին անոր և ըսին,
Ռաբբի, որո՞ւ է մեղքը, ասոր թէ ծնողացը, որ
3 կոյր ծնաւ։ Պատասխան տուաւ Ցիսուս, Ոչ անորն
է մեղքը, և ոչ անոր ծնողաց, այլ որպէս զի Ա-
4 ստուծոյ գործերն յայտնի ըլլան անոր վրայ։ Մինչ-
դեռ ասիւ է, պարտ է ինձ գործել զնա զրկողին
գործերը. կու գայ գիշեր երբ ոչ ոք կրնայ գոր-
5 ծել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։
6 Երբ զայս ըսաւ, թքաւ գետինը և թքովը չինեց
կաւ, և ծեփեց այն կաւը կուրին աչքերուն։
7 Եւ ըսաւ անոր, Գնա, լուացուիր Սիլոամի աւա-
զանը, որ կը թարգմանուի Առաքեալ։ Ուստի
8 գնաց և լուացուեցաւ, եկաւ և կը տեսնէր։ Իսկ
դրացիները և անոնք որ յառաջագոյն տեսած էին
զնա որ *կոյր էր, կ՚ըսէին, Սա չէ՞ր որ կը նստէր
9 և կը մուրար։ Ոմանք կ՚ըսէին, Նա է։ Այլք կ՚ը-
սէին, Անոր նման է. է՛։ ինք կ՚ըսէր թէ ես եմ։
10 Ուստի ըսին անոր, Հապա ի՞նչպես բացուեցան
11 աչքերդ։ Նա պատասխան տուաւ և ըսաւ,
Ցիսուս կոչուած մարդ մը կաւ չինեց և ծեփեց
աչքերուս, և ըսաւ ինձ, Գնա Սիլոամի աւա-
զանը և լուացուէ։ Ես ես գնացի, լուացուեցայ և

*Ոմն։, մուրացիկ

12 կը տեսնեմ։ Եւ ըսին անոր, Ո՞ւր է նա։ Ըսաւ
անոնց, Չեմ գիտեր։
13 Փարիսեցիներուն տարին զնա որ յառաջագոյն
14 կոյր էր։ Եւ շաբաթ օր էր երբ Ցիսուս չինեց
15 կաւը և անոր աչքերները բացաւ։ Դարձեալ փա-
րիսեցիք կը հարցնէին անոր թէ ինչպես կը տես-
նէր. և նա ըսաւ անոնց, Կաւ դրաւ աչքերուս
16 վրայ, և լուացուեցայ և կը տեսնեմ։ Ուստի
փարիսեցիներէն ոմանք կ՚ըսէին, Այն մարդն
Աստուծմէ չէ, քանզի շաբաթ օրը չպահեր։ Այլք
կ՚ըսէին, Ի՞նչպէս կրնայ մեղաւոր մարդ մը այս-
պիսի հրաշք գործել։ Եւ անոնց մէջ երկպառա-
17 կութիւն կար։ Դարձեալ ըսին կուրին, Դուն ի՞նչ
կ՚ըսես անոր համար որ քու աչքերդ բացաւ։
18 Եւ նա ըսաւ թէ մարգարէ է։ Իսկ Հրեայք չէին
հաւատար անոր համար թէ կոյր էր և տեսաւ,
մինչև կոչեցին զծնողս նորա որոյ աչքերը
19 բացուած էին, Եւ հարցուցին անոնց և ըսին,
Այ՞ս է ձեր որդին, որոյ համար կ՚ըսէք թէ կոյր
20 ծնաւ։ Իսկ հիմա ի՞նչպէս կը տեսնէ։ Անոր ծնողքը
պատասխան տուին անոնց և ըսին, Գիտենք թէ
21 այս է մեր որդին, և թէ կոյր ծնաւ։ Բայց հիմա
ի՞նչպէս կը տեսնէ՝ չենք գիտեր, կամ թէ ո՛վ
բացաւ անոր աչքերը՝ մենք չենք գիտեր. ինք
չափահաս է, անոր հարցուցէք։ Թող ինք խօսի
22 իրեն համար։ Այս ըսին անոր ծնողքն առ ահին
Հրեից. քանզի Հրեայք միաբան հաւանութեամբ
որոշած էին որ եթէ ոք դաւանէր զնա Քրիստոս,
23 դուրս հանուէր ժողովրդանոցէն։ Այս պատճա-
ռաւ անոր ծնողքն ըսին թէ ինք չափահաս է,
24 անոր հարցուցէք։ Ցետոյ դարձեալ կոչեցին այն
մարդը որ կոյր էր, և ըսին անոր, Աստուծոյ
փառք տուր. մենք գիտենք որ այն մարդը մե-
25 ղաւոր է։ Եւ նա պատասխան տուաւ և ըսաւ,
Եթէ մեղաւոր է, ես չեմ գիտեր. միայն գիտեմ

26 որ կոյր էի և հիմա կը տեսնեմ։ Դարձեալ ըսին
անոր, ինչ ըրաւ քեզ, ի՞նչպէս բացաւ աչուր-
27 ներդ։ Պատասխան տուաւ անոնց, Հիմա ըսի ձեզ
և լսեցիք. ընդէ՞ր մի՛ւսանգամ կ՚ուզէք լսել։
միթէ և դո՞ւք կ՚ուզէք անոր աշակերտ ըլլալ։
28 Անոնք նախատեցին զնա ըսին, Դուն ես անոր ա-
շակերտ, իսկ մենք Մովսէսի աշակերտ ենք։
29 Մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խո-
սեցաւ, բայց զսա չենք գիտեր թէ ուսկի է։
30 Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց, Այդ
է զարմանալի որ դուք չէք գիտեր թէ ուսկի է,
31 և նա իմ աչուրներս բացաւ։ Գիտենք որ Աստ-
ուած մեղաւորներուն չլսեր, բայց եթէ աստուա-
ծապաշտ ըլլայ ոք և կատարէ անոր կամքը, անոր
32 կը լսէ։ Ի սկզբանէ աշխարհի լսուած չէ թէ բացաւ
33 ոք ի ծնէ կուրի աչուրները։ Եթէ Աստուծմէ չէր
34 այն մարդը, չէր կրնար բան մը ընել։ Պատաս-
խան տուին և ըսին անոր, Դուն բոլորովին ի մեղս
ծնած ես, և կը վարդապետե՞ս մեզ։ Եւ դուրս
հանեցին զնա։
35 Լսեց Յիսուս թէ դուրս հանեցին զնա, և երբ
գտաւ զնա, ըսաւ անոր, Դուն կը հաւատա՞ս Ա-
36 ստուծոյ Որդւոյն։ Նա պատասխան տուաւ և ըսաւ,
37 Տէր, ո՞վ է որ հաւատամ անոր։ Եւ Յիսուս ըսաւ
անոր, Տեսար իսկ զնա, և քեզի հետ խօսողը նա
38 է։ Եւ նա ըսաւ, Կը հաւատամ, Տէր։ և երկրպա-
39 գեց անոր։ Եւ Յիսուս ըսաւ, Ես այս աշխարհը
եկայ դատաստանի համար, որ չտեսնողները տես-
նեն և տեսնողները կուրանան։
40 Եւ փարիսեցիներէն ոմանք որ անոր հետ էին՝
լսելով այս բաներն ըսին անոր, Մի՛թէ և մե՞նք
41 կոյր ենք։ Յիսուս ըսաւ անոնց, Եթէ կոյր էիք,
մեղք չէիք ունենար, բայց հիմա կ՚ըսէք թէ կը
տեսնենք, վասն որոյ ձեր մեղքը կը մնայ է չէ։

Գլ. Ը

1 Ձկնաբիտ ձկնաբիտ կ՚ըսեմ ձեզ, Այն որ դռնէն
չմտներ ոչխարներուն գաւիթը, այլ ուրիշ տեղէ
2 կ՚ելլէ, գող է նա և աւազակ։ Բայց այն որ
դռնէն կը մտնէ, հովիւ է նա ոչխարներուն։
3 Դռնապանը կը բանայ անոր, և ոչխարները կը
լսեն անոր ձայնին, և իւր ոչխարները կը կոչէ
4 յանուանէ, և զուրս կը հանէ զանոնք։ Եւ երբ
կը հանէ իւր ոչխարները, կ՚երթայ անոնց առ-
ջևէն, և ոչխարները կ՚երթան անոր ետևէն,
5 քանզի կը ճանչնան անոր ձայնը։ Սակայն օտարի
ետևէ չեն երթար, այլ կը փախչին անկէ, քանզի
չեն ճանչնար օտարներուն ձայնը։
6 Յիսուս այս առակն ըսաւ անոնց, բայց անոնք
չէին իմանար թէ ինչ էր զոր կը խօսէր անոնց։
7 Եւ Յիսուս դարձեալ ըսաւ անոնց, ճշմարիտ
ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ, ես եմ դուռն ոչխարաց։
8 Ամէնքը որ յառաջ քան զիս եկան՝ գող էին
և աւազակ, բայց ոչխարները չլսեցին անոնց։
9 Ես եմ դուռն. եթէ ոք ներս մտնէ ինձ՝ պիտի
փրկուի, և պիտի մտնէ և ելլէ և արօտ գտնէ։
10 Գողը չգայ, բայց միայն որպէս զի գողնայ
և սպաննէ և կորուսանէ. ես եկայ որ կեանք
11 ունենան, և աւելի առ ունենան։ Ես եմ բարի
հովիւը. բարի հովիւը իւր կեանքը կը դնէ ոչ-
12 խարներուն համար։ Բայց վարձկանը որ հովիւ
չէ և ոչխարներն անորը չեն, երբ կը տեսնէ
գայլը որ կու գայ, կը թողու ոչխարները և կը
փախչի. և գայլը կը յափշտակէ ոչխարները և կը
13 ցրուէ զանոնք։ Եւ վարձկանը կը փախչի, քանզի
վարձկան է և անոր փոյթ չէ ոչխարներուն հա-
14 մար։ Ես եմ բարի հովիւը, և կը ճանչնամ իմին-
15 ները և կը ճանչցուին իմիններէս։ Ինչպէս Հայրը
կը ճանչնայ զիս, ես ևս կը ճանչնամ զՀայրը, և

16 կը դնեմ կեանքս ոչխարներուն համար։ Ուրիշ
ոչխարներ ևս ունիմ որ չեն այս գաւիթէն. զա-
նոնք ևս պարտ է ինձ բերել, և ալիսի լսեն ձայ-
17 նիս, և ալիսի ըլլան մի հօտ և մի հովիւ։ Վասն
այնորիկ կը սիրէ զիս Հայրս, վասն զի ես կը դնեմ
իմ կեանքս, որպէս զի միւսանգամ առնում
18 զնա։ Ոչ ոք կը հանէ զնա ինձմէ, այլ ես կը դնեմ
զնա անձամբ. իշխանութիւն ունիմ դնել զնա,
և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ
զնա. այս պատուէրն առի իմ Հօրմէս։
19 Դարձեալ երկպառակութիւն կ'ըլլար Հրեից մէջ
20 այս խօսքերուն համար։ Եւ անոնցմէ շատերը
կ'ըսէին, Դև կայ ի դմա, և մոլեգնեալ է. ընդէ՞ր
21 կը լսէք սմա։ Ուրիշները կ'ըսէին, Այս խօս-
քերը դիւահարի չեն. միթէ դեր կրնայ կուրաց
աչուըները բանալ։
22 Անսահեն եղաւ Նաւակատիք յԵրուսաղէմ, և
23 ձմեռն էր։ Եւ Յիսուս կը շրջէր սաճարին մէջ
24 Սողոմոնի սրահն։ Եւ շրջէ պատեցին զնա Հրեայք
և ըսին անոր, Մինչև ե՞րբ կը թափես զոգիս մեր.
եթէ դու ես Քրիստոսն, ըսէ մեզ համարձակ։
25 Յիսուս պատասխան առաւ անոնց, Ըսի ձեզ և
չէք հաւատար։ գործերը զոր ես կը գործեմ իմ
Հօրս անուամբ՝ անոնք կը վկայեն ինծի համար։
26 Բայց դուք չէք հաւատար, քանզի չէք իմ ոչ-
27 խարներէս, *ինչպէս ըսի ձեզ։ Ոչխարներս կը լսեն
իմ ձայնիս, և ես կը ճանչնամ զանոնք, և կու գան
28 իմ հետևէս. Եւ ես կու տամ անոնց յաւիտենական
կեանք, և յաւիտեան պիտի չկորսուին, և ոչ ոք
29 պիտի յափշտակէ զանոնք իմ ձեռքէս։ Հայրս
որ ջնոռ տուաւ ինձ՝ քան զամենեսին մեծ է, և
30 ոչ ոք կրնայ յափշտակել իմ Հօրս ձեռքէն։ Ես
և Հայր մի եմք։

*Ոմանք լսոնին

31 Անսահեն Հրեաները դարձեալ քարեր վերցուցին
32 քարկոծել զնա։ Յիսուս պատասխան առաւ ա-
նոնց, Շատ բարի գործեր ցուցի ձեզ իմ Հօրմէս,
անոնցմէ ո՞ր գործին համար կը քարկոծէք զիս։
33 Հրեաները պատասխան տուին անոր ըսելով,
Բարի գործոյ համար չենք քարկոծեր զքեզ, այլ
հայհոյութեան համար, և վասն զի դուն որ մարդ
34 ես, Աստուած կ'ընես զքեզ։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց, Ո՞չ ապաքէն ձեր օրինաց մէջ
գրուած է, Ես ըսի Թէ դուք աստուածներ էք։
35 Եթէ աստուածներ կոչեանք զանոնք առ որս ե-
զաւ Աստուծոյ խօսքը, և հնար չէ որ այն գրուածը
36 եղծանի, իսկ զոր Հայրը սրբեց և աշխարհ ղրկեց,
դուք կ'ըսէ՞ք անոր Թէ հայհոյութիւն կ'ընես,
37 վասն զի ըսի Թէ Աստուծոյ Որդի եմ։ Եթէ չեմ
գործեր իմ Հօրս գործերը, մի՛ հաւատաք ինձ։
38 Այլ եթէ կը գործեմ, Թէև ինձ չէք հաւատար,
ջնոռ գործերուն հաւատացէք, որ գիտնաք և
*հաւատաք Թէ Հայր յիս է, և ես ի նմա։
39 Դարձեալ կը խնդրէին բռնել զնա, և անոնց
40 ձեռքէն ելաւ։ Եւ գնաց միւսանգամ յայնկոյս
Յորդանանու, այն տեղ ուր Յովհաննէս կը մկրտէր
41 առաջ, և կեցաւ հոն։ Եւ շատերը եկան անոր և
կ'ըսէին, Արդարև Յովհաննէս հրաշք չըրաւ. Բայց
ինչ որ Յովհաննէս բսաւ անոր համար՝ ամենը ճշմա-
րիտ էր. և շատ մարդիկ հոն հաւատացին անոր։

Գլ. ԺԱ

1 Եւ Մարիամու և անոր քրոջ Մարթայի գիւղէն,
Բեթանիայէ, Ղազարոս ոմն հիւանդ էր։
2 Այս այն Մարիամն էր որ օծեց Տէրը իւղով, և
սրբեց անոր ոտուըները իր մազերով, որոյ
3 եղբայրը Ղազարոս հիւանդ էր։ Ուստի քոյրերը

*Ոմանք, Ճանչնաք

ղրկեցին անոր և ըսին, Տէր, ահա զոր դուն կը
4 սիրես՝ հիւանդ է։ Ցիսուս երբ լսեց, ըսաւ, Այս
հիւանդութիւնը չէ ի մահ, այլ Աստուծոյ փա-
5 ռացը համար, որ Աստուծոյ Որդին փառաւորուի
6 անով։ Արդ Ցիսուս կը սիրէր զՄարթա և անոր
քոյրը զՂազարոս։ Իսկ երբ լսեց թէ հիւանդ է,
7 երկու օր ևս կեցաւ ուր էր։ Ու յետ այնորկի
ըսաւ աշակերտներուն, Եկէ՛ք դարձեալ Հրէաստան
8 երթանք։ Աշակերտներն ըսին անոր, Ռաբբի,
Հրեայք հիմա կը խնդրէին քարկոծել զքեզ, և
9 դարձեալ հո՞ն կ'երթաս։ Պատասխան տուաւ
Ցիսուս, Ո՞չ ապաքէն օրը երկոտասան ժամ է։
Եթէ ոք քալէ ի տուընկեան չսահիր, քանզի այս
10 աշխարհիս լոյսը կը տեսնէ։ Բայց եթէ ոք քալէ
գիշերը, կը սահի, վասն զի լոյս չկայ անոր հետ։
11 Ասոնք ըսելէն ետքը ըսաւ անոնց, Ղազարոս
մեր բարեկամը քնացած է, բայց կ'երթամ որ
12 արթնցունեմ զնա։ Աշակերտներն ըսին, Տէր,
13 եթէ քնացած է, պիտի առողջանայ։ Իսկ Ցիսուս
անոր մեռնելուն համար կ'ըսէր, բայց անոնք
կը կարծէին թէ քուն քնանալուն համար կ'ըսէր։
14 Անատեն Ցիսուս յայտնապէս ըսաւ անոնց, Ղա-
15 զարոս մեռաւ։ Ու ես ուրախ եմ ձեզի համար
որ հոն չէի, որ դուք հաւատաք. բայց եկէ՛ք ե-
16 թանք անոր։ Թովմաս որ Երկուսկին կը կոչ-
ուէր՝ ըսաւ ընկերակիցներուն, Մենք ևս
երթանք որ անոր հետ մեռնինք։
17 Ցիսուս երբ եկաւ, գտաւ որ արդէն չորեքօր-
18 եայ գերեզմանը դրուած էր նա։ Ու Բեթանիա
Երուսաղէմի մօտ էր իբր հնգետասան ասպարէզ։
19 Ու Հրեաներէն շատերը եկած էին առ Մարթա
և առ Մարիամ մխիթարել զանոնք իրենց եղ-
20 բօրը համար։ Արդ երբ լսեց Մարթա թէ Ցիսուս
կու գայ, գնաց դիմաւորել զնա, բայց Մարիամ
21 տան մէջ նստած էր։ Ու Մարթա ըսաւ Ցիսու-

սի, Տէր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռ-
22 ներ. բայց գիտեմ որ հիմա ևս դուն ինչ որ
խնդրես Աստուծմէ, Աստուած պիտի տայ քեզ։
23 Ցիսուս ըսաւ անոր, Քու եղբայրդ պիտի յառնէ։
24 Մարթա ըսաւ անոր, Գիտեմ թէ պիտի յառնէ
25 ի յարութեան վերջին օրը։ Ցիսուս ըսաւ անոր,
Ես եմ յարութիւն և կեանք. ով որ կը հաւա-
26 տայ յիս, թէ և մեռնի, պիտի ապրի։ Ու այն
ամէնը որ կենդանի է և կը հաւատայ յիս, պիտի
չմեռնի յաւիտեան։ դուն կը հաւատա՞ս այսմ։
27 Ըսաւ անոր, Այո, Տէր, ես հաւատացած եմ թէ
դուն ես Քրիստոսն, Աստուծոյ Որդին, որ յաշ-
28 խարհ գալոց էիր։ Ու երբ ըսաւ զայս, գնաց
գաղտ և կոչեց իւր քոյրը Մարիամ ըսելով,
29 Վարդապետը եկած է և կը կոչէ զքեզ։ Երբ
30 լսեց նա, իսկոյն ելաւ և եկաւ անոր։ Իսկ Ցիսուս
դեռ գիւղը եկած չէր, այլ այն տեղն էր ուր
31 Մարթա դիմաւորեց զնա։ Բայց Հրեայք որ անոր
հետ էին տանը մէջ և կը մխիթարէին զնա, երբ
տեսան թէ Մարիամ ելաւ վաղվազակի և գնաց,
հետևեցան անոր՝ ենթադրելով թէ գե-
32 րեզման կ'երթայ որ հոն լայ։ Իսկ Մարիամ երբ
եկաւ ուր էր Ցիսուս և տեսաւ զնա, խոնարհ
եղաւ անոր ոտքը ըսաւ անոր, Տէր, եթէ հոս ըլլայիր,
33 եղբայրս չէր մեռներ։ Ցիսուս երբ տեսաւ զնա
որ կու լար, և անոր հետ եկող Հրեայք որ կու-
34 լային, հառաչեց և խռովեցաւ յոգիի իւր, Ու ը-
սաւ, Ո՞ւր դրած եք զնա։ Ըսին անոր, Տէր, եկ
35 և տես։ Ցիսուս լացաւ։ (36) Ուստի Հրեայք
37 կ'ըսէին, Տես որչափ կը սիրէր զնա։ Ու անոնցմէ
ոմանք կ'ըսէին, Դա որ կուրին աչուընները բա-
38 ցաւ, չէ՞ր կրնար ընել որ ան և չմեռնէր։ Ի-
սուս դարձեալ իւր ոգին մէջ հառաչելով գե-
րեզմանը կու գայ։ և այն էր քարայր մի, և քար
39 դրուած էր անոր վրայ։ Ցիսուս ըսաւ, Մեհդէ

ըրէք այդ քարը։ Մեռելոյն քարը Մարթա ըսաւ անոր, Տէր, արդէն հոտած պիտի ըլլայ քանզի չորեքօրեայ է։ Ըսաւ անոր Յիսուս, Ո՞չ ապա- 40 քէն ըսի քեզ Թէ, եթէ հաւատաս, պիտի տես- 41 նես Աստուծոյ փառքը։ Անոնն ալ քարը *քարը, և Յիսուս վեր վերցուց աչուըները և ը- սաւ, Հայր, շնորհակալ եմ քենէ, որ լսեցեր 42 ինձ։ Եւ ես գիտէի Թէ յամենայն ժամ կը լսես ինձ. բայց ըսի ժողովրդեանս համար որ շուրջ կան, որպէս զի հաւատան Թէ դու զրկեցիր զիս։ 43 Եւ այս ըսելէն ետքը, մեծ ձայնիւ կոչեց, Ղա- 44 զար, եկ արտաքս։ Եւ մեռելը ելաւ, ձեռ- ուընները և ոտուընները պատանեօք կապուած և երեսը վարդանակով պատած։ Յիսուս ըսաւ ա- նոնց, Արձակեցէք զդա և թողէք երթալ։

45 Եւ հրեաներէն շատերը որ եկած էին առ Մա- րիամ, երբ տեսան ինչ որ ըրաւ Յիսուս, հաւա- 46 տացին անոր։ Բայց անոնցմէ ոմանք գնացին փարիսեցիներուն, և պատմեցին անոնց ինչ որ ըրաւ Յիսուս։

47 Ուստի քահանայապետները և փարիսեցիք գու- մարեցին ժողով և ըսին, Ի՞նչ ընենք, քանզի այս 48 մարդը շատ հրաշք կ'ընէ։ Եթէ թողունք զնա այսպէս, ամենքը պիտի հաւատան անոր, և Հռով- մայեցիք պիտի գան և վերցնեն մեր տեղը և 49 ազգը։ Եւ անոնցմէ մին, Կայափաս անուն, որ քահանայապետ էր այն տարւոյն, ըսաւ անոնց, 50 Դուք ոչինչ գիտէք, Եւ ոչ իսկ կը խորհիք Թէ լաւ է մեզ որ մարդ մը ժողովրդեան համար 51 մեռնի, և բոլոր ազգը չկորսուի։ Բայց զայս ոչ Թէ յանձնէ ըսաւ, այլ որովհետև քահանայա- պետ էր այն տարւոյն, մարգարէացաւ Թէ Յի- 52 սուս պիտի մեռնէր ազգին համար։ Եւ ոչ միայն

*Ոմանք, քարը՝ ուր պառկած էր մեռելը

ազգին համար, այլ և որպէս զի Աստուծոյ ցրուած որդիներն ևս ժողովէր ի մի։

53 Եւ այն օրէն խորհուրդ բռնին սպաննել զնա։
54 Ուստի Յիսուս այնուհետև համարձակ չէր շրջեր Հրէից մէջ, այլ գնաց անկէ անապատին մօտ տեղ քաղաք մը որոյ անունն էր Եփրայիմ, և հոն կը կենար իւր աշակերտներուն հետ։

55 Եւ մօտ էր Հրէից զատիկը, և այն գաւառէն շատ մարդիկ յառաջ քան զզատիկն երուսաղէմ 56 եկան մաքրել զանձինս։ Եւ կը փնտռէին զՅիսուս, և մինչ տաճարին մէջ կեցած էին, կ'ըսէին իրա- րու, Ինչպէս կը թուի ձեզ, Թէ այս ոտնիս չգնա- 57 պիտի չգա՞յ։ Իսկ քահանայապետք և փարիսեցիք պատուէր տուած էին որ, եթէ ոք գիտնար Թէ ուր է նա, իմացուցէր որ բռնեն զնա։

ԳԼ. ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց օր յառաջ քան զզատիկն եկաւ Բեթանիա, ուր էր Ղազարոս մեռեալն, զոր Յ- 2 ոյս յարոյց մեռելներէն։ Եւ հոն ընթրիք բրին անոր, և Մարթա սպասաւորութիւն կ'ընէր, և Ղազարոս էր անոր հետ սեղան նստողներէն մին։
3 Իսկ Մարիամ լիտր մի նարդոսի պատուական մեծագին իւղ առնելով, օծեց Յիսուսի ոտուը- ները, և մազերովը սրբեց անոր ոտուըները. և 4 տունը լցաւ անուշահոտութենէ իւղոյն։ Աշտեան աշակերտներէն մին, Իսկարիովտացի Սիմոնեան 5 Յուդա, որ պիտի մատնէր զնա, ըսաւ, Ընդէր այդ իւղը չվաճառեցաւ երեք հարիւր դահեկանի, 6 որ տրուէր աղքատաց։ Զայս ըսաւ ոչ Թէ աղ- քատաց համար փոյթ էր նմա, այլ վասն զի գող էր և ինքը կը պահէր գանձանակը, և ինչ որ 7 նետուէր՝ ինքը կը հրէր։ Իսկ Յիսուս ըսաւ, Թող, տուր տառը, Թաղմանս օրուան համար պահեց 8 զայն։ Վասն զի աղքատներն յամենայն ժամ ու-

նիք ընդ ձեզ, բայց զիս յամենայն ժամ չունիք։
9 Ուստի հրեաներէն չատ ժողովուրդ իմացան
Թէ հոն էր նա, և եկան ոչ միայն Յիսուսի հա-
մար, այլ և որպէս զի զՂազարոս ևս տեսնէին,
10 զոր յարոյց մեռելներէն։ Իսկ քահանայապետնե-
րը խորհուրդ ըրին զՂազարոս ևս սպաննել,
11 Քանզի հրեաներէն չատերը կ'երթային անոր
պատճառաւ և կը հաւատային Յիսուսի։
12 Հետևեալ օրը չատ ժողովուրդ որ տօնին եկած
էին, երբ լսեցին Թէ Յիսուս կու գար յԵրու-
13 սաղէմ, Առին արմաւենւոյ ոստեր և ելան դի-
մաւորել զնա, և կ'աղաղակէին, Ովսաննա,
օրհնեալ է Իսրայէլի Թագաւորը որ կու գայ յա-
14 Նուն Տեառն։ Եւ Յիսուս գտնելով յաւանակ մը
15 նստաւ անոր վրայ, ինչպես որ գրուած է։ Մի՛
երկնչիր, դուստր Սիովն։ ահա քու Թագաւորդ
16 կու գայ նստած իշու յաւանակի վրայ։ Եւ անոր
աշակերտները չհմացան առաջ այս բաներըը,
բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, անտոնն
յիշեցին Թէ այս բաներն անոր համար գրուած
17 էին, և Թէ երկնք այս բաներն ըրին անոր։ Եւ
ժողովուրդը որ անոր հետ էր՝ կը վկայէր Թէ
զՂազարոս գերեզմանին դուրս կոչեց, և մեռել-
18 ներէն յարոյց զնա։ Եւ վասն այսորիկ ժողո-
վուրդը դիմաւորեց զնա, վասն զի լսեցին Թէ
19 այս հրաշքն ըրած էր նա։ Իսկ փարիսեցիք կ'ը-
սէին իրարու, Կը տեսնէ՞ք որ օգուտ չէք ըներ։
ահա աշխարհ անոր հետևէն գնաց։
20 Եւ հոն կային Յոյնք ոմանք անոնց մէջ որ
21 երկրպագելու եկած էին ի տօնին։ Ասոնք եկան
առ փիլիպպոս որ էր Գալիլեայի Բեթսայիդայեն,
և կ'աղաչէին զնա և կ'ըսէին, Տէր, կ'ուզենք
22 զՅիսուս տեսնել։ Փիլիպպոս եկաւ և ըսաւ
Անդրէի, և դարձեալ Անդրէաս և Փիլիպպոս ը-
23 սին Յիսուսի։ Յիսուս պատասխան տուաւ անոնց

և ըսաւ, Ժամանակը հասաւ որ փառաւորուի
24 Որդին մարդոյ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ,
Եթէ ցորենոյ հատն հողին մէջ իյնալով չմեռնի,
Ինք միայն կը մնայ։ ապա Եթէ մեռնի, չատ պա-
25 դիւղ կը բերէ։ Ով որ իւր անձը կը սիրէ, պիտի
կորուսանէ զնա։ և ով որ իւր անձը կ'ատէ այս
աշխարհիս մէջ, յաւիտենական կեանց համար
26 պիտի պահէ զայն։ Եթէ ոք կը ծառայէ ինձ,
Թող գայ իմ ետևէս։ և ուր ես եմ, իմ ծառան
ևս հոն պիտի ըլայ։ Եթէ ոք կը ծառայէ ինձ,
27 Հայրը պիտի պատուէ զնա։ Հիմա խռոված է հո-
գիս, և ինչ ըսեմ։ Հայր, ազատէ զիս այս ժա-
մէն։ բայց ես վասն այնորիկ եկայ այս ժամու։
28 Հայր, փառաւորէ քու անունդ։ Անատեն ձայն
եկաւ յերկնից, Ե՛ւ փառաւորեցի, և՛ դարձեալ
29 պիտի փառաւորեմ։ Եւ ժողովուրդը որ կեցած
էր և կը լսէր, կ'ըսէին, Որոտաց կ'ըլլայ։ Ոմանք
30 ևս կ'ըսէին, Հրեշտակ խօսեցաւ անոր հետ։ Յի-
սուս պատասխան տուաւ և ըսաւ, Այս ձայնը
31 ինձի համար չեկաւ, այլ ձեզի համար։ Հիմա է
այս աշխարհիս դատաստանը, հիմա այս աշխարհիս
32 իշխանը դուրս պիտի նետուի։ Եւ ես երբ երկ-
րէն բարձրանամ, ամէնքը պիտի ձգեմ առ իս։
33 Զայս կ'ըսէր իմացնելով Թէ որպիսի մահուամբ
34 պիտի մեռնէր։ ժողովուրդը պատասխանեց ա-
նոր, Մենք լսեցինք յօրինաց Թէ Քրիստոս յա-
ւիտեան կը մնայ, և դու ինչպես կ'ըսես Թէ
պարտ է Որդւոյ մարդոյ բարձրանալ։ ո՞վ է այդ
35 Որդին մարդոյ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Փոքր
մի ժամանակ ևս լոյսը ձեր հետն է։ Մինչդեռ ու-
նիք լոյսը, քալեցէք, գուցէ մութը հասնի ձեր
վրայ։ քանզի խաւարի մէջ քալողը չգիտեր Թէ
36 ուր կ'երթայ։ Մինչդեռ ունիք լոյսը, հաւատա-
ցէք լուսոյն որ լուսոյ որդիք ըլլաք։ Յիսուս այս
բաներն ըսաւ, և գնաց Թաքնուեցաւ անոնցմէ։

37 Եւ Թէպէտ այնչափ հրաշք ըրած էր անոնց
38 առջեւ, Բայց անոնք չէին հաւատար անոր. Որ
կատարուի Եսայի մարգարէին խօսքը որ ըսաւ,
Տէր, ո՞վ հաւատաց մեր լսուն, և Տէրոջը բազուկը
39 որո՞ւ յայտնուեցաւ։ Վասն այնորհի չէին կրնար
40 հաւատալ, քանզի դարձեալ կ'ըսէ Եսայի, Անոնց
աչուընները կուրցուց, և անոնց սիրտերը Թմրե-
ցուց, զի մի գուցէ տեսնեն աչօք և իմանան սրտիւ
41 և դառնան, և ես բժշկեմ զնոսա։ Այս Բաներ ըսաւ
Եսայի, երբ տեսաւ անոր փառքը, և խօսեցաւ
42 անոր վրայ։ Այսու ամենայնիւ իշխաններէն ևս
շատերը հաւատացին անոր, բայց փարիսեցինե-
րուն համար չէին դաւաներ, որպէս զի չհանուէին
43 ժողովրդականէն. Քանզի աւելի սիրեցին մարդոց
փառքը քան զփառս Աստուծոյ։
44 Իսկ Յիսուս կ'աղաղակէր և կ'ըսէր, Ով որ
կը հաւատայ յիս՝ չհաւատար յիս, այլ յայն որ
45 զրկեց զիս։ Եւ ով որ կը տեսնէ զիս, կը տեսնէ
46 զայն որ զրկեց զիս։ Ես լոյս եկայ յաշխարհ, որ-
պէս զի ամէնը որ հաւատայ յիս՝ չմնայ խաւարի։
47 Եւ եթէ ոք իմ խօսքերս լսէ և չհաւատայ, ես
չեմ դատեր զնա, քանզի ես չեկայ որ դատեմ
48 զաշխարհ, այլ որ փրկեմ զաշխարհ։ Ով որ զիս
կ'անարգէ և իմ խօսքերս չընդունիր, կայ որ
կը դատէ զնա։ Խօսքը զոր ես խօսեցայ, այն
49 պիտի դատէ զնա վերջին օրը։ Քանզի ես չանձնէ
չխօսեցայ, այլ Հայրը որ զրկեց զիս՝ նա պատուի-
րեց ինձ ինչ պիտի ըսեմ և ինչ պիտի խօսիմ։
50 Եւ գիտեմ Թէ ինչ որ նա պատուիրեց՝ յաւիտե-
նական կեանք է։ ուստի ինչ որ ես կը խօսիմ,
ինչպէս Հայրն ըսաւ ինձ, այնպէս կը խօսիմ։

ԳԼ. ԺԳ

1 Յառաջ քան զտօն զատկին Յիսուս գիտնալով

Թէ հասած էր իւր ժամանակը որ ելլէր աշխար-
հէս առ Հայր, սիրած ըլլալով իրենները որ յաշ-
խարհի էին, խօսքս սիրեց զնոսա։
2 Եւ երբ ընթրիքը կ'ըլլար, Սատանան արդէն
զրած էր Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի
3 սիրտը, որ մատնէր զնա։ Յիսուս գիտնալով Թէ
Հայրն ամենայն ինչ տուաւ անոր ձեռքը, և Թէ
ինք Աստուծմէ ելաւ և առ Աստուած կ'երթար,
4 նկաւ յընթրեայց և մկիդի դրաւ հանդերձները և
5 գենջակ մը առնելով սփածաւ։ Ետոյ կոնքի մէջ
ջուր դրաւ, և սկսաւ լուանալ աշակերտաց ոտուը-
ները, և սրբել գենջակաւ որով սփածեալ էր։
6 Ուստի եկաւ առ Սիմոն Պետրոս. և Նա ըսաւ
անոր, Տէր, դո՞ւն իմ ոտուըներս պիտի լուասւ
7 Յիսուս պատասխան առաւ և ըսաւ անոր, Ես
ինչ որ կ'ընեմ դուն հիմա չես իմանար, սակայն
8 յետոյ պիտի իմանաս։ Պետրոս ըսաւ անոր, Դուն
իմ ոտուըներս պիտի չլուասս յաւիտեան։ Պա-
տասխան առաւ անոր Յիսուս, Եթէ չլուամ
9 զքեզ, բաժին չունիս ինձ հետ։ Սիմոն Պետրոս
ըսաւ անոր, Տէր, ոչ միայն ոտուըներս, հապա
10 նաև ձեռուըներս և գլուխս։ Յիսուս ըսաւ անոր,
Լուացեալին ուրիշ բան պէտք չէ բայց միայն լուա-
նալ ոտուըները, այլ նա բոլորովին սաքուր է. և
11 դուք սաքուր էք, բայց ոչ ամենեքդին։ Վասն զի
գիտէր զայն որ պիտի մատնէր զնա. վասն որով
12 ըսաւ, Ոչ ամենեքդին սաքուր էք։ Եւ երբ անոնց
ոտուըները լուաց, և իւր հանդերձները առնելով
դարձեալ սեղան նստաւ, ըսաւ անոնց, Գիտէ՞ք
13 ինչ ըրի ձեզ։ Դուք զիս կը կոչէք Վարդապետ և
14 Տէր, և աղէկ կ'ըսէք, քանզի եմ իսկ Իսկ եթէ
ես Տէրս և Վարդապետս ձեր ոտուըները լուացի,
15 պէտք է որ դուք ևս իրարու ոտք լուաք։ Վասն
զի օրինակ մը տուի ձեզ, որ ինչպէս ես ըրի ձեզ,
16 դուք ևս ընէք։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ,

Ծառան մեծ չէ քան իւր Տէրը, և ոչ գրկուածը
17 մեծ է քան զայն որ զրկեց զնա։ եթէ դուք գիտէք
զսոսնք, երանելի էք եթէ կատարէք զանոնք։
18 Ոչ թէ ձեր ամենուն համար կ'ըսեմ, ես գիտեմ զորս
ես կը ճանչնամ զանոնք զորս ես ընտրեցի, այլ որ-
պէս զի կատարուի գրուածը թէ Ան որ իմ հետս
19 հաց կ'ուտէր, ինծի դէմ կրունկ վերցուց։ Այժ-
մէն կ'ըսեմ ձեզ մինչդեռ եղած չէ, որպէս զի
20 երբ ըլլայ, հաւատաք թէ ես այն եմ։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ով որ կ'ընդունի զայն զոր
ես կը զրկեմ, զիս կ'ընդունի. և ով որ զիս կ'ըն-
դունի, զիս զրկողը կ'ընդունի։
21 Յիսուս երբ զայս ըսաւ, է՛ր հոգւոյն մէջ խռո-
վեցաւ, և վկայեց ըսելով, Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ, որ ձեներէ մին պիտի մատնէ զիս։
22 Ուստի աշակերտները տարակուսած իրարու կը
23 նայէին թէ որու համար կ'ըսէր։ Եւ Յիսուսի *գով
նստած էր աշակերտներէն մին զոր Յիսուս կը սի-
24 րէր։ Եւ Սիմոն Պետրոս անոր կ'անկարկէր
25 հարցնել թէ ո՞վ էր այն որոյ համար կ'ըսէր։ Եւ
նա հենալով Յիսուսի լանջաց վրայ ըսաւ անոր,
26 Տէր, ո՞վ է այն։ Յիսուս պատասխան տուաւ,
Նա է որուն պատառը թրջելով կու տամ։ և
թրջելով պատառը տուաւ իսկարիովտացի Սի-
27 մոնեան Ուղայի։ Եւ պատառէն ետքը Սատա-
նան մտաւ ի նա։ Եւ Յիսուս ըսաւ անոր, ինչ որ
28 պիտի ընես՝ շուտ վազվազակի։ Բայց այս բանը
սեղան նստողներէն և ոչ մին հասկցաւ, թէ ին-
29 չու համար ըսաւ անոր։ Վասն զի ումանք կը խոր-
հէին թէ, որովհետև Ուղա կը պահէր գանձա-
նակը, Յիսուս անոր կ'ըսէր, Գնի ինչ որ պէտք է
մեզ ի տօնիս, կամ թէ աղքատներուն բան մը
30 տայ։ Եւ նա երբ պատառն առաւ, իսկոյն դուրս
ելաւ, և էր գիշեր։

Ցոհ. գոգը

31 Եւ երբ դուրս ելաւ նա, Յիսուս ըսաւ, Այժմ
փառաւորեցաւ Որդին մարդոյ, և Աստուած
32 փառաւորեցաւ անով. Եթէ Աստուած անով
փառաւորեցաւ, և Աստուած ևս իւր անձովը
պիտի փառաւորէ զնա, և չուտով պիտի փա-
33 ռաւորէ զնա։ Որդեակք, սակաւ մի ժամանակ
ևս ձեզի հետ եմ. զիս պիտի փնտռէք. և ինչ-
պէս ըսի Հրեաներուն թէ Ուր ես կ'երթամ
դուք չէք կրնար գալ, հիմա ձեզ ևս կ'ըսեմ։
34 Նոր պատուիրան կու տամ ձեզ որ զիրար սի-
րէք, ինչպէս որ ես զձեզ սիրեցի, որ դուք ևս
35 սիրէք զիմիմանս։ Ասով ամէնքը պիտի գիտնան
թէ իմ աշակերտներս էք, եթէ իրարու մէջ
36 սէր ունենաք։ Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր,
ո՞ւր կ'երթաս։ Յիսուս պատասխան տուաւ ա-
նոր, Ուր ես կ'երթամ, դուն հիմա չես կրնար
իմ ետևէս գալ, բայց յետոյ պիտի գաս իմ ե-
37 տևէս։ Պետրոս ըսաւ անոր, Տէր, ինչո՞ւ հիմա
չեմ կրնար քու ետևէդ գալ. ես իմ կեանքս
38 էլ ձեզի համար պիտի դնեմ։ Յիսուս պատաս-
խան տուաւ անոր, Քու կեանքդ պիտի դնես
ինծի համար. ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզ,
Հաւը պիտի չկոսկ, մինչև դուն երիցս ուրանաս
զիս։

ԳԼ. ԺԴ

1 Ձեր սիրտերը չխռովին. Աստուծոյ հաւատացէք,
2 և ինձ հաւատացէք։ Իմ հօրս տուները շատ բնա-
կարաններ կան. ապա թէ ոչ պիտի ըսէի ձեզ,
Չէ՞մ կ'երթամ և տեղ կը պատրաստեմ ձեզ,
3 Եւ եթէ երթամ և տեղ կը պատրաստեմ ձեզ,
դարձեալ կու գամ և քովս կ'առնեմ զձեզ,
4 որպէս զի ուր ես եմ դուք ևս հո՛ն ըլլաք։ Եւ
ուր ես կ'երթամ գիտէք, և ճամբան ևս գիտէք։

5 Թովմաս ըսաւ անոր, Տէր, չենք գիտեր ուր
կ'երթաս, և ինչպէս կրնանք ճանչնալ գիտնալ։
6 Յիսուս ըսաւ անոր, Ես եմ ճանապարհ և ճըշ-
մարտութիւն և կեանք. ոչ ոք կու գայ առ
7 Հայր, եթէ ոչ ինձմով։ եթէ զիս ճանչնայիք, իմ
Հայրս ալ կը ճանչնայիք, և այսուհետև կը ճանչ-
նաք զնա և տեսաք զնա։
8 Փիլիպպոս ըսաւ անոր, Տէր, Հայրը ցուցուր
9 մեզ, և հերիք է մեզ։ Ըսաւ անոր Յիսուս, Այս-
քան ժամանակ ձեզի հետ եմ, և չճանչցար
զիս, Փիլիպպոս, ով որ զիս տեսաւ՝ տեսաւ
Հայրը, և դուն ինչպէս կ'ըսես թէ ցուցուր
10 մեզ Հայրը։ Չե՞ս հաւատար թէ ես ի Հայր եմ և
Հայրը յիս է։ այն խօսքերը զոր ես կը խօսիմ
ձեզ, ոչ թէ յանձնէ կը խօսիմ, այլ Հայրը որ
յիս բնակած է՝ նա կը գործէ այն գործերը։
11 Հաւատացէք ինձ թէ ես ի Հայր եմ և Հայր յիս
12 է. Ապա թէ ոչ գոնէ գործերուն համար հաւա-
տացէք ինձ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ թէ
Ով որ կը հաւատայ յիս, այն գործերը զոր ես
կը գործեմ ինք ալ պիտի գործէ, և զանոնա
աւելի մեծամեծները պիտի գործէ, քանզի ես
13 կ'երթամ առ Հայր։ Եւ իմ անուամբս ինչ որ
խնդրէք, պիտի կատարեմ զայն, որ Հայրը փա-
14 ռաւորուի Որդւով։ եթէ իմ անուամբս բան մը
խնդրէք, պիտի կատարեմ զայն։ եթէ զիս կը
15 սիրէք, պահեցէք իմ պատուիրանները։ Եւ ես
պիտի աղաչեմ Հայր, և ուրիշ Մխիթարիչ պիտի
17 տայ ձեզ, որ յաւիտեան բնակի ձեզի հետ, ճըշ-
մարտութեան Հոգին, զոր աշխարհս չկրնար ըն-
դունել, քանզի չտեսներ զնա և չճանչնար զնա։
բայց դուք կը ճանչնաք զնա, քանզի ձեր քով
18 կը բնակի և ձեր մէջ պիտի ըլլայ։ Չեմ թողուր
19 զձեզ որբ, կու գամ առ ձեզ։ փոքր մի ժամա-
նակ ևս և աշխարհ չտեսներ զիս, բայց դուք

պիտի տեսնէք զիս, քանզի ես կենդանի եմ, և
20 դուք կենդանի պիտի ըլլաք։ Այն օրը պիտի
գիտնաք թէ ես ի Հայր եմ, և դուք յիս, և ես
21 ի ձեզ։ Ով որ իմ պատուէրներս կը բռնէ և կը
պահէ զանոնք, նա է որ կը սիրէ զիս։ և ով որ
զիս կը սիրէ՝ պիտի սիրուի Հօրմէս, և ես պիտի
սիրեմ զնա, և պիտի յայտնեմ զիս անոր։
22 Ըսաւ անոր Յուդա, ոչ Իսկարիովտացին, Տէր,
ինչպէս կ'ըլլայ որ դուն զքեզ պիտի յայտնես
23 մեզ և ոչ աշխարհին։ Յիսուս պատասխան տուաւ
և ըսաւ անոր, եթէ ոք զիս կը սիրէ՝ իմ խօսքս
պիտի պահէ. և Հայրս պիտի սիրէ զնա, և անոր
պիտի գանք և անոր քով օթևան պիտի բնենք։
24 Ով որ զիս չսիրեր, իմ խօսքերս չպահեր. և այն
խօսքը զոր կը լսէք՝ իմս չէ, այլ Հօրը որ զիս
25 ղրկեց։ Այս բաները խօսեցայ ձեզ, մինչ առ ձեզ
26 եմ։ Բայց Մխիթարիչը, Հոգին Սուրբ, զոր Հայր
պիտի ղրկէ յանուն իմ, նա պիտի սորվեցունէ
ձեզ զամենայն, և ինչ որ ըսի ձեզ՝ պիտի յիշե-
27 ցունէ ձեզ։ Խաղաղութիւն կը թողում ձեզ, իմ
խաղաղութիւնս կու տամ ձեզ։ ոչ ինչպէս աշ-
խարհս կու տայ, կու տամ ես ձեզ։ Ձեր սիրտերը
28 չխռովին և չվախնան։ Լսեցիք որ ըսի ձեզ թէ
կ'երթամ և կու գամ առ ձեզ։ եթէ զիս սիրէիք,
պիտի ուրախանայիք, *թէ ես առ Հայր կ'երթամ,
29 քանզի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմէն
դուս չեղած ըսի ձեզ, որ երբ ըլլայ, հաւատաք։
30 Այլ ևս ձեզի հետ շատ պիտի չխօսիմ, քանզի
այս աշխարհիս իշխանը կու գայ, և իմ վրաս
31 բան մը չունի. Միայն թէ աշխարհս գիտնայ թէ
ես կը սիրեմ Հայր, և ինչպէս որ Հայրը պատուի-
րեց ինձ, այնպէս կ'ընեմ։ Ելէք երթանք ասկէ։

*Ո՛ւրախ, որ ըսի թէ

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս մշակն է։
2 Ամէն ճիւղ որ իմ վրաս ի և պտուղ չբերէր՝ կը
կարէ զայն. և ամէնը որ պտուղ կը բերէ՝ կը մաք-
3 րէ զայն, որ և աւելի պտուղ բերէ։ Դուք ար-
դէն իսկ մաքուր էք այն խօսքով զոր խօսած եմ
4 ձեզ։ Կեցէք յիս, և ես՝ ի ձեզ. ինչպէս որ ճիւղը
չկրնար ինքնին պտուղ բերել, եթէ հաստատուած
չէ որթին վրայ, նոյնպէս և դուք չ՚+ կրնաք, եթէ
5 հաստատուած չէք իմ վրաս։ Ես եմ որթն է դուք
ճիւղերն էք. այն որ իմ վրաս հաստատուած է և
ես անոր վրայ՝ շատ պտուղ կը բերէ, քանզի ա-
6 ռանց իմ բան մը չէք կրնար ընել. եթէ ոք իմ
վրաս հաստատուած չէ, նա ճիւղի մը պէս դուրս
նետուած և չորցած է. և կը ժողովեն զանոնք
7 և կը նետեն ի հուր, և կ՚այրին։ Եթէ դուք յիս
կենաք և իմ խօսքերս ես կենան ի ձեզ, ինչ որ
8 ուզէք՝ պիտի խնդրէք, և պիտի ըլլայ ձեզ։ Ասով
իմ Հայրս փառաւորուեցաւ, որ դուք շատ պտուղ
բերէք, և իմ աշակերտներս ըլլաք։
9 Ինչպէս որ Հայրը սիրեց զիս, և ես զձեզ սի-
10 րեցի. կեցէք ի սէր իմ։ Եթէ իմ պատուէրներս
պահէք, պիտի կենաք ի սէր իմ, ինչպէս որ ես
իմ Հօրս պատուէրները պահեցի, և կեցած եմ
11 ի սէր նորա։ Այս բաները խօսեցայ ձեզ որ իմ
ուրախութիւնս մնայ ի ձեզ, և ձեր ուրախու-
12 թիւնը լցուել ըլլայ։ Այս է իմ պատուէրս որ զի-
13 րար սիրէք, ինչպէս որ ես զձեզ սիրեցի։ Գան
զայս աւելի մեծ սէր ոչ ոք կընայ ունենալ, որ
մարդ իւր կեանքը դնէ բարեկամներուն համար։
14 Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընէք ինչ որ
15 կը պատուիրեմ ձեզ։ Ա՚յսուհետև ծառայ չեմ
անուաներ զձեզ, քանզի ծառան չգիտեր ինչ
կ՚ընէ իւր տէրը. այլ ես բարեկամ անուանեցի

զձեզ, քանզի այն ամէնը զոր իմ Հօրմէս լսեցի՝
16 ծանուցի ձեզ։ Ոչ թէ դուք զիս ընտրեցիք,
այլ ես ընտրեցի զձեզ, և դրի զձեզ որ դուք
երթաք և պտուղ բերէք, և ձեր պտուղը մնայ.
որպէս զի իմ անուամբս ինչ որ խնդրէք Հօր-
17 մէն, տայ ձեզ։ Զայս կը պատուիրեմ ձեզ որ զի-
րար սիրէք։
18 Եթէ աշխարհ կ՚ատէ զձեզ, գիտեցէք որ նախ
19 քան զձեզ զիս ատեց։ Եթէ աշխարհէն ըլլայիք,
աշխարհ կը սիրէր իրեններըը. բայց որովհետև չէք
աշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ աշխարհէ, վասն
20 որոյ աշխարհ կ՚ատէ զձեզ։ Յիշեցէք այն խօսքը
զոր ըսի ձեզ Թէ ծառան մեծ չէ քան զերը իւր։
Եթէ զիս հալածեցին, զձեզ ևս պիտի հալածեն.
Եթէ իմ խօսքս պահեցին, պիտի պահեն նաև
21 ձերը։ Բայց այս ամէնը պիտի ընեն ձեզ իմ ան-
ուանս համար, քանզի չճանչցան զայն որ զրկեց
22 զիս։ Եթէ ես եկած և անոնց խօսած չըլլայի,
անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա պատ-
23 ճառանք չունին իրենց մեղաց համար։ Ով որ
24 զիս կ՚ատէ, կ՚ատէ նաև իմ Հայրս։ Եթէ անոնց
մէջ ըրած չըլլայի այն գործերը զոր այլ ոք ը-
րած չէ, անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա
տեսան, և ատեցին Թէ՛ զիս և Թէ՛ իմ Հայրս։
25 Սակայն այս եղաւ՝ որ կատարուի այն խօսքը որ
անոնց օրինաց մէջ գրուած է Թէ ի զուր ատեցին
26 զիս։ Բայց երբ Մխիթարիչը գայ զոր ես Հօրմէն
պիտի զրկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին որ
Հօրմէն կ՚ելլէ, նա պիտի վկայէ ինծի համար։
27 Եւ դուք ևս կը վկայէք, քանզի ի սկզբանէ իմ
հետս էք։

ԳԼ. ԺԶ

1 Ա՚յս բաները խօսեցայ ձեզ որ չգայթակղիք։

2 իրենց ժողովրդանոցներէն դուրս պիտի հանեն
զձեզ. և ժամանակ ևս պիտի գայ որ ամէնը որ
զձեզ սպաննէ, այնպէս պիտի համարի Թէ Ա-
3 ստուծոյ պաշտօն կը մատուցանէ։ Եւ այս բաները
պիտի ընեն Հետ, վասն զի ոչ Հայրը ճանչցան և
4 ոչ զիս։ Բայց այս բաները խօսեցայ ձեզ որ երբ
ժամանակը գայ, յիշէք Թէ ես ըսի ձեզ. և այս
բաներէն ի սկզբան չըսի ձեզ, քանզի ձեզի հետ էի։
5 Սակայն հիմա ես կ'երթամ առ այն որ զրկեց
զիս, և ձենէ ոչ ոք կը հարցնէ ինձ Ո՞ր
6 կ'երթաս։ Բայց որովհետև այս բաները խօսե-
ցայ ձեզ, ձեր սիրտերը տրտմութեամբ լցան։
7 Սակայն ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզ, Լաւ է ձեզ
Եթէ ես երթամ. քանզի Եթէ ես չերթամ,
Մխիթարիչը չգար ձեզ. ապա Եթէ երթամ, կը
8 զրկեմ զնա ձեզ։ Եւ նա երբ գայ, պիտի յան-
դիմանէ զաշխարհ մեղաց համար և արդարու-
9 թեան համար և դատաստանի համար։ Մեղաց
համար՝ որ չեն հաւատար ինձ։ Արդարութեան
համար՝ որ ես իմ Հօրս գով կ'երթամ, և այլ
11 ևս չէք տեսներ զիս։ Եւ դատաստանի համար՝
որ այս աշխարհիս իշխանը դատապարտուած է։
12 Տակաւին շատ բաներ ունիմ ըսել ձեզ, այլ հիմա
13 չէք կրնար տանիլ։ Բայց երբ նա գայ, ճշմար-
տութեան Հոգին, ամէն ճշմարտութեան պիտի
առաջնորդէ զձեզ, քանզի ոչ Թէ յանձնէ պիտի
խօսի, այլ ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի, և գա-
14 լոցը պիտի պատմէ ձեզ։ Նա զիս պիտի փա-
ռաւորէ, քանզի իմինէս պիտի առնու և պատմէ
15 ձեզ։ Ամէն ինչը զոր ունի Հայր՝ իմ է։ վասն
այնորիկ ըսի ձեզ Թէ իմինէս պիտի առնու և
16 պատմէ ձեզ։ փոքր ինչ ժամանակ ևս, և այլ
պիտի չտեսնէք զիս, և դարձեալ փոքր ինչ ժա-
մանակ, և պիտի տեսնէք զիս, քանզի ես առ
Հայր կ'երթամ։

17 Ա՛յս պատճառաւ աշակերտներէն ոմանք իրարու
կ'ըսէին, Ի՞նչ է այս զոր կ'ըսէ մեզ, Թէ փոքր
ինչ ժամանակ ևս, և պիտի չտեսնէք զիս, և
դարձեալ փոքր ինչ ժամանակ և պիտի տեսնէք
18 զիս. և, Քանզի ես առ Հայր կ'երթամ։ Եւ կ'ը-
սէին, Ի՞նչ պիտի ըլլայ այն փոքր ժամանակը որ
19 կ'ըսէ. չենք գիտեր ինչ կ'ըսէ։ Իսկ Յիսուս գիտ-
նալով Թէ կ'ուզէին հարցնել անոր, ըսաւ անոնց,
Ասոր համար իրարու կը հարցնէք, որ ըսի Թէ
փոքր ինչ ժամանակ ևս, և պիտի չտեսնէք զիս,
և դարձեալ փոքր ինչ ժամանակ, և պիտի տես-
20 նէք զիս։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, դուք
պիտի լա՛ք և ողբաք, բայց աշխարհս պիտի ու-
րախանայ. դուք պիտի տրտմիք, սակայն ձեր
տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան։
21 Կին մը երբ պիտի ծնանի, տրտմութիւն կ'ունե-
նայ, քանզի հասած է իւր ժամը. բայց երբ տղան
ծնանի, այլ ևս չյիշեր նեղութիւնը ուրախութե-
22 նէն որ մարդ ծնաւ յաշխարհ։ Եւ արդարև դուք
հիմա տրտմութիւն ունիք. բայց ես դարձեալ
պիտի տեսնեմ զձեզ, և ձեր սիրտերն ուրախ
պիտի ըլլան, և ոչ ոք պիտի հանէ ձենէ ձեր ու-
23 րախութիւնը։ Եւ այն օր բան մը պիտի չհարցնէք
ինձ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Թէ իմ
անուամբս ինչ որ խնդրէք Հօրմէն, պիտի տայ
24 ձեզ։ Մինչև ցարդ բան մը չխնդրեցիք իմ ան-
ուամբս. խնդրեցէք և պիտի առնու, որպէս զի
25 ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։ Առակնե-
րով խօսեցայ ձեզ ասոնք. Բայց ժամանակ պիտի
գայ, որ այլ ևս առակներով պիտի չխօսիմ ձեզ,
այլ յայտնապէս Հօրը վրայ պիտի պատմեմ ձեզ։
26 Այն օր իմ անուամբս պիտի խնդրէք. և չեմ
ըսեր ձեզ Թէ ես ձեզի համար պիտի աղաչեմ
27 զՀայր. Քանզի ինքն իսկ Հայր կը սիրէ զձեզ,
վասն զի դուք զիս սիրեցիք և հաւատացիք Թէ

28 Եւ Աստուածմէ ելայ՝ ելլայ ի Հօրէ և եկայ յաշխարհ. դարձեալ կը թողում զաշխարհ և կերթամ առ Հայր։
29 Աշակերտներն ըսին անոր, Ահա հիմա յայտնապէս կը խօսիս, և առակ ամենևին չես ըսեր։
30 Հիմա իմացանք որ ամէն բան գիտես, և պէտք չէ որ հարցնէ քեզ ոք. այսու կը հաւատանք որ
31 Աստուածմէ ելար։ Յիսուս պատասխան տուաւ
32 անոնց Ե՞ս, հիմա կը հաւատա՞ք։ Ահա ժամանակ պիտի գայ, և եկած իսկ է, որ ցիրուցան պիտի ըլլաք իւրաքանչիւր իր տեղը, և պիտի թողուք զիս մինակ. բայց ես չեմ մինակ, քանզի
33 Հայրը իմ հետս է։ Խօսեցայ ձեզ ասոնք որ ինձմով խաղաղութիւն ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէք. ես յաղթեցի աշխարհի։

ԳԼ. ԺԷ

1 Յիսուս երբ խօսեցաւ ասոնք, իւր աչուընները վերցուց յերկինս և բաւ, Հայր, հասած է ժամանակը, փառաւորէ քու Որդիդ, որ քու Որդիդ
2 և ա փառաւորէ զքեզ. ինչպէս որ իշխանութիւն տուիր անոր ամէն մարմնոյ վրայ, որ յաւիտենական կեանք տայ այն ամենուն զոր անոր տուիր։
3 Եւ այս է յաւիտենական կեանք, որ ճանչնան զքեզ մի միայն ճշմարիտ Աստուած, և զՅիսուս
4 Քրիստոս՝ զոր դուն զրկեցիր։ Ես զքեզ փառաւորեցի երկրի վրայ, գործը զոր տուիր ինձ ընել,
5 կատարեցի։ Եւ հիմա, ով Հայր, փառաւորէ զիս առ քեզ այն փառաւք զոր ունէի յառաջ քան
6 զինկնի աշխարհի առ քեզ։ Քու անունդ յայտնի ըրի այն մարդոց՝ զոր տուիր ինձ աշխարհէ. քո էին, և ինձ տուիր զանոնք, և քու խօսքդ պա-
7 հեցին։ Հիմա գիտցան թէ այն ամէն բաները զոր

8 տուիր ինձ՝ քեզնէ են. ինծի այն խօսքերը զոր տուիր ինձ՝ տուի անոնց, և անոնք ընկալան, և ճշմարտութեամբ իմացան որ ես քեզնէ ելայ, և
9 հաւատացին թէ դուն զրկեցիր զիս։ Ես անոնց համար կ'աղաչեմ. ոչ թէ աշխարհի համար կ'աղաչեմ, այլ անոնց համար զոր դուն տուիր ինձ,
10 քանզի քո են անոնք։ Եւ ինչ որ իմս է՝ այն բոլորը քո է, և ինչ որ քո է՝ այն իմս է, և ես
11 փառաւորուած եմ նոքօքր։ Ես ես այլ ևս չեմ յաշխարհի, բայց անոնք յաշխարհի են, և ես կու գամ առ քեզ։ ով Հայր սուրբ, քու անուամբդ պահէ զանոնք զոր դուն տուիր ինձ, որպէս զի
12 մի բլլան, ինչպէս որ մեք մի ենք։ Մինչ յաշխարհի էի անոնց հետ, ես կը պահէի զանոնք քու անուամբդ. զոր դուն տուիր ինձ՝ ես պահեցի, և անոնցմէ ոչ ոք կորաւ, բայց միայն կորսուեան որդին, որպէս զի գրուածը կատարուի։
13 Այլ հիմա կու գամ առ քեզ, և աշխարհի մէջ այս բաները կը խօսիմ, որ իմ ուրախութիւնս
14 իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան։ Ես քու խօսքդ տուի անոնց, և աշխարհսատեց զանոնք. քանզի աշխարհէ չեն, ինչպէս որ ես աշ-
15 խարհէ չեմ։ Չեմ աղաչեր որ վերցնես զանոնք
16 աշխարհէ, այլ որ պահես զանոնք ի չարէն։ Անոնք
17 աշխարհէ չեն, ինչպէս որ ես չեմ աշխարհէ։ Սրբէ զանոնք քու ճշմարտութեամբդ. քու խօսքդ
18 ճշմարտութիւն է։ Ինչպէս որ դուն զրկեցիր զիս յաշխարհ, նոյնպէս և ես զրկեցի զանոնք յաշ-
19 խարհ։ Եւ անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որ անոնք ևս սրբացած բլլան ճշմարտութեամբ։
20 Բայց ոչ թէ անոնց համար միայն կ'աղաչեմ, այլ և անոնց խօսքով բոլոր ինձ հաւատացողներուն
21 համար։ Որ ամէնքը մի բլլան, ինչպէս որ դուն, ով Հայր, յիս և ես ի քեզ, որ և անոնք ի մեզ բլլան մի, որպէս զի աշխարհս հաւատայ թէ դուն

22 ղրկեցիր զիս։ Եւ այն փառքը զոր դուն տուիր
ինձ՝ ես անոնց տուի, որ մի ըլլան, ինչպէս որ
23 մենք մի ենք։ Ես ի նոսա և դու յիս, որ անոնք
կատարեալ ըլլան ի միութեան. և աշխարհս գիտ-
նայ թէ դուն ղրկեցիր զիս, և սիրեցիր զանոնք,
24 ինչպէս սիրեցիր զիս։ Ով Հայր, զորս դուն տուիր
ինձ, կ՚ուզեմ որ ուր ես եմ՝ անոնք ես իմ
հետս ըլլան, որպէս զի տեսնեն փառքս զոր
տուիր ինձ. քանզի դուն սիրեցիր զիս յառաջ
25 քան զհիմնարկն աշխարհի։ Ով արդար Հայր, աշ-
խարհս չճանչցաւ զքեզ, բայց ես ճանչցայ զքեզ,
26 և ասոնք ճանչցան թէ դուն ղրկեցիր զիս։ Եւ
գու անունդ ճանչցուցի անոնց, և պիտի ճանչ-
ցուցնեմ՝ որ այն սէրը որով դուն զիս սիրեցիր՝
անոնց մէջ ըլլայ, և ես անոնց մէջ։

ԳԼ. ԺԸ

1 Ցիսուս ասոնք ըսելէն ետքը իր աշակերտներուն
հետ ելաւ կեդրոն հեղեղատին անդիի կողմն ուր
կար պարտէզ, յոր մտաւ ինքը և աշակերտները։
2 Եւ Ցուդա ևս որ պիտի մատնէր զնա՝ գիտէր այն
տեղը, քանզի Ցիսուս յաճախ անգամ աշակերտ-
3 ներուն հետ հոն ժողված էր։ Ուստի Ցուդա
վէշապետներուն գունդը և քահանայապետներէն
և փարիսեցիներէն սպասաւորները առնելով իրեն
հետ, եկաւ հոն ջահերով և լապտերներով և զի-
4 նուք։ Իսկ Ցիսուս գիտնալով իրեն վրայ գալու
բոլոր բաները՝ ելաւ և ըսաւ անոնց, Զո՞վ կը
5 խնդրէք։ Պատասխան տուին անոր, ԶՑիսուս
Նազովրեցի։ Ըսաւ անոնց Ցիսուս, Ես եմ։ Եւ
Ցուդա՝ որ կը մատնէր զնա՝ անոնց հետ կեցած
6 էր։ Եւ երբ ըսաւ թէ ես եմ, ետ ետ գնացին
7 և գետին ինկան։ Եւ նորէն հարցուց անոնց,
Զո՞վ կը խնդրէք։ Եւ անոնք ըսին, ԶՑիսուս Նա-

8 զովրեցիր։ Ցիսուս պատասխան տուաւ, Ըսի ձեզ
թէ ես եմ. ուստի եթէ զիս կը խնդրէք, Թոյլ
9 տուէքատոնց երթալ։ Որպէս զի կատարուի այն
խօսքը զոր ինքը ըսած էր թէ ես ոչ զմին կորու-
10 սի անոնցմէ զորս տուիր ինձ։ Աննատեն Սիմոն
Պետրոս որ սուր ունէր՝ հանեց զայն և քահա-
նայապետին ծառային զարնելով կտրեց հանեց
անոր աջ ականջը։ Եւ ծառային անունն էր Մաղ-
11 քոս։ Իսկ Ցիսուս ըսաւ Պետրոսի, Սուրդ պատ-
հանը դիր. բաժակը զոր Հայրը տուաւ ինձ՝ պիտի
չխմե՞մ զայն։
12 Ուստի վէշապետներուն գունդը և հազարապետը
և հրէից սպասաւորները բռնեցին զՑիսուս և կա-
13 պեցին, Եւ նախ տարին զնա առ Աննա, քանզի
նա էր աներ այն տարուան քահանայապետին կա-
14 յիափայիս։ Եւ այս այն Կայիափա էր որ հրէից
խրատ տուաւ թէ լաւ է որ մարդ մը կորսուի
15 ժողովրդեան համար։ Եւ Ցիսուսի հետևէն կերթ-
թային Սիմոն Պետրոս և ուրիշ աշակերտ մը։ Եւ
այն աշակերտը ծանօթ ըլլալով քահանայապե-
տին՝ մտաւ Ցիսուսի հետ քահանայապետին գա-
16 րիթը։ Բայց Պետրոս կը կենար դուրսը դրան
քով. ուստի ելաւ միւս աշակերտը որ քահանա-
յապետին ծանօթն էր, և ըսաւ դռնապանին, և
17 ներս մղուց զՊետրոս։ Աննատեն դռնապան աղ-
ջիկն ըսաւ Պետրոսի, Միթէ դո՞ւ ևս այն մար-
18 դուն աշակերտներէն ես։ Եւ նա ըսաւ, Չեմ։ Իսկ
ծառաները և սպասաւորները հոն կեցած էին, և
կրակ վառած կը տաքնային, քանզի ցուրտ էր։
Եւ Պետրոս անոնց հետ կեցած էր և կը տաքնար։
19 Եւ քահանայապետը հարցուց Ցիսուսի անոր ա-
20 շակերտներուն և վարդապետութեան վրայ։ Ցի-
սուս պատասխան տուաւ անոր, Ես յայտնի խո-
սեցայ յաշխարհի. ես սորվեցուցի միշտ ժողովր-
դանոցներուն և տաճարին մէջ ուր բոլոր հրէայք

21 կը ժողովին, և ծածուկ բան մը չխօսեցայ։ Ընդ-
դ՚ը կը հարցնես ինձ. լսողներուն հարցուր թէ
ինչ խօսեցայ անոնց. ահա ինչ որ խօսեցայ գի-
22 տեն անոնք։ Երբ բաւ զայս, սպասաւորներէն
մին որ հոն կեցած էր՝ սպասկ մը տուաւ Յի-
սուսի ըսելով, Այդպէ՚ս պատասխան կու տաս
23 քահանայապետին։ Յիսուս պատասխանեց անոր,
Եթէ չար խօսեցայ, վկայէ չարին համար. իսկ ե-
24 թէ բարի, ինչո՚ւ կը զարնես ինձ։ Ու Աննաս
ղրկեց զնա կապեալ առ Կայիափա քահանայա-
25 պետ։ Սիմոն Պետրոս ևս հոն կեցած էր և կը
տաքնար, և ըսին անոր, Մի՞թէ դո՚ւ ևս անոր
աշակերտներէն ես։ Նա ուրացաւ և ըսաւ Թէ
26 Չեմ։ Ու քահանայապետին ծառաներէն մին, այն
հարազատ ազգականը որոյ ականջը Պետրոս կըտ-
րած էր, ըսաւ, Ո՞չ զապաքէն տեսայ զքեզ պար-
27 տիզին մէջ անոր հետ։ Անտեղ Պետրոս դար-
ձեալ ուրացաւ, և իսկոյն հաւ խօսեցաւ։
28 Ու զՅիսուս տարին կայիափայի գոռնէն ի դա-
խլին պալատը, և որդեն առաւօտ էր. և իրենք
պալատը չմտան որ չպղծուէին, այլ որ ուտէին
29 զատիկը։ Ուստի Պիղատոս դուրս ելաւ անոնց և
ըսաւ, Ի՞նչ ամբաստանութիւն կը մատուցանէք
30 այս մարդուն դէմ։ Պատասխան տուին և ըսին
անոր, Եթէ չարագործ չէը դա, չէինք մատներ
31 զնա քեզ։ Անատեն Պիղատոս ըսաւ անոնց, Դուք
առէք զնա, և ըստ ձեր օրինաց դատեցէք զնա։
Հրեայք ըսին անոր, Մեզ չէ օրէն սպանանել
32 զոք։ Որ կատարուի Յիսուսի խօսքը զոր ըսաւ
իմացնելով Թէ ինչ մահուամբ պիտի մեռնէր։
33 Իսկ Պիղատոս մտաւ զարձեալ պալատը, կոչեց
զՅիսուս և ըսաւ անոր, Դո՞ւ ես Հրէից Թագա-
34 ւոր։ Յիսուս պատասխան տուաւ անոր, Դուն
քեզնի՞ կ՚ըսես զայդ, Թէ ուրիշներն ըսին քեզ ին-
35 ձի համար։ Պատասխան տուաւ Պիղատոս, Մի՞թէ

ես Հրեաց եմ. քու ազգդ և քահանայապետները
36 մատնեցին զքեզ ինձ. ի՞նչ ըրած ես դուն։ Յի-
սուս պատասխան տուաւ, Իմ Թագաւորութիւնս
այս աշխարհէս չէ. եթէ այս աշխարհս ըլլար իմ
Թագաւորութիւնս, սպասաւորներս կը կռուէին
որ ես Հրեից ձեռքը չմատնուէի, բայց հիմա իմ
37 Թագաւորութիւնս չէ ասոր։ Անատեն Պիղատոս
ըսաւ անոր, Ուրեմն դուն Թագաւո՞ր ես։ Պա-
տասխան տուաւ Յիսուս, Դուն կ՚ըսես, քանզի
Թագաւոր եմ. ես յայն ատկ ծնած եմ, և յայն
ատկ աշխարհ եկած, որ վկայեմ ճշմարտու-
Թեան. այն ամէնը որ ճշմարտութենէ է՝ կը լսէ
38 իմ ձայնիս։ Պիղատոս ըսաւ անոր, Ի՞նչ է ճըշ-
մարտութիւն։ Ու զայս ըսելով զարձեալ դուրս
ելաւ Հրեաներուն և ըսաւ անոնց, Ես յանցանք
39 չեմ գտներ անոր վրայ։ Բայց սովորութիւն ու-
նիք որ արձակեմ ձեզ զոք զատկին. հիմա կ՚ու-
40 զէ՞ք որ Հրէից Թագաւորն արձակեմ ձեզ։ Անա-
տեն ամէնքը դարձեալ ազազակեցին ըսելով,
Մի՛ զդա, այլ զԲարաբբաս։ Ու Բարաբբա աւա-
զակ էր։

Գլ. ԺԹ

1 Անատեն Պիղատոս առաւ զՅիսուս և ծեծեց։
2 Ու զինուորները փունջէ մը փուշ հիւսելով դրին
անոր գլխուն, և հագուցին անոր կարմիր ծի-
3 րանի։ Ու կ՚ըսէին, Ողջ լեր, Թագաւոր Հրէից։
4 և ապտակ կը հանէին անոր։ Պիղատոս դարձեալ
ելաւ դուրս և ըսաւ անոնց, Ահա դուրս կը բե-
րեմ զնա ձեզ, որ գիտնաք Թէ ես յանցանք
5 չեմ գտներ անոր վրայ։ Անատեն Յիսուս դուրս
ելաւ փշեղէն պսակը և ծիրանի հանդերձն հա-
գած և Պիղատոս ըսաւ անոնց, Ահա այն մարդը։
6 Քահանայապետները և սպասաւորները երբ աե-

սան գնա, ազատակեցին և ըսին, Խաչ հանէ, խաչ հանէ [զգա]։ Պիղատոս ըսաւ անոնց, Դուք առէք զդա և հանեցէք ի խաչ, քանզի ես յան-
7 ցանգ չեմ գտաներ առնր վրայ։ Հրեաներըր պա-
տասխան տուին անոր, Մենք օրէնք ունինք, և
8 ըստ մեր օրինացդ պարտի մեռանել, քանզի զինք
9 Աստուծոյ Որդի ըրաւ։ Երբ Պիղատոս լսեց այս
խօսքը, և աւելի վախցաւ, եւ դարձեալ մտնե-
լով պալատը՝ ըսաւ Յիսուսի, Ուսա՞ր ես դուն
10 Բայց Յիսուս պատասխան չտուաւ անոր։ Ուստի
Պիղատոս ըսաւ անոր, Ինձի հետ չե՞ս խօսիր։
չե՞ս գիտեր որ իշխանութիւն ունիմ ի խաչ հա-
նել զքեզ, և իշխանութիւն ունիմ արձակել
11 զքեզ։ Յիսուս պատասխան տուաւ, Դուն իմ
վրաս բնաւ իշխանութիւն չէիր ունենար, եթէ
տրուած չըլլար քեզ ի վերուստ. վասն որոյ նա
որ զիս մատնեց քեզ, անոր մեզքն աւելի մեծ է։
12 Եւ այնուհետեւ Պիղատոս կը խնդրէր թէ ինչպէս
արձակէր զնա. բայց Հրեայք կ'աղաղակէին և
կ'ըսէին, Եթէ արձակես զդա, չես բարեկամ
կայսեր. ով որ թագաւոր կ'անուանէ զինք, հա-
13 կառակ կը խօսի կայսեր։ Իսկ Պիղատոս երբ լսեց
այս խօսքը, դուրս հանեց զՅիսուս, և նստաս-
տեցին վրայ այն տեղը որ գաբպաթաեայ կ'ըսուէր,
14 և Երբայեցերէն՝ Կապպաթաւ Չաւակին ուրբաթն
էր և ժամն էր իրեք վեցերորդ։ և ըսաւ Հրեից,
15 Ահա ձեր Թագաւորը։ Բայց անոնք աղաղակեցին,
վերցուր, վերցուր, խաչ հանէ զդա։ Պիղատոս
ըսաւ անոնց, Ձեր Թագաւորը խաչ հանեմ։ Քա-
հանայապետները պատասխան տուին, Մենք Թա-
16 գաւոր չունինք բաց ի կայսերէ։ Անտոն տուաւ
զնա անոնց ձեռքը որ խաչուէր։
17 Եւ անոնք առին զՅիսուս և կը տանէին. և
նա վերցուցնելով իւր խաչը ելաւ Գագաթ ըսուած
տեղը, որ Երբայեցերէն կը կոչուի Գողգոթա,

18 Հոն խաչը հանեցին զնա, և անոր հետ ուրիշ
երկուք ևս, զմին աստի, և զմիւսն անտի, և
19 ի մէջի զՅիսուս։ Տախտակ մի ևս գրեց Պիղատոս,
և դրաւ խաչին վրայ, և գրուած էր, Յիսուս
20 Նազովրեցի, Թագաւոր Հրէից։ Եւ Հրեաներէն
շատերը կարդացին այն տախտակը, վասն զի
քաղաքին մօտ էր տեղն ուր Յիսուս խաչուեցաւ.
և գրուած էր Երբայեցերէն, Յունարէն և Լատին։
21 Ներէն։ Անտոն Հրէից քահանայապետներն ըսին
Պիղատոսի, Մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ Թէ
22 Ինք ըսաւ, Թագաւոր եմ Հրէից։ Պիղատոս պա-
տասխան տուաւ, Ինչ որ գրեցի՝ գրեցի։
23 Եւ զինուորները երբ խաչը հանեցին զՅիսուս,
առին անոր հանդերձները և չորս բաժին ըրին,
իւրաքանչիւր զինուորի մաս մի։ Նաև պատմու-
ճանը. իսկ պատմուճանն առանց կարանի էր վե-
24 րուստ ի վայր ամբողջ հիւսուած։ Ուստի ըսին
իրարու, Չպատառենք զայդ, այլ ընկենունք վիճակ
առաջ վրայ Թէ որու պիտի ըլլայ. որպէս զի կա-
տարուի գրուածը որ կ'ըսէ, Հանդերձներս բաժ-
նեցին իրենց մէջ, և պատմուճանիս վրայ արկին
վիճակ։ Ահա այս բաներն իրին զինուորները։
25 Եւ Յիսուսի խաչին քով կեցած էին անոր մայ-
րը և մօրը քոյրը Մարիամ Կղեովպայ և Մա-
26 րիամ Մագդաղենացի։ Ուստի Յիսուս երբ տե-
սաւ իւր մայրը, և աշակերտը զոր կը սիրէր՝ որ
մօտ կեցած էր, ըսաւ իւր մօրը, Կին դուռ, ահա
27 որդի քու։ Յետոյ ըսաւ աշակերտին, Ահա մայր
քու։ Եւ այն ժամանակէն աշակերտն առաւ զնա
իրեն քով։
28 Այնուհետեւ Յիսուս գիտնալով Թէ արդէն ա-
մէնայն ինչ կատարեալ էր, որպէս զի գրուածը
29 կատարուի, ըսաւ, Ծարաւի եմ։ Եւ հոն քացախով
լի սաման կար. և անոնք քացախով սպունգ մի
լեցուցնելով, զոպայի ճիւղի կապելով մատուցին

30 անոր բերնին։ Ուստի Յիսուս երբ քացախն առաւ ըսաւ, Ա՛ւարտ է։ Եւ գլուխը ծռելով աւանդեց հոգին։

31 Իսկ Հրեայք, որովհետեւ ուրբաթ էր, զի մի՛ գուցէ մարմինները խաչին վրայ մնային մինչեւ շաբաթ, քանզի այն շաբաթը մեծ օր էր, աղաչեցին Պիղատոսի խորտակել անոնց սրունքը, եւ

32 վերցնել։ Ուստի զինուորները եկան, եւ առաջինին սրունքը խորտակեցին, նաեւ միւսինը՝

33 որ անոր հետ խաչ ելած էր։ Բայց երբ եկան Յիսուսի եւ տեսան որ արդէն մեռած էր, անոր

34 սրունքը չխորտակեցին։ Այլ զինուորներէն մին գեղարդով խոցեց անոր կողը, եւ վազվզուկի

35 ելաւ արիւն եւ ջուր։ Եւ ան որ տեսաւ՝ վկայեց, եւ անոր վկայութիւնը ճշմարիտ է, եւ ինք գիտէ թէ ճշմարիտ կ'ըսէ, որ եւ դուք հաւատաք։

36 Քանզի այս բաները եղան որ կատարուի գրուա-

37 ծը թէ Անոր ոսկրը ջիւղ չրեհանիր։ Եւ դարձեալ ուրիշ գրուած մը կ'ըսէ թէ Պիտի նայեն անոր

38 որ խոցեցին։ Ասկէ ետեւ Յովսէփ Արիմաթիացի, որ Յիսուսի աշակերտ էր, բայց ի ծածուկ առ աւելի Հրէից, խնդրեց Պիղատոսէ հրաման վերցնելու Յիսուսի մարմինը։ Եւ Պիղատոս հրաման տուաւ։ Ուստի

39 եկաւ եւ վերցուց Յիսուսի մարմինը։ Եկաւ նաեւ Նիկոդեմոս որ յառաջագոյն գիշերայն եկած էր առ Յիսուս, եւ բերաւ զմուռս եւ հալուէի խառ-

40 նուրդ երր հարիւր լիտր։ Եւ առին Յիսուսի մարմինը եւ պատեցին զնա խնկօք կտաւներու

41 մէջ, ինչպէս Հրեայք սովոր են թաղել։ Եւ այն տեղ ուր խաչուեցաւ՝ կար պարտէզ, եւ պարտիզին մէջ նոր գերեզման, ուր բնաւ մարդ դրր-

42 ուած չէր։ Հրէից ուրբաթին համար հոն դրին զՅիսուս, քանզի մօտ էր գերեզմանը։

ԳԼ. Ի

1 Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդալենացի առաւօտուն յառաջ քան լուսանալը կու գայ գերեզմանը, և կը տեսնէ քարը վերցուած գե-
2 րեզմանէն։ Ցետոյ կը վազէ կու գայ առ Սիմոն Պետրոս և առ միւս աշակերտն զոր կը սիրէր Յիսուս, և կ'ըսէ անոնց, Վերցուցին Տէրը գերեզ-
3 մանէն, և չենք գիտեր ուր դրին զնա։ Ուստի ելաւ Պետրոս և միւս աշակերտը, և կու գային
4 դէպ ի գերեզմանը։ Եւ երկոքին կը վազէին ի միասին. և միւս աշակերտը վազելով քան զՊետրոս
5 արագ, եկաւ նախ գերեզմանը։ Եւ ծռելով նայեցաւ, և տեսաւ որ կտաւները կը կենային,
6 բայց ներս չմտաւ։ Յետոյ եկաւ Սիմոն Պետրոս, որ անոր հետեւէն կու գար, և մտաւ գերեզմանը, և
7 տեսաւ կտաւները որ հոն կը կենային։ Եւ վաշտմակը որ անոր գլուխն էր՝ ոչ թէ կտաւներուն հետ չէր, այլ ուրոյն ծալուած ի մի կողմն։
8 Ապահաւն ներս մտաւ և միւս աշակերտը որ յառաջագոյն եկած էր գերեզմանը, տեսաւ և հա-
9 ւատաց։ Քանզի դեռ չէին գիտեր գրքը, թէ պարտ էր նմա մեռելներէն յառնել։ Ցետոյ աշակերտները դնացին դարձեալ առ իրեանս։
11 Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կեցած էր և կու լար։ և երբ կու լար, ծռեցաւ նայել դէպ ի
12 գերեզմանը։ Եւ տեսաւ երկու հրեշտակ ի սպիտակս որ նստած էին, մին ի սնարից, և միւսն
13 յանոտից, ուր եդած էր Յիսուսի մարմինը։ Եւ անոնք ըսին անոր, Ընդհէր կու լաս, կին դուս Բաւս անոնց, Վասն զի վերցուցին Տէրս, և չեմ
14 գիտեր ուր դրին զնա։ Երբ զայս ըսաւ, դարձաւ ի թիկունս և տեսաւ զՅիսուս որ կեցած էր, և
15 չէր գիտեր թէ Յիսուս էր։ Յիսուս ըսաւ անոր, Կին դուս, ընդհէր կու լաս, զո՞վ կը խնդրես։ Նա

կարծելով թէ պարտիզպանն էր, ըսաւ անոր,
Տէր, եթէ դուն վերցուցիր զնա, ըսէ ինձ, ո՞ւր
16 դրիր զնա, որ ես առնում զնա։ Յիսուս ըսաւ
անոր, Մարիամ։ Եւ նա դարձաւ և ըսաւ անոր
[եբրայեցերէն], Ռաբբունի, որ կը նշանակէ վար-
17 դապետ։ Յիսուս ըսաւ անոր, Մի՛ դպչիր ինձ,
քանզի դեռ չեմ ել առ Հայր իմ. այլ գնա
եղբայրներուս և ըսէ անոնց, Ես կ'ելլեմ առ Հայր
իմ և առ Հայր ձեր, և առ Աստուած իմ և Աս-
18 տուած ձեր։ Մարիամ Մագդաղինացի եկաւ և
պատմեց աշակերտներուն թէ տեսաւ Տէրը, և թէ
այս բաներն ըսաւ անոր։
19 Եւ նոյն օրը միաշաբաթի երեկոյին, մինչ առ-
աջին Հրէից փակուած էին դրուռք տեղն ուր
ժողովուել էին աշակերտք, Յիսուս եկաւ և կե-
ցաւ ի մէջն, և ըսաւ անոնց, Խաղաղութիւն ընդ-
20 ձեզ։ Եւ զայս ըսելով ցուցուց անոնց իր ձեռ-
ուըները և կողը։ և աշակերտներն ուրախացան
21 երբ տեսան Տէրը։ Եւ Յիսուս դարձեալ ըսաւ
անոնց, Խաղաղութիւն ընդ ձեզ։ ինչպէս Հայրը
22 զրկեց զիս, և ես կը զրկեմ զձեզ։ Եւ զայս ըսե-
լով փչեց *անոնց վրայ, և ըսաւ անոնց, Առէք
23 Հոգի Սուրբ։ Որոց թողուք զմեղս՝ թողուած ըլ-
լայ անոնց. և որոց բռնէք՝ բռնուած ըլլայ։
24 Բայց երկոտասաններէն մին, Թովմաս, որ
Երկուորեակ կը կոչուէր, չէր անոնց հետ, երբ
25 Յիսուս եկաւ։ Ուստի միւս աշակերտները կ'ը-
սէին անոր Թէ Տեսանք Տէրը։ Եւ նա ըսաւ ա-
նոնց, Եթէ չտեսնեմ անոր ձեռաց վրայ բեւեռ-
ներուն նշանը, և չմխեմ մատս բեւեռներուն
տեղը, և չմխեմ ձեռքս անոր կողը, չեմ հա-
ւատար։
26 Եւ ութ օր ետքը դարձեալ աշակերտները
ներսն էին, և Թովմաս անոնց հետ։ Եկաւ Յի-
սուս, մինչ դուռները գոց էին, և կեցաւ ի մէջն

27 և ըսաւ, Խաղաղութիւն ընդ ձեզ։ Ցետոյ ըսաւ
Թովմայի, Բեր մատդ հոս և տես ձեռուըներս,
և բեր ձեռքդ և մխէ կողս, և մի՛ ըլլար անհա-
28 ւատ, այլ հաւատացեալ։ Եւ Թովմաս պատաս-
խան տուաւ և ըսաւ անոր, Տէր իմ և Աստուած
29 իմ։ Յիսուս ըսաւ անոր, *Որովհետև տեսար զիս,
հաւատացիր. երանի անոնց որ տեսած չեն և կը
հաւատան։
30 Եւ Յիսուս իր աշակերտներուն առջև բուս-
չատ նշաններ որ գրուած չեն այս գրքին մէջ.
31 Բայց ասոնք գրուեցան, որ հաւատաք թէ Յի-
սուս է Քրիստոս, Աստուծոյ Որդին, և որ հա-
ւատալով կեանք ունենաք յանուն նորա։

ԳԼ. ԻԱ

1 Ցետ այսորիկ Յիսուս դարձեալ յայտնեց զինք
իր աշակերտներուն Տիբերիոյ ծովուն եզերքը,
2 և յայտնեց այսպէս։ էին ի միասին Սիմոն Պետ-
րոս և Թովմաս, կոչեցեալն Երկուորեակ, և Նա-
թանայէլ որ էր ի Կանայ Գալիլեացւոց, և Զե-
բեդեայի որդիքը և այլ ևս երկուք աշակերտ-
3 ներէն։ Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, Կ'երթամ
ձուկ որսալ։ Ըսին անոր, Մենք ևս կու գանք
քեզի հետ։ Ելան և իսկոյն մտան նաւը, և այն
4 գիշեր չբռնեցին բան մը։ Եւ երբ առաւօտ եղաւ,
Յիսուս կեցած էր յեզր ծովուն, բայց աշակերտ-
5 ները չէանիցան Թէ Յիսուս էր։ Ետքն ըսաւ ա-
նոնց, Մանկունք, ունի՞ք ուտելու բան
6 մը։ Պատասխան տուին անոր, Ոչ։ Եւ ըսաւ ա-
նոնց, Նաւին այ կողմը նետեցէք ուռկանը և
պիտի գտնէք։ Ուստի նետեցին, և ձկանց բազ-
7 մութենէն այլ ևս չէին կրնար ձգել զայն։ Ան-

*Ոմն, Թովմաս, որովհետև

աեն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր՝ ըսաւ
Պետրոսի, Տէր է այն։ Իսկ Սիմոն Պետրոս երբ
լսեց Թէ Տէր է, վրան առաւ վերարկուն, քան-
8 զի մերկ էր, և նետեց զինք ծովը։ Եւ միւս ա-
շակերտները նաւակով եկան, քանզի ցամաքէն
հեռու չէին, միայն իբր երկու հարիւր կանգուն,
9 և կը ձգէին ուռկանը ձուկերով։ Եւ երբ ցամաք
ելան, տեսան կրակ վառած հոն, և վրան ձուկ
10 դրուած և հաց։ Յիսուս ըսաւ անոնց, Բերէք
11 այդ ձուկերէն զոր հիմա բռնեցիք։ Սիմոն Պետ-
րոս *մաւ. Նաւը, և ցամաք քաշեց ուռկանը,
լի հարիւր յիսուն և երեք մեծամեծ ձկամբ.
և թէպէտ այնչափ բան կար, չպատառուեցաւ
12 ուռկանը։ Յիսուս ըսաւ անոնց, Եկէք ճաշեցէք։
Եւ աշակերտներէն և ոչ մին կը համարձակէր
հարցնել անոր Թէ Դուն ո՞վ ես. գիտէին
13 անկէ Թէ Տէրն էր։ Անանոն Յիսուս եկաւ և ա-
ռաւ հացը և առաւ անոնց, նոյնպէս և ձուկը։
14 Ա՛յս երրորդ անգամ էր որ Յիսուս երեւեցաւ
իւր աշակերտներուն՝ յառնելէն յետքը։

15 Եւ երբ ճաշեցին, Յիսուս ըսաւ Յիսմոն Պետ-
րոս, Սիմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս առաւել
քան զդոսաս նա ըսաւ անոր, Այո, Տէր, դուն
գիտես Թէ կը սիրեմ զքեզ։ Ըսաւ անոր, Արա-
16 ծէս զդառինս իմ։ Դարձեալ երկրորդ անգամ
ըսաւ անոր, Սիմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս։
Ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես Թէ կը սի-
րեմ զքեզ։ Ըսաւ անոր, Արածեա զոչխարս իմ։
17 Ըսաւ անոր երրորդ անգամ, Սիմոն Յովհաննու,
կը սիրե՞ս զիս։ Տրտմեցաւ Պետրոս որ երեք ան-
գամ ըսաւ անոր Թէ կը սիրե՞ս զիս. և ըսաւ ա-
նոր, Տէր, դուն գիտես զամենայն. գիտես Թէ

*Յոան. Հլաւ.

կը սիրեմ զքեզ։ Ըսաւ անոր Յիսուս, Արածեա
18 զոչխարս իմ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզ,
որ մինչ մանկագոյն էիր, անձամբ կը կապէիր
գօտի, և կ'երթայիր ուր և կը կամէիր. բայց երբ
ծերանաս, ձեռնդ պիտի բանես վրան, և
ուրիշը պիտի կապէ քեզ գօտի, և պիտի տանի
19 ուր որ չկամիս։ Զայս ըսաւ՝ ցուցնելով Թէ ինչ
մահով պիտի փառաւորէր զԱստուած. և երբ ը-
20 սաւ զայս, ըսաւ անոր, Եկ իմ հետեւիր։ Եւ
Պետրոս դարձաւ և տեսաւ աշակերտը զոր Յի-
սուս կը սիրէր, որ հետեւէն կ'երթար, որ և ընթ-
րեցաց առեն անոր լանջից վրայ ինկած և ըսած
21 էր, Տէր, ո՞վ է որ պիտի մատնէ զքեզ։ Պետրոս
տեսնելով զնա ըսաւ Յիսուսի, Տէր, իսկ սա ի՞նչ
22 պիտի ըլլայ։ Յիսուս ըսաւ անոր, Եթէ ես կամիմ
որ կենայ դա մինչև ես գամ, զի՞ փոյթ է քեզ։
23 դուն եկ իմ հետեւիր։ Եւ այս խօսքը ելաւ եղ-
բայրներուն մէջ Թէ այն աշակերտը պիտի չմեռ-
նէր. սակայն Յիսուս չըսաւ անոր Թէ Պիտի չմեռ-
նի, այլ՝ եթէ կամիմ որ կենայ դա մինչև ես
գամ, զի՞ փոյթ է քեզ։

24 Ա՛յս է աշակերտը որ կը վկայէ առեն համար,
որ և գրեց առեն. և գիտենք Թէ ճշմարիտ է
25 անոր վկայութիւնը։ Կան նաև ուրիշ շատ բաներ
զորս ըրաւ Յիսուս, որ եթէ գրուած էին մի ըստ
միոջէ, կարծեմ Թէ և ոչ աշխարհս բաւական էր
տանել զգիրքն որ գրուէին. Ամէն։

ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաջին պատմութիւնն ըրի, ով Թէոփիլէ, այն
ամէն բաներուն վրայ զորս Յիսուս սկսաւ ընել
2 և ուսուցանել, Մինչև այն օրը որ ի ձեռն Հոգւոյն
Սրբոյ տուաւ պատուէր առաքելոց զորս ընտրած
3 էր, և համբարձաւ. Որոց ցուցուց զինք կենդանի
յետ չարչարանաց իւրոց շատ ապացոյցներով,
քառասուն օր անոնց երևնալով և խօսելով Աս-
4 տուծոյ թագաւորութեան վրայ։ Եւ մինչ անոնց
հետ կը գտնուէր, կը պատուիրէր անոնց չհե-
ռանալ Երուսաղեմէ, այլ սպասել Հօրը խոստ-
5 մանց զորս լսեցիք, ըսէ, ինչ։ Քանզի արդարև
Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք աստի ոչ
շատ օրեր հետը պիտի մկրտուիք Հոգւով Սրբով։
6 Եւ անոնք մինչ ժողովեալ էին, կը հարցնէին
անոր և կ'ըսէին, Տէր, այս ժամանակին՞ մէջ
պիտի հաստատես դարձեալ Իսրայէլի թագաւո-
7 րութիւնը։ Եւ ըսաւ անոնց, Ձեզ չվերաբերիր
գիտնալ ժամերը և ժամանակները զորս Հայր
8 դրաւ իւր իշխանութեան մէջ. Բայց երբ Հոգին
Սուրբ գայ ձեր վրայ, զօրութիւն պիտի առնուք,
և ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսա-
ղէմ և բոլոր Հրէաստան և ի Սամարիա և մինչև
9 ի ծագս երկրի։ Եւ ասոնք ըսելով, մինչ անոնք

*Կամ՝ հաց կ'ուտէր

կը նայէին, համբարձաւ, և ամպ մը առաւ զնա
10 անոնց աչքերնէն։ Եւ մինչ անոնք ակնացեալ
կը նայէին յերկինս անոր երթալուն, ահա երկու
արք կեցան անոնց քով սպիտակ հանդերձներով,
11 Որ և ըսին, Արք Գալիլեացիք, ընդէր կեցած
կը նայիք յերկինս. այս Յիսուս որ համբարձաւ
ձեզնէ յերկինս՝ պիտի գայ այսպէս ինչպէս տեսաք
12 անոր երթալն յերկինս։ Անոնք դարձան յե-
րուսաղէմ Ձիթենեաց անուանեալ լեռնէն, որ
իբր չաբաթ օրուան ճանապարհ մը է յերու-
13 սաղէմ։ Եւ երբ մտան ՙՊետրէ, ելան վերնա-
տունը, ուր կը բնակէին Պետրոս և Յակոբոս,
Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս,
Բարթողոմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփեան
և Սիմոն Նախանձայոյզ և Յուդա ՙՅակոբեան։
14 Ասոնք ամէնքը միաբանութեամբ կ'ընէին միշտ
աղօթք և աղաչանք կանանց և Յիսուսի մօրը
Մարեմայ հետ, և անոր եղբայրներուն հետ։
15 Եւ այն օրերը ելաւ Պետրոս աշակերտներուն
մէջ, ուր իբր հարիւր քսան հոգւոյ բազմութիւն
16 կար ժողովուալ, և ըսաւ, Արք եղբարք, պարտ
էր կատարել գրոյն զոր Հոգին Սուրբ բաւ յա-
ռաջագոյն Դաւիթի բերնով Յուդայի համար որ
17 գիտուս բռնողներուն առաջնորդ եղաւ. Քանզի
մեզի հետ էր մեր թուոյն մէջ, նաև այս պաշտօ-
18 նէն ունէր բաժին։ Սա ապրուստի վարձով
առաջաւ ագարակ, և գլխիվայր իյնալով ճեղքե-
ցաւ ընդ մէջ, և անոր բոլոր փորոտիքը դուրս
19 թափեցան։ Եւ այս յայտնի եղաւ երուսաղէմ
բնակողներէն ամենուն, մինչև իրենց լեզուա-
յն ագարակին անունը դրուեցաւ Ակեղդամա,
20 այսինքն Արեան ագարակ։ Քանզի Սաղմոսաց

*Այսինքն՝ Յակոբոսի եղբայրն էր ընդհանուր
նրբենաց

գրքին մէջ գրուած է թէ Անոր բնակարանն ա-
ւերակ ըլլայ, և անոր մէջ բնակող չըլլայ, և անոր
21 պաշտօնն առնու ուրիշը։ Ուրեմն պէտք է որ այս
մարդերէն որ մեր հետ եղան այն բոլոր ժամա-
նակը որ Տէր Յիսուս մտաւ և ելաւ մեր մէջ,
22 Յովհաննու մկրտութենէն սկսեալ մինչև այն օրը
որ համբարձաւ մեզմէ, ասոնցմէ մին մեզի հետ
23 վկայ ըլլայ անոր յարութեանը։ Եւ երկու հոգի
կեցուցին, զՅովսէփ որ Բարսաբայ կը կոչուէր որ
24 և Յուստոս անուանեցաւ, և զՄատաթիա. Եւ
աղօթք ընելով ըսին, Դուս, Տէր, սրտագէտ ամե-
նեցուն, այս երկուքէն մին զոր ընտրեցեր՝ յայտնի
25 դէպ, Որ առնու այս պաշտաման և առաքելու-
թեան վիճակը, որմէ ինկաւ Յուդա երթալ իր
26 տեղը։ Եւ անոնց հմայք ընկեցին վիճակ, և վի-
ճակը ելաւ Մատաթիայի, և նա համարուեցաւ
ընդ մեռեալսն առաքեալս։

Գլ. Բ

1 Եւ երբ հասաւ Պենտեկոստէի օրը, ամէնքն էին
2 միաբան ի միասին։ Եւ յանկարծակի ձայն եղաւ
յերկնից իբրև սաստկացուն հողմոյ, և լցուց բո-
3 լոր տունը ուր նստած էին։ Եւ բաժնուած լե-
զուներ երեւեցան անոնց որպես թէ ի հրոյ, և
4 նստաւ իւրաքանչիւրին վրայ։ Եւ ամէնքը լցան
Հոգւով Սրբով, և սկսան ուրիշ լեզուներ խօ-
սել, ինչպես որ Հոգին կու տար անոնց խօսել։
5 Եւ Երուսաղէմի մէջ բնակած Հրեաներ կային,
երկիւղած մարդիկ երկնից տակ գանուած բոլոր
6 ազգերէն։ Եւ երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնն
ի միասին եկաւ և խռովեցաւ, քանզի կը լսէին
որ անոնք կը խօսէին անոնց իւրաքանչիւրին լեզ-
7 ուաւ։ Ամէնքը կը սքանչանային և կը զարմանային
և կ'ըսէին իրարու, Ո՞չ ապաքէն ասոնք ամէնքը

8 որ կը խօսին՝ Գալիլեացի են. Եւ ի՞նչպէս կը լսենք
մենք իւրաքանչիւր մեր լեզուաւ յորում ծնած
9 ենք. Պարթեւք և Մարք և Եղամացիք, և անոնք
որ կը բնակին ի Միջագետս, և Հրէաստան և Կա-
10 պադովկիա, Պոնտոս և Ասիա, Փռիւգիա և Պամ-
փիւլիա, Եգիպտոս և կիւրենէի մօտ Լիբիացւոց
11 կողմերը, նաև Հռովմայեցի պանդուխտներ, Թէ
Հրեայ և թէ նորահաւատ, Կրետացիք և Արա-
բացիք, կը լսենք անոնցմէ որ մեր լեզուներով
12 կը խօսին զմեծագործութիւնս կը աքանչա-
նային ամէնքեան և տարակուսած կ'ըսէին իրա-
13 րու, ի՞նչ պիտի ըլլայ այս։ Եւ ոմանք ծաղր ընե-
լով կ'ըսէին թէ Անոնք նոր գինովցած են։
14 Բայց Պետրոս ելաւ մեռեալներից հետ վերցուց
ձայնը և խօսեցաւ անոնց, Արք Հրէաստանեայք
և դուք ամենեքին որ կը բնակիք Յերուսաղէմ,
այս յայտնի ըլլայ ձեզ, և ունկն դրէք խօսքե-
15 րուս։ Քանզի ասոնք ոչ թէ արբեալ են, ինչպես
դուք կը կարծէք, քանզի ՝ի՝ժ օրուան երրորդ
16 ժամն է. Այլ այս այն է որ ըսուեցաւ
17 բերնով Յոելի մարգարէին
Եւ պիտի ըլլայ որ վերջին օ-
րերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիէս պիտի թա-
փեմ ամէն մարմնոյ վրայ, և որդիք ձեր և
դուստրք ձեր պիտի մարգարէանան, և երիտա-
սարդք ձեր տեսիլներ պիտի տեսանեն, և ծերք
18 ձեր երազներ պիտի տեսնեն. Եւ իմ ծառանե-
րուս վրայ և աղախիններուս վրայ ես այն օրերը
պիտի թափեմ իմ Հոգիէս, և պիտի մարգարէա-
19 նան։ Եւ վերը յերկինս նշաններ պիտի ցուցնեմ,
և վարը յերկրի՝ նշաններ, արիւն և հուր և մա-
20 ճախուղ ծխոյ. Արեգակը պիտի դառնայ ի խա-
ւար, և լուսին՝ յարիւն, դեռ Տէրոջը մեծ և
21 երեւելի օրը չեկած. Եւ պիտի ըլլայ որ ամէնը
22 որ Տէրոջը անունը կոչէ՝ պիտի փրկուի։ Արք Իս-
րայելացիք, լսեցէք այս խօսքերը, զՅիսուս Նա-

զովրեցի Աստուծմէ ձեզի ցուցուած մարդ մը
զօրութեամբ և հրաշիւք և նշաններով զոր
Աստուած ըրաւ անոր ձեռօք ձեր մէջ, ինչպես
23 դուք իսկ գիտէք, Զնա որ Աստուծոյ որոշեալ
խորհրդով և կանխագիտութեամբ մատնուեցաւ,
առիք և *անօրէններու ձեռօք սպաննեցիք
24 փայտի վրայ գամելով. Զոր Աստուած յարոյց
քակելով մահուան ցաւերը, քանզի հնար չէր
25 որ բռնուէր նա անկէ։ Քանզի Դաւիթ կ'ըսէ
վասն նորա, Յաւիտեան ժամ կը տեսնէի Տէրը
իմ առջեւս, քանզի ալ կողմս է, որ չսասանիմ.
26 վասն որոյ ուրախ եղաւ սիրտս, և ցնծաց լե-
27 զուս նաև. մարմինս պիտի հանգչի յուսով։ վասն
զի հոգերեզմանին մէջ պիտի չթողուս իմ անձս,
և քու Սրբոյդ ևս պիտի չտեսնէ ապական։
28 Նուիրեցիր կենաց ճամբաները ճանչցուցիր ինձ.
քու երեսիդ ուրախութեամբ պիտի լնուս զիս։
29 Արք եղբարք, արժան է ձեզ համարձակ ըսել
Դաւիթ նահապետին համար, թէ մեռաւ և թա-
ղեցաւ, և անոր գերեզմանը մեր մէջ է մինչև
30 այս օր։ Արդ որովհետև մարգարէ էր նա և գի-
տեր թէ Աստուած հաստատ երդումի բրաւ ա-
նոր, թէ անոր երիկամանց պտղէն մարմնով կոդ-
մանէ պիտի յարուցանէր գԻրիստոս որ անոր ա-
31 թոռը նստէր, ինք կանխատեսութեամբ խօսե-
ցաւ Քրիստոսի յարութեան համար, թէ անոր
անձը չթողուեցաւ գերեզմանը, և անոր մար-
32 մինը չտեսաւ ապականութիւն։ Աստուած յա-
րոյց զայս Յիսուս, որոյ մեք ամենեքին վկայ
33 եմք։ Ուստի Աստուծոյ աջ ձեռօք բարձրանա-
լով, և Հոգւոյն Սրբոյ խոստումն առնելով ի Հօրէ
սփռեց զայս, զոր դուք հիմա կը տեսնէք և կը
34 լսէք։ Քանզի Դաւիթ չելաւ յերկինս, բայց կ'ըսէ.

*Կամ, անօրէն

Տէրը ըսաւ իմ Տէրոջս, Նստէ իմ աջ կողմս,
35 Մինչև դնեմ քու թշնամիներդ պատուանդան
36 ոտից քոց։ Ուստի բոլոր իսրայելի տունը Թող
գիտնայ ճշմարտապէս, որ Աստուած ըրաւ զնա
և՛ Տէր և՛ Օծեալ, զայն Յիսուս զոր դուք խա-
չեցիք։
37 Եւ լսելով զդիացին էրէնց սրտերուն մէջ, և
ըսին Պետրոսի և միւս առաքելոց, Արք եղբարք,
38 ի՞նչ ընենք։ Եւ Պետրոս ըսաւ անոնց, Ապաշխա-
րեցէք, և ձեռնէ իւրաքանչիւր ոք Թող մկրտուի
յանուն Յիսուսի Քրիստոսի ի Թողութիւն մե-
ղաց, և պիտի ընդունիք Հոգւոյն Սրբոյ պար-
39 գեւը։ Քանզի խոստումը ձեզ է և ձեր որդւոց,
և ամենուն որ հեռու են, զորս միր Տէր Աս-
40 տուածը պիտի կոչէ։ Եւ ուրիշ շատ խօսքերով
վկայութիւն կու տար, և կը յորդորէր ըսելով և
կ'ըսէր, Այս խառնուած ազգէն ազատեցէք ձեզ։
41 Եւ անոնք որ ի սրտի ընկալան անոր խօսքերը՝
մկրտուեցան. և այն օր իրը երեք հազար անձինք
42 աւելցան։ Եւ միշտ գտեր էին առաքելոց վարդա-
պետութեան, և միաբանութեան, և հացը բե-
կանելու և աղօթից։
43 Եւ ամէն մարդու վրայ ահ ինկաւ. և առաքելոց
ձեռօք շատ հրաշներ և նշաններ կը գործուէին։
44 Եւ բոլոր հաւատացեալներն էին ի միասին, և
45 անոնց ամէն բանն հասարակաց էր։ Եւ իրենց
ստացուածը և ինչ որ ունէին կը վաճառէին, և
անոնց չէնը կը բաժնէին ամենուն, որու որ բան
46 մը պէտք ըլլար։ Եւ ամէն օր միաբանութեամբ
կը յամախէին տաճարը, և առանին կը բեկանէին
հացը, և իրենց կերակուրը կ'ուտէին ուրախու-
47 թեամբ և միամտութեամբ սրտի. ԶԱստուած
կ'օրհնէին, և ունէին շնորհս բոլոր ժողովրդեան
առջեւ. և Տէրն օր ըստ օրէ կը յաւելուր փրկուած-
ներն յեկեղեցին։

†Կամ, դժոխոց

Գլ. Գ

1 Աբդ. Պետրոս և Յովհաննէս աղօթից իններորդ
2 ժամուն կ'ելլէին տաճարը։ Եւ կը բերուէր մարդ
մը իր մօրը որովայնէն կաղ, զոր ամէն օր կը
դնէին տաճարին Գեղեցիկ կոչուած դրան քով,
որ տաճարը մտնողներէն ողորմութիւն խնդրէր։
3 Սա տեսնելով զՊետրոս և զՅովհաննէս որ տա-
ճարը պիտի մտնէին, կ'աղաչէր ողորմութիւն ա-
4 նալ։ Իսկ Պետրոս Յովհաննու հանդերձ նայեցաւ
5 անոր և ըսաւ, Նայէ մեզ։ Եւ նա դարձաւ անոնց
6 և կը յուսար բան մը առնուլ անոնցմէ։ Եւ Պետ-
րոս ըսաւ, Արծաթ և ոսկի չունիմ, այլ ինչ որ
ունիմ՝ զայն կու տամ քեզ. յանուն Յիսուսի
7 Քրիստոսի Նազովրեցւոյ ելի և քալէ։ Եւ անոր
աջ ձեռքէն բռնելով վերցուց զայն, և իսկոյն անոր
8 ոտից թաթերը և կռնքերը զօրացան։ Եւ վեր ցաթ-
կելով կանգնեցաւ և կը քալէր, և անոնց հետ
տաճարը մտաւ քալելով և վազվզելով և օրհ-
9 նելով զԱստուած։ Եւ բոլոր ժողովուրդը տեսաւ
10 զնա որ կը քալէր և կ'օրհնէր զԱստուած. Եւ
կը ճանչային թէ նա էր, որ ողորմութեան հա-
մար տաճարին Գեղեցիկ դրան քով կը նստէր։
և զարմանքով և սոսկութեամբ լցան այն բանին
համար որ եղաւ անոր։
11 Եւ մինչդեռ *նա յարած էր Պետրոսի և Յով-
հաննու, բոլոր ժողովուրդը զարմացած դիմեցին
անոնց քով ի սրահն որ կը կոչուէր Սողոմոնի։
12 Զայս տեսնելով Պետրոս պատասխան տուաւ ժո-
ղովրդեան, Արք Իսրայէլացիք, ընդէ՞ր զարմա-
ցած էք ասոր վրայ, կամ ընդէ՞ր պղտցեալ կը
նայիք մեզ, որպէս թէ մեր ձեռք մեր զօրութեամբ
կամ բարեպաշտութեամբ տուած ենք ասոր

*Ոմն, այն բժշկուած կաղը

13 քալել։ Աստուած Աբրահամու և Իսահակայ և
Յակոբայ, մեր հարցերուն Աստուածը, փառաւո-
րեց *զՈրդի իւր զՅիսուս, զոր դուք մատնեցիք,
և ուրացաք Պիղատոսի առջև, երբ նա վճռեց
14 արձակել։ Բայց դուք ուրացաք զՍուրբն և զԱրդա-
րն, և խնդրեցիք շնորհել ձեզ մարդասպան մը։
15 Եւ սպաննեցիք կենաց առաջնորդը, զոր Աստուած
16 յարոյց մեռելներէն, որուն մեք վկայ եմք։ Եւ
անոր անուանը հաւատով, անոր անունը հաս-
տատեց զսա, զոր դուք կը տեսնէք և գիտէք.
և այն հաւատքը որ անով է այս առողջութիւնը
17 առաւ առաջ ձեր ամենուն առջև։ Եւ հիմա, եղ-
բայրներ, գիտեմ որ անգիտութեամբ ըրիք, ինչ-
18 պէս ձեր իշխաններն ևս։ Բայց Աստուած ինչ որ
կանխաւ իւր բոլոր մարգարէներուն բերնով
յայտնած էր Քրիստոսի չարչարուելուն վրայ,
19 այսպէս կատարեց։ Ուստի ապաշխարեցէք և
դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուին. Որպէս զի
սփոփանաց ժամանակները գան Տէրոջը երեսէն,
և ղրկէ զՅիսուս Քրիստոս առաջուց †ձեզի քա-
20 րոզուած։ Զոր պարտ է երկինից ընդունել մինչև
ի ժամանակս հաստատութեան ամենայնի, որոց
համար Աստուած ի սկզբանէ հետէ խօսած է իւր
22 սուրբ մարգարէներուն բերնով, ‡Մովսէս Հէր
հարցերուն ըսաւ. Թէ Ձեր Տէր Աստուածը ձեր
եղբայրներէն պիտի հանէ ձեզ մարգարէ մը իրրև
23 զիս. անոր լսեցէք ինչ որ խօսի ձեզ։ Եւ պիտի
ըլլայ թէ ամէն այն մարգարէին չլսէ, պիտի կոր-
24 սուի ժողովրդեան միջէն։ Եւ բոլոր մարգարէ-
ները որ Սամուէլէ հետէ խօսեցան՝ իմացուցին
25 այս օրերուն համար ևս։ Դուք էք մարգարէնե-

*կամ, զծառայն
†Ոմն, ձեզի համար սահմանուած
‡Ոմն, Քանզի Մովսէս

բուն որդիքը և այն ուխտին, զոր Աստուած ըրաւ
մեր հայրերուն հետ, և ըսաւ Աբրահամու, Եւ
քու զաւակովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազ-
26 գերը։ Աստուած իւր *Որդին յարուցանելով ա-
ռաջ ղրկեց զնա ձեզ օրհնել զձեզ, ձեռնէ իւրա-
քանչիւրը իւր չարութիւններէն դարձնելով։

Գլ. Դ

1 Եւ երբ անոնք կը խօսէին ժողովրդեան, քահա-
նաները և տաճարին իշխանը և սադուկեցիք հա-
2 ռան անոնց վրայ, Չարքնալով որ անոնք կը սոր-
վեցնէին ժողովրդեան և կը քարոզէին Յիսու-
3 սիս յարութիւն մեռելոց։ Եւ ձեռք մխեցին ա-
նոնց և բանտը դրին զանոնք մինչև ի վաղիւն,
4 քանզի արդէն երեկոյ էր։ Բայց այն խօսքը լսող-
ներէն շատեր հաւատացին, և մարդոց թիւը ե-
ղաւ իբրև հինգ հազար։
5 Եւ եղաւ որ ի վաղիւ անդր ժողովեցան անոնց
իշխանները և ծերերը և դպիրներն յԵրուսաղէմ,
6 Նաև Աննա քահանայապետ և Կայիափա և Յով-
հաննէս և Ալեքսանդրոս և այն ամէնը որ քա-
7 հանայապետի ցեղէ էին։ Եւ կեդրոնելով զանոնք
ի միջի՝ կը հարցնէին, Ի՞նչ զօրութեամբ կամ ի՞նչ
8 անուամբ բրիք դուք զայս։ Ապա անոնց Պետրոս
Հոգւով Սրբով լցուած ըսաւ անոնց, Իշխանք
9 ժողովրդեան և ծերք Իսրայէլի, Եթէ մենք այսօր
կը քննուինք վասն երախտաց տկար մարդոյ մը,
10 Թէ ինչո՛վ բժշկուեցաւ Նա, ցայտնի ըլլայ ձեզ
ամենուդ և բոլոր Իսրայէլի ժողովրդեան, որ յա-
նուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ զոր դուք
խաչեցիք, ԵՒ զոր Աստուած յարոյց ի մեռելոց,
11 անով կեցած է սա ձեր առջև բժշկուած։ Նա է

*Որդին, Որդին Յիսուս

այն քարը ձեզ շինողներէդ անարգուած, որ
12 եղաւ գլուխ անկեան. Եւ չկայ այլով ի՛նչ փրկու-
թիւն. քանզի բաց անկէ չկայ այլ անուն երկնից
տակ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք
13 փրկուիլ։ Իսկ անոնք Պետրոսի և Յովհաննու
համարձակութեան նայելով, և իմանալով թէ
տգէտ և առանց ուսման մարդիկ էին, կը զար-
մանային. և իմացան թէ անոնք Յիսուսի հետ
14 էին Եւ այն բժշկուած մարդը տեսնելով որ ա-
նոնց հետ կեցած էր՝ չէին կրնար ան*ոնց դէմ*
15 բան մը խօսիլ։ Եւ հրամայելով անոնց դուրս
ելիլ յաժողովէն, խորհուրդ բրին իրարու հետ,
16 Եւ ըսին, Ի՞նչ ընենք այս մարդոց. քանզի երու-
սաղէմի բոլոր բնակչաց յայտնի է թէ ասոնց ձե-
ռօք երեւելի հրաշք եղաւ, և մենք չենք կրնար
17 ուրանալ։ Բայց որպէս զի ժողովրդեան մէջ ևս
աւելի չտարածուի, սաստիկ սպառնանք անոնց
18 այլ ևս չխօսել ումէք այն անուամբ։ Եւ կոչելով
զանոնք պատուիրեցին անոնց ամենևին չխօսել
19 և չսորվեցնել յանուն Յիսուսի։ Բայց Պետրոս
և Յովհաննէս պատասխան տուին անոնց և ըսին,
Եթէ Աստուծոյ առջև ուղիղ է՝ ձեզ լսել մանա-
20 ւանդ քան Աստուծոյ, զոր դատեցէք։ Վասն զի
մենք զոր տեսանք և լսեցինք՝ չենք կրնար չխօ-
21 սիլ։ Իսկ անոնք զարձեալ սպառնալէն ետքը
արձակեցին զանոնք, բան մը չգտնելով Թէ ինչ-
պէս պատժէին զանոնք ժողովրդեան համար,
քանզի ամէնքը կը փառաւորէին Աստուած ե-
22 ղած բանին համար։ Վասն զի աւելի քան քա-
ռասնամեայ էր մարդը որոյ վրայ եղաւ այս
բժշկութեան նշանը։
23 Եւ արձակուելով եկան առ իւրեանս, և պատ-
մեցին ինչ որ քահանայապետք և ծերք բսին ա-
24 նոնց։ Եւ անոնք երբ լսեցին, միաբանութեամբ
վերցուցին իրենց ձայներն առ Աստուած ըսե-

լով, Ով Տէր, դու ես Աստուած որ ստեղծեցիր
երկինս և երկիրը և ծով և ամենայն ինչ որ
25 ի նոսա, Որ խօսեցար բերանով քոյ Ծառայիդ
Դաւթի, Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողո-
26 վուրդք խորհեցան անոփս. Թագաւորք երկրի
պատրաստ կեցան, և իշխանք ի միասին ժողովե-
27 ցան Տէրոջը դէմ և անոր Օծեալին դէմ. Քանզի
արդարև [այս քաղաքիս մէջ] ժողովեցան քու
սուրբ Որդւոյդ Յիսուսի վրայ զոր դուն օծեցիր,
Հերովդէս և Պոնտացի Պիղատոս, ազգերուն հետ
28 և Իսրայելի ժողովրդոց հետ, Ընել ինչ որ քու
ձեռքդ և խորհուրդդ սահմանեց առաջուց որ
29 ըլլար։ Եւ հիմա, ով Տէր, նայէ անոնց սպառ-
նալեաց և շնորհէ քու ծառաներուդ որ բոլոր
30 համարձակութեամբ խօսինք քու խօսքդ, Քու
ձեռքդ երկնցունելով բժշկել, և քու սուրբ
31 Որդւոյդ Յիսուսի անուամբ նշաններ և հրաշներ
գործել։ Եւ երբ անոնք աղօթք ըրին, շարժե-
ցաւ տեղն ուր ժողոված էին, և ամէնքը Հոգւով
Սրբով լցան, և կը խօսէին համարձակ Աստուծոյ
խօսքը։

32 Եւ հաւատացեալներուն բազմութիւնն ունէր
մի սիրտ և մի հոգի. և անոնցմէ ոչ ոք կ'ըսէր
իւր ստացուածոց միոյն համար Թէ իւր էր, այլ
իրենց բոլոր բաներն հասարակաց կը համարէին։
33 Եւ մեծ զօրութեամբ առաքեալները վկայութիւն
կու տային Տէր Յիսուսի յարութեան, և անոնց
34 ամենուն վրայ մեծ շնորհք կար։ Եւ անոնց մէջ
կարօտութիւն կրող չկար, վասն զի անոնք որ
ագարակներու կամ տուներու տէր էին, կը վա-
35 ճառէին և վաճառուոց գիները կը բերէին, Եւ
կը դնէին առաքելոց ոտքը. և իւրաքանչիւր ու-
36 մէք կը բաժնուէր ըստ իւր կարօտութեան։ Եւ
Յովսէս որ առաքեալներէն Բառնաբաս անուա-
նեցաւ, որ կը թարգմանուի Որդի մխիթարու-

37 թեան, Ղեւտացի, Ծննդեամբ Կիպրացի, Ագարակ
մը ունենալով, վաճառեց և սակը բերաւ դրաւ
առաքելոց ոտքը։

Գլ. Ե

1 Բայց մարդ մը Անանիա անուն իւր կնոջը Սափի-
2 բայի հետ սեպհականած մը վաճառեց. Եւ անոր
գինէն խորեց, մինչ կինն ալ գիտէր, և մի բա-
3 ժինը բերաւ դրաւ առաքելոց ոտքը։ Եւ Պետրոս
ըսաւ, Անանիա, ընդէ՞ր Սատանան լցուց քու
սիրտդ սուտ Հոգւոյն Սրբոյ և խորել ազարակին
4 գինէն. Ո՞չ ապաքէն մինչ կար, քո էր, և մինչ
վաճառեցաւ, քու իշխանութեանդդ ներքև էր.
ի՞նչ է որ քու սրտիդ մէջ դրիր այդ բանը. ոչ Թէ
5 մարդոց սուտեցիր, այլ Աստուծոյ։ Եւ Անանիա
այս խօսքերը լսելով ինկաւ և փչեց հոգին. և
մեծ ահ ինկաւ ամենուն վրայ որ լսեցին զայն։
6 Եւ երիտասարդները ելան և պատեցին զնա, և
7 դուրս հանելով թաղեցին։ Եւ երբ երեք ժամ
անցաւ, անոր կինը չգիտնալով ինչ որ եղած էր՝
8 մտաւ ներս։ Եւ Պետրոս ըսաւ անոր, Ըսէ ինձ,
ագարակն այնչափ ծախուա վաճառեցիք։ Եւ նա
9 ըսաւ, Այո, այնչափ։ Եւ Պետրոս ըսաւ անոր,
Ի՞նչ է այդ որ դուք միաբանեցաք Տէրոջը Հոգին
փորձել. ահա այրդ Թաղողներուն ոտքը դրան
10 քով են, և ձեզ ալ պիտի հանեն։ Եւ
իսկոյն ինկաւ առ ոտս նորա, և փչեց հոգին. և
երիտասարդները մտնելով ներս գտան զնա մեռ-
11 եալ, և հանեցին թաղեցին իւր երկանը քով։ Եւ
մեծ ահ ինկաւ բոլոր եկեղեցւոյն վրայ, և ամե-
նուն վրայ որ լսեցին ասոնք։

12 Եւ առաքելոց ձեռօք շատ նշաններ և հրաշներ
կ'ըլլային ժողովրդեան մէջ. և ամէնքն էին միա-
13 բանութեամբ ի սրահին Սողոմոնի։ Եւ ուրիշներէն

ոչ ոք կը համարձակէր յարել անոնց, բայց ժո-
14 ղովուրդը կը մեծարէր զանոնք։ Եւ Տէրոջը հա-
ւատացեալներէն և՛ աւելի կը բազմանային, բազ-
15 մութիւն մարդոց և կանանց։ Այնպէս որ հիւանդ-
ները կը հանէին հրապարակները, և պառկեցու-
կէք և մահճակ կը դնէին, որ, երբ Պետրոս անց-
նէր, գոնէ անոր հովանին հասներ անոնց մէկուն
16 վրայ։ Եւ շրջակայ քաղաքաց բազմութիւնը կը
ժողովէր Երուսաղէմ, բերելով հիւանդները և
պիղծ ոգիներէ նեղուածները, որոց ամէնքը կը
բժշկուէին։

17 Ոտք ելաւ քահանայապետը և ամէնքը որ անոր
հետ էին (որ աղանդին, նախանձով
18 լցուած, Եւ մխեցին ձեռս յառաքեալս, և դրին
19 զնոսա հասարակաց բանտը։ Բայց Տէրոջը հրեշ-
տակը բացաւ գիշերային բանտին դուռները, և
20 դուրս հանելով զանոնք ըսաւ, Գնացէք և տա-
ճարին մէջ կեցուցէք և խօսեցէք ժողովրդեան՝ կե-
21 նաց այս բոլոր պատգամներէն։ Եւ երբ լսեցին
գայս, մտան տաճարն առաւօտուն և կը սորվե-
ցուցնէին. իսկ քահանայապետը եկաւ և որ անոր
հետ էին, և կոչեցին ժողովն և ամ բոլոր ծերակոյտը, և բանար դրբ
22 դրկեցին բերել զանոնք։ Եւ երբ սպասաւորները
գնացին, չգտնելով զանոնք բանտին մէջ՝ դարձան
23 պատմեցին, Եւ ըսին Թէ Ամենայն զգուշութեամբ
փակուած գտանք բանտը, և պահապանները
դուռներուն առջև կեցած, բայց բանալով մարդ
24 չգտանք ներսը։ Եւ երբ հիւ քահանան և տաճա-
րին իշխանը և քահանայապետները լսեցին այս
խօսքերը, կը զարմանային անոնց համար Թէ ինչ
25 պիտի ըլլար այն։ Եւ մարդ մը եկաւ պատմեց
անոնց Թէ Ահա այն մարդիկ զոր բանտը դրիք
կեցած են տաճարը և կ՛ուսուցանեն ժողովրդեան։
26 Անատեն իշխանը սպասաւորներով գնաց բերաւ

զանոնք առանց բռնութեան, քանզի կը վախնային
27 ժողովուրդէն, որ չքարկոծուէին։ Եւ բերին կե-
ցուցին զանոնք յատենի. և քահանայապետն
28 հարցուց անոնց Եւ ըսաւ, Ոչ ապաքէն սաստիկ
պատուիրեցինք ձեզ որ այս անուամբ չսորվեցու-
նէք. և ահա լցուցիք երուսաղէմ ձեր ուսմամբ,
և այն մարդուն արիւնը կ՛ուզէք բերել մեր վրայ։
29 Պատասխան առին Պետրոս և Ցով առաքեալ-
ները և ըսին, Աստուծոյ հնազանդիլ
30 պարտ է քան մարդոց։ Մեր հայրերուն Աստուածն
յարոյց զՅիսուս, զոր դուք փայտին կախելով
31 սպաննեցիք։ Զնա Աստուած իւր աջովը բարձ-
րացոյց լինել Առաջնորդ և Փրկիչ, տալ Իսրայէլի
32 ապաշխարութիւն և մեղաց թողութիւն։ Եւ մենք
այս բաներուն համար անոր վկաներ ենք, և Հո-
գին Սուրբ ևս, զոր Աստուած տուաւ իրեն հնա-
33 զանդողներուն։ Եւ անոնք լսելով չար զայրացան
յոյժ, և կը խորհէին սպաննել զանոնք։
34 Եւ ատենին մէջ ոտք ելաւ փարիսեցի մը որոյ
անունն էր Գամաղիէլ, օրինաց վարդապետ, բո-
լոր ժողովրդեան առջև պատուաւոր, և հրամայեց
սակաւիկ մի դուրս հանել առաքեալները։ Եւ
35 ըսաւ անոնց, Արդ Իսրայելացիք, զգուշացէք ձեզ
36 այս մարդոց համար Թէ ինչ պիտի ընէք. Քանզի
այս օրերէն առաջ եկաւ Թևդաս, ըսելով իրեն
համար Թէ Էքէնէլ ոմն էր, և մարդիկ Թուով իբր
չորս հարիւր յարեցան ի նա. ինք սպանեցաւ ևս,
և այն ամէնը որ հնազանդած էին անոր՝ ցրուե-
37 ցան և եղան ոչինչ։ Յետ նորա Յուդա Գալիլեացին
եկաւ ազարհագրին օրերը, և շատ ժողովուրդ
ձգեց իւր կողմը. նա ևս կորեաւ, և այն ամէնը
38 որ հնազանդած էին անոր՝ եղան ցիր և ցան։ Եւ
հիմա կ՛ըսեմ ձեզ, Ի բաց կացէք այդ մարդերէն
և Թողէ տուէք անոնց, քանզի եթէ ի մարդկանէ
է այդ խորհուրդը կամ գործը, պիտի քակտի։

39 Իսկ եթէ Աստուծմէ է, չէք կարող քակել զայդ,
40 գուցէ և աստուածամարտք գտնուիք։ Եւ անոնք
հաւանեցան անոր, և առաքեալները կոչելով՝
ծեծեցին, և պատուիրելով այլ ևս չխօսել յա-
41 նուն Յիսուսի, արձակեցին զանոնք։ Եւ անոնք
ժողովոյն առջևէն գնացին, ուրախանալով որ
Տէրոջը անուան համար արժանի եղան անար-
42 գուել։ Եւ ամէն օր տաճարը և տուներու մէջ
չէին դադարեր ուսուցանելէ և քարոզելէ զՅի-
սուս Քրիստոս։

Գլ. Զ

1 Եւ այն օրերը երբ աշակերտները բազմացան,
*Հեղինեացւոց կողմէն տրտունջ եղաւ. Եբրայեցւոց
դէմ, քանզի ի հանապատօրեայ սպասակարարու-
2 թեան անտես կ'ըլլային անոնց այրիները։ Եւ ե-
կոտասանք կոչեցին աշակերտաց բազմութիւնը
և ըսին, Չհամեմատիմք մեզ Աստուծոյ խօսքը թողուլ
3 և սեղաններու ծառայութիւն ընել։ Ուստի, եղ-
բարք, ընտրեցէք ձեզմէ եօթ վկայուած, Հոգւով
Սրբով և իմաստութեամբ լի հօթն այր, զորս
4 դնենք այս գործին վրայ, եւ մենք պարապինք
5 աղօթից և Աստուծոյ խօսքին պաշտաման։ Եւ
այս խօսքը հաճոյ երևեցաւ բոլոր բազմութեան
առջև. և ընտրեցին զՍտեփանոս, այր լի հաւա-
տով և Հոգւով Սրբով, և զՓիլիպպոս, և զՊրո-
քորոս, և զՆիկանովրա, և զՅիմոնիա, և զՊար-
մենա և զՆիկողայոս նորահաւատ Անտիոքացի։
6 Զորս կեցուցին առաքելոց առջև, և ասոնք ա-
7 ղօթք ընելով ձեռք դրին անոնց վրայ։ Եւ Աս-
տուծոյ խօսքը կ'աճէր, և աշակերտաց թիւը կը
բազմանար յոյժ յԵրուսաղէմ. և քահանա-

*Այլն՝ Հեղինեական Հբէից

ներէն մեծ բազմութիւն կը հնազանդէին հա-
ւատոյն։
8 Եւ Ստեփանոս, լի *հաւատով և զօրութեամբ,
մեծ հրաշներ և նշաններ կ'ընէր ժողովրդեան մէջ։
9 Բայց ոմանք այն ժողովրդանոցէն որ կը կոչուէր
Ազատացելոց և Կիւրենացւոց և Ալեքսանդ-
րացւոց, և որք Կիլիկիայէ և Ասիայէ էին, ելան
10 և կը վիճէին Ստեփանոսի հետ. Եւ չէին կրնար
դէմ դնել իմաստութեան և հոգւոյն որով կը
11 խօսէր Նա։ Անատեն հրապուրեցին զոմանս ըսել
Թէ Մենք լսեցինք որ դա հայհոյական խօսքեր
12 կը խօսէր Մովսէսի և Աստուծոյ դէմ։ Եւ գրգռե-
ցին ժողովուրդը և ծերերը և դպիրները, և անոր
վրայ հասնելով բռնեցին զնա և տարին յատեան։
13 Եւ կեցուցին սուտ վկաներ, որ կ'ըսէին, Այս
մարդը չդադարիր հայհոյական բաներ խօսելէ
14 սուրբ տեղոյս և օրինաց դէմ. Քանզի լսեցինք
ասկէ որ կ'ըսէր Թէ Այս Յիսուս Նազովրեցի
պիտի քակէ այս տեղը, և պիտի փոխէ սովորու-
15 թիւնները զորս աւանդեց մեզ Մովսէս։ Եւ
ատեանը նստողներուն ամէնքը երբ անոր նայե-
ցան, տեսան անոր երեսն իբրև հրեշտակի։

Գլ. Է

1 Անատեն քահանայապետն ըսաւ, Արդարև այդ
2 բաներն այդպէ՞ս են։ Եւ նա ըսաւ, Արք եղբարք
և հարք, լսեցէք։ Աստուած փառաց երևեցաւ
մեր հօրը Աբրահամու մինչ ի Միջագետս էր, յա-
ռաջ քան զբնակել նորա ի Խառան, և ըսաւ
3 անոր, Ել քու երկրէդ և քու ազգականներէդ,
և եկ այն երկիրը զոր ես պիտի ցուցնեմ քեզ։
4 Անատեն ինքզինքեանց երկրէն ելլելով բնակեցաւ

*Ոմանք, շնորհօք

ի Խառան. և անոր հօրը մահանալէն ետքը փո-
խադրեց զնա այս երկիրը, ուր դուք կը բնա-
5 կիք այժմ։ Եւ ասոր մէջ անոր ժառանգութիւն
չտուաւ, և ոչ քայլ մի ոտին, բայց խոստացաւ
անոր տալ զայս իբրև կալուած, և յետ նորա
6 անոր զաւակին, մինչդեռ որդի չունէր նա։ Եւ
Աստուած այսպէս խօսեցաւ, թէ անոր սերունդը
պանդուխտ պիտի ըլլար օտար երկիր. և պիտի
ծառայեցնէին զնա և չարչարէին չորս հարիւր
7 տարի։ Եւ այն ազգը որուն պիտի ծառայեն, ես
պիտի դատեմ, ըսաւ Աստուած, և այնուհետև
8 պիտի ելլեն և պաշտեն զիս այս տեղ։ Եւ անոր
տուաւ թլփատութեան ուխտը, և ապա ծնաւ նա
զԻսահակ, և թլփատեց զնա ութերորդ օրը, և
Իսահակ՝ զՅակոբ, և Յակոբ՝ երկոտասան նահա-
9 պետները։ Եւ նահապետք նախանձելով ծախե-
ցին՝ վաճառեցին յԵգիպտոս. բայց Աստուած
10 անոր հետ էր, Եւ փրկեց զնա անոր բոլոր նեղու-
թիւններէն, և տուաւ անոր շնորհք և իմաստու-
թիւն Եգիպտոսի փարաւոն թագաւորին առջև.
և նա իշխան դրաւ զնա Եգիպտոսի և իր բոլոր
11 տան վրայ։ Եւ Եգիպտոսի և Քանանու բոլոր
երկրին վրայ սով եկաւ և մեծ նեղութիւն, և
12 մեր հայրերը չէին գտներ կերակուր։ Եւ Յակոբ
երբ լսեց թէ ցորեն կը գտնուէր յԵգիպտոս, ա-
13 ռաջին անգամ մեր հայրերը ղրկեց։ Եւ երկրորդ
անգամուն Յովսէփ ճանչցուց զինք իր եղբայր-
ներուն. և Յովսէփայ ազգը յայտնի եղաւ Փա-
14 րաւոնի։ Եւ Յովսէփ ղրկեց և կոչեց իր հայրը
զՅակոբ և բոլոր ազգատոհմը, եօթանասունև-
15 հինգ հոգի։ Եւ Յակոբ իջաւ յԵգիպտոս, և մե-
16 ռաւ ինքը և մեր հայրերը։ Եւ Սիւքեմ տարուե-
լով դրուեցան այն գերեզմանը զոր Աբրահամ
առած էր արծաթի գնով Սիւքեմի հօրը Եմմորի
17 որդիներէն։ Եւ երբ մօտեցաւ խոստման ժամա-

նակը, զոր Աստուած երդմամբ խոստացած էր
Աբրահամու, ժողովուրդն աճեցաւ և բազմացաւ
18 յԵգիպտոս, Մինչև ուրիշ թագաւոր եկաւ որ
19 չէր ճանչնար զՅովսէփ։ Նա հնարք նիւթեց մեր
ազգին դէմ և չարչարեց մեր հայրերը, ընկեցիկ
ընել տալով անոնց աղայքն անգամ որ չապրէին։
20 Այն ժամանակ ծնաւ Մովսէս և Աստուծոյ
առջև գեղեցիկ էր, որ իր հօրը տունը սնաւ
21 երեք ամիս։ Եւ երբ ընկեցիկ եղաւ, փարաւոնի
դուստրը վերցուց զնա, և անոյշ իրեն իբրև որ-
22 դի։ Եւ Մովսէս վարժեցաւ եգիպտացւոց բոլոր
իմաստութեամբը, և զօրաւոր էր իր խօսքերով
23 և գործերով։ Եւ երբ եղաւ քառասնամեայ, ա-
նոր սիրտն բնակաւ այցելութիւն ընել իր եղ-
24 բայրներուն, իսրայէլի որդւոց։ Եւ ի պատկառիլ
ըն մին հարստահարուած տեսնելով պաշտպանեց,
և զրկելոյն վրէժն առաւ սպաննելով այն եգիպ-
25 տացին։ Կը կարծէր թէ իր եղբայրները պիտի
իմանային թէ Աստուած անոր ձեռօք ազատու-
թիւն պիտի տար անոնց, բայց անոնք չիմացան։
26 Եւ ի վաղիւ անդր հանդիպեցաւ անոնց մինչ կը
կռուէին, և ստիպեց զանոնք խաղաղութիւն ը-
նել ըսելով, Արք, դուք եղբարք եք, ընդէր կը
27 զրկէք զիրար։ Բայց նա որ կը զրկէր ընկերը՝
մերժեց զնա և ըսաւ, Ո՞վ կացոյց զքեզ մեր
28 վրայ իշխան և դատաւոր։ Կամի՞ս սպաննել զիս,
29 ինչպէս սպաննեցիր երէկ եգիպտացին։ Եւ Մով-
սէս փախաւ այս խօսքին վրայ, և եղաւ պան-
դուխտ Մադիամու երկրին մէջ, ուր ծնաւ երկու
30 որդի։ Եւ երբ քառասուն տարի անցաւ, Սինայ
լերան անապատին մէջ Տէրոջ հրեշտակը երևեցաւ
31 անոր մորենւոյ կրակի բոցով։ Եւ երբ տեսաւ
Մովսէս, զարմացաւ այն տեսլեան վրայ, և երբ
32 մօտեցաւ զննել, Տէրոջը ձայնը եկաւ անոր, Ես
եմ քու հայրերուդ Աստուածը, Աստուած Աբ-

բահամու և Աստուած իսահակայ և Աստուած
Յակոբայ. և Մովսէս դողալով չէր համարձակեր
33 դննել, Եւ Տէրը ըսաւ անոր, Հանէ ոտիցդ կօ-
չիները, քանզի տեղիդ ուր դուն կեցած ես՝
34 սուրբ երկիր է։ Արդարև տեսայ ժողովրդեանս
չարչարանքը որ յԵգիպտոս, և լսեցի անոնց հե-
ծութիւնը, և իջայ փրկել զանոնք. և հիմա եկ
35 զրկեմ զքեզ յԵգիպտոս։ Այն Մովսէս զոր ու-
րացան և կ'ըսէին, Ո՞վ կացոյց զքեզ իշխան և
դատաւոր, Աստուած զրկեց զնա իշխան և փրկո-
ղիչ ի ձեռն հրեշտակին որ մարենուն մէջ երևե-
36 ցաւ անոր։ Նա հանեց զանոնք հրաշներ և նշան-
ներ ընելով Եգիպտոսի երկրին և Կարմիր ծովուն
37 մէջ և անապատին մէջ քառասուն տարի։ Այս
Մովսէս է որ ըսաւ Իսրայէլի որդւոց, Զեր Տէր
Աստուածը մարգարէ պիտի յարուցանէ ձեզ ձեր
38 եղբայրներէն իբրև զիս, անոր լսեցէք։ Այս այն
է որ անապատը ժողովին մէջ էր Սինայ լերան
վրայ անոր խօսող հրեշտակին հետ և մեր հարց
հետ, որ կենդանի պատգամներ առաւ տալ մեզ.
39 Որուն մեր հայրերը չկամեցան հնազանդիլ, այլ
մերժեցին և իրենց սրտերով դարձան յԵգիպ-
40 տոս։ Եւ ըսին Ահարոնի, Մեզի աստուածներ շի-
նէ որ մեր առջևէն երթան. քանզի այն Մովսէս որ
հանեց զմեզ Եգիպտոսի երկրէն՝ չենք գիտեր ինչ
41 եղաւ անոր։ Եւ այն օրերը որթ մը շինեցին, և
այն կուռց մատուցին զոհ, և կը զուարճանային ի-
42 րենց ձեռաց գործերով։ Եւ Աստուած էրէտ դար-
ձուց, և թողուց զանոնք պաշտել երկնից զօրքը.
ինչպես գրուած է ի գիրս մարգարէից, Միթէ ա-
նասնոյն մէջ քառասուն տարի զոհեր և պատա-
43 րագներ մատուցիք ինձ, ով Իսրայէլի տունը. Եւ
Մողոքայ վրանն առիք և ձեր Հռեմփա աստուա-
ծոյն աստղը, այն պատկերները զորս շինեցիք ա-
նոնց երկրպագութիւն ընելու, և ես պիտի փո-

44 խադրեմ զձեզ Բաբելոնէ անդին։ Վկայութեան
խորանն անապատին մէջ մեր հայրերուն հետ էր,
ինչպես որ Մովսէսի հետ խօսողն հրամայեց, որ ի-
45 նչէ զայն ըստ օրինակին զոր տեսաւ. Զոր և հարք
մեր յաջորդաբար առնելով, ցՅեսուայ հետ բերին
զնա այն ազգերուն կալուածը զորս Աստուած հա-
լածեց մեր հայրերուն առջևէն մինչև Դաւթի օրե-
46 րը, Որ Աստուծոյ առջև շնորհք գտաւ, և կը
խնդրէր գտնել բնակարան Յակոբայ Աստուծոյն։
47 Եւ Սողոմոն շինեց անոր տուն։ (48) Սակայն
Բարձրեալը չբնակիր ձեռագործ տաճարներու-
49 մէջ, ինչպես մարգարէն կ'ըսէ, Երկինքը իմ աթոռս
է, և երկիրը իմ ոտիցս պատուանդանն է. ո՞րպիսի
տուն պիտի շինէք ինձ, կ'ըսէ Տէրը, կամ ի՞նչ
50 պիտի ըլլայ իմ հանգստեանս տեղը. Ո՞չ ապաքէն
51 այս ամէնը իմ ձեռքս չշինած է։ Ով խստասիրտ-
նոցներ և սրտով և ականջով անթլփատք, դուք
հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ կը կենաք,
52 ինչպես ձեր հայրերը՝ նոյնպես դուք։ Մարգարէ-
ներէն ո՞րը չհալածեցին ձեր հայրերը, և սպան-
նեցին զանոնք որ առաջուց պատմեցին այն
Արդարոյն գալստեան համար, որուն դուք հիմա
53 մատնիչները և սպանողներն եղաք. Դուք որ
օրէնքն առիք հրեշտակներու մատակարարու-
թեամբ, և չպահեցիք։
54 Եւ անոնք լսելով այս բաները՝ կը զայրանային
իրենց սրտին մէջ և կը կրճտէին իրենց ատա-
55 մունքն անոր դէմ։ Բայց նա Հոգւով Սրբով
լցեալ նայեցաւ յերկինս և տեսաւ Աստուծոյ
փառքը, և զՅիսուս ևս որ Աստուծոյ աջ կողմը
կեցած էր, և ըսաւ, Ահա կը տեսնեմ զերկինս
բացուած, և զՈրդին մարդոյ Աստուծոյ աջ կող-
56 մը կեցած։ Իսկ անոնք մեծաձայն աղաղակելով
խցին իրենց ականջները և ամէնքը միանգամայն
57 դիմեցին անոր վրայ. Եւ քաշեցէն դուրս հա-

Նելով կը քարկոծէին ՃՈ. և վկաները կը դնէին
իրենց հանդերձները առ ոտս երիտասարդի մը
58 որ կը կոչուէր Սօղոս։ Եւ կը քարկոծէին զՍտե-
փանոս, որ կ'աղօթէր և կ'ըսէր, Տէր Յիսուս,
59 ընկալ զոգի իմ։ Եւ ծունր դնելով աղաղակեց
բարձրաձայն, Տէր, մեղք մի՛ հաշուիր զայս դո-
ղայն։ Եւ զայս ըսելով ննջեց, և Սօղոս հաճակից էր
անոր սպանմանը։

ԳԼ. Ը

1 Եւ այն օրը մեծ հալածում եղաւ յԵրուսաղէմ
եկեղեցւոյն վրայ, և բոլ յառաքելոց ամէնքը
ցրուեցան Հրէաստանի և Սամարիայի երկիրները։
2 Եւ երկիւղած մարդիկ վերցուցին զՍտեփանոս,
3 և մեծ ողբ ըրին անոր վրայ։ Բայց Սօղոս չատ
մնաս կու տար եկեղեցւոյն, տուները կը մտնէր,
այր և կին կը քաշէր, դնել կու տար բանտ։
4 Եւ այն ցրուեալները կը շրջէին և կը քարոզէին
5 խօսքը։ Փիլիպպոս ևս Սամարիայի քաղաք մը
6 իջնելով կը քարոզէր անոնց զՔրիստոս։ Եւ ժո-
ղովուրդները միաբան հաւանութեամբ միտ կը
դնէին Փիլիպպոսի խօսքին՝ լսելով և տեսնելով
7 նշանները զոր կ'ընէր։ Վասն զի չատ դեւահար-
ներէ պիղծ ոգիներ կ'ելլէին մեծաձայն ազա-
ղակելով, Եւ չատ անդամալոյծներ և կաղեր
9 կը բժշկուէին։ Եւ մեծ ուրախութիւն եղաւ այն
քաղաքին մէջ։ Բայց կար Սիմոն անուն մարդ մը
որ յառաջագոյն մոգութիւն կ'ընէր այն քաղաքին
մէջ, և կ'ապշեցնէր Սամարացւոց ազգը իրեն հա-
10 մար ըսելով թէ մեծ ոմն էր։ Որուն մտադիր էին
ամէնքը փոքրէն մինչև մեծր, և կ'ըսէին, Սա է
11 մեծ [կոչուած] զօրութիւնն Աստուծոյ։ Շատ ժա-
մանակէ հետէ կախարդութեամբք ապշեցուներ-
12 լուն համար զանոնք՝ մտադիր էին անոր։ Բայց

երբ հաւատացին Փիլիպպոսի որ կը քարոզէր Աս-
տուծոյ թագաւորութեան և Յիսուսի Քրիստոսի
13 անուան վրայ, կը մկրտուէին արք և կանայք։ Եւ
ինքն ևս Սիմոն հաւատաց, և մկրտուելով՝ միշտ
Փիլիպպոսի հետ էր։ և տեսնելով նշանները և
մեծ զօրութիւնները որ կ'ելլային՝ կը զարմանար։
14 Իսկ առաքեալները որ Երուսաղէմ էին, երբ լսե-
ցին թէ Սամարացիք ընդունած էին Աստուծոյ
խօսքը, ղրկեցին անոնց զՊետրոս և զՅովհաննես,
15 Որ իջնելով աղօթք ըրին անոնց համար որ Սուրբ
16 Հոգին առնուին. քանզի դեռ անոնց և ոչ մէկին
վրայ էջած էր, այլ միայն մկրտուած էին Տէր
17 Յիսուսի անուամբ։ Անոնցն իրենց ձեռնադրները
դրին անոնց վրայ, և Սուրբ Հոգին կ'առնուին,
18 Երբ տեսաւ Սիմոն թէ առաքելոց ձեռք դնելովը
ի վերայ կը տրուէր Սուրբ Հոգին, ասակ մատոյց
19 անոնց և ըսաւ, Տուէք և ինծ այս իշխանութիւ-
նը, որպէս զի որու վրայ ձեռք դնեմ, առնու
20 Սուրբ Հոգին։ Բայց Պետրոս ըսաւ անոր, Քու ար-
ծաթդ քեզի հետ թող կորսուի, քանզի կարծե-
ցիր թէ Աստուծոյ պարգեւը կ'առնուի ասակով։
21 Դու այդ բանին մէջ մասն և բաժին չունիս,
քանզի քու սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ առջև։
22 Ուստի ապաչաւէ այդ քու չարութենէդ և
աղաչէ զԱստուած, թերևս ներուի քեզ քու
23 սրտիդ չար խորհուրդը։ Քանզի ես կը տեսնեմ
զքեզ մաղձի դառնութեան և անիրաւութեան
24 կապանաց մէջ։ Սիմոն պատասխան առաւ և
ըսաւ, Դուք ինձի համար աղօթք ըրէք առ Տէր,
որ այդ բաներէն զոր ըսիք՝ բան մը չգայ իմ
25 վրաս։ Եւ նոքա վկայութիւն տալով Տէրոջը խօս-
քը խօսելէն ետքը դարձան յԵրուսաղէմ, և Սա-
մարացւոց շատ գիւղերուն մէջ քարոզեցին աւե-
տարանը։
26 Եւ Տէրոջը հրեշտակը խօսեցաւ Փիլիպպոսի ը-

սելով, նէ և գնաս դու հարաւային կողմն, այն
ճանապարհն որ կիջնէ Երուսաղեմէ դէպ ի Գազա, որ
27 անապատ տէղ է։ Եւ նա երթեալ գնաց։ Եւ ահա
Եթովպացի ներքինի մը Եթովպացւոց կանդակա
թագուհուոյն զօրաւորը, որ անոր բոլոր գանձե-
րուն վրայ էր, որ և Երուսաղէմ եկած էր երկիր
28 պագանել։ Եւ կը դառնար, և իր կառքը նստած
29 կը կարդար Եսայի մարգարէն։ Եւ Հոգին ըսաւ
Փիլիպպոսի, Մօտեցիր և գնա այդ կառաց քով։
30 Եւ Փիլիպպոս վազելով մօտ եղաւ՝ և կը լսէր որ
կը կարդար Եսայի մարգարէին։ Եւ ըսաւ, կը հաս-
31 կընա՞ս արդեօք ինչ որ կը կարդաս։ Եւ նա ը-
սաւ, Ինչպէս կրնամ հասկընալ, եթէ ոչ ոք ա-
ռաջնորդէ ինձ։ Եւ աղաչեց Փիլիպպոսի երթալ
32 նստել իրեն քով։ Եւ տեղը զոր կը կարդար գըր-
քին հետ այս էր, Իբրև ոչխար մորթուելու տար-
ուեցաւ, և իբրև գառն որ անմռունչ կը կենայ
իր խուզողին առջև՝ այնպէս չբանար իր բերա-
33 նը։ Անոր խոնարհութեան մէջ անոր դատաս-
տանը վերցաւ, և անոր ազգատոհմը ո՞վ պիտի
պատմէ։ քանզի անոր կեանքը երկրէն կը վեր-
34 ցուի։ Ներքինին պատասխան տուաւ Փիլիպպոսի
և ըսաւ, Կաղաչեմ գրեթէ, մարգարէն որո՞ւ հա-
մար կ'ըսէ զայս. իրե՞ն համար թէ ուրիշի մը
35 համար։ Իսկ Փիլիպպոս բացաւ իր բերանը, և
գրքին այս խօսքէն սկսելով՝ քարոզեց անոր զին-
36 ուոյ։ Եւ երբ էրէնց ճանապարհին, եկան
ջուրի մը քով։ Եւ ըսաւ ներքինին, Ահա ջուր,
37 ի՞նչ բան կ'արգելու զիս մկրտուելէ։ [Եւ Փիլիպ-
պոս ըսաւ անոր, եթէ քու բոլոր սրտովդ կը
հաւատաս, կրնաս։ Եւ նա պատասխան տուաւ
և ըսաւ, Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս է
38 Որդի Աստուծոյ։] Եւ հրամայեց կեցուցնել կառքը։
և երկոքեան իջան ջուրը, Փիլիպպոս և ներքի-
39 նին, և մկրտեց զնա։ Եւ երբ դուրս ելան ջու-

րէն, Տէրոջը Հոգին յափշտակեց զՓիլիպպոս, և
այլևս չտեսաւ զնա ներքինին, և իր ճամբան
40 կ'երթար ուրախութեամբ։ Բայց Փիլիպպոս Ազով-
տոսի մէջ գտնուեցաւ. և շրջելով կը քարոզէր
աւետարանը բոլոր քաղաքներուն, մինչև եկաւ
նա Կեսարիա։

Գ.Լ. Թ

1 Բայց Սօղոս տակաւին սպառնալիք և մահ փչե-
լով Տէրոջը աշակերտներուն դէմ գնաց քահա-
2 նայապետին քով, Եւ անկէ խնդրեց Թուղթեր
ի Դամասկոս ժողովրդանոցները որ եթէ
այն ճամբուն հետևողներ գտնէ, այր կամ կին,
3 կապած բերէ յերուսաղէմ։ Եւ երբ կ'երթար և
մօտեցաւ ի Դամասկոս, յանկարծ յերկինից լոյս
4 փայլատակեց անոր բոլորտիքը։ Եւ գետին իյնա-
լով ձայն մը լսեց որ կ'ըսէր անոր, Սաւուղ,
5 Սաւուղ, ընդէ՞ր կը հալածես զիս։ Եւ նա ըսաւ,
Դուն ո՞վ ես, Տէր։ Եւ Տէրը ըսաւ, Ես եմ Յի-
սուս զոր դուն կը հալածես. դժուարին է քեզ
6 ընդդէմ խթանի ապցել։ Եւ նա դողալ և ապշ-
չութեամբ ըսաւ, Տէր, ի՞նչ կամիս որ ընեմ։
7 Եւ Տէրը ըսաւ անոր, Նէ և մտիր քաղաքը, և
պիտի ըսուի քեզ ինչ որ պարտիս ընել։ Իսկ այն
մարդիկը որ անոր հետ կ'երթային՝ սպառած կե-
ցած էին, ձայնը միայն կը լսէին, բայց ոչ ոք կը
8 տեսնէին։ Եւ Սօղոս գետնէն ելաւ, և բաց աչօք
ոչ ոք կը տեսնէր. ուստի անոր ձեռքէն բռնե-
ցին և մտցին ի Դամասկոս։ Եւ երեք օր կեցաւ
առանց տեսնելու, և ոչ կերաւ և ոչ խմեց։
10 Եւ Անանիա անուն աշակերտ մը կար ի Դա-
մասկոս. և Տէրը տեսլեան մէջ ըսաւ անոր, Անա-

*Ո՛ահէ լսեմ։

11 Նման, եւ նա ըսաւ, Տէր, ահաւասիկ եմ, եւ Տէրը ըսաւ անոր, Ել և գնա այն փողոցը որ Ուղիղ կ'ըսուի, և հոն Ցուդային տան մէջ փնտռէ Սօղոս անուն ումն Տարսոնացի. վասն զի ահա նա կ'աղօթէ. 12 Եւ Մարդ մը տեսաւ ի տեսլեան Անանիա անուն որ մտաւ և ձեռքն անոր վրայ դրաւ որ 13 տեսնէր։ Եւ Անանիա պատասխան տուաւ, Տէր, շատերէն լսեցի այն մարդուն համար թէ որչափ 14 չարիք ըրաւ քու սուրբերուդ յերուսաղէմ. Եւ հոս ևս քահանայապետներէն իշխանութիւն ունի կապել այն ամէնքը, որ քու անունդ կը կոչեն։ 15 Եւ Տէրը ըսաւ անոր, Գնա դուն, քանզի ընտիր ման է նա ինձ, իմ անունս կրելու հեթանոսաց 16 և թագաւորաց և իսրայելի որդւոց առջև. Քանզի ես պիտի ցուցնեմ անոր թէ որչափ պարտ է 17 նմա իմ անուանս համար նեղութիւն կրել։ Եւ Անանիա գնաց և մտաւ այն տունը, և ձեռուընները անոր վրայ դնելով ըսաւ, Սաւուղ եղբայր, Տէրը զրկեց զիս, այն Յիսուս որ Ճամբուն մէջ երևեցաւ քեզ երբ կու գայիր, որպէս զի տեսնես 18 Թիւնդ առնաս և լցուիս Հոգւով Սրբով։ Եւ չուտ մը բնկան անոր աչքերէն թեփերու պէս բաներ. և իսկոյն տեսաւ և ելաւ մկրտուեցաւ. 19 Եւ կերակուր ուտելով զօրացաւ, *և քանի մը օր կեցաւ աշակերտաց հետ որ էին ի Դամասկոս։

20 Եւ անմիջապէս ժողովրդանողներուն մէջ կը քարոզէր †զիսուս, Թէ նա է Աստուծոյ Որդին։ 21 Եւ բոլոր լսողները մեծապէս զարմացած էին, և կ'ըսէին, Ո՞չ ապաքէն սա է որ Երուսաղէմի մէջ կը կործանէր զանոնք որ այս անունը կը կոչէին. և հոս ևս եկած էր յայն ասկս որ զանոնք կապած տանէր քահանայապետներուն։ Բայց Սօղոս 22 ևս աւելի կը զօրանար, և կը պատանձեցուներ

*Ոմանք, և Սաւուղ †Ոմանք, զԻրիսոստոս

Դամասկոսի մէջ բնակող Հրեաները, ապացու- 23 ցանելով Թէ այս է Քրիստոս։ Եւ երբ շատ օրեր անցան, Հրեայք խորհուրդ ըրին սպաննել զնա։ 24 Բայց Սօղոսի յայտնեցաւ անոնց նենգութիւնը. և զոնէ և զդիչեր դուռները կը սպասէին 25 սպաննել զնա։ Իսկ աշակերտները գիչերայն առին զնա, և ամբիւղով կախելով վար իջուցին պարսպէն։

26 Երբ Սօղոս եկաւ յերուսաղէմ, կը ջանար յաղել աշակերտներուն, բայց ամէնքը կը վախնային 27 անկէ չհաւատալով Թէ աշակերտ եր նաւ։ Բայց Բառնաբաս առնդով զնա տարաւ առաքեալներուն, և պատմեց անոնց Թէ ինչպես ի ճանապարհին տեսաւ զՏէր, և Թէ խօսեցաւ անոր հետ, և Թէ ինչպես Դամասկոսի մէջ համարձակ 28 քարոզեց Յիսուսի անուամբ։ Եւ երուսաղէմի մէջ անոնց հետ կը մտնէր և կ'ելլէր Տէր Յիսուսի 29 անուամբ համարձակ քարոզելով, Նաև *Հելլենացւոց դէմ կը խօսէր և կը վիճէր. և անոնք կը 30 ֆնդրէին սպաննել զնաւ իսկ եղբայրներն իմանալով իջուցին զնա ի կեսարիա, և զրկեցին զնա ի Տարսոն։

31 Ապահեն եկեղեցիներն ունեցան խաղաղութիւն բոլոր Հրէաստան և ի Գալիլեա և ի Սամարիա, և չինութիւն կ'ընդունէին, և Տէրոջը երկիւղիւ և Հոգւոյն Սրբոյ մխիթարութեամբ քալելով կ'աճէին։

32 Եւ երբ Պետրոս ամէն տեղ կը պտրտէր, իջաւ 33 նաև Լիւդդա բնակող սուրբերուն քով։ Եւ գտաւ հոն մարդ մը որոյ անունն էր Ենէաս, ութ 34 տարի է հետ մահիճը պառկած անդամալոյծ. Եւ ըսաւ անոր Պետրոս, Ենէաս, Յիսուս Քրիստոս կը բժշկէ զքեզ. կաց և չուկէ անկողինդ։ Եւ նա իս-

*Ասյնուհետև, Հելլենախօս Հրէից

35 կոյն եղաւ. Եւ Լիւդդեայի և Սարօնի մէջ բնա-
կողներուն ամէնքը տեսան զնա, և դարձան առ
36 Տէր: Եւ Յոպպէի մէջ աշակերտած կին մը կար
Տաբիթա անուն, որ կը Թարգմանուի Այծեմկին:
Սա լի էր բարի գործովք և ողորմութեամբ
37 զորս կ'ընէր: Եւ եղաւ որ այն օրերը հիւանդա-
ցաւ նա և մեռաւ. և լուացին զնա և դրին վեր-
38 նատունն մը: Եւ Լիւդդեա Յոպպէի մօտ էր. ուս-
տի աշակերտները լսելով Թէ Պետրոս հոն էր,
ղրկեցին առ նէրկու մարդ, աղաչելով չյա-
39 պաղել իրենց գալ: Եւ Պետրոս եղաւ անոնց
հետ եկաւ. և երբ եկաւ, հանեցին զնա վերնա-
տունը. և բոլոր այրիք կեցան չուրջանակին, կու-
լային և կը ցուցնէին բաճկոնները և հանդերձնե-
րը զորս կ'ընէր Այծեմկի, մինչ անոնց հետ էր:
40 Եւ Պետրոս դուրս հանելով ամէնքը՝ ծունր
դրաւ և աղօթեց, և դէպ ի մարմինը դառնալով
ըսաւ, Տաբիթա, կո կանգնէ: Եւ նա բացաւ աչ-
ուքները, և տեսնելով զՊետրոս՝ նստաւ ուղիղ:
41 Եւ նա ձեռքը տուաւ անոր, և վերցուց զնա. և
կոչելով սուրբերը և այրիները կեցուց զնա անոնց
42 առջև ողջ: Եւ բոլոր Յոպպէի մէջ իմացուեցաւ,
43 և շատերն հաւատացին ի Տէր: Եւ եղաւ որ ինք
շատ օրեր կեցաւ Յոպպէ Սիմոն անուն խապա-
խորդի մը քովէ:

Գլ. Ժ

1 Մարդ մը կար Կեսարիա Կոռնելիոս անուն, հա-
2 րիւրապետ, Իտալացի կոչուած գունդին. Բարե-
պաշտ և երկիւղած իւր բոլոր տանը, որ շատ ո-
ղորմութիւններ կու տար ժողովրդեան, և յա-
3 մենայն ժամ կ'աղօթէր առ Աստուած: Սա
օրուան իրր իններորդ ժամուն տեսիլն մէջ
յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշտակը որ անոր

4 քովՙ մտաւ և ըսաւ անոր, Կոռնելիէ: Եւ նա նա-
յելով անոր և շատ վախնալով ըսաւ, Ի՞նչ է,
Տէր: Եւ նա ըսաւ անոր, Քու աղօթքդ և ողոր-
մութիւններդ ելան Աստուծոյ առջև յիշատակի
5 համար: Եւ արդ մարդիկ ղրկէ Յոպպէ, և կոչէ
Սիմոն անուն մին որ Պետրոս անուանեալ է:
6 Նա իրրև հիւր կը կենայ Սիմոն անուն խապաղոր-
7 դի մը քովՙ, որոյ տունը մտ է ծովեզրեայ: Եւ երբ
գնաց հրեշտակը որ կը խօսէր ընդ հետ, կոչեց
իւր ծառաներէն երկուքը, և իրեն քով սպա-
8 սողներէն ևս բարեպաշտ զինուոր մը, եւ բոլորը
պատմելով անոնց՝ ղրկեց զանոնք Յոպպէ:
9 Եւ ի վաղիւ անդր երբ անոնք երթան ի ճանա-
պարհ և մօտենան քաղաքին, Պետրոս իրր վե-
10 ցերորդ ժամուն երթաւ ի տանիս աղօթել. Եւ շատ
անօթեցած ըլլալով կ'ուզէր ճաշել. և մինչ ի-
րեմէն պատրաստութիւն կը տեսնէին, եկաւ ա-
11 նոր վրայ յափշտակութիւն մտաց. Եւ տեսաւ
զերկինս բացեալ, և չորս ծայրէն կապուած ա-
12 ման իրրև մեծ կտաւ, որ իյնաւ ‡երկրի վրայ. Ո-
րուն մէջ կային երկրի բոլոր չորքոտանիները և գա-
զանները և սողունները և երկնից թռչունները:
13 Եւ ձայն եղաւ անոր, Ել, Պետրոս, դեն և կեր:
14 Բայց Պետրոս ըսաւ, Քաւ լիցի, Տէր, քանզի ես
ամենևին սիրած կամ անմաքուր բան կերած չեմ:
15 Դարձեալ ձայն էլաւ անոր, Զոր Աստուած սրբեց,
16 դուն սիրած մի՛ համարիր: Ա յս եղաւ երիցս, և
ամանը վերացաւ յերկինս: Եւ Պետրոս երբ կը
պարապար ի միտս իւր Թէ ինչ սիրած ըլլար տե-
սիլը զոր տեսաւ, ահա Կոռնելիոսէ ղրկուած
մարդիկ հարցուցին Սիմոնի տունը, և կեցան

---

*Ոմանք՝ յԱբեղյաներէն, նա սիրած ըսէ քեզ ինչ որ պարտիս ընել:
†Ոմանք, Կոռնելիոսի ‡Ոմանք, անոր

18 դրան առջև. եւ կսկծալով կը հարցնէին թէ Սիմոն
19 որ Պետրոս կը կոչուի՝ հո՞ն կը կենայ։ Եւ երբ
Պետրոս կը խորհէր այն տեսլեան վրայ, Հոգին
Սո՛ւրբ բսաւ անոր, Ահա երեք մարդիկ կը
20 խնդրեն զքեզ։ Ուստի ել, իջ, և անոնց հետ
գնա առանց խղճմտելու, քանզի ես զրկեցի զա-
21 նոնք։ Եւ Պետրոս իջնելով՝ *այն մարդոց ջով
բսաւ, Ահա ես եմ այն զոր դուք կը խնդրէք.
22 ինչ բանի համար եկած էք։ Եւ անոնք բսին,
Կոռնելիոս հարիւրապետ, այր արդար և երկիւ-
ղած, վկայուած բոլոր Հրէից ազգին, հրաման
առաւ սուրբ հրեշտակէ կոչել զքեզ իր տունը
23 և լսել քենէ խօսքեր։ Անտեղ կոչեց զանոնք ի
ներքս և հիւրընկալեց։

Ի վաղիւ անոր Պետրոս ելաւ գնաց անոնց հետ,
և ոմանք ևս եղբայրներէն որ էին Ցոպպէ՝ գնա-
24 ցին անոր հետ։ Եւ ի վաղիւն մտան ի Կեսարիա։
և Կոռնելիոս իւր ազգականները և մտերիմ բա-
25 րեկամները կոչած կը սպասէր անոնց։ Եւ երբ
Պետրոս կը մտնէր ի ներքս, Կոռնելիոս ելաւ ա-
նոր դիմացը և խնալով անոր ոտքը կ'երկրպա-
26 գէր։ Բայց Պետրոս կանգնեցուց զնա և բսաւ,
27 Ել կանգնէ. ես ինքն ևս մարդ եմ։ Եւ անոր
հետ խօսելով մտաւ ի ներքս, և գտաւ հոն շատ
28 մարդիկ ժողովեալ։ Եւ բսաւ անոնց, Դուք գի-
տէք թէ ինչպէս ապօրինաւոր է Հրեայ մարդու
հազորդակցիլ կամ երթալ օտարազգւոյ հետ կամ մօ-
տենալ անոր։ բայց Աստուած ցուցուց ինձ ոչ
ումեք ի մարդկանէ ըսել պիղծ կամ անմաքուր։
29 Վասն որոյ և ես որ կոչուեցայ՝ առանց դէմ
խօսելու եկայ։ բայց հիմա կը հարցնեմ, ինչ
30 բանի համար կոչեցիք զիս։ Եւ Կոռնելիոս բսաւ,
Զորս օր առաջ մինչև այս ժամս կը պահէի ծոմ,

*Ոմանք, Կոռնելիոսէ անոր ղրկուած

և ինների ժամուն կ'աղօթէի տանս մէջ. և
ահա փայլուն հանդերձներով մարդ մը կեցաւ
31 առջևս և բսաւ, Կոռնելիէ, աղօթքդ լսուեցաւ,
և ողորմութիւններդ յիշուեցան Աստուծոյ առջև.
32 Ուստի հարք զրկէ Ցոպպէ, և կոչէ զՍիմոն որ և
Պետրոս կը կոչուի. նա ծովեզրեայ Սիմոն անուն
խաղաքարտէր մը տունը կը կենայ իբրև հիւր. որ
33 երբ գայ, պիտի խօսի քեզ։ Ուստի իսկոյն հարք
ղրկեցի քեզ, և դուն աղէկ ըրիր որ եկար. և
հիմա մենք ամէնքս Աստուծոյ առջև կեցած ենք
լսել այն ամէն բաները որ Աստուծմէ հրա-
մայուած են քեզ։
34 Իսկ Պետրոս բացաւ իւր բերանը և բսաւ,
Ճշմարտութեամբ կը հասկընամ թէ աչառութիւն
35 չկայ առ ի Աստուծոյ, Այլ ամէն ազգի մէջ ով
որ անկէ կը վախնայ և արդարութիւն կը գործէ՝
36 ընդունելի է նմա։ Աստուած ղրկեց խօսքը Իս-
րայէլի որդւոց քարոզել խաղաղութիւն Յիսուս
37 Քրիստոսի ձեռօք. սա է ամենուն Տէրը. Դուք
քաջ գիտէք այն բանը որ եղաւ բոլոր Հրէաստա-
նի մէջ Գալիլեայէ սկսեալ, մկրտութիւնեն ետքը
38 զոր Յովհաննէս քարոզեց. Զհիսուս որ Նազարէ-
թէ երբ զոր Աստուած օծեց Հոգւով Սրբով և
զօրութեամբ, որ չերթեցաւ բարիք ընելով և
բժշկելով Սատանայէ բոլոր տանջուածները,
39 քանզի Աստուած անոր հետ էր։ Եւ մենք վկայ
ենք այն ամէն բաներուն զորս ըրաւ Հրէաստանի
երկրին և Երուսաղէմի մէջ. զոր փայտէն կախած
40 սպաննեցին ևս։ Աստուած յարոյց զնա երրորդ
41 օրը, և չտսեցի ըրաւ զնա, Ոչ թէ բոլոր ժողո-
վրդեան, այլ մեզ առաջուց Աստուծմէ վկայ
ըլլալու ընտրուածներուս, որ անոր հետ կերանք
և խմեցինք ևս յետ յարութեան նորա ի մեռե-
42 լոց։ Եւ ինքնայառաւիրեց մեզ քարոզել ժողովըր-
դեան և տալ վկայութիւն, թէ նա է Աստուծմէ

սահմանուած Դատաւոր կենդանեաց և մեռելոց։
43 Անոր կը վկայեն բոլոր մարգարէք թէ անոր հաւատացողներուն ամենքը կ'առնուն անոր անունէն մեղաց թողութիւն։
44 Եւ երբ Պետրոս կը խօսէր այս խօսքերը, Հոգին Սուրբ իջաւ ամենուն վրայ որ կը լսէին խօսքը։ Եւ հաւատացեալք որ Թլփատութենէ էին
45 և որ եկած էին Պետրոսի հետ, զարմացան որ հեթանոսներուն վրայ ալ կը դիզուի Հոգւոյն
46 Սրբոյ պարգեւը։ Քանզի կը լսէին որ անոնք կը խօսէին ուրիշ լեզուներով, և կը փառաւորէին
47 զԱստուած։ Անատեն Պետրոս պատասխան տուաւ, կրնա՞յ մարդ արգելուլ ջուրը որ չմկրտուին ասոնք, որ Հոգին Սուրբ ալ ընկալան որպէս և
48 մեք։ Եւ հրամայեց որ մկրտուէին Տէրոջը անունովը։ Անատեն աղաչեցին զնա մնալ քանի մը օր։

Գլ. ԺԱ.

1 Եւ առաքեալները և եղբարք որ Հրէաստանի կողմերն էին, լսեցին թէ հեթանոսներն ալ ընդունած էին Աստուծոյ խօսքը։
2 Եւ երբ Պետրոս եկաւ Երուսաղէմ, անոնք որ Թլփատածներէն էին կը վիճէին անոր հետ,
3 եւ կ'ըսէին թէ Դուն անթլփատ մարդոց մտար, և կերար անոնց հետ։
4 Եւ Պետրոս սկսաւ կարգաւ պատմել անոնց, և ըսաւ,
5 Ես Յոպպէ քաղաքը կ'աղօթէի, և մտաց յափշտակութեան մէջ տեսայ տեսիլ. ման մը իբրև մեծ կտաւ իջաւ յերկնից չորս ծայրերէն կախուած և հասաւ մինչև ինծի։
6 Յորում երբ վրայ յառեցայ կը նայէի, և տեսայ երկրի չորքոտանիները և գազանները և սողունները և երկնից թռչուները։
7 Եւ ձայն լսեցի որ կ'ըսէր ինծի, Ելի, Պետրոս, զեն և կեր։
8 Բայց ես ըսի, Բաւ լեցի Տէր, քանզի պիղծ կամ անմաքուր բան աւելնէին մտած չէ իմ բերանս։
9 Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ ձայնը յերկնից, Զոր Աստուած սրբեց դուն պիղծ մի՛
10 համարիր։ Այս երեք անգամ եղաւ, և դարձեալ
11 բոլորը վերացաւ յերկինս։ Եւ ահա իսկոյն երեք մարդ կեսարիայէ առ իս ղրկուած կեցան տանը
12 առնլե ուր էի։ Եւ Հոգին բսաւ ինձ անոնց հետ երթալ առանց խղճի։ Այս վեց եղբարք ալ գնացին ինծի հետ, և մտանք այն մարդուն տունը։
13 Եւ նա պատմեց մեզ թէ ինչպէս իւր տան մէջ տեսաւ հրեշտակը որ կեցած էր և ըսեր, Ա՛ր ղրկէ Յոպպէ և կոչէ զՍիմոն որ և Պետրոս կը
14 կոչուի. Նա պիտի խօսի քեզ խօսքեր որովք
15 փրկուիս դուն և քու բոլոր տունդ։ Եւ երբ սկսայ խօսել, Հոգին Սուրբ իջաւ անոնց վրայ,
16 ինչպես և յառաջագոյն մեր վրայ։ Անատեն յիշեցի Տէրոջը խօսքը որ կ'ըսէր, Յովհաննէս մկրտեց ջրով, բայց դուք պիտի մկրտուիք Հոգւով
17 Սրբով։ Ուստի եթէ Աստուած մի և նոյն շնորհքը տուաւ անոնց, ինչպես մեզ ևս, երբ հաւատացին ի Տէր Յիսուս Քրիստոս, ես ո՞վ էի որ կա-
18 րենայի Աստուծոյ դէմ դնել։ Այս բաները լսելով լռեցին, և կը փառաւորէին զԱստուած և կ'ըսէին, Ուրեմն Աստուած հեթանոսաց ևս տուաւ կենաց համար ապաշխարութիւն։
19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եկաւ Սաթափանոսի համառաջ վրայ՝ հասան մինչև ի փիւնիկէ և ի կիպրոս և յԱնտիոք, և ոչ ումեք կը խօսէին Աստուծոյ խօսքը բայց միայն Հրէից։
20 Բայց անոնցմէ ոմանք էին կիպրացի և կիւրենացի մարդիկ, որ երբ հասան յԱնտիոք, *Հելլենացելոց
21 հետ կը խօսէին՝ քարոզելով զՏէր Յիսուս։ Եւ Տէրոջը ձեռքն էր անոնց հետ, և շատ մարդիկ

*Ոմանք, Յոյներուն

22 հաւատալով զարձան առ Տէր։ Եւ անոնց վրայ
այս լուրը հասաւ Երուսաղէմի եկեղեցւոյն ական-
ջը և զԲառնաբաս ղրկեցին երթալ մինչև Հան-
23 տիոք։ Որ երբ եկաւ և տեսաւ Աստուծոյ շնորհ-
քը, ուրախացաւ, և կը յորդորէր ամենքը յո-
24 ժար սրտիւ Տէրոջը հետ կապուած մնալ։ Քանզի
բարի մարդ էր նա, և լի Հոգւով Սրբով և հա-
ւատով։ և շատ ժողովուրդ աւելցաւ Տէրոջը։
25 Ճետոյ Բառնաբաս գնաւ ի Տարսոն փնտռելու զՍօ-
26 ղոս, և գտնելով զնա բերաւ Հանտիոք։ Եւ ե-
ղաւ որ անոնք ամբողջ տարի մը եկեղեցւոյն
հետ ժողովելով սորվեցուցին շատ ժողովուրդ։
և աշակերտները նախ և առաջ Հանտիոք ան-
ուանեցան Քրիստոնեայ։
27 Ա֊յն օրերը Երուսաղէմէ մարգարէներ իջան
28 Հանտիոք։ Եւ անոնցմէ մին, Ագաբոս անուն, ե-
լաւ ի մէջտեղ զօրութեամբ Հոգւոյն Թէ մեծ սով
պիտի ըլլար բոլոր աշխարհ, որ և եղաւ։ Կղովդիո-
29 սի օրերը։ Եւ աշակերտներն որոշեցին իրենցմէ
իւրաքանչիւր ըստ կարի ղրկել օգնութիւն
30 Հրեաստանի մէջ բնակող եղբարց։ Որ և կատա-
րեցին, երեցներուն ղրկելով Բառնաբասի և Սօ-
ղոսի ձեռօք։

Գլ. ԺԲ

1 Ա֊յն ատենները Հերովդէս Թագաւորը ձեռնաբ-
2 կեց չարչարել զոմանս յեկեղեցւոյն։ Եւ Յակով-
3 նոս եղբայրն զՅակորոս սպանեց սրով։ Եւ տես-
նելով Թէ հաճոյ եր Հրեից, յաւել և բռնել
4 զՊետրոս։ և էին բաղարջակերաց օրերը։ Երբ
զնա բռնեց, բանտը դրաւ, և չորս չորեակ զի-
նուորներու յանձնեց պահել, և կ՚ուզէր յետ

*Ոմանք, Կղօդիոս կայսեր

5 պատկին հանել զնա Ժողովրդեան։ Ուստի Պետ-
րոս բանտին մէջ պահուած էր, բայց եկեղեցին
անդադար կ՚աղօթէր Աստուծոյ անոր համար։
6 Եւ երբ Հերովդէս կանեցաւ դուրս բերել զնա,
այն գիշերը Պետրոս կը քնանար երկու զինուոր-
ներու մէջ կրկին չղթաւորւած։ և պա-
7 հապանները դրան առջև կը պահէին բանտը։ Եւ
ահա Տէրոջը հրեշտակը կեցաւ անոր վրայ, և
լոյս ծագեց տանը մէջ, և Պետրոսի կողը խթե-
լով արթնցուց զնա, և ըսաւ, Եել վազվազակի։
8 Եւ չղթաներն ինկան անոր ձեռուըներէն։ Եւ
հրեշտակն ըսաւ անոր, կապէ գօտիդ և հագ-
թափներդ հագիր ոտքդ։ Եւ նա ըրաւ այնպէս։
Եւ ըսաւ անոր, Հանդերձդ վրադ առ և եկ
9 հետէս։ Եւ նա ելլելով կ՚երթար անոր հետէն,
և չէր գիտեր Թէ ճշմարիտ էր ինչ որ եղաւ
հրեշտակին, այլ կը կարծէր Թէ տեսիլ կը տես-
10 նէր։ Եւ երբ անոնք անցան առաջինն և երկրորդ
պահապաններէն, եկան մինչև երկաթի դուռը
որ կը հանէր քաղաքին մէջ, որ և ինքնին բաց-
ուեցաւ անոնց։ և ելլելով փողոց մը անցան, և
11 հրեշտակն իսկոյն զատուեցաւ անկէ։ Եւ Պետրոս
յինքն գալով ըսաւ, Հիմա ճշմարտապէս գիտեմ
Թէ Տէրը ղրկեց իւր հրեշտակը, և ազատեց զիս
Հերովդէի ձեռքէն և Հրէից Ժողովրդեան բոլոր
12 ակնկալութենէն։ Եւ խորհելով եկաւ ի տուն
Մարիամայ մօր Յովհաննու որ կը կոչուէր Մար-
13 կոս, ուր շատեր Ժողովել կ՚աղօթէին։ Եւ դռնէ
դուրսի դուռը երբ *բաղխեց, աղախին մը Հռով-
14 դէ անուն գնաց ունկն դնել։ Եւ երբ ճանչցաւ
Պետրոսի ձայնը, ուրախութենէն չբացաւ դուռ-
ը, այլ վազելով ի ներքս պատմեց Թէ Պետրոս
15 կեցած էր դրան առջև։ Իսկ անոնք ըսին անոր,

*Ոմանք, Պետրոս բաղխեց

կը մոլիս։ Բայց նա կը պնդէը թէ այնպէս էր։ Եւ
16 անոնք կ'ըսէին, Անոր հրեշտակն է։ Սակայն
Պետրոս անդադար կը բաղխէը. և երբ բացին,
17 տեսնելով զնա սաստեցան։ Բայց նա ձեռամբ նշան
կ'ընէր անոնց լուռ կենալ, և պատմեց անոնց
թէ ինչպէս Տէրը բանտէն հանեց զնա. և ըսաւ,
Պատմեցէք զայս Յակոբոսի և եղբայրներուն։
18 Եւ ելաւ գնաց այլուր։ Եւ երբ առաւօտ եղաւ,
մեծ խռովութիւն կար զինուորներուն մէջ թէ
19 արդեօք ի՞նչ եղաւ Պետրոս։ Իսկ Հերովդէս երբ
խնդրեց զնա և չգտաւ, պահապաններն հարցու-
փորձ ընելով հրամայեց սպաննել. և ինքն իջաւ
Հրեաստանէ ի Կեսարիա, և հոն կը կենար։
20 Եւ Հերովդէս սաստիկ թշնամացած էր Տիւ-
բացւոց և Սիդոնացւոց հետ. և նոքա միաբան
հաւանութեամբ եկան անոր, և համոզելով Բա-
գաւորին սենեկապետն դիզասաս հաշտութիւն
կը խնդրէին. քանզի անոնց երկիրը կը կերակ-
21 րուէր Թագաւորին երկրէն։ Եւ որոշեալ օր մը
Հերովդէս Թագաւորական հանդերձն հագած և
ատեանը նստած առնեառանութիւն կ'ընէր ա-
22 նոնց։ Եւ ժողովուրդը կ'աղաղակէր Թէ Աստու-
23 ծոյ ձայն է այդ, և ոչ մարդոյ։ Եւ իսկոյն Տէրո-
ջը հրեշտակը զարկաւ զնա, վասն զի չտուաւ
փառս Աստուծոյ. և որդնայից ըլլալով մեռաւ։
24 Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր և կը բազմանար։
25 Եւ Բառնաբաս և Սօղոս երբ իրենց յանձնաած
պաշտօնը կատարեցին, դարձան Երուսաղեմէ,
առնելով իրենց հետ զՄարկոս որ Ցովհաննէս ևս
կը կոչուէր։

ԳԼ. ԺԳ

1 Եւ եկեղեցիին որ էր յԱնտիոք՝ կային մարգա-
րէք ոմանք և վարդապետք, Բառնաբաս և

Շմաւոն որ Նիգեր կ'անուանուէր, և Ղուկիոս
Կիւրենացի և Մանայէն, Հերովդէ չորրորդապե-
2 տի սննդակիցը, և Սօղոս։ Երբ ասոնք Տէրոջը
պաշտօնին մէջ էին և ծոմ կը պահէին, Հոգին
Սուրբ ըսաւ, Զատեցէք ինձ զԲառնաբաս և զՍօ-
ղոս այն գործին համար, ուր որ ես կոչած եմ
3 զդոսա։ Անոնք ծոմ պահելով և աղօթելով՝
ձեռք դրին անոնց վրայ և ղրկեցին։
4 Եւ անոնք Սուրբ Հոգիէն ղրկուած իջան ի Սե-
5 լեւկիա, և անկէ գնացին նաւով ի Կիպրոս։ Եւ
ի Սաղամինա հասնելով կը քարոզէին Հրեից ժո-
ղովրդանոցներուն մէջ Աստուծոյ խօսքը, և
6 ունէին իբրեւ սպասաւոր։ Եւ
չՓէլեով այն [բոլոր] կղզին մինչև Պափոս, հոն
գտան Հրեայ մոգ մը, սուտ մարգարէ, որոյ ա-
7 նունն էր Բարեյեսուս։ Որ էր փոխանակի բդեշ-
խին հետ որ կը կոչուէր Սերգիոս Պօղոս, այր ի-
մաստուն։ Սա հրաւիրելով զԲառնաբաս և զՍօ-
8 ղոս՝ կամեցաւ լսել Աստուծոյ խօսքը։ Սակայն
անոնց դէմ կեցաւ Եղիմաս մոգ, քանզի այպէս
կը թարգմանուի անոր անունը, որ կ'ուզէր գէտ-
9 եանակ բդեշխին դարձնել ի հաւատոց։ Բայց
Սօղոս, որ և Պօղոս, Հոգւով Սրբով լցուած
10 անկից այլուրեղեն անոր վրայ, Եւ ըսաւ, Ով ա-
մէն խարեբութեամբ և ամէն խորամանկութեամբ
լի, որդի Սատանայի, թշնամի ամէն արդարու-
թեան, պիտի չդադարիս Տէրոջը ուղիղ ճամբա-
11 ները թիւրելէ։ Եւ հիմա Տէրոջը ձեռքն ահա
քու վրադ է, և պիտի ըլլաս կոյր՝ ժամանակ մը
չտեսնելով արեւ։ Եւ իսկոյն անոր վրայ իջաւ մէգ
և խաւար, և չՓէլեով առաջնորդ կը խնդրէր։
12 Անտեսն փոխանակ բդեշխին տեսնելով ասոնք
հաւատաց, մեծապես զարմանալով Տէրոջը վար-
դապետութեան վրայ։
13 Եւ Պօղոս և անոր ընկերներն ելան Պափոսէ,

և եկան ի Պերգէ Պամփիլիայ. բայց Յովհաննէս
14 ապառնելով անդնդմէ դարձաւ յերուսաղէմ. Եւ
անոնք Պերգէէ գնացին և եկան յԱնտիոք Պի-
սիդիայ, և շաբաթ օրը ժողովրդանոցը մանելով
15 նստան։ Եւ երբ օրէնքը և մարգարէք կարդա-
ւեցնուն, ժողովրդապետները յղրկեցին ա-
նոնց և ըսին, Արք եղբարք, եթէ ունիք յոր-
դորական խօսք մը ժողովրդեան, խօսեցէք։
16 Անատեն Պօղոս յոտն կալով շարժեց ձեռքը և
ըսաւ, Արք իսրայելացիք, և դուք որ կը վախ-
17 նաք Աստուծմէ, լսեցէք։ Այս ժողովրդեան Իս-
րայելի Աստուածն ընտրեց մեր հայրերը, և
բարձրացուց ժողովուրդը եգիպտոսի երկրին մէջ
ի պանդխտութեան, և բարձր բազկաւ հանեց
18 զանոնք անկէ։ Եւ իբր քառասնամեայ ժամանակ
19 կերակրեց զանոնք յանապատին։ Եւ քանանու
երկրին մէջ կործանելով եօթն ազգ՝ ժառանգե-
20 ցուց անոնց անոնց երկիրը։ Եւ այնուհետև իբր
չորս հարիւր յիսուն տարի դատաւորները տուաւ
21 անոնց մինչև Սամուէլ մարգարէ։ Եւ յետոյ
խնդրեցին թագաւոր, և Աստուած տուաւ անոնց
Կիսի որդին Ղնաւուղ, Բենիամինի ցեղէն մարդ
22 մը, քառասուն տարի։ Եւ երբ փոխեց զնա,
դԴաւիթ հանեց անոնց թագաւոր, որուն համար
վկայութիւն տալով ըսաւ, Գտայ զԴաւիթ, զորդին Յեսսէայ, իմ սրտիս համեմատ մարդ, որ
23 պիտի կատարէ իմ բոլոր կամքս։ Սորա զաւակէն
Աստուած ըստ խոստման հանեց Իսրա-
24 յելի փրկիչ զԻեսուս։ Եւ մինչդեռ սկսած չէր նա
ըստ պատրաստ, Յովհաննէս քարոզեց յառաջագոյն
Իսրայելի բոլոր ժողովրդեան մկրտութիւնն ա-
25 պաշխարութեան։ Եւ երբ Յովհաննէս կը կատա-
րէր իւր ընթացքը, ըսաւ, Ո՞վ կը կարծէք թէ
եմ. ես Քրիստոսը չեմ, այլ ահա իմ ետևէս կու
գայ նա, որուն ես արժանի չեմ քակել ոտից կօ-

26 շիկները։ Արք եղբարք, որդիք Աբրահամեան
ազգին, և անոնք որ ձեր մէջ երկիւղած են,
27 այս փրկութեան խօսքը ղրկուեցաւ ձեզ։ Քանզի
երուսաղէմ բնակողներն և անոնց իշխանները
չճանչցան զնա, և ոչ մարգարէներուն ձայները
որ ամեն շաբաթ օր կը կարդացուին, այլ կատա-
28 րեցին զանոնք դատապարտելով զնա։ Եւ մահ-
ուան պատճառ մը անգամ չգտանելով խնդրեցին
29 Պիղատոսէ սպաննել զնա։ Եւ երբ կատարեցին
բոլոր գրուածները անոր համար, իջուցանելով
30 փայտէն դրին ի գերեզմանի։ Բայց Աստուած յա-
րոյց զնա մեռելներէն, որ չատ օրեր երևեցաւ
31 անոնց, Որ եկած էին անոր հետ Գալիլեայէ յե-
րուսաղէմ, որ անոր վկաներն են հիմա ժողովրդ-
32 դեան առջև։ Եւ մենք ալ կը քարոզենք ձեզ
33 այն խոստումը որ եղած էր առ հայս, Զոր և
Աստուած կատարեց մեզ որ անոնց որդիքն ենք,
յարուցանելով զՅիսուս, ինչպէս որ երկրորդ
սաղմոսին մէջ ալ գրուած է, Որդի իմ ես դուն,
34 ես այսօր ծնայ զքեզ։ Եւ թէ յարոյց մեռելներէն և պիտի չդառնայ այլ ևս ապականութիւն,
այսպէս ի՛ըսէ թէ Պիտի տամ ձեզ Դաւիթի հա-
35 ւատարիմ սուրբ խոստումները։ Ուստի և ուրիշ
տեղ մէջ ի՛ըսէ, Դուն սրբոյդ պիտի չտաս տես-
36 նել ապականութիւն։ Քանզի Դաւիթ իւր գա-
րտուն մէջ Աստուծոյ կամացը ծառայելով մե-
ռաւ, և դրուեցաւ իւր հայրերուն քով և տե-
37 սաւ ապականութիւն։ Բայց այն զոր Աստուած
38 յարոյց՝ չտեսաւ ապականութիւն։ Ուրեմն յայտ-
նի ըլլայ ձեզ, արք եղբարք, որ ասոր միջոցաւ
39 կը քարոզուի ձեզ մեղաց թողութիւն։ Եւ այն
ամենէն յորոց չկրցաք արդարանալ օրինօք
Մովսիսի, ասով ամէնը որ հաւատայ՝ ի՛արդարա-
40 նայ։ Արդ զգուշացէք, որ չգայ ձեր վրայ այն որ
41 մարգարէներուն մէջ ըսուած է, Նայեցէք, ար-

համարհաղներ, և զարմացէք և ոչնչացէք. քանզի գործ մը պիտի ընեմ ձեր օրերը, այնպիսի գործ մը զոր եթէ ոք պատմէ ձեզ, պիտի չհաւատաք։

42 Եւ երբ դուրս ելան անկէ, *կաղաչէին որ †հետեւեալ շաբաթ՝ ևս նոյն խօսքերը խօսէին ա-
43 նոնց։ Եւ ժողովուրդը երբ արձակեցաւ, Հրեաներէն և նորահաւատ բարեպաշտներէն շատերը կ՚երթային Պօղոսի և Բառնաբայ եւեւէն, որ կը խօսէին անոնց հետ և կը յորդորէին զանոնք հաստատ կենալ միշտ Աստուծոյ շնորհաց մէջ։
44 Եւ հետեւեալ շաբաթի օրը գրեթէ բոլոր քաղաքը
45 ժողովեցաւ լսել Աստուծոյ խօսքը։ Իսկ Հրեայք երբ տեսան այն բազմութիւնը, լցան նախանձու, և Պօղոսի ըսուածներուն դէմ կը խօսէին հակա-
46 ճակելով և հայհոյելով։ Անատեն Պօղոս և Բառնաբաս համարձակեցան և ըսին, Պարտ էր առաջ առ ձեզ խօսիլ Աստուծոյ խօսքը, բայց որովհետեւ դուք կը մերժէք զայն, և արժանի չեք հա-
47 մարիր զձեզ յաւիտենական կենաց, ահա մենք կը դառնանք հեթանոսներուն։ Քանզի Տէրը այսպէս պատուիրած է մեզ։ Թէ զքեզ լոյս հեթանոսաց, որ դուն փրկութեան պատճառ ըլլաս
48 մինչև երկրի ծայրերը։ Ասոնք լսելով հեթանոսք կ՚ուրախանային, և Աստուծոյ խօսքը կը փառաւորէին. և որք յաւիտենական կենաց սահմանուած էին՝ հաւատացին։ Եւ Տէրոջը խօսքը կը
50 տարածուէր բոլոր գաւառը։ Բայց Հրեայք գրգռեցին բարեպաշտ և պատուաւոր կանայք և քաղաքին մեծերը, և հալածանք հանելով Պօղոսի և Բառնաբայ դէմ՝ դուրս ըրին զանոնք ի-
51 րենց սահմաններէն։ Եւ անոնք թօթափելով

*Ո՛մանք, հեթանոսները կ՚աղաչէին
†Կամ, շաբթու մէջ

իրենց ոտից փոշին անոնց դէմ՝ եկան Իկոնիոն։
52 Եւ աշակերտները կը լնուին ուրախութեամբ և Հոգւով Սրբով։

Գլ. ԺԴ

1 Եւ եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք ի միասին մտան Հրէից ժողովրդանոցը, և այնպէս խօսեցան որ հաւատացին Հրեայք և Յունք բազում
2 բիւր։ Բայց չհաւատացող Հրեայք դրդեցին և գրգռեցին ի չարութիւն հեթանոսներուն սիրտը
3 եղբայրներուն դէմ։ Իսկ անոնք չատ ժամանակ հոն կենալով՝ համարձակ կը քարոզէին Տէրոջմ, որ իւր շնորհաց խօսքին կը վկայէր, և նշաններ
4 և հրաշներ ընել կու տար անոնց ձեռօք։ Եւ քաղաքին բազմութեան մէջ երկպառակութիւն եղաւ. ոմանք Հրէից կողմէն եղան, և ոմանք՝ ա-
5 պաքելոց։ Եւ երբ հեթանոսք և Հրեայք իրենց իշխաններովին յարձակեցան անոնց վրայ զանոնք
6 նախատել և քարկոծել, իմանալով փախան Լիկայոնացւոց քաղաքներէն, ի Լիւստրա և ի Դերբէ և շրջակայ տեղեացանք, և հոն կը քարոզէին ա-
7 ւետարանը։ Եւ Լիւստրայի մէջ նստած էր մարդ ոտիւք իւր մօրը որովայնէն կաղ մարդ մը, որ բնաւ
8 քալած չէր։ Սա կը լսեր Պօղոսի խօսքը. և նա սլքն անոր տնկելով և տեսնելով թէ ունէր հաւատք բժշկուելու, բարձր ձայնիւ ըսաւ, Կը ոտիցդ վրայ կանգնէ ուղիղ։ Եւ նա ցատկելով կը
10 քալէր։ Եւ ժողովուրդը երբ տեսան ինչ որ ըրաւ Պօղոս, վերցնելով իրենց ձայնը ըսին Լիկայոներէն, Աստուածները մարդոց նմանուա-
11 ծեալ իջած են առ մեզ։ Եւ դիառնաբաս կը կոչէին Դիոս, և զՊօղոս՝ Հերմէս, քանզի նա էր
12 գլխաւոր խօսողը։ Իսկ քուրմն Դիոսի որ քաղա-

քին առ՚ջև էր՝ ցուլեր և պսակներ բերելով դուռներուն առ՚ջև, բազմութեան հետ կ՚ուզէր
13 զոհ մատուցանել։ Բայց Բառնաբաս և Պօղոս առաքեալք երբ լսեցին, պատառելով իրենց հանդերձները դուրս վազեցին բազմութեան մէջ,
14 կ՚աղաղակէին եւ կ՚ըսէին, Արդ, ընչո՞ւ համար կ՚ընէք այդ բաները։ Մենք ևս կիրք ունեցող մարդիկ ենք իբրև զձեզ, և կը քարոզենք ձեզ
15 որ այդ ունայն բաներէն դառնաք առ Աստուած կենդանի, որ սահմռեց զերկինս և զերկիր և զծով և բոլոր ինչ որ կայ անոնց մէջ։ Որ անցած դարերուն մէջ թողուց բոլոր ազգաց երթալ իրենց ճամբաներըր։ Այսու ամենայնիւ ա-
16 նանց վկայութեան չթողուց զինք, բարերարութեամբ յերկինից *մեզ անձրևներ և պտղաբեր եղանակներ տալով, կերակրովք և ուրախու-
17 թեամբ †սիրտերը լնլով։ Եւ այս բաներն ըսելով հազիւ կրցան զադրեցունել ժողովուրդները չմատուցանել անոնց զոհ։
18 Սակայն հասան Հռնոյք Անտիոքէ և Իկոնիոնէ և համոզեցին ժողովուրդը, և զՊօղոս քարկոծեցին և քաղաքէն դուրս քաշեցին կարծելով
19 թէ մեռած էր։ Բայց աշակերտները երբ անոր բոլորտիքը պատեցին, երթալ մտան քաղաքը, և ի վաղիւ անդր Բառնաբասի հետ երթալ ի Դերբէ։
20 Եւ անոնք այն քաղաքին մէջ աւետարանը քարոզելով, և աշակերտ ընելով չատերը դարձան
21 ի Լիւստրա և ի Կոնիոն և ի Անտիոք, Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և յորդորելով հաստատ մնալ ի հաւատս. և ՝ըսելէն թէ շատ նեղութեամբ պարտ է մեզ մտնել Աստուծոյ
22 թագաւորութիւնը։ Եւ երբ անոնց իւրաքանչիւր եկեղեցւոյն ձեռնադրեցին երէցներ, ծոմով աղօ-

*Ոմանք, ձեզ †Ոմանք, ձեր

թելով յանձնեցին զանոնք Տէրոջը որուն հա-
23 ւատացած էին։ Եւ Պիսիդիայի մէջ չրջելով եկան
24 ի Պամփիւլիա։ Պերգէի մէջ ևս Տէրոջը խօսքը
25 խօսելէն ետքը իջան յԱտալիա։ Եւ անտի նաւով
գնացին յԱնտիոք, ուստի Աստուծոյ շնորհաց յանձնուած էին այն գործին համար զոր կատա-
26 րեցին։ Եւ երբ եկան, եկեղեցին ժողովելով պատմեցին ինչ որ Աստուած ըրած էր անոնց
27 հետ, և թէ բացած էր հեթանոսներուն հաւատոյ դուռն։ Եւ հոն շատ ժամանակ կեցան աշակերտներուն հետ։

Գլ. Ժե

1 Եւ ոմանք իջնելով Հրէաստանէ կը սորվեցուէին եղբայրներուն թէ, եթէ Մովսիսէ սահմանուած սովորութեան համեմատ չթլփատուիք, չէք կըր-
2 նար փրկուիլ։ Ուստի երբ Պօղոս և Բառնաբաս չատ հակառակութիւն և վէճ ըրին անոնց դէմ, որոշուեցաւ որ Պօղոս և Բառնաբաս և անոնցմէ ոմանք ելլեն Երուսաղէմ առ առաքեալս և առ-
3 երիցունս այս խնդրոյն համար։ Եւ անոնք եկեղեցիէն ճամբայ դրուած, անցնելով Փիւնիկէէ և Սամարիայէ, կը պատմէին հեթանոսաց դառնալը, և մեծ ուրախութիւն կը տային բոլոր եղբայրներուն։
4 Եւ երբ հասան Երուսաղէմ, ընդունուեցան եկեղեցիէն և առաքեալներէն և երէցներէն, և պատմեցին ինչ որ Աստուած ըրած էր անոնց
5 հետ։ Փարիսեցւոց աղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան, և կ՚ըսէին թէ Պարտ է թլփատել զանոնք և պատուիրել պահել Մովսիսի օրէնքը։
6 Եւ առաքեալք և երիցունք ժողովեցան խոր-
7 հել այս բանին վրայ։ Եւ շատ վիճաբանութենէ ետքը յոտն եկաց Պետրոս և ըսաւ անոնց, Արք եղբարք, դուք գիտէք որ առ՚աջին օրերէն

Աստուած ընարեց վէս մեր մէջ, որ իմ բերա-
նով հեթանոսները լսէին աւետարանին խօսքը
8 և հաւատային։ Եւ սրտագիտն Աստուած վկայեց
անոնց՝ տալով անոնց զՀոգին Սուրբ ինչպես և
9 մեզ։ Եւ խտրութիւն չըրաւ մեր և անոնց մէջ,
10 հաւատով անոնց սիրտերը մաքրելով։ Ուստի
հիմա ընդէ՞ր կը փորձէք զԱստուած՝ աշակերա-
ներուն պարանոցին վրայ այնպիսի լուծ դնելով,
զոր ոչ մեր հայրերը և ոչ մենք կրցանք վերցու-
11 նել։ Բայց կը հաւատանք որ Տէր *Յիսուսի շնոր-
հօք կը փրկուինք մենք, ինչպես և անոնք։
12 Եւ բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ և կը լսէր
Բառնաբայ և Պօղոսի, որ կը պատմէին թէ Ա-
ստուած որչափ նշաններ և հրաշներ ըրած էր հե-
13 թանոսաց մէջ անոնց ձեռօք։ Եւ երբ անոնք
դադրեցան խօսելէ, Յակոբոս պատասխան
առաւ և ըսաւ, Արք եղբարք, լսեցէք ինձ.
14 Շմաւոն պատմեց թէ Աստուած ինչպես առաջ
այցելութիւն ըրաւ, որ հեթանոսներէն ժողո-
15 վուրդ առնուր իւր անուան համար։ Եւ յայսմ
նաև մարգարէից խօսքերը միաբան են, ինչպէս
16 որ գրուած է, Ա յսուհետև. պիտի դառնամ և
դարձեալ պիտի շինեմ Դաւթի ինկած խրանը և
վերստին պիտի շինեմ անոր կործանած տեղերը
17 և կանգնեմ զնա. Որ մնացեալ մարդիկ խնդրեն
Տէրը, և բոլոր հեթանոսները որոց վրայ կոչ-
ուած է իմ անունս, կ'ըսէ Տէրը որ կ'ընէ այս
18 ամէնը։ Յայտնի է †Աստուծոյ իւր բոլոր գոր-
19 ծերն աշխարհիս սկիզբէն հետէ։ Վասն որոյ ես
յարմար կը դատեմ նեղութիւն չտալ անոնց որ
20 հեթանոսներէն Աստուծոյ կը դառնան. Այլ
թուղթ գրել անոնց որ են կենան կուռ պղծ-
ութիւններէն և պոռնկութենէ և ի հեղձուցելոյ

*Յիսուսի Քրիստոսի †Յիսուսի, Տէրոջը

21 և յարևնէ, Քանզի Մովսէս հին դարերէն հետէ
ամէն քաղաքի մէջ ունի որ կը քարոզեն զնա, և
ժողովրդանցներու մէջ ամէն շաբաթ օր կը
կարդացուի։
22 Անատեն բարւոք թուեցաւ առաքելոց և երէց-
ոնց, բոլոր եկեղեցւոյ հանդերձ, իրենցմէ մար-
դիկ ընտրելով զրկել յԱնտիոք Պօղոսի և Բառ-
նաբայ հետ, զՅուդա, անուանեալն Բարսաբաս,
և զՍիղա, որ գլխաւոր մարդիկ էին եղբայրնե-
23 րուն մէջ։ Եւ անոնց ձեռօք խոստ զրկեցին
այսպէս գրուած.
Առաքեալք և երիցունք և եղբարք, առ եղ-
բարս որ հեթանոսներէն էք՝ յԱնտիոք և ի Սիւ-
24 րիա և ի Կիլիկիա՝ ողջոյն։ Որովհետև լսեցինք
թէ ոմանք մեզ ելլելով խռովեցուցած են զձեզ
բանիւք և ձեր անձերը խախտած են ըսելով թէ
պարտ է թլփատուիլ և պահել օրէնքը, որոց
25 մենք չպատուիրեցինք, Մեզ, վճարանութեամբ
ժողովելոց, բարւոք թուեցաւ մարդիկ ընտրե-
լով զրկել ձեզ մեր սիրելիներուն, Բառնաբայ և
26 Պօղոսի, հետ, Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անուան համար իրենց անձերը մատնած մարդիկ
27 են։ Ուստի զրկեցինք զՅուդա և զՍիղա, որ բե-
28 րանացի ըսեն չէ՞ նոյն բաները։ Քանզի բարւոք
թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ և՝ ասկէ բեռ
29 չդնել ձեր վրայ բաց ի սա կարևորներէն, Որ եւ
կենաք կուռ զոհուածէ և արեան և ի հեղձու-
ցելոյ և պոռնկութենէ. այս բաներէն զձեզ նե՛ղ
պահէք, ազէկ պիտի ընէք։ Ողջ լերուք։
30 Եւ անոնք յուղարկուելով գնացին յԱնտիոք,
31 և ժողովուրդը ժողովելով տուին Թուղթը։ Եւ
երբ կարդացին, ուրախացան այն մխիթարու-
32 թեան վրայ։ Իսկ Յուդա և Սիղա, որք և մար-
գարէ էին, շատ խօսքերով յորդորեցին զեղբարս
33 և հաստատեցին։ Եւ ժամանակ մը հոն կենալէն

Հաքը՝ խաղաղութեամբ յուզարկուեցան եղբայրք
34 ներէն դառնալ առ առաքեալս։ Բայց Շիղասի
35 բարւոք թուեցաւ հոն մնալ։ Գողոս և Բառնաբաս ևս կը կենային յԱնտիոք, և ուրիշ շատերու հետ կը սորվեցուներէն և կը քարոզէին Տէրոջը խօսքը։
36 Եւ քանի մը օր ետքը Գողոս ըսաւ Բառնաբասի, Դառնանք և այցելութիւն ընենք եղբայրներուն՝ իւրաքանչիւր քաղաք ուր Տէրոջը խօսքը քարոզեցինք, և թէ ինչպէս են, իսկ Բառնաբաս կ՚ուզէր առնուել նաև Յովհաննէս, որ Մարկոս կը կոչուէր։ Բայց Գողոս արժան չհամարեցաւ Պամփիլիոյ մէջ իրենցմէ զատուող և իրենց հետ գործի չեկողն առնուլ իրենց հետ։ Այսպէս ուռնչ
39 Ձի գժտութիւն եղաւ, մինչև իրարմէ զատուեցան։ և Բառնաբաս առաւ զՄարկոս և նաւով
40 գնաց ի Կիպրոս։ Իսկ Գողոս ընտրեց զՇիղաս և եղաւ, Աստուծոյ շնորհացը յանձնուելով եղբայրներէն, և կը չրջէր ի Սիւրիա և ի Կիլիկիա և կը հաստատէր եկեղեցիները։

Գլ. ԺԶ

1 Եւ հասաւ ի Դերբէ և ի Լիւստրա. և ահա հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անուն, որ հաւատացեալ Հրեայ կնոջ որդի էր, և հայրը Յոյն էր։
2 Որ և Լիւստրացի և Իկոնացի եղբայրներէն բարի
3 վկայուած էր։ Գողոս կամեցաւ որ սա ևս հետ ելլէր, և առաւ Թլփատեց զնա Հրեից համար որ այն տեղերն էին, քանզի ամէնքը գիտէին թէ
4 անոր հայրը Յոյն էր։ Եւ քաղաքներէն անցնելով, առաքեալներէն և երէցներէն որ Երուսաղէմ էին ապսպրուած հրամանները կ՚աւանդէին
5 անոնց պահել։ Եւ եկեղեցիները կը հաստատուէին ի հաւատս, և անոնց թիւը կ՚աւելնար օր ըստ օրէ։

6 Եւ չրջեցան ի Փռիւգիա և Գաղատացւոց կողմերը, և Սուրբ Հոգին արգելուելով որ Ասիոյ
7 Ձոյ խօսքը չխօսին յԱսիա, երբ Միւսիոյ կողմերը եկան, կը ջանային գնալ ի Բիւթանիա երթալ. և
8 [Յիսուսի] Հոգին չՅողուց անոնց։ Եւ Միւսիոյ
9 քովէն անցնելով իջան ի Տրովադա։ Եւ հոն գիշերը տեսիլ երևեցաւ Գողոսի. Մակեդոնացի մարդ մը կեցած կ՚աղաչէր անոր և կ՚ըսէր, Մա-
10 կեդոնիա անցիր և օգնէ մեզ։ Եւ երբ տեսաւ այն տեսիլը, իսկ և իսկ կամեցանք ելլել ի Մակեդոնիա, հասկնալով թէ Տէրը կը հրաւիրէր զմեզ աւետարանը քարոզել անոնց։
11 Ուստի ելանք Նաւով Տրովադայէ և գնացինք ուղիղ դէպ ի Սամոթրակէ, և ի վաղուն՝ ի Նէապոլիս, Եւ անկէ՝ ի Փիլիպպէ, որ է Մակեդոնիոյ
12 Հէ մասին գլխաւոր քաղաքը՝ *կողոնիա։ և քանի մը օր կեցանք այն քաղաքը։ Եւ չաբաթ
13 օրը քաղաքէն դուրս ելանք գետեզերք քով ուր սովորութիւն ունէին աղօթել, և նստեցանք կը խօսեցանք ժողովեալ կանանց։ Եւ Թիւատիր քաղաքէն Ծիրանավաճառ կին մը Լիդիա անուն, որ էր երկիւղած, կը լսէր. զորոյ սիրտը բացաւ Տէրը
15 ուշադրութիւն ընել Գողոսի խօսքերուն։ Եւ երբ մկրտուեցաւ ինք և իւր տունը, աղաչեց և ըսաւ, Եթէ Տէրոջը հաւատացեալ կը համարիք զիս, մտէք իմ տունս, բնակեցէք։ Եւ սոխակելով տարաւ զմեզ։
16 Եւ եղաւ որ մինչ մենք աղօթքի կ՚երթայինք, աղախին մը պատահեցաւ մեզ որ ունէր հարցուկ ոգի, որ գուշակութիւն ընելով չատ շահ կը բե-
17 րէր իւր տերանց։ Սա Գողոսի և մեր հետևէն կ՚ելլալով կ՚աղաղակէր և կ՚ըսէր, Այս մարդիկ Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որ փրկու-

*Այսինքն՝ գաղթականաց տեղ

18 Թեան ճամբան կը քարոզեն *մեղ, եւ կ'ըներ զայս
չաս օրեր. իսկ Պօղոս զայրանալով դարձաւ և
ըսաւ այն ոգւոյն, Ցանուն Յիսուսի Քրիստոսի
կը հրամայեմ քեզ, Ել ատկէ։ Եւ նոյնժամայն
19 եղաւ։ Երբ տեսան անոր տէրերը որ կորեցաւ
իրենց շահուն յոյսը, բռնեցին Պօղոս և ընկեր
20 և ի հրապարակ ձգեցին իշխաններուն առջև։ Եւ
տարին զանոնք զօրագլուխներուն քով և ըսին,
Այս մարդիկ կը խռովին մեր քաղաքը. իրենք
21 Հրեայ են, եւ այնպիսի սովորութիւններ կը քա-
րոզեն, զորս չէ արժան մեզ ընդունել և ոչ ընել,
22 քանզի Հռովմայեցի ենք։ Եւ բազմութիւնը դիմե-
ցաւ անոնց վրայ. և զօրագլուխները բանուո-
թեամբ հանեցին անոնց հանդերձները, և հրա-
23 մայեցին ծեծել զանոնք։ Եւ անոնց շատ վէրքեր
տալէն ետքը ղրկին բանտ, պատուիրելով բան-
24 տապետին զգուշութեամբ պահել զանոնք։ Եւ
նա այսպէս հրաման առնելով՝ ղրաւ զանոնք ներ-
քին բանտը և անոնց ոտուընները պնդեց ի կո-
ճեղս։
25 Եւ կէս գիշերին Պօղոս և Շիղա կ'աղօթէին և
կ'օրհնէին զԱստուած, և բանտարկեալք ևս կը
26 լսէին անոնց։ Եւ յանկարծակի մեծ շարժ եղաւ,
այնպէս որ բանտին հիմերը սասանեցան, և իս-
կոյն բոլոր դուռները բացուեցան, և ամենուն
27 կապերն արձակուեցան։ Եւ բանտապետը երբ
արթնցաւ և բանտին դուռները բացուած տես-
աւ, Թուրը քաշեց և պիտի սպաննէր զինքը,
28 կարծելով Թէ կապուածները փախած էին։ Բայց
Պօղոս բարձր ձայնիւ կոչեց և ըսաւ, Վնաս մի'
29 ըներ անձիդ, քանզի ամենքս հոս ենք։ Եւ նա
խնդրեց ջուազ և վազեց ի ներքս, և դողալով
30 ինկաւ Պօղոսի և Շիղայի առջև։ Եւ դուրս բերե-

*Ոմն, ձեզ

լով զանոնք ըսաւ, Տէրերք, ի՞նչ ընել պարտ է
31 ինձ որ փրկուիմ։ Եւ անոնք ըսին, Հաւատա Տէր
Յիսուս Քրիստոսի, և պիտի փրկուիս դու և
32 տունդ։ Եւ խօսեցան Տէրոջը խօսքն անոր և ա-
33 մենուն որ անոր տան մէջ էին։ Եւ առաւ զա-
նոնք գիշերուան նոյն ժամուն և լուաց անոնց
վէրքերը, և մկրտուեցաւ ինք և
34 բոլոր իրենները։ Եւ զանոնք իւր տունը տանելով
անոնց առջև սեղան դրաւ, և բոլոր տան ուրախ
35 եղաւ հաւատալով Աստուած։ Եւ երբ առաւօտ
եղաւ, զօրագլուխները ղրկեցին սպասաւորներն
36 և ըսին, Արձակէ այդ մարդիկը։ Եւ բանտապետը
պատմեց այն խօսքերը Պօղոսի, Թէ Զօրագլուխ-
ները ղրկեցին որ արձակուիք. ուստի հիմա ելէք
37 և գնացէք խաղաղութեամբ։ Բայց Պօղոս ըսաւ
անոնց, Մեզ յայտնապես ծեծելով որ չդատա-
պարտուած Հռովմայեցի մարդիկ ենք, ղրկին
բանտ, և հիմա ի ծածուկ կը հանեն զմեզ։ ոչ
այդպէս, այլ թող իրենք գան և հանեն զմեզ։
38 Եւ սպասաւորները պատմեցին զօրագլուխներուն
այն խօսքերը։ և անոնք երբ լսեցին Թէ Հռով-
մայեցի էին, վախցան, և եկան քաղցրութեամբ
39 խօսեցան անոնց հետ։ Եւ դուրս հանելով կ'ա-
40 ղաչէին այն քաղաքէն երթալ։ Եւ անոնք բան-
տէն ելլելով մտան Լիդիայի դռնէը, և տեսնելով
եղբայրները մխիթարեցին զանոնք և գնացին։

ԳԼ. ԺԷ

1 Եւ չրջելով զԱմփիպոլիս և զԱպողոնիա՝ եկան
ի Թեսաղոնիկէ, ուր էր Հրէից ժողովրդանոցը։
2 Եւ Պօղոս ըստ սովորութեան իւրում մտաւ
անոնց մէջ, և երեք շաբաթ օր խօսեցաւ անոնց
3 հետ ի Գրոց, Մեկնելով և անոնց առջև դնելով
Թէ պարտ եր Քրիստոսի չարչարուիլ, և յառնել

ի մեռելոց, և Թէ Այն Յիսուս զոր ես կը քարո-
4 զեմ ձեզ, ըսաւ, Քրիստոսն է։ Եւ անոնցմէ ո-
մանք հաւատացին և միացան Պօղոսի և Շիղասի
հետ. երկիւղած Յոյներէն ևս մեծ բազմութիւն,
5 և երեւելի կանանց ևս ոչ սակաւք։ Բայց չհա-
ւատացող Հրեայք նախանձեցան, և առնելով քա-
նի մը գաւառականաց անօրէն մարդիկ ադմուկ
հանեցին և խռովեցին քաղաքը, և յասոնի տան
վրայ յարձակելով կ'ուզէին ժողովոյն առջև տա-
6 նել զանոնք։ Եւ երբ չգտան զանոնք, ղՅասոն և
քանի մը եղբայրներ քաշելով տարին քաղաքա-
պետներուն առջև, աղաղակելով Թէ Անոնք որ
7 զաշխարհ խռովեցին հոս ևս հասած են. Զորս
Յասոն ընդունած է. և ասոնք ամէնքը կայսեր
հրամանաց դէմ կը գործեն, բանլով Թէ ուրիշ
8 թագաւոր մը կայ Յիսուս։ Եւ խռովեցուցին ժո-
ղովուրդը և քաղաքապետները որ կը լսէին ա-
9 սոնք։ Բայց երբ առին երաշխաւորութիւն Յա-
10 սոնէ և ուրիշներէն, արձակեցին զանոնք։ Իսկ
եղբայրները վերջապէս գիշերայն ղրկեցին զՊօղոս
և զՇիղաս ի Բերիա. որ հոն հասնելով գնացին
11 Հրեից ժողովրդանոցը։ Բան Թեսաղոնիկէի մէջ
եղողներէն ազնուագոյն էին ասոնք, որ Ա.ԳՐՈՒԹ-
ԻՒՆ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընկալան,
և ամէն օր կը քննէին գիրքը Թէ այս բաներն
12 այսպէ՞ս են։ Ուստի անոնցմէ շատ հաւատացին,
և պատուական Յոյն կանանց և արանց մէջ կա-
13 յին ոչ սակաւ հաւատացողներ։ Բայց երբ իմա-
ցան Թեսաղոնիկեցի Հրեայք Թէ Բերիոյ մէջ ևս
Աստուծոյ խօսքը քարոզուեցաւ Պօղոսէ, հոն ևս
14 եկան և գրգռեցին ժողովուրդը։ Անասնեղ-
բայրները ղրկեցին վարդապետի զՊօղոս երթալ
մինչև ծովեզրը. բայց Շիղաս և Տիմոթէոս մնացին
15 հոն։ Եւ անոնք որ զՊօղոս կը տանէին՝ մինչև
Աթենք բերին զնա. և հրաման առնելով առէ շէ-

ղայի և Տիմոթէոսի համար վազվզակի գնալ
առ նա, գնացին։
16 Եւ մինչ Պօղոս անոնց կը սպասէր Աթէնք,
անոր հոգին անհանդիստ էր ի նմա, վասն զի
կը տեսնէր քաղաքը բոլորովին ընկղմեալ ի կա-
17 պաւտութեան։ Ուստի ժողովրդանոցին մէջ կը
խօսէր Հրեից և բարեպաշտ մարդոց, և ամէն օր
18 հրապարակներուն մէջ որոց և կը հանդիպէր։ Եւ
Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներէն ո-
մանք կը վիճէին անոր հետ. և ոմանք կ'ըսէին,
Ի՞նչ ըսել կ'ուզէ այս սերմանաբաղդը։ Եւ այլք
կ'ըսէին, Կերևի Թէ օտար աստուածներու քա-
րոզիչ է. քանզի զՅիսուս և յարութիւնը կ'աւե-
19 տարաներ անոնց։ Եւ առնելով զնա տարին Յա-
րիսպագոս, և կ'ըսէին, Կրնա՞նք իմանալ Թէ
ինչ է այդ նոր վարդապետութիւնը զոր դուն
20 կ'ըսես. Քանզի օտար բաներ կը բերես մեր ա-
կանջներուն. ուրեմն կ'ուզենք իմանալ Թէ ինչ
21 պիտի ըլլան անոնք։ Քանզի Աթենացիք ամէնքը,
և հոն գանուող օտարականք, ուրիշ բանի չէին
պարապեր, բայց միայն ըսել կամ լսել նոր բան։
22 Անատեան Պօղոս Արիսպագոսի մէջ կեցաւ և
ըսաւ, Արք Աթենացիք, ամէն կողմանէ կրօնա-
23 սէր յոյժ կը տեսնեմ զձեզ։ Քանզի ես չրջելով
և զննելով ձեր պաշտամունքը գտայ բագին մի,
որոյ վրայ գրուած էր ԱՆԾԱՆՕԹԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ.
ուստի զոր դուք չճանչնալով կը պաշտէք, ես
24 զնոյն կը քարոզեմ ձեզ։ Աստուած որ ստեղծեց
զաշխարհ և զամենայն որ ի նմա, նա լինելով Տէր
երկնից և երկրի՝ ոչ ձեռագործ տաճարներու մէջ
25 կը բնակի, Եւ ոչ մարդոց ձեռօք կը պաշտուի
իբրև բանի մը կարօտ. քանզի ինք կու տայ ա-
26 մենուն կեանք և չունչ և ամենայն ինչ. Եւ ի մի
արենէ ըրաւ բոլոր մարդոց ազգերը որ բնակին
բոլոր երկրի երեսին վրայ, և հաստատեց որոշ-

ուած ժամանակները, և անոնց ընակութեան սահ-
27 մանները՝ խնդրել զԱստուած, Որ թերևս խարխա-
փելով գտնէին զնա. թէպէտև չէ նա հեռու մեր
28 իւրաքանչիւրէն. Քանզի անով կ'ապրինք և կը
շարժինք և կանք, ինչպէս որ ձեր բանաստեղծ-
ներէն ոմանք ըսին, Քանզի մենք նորա ցեղէն իսկ
29 ենք. Ուստի որովհետև Աստուծոյ ցեղէն ենք,
չէ պարտ մեզ այնպէս համարել թէ Աստուածու-
թիւնը նման է ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի,
որ մարդու ճարտարութեամբ և խելօք քանդակ-
30 ուած է. Արդ Աստուած տգիտութեան ժամա-
նակներն անտես առնելով հիմա ամէն տեղ կը
31 պատուիրէ բոլոր մարդոց ապաշխարել. Քանզի
ինք սահմանեց օր մը, յորում պիտի դատէ զաշ-
խարհս արդարութեամբ այն մարդուն ձեռօք
զոր որոշեց և ամենուն հաւատացուց յարուցա-
նելով զնա ի մեռելոց.
32 Երբ լսեցին մեռելոց յարութիւնը, ոմանք
ծաղր կ'ընէին, ոմանք ալ կ'ըսէին, Այդ բանին
33 համար ուրիշ անգամ լսենք քեզ. Ու այսպես
34 Պօղոս անոնց մէջէն ելաւ. Սակայն ոմանք անոր
յարելով հաւատացին, ընդ որս էր Դիոնեսիոս
Արիսպագացի և Դամարիս անուն կին մը և անոնց
հետ ուրիշներ ևս.

Գլ. ԺԸ

1 Ապա յետոյ Պօղոս մեկնելով Աթենքէ՝ եկաւ
2 ի Կորնթոս, Եւ գտաւ Հրեայ մին Ակիւղաս անուն,
Ծոնդեացի Պոնտացի, որ իւր կնոջ Պրիսկիլլայ հետ
նոր եկած էր Յիտալիոյ, վասն զի Կղովդիոս հրա-
մայած էր բոլոր Հրեից հեռանալ Հռովմէ, և ա-
3 նոնց գալ գնաց. Եւ որովհետև համարուեստ էր,
կեցաւ անոնց գալ և կը գործէր, քանզի ար-
4 ուեստիւ խորանակար էին. Եւ ամէն շաբաթ օր

կը խօսէր ժողովրդանոցին մէջ, և կը համոզէր
5 Հրեաները և Յոյները. Եւ երբ Շիղա և Տիմոթէոս
իյնան Մակեդոնիայէ, Պօղոսի հոգին եռանդով
վառուած ըլլալով, վկայութեամբ կը հաստատէր
6 Հրէից թէ Յիսուս է Քրիստոսն. Եւ երբ անոնք
դէմ կեցան և կը հայհոյէին, հանդերձները թօ-
թափելով ըսաւ անոնց, Արիւնձեր ի գլուխ ձեր,
ես անպարտ եմ. այսուհետև հեթանոսաց պիտի
7 երթամ. Եւ անկէ երթալով մտաւ ի տուն ու-
րումն, որոյ անունն էր *Յուստոս, աստուածա-
8 պաշտ, որոյ տունը կից էր ժողովրդանոցին. Եւ
Կրիսպոս ժողովրդապետն իւր բոլոր տանն հաւա-
տաց ի Տէր. և Կորնթացիներէն չատեր լսե-
9 լով հաւատացին, և մկրտուեցան. Եւ գիշերը
տեսլեան մէջ ըսաւ Տէրը Պօղոսի, Մի՛ վախնար,
10 այլ խօսէ և լուռ մի՛ կենար, Քանզի ես քեզի հետ
եմ, և ոչ ոք դէմ պիտի ելլէ քեզ՝ վնաս հասու-
ցանել քեզ. քանզի այս քաղաքին մէջ չատ ժո-
11 ղովուրդունիմ ես. Եւ կեցաւ հոն տարի մը և
վեց ամիս, և կը սորվեցուներ Աստուծոյ խօսքն
անոնց մէջ.
12 Եւ Ագայիոյ բդեշխի փոխանակին Գաղիոնի օ-
րերը Հրեայք միաբանելով դէմ ելան Պօղոսի և
13 տարին զնա յատեան, Ըսելով թէ Սա կը հրա-
պուրէ զմարդիկ արուեստով օրինաց պաշտել զԱս-
14 տուած. Եւ երբ Պօղոս պատրաստ էր բանալ իւր
բերանը, Գաղիոն ըսաւ Հրէից, Եթէ անիրաւու-
թեան կամ չար գործի մը համար ըլլար, ով
15 Հրեայք, արժան էր ինձ լսել ձեզ. Բայց եթէ
վէճը խօսքի և անուանց և ձեր օրինաց վրայ է,
դուք ձեզէն տեսէք. քանզի ես այդպիսի բանե-
16 րու դատաւոր ըլլալ չեմ ուզեր. Եւ զանոնք մեր-
17 ժեց տուեցէն. Ամառեն բոլոր Յոյները բռնե-

*Յուստ, Տիտոս Յուստոս

ցին զԱսթենէս ժողովրդապետ և առին զնա առջև
կը Գեհէնին. և այս բաներուն վրայ Գալիոն ընաւ
հոգ չէր ըներ։
18 Եւ Պօղոս տակաւին չատ օրեր հոն մնալէն
ետքը, եղբայրներէն հրաժարելով նաւեց դէպ ի
Սիւրիա, և անոր հետ նաև Պրիսկիլլա և Ակիւ-
ղաս, որ գլուխը փոքրած էր ի կենքրա, քանզի
10 ուխտադիր էր։ Եւ երբ Եփեսոս հասաւ, հոն թո-
ղուց զանոնք, և ինք ժողովրդանոցը մտնելով
20 կը խօսէր Հրէից հետ։ Եւ կ'աղաչէին զնա աւելի
ժամանակ մնալ իրենց քով, բայց չհաւատ յանձն
21 Ա՛յլ հրաժարեցաւ անոնցմէ ըսելով, *Պարտ է
անչուշտ այս առաջիկայ տօնը կատարել Երու-
սաղէմ, բայց՝ Աստուծոյ կամքը դարձեալ կը
դառնամ առ ձեզ։ Եւ Եփեսոսէ ճամբայ ելաւ։
22 Նաւով։ Եւ հասնելով ի Կեսարիա՝ ելաւ Երուսա-
ղէմ, և ողջոյն տուաւ Եկեղեցւոյն, ջետոյ իջաւ
23 Անտիոք։ Եւ ժամանակ մը հոն կենալէն ետքը
ելաւ, և կը շրջէր կարգաւ Գաղատացւոց երկիրը
և Փռիւգիա և կը հաստատէր բոլոր աշակերտ-
ները։
24 Եւ Ապողոս անուն ոմն Հրեայ, ծննդեամբ Ա-
ղեքսանդրացի, այր ճարտասան, որ զօրաւոր
25 էր Գրոց, եկաւ Եփեսոս։ Սա Տէրոջը
ճամբուն մէջ վարժուած էր, և ունենալով ջերմե-
ռանդ հոգի՝ կը խօսէր և կը սորվեցնէր ճշդու-
թեամբ Տէրոջը վրայ, բայց ինք գիտէր Յովհան-
26 նու մկրտութիւնը միայն։ Սա սկսաւ խօսել հա-
մարձակ ժողովրդանոցին մէջ։ Եւ երբ Ակիւղաս
և Պրիսկիլլա լսեցին անկէ, առին զնա իրենց քով
և աւելի ճշդիւ ի մտցուցին անոր Աստուծոյ ճամ-
27 բան։ Եւ երբ կամեցաւ նա երթալ Աքայիա,
եղբայրները քաջալերեցին զնա, և գրեցին աշա-

*Ոմանք՝ կոչին

կերտներուն ընդունել զնա, որ հոն հասնելով
չատ օգտակար եղաւ հաւատացեալոց՝ շնորհօք։
28 Քանզի հրապարակաւ կը յանդիմանէր աստիկ
ղՀրեայս, ցուցնելով ի Գրոց Թէ Յիսուս է Քրիս-
տոսն։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մինչ Ապողոս էր ի Կորնթոս, Պօղոս չրջելով
վերի կողմերը եկաւ Եփեսոս, և գտնելով ա-
2 չակերտներէն զոմանս՝ Բսաւ անոնց, երբ հաւա-
տացիք, աւիշ արդեօք ղՀոգին Սուրբ։ Եւ ա-
նոնք ըսին անոր, Բայց մենք լսած անգամ չենք
3 Թէ Սուրբ Հոգի կայ։ Եւ բսաւ անոնց, Ապա ին-
չո՞վ մկրտուեցաք։ Եւ անոնք ըսին, Յովհաննու
4 մկրտութեամբ։ Եւ Պօղոս բսաւ, Յովհաննէս
մկրտեց ապաշխարութեան մկրտութեամբ, ըսե-
լով ժողովրդեան հաւատալ անոր որ իրմէ ետքը
5 պիտի գար, այսինքն Յիսուսի Քրիստոսի։ Եւ երբ
6 լսեցին, մկրտուեցան Տէր Յիսուսի անուամբ։ Եւ
Պօղոս երբ անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հո-
գին եկաւ անոնց վրայ, և կը խօսէին լեզուներ
7 և կը մարգարէանային։ Եւ այն բոլոր մարդիկ
8 էին իրը երկոտասան։ Եւ ժողովրդանոցը մտնե-
լով, երեք ամիս համարձակութեամբ կը խօսէր
Աստուծոյ թագաւորութեան վրայ և կը համո-
9 զէր։ Իսկ երբ ոմանք կը յամառէին և դէմ կը
դնէին բարկութեան առջև բամբասելով այն
ճամբան, հեռացաւ անոնցմէ և զատեց աշա-
կերտները, և ամէն օր կը խօսէր Տիւրաննայ ու-
10 րումն դպրատան մէջ։ Եւ այս տեւեց երկու տա-
րի, մինչև բոլոր Ասիա բնակող Հրեայք և Յոյնք
11 լսեցին *Տէրոջը խօսքը։ Եւ Աստուած նշանաւոր

*Ոմանք՝ Տէր Յիսուսի

12 հրաշներ կ'ընէր Պօղոսի ձեռօք. Այնպէս որ ա-
նոր մարմինէն թաչկինակ և վարչամակ կը տանէին
հիւանդներուն, և կը բժշկուէին իրենց ցաւերէն,
13 և չար ոգիները կ'ելլէին։ Բայց ասասնդական
Հրեաներէն ոմանք որ երդմնեցուցիչ էին *յան-
դգնեցան Տէր Յիսուսի անունը կոչել անոնց
վրայ որ ունէին չար ոգիներ, և կ'ըսէին,
կ'երդմնեցունենք զձեզ Յիսուսիւ, զոր Պօղոս կը
14 քարոզէ։ Եւ ցոյս ընողներն էին Հոբին որդիք
15 Սկեւայ, Հրեայ քահանայապետի։ Իսկ չար ոգին
պատասխան տուաւ և ըսաւ, ԶՅիսուս կը ճանչ-
16 նամ և զՊօղոս գիտեմ, բայց դուք ո՞վ էք։ Եւ
այն մարդը յորում էր չար ոգին՝ վազելով ա-
նոնց վրայ բռնեց զանոնք և յաղթեց, մինչև
դուրս փախան այն տունէն մերկ և վիրաւոր։
17 Եւ այս յայտնի եղաւ Եփեսոսի մէջ բնակող բո-
լոր Հրէից և Ցունաց. և ահ ինկաւ անոնց ամե-
նուն վրայ, և Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր։
18 Եւ հաւատացեալներէն շատերը կու գային, և կը
խոստովանէին և կը պատմէին ինչ որ ըրած էին։
19 Եւ կախարդութեան հետևողներէն շատերը բե-
րելով իրենց գիրքերը կ'այրէին ամենուն առջև.
և հաշուեցին անոնց գինը և գտան յիսուն հա-
20 զար արծաթի։ Այսպէս կ'աճէր և կը զօրանար
Տէրոջը խօսքը մեծապէս։
21 Եւ երբ ասոնք կատարուեցան, Պօղոս դրաւ ի
մտի չրջելով ի Մակեդոնիա և Յունաստան երթալ
յերուսաղէմ. և կ'ըսէր Թէ Հոն երթալէ ետքը
22 պարտ է ինձ դՀռոմ ևս տեսանել։ Եւ իւր պաշ-
տօնեաներէն երկուքը, զՏիմոթէոս և զերաստոս,
ղրկեց ի Մակեդոնիա, և ինքը ժամանակ մը կե-
ցաւ յԱսիա։
23 Եւ այն առեներները ոչ սակաւ խռովութիւն ե-

*Յոյն. ձեռն արկին

24 զաւ վասն Ճանապարհին Տէրոջ։ Քանզի Դեմետ-
րիոս անուն արծաթագործ մը Արտեմեայ մեհե-
ականներ կը շինէր արծաթէ, և ոչ սակաւ շահ կը
25 բերէր ծառաներուն։ Զորս և ժողովեց ի մի
վայր այն արուեստին ձեռագործներուն հետ, և
ըսաւ, Արք, դուք գիտէք որ այս գործէն է մեր
26 շահը։ Եւ կը տեսնէք և կը լսէք որ այս Պօղոս
ոչ միայն Եփեսոսից, այլ և գրեթէ բոլոր Ասիա-
յեց յոլս ժողովրդներն համոզելով դարձուց
անոնց միտքը, ըսելով Թէ Ձեռագործք չեն աս-
27 տուածոյ։ Ուստի վտանգ կայ որ ոչ միայն այս մեր
*կողմը պիտի նախատուի, այլ և մեծ աստուա-
ծուհւոյն Արտեմեայ մեհենքը պիտի համարուի
ոչինչ, և պիտի խափանուի մեծավայելչութիւն
նորա զոր բոլոր Ասիա և աշխարհք կը պաշտեն։
28 Եւ երբ լսեցին, կ'աղաղակէին, բարկութեամբ և
29 կ'ըսէին, Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։ Եւ բոլոր
քաղաքը լցաւ խռովութեամբ. և յարձակեցով
զԳայիոս և զԱրիստարքոս Մակեդոնացիս, զոր-
դեկիցս Պօղոսի, ամենքը միանգամայն դիմեցին
30 թատրոնը։ Իսկ Պօղոս երբ կամեցաւ մտնել ամ-
բոխին մէջ, աշակերտները չհոզուցին զնա։
31 Ասիոպետներէն ևս ոմանք որ անոր բարեկամ
էին՝ ղրկելով առ նա կ'աղաչէին չհամարձակիլ
32 երթալ թատրոնը։ Ուստի այլք այլ բան կ'աղա-
դակէին, քանզի ժողովը խռովեալ էր, և շատերը
33 չէին գիտեր Թէ ընդէր ժողովեալ էին։ Եւ բազ-
մութենէն յառաջ բերին զԱղեքսանդրոս, զոր
Հրեայք մղեցին յառաջ, և Ազեքսանդրոս ձեռ-
քը շարժելով կ'ուզէր պատասխան տալ ժողո-
34 վրդեանն, իսկ երբ գիտացան Թէ Հրեայ էր նա,
ամենքը միաբերան կ'աղաղակէին իբր երկու
35 ժամ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։ Սակայն

*Կամ, արուեստը

աստեղագործին հանդարտեցուցանելով ամբոխն, ըսաւ, Արք Եփեսացիք, ո՞ր մարդ է որ չգիտէր Եփեսացւոց քաղաքը պաշտօնատար *մեծին Ար-
36 տեմիայ և Դիոսէ ինկած կուռքին։ Ուրեմն, որովհետև այն անհակառակելի է, պարտ է ձեզ հանդարտ կենալ, և չընել ինչ յանդգնութեամբ։
37 Զի՛նքն դուք այդ մարդիկը բերիք հոս, ոչ սաճարակողոպուտ, և ոչ հայհոյիչ ձեր աստուածուհւոյն։
38 Ուստի եթէ Դեմետրիոս և ճարտարք որ անոր հետ են՝ բան մը ունին մարդոց հետ, դատի օրեր կան և բդեշխի փոխանակ կայ. թող ամ-
39 բաստանեն զիրար։ Իսկ եթէ ուրիշ բաներու վրայ է ձեր խնդիրը, օրինաւոր ժողովոյ մէջ
40 թող որոշուի։ Զանգի և մեք ի վտանգի ենք ամբաստանուելու. այս օրուան խռովութեան վրայ, վասն զի չկայ պատճառ որով կարող ըլլանք պատասխան տալ այս ազմկին համար։ Եւ այսպէս ըսելով արձակեց ժողովը։

Գլ. Ի

1 Եւ երբ ազմուկը դադարեցաւ, Պօղոս աշակերտները կոչեց իրեն, և հրաժարական ողջոյն տալով
2 ելաւ երթալ ի Մակեդոնիա։ Եւ այն կողմերը շրջելէ և շատ խօսքերով զանոնք յորդորելէ
3 եկաւ Յելլադա։ Եւ երբ հոն երեք ամիս կեցաւ, Հրեայք նենգութեան խորհուրդ բրին անոր դէմ, երբ կ՚ուզէր Սիրիա երթալ՝ վճռեց դառնալ Մակեդոնիոյ։ Եւ
4 որոշեց դառնալ Ցանապարհաւ Մակեդոնիոյ։ Եւ մինչև յԱսիա անոր հետ կ՚երթար Բերիացի [Պիւռոսի որդին] Սոպատրոս, և Թեսաղոնիկեցիներէն Արիստարքոս և Սեկունդոս, և Գայիոս Դերբացի և Տիմոթէոս, և Ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփի-

*Ոմն., մեծ աստուածուհւոյն

5 մոս։ Ասոնք յառաջագոյն գնացին և Տրովադայի
6 մէջ կը սպասէին մեզ։ Եւ բաղարջակերաց օրերէն ետքը փիլիպպէէ նաւեցինք, և հինգ օրուան մէջ եկանք անոնց քով ի Տրովադա, և կեցանք հոն եօթն օր։
7 Եւ միաշաբաթի օրը երբ *ժողոված էինք՝ բեկանելէ հաց, կը քարոզէր անոնց Պօղոս, որ ի վաղիւն ճամբայ պիտի ելլէր. և յերկարեց խօսքը
8 մինչև կէս գիշեր։ Եւ շատ լապտերներ կային այն
9 վերնատան մէջ ուր ժողոված էինք։ Եւ երիտասարդ մը Եւտիքոս անուն պատուհանին վրայ նստած՝ ընկղմած էր ի խոր քունն. երբ Պօղոս երկայնեց խօսքը, նա խոր քնով բռնուած՝ ինկաւ վար երրորդ դասիկընէն, և վերցուցին զնա
10 մեռած։ Եւ Պօղոս իջնելով ինկաւ անոր վրայ և գրկեց զնա և ըսաւ, Մի՛ խռովիք, քանզի ասոր
11 հոգին ի սմա է։ Եւ վեր ելլելով կոտրեց հացը և կերաւ. և երկար խօսելով մինչև առաւօտ՝ յե-
12 տոյ ելաւ գնաց։ Եւ բերին այն պատանին ողջ,
13 և մեծապէս մխիթարեցան։ Իսկ մենք նաւ մտնելով՝ ճամբայ ելանք դէպ ՚ի Ասոն, ուստի պիտի առնուինք զՊօղոս, քանզի այնպէս պատուիրած էր, վասն զի ինք պիտի երթար ՚ի ցամա-
14 քաւ։ Եւ երբ հանդիպեցաւ մեզ, առինք զնա և
15 եկանք Միտիլինէ։ Եւ նաւելով հեռեւեալ օրը հասանք Քիոսի դիմացը. և միւս օրը հասանք ի Սամոս, և էնչբէը կենալով ի Տրոգիլիոն՝ միւս
16 օրը եկանք ի Մելիտոս։ Քանզի Պօղոս դրած էր ի մտի նաւով անցնել Եփեսոսի քովէն, որ մի գուցէ ժամանակ անցուներ ՚ի Ասիա, քանզի կը փութար, եթէ հնար էր նմա, Պենտեկոստէի օրն ըլլալ յԵրուսաղէմ։
17 Եւ Մելիտոսէ *ղրկեց ՚ի Եփեսոս և կոչեց

*Ոմն., աւագերտները ժողոված էին
†կամ, հետը

18 եկեղեցւոյն երէցներըն եւ երբ եկան անոր, ըսաւ
անոնց, Դուք գիտէք որ այն առաջին օրէն հետ
որ ես յԱսիա եկայ, ի՛նչպէս վարուեցայ ձեր հետ
19 բոլոր ժամանակ. Ամենայն խոնարհութեամբ ծա-
ռայելով Տէրոջ, և չատ արտասուօք և փորձու-
թեամբք որ հրեից նենգութիւնովն պատահե-
20 ցան ինձ. Ի՛նչպէս ես չկեցայ օգտակար բաներէ
և ոչ մին ըսել ձեզ, և հրապարակաւ և առանձին
21 սորվեցնել զձեզ. Վկայութիւն տալով հրեից
և Ցունաց ապաշխարութեան համար առ Աստ-
ուած, և հաւատոյ համար ի Տէր մեր Յիսուս
22 Քրիստոս։ Եւ հիմա ահա ես հոգւով կապուած
կ՚երթամ Երուսաղէմ, և հոն չիմ որ պիտի պա-
23 տահի ինձ, չեմ գիտեր. Միայն թէ Հոգին Սուրբ
ամէն քաղաքի մէջ կը վկայէ և կ՚ըսէ թէ կապեր
24 և նեղութիւններ կը սպասեն ինձ։ Բայց ոչինչ
փոյթ է ինձ, և ոչ պատուական կը համարիմ
զանձն, միայն թէ կատարեմ ընթացքս ուրա-
խութեամբ, և պաշտօնը զոր առի ի Տէրոջմէ Յի-
սուսէ վկայ ըլլալ Աւետարանի շնորհաց աւետարա-
25 նելու։ Եւ արդ ահաւասիկ գիտեմ որ այլեւս իմ
երեսս պիտի չտեսնէք դուք ամենեքդին, յորս
հրեկաց քարոզելով Աստուծոյ թագաւորութիւնը։
26 Ուստի այսօր կը վկայեմ ձեզ, որ ես անպարտ եմ
27 յարենէ ամենեցուն. Քանզի չխորշեցայ յայտնել
28 ձեզ Աստուծոյ բոլոր կամքը։ Ուրեմն զգուշացէք
ձեր անձերուն և բոլոր հօտին, որով վրայ Հոգին
Սուրբ դրաւ զձեզ տեսուչ՝ հովանալ Աստուծոյ
29 եկեղեցին, զոր առաքաւ իւր արեամբ։ Քանզի
գիտեմ որ իմ մեկնելէս ետքը պիտի մտնեն ձեր
մէջ †յափշտակող գայլեր, որ պիտի չխնայեն հօ-
30 տին։ Եւ ձեներէ ևս պիտի ելլեն այնպիսի մարդիկ,
որ ծուռ բաներ պիտի խօսին՝ աշակերտներն ի-

*Ոմանք, Տէրոջը †Կամ, Ջնջասակար

31 րենց ետեւ ձգելու։ Ուստի արթուն կեցէք, և
յիշեցէք որ երեք տարի գիշեր և ցերեկ չդա-
դարեցայ արտասուօք խրատել իւրաքանչիւր։
32 Եւ հիմա, եղբարք, կը յանձնեմ զձեզ Աստուծոյ
և անոր շնորհաց խօսքին, որ կարող է շինել և
բոլոր արբանեակներուն հետ տալ ձեզ ժառան-
33 գութիւն։ Ոչ ուրուք արծաթոյն կամ ոսկւոյն
34 կամ հանդերձին ցանկացայ. Դուք ձեղմէն գիտէք
որ ինձ և ինծի հետ եղողներուն պէտքը հոգացին
35 այս ձեռքերս։ Ամէն բան ցուցի ձեզ, թէ այսպէս
պարտ է աշխատել և օգնութիւն ընել տկարաց,
և յիշել Տէրոջ Յիսուսի խօսքը զոր ըսաւ, Երա-
36 նելի է տալն քան առնուլն։ Եւ երբ զայս ըսաւ,
37 անոնց ամենուն հետ ծունր դնելով աղօթեց։ Եւ
ամենքը սաստիկ կու լային, և Պօղոսի պարանո-
38 ցին վրայ իյնալով կը համբուրէին զնա։ Անոնց
սիրտը կը ցաւէր մանաւանդ այն խօսքին համար
զոր կ՚ըսէր թէ այլեւս պիտի չտեսնէին անոր ե-
րեսը։ Եւ յետ զարկեցին զնա մինչեւ նաւը։

Գլ. ԻԱ

1 Եւ երբ ելանք և անոնցմէ զատուեցանք, ուղ-
ղակի նաւելով եկանք ի Կոյ, և ի վաղիւն ի Հռո-
2 դոս, և անկէ ի Պատարա։ Եւ գտանք նաւ մի
որ կ՚երթար ի Փիւնիկէ, և անոր մէջ մտնելով
3 ելանք ի ծանապարհ։ Եւ երբ կիպրոս երեւեցաւ,
թողուլով դայն մեր ձախ կողմը՝ նաւեցինք դէպ ի
Սիրիա և ելանք ի Տիւրոս, քանզի նաւը հոն
4 պիտի թափէր բեռը։ Եւ գտնելով աշակերտները
հոն՝ օր կեցանք հոն, որ Հոգւով Սբ. Հոգին կ՚ըսէին
5 Պօղոսի չելլել Երուսաղէմ։ Եւ երբ այն օրերն
անցուցինք, ելանք և կ՚երթայինք. ամենքը կա-
նայմբք և մանկտւով մինչեւ քաղաքէն դուրս
յուղարկեցին զմեզ. և ծունր դնելով յեզեր ծո-

6 վրան աղօթեցինք, եւ բարեւ տրաժարական ողջոյն տալով՝ մենք նաւը ելանք, և անոնք դար-
7 ձան իրենց տեղերը։ Իսկ մենք Տիւրոսէ վարելով հասանք Պտողեմայիս, և եղբայրները ողջունելով
8 օր մը կեցանք անոնց քով։ Եւ ի վաղիւ անդր *ելանք և եկանք ի Կեսարիա, և մտնելով
9 ի տունը Փիլիպպոսի աւետարանչին, որ էր մին յեօթանից, կեցանք անոր քով։ Նա ունէր չորս
10 դուստր կոյս, որ մարգարէութիւն կ'ընէին։ Եւ երբ հոն չատ օրեր կեցանք, Հրէաստանէ մար-
11 գարէ մը իջաւ Ագաբոս անուն։ Եւ երբ եկաւ առ մեզ, առնելով Պօղոսի գօտին կապեց իւր ձեռուըները և ոտուըները, և ըսաւ, Այսպէս
կ'ըսէ Հոգին Սուրբ։ Այն մարդը որոյ է այս գօ-
12 տին՝ այսպէս պիտի կապեն Հրեայք Երուսաղէմ,
13 և պիտի մատնեն հեթանոսաց ձեռքը։ Եւ երբ լսեցինք զայս, աղաչեցինք, թէ՛ մենք թէ՛ ամ-
զացիք, որ չելլէր Երուսաղէմ։ Իսկ Պօղոս պատասխան տուաւ, Ի՞նչ կ'ընէք, ընդէ՞ր կու լաք
և կը ճմլէք սիրտս. քանզի ես ոչ միայն կերու-
սաղէմ կապուելու, այլ և մեռնելու պատրաստ
14 եմ յանուն Տեառն Յիսուսի։ Եւ երբ չլսեց, լուռ
կեցանք, և ըսինք, Կամք Տեառն եղիցի։
15 Եւ այն օրերէն ետքը պատրաստուելով ելանք
16 Երուսաղէմ։ Եւ կեսարացի աշակերտներէն ևս գնացին մեր հետ եկան, և տարին զնոսա նախնի
աշակերտի մը, կիպրացի Մնասոնի, որոյ քով
17 պիտի կենայինք։ Եւ երբ մտանք Երուսաղէմ,
18 եղբայրներն ընկալան զմեզ ուրախութեամբ։ Եւ
19 ի վաղիւն անդր Պօղոս մեզի հետ գնաց առ Յակո-
բոս, և բոլոր երիցունք ևս եկան։ Եւ զանոնք

*Ոմանք՝ Կաբելցուածէն, մենք որ Պօղոսի ընկերներն էինք՝

ողջունելով մի ըստ միոջէ կը պատմէր ինչ որ ըր-
20 բաւ Աստուած հեթանոսաց մէջ անոր ծառայու-
թեամբ։ Եւ անոնք լսելով փառաւ կու տային
*Տէրոջը. և ըսին անոր, Կը տեսնե՞ս, եղբայր,
քանի՛ բիւրաւոր հաւատացեալ Հրեաներ կան, և
21 ամենքը նախանձաւոր են օրինացս։ Բայց քու
վրադ իմացան թէ դուն բոլոր Հրէից որ հեթանո-
սաց մէջ են՝ կը սորվեցնես ապստամբել Մով-
սիսէ, ըսելով չթլփատել իրենց տղոյքը, և
22 չվարուիլ ըստ սովորութեանց։ Արդ ինչ պիտի
ըլլայ. անշուշտ բազմութիւն պիտի ժողովի, քան-
23 զի պիտի լսեն թէ եկած ես։ Ուստի ըրէ զայս զոր
կ'ըսենք քեզ։ Մեր քով չորս մարդիկ կան, որ ի-
24 րենց վրայ ուխտ դրած են։ Զա զանոնք, անոնց
հետ մաքրուէ, և անոնց համար ծախք ըրէ, որ
իրենց գլուխն ածիլեն. որպէս զի ամենքը գիտանան
թէ ինչ որ իմացած են քու վրադ՝ ոչինչ է, այլ դու
25 ևս դիզ հետ կը քալես պահելով օրէնքը։ Բայց
հաւատացեալ հեթանոսաց համար մենք թուղթ
ղրկեցինք, ինչպէս որոշեցինք, որ անոնք բնաւ
այսպիսի բաներ չպահեն. միայն զգուշանան կռոց
զոհուածէ և չարենէ և ի հեղձուցելոյ և պոռնկու-
26 թենէ։ Անոնք Այնուհետև Պօղոս առաւ այն մարդիկը, և
հետևեալ օրն անոնց հետ մաքրուած՝ մտաւ տա-
ճարը, յայտնելու համար թէ մաքրութեան օրերը
կատարած էին, մինչև որ անոնց իւրաքանչիւրին
համար պատարագ մատուցուեցաւ։
27 Եւ երբ եօթն օրերը կատարելու մօտ էին,
Ասիացի Հրեաները տաճարին մէջ տեսնելով զնա՝
խռովեցուցին բոլոր բազմութիւնը, և ձեռք
28 մխելով ի նա կ'աղաղակէին, Արք Իսրայէլացիք,
օգնութեան հասէք. այս այն մարդն է որ ամէն
տեղ ժողովրդեան և օրինաց և այս տեղւոյն

*Ոմանք, Աստուծոյ

դեմ բան կը սորվեցունէ ամենուն, մինչև տաճարին մէջ Յոյներ մտցուց, և պղծեց այս սուրբ
29 տեղը. (Վասն զի յառաջագոյն ՏԷրոփիմոս Եփեսացի տեսած էին անոր հետ քաղաքին մէջ, և կը կարծէին թէ Պօղոս մտցուց զնա տաճարը.)
30 Եւ բոլոր քաղաքը շարժեցաւ և ժողովուրդը դիմուեցաւ, և բռնեցին զՊօղոս, ձգեցին տաճարէն դուրս, և փակեցաւ դուռները փակ-
31 ուեցան։ Եւ երբ անոնք կ'ուզէին սպաննել զնա, լուր հասաւ առ հազարապետ գնդին թէ բոլոր
32 Երուսաղէմ խռոված էր։ Եւ նա անմիջապէս առնելով զինուորներ և հարիւրապետներ՝ դիմեց անոնց վրայ. և անոնք տեսնելով հազարապետը և զինուորները՝ դադրեցան ծեծելէ զՊօղոս։
33 Անատեն հազարապետը մտենալով բռնեց զնա, և հրամայեց կրկին չղթայիւք կապել. և կը հար-
34 ցընէր թէ ո՞վ էր նա և ի՞նչ ըրած էր։ Եւ բազմութեան մէջէն մին այս կերպ, և միւսն ուրիշ կերպ կ'աղաղակէին. իսկ երբ չկրցաւ ստոյգը գիտնալ այն չփոթութենէն, հրամայեց
35 առնել զնա բերդը։ Եւ երբ հասաւ սանդուղքը, դէպ եղաւ զինուորաց վեր վերցունել զնա ժո-
36 ղովրդեան բռնութեանը համար, Քանզի ժողովրդեան բազմութիւնը կ'երթար հետէն, և
37 կ'ըսէին, Բարձ զդա։ Եւ երբ Պօղոս մտնելու մօտ էր բերդը, ըսաւ հարիւրապետին, Արդեօք կարելի՞ է որ բան մը խօսիմ քեզ։ Եւ
38 նա ըսաւ, Ձուանարէն գիտե՞ս. Մի՞թէ դու այն Եգիպտացին չէ՞ս որ այս օրերէն առաջ ապըստամբեցուցիր չորս հազար *սրիկայ մարդիկ, և
39 հանեցիր անապատ։ Իսկ Պօղոս ըսաւ, Ես եմ այր Հրեայ, ի Տարսոնէ Կիլիկիոյ, ոչ աննշան քա-

*Յոյն. սիկարեան, այսինքն՝ մարդասպան սակրաւորը

զաքի քաղաքացի, և կ'աղաչեմ զքեզ՝ հրաման տուր ինձ խօսել ժողովրդեան։
40 Եւ երբ հրաման տուաւ նա, Պօղոս սանդղին վրայ կենալով չարժեց ձեռքը ժողովրդեան, և երբ չատ լռութիւն եղաւ, խօսեցաւ անոնց Եբրայական լեզուաւ, և ըսաւ,

Գլ. ԻԲ

1 Արք եղբարք և հարք, լսեցէք ինձ որ հիմա
2 պատասխան կու տամ ձեզ. (Երբ լսեցին որ Եբրայական լեզուաւ կը խօսէր անոնց, առաւել ևս
3 լուռ կեցան. Եւ նա ըսաւ,) Ես այր Հրեայ եմ, ծնեալ ի Տարսոն Կիլիկիոյ, և այս քաղաքիս մէջ սնեալ առ ոտս Գամաղիէլի, կրթեալ ըստ ճշգրտութեան հայրենի օրինաց, նախանձաւոր էի Աս-
4 տուծոյ, ինչպես այսօր դուք ամենքդ էք։ Որ կասկելով այր և կին և բանտերու մատնելով
5 հալածեցի այս Ճամբան մինչև ի մահ, ինչպես որ քահանայապետն ևս կը վկայէ ինձ և բոլոր ծերակոյտը. յորոց և Թուղթեր առնելով եղբայրներուն կ'երթայի ի Դամասկոս, զանոնք ևս որ հոն էին կապուած բերել յԵրուսաղէմ որ պատ-
6 ժուէին, Եւ եղաւ երբ կ'երթայի և մօտեցայ ի Դամասկոս, կէս օրուան մօտ յանկարծակի յերկ-
7 նից լոյս մեծ փայլատակեց բոլորտիքս. Եւ գետին ինկայ, և լսեցի ձայն որ կ'ըսէր ինձ, Սաուղ, Սաուղ, ընդէ՞ր կը հալածես զիս։ Եւ ես պատասխան տուի թէ Դու ո՞վ ես, Տէր։ Եւ նա
8 ըսաւ ինձ, Ես եմ Յիսուս Նազովրեցի, զոր դուն
9 կը հալածես։ Բայց անոնք որ ինծի հետ էին՝ լոյսը տեսան և ահիւ լցան, սակայն չլսեցին ինձ
10 խօսողին ձայնը։ Եւ ըսի, Ի՞նչ ընեմ, Տէր։ Եւ Տէրը ըսաւ ինձ, Ել գնա ի Դամասկոս, և հոն պիտի ըսուի քեզ այն ամէն բաներուն համար որ

11 սահմանուած են քեզ ընել, եւ երբ չէի տեսներ
այն լուսոյն փառքին, անոնք որ հետս էին՝
12 ձեռքէս բռնեցին, և մտայ ի Դամասկոս. եւ ոմն
Անանիա, երկիւղած ըստ օրինաց, Դամասկոս բնա-
13 կող բոլոր Հրեաներէն վկայուած, եկաւ առ իս,
և կենալով ինծի ըսաւ, Սաւուղ եղբայր,
14 վեր նայէ՛. եւ ես նոյնժամայն վեր նայեցայ անոր.
և նա ըսաւ, Մեր հայրերուն Աստուածն յա-
ռաջագոյն ընտրեց զքեզ որ անոր կամքը ճանչ-
նաս և այն Արդարը տեսնես, և լսես ձայն անոր
15 բերնէն. Քանզի բոլոր մարդոց առջև անոր վկայ
պիտի ըլլաս այն բաներուն համար զորս տեսար
16 և լսեցիր։ Եւ հիմա այլ ևս ի՞նչ կը յապաղես.
եղ, մկրտուէ՛ և լուա մեղքերդ կոչելով *անոր
17 անունը։ Եւ եղաւ երբ դարձայ յԵրուսաղէմ և
կ՚աղօթէի տաճարին մէջ, մտայ յափշտակու-
18 թիւն հաւս վրաս, եւ տեսայ զնա, որ կ՚ըսէր
ինծ, փութա՛ եւ վաղվաղակի Երուսաղեմէ, քան-
զի քու վկայութիւնդ ինծի համար՝ պիտի չընդ-
19 դունին։ Եւ ես ըսի, Տէր, անոնք գիտեն թէ ես
էի որ հաւատացեալներն ի քեզ բանտ կը դնէի,
20 և ժողովրդանոցներու մէջ կը ծեծէի. եւ երբ
քու վկայիդ Ստեփանոսի արիւնը կը թափուէր,
ես ինքն ներկայ էի և կամակից էի *նորա սպան-
մանն՝՝ և զնա պահապանողներուն հանդերձները ես
21 կը պահէի։ Եւ ըսաւ ինծ, Գնա, քանզի ես պիտի
զրկեմ զքեզ հեռաւոր հեթանոսներուն։
22 Եւ անոնք մինչև այս խօսքն ունկն դրին անոր,
յետոյ վերցուցին իրենց ձայները և ըսին, Վեր-
ցուր աշխարհէ այդպիսի մարդը, քանի չ՚ապրի
23 *որ ողջ մնայ։ Եւ երբ կ՚աղաղակէին և կը նե-
տէին իրենց հանդերձները և կը ցանէին փոչին
24 յօդս, Հազարապետն հրամայեց մուծանել զնա

*Ոմն՝, ծէրոջը †Ոմն՝ կոտին

բերդը, և ըսաւ ծեծով հարցուփորձ ընել
զնա, որ գիտնար թէ ինչ յանցանաց համար
25 այնպէս կ՚աղաղակէին անոր դէմ։ Եւ երբ կա-
պեցին զնա փոկերով, Պօղոս ըսաւ վերակացու
հարիւրապետին, Արժանի է ձեզ Հռովմայեցի և
26 չդատապարտուած մարդ ծեծել։ Հարիւրապետը
երբ լսեց, գնաց պատմեց հազարապետին և ըսաւ,
*Ինչ պիտի ընես, քանզի այս մարդն Հռովմայե-
27 ցի է։ Եւ հազարապետը գնաց և ըսաւ անոր,
Ըսէ ինծ, դուն Հռովմայեցի՞ ես։ Եւ նա ըսաւ,
28 Այո։ Հազարապետը պատասխան տուաւ, Ես
չատ սակաւով ստացայ այս քաղաքացիութիւնն ի-
րաւունքը։ Եւ Պօղոս ըսաւ, Ես ծնած իսկ եմ
ատոր վրչ։ Եւ անոնք որ հարցուփորձ պիտի ը-
նէին զնա, իսկոյն եռա կեցան անկէ. և հազարա-
պետն իսկ վախցաւ, երբ իմացաւ թէ Հռովմա-
յեցի էր, և քանզի կապած էր զնա։
30 Եւ ի վաղիւ անդր կամենալով ուղղի գիտնալ թէ
ինչ էր Հրեից ամբաստանութիւնն անոր դէմ,
ւարձակից զնա, և հրամայեց քահանայապետներ-
ուն և բոլոր ժողովոյն գալ ի մի վայր. և զՊօ-
ղոս իջուցանելով կեցուց անոնց առջև։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Պօղոս իւր աչքերովը ժողովոյն դարձնելով
ըսաւ, Արք եղբարք, ես բոլորովին բարի խղճիւ
կեանք վարած եմ Աստուծոյ առջև մինչև այս
2 օր։ Եւ Անանիա քահանայապետն հրամայեց ի-
րեն քով կեցողներուն զարնել անոր բերնին։
3 Անատեն Պօղոս ըսաւ անոր, Աստուած պիտի
զարնէ զքեզ, որ մեռած ես օրի-

*Ոմն՝, Նայե՛ ինչ
†Ոմն՝, կապերէն արձակեց

նաց համեմատ դիս դատել, և արտաքոյ օրինաց
4 կը հրամայեմ զանոնք ընել։ Եւ շուրջ կեցողներն
ըսին, Աստուծոյ քահանայապետը կը նախատես։
5 Եւ Պօղոս ըսաւ, Եղբարք, չէի գիտեր թէ քա-
հանայապետ է։ Վասն զի գրուած է, Քու ժողո-
վուրդիդ իշխանին դէմ չարախօսութիւն մի՛ ը-
6 ներ։ Եւ Պօղոս գիտնալով թէ մի կողմ սադու-
կեցի էր, և միւսը՝ փարիսեցի, կ՚աղաղակէր ժո-
ղովոյն մէջ, Արք եղբարք, ես փարիսեցի եմ,
փարիսեցւոյ որդի. մեռելոց յարութեան յուսոյն
7 համար կը դատուիմ։ Եւ երբ ըսաւ զայս՝ փարի-
սեցւոց և սադուկեցւոց մէջ երկպառակութիւն
8 ինկաւ, և բազմութիւնը բաժնուեցաւ։ Քանզի
սադուկեցիք կ՚ըսեն թէ չիք յարութիւն, և ոչ
հրեշտակ և ոչ հոգի. բայց փարիսեցիք կը դա-
9 նեն երկուսին։ Եւ մեծ աղաղակ եղաւ. և
դպիրք որ փարիսեցւոց կողմէն էին՝ յոտն կա-
ցած կը հակառակէին և կ՚ըսէին, Մենք այս մար-
դուն վրայ չարութիւն չենք գտներ. այլ թէ հո-
10 գի կամ հրեշտակ խօսած է անոր, *Ընդ. Եւ երբ
աղմուկը սաստկացաւ, հազարապետը վախնալով
թէ գուցէ Պօղոս անոնցմէ պատառուէր, հրամայեց
զինուորներուն իջնել յամրակալէ՝ զնա անոնց մէ-
11 ջէն և բերել բերդը։ Եւ յաջորդ գիշերը Տէրը կե-
ցաւ անոր քով և ըսաւ, Քաջալերուէ, Պօղոս,
վասն զի ինչպէս որ յԵրուսաղէմ վկայեցիր ինծի
համար, այնպէս պարտ է քեզ ի Հռոմ ևս վկայել։
12 Եւ երբ առաւօտ եղաւ, Հրեաներէն ոմանք միա-
բանեցան, և նզովեցին զանձինս, ըսելով չուտել
13 և չխմել մինչև սպաննեն զՊօղոս։ Եւ էին աւելի
քան զքառասունն որ այս երդումն բրին իրարու-
14 հետ։ Որք և գնացին քահանայապետներուն և
ծերերուն և ըսին, Նզովքի՛ նզովեցինք զանձինս

*Ոմն, Աստուծոյ հետ չմարանչինք

մեր բան մը չուտել մինչև սպաննենք զՊօղոս։
15 Ուստի դուք ժողովրդին հետ ի միասին իմացուցէք
հազարապետին որ վաղիւ իջուցանէ զնա առ ձեզ,
որպես թէ դուք աւելի ճիշդ քննութիւն ընել
կ՚ուզէք անոր վրայ. և մենք, յառաջ քան ա-
նոր մտանելը, պատրաստ ենք սպաննել զնա։
16 Եւ Պօղոսի քեռորդին երբ լսեց այս դաւաճանու-
թիւնը, եկաւ բերդը մտաւ և պատմեց Պօղոսի։
17 Եւ Պօղոս կոչելով հարիւրապետներէն մին ըրեն՝
ըսաւ, Այս պատանին տար հազարապետին, քան-
18 զի բան մը ունի իմացնելու անոր։ Եւ նա առա-
զնա և տարաւ հազարապետին և ըսաւ, Բան-
տարկեալն Պօղոս կոչեց զիս, և աղաչեց բերել
19 առ քեզ այս պատանին որ խօսք ունի քեզ։ Եւ
հազարապետը բռնելով անոր ձեռքէն զնաց մե-
կուսի, և հարցուց, Ի՞նչ ունիս իմացնելու ինծի։
20 Եւ նա ըսաւ, Հրեայք միաբանեցան աղաչել
զքեզ որ վաղիւ իջուցանես յատեան զՊօղոս,
որպես թէ կ՚ուզեն աւելի ճիշդ քննութիւն ընել
21 անոր վրայ։ Բայց դուն չլսես անոնց, քանզի
դարանամուտ եղած են անոր համար անոնցմէ
մարդիկ աւելի քան զքառասունն, որ նզովեցին
զանձինս չուտել և չխմել մինչև սպաննեն զնա.
և հիմա պատրաստ են, և կը սպասեն քու հրա-
22 մանիդ։ Ուստեք հազարապետն արձակեց զպա-
տանին, պատուիրելով, Մարդու մի՛ բաներ որ ի-
մացուցիր ինծ զայս։
23 Եւ կոչեց հարիւրապետներէն երկուքը և ըսաւ,
Պատրաստեցէք երկու հարիւր զինուոր, և ե-
թանասուն ձիաւոր և երկու հարիւր տիգաւոր,
որ երթան մինչև Կեսարիա գիշերուան երրորդ
24 ժամուն։ Եւ գրասաներ պատրաստեցէք, որ զՊօ-
ղոս հեծցունեն և տանին ապահովութեամբ առ
25 փեղիքս կուսակալ։ Եւ գրեց թուղթ զայս օրի-
26 նակ. Կղովդիոս Լիւսիաս առ պատուական փեղիքս

27 կուսակալ, ոզջոյն։ Այս մարդը Հրեաներէն բռա-
նուած էր, և պիտի սպաննուէր անոնցմէ, իսկ ես
վրայ հասնելով զօրականօք ազատեցի զնա, ի-
28 մանալով Թէ Հռովմայեցի է։ Եւ կամենալով գիւ-
նալ պատճառը որոյ վասն ատոր վրայ ամբաս-
տանուեր էր նմանց առաջին իշուցի զնա,
29 Զոր գտայ ամբաստանուած իրենց օրինաց վէրա-
բերեալ, բնաւ իրենէրուն համար, և չունէր մեռնելու
30 կամ կապուելու արժանի յանցանք։ Եւ երբ լուր
առի Թէ Հրեայք որոգայթ պիտի լարէին այդ-
մարդուն համար, իսկոյն դրկեցի առ քեզ, հրա-
ման ընելով ամբաստանողներուն ևս որ քու առ-
ջեւդ խօսին ատոր վրայ։ Ողջ լեր։
31 Եւ զինուորք ըստ հրամանին առին զՊօղոս և
32 գիշերայն տարին յԱնտիպատրիս։ Եւ ի վաղիւ
անդր Թողուցին ձիաւորները երթալ անոր հետ,
33 և իրենք դարձան բերդը։ իսկ անոնք մտան Կե-
սարիա, և տուին Թուղթը կուսակալին, և զՊօ-
34 ղոս կեցուցին անոր առջեւ։ Երբ *կարդաց, հար-
ցուց Թէ ո՞ր գաւառէ էր, և իմանալով որ Կի-
35 լեկեցի էր, Ըսաւ, Պիտի լսեմ քեզ, երբ դա-
տաւորներդ ևս գան։ Եւ հրամայեց պահել զնա
Հերովդեսի պալատը։

ԳԼ. ԻԹ

1 Եւ հինգ օր ետքը Անանիա քահանայապետ իջաւ
ծերերուն հետ և Տերտիւղոս անուն ճարտասա-
խօսի մը հետ։ և ատոնք իմացուցին կուսակալին
2 Պօղոսի դէմ։ Եւ երբ կոչեցին զնա, Տերտիւղոս
սկսաւ ամբաստանել և ըսել, Որովհետև քու-
ձեռօքդ կը վայելենք չատ խաղաղութիւն, և
խնամքդ այս ազգին բաներուն ալէկ կարդադ-

*Ոմն։, կուսակալը կարդաց

3 րութիւնը, Ամենայնիւ և ամենայն ուրեք բոլո-
րովին գոհ ըլլալով ընդհակառակ ենք, ով պատ-
4 ուական փելիքս։ Բայց որպէս զի աւելի ձանձ-
րութիւն չտամ քեզ, կ'աղաչեմ որ քու քաղց-
5 րութեամդ ունկն դնես մեզ համառօտիւ։ Քանի-
զի գտանք այս մարդն ապականիչ և խռովարար
բոլոր Հրեից որ են յաշխարհին, և Նազովրեցւոց
6 ազանդին առաջնորդ։ Որ զաճաձան անգամ ու-
զեց պղծել. զոր բռնեցինք և մեր օրինաց հա-
7 մեմատ կամեցանք դատել։ Բայց Լիւսիաս հա-
զարապետ եկաւ մեծ բռնութեամբ առաւ մեր
8 ձեռքէն, Եւ առ քեզ զալ հրամայեց անոր դա-
տապաստաններուն, զոր դու քննելով կարող պիտի
ըլլաս տեղեկանալ այն ամէն բաներուն, որոց
համար մենք ամբաստանութիւն կ'ընենք ատոր
9 վրայ։ Հրեայք ևս միաբան ըսին Թէ այդպէս է։
10 Պատասխան առաւ Պօղոս, երբ կուսակալն
ակնարկեց անոր խօսել. Գիտնալով որ չատ տա-
րիներէ ի վեր դուն այս ազգին դատաւորն ես,
աւելի յօժարութեամբ պատասխան կու տամ այն
11 բաներուն համար որ կը վերաբերին ինձ. Քանզի
կրնաս գիտնալ Թէ չէ աւելի քան երկուտասան
օր յորմէ հետէ ելայ յԵրուսաղէմ երկրպագու-
12 թիւն ընել։ Եւ չգտան զիս տաճարին մէջ որ
մարդու հետ կը վիճէի կամ բազմութիւնը ժողո-
13 ված էի ի մի վայր, և ոչ ի ժողովրդանոցս, Եւ
ոչ ի քաղաքին. և ոչ իսկ կրնան յանդիման կա-
ցուցանել որոց համար արդ կ'ամբաստանեն զիս։
14 Բայց կը խոստովանիմ քեզ դպս, Թէ ըստ ճանա-
պարհին զոր սոքա հերձուած կ'անուանեն, ես
այնպէս կը պաշտեմ իմ հայրենի Աստուածս,
հաւատալով ամենայն որ գրուած են յօրէնս և
15 ի մարգարէս. Եւ ունիմ յոյս առ Աստուած, ինչ-
պէս սոքա ևս ունին ակնկալութիւն, Թէ պիտի
ըլլայ յարութիւն մեռելոց, Թէ՛ արդարոց և Թէ՛

16 մեղաւորաց՝ եւ ես ասոր համար կը լամամ մինչ
մաքուր խղճ ունենալ առաջի Աստուծոյ և
17 մարդկան։ Արդ ես շատ տարիներէ հետէ եկայ
բերել ողորմութիւններ ազգիս և ընծաներ։
18 Այսպես Աթեայի Հրեաներէն ոմանք դիս տաճա-
րին մէջ մաքրուած գտան, ոչ բազմութեամբ և
19 ոչ ամբոխիւ, Որոց պարտ էր գալ առաջի քո և
20 ամբաստանել եթէ ունէին ինչ ինծի դէմ. կամ
Թէ ինքեանք իսկ Թող ըսեն, ի՛նչ անիրաւու-
21 Թիւն գտան յիս, երբ տանեցաք կեցած էի, Բայց
մի միայն սա խօսքին համար որ, երբ անոնց մէջ
կեցած էի, գոչեցի Թէ Մեռելոց յարուԹեան
22 համար ես այսօր կը դատուիմ ձեռնէ։ եւ փելիքս
Յայտնեց զանոնք, վասն զի քաջ տեղեակ էր
այն ճամբուն, և բսաւ, Երբ Լիւսիաս հազարա-
23 պետ իջնէ, կը քննեմ ձեր գործը։ Եւ հարիւրա-
պետին հրամայեց պահել զնա, և ունենալ յին-
դարձակի, և իրենեներէն ոչ ոքի արգիլուլ սպա-
սաւորել անոր, կամ երթալ առ նա։
24 Եւ քանի մը օր եառքը փելիքս եկաւ իւր կնոջ
Դրուսիլլայի հետ որ էր Հրեայ, և կոչել տուաւ
պօղոս, և լսեց անկէ հաւատոյն համար որ ի
25 Քրիստոս Յիսուս։ Եւ երբ նա կը խօսէր արդա-
րութեան և ժուժկալութեան և հանդերձեալ
դատաստանին վրայ, փելիքս զարհուրելով պա-
տասխան առաւ, Դուս հիմա գնա, և երբ ժա-
մանակ ունենամ, դարձեալ կը կոչեմ զքեզ։
26 Նաև կը յուսար Թէ պօղոսէ ստակ Թորուէր
իրեն՝, այս պատճառաւ շատ անգամ կոչել
27 կու տար զնա և կը խօսէր անոր հետ։ Բայց երբ
երկու տարի եղաւ, փոխանակ փելիքսի եկաւ

*Ոմանք, այս բաները լսելով՝ յայտնեց
†Ոմանք, տրուէը իրեն, որ արձակէը զնա

Պօղկիոս փեստոս. և փելիքս Հրեից շնորհ ընել
կամելով կապուած Թողուց զպօղոս։

Գլ. ԻԵ

1 Արդ երբ փեստոս հասաւ ի՛ր իշխանութեան գա-
ւառն, երեք օր ետքը եկաւ կեսարիայէ յերու-
2 սաղէմ։ Եւ քահանայապետը և Հրեից գլխաւորք
3 իմացուցին անոր պօղոսի դէմ, Եւ կ՚աղաչէին
զնա և շնորհք կը խնդրէին անոր դէմ, յերուսա-
ղէմ բերել տալ զնա, և իրենք դարան կը պատ-
4 րաստէին ի ճանապարհին սպանանել զնա։ Բայց
փեստոս պատասխան տուաւ, Թէ պօղոս պիտի
պահուէը ի կեսարիա, և Թէ ինք ևս ընդ հուպ
5 պիտի երթար հոն։ Ուստի ձեզմէ անոնք որ կա-
րող են, բսաւ, Թող իջնեն ինծի հետ, և եթէ
կայ յանցանք այն մարդուն վրայ, Թող ամբաս-
6 տանութիւն ընեն անոր դէմ։ Եւ հոն չկենալով
աւելի քան ութ կամ տասն օր իջաւ ի կեսա-
րիա, և ի վաղիւն անդր նստելով յատենի հրա-
7 մայեց բերել զպօղոսն։ Եւ երբ եկաւ նա, Երու-
սաղէմէ իջնող Հրեայք կեցեալ չուրջ, կը բե-
րէին պօղոսի դէմ շատ և ծանր ամբաստանու-
8 թիւններ, զորս չէին կրնար ապացուցանել. Քան-
զի պօղոս պատասխան կու տար Թէ ես ոչ Հրէից
օրէնքից և ոչ տաճարին և ոչ կայսեր դէմ յան-
9 ցաւոր եմ։ Բայց փեստոս կամելով շնորհ ընել
Հրէից, պատասխան տուաւ պօղոսի և բսաւ,
Կ՚ուզե՞ս երթալ յերուսաղէմ, և հոն այդ բան-
10 քուն վրայ դատուիլ իմ առջեւս։ Եւ պօղոս ը-
սաւ, Կեցած եմ կայսեր ատեանը ուր պարտ է
ինձ դատուիլ. ես Հրէից անիրաւութիւն ըրած
11 չեմ, ինչպէս որ դուն իսկ քաջ գիտես։ Քանզի

*Ոմանք, աւելի քան տասն օր կենալով

ԼՔՒ անիրաւութիւն և մահուան արժանի ինչ գործած եմ, չեմ զանգիտեր մեռնելէ. բայց ես ԼՔՒ չկայ այն բաներէն մին որոց համար ասոնք կ'ամբաստանեն զիս, ոչ ոք կրնայ ինորհել զիս
12 զոցու կայսեր կը բողոքեմ։ Յայնժամ փեստոս խօսելով խորհրդականաց հետ՝ պատասխան առաւ. ԼՔՒ կայսեր բողոքեցիր, առ կայսր պիտի երթաս։
13 Երբ քանի մը օր անցաւ, Ագրիպպաս արքայ և Բերենիկէ եկան ի Կեսարիա ողջունել զփես-
14 տոս։ Եւ վասն զի շատ օրեր հոն անցուցին, փեստոս խնդուց թագաւորին Պօղոսի համար և ըսաւ, Հոս մարդ մը կայ զոր փելիքս բանտար-
15 կուած թողած էր, Որոյ վրայ, երբ յերուսաղէմ գնացի, քահանայապետները և Հրէից ծերերն իմացուցին ինձ, և կը խնդրէին անոր դէմ դա-
16 տապարտութեան վճիռ. Որոց պատասխան տուի ԼՔՒ սովորութիւն չէ Հռովմայեցւոց ընորհել զոք ի կորուստ մինչև ամբաստանեալը յանդիման դատապարտիչները, և պատեհութիւն չտրուի անոր պատասխան տալ այն ամբաստանութեանն
17 Ուստի երբ անոնք ինծի հետ հոս եկան, ամենևին չյապաղեցի, այլ ի վաղիւ անդր նստելով
18 յաւանն հրամայեցի բերել մարդը. Անոր դատապետները ևս գալով չկին բերեր յառաջ և ոչ
19 զմին ի յանցանաց զոր ես կը կարծէի։ Այլ քանի մը խնդիրներ ունէին անոր հետ իրենց կրօնից վրայ, և Յիսուս անուն մեռելոյ մը վրայ, որոյ
20 համար Պօղոս կ'ըսէր ԼՔՒ կենդանի է։ Եւ երբ տարակուսանաց մէջ էի այս բանին քննութեան վրայ, ըսի ԼՔՒ կ'ուզես երթալ յերուսաղէմ, և
21 հոն ասոնց համար դատուիլ։ Բայց Պօղոս երբ բողոքեց պահուիլ *յանդիման օգոստափառ կայ-

*Յ՚ԱՆ, քննութեան

սէրը, հրամայեցի պահել զնա մինչև զրկեմ առ-
22 կայսր։ Եւ Ագրիպպաս ըսաւ փեստոսի, Ես ես կամէի լսել այդ մարդուն։ Եւ նա ըսաւ, Վաղիւ կը լսես։
23 Եւ ի վաղիւն երբ Ագրիպպաս և Բերենիկէ մեծ հանդիսիւ եկան, և մտան յատեան հազարապետներով և քաղաքին պատուաւորներով,
24 փեստոս հրամայեց և բերին զՊօղոս։ Եւ ըսաւ փեստոս, Արքայ Ագրիպպա, և ամենեքին որ մեր հետ էք, կը տեսնէք զսա՝ որոյ վրայ Հրէից բոլոր բազմութիւնը եկան առ իս յերուսաղէմ և հոս ևս, և կ'պագաղակէին ԼՔՒ Չէ պարտ
25 դնա ողջ մնալ. Բայց ես իմանալով ԼՔՒ մեռնելու արժանի բան մը բրած չէ նա, և զի ինքն ևս բողոքեց առ կայսր, որոշեցի զրկել զնա։
26 Որոյ համար չունիմ ինչ հաստատուն ի գրել իմ տիրոջս. ուստի բերի զնա ձեր առջև, և մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպա, որպես զի յետ քննութեան ունենամ գրելու բան մը։
27 Քանզի անվայել կը թուի ինձ բանտարկեալ մը զրկել, և անոր վրայ յանցանք չհմացուցնել։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Հրաման է քեզ խօսել վասն քո։ Յայնժամ Պօղոս ձգելով ձեռքը
2 պատասխան տուաւ իրեն համար։ Հրէից բոլոր ամբաստանութիւններուն համար իմ վրաս, արքայ Ագրիպպա, երանելի կը համարիմ զիս, որ այսօր քու առջևդ պատասխան պիտի տամ.
3 Մանաւանդ որ դուն քայլ գիտես Հրէից բոլոր սովորութիւնները և խնդիրները, վասն որոյ կ'աղաչեմ ունկն դնել ինձ երկայնմտութեամբ։
4 Արդ բոլոր Հրեաները տեղեակ են ԼՔՒ ինչպես ապրած եմ մանկութենէ հետէ, ի սկզբանէ յն-

5 բուսաղէմ իմ ազգիս մէջ ըլլալով, ֆանղի
ի վաղուց անտի գիտեն զիս, եթէ կամին վկայել,
6 թէ մեր կրօնից ճշդագոյն ճանապարհին համեմատ
ապրած եմ փարիսեցի. Եւ հիմա կեցած կը
դատուիմ Աստուծմէ մեր հայրերուն եղած
7 խոստման յուսոյն համար. Որուն մեր երկոտա-
սան ցեղերն անդադար ջոյգ և ցերեկ պաշտե-
լով կը յուսան հասնել. ես այն յուսոյն համար
կ'ամբաստանուիմ ի Հրէից, արքայ Ագրիպպա!
8 Ի՞նչ. չհաւատա՞ըք բան կ'երևի ձեզ Թէ Աստուած
9 կը յարուցանէ մեռելները. Ես ինքն իսկ պարտ
կը համարեի ինձ ճիտսէի Նազովրեցւոյ անուան
10 դէմ ընել չատ բան. Որ և ըրի իսկ յԵրուսա-
ղէմ, առնելով իշխանութիւն քահանայապետանե-
րէն, բանտարկեցի սուրբերէն չատերը, և երբ
11 անոնք կը սպանուէին, հաւանութիւն տուի. Եւ
բոլոր ժողովրդանոցներուն մէջ չատ անգամ
պատժելով զանոնք կը բռնադատեի հայհոյել, և
անոնց դէմ սաստիկ կատղած կը հալածէի մինչև
12 ծոար քաղաքներ. Այսպէս երբ ի Դամասկոս էս
կ'երթայի քահանայապետներէն իշխանութիւն և
13 հրաման առած, կէս օրուան ատեն ի ճանապար-
հին, արքայ, տեսայ յերկինէ լոյս աւելի քան
զլուսաւորութիւն արեգական բոլորտիքս ծագած,
նաև անոնց բոլորտիքը որ իմ հետս կ'երթային.
14 Եւ երբ ամենքս գետին ինկանք, լսեցինք ձայն
որ կ'ըսէր ինձ Եբրայական լեզուով. Սաւուղ,
Սաւուղ, ա՞ղ հալածես զիս. դժուարին է քեզ
15 ընդդէմ խթանի աքացել. Եւ ես ըսի, Դու ո՞վ
ես, Տէր: Եւ նա ըսաւ, Ես եմ Ցիսուս զոր դուն
16 կը հալածես. Բայց եղ և ոտիցդ վրայ կանգնէ.
քանզի վասն այնորիկ երևեցայ քեզ, որ առ-
նուս զքեզ ի ձեռն՝ ընել պաշտօնեայ և վկայ
այն բաներուն զորս տեսար, և այն բաներուն
17 որովք պիտի երևնամ քեզ, Ազատելով զքեզ

այս ժողովուրդէն և հեթանոսներէն, առ որս
18 հիմա կը զրկեմ զքեզ, Անոնց այտունքերը բանալ,
խաւարէ ի լոյս, և զօրմունքէ Սատանայի իշխա-
նութենէն առ Աստուած, որ առնուն մեղաց
թողութիւն և մասնակից ըլլան սուրբերուն հետ
19 հաւատալով յիս: Ուստի, արքայ Ագրիպպա, չէ-
20 զայ անհնազանդ այն երկնային տեսլեան. Այլ
քարոզեցի նախ անոնց որ էին ի Դամասկոս և
յԵրուսաղէմ և բոլոր Հրէաստանի երկիրը և
հեթանոսաց՝ ապաշխարել և դառնալ առ Աս-
տուած, և գործել ապաշխարութեան արժանա-
21 ւոր գործեր: Այս պատճառաւ Հրեայք բռնեցին
զիս տաճարին մէջ, և կը չանային սպաննել:
22 Սակայն Աստուծմէ օգնութիւն հասնելով մինչև
այս օր մնացի՝ վկայութիւն տալով փոքրս և մե-
ծի, բան մը չըսելով այն բաներէն դուրս զորս
մարգարէք և Մովսէս խօսեցան Թէ պիտի ըլլա-
23 չին. Թէ Քրիստոս պիտի չարչարուէր, և Թէ նախ
և առաջ նա մեռելներէն յառնելով լոյս պիտի
քարոզէր ժողովրդեան և հեթանոսաց:
24 Եւ մինչ նա այսպէս պատասխան կու տար ի-
րեն համար, Փեստոս բարձր ձայնիւ ըսաւ, Կը
մոլիս, Պօղոս. բազում ուսմունք կը յիմարեցնու-
25 նեն զքեզ. Իսկ Պօղոս ըսաւ, Ես չեմ մոլիր,
պատուական Փեստոս, այլ ճշմարտութեան և
26 դատաստութեան խօսքեր կ'ըսեմ. Քանզի այս
բաները գիտէ թագաւորը, որոյ և առաջի կը
խօսիմ համարձակ. քանզի չեմ կարծեր Թէ ա-
ռանցմէ բան մը ծածկուած է անկէ, վասն զի
7 այս բանը եղած չէ անկիւն մը: Մարգարէներուն
կը հաւատաս, արքայ Ագրիպպա. գիտեմ Թէ կը
28 հաւատաս: Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Սա-
կաւ մի և՝ զիս համոզես քրիստոնեայ ըլլալ.
29 Եւ Պօղոս ըսաւ, Աստուծմէ կը խնդրէի որ, Թէ՛
սակաւուք և Թէ՛ բազմօք, ոչ միայն դուն, այլ

և ամէնքը որ այսօր կը լսեն ինձ, ըլլային այնպիսի որպիսի եմ՝ բաց ի կապանացս։

30 *Ոտք ելաւ Թագաւորը և կուսակալը և Բերնիկ
31 Նիկէ, և անոնք որ անոնց հետ նստած էին. Եւ դուրս ելլելէն ետքը խօսեցան իրարու հետ և ըսին Թէ Այս մարդը մեռնելու կամ կապուելու
32 արժանի բան մը չըներ։ Եւ Ագրիպպաս ըսաւ Փեստոսի, Չնար էր արձակել այս մարդը, եթէ բողոքած չըլլար ի Կայսր։

ԳԼ. ԻԿ

1 Երբ որոշուեցաւ երթալ մեզ Նաւով Իտալիա, յանձնեցին զՊօղոս և ուրիշ կապեալներ հարիւրապետի մը որոյ անունն էր Ցուլիոս, Սեբաստեան
2 գնդէն։ Եւ Անդրամիտեացի նաւ մը մտնելով, ելանք ի ճանապարհ, և Ասիոյ կողմերէն պիտի նաւէինք։ Նաև Արիստարքոս Մակեդոնացի որ էր
3 Թեսաղոնիկէ՝ մեզի հետ էր։ Եւ ի վաղիւ անդր իջանք ի Սիդոն. և Ցուլիոս մարդասիրութիւն ցուցնելով Պօղոսի, հրաման տուաւ երթալ բա-
4 րեկամներուն և գտնել զարման։ Եւ անկէ ելլելով կխարոսի վարի կողմէն նաւեցինք, վասն զի
5 ընդդէմ էր հովը։ Ցետոյ նաւելով ընդ մէջ Ծովուն Կիլիկիոյ և Պամփիլիոյ, իջանք Լիկիոյ Միւռա
6 *ղաքը։ Եւ հարիւրապետը գտնելով հոն Ագիպտացի նաւ մը որ կ'երթար Իտալիա, մեզուց
7 զմեզ անոր մէջ։ Եւ շատ օրեր ծանր ծանր նաւելով՝ հազիւ հասանք Կնիդոսի մօտ. և որովհետև ընդդէմ էր մեզ հովը, նաւեցինք կրետէի
8 վարի կողմէն Սաղմոնային քովէն։ Եւ դժուարաւ անկէ անցնելով, եկանք տեղ մը, որ Գեղեցիկ

*Ոմանք, Եւ երբ այս բաներն ըսաւ՝ առաք

նաւահանգիստ կ'ըսուէր, որուն մօտ էր Ղասեա քաղաքը։

9 Եւ երբ շատ ժամանակ անցաւ և նաւարկել ևս վտանգաւոր էր, նաև Ծովի ատենն անցած էր
10 արդէն, Պօղոս խրատ կու տար, Եւ ի'ըսէր անոնց, Արդ, կը տեսնեմ որ այս նաւարկութիւնը պիտի ըլլայ տապալանօք և շատ վնասով, ոչ միայն բե-
11 ռին և նաւին, այլ և մեր անձերուն։ Բայց հարիւրապետը կ'անսար մանաւանդ նաւապետին և նա-
12 ւավարին քան Պօղոսի խօսքին։ Եւ որովհետև այն նաւահանգիստը չէր յարմար ձմերելու, շատերը խորհեցան երթալ անկէ, որ թերևս կարող ըլլային հասնիլ և ձմերել ի Փիւնիկէ, նաւահանգիստ կրետէի որ կը նայի դէպ ի հարաւ և արև-
13 մտեան հիւսիս։ Եւ երբ հարաւային մեղմ հով մը փչեց, կարծելով Թէ հասան իրենց նպատակին, Ճամբայ ելան և կ'անցնէին Կրետէի մօտ։ Եւ ոչ յետ բաւմաց ելաւ անոր դէմ ուռուցիկ հովմ, որ
14 Եւրակիկլոն կը կոչուի։ Երբ նաւը չկրնար դիմադրել հովմունդ, Թոյլ տուած կ'երթայինք և կու գայինք։ Եւ դիմելով յետ կոյս կղզեակ մը որ կը կոչուէր Կռաւդա,
15 հազիւ կրցանք բռնել մակոյկը։ Զոր առին և օգնութիւններ գործածելով տակէն կապեցին նաւը։ և վախնալով Թէ գուցէ Յորձանուտն իյնային, առագաստն իջուցած, այնպէս կ'երթային և կու-
16 գային։ Եւ որովհետև սաստիկ ալեկոծութեան
17 մէջ էինք, ի վաղիւն ընկերցին բե՜ռը։ Եւ երրորդ օրը Նաւին գործիները մեր ձեռօք ընկե-
18 ցինք։ Եւ երբ շատ օրեր ոչ արև և ոչ աստեղք կ'երևնէին, և վրթիարիկ ոչ սակաւ ի վերայ կար,
19 մեր ազատուելն յոյսը վերցաւ իսպառ։ Եւ որովհետև շատ օրերէ հետէ ածօթի չէին, անսահման

*Կամ, Ծանծաղուտը

Պօղոս անոնց մէջ կենալով ըսաւ, Ով արք, պարտ էր ձեզ լսել ինձ և չելնել Կրետէ, և չշա-
22 հել այս տառապանքը և վնասը։ Եւ հիմա կը յորդորեմ զձեզ քաջալերուիլ, քանզի ձենէ ոչ ու-
րուք անձին վնաս պիտի ըլլայ, բայց միայն նաւ-
23 ին։ Քանզի այս գիշեր երևեցաւ ինձ հրեշտակ
24 Աստուծոյ, որոյ եմ ես, և զոր կը պաշտեմ, Եւ ըսաւ, Մի՛ երկնչիր, Պօղոս, պարտ է քեզ ելլել
յառաջիման կայսեր. և ահա Աստուած չնորհեց քեզ ամենքը, որ նաւին մէջ քեզի հետ են։
25 Ուստի, արք, քաջալերուեցէ՛ք, քանզի ես կը հա-
ւատամ Աստուծոյ որ այնպէս պիտի ըլլայ, ինչ-
26 պէս ըսուեցաւ ինձ. Միայն թէ հարկ է մեզ կղ-
27 նալ կղզի մի։ Եւ երբ չորեքտասաներորդ գիշերն էր որ Ադրիական ծովուն մէջ կը տարուբերէինք, կէս գիշերին նաւաստիները կը կարծէին թէ
28 երկրի մը մօտեցած էին. Եւ գնատակը նետելով՝ գտան քսան գրկաչափ. և սակաւ մի ևս յա-
ռաջ երթալով՝ դարձեալ նետեցին, և գտան
29 հնգետասան գրկաչափ. Եւ վախնալով թէ գուցէ քարուտ տեղեր իյնային, նաև կողմէն նետեցին չորս խարիսխ, և կը փափաքէին առա-
30 ւօտուն։ Իսկ նաւաստիները նաւէն փախչել ու-
զելով՝ իջուցին մակոյկն ի ծով, պատճառելով որպէս թէ առաջոյ կողմէն ևս խարիսխ պիտի
31 ընկենուին։ Բայց Պօղոս ըսաւ հարիւրապետին և զինուորներուն, Եթէ ատոնք նաւին մէջ չկենան,
32 դուք չէք կրնար ազատիլ։ Անատեն զինուորնե-
րը կտրեցին մակոյկին չուանները, և թողուցին
33 զայս իյնալ։ Եւ երբ առաւօտը մօտ էր, Պօղոս կ'աղաչէր ամենուն կերակուր ուտել, ըսելով, Այսօր չորեքտասան օր է որ դուք սպասելով
34 անօթի մնացած էք, և բան մը կերած չէք։ Ուս-
տի կ'աղաչեմ զձեզ որ կերակուր ուտէք, վասն զի ձեր ազատութեան համար է այս. քանզի ձե-

35 նէ ոչ ուրուք գլխէն մազ մի պիտի կորսուի։ Եւ
այսպէս ըսելով առաւ հաց, և ամենուն առջև
գոհացաւ Աստուծմէ, և կոտրելով սկսաւ ուտել։
36 Եւ ամենքը քաջալերուեցան, և իրենք ևս կերա-
37 կուր կերան։ Եւ նաւին մէջ ամենքը երկու հա-
38 րիւր հօթանասունևվեց հոգի էինք։ Երբ յագե-
ցան կերակրով, նաւը թեթևցուցին՝ ցորենը թափելով ի ծով։
39 Եւ երբ առաւօտ եղաւ, չէին ճանչնար ցամա-
քը, միայն կը նշմարէին ծոց մը որ ծովեզր ու-
նէր, և կը խորհէին, եթէ հնար էր, նաւը մեզ
40 անոր մէջ։ Եւ խարիսխները կտրելով՝ թողուցին ծովուն, և թուլացուցին զեկերուն կապերը, և առագաստը պարզելով հովին՝ կ'երթային դէպ
41 այն ծովեզերը։ Եւ այնպէս տեղ մը հասնելով որոյ երկու կողմը ծով էր, նաւաւցին նաւը. և նաւին առաջոյ կողմը խրելով՝ մնաց անշարժ, և յետա-
42 կողմը կը փակուէր ալեաց սաստկութենէն։ Եւ զինուորները խորհուրդ ըրին կալատածներն սպաննել, որ մի գուցէ ոք լողալ և փախչէր։
43 Բայց հարիւրապետը որ կ'ուզէր ազատել զՊօղոս՝ արգիլեց զանոնք այն խորհուրդէն, և հրամայեց որ անոնց որ կրնային լողալ՝ յառաջագոյն
44 նետուելլ և ելլել ցամաք. Եւ մնացածներն, ոմանք տախտակներով և ոմանք նաւին ուրիշ կտորներու։ և այսպէս ամենքն ազատուելով ելան ի ցամաք։

ԳԼ. ԻԸ

1 Եւ երբ ազատեցան, գիտցան թէ անուն կղզւոյն
էր Մելիտէ. և բարբարոսները ոչ սակաւ մար-
2 դասիրութիւն ցուցին մեզ. Քանզի կրակ վառե-
ցին, և ընկալան զմեզ ամենքս մեր վրայ հասած
3 անձրևին և ցրտոյն համար։ Եւ երբ Պօղոս ժո-

դովից չատ խռիւ և դրաւ կրակին վրայ, եւ մի
4 ելաւ տաքութենէն, և բռնեց անոր ձեռքը։ Եւ
բարբարոսներն երբ տեսան գազանը կախուած
անոր ձեռքէն, կ'ըսէին իրարու, Անտարակոյս
մարդասպան է սա, որ թէպէտ ծովէն ազատե-
5 ցաւ, իրաւունքը չթողուց ապրել։ Իսկ նա գա-
զանը կրակին մէջ թօթափեց և անոր ոչնաս չե-
6 դաւ։ Եւ անոնք կը սպասէին թէ պիտի ուռնար
կամ յանկարծ ինկար մեռեալ։ բայց երբ չատ
սպասեցին, և տեսան թէ ոչնաս չեղաւ անոր,
փոխելով իրենց կարծիքը՝ կ'ըսէին թէ աստուած
7 ումն է։ Եւ այն տեղւոյն բոլորտիքը կային ազա-
րակք կղզւոյն կ'ըսուին, որոյ անունն էր Պուպ-
լիոս, որ ընկալաւ զմեզ և երիք օր հիւրասի-
8 րութեամբ պահեց իրեն քով։ Եւ եղաւ որ Պուպ-
լիոսի հայրը ընթռմով և թանչիւ հիւանդացած
պառկած էր։ և Պօղոս մտաւ անոր քով, և ա-
ղօթելով ձեռուընները դրաւ անոր վրայ և բժըշ-
9 կեց զնաւ։ Եւ երբ այս եղաւ, ուրիշ հիւանդները որ
այն կղզւոյն մէջ էին՝ կու գային և կը բժշկուէին,
10 Որ և բազում պատուով պատուեցին զմեզ, և
երբ կ'երթայինք, տուին մեզ որ հարկաւոր էր։
11 Եւ երեք ամիս ետքը ճամբայ ելանք Ալէք-
սանդրացի նաւով մը, որ ձմերած էր այն կղզին,
12 և ուներ Դիոսկուրաց նշանը։ Եւ Սիրակուսա իջ-
13 նելով կեցանք հոն երեք օր։ Եւ անկէ պտոյտ
մը ընելով՝ հասանք Հռեգիոն։ և որովհետև օր
մը ետքը հարաւ փչեց, երկրորդ օրը եկանք Պա-
14 տիոլոս։ Եւ հոն գտանք եղբայրներ, որ աղա-
չեցին զմեզ եօթն օր մնալ իրենց քով։ և յետոյ
15 ելանք ի Հռոմ։ Եւ անկէ եղբայրները երբ լսե-
ցին մեր վրայ, եկան դիմաւորել զմեզ մինչև Ապ-
փիոսի վաճառանոցը և Երեք պանդոկները։ և
Պօղոս տեսնելով զանոնք՝ գոհացաւ Աստուծոյ
և քաջալերուեցաւ։

16 Եւ երբ մտանք ի Հռոմ, հարիւրապետն յանձ-
նեց կապուածները զօրապետին, իսկ Պօղոսի
հրաման եղաւ իւր պահապան զինուորին հետ
17 մնալ առանձին։ Եւ եղաւ որ երեք օր ետքը
կոչեց նա Հրեից դիւանաւորները, և երբ եկան ի մի
վայր, ըսաւ անոնց, Արք եղբարք, ես ժողովրդ-
դեան կամ հայրենական սովորութեանց դէմ
բան մը չըրած, երբեսաղէմէ կապուած մատ-
18 նուեցայ Հռոմայեցւոց ձեռքը։ Որ երբ քննեցին
զիս, կամեցան արձակել, քանզի մահու արժանի
19 յանցանք չկար ինձ։ Բայց երբ Հրեայք հակա-
ռակեցան, հարկ եղաւ ինձ բողոքել ի կայսր, ոչ
որպես թէ ամբաստանութիւն ունեմ ազգիս դէմ,
20 Ուստի այս պատճառաւ աղաչեցի տեսնել զձեզ
և խօսել ձեզ։ քանզի Իսրայելի յուսոյն համար
21 կը կրեմ ես այս շղթան, Եւ անոնք ըսին անոր,
Մենք քու վրադ Հրէաստանէ ոչ թուղթեր ա-
ռինք, և ոչ եղբայրներէն ոք հոս գալով քու
վրադ չարութիւն մը պատմեց կամ խօսեցաւ։
22 Բայց կ'ուզէինք լսել քենէդ թէ դուն ինչ կը
խորհիս, քանզի այդ աղանդոյն վրայ յայտնի է
մեզ թէ ամենայն ուրեք կը խօսուի ատոր դէմ,
23 Եւ օր որոշելով նմա գնացին առ նա անոր օթե-
ւանը չատեր, որոց կը ծանուցաներ Աստուծոյ
թագաւորութիւնը վկայութեամբ, և կը համո-
զէր զանոնք Յիսուսի վրայ յօրինաց Մովսէսի և
24 ի մարգարէից առաւօտէ մինչև երեկոյ։ Եւ ոմանք
կը հաւատային ըսուածներուն, և ոմանք չէին
25 հաւատար։ Եւ իրարու հետ չմիաբանելով մեկ-
նեցան, երբ Պօղոս խօսք մը ըսաւ, Թէ Հոգին
Սուրբ բարւոք խօսեցաւ մեր հայրերուն Եսայի
26 մարգարէին բերնով, Եւ ըսաւ, Գնա այս ժողո-
վրդեան և ըսէ, Լսելով պիտի լսէք, և չիմա-
նաք, և տեսնելով պիտի տեսնէք, և չտեսնէք։
27 Քանզի այս ժողովրդեան սիրտը թանձրացաւ,

և էբէնց ականջներով ծանր լսեցին, և իրենց
աչուքները կախուցին, դի մի երբեք տեսնեն ա-
չօք, և լսեն ականջօք և իմանան սրտիւք, և
28 դառնան, և ես բժշկեմ զանոնք։ Ուստի յայտ-
նի ըլլայ ձեզ որ Աստուծոյ փրկութիւնը հեթա-
29 նոսաց ղրկուեցաւ, և անոնք պիտի լսեն։ Եւ
երբ ըսաւ զայս, Հրեայք երթան ապստաքս, չատ
վէճ ունենալով իրենց մէջ։
30 Եւ ամբողջ երկու տարի կեցաւ Պօղոս իւր
31 վարձով բռնուած տան մէջ. Եւ կ'ընդունէր ի-
32 րեն եկողներուն ամէնքը, կը քարոզէր Աստու-
ծոյ թագաւորութիւնը, և կը սորվեցուներ Տէր
Յիսուս Քրիստոսի վրայ անխափան ամենայն հա-
մարձակութեամբ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, ծառայ Յիսուսի Քրիստոսի, առաքեալ
ըլլալու կոչուած, Աստուծոյ աւետարանին համար
2 որուհետեւ, (որ յառաջ խոստացաւ իւր մարգա-
3 բէներուն միջոցով սուրբ Գրուածքներուն) իւր Որդւոյն
Յիսուսի մէջով Քրիստոսի վրայ՝ որ մարմ-

*Ոմանք կ'ուզեն այս համարը

4 նով կողմանէ Դաւիթի սերունդէն եղաւ, Այն որ
սրբութեան հոգւոյն կողմանէ յայտնուեցաւ Որ-
դի Աստուծոյ զօրութեամբ՝ յառնելով ի մեռե-
5 լոց. Որով ընդունեցանք և առաքելութիւն առինք
հաւատոյ հնազանդութեան համար յամենայն
6 ազգս անոր անուան համար. Որոս և դուք
7 կոչուածները էք Յիսուսի Քրիստոսի. Ձեր ամե-
նուն որ ի Հռոմ էք, սիրելեաց Աստուծոյ,
սուրբ ըլլալու կոչեցելոցդ՝ շնորհք և խաղաղու-
թիւն ձեզ յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տէառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
8 Նախ կը գոհանամ իմ Աստուծմէս ի Յիսու
սի Քրիստոսի ձեր ամենուն համար, որ ձեր
9 հաւատքը կը պատմուի բոլոր աշխարհ։ Քանզի
վկայ է ինձ Աստուած, զոր կը պաշտեմ հոգւով
10 յաւետարանի Որդւոյ նորա, Թէ ինչպէս անդա-
դար կը յիշեմ զձեզ, հանապազ յաղօթս իմ
խնդրելով որ թերևս անգամ մը յաջողի ինձ
11 կամքն Աստուծոյ գալ առ ձեզ։ Քանզի կը փա-
փաքիմ տեսնել զձեզ, որ հաղորդեմ ձեզ հո-
գեւոր շնորհք մը որպէս զի հաստատուիք.
12 Այսինքն ես ևս միխիթարակից ըլլամ ձեզ իմ ևս
13 ձեր փոխադարձ հաւատոյն միջոցաւ։ Սակայն
չեմ ուզեր որ անգէտ ըլլաք, եղբայրներ, Թէ
շատ անգամ կամեցայ գալ առ ձեզ, և մինչև
ցարդ արգելուեցայ, որ ձեր մէջ ևս ունենամ
14 պտուղ ինչպէս ուրիշ հեթանոսաց մէջ։ Ծուներց
և բարբարոսաց, իմաստնոց և անմտաց ևս պար-
15 տական եմ։ Ուստի որչափ ի կարի իմում է, յօ-
ժարութիւն ունիմ ձեզ ևս որ ի Հռոմ էք՝ քա-
րոզել աւետարանը։
16 Քանզի ես ամօթ չեմ համարիր *աւետարանը,
վասն զի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր
հաւատացեալոց փրկութեան համար, նախ Հրեին

*Ոմանք, Քրիստոսի աւետարանը

17 և ասա Ցուղին՝ Քանզի անով Աստուծոյ ար-
դարութիւնը որ հաւատքէն է՝ հաւատոյ համար
կը յայտնուի. ինչպես գրուած է Թէ Արդարն
հաւատքէն պիտի ապրի։
18 Քանզի Աստուծոյ բարկութիւնը կը յայտնուի
յերկինից ի վերայ ամենայն ամբարշտութեան և
անիրաւութեան մարդկան որ ճշմարտութիւնը
19 բռնած են անիրաւութեամբ։ Վասն զի Աստու-
ծոյ վրայ գիտնալու բանն յայտնի է անոնց մէջ,
20 վասն զի Աստուած յայտնեց անոնց։ Քանզի ա-
նոր անեղական բաներն աշխարհի սկիզբէն ստեղ-
ծուածներով իմացուելով կը տեսնուին, այսինքն՝
անոր յիւնիկնաւոր զօրութիւնը և աստուածու-
թիւնը, որպէս զի առանց պատասխանի մնան։
21 Քանզի զԱստուած ճանչնալով՝ ոչ իբրև Աստուած
փառաւորեցին կամ շնորհակալ եղան, այլ ու-
նայնացան իրենց խորհուրդներուն մէջ, և *ա-
22 նոնց սիրտն անմտութեամբ խաւարեցաւ։ Ըսե-
23 լով Թէ իմաստուն են՝ յիմարեցան։ Եւ փոխե-
ցին անեղծին Աստուծոյ փառքն ի նմանութիւն
պատկերի եղծանելի մարդոյ և թռչնոց և չոր-
քոտանեաց և սողնոց։ Վասն որոյ և Աստուած
մատնեց զնոսա պղծութեան իրենց սիրտերուն
ցանկութիւններով՝ իրենց մարմինները խայտա-
25 ռակել իրենց մէջ։ Որք փոխեցին Աստուծոյ
ճշմարտութիւնը սուտ հետ, և մատուցին երկրը-
պագութիւն և պաշտօն արարածոյ քան Արար-
26 չին, որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն։ Վասն
որոյ Աստուած անարգ կրից մատնեց զնոսա, ո-
րոց էգերն անգամ փոխեցին բնական պէտքը
27 յայն որ բնութեան դէմ է։ Նոյնպէս արուներըն
Թողուլով կնոջ բնական պէտքն՝ իրենց ցանկու-
թեամբ վառեցան ի միմեանս, արուք ընդ արուս

*Ցոյն, անոնց անմիտ սիրտը

խայտառակութիւն կը գործէին, և իրենց մոլո-
րութեան վայելուչ հատուցումը կ'ընդունէին իրենց
28 վրայ։ Ու որովհետև չուզեցին պահել զԱստուած
ի գիտութեան, Աստուած մատնեց զնոսա անարգ
29 խորհուրդներու՝ անվայել բաներ ընել։ Որ լցուած
էին ամէն անիրաւութեամբ, պոռնկութեամբ,
անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ,
լի նախանձու, մարդասպանութեամբ, հակառա-
կութեամբ, նենգութեամբ, չարաբարութեամբ.
30 էին փսսւք, Զարախօսք, Աստուածատեացք,
նախատողք, հպարտք, ամբարտաւանք, չարա-
31 հնարք, ծնողաց անհնազանդք, Անմիտք, ուխ-
տադրուժք, անգութք, անհաշտք, անողորմք.
32 Որ գիտնալով Աստուծոյ դատաստանը, Թէ ա-
նոնք որ կ'ընեն այսպիսի բաներ՝ մահու արժա-
նի են, ոչ միայն կ'ընեն այն բաներն, այլ և հա-
ւանութիւն կու տան ընդոներուն։

Գլ. Բ

1 Ուստի, ով մարդ, ով որ ես որ կը դատես,
պատասխան չունիս տալու. քանզի ինչ բանով
որ ուրիշը կը դատես, ՈՒՂ կը դատապարտես
քու անձդ, վասն զի դուն որ կը դատես՝ կ'ը-
2 նես նոյն բաներըն։ Բայց գիտենք Թէ Աստուծոյ
դատաստանը ճշմարտութեամբ կ'ըլլայ անոնց
3 վրայ որ այնպիսի բաներ կը գործեն։ Արդ, ով
մարդ, դուն որ կը դատես այնպիսի բաներ ը-
նողներըը, և դուն նոյն բաները կ'ընես, կը կար-
ծե՞ս Թէ դուն պիտի մնաս դուն Աստուծոյ դա-
4 տաստանէն. կամ Թէ կ'արհամարհե՞ս անոր ա-
նչափ քաղցրութիւնը և համբերութիւնը և եր-
կայնմտութիւնը, չգիտնալով Թէ Աստուծոյ
քաղցրութիւնը կ'առաջնորդէ զքեզ յապաշխա-
5 րութիւն։ Բայց դուն քու խստութեամդ և

անղեղջ սրտովդ կը դիմես քու անձիդ բարկու-
Թիւն՝ բարկութեան և Աստուծոյ արդար դա-
6 տաստանին յայտնուելու օրուան համար։ Ա՛յն
որ պիտի հատուցանէ իւրաքանչիւր իւր գոր-
7 ծունեն փոխարէն։ Ցատիեանական կեանք անոնց
որ բարի գործերու մէջ համբերութեամբ աւելով՝
կը խնդրեն փառք և պատիւ և անմահութիւն.
8 Բայց անոնց որ հակառակ են, և ճշմարտութեան
անհնազանդ և անիրաւութեան հնազանդած՝
9 բարկութիւն և սրտմտութիւն. Նեղութիւն և
տառապանք պիտի ըլլայ ամէն մարդու վրայ որ
չար կը գործէ, առաջ Հրէին և ապա Ցունին.
10 Իսկ փառք և պատիւ և խաղաղութիւն այն ա-
մէնուն որ բարի կը գործէ, առաջ Հրէին և ա-
11 պա Ցունին։ Վասն զի Աստուծոյ քով աչառու-
12 թիւն չկայ։ Քանզի անոնք որ առանց օրինաց
մեղան, առանց օրինաց պիտի կորսուին. և ա-
նոնք որ մեղան ընդ օրինօք՝ օրինօք պիտի
13 դատուին, (Քանզի ոչ թէ օրէնքը լսողներն են
արդար առաջի Աստուծոյ, այլ օրէնքը կատա-
14 րողները պիտի արդարանան։ Քանզի հեթանոսք
որ օրէնք չունին, երբ բնականապես կը գործեն
օրինաց գործերն, օրէնք չունենալով քու-
15 րեանք կ'ըլլան իրենց անձանց օրէնք։ Որ օրինաց
գործն իրենց սրտին մէջ գրուած կը ցուցնեն ի-
րենց խղճին վկայութեամբ, և իրենց խորհուրդ-
ներուն իրար յանդիմանելովը կամ իրաւունք
16 տալովը,) Այն օրը որ Աստուած պիտի դատէ
զգաղտնին մարդկան ի ձեռն Ցիսուսի Քրիստոսի
ըստ աւետարանիս։
17 Ահա դուն Հրէայ կոչուած ես և յեցեալ ես
18 յօրէնս, և կը պարծիս յԱստուած, Եւ գիտես
ՆՈՒՐ կամքը, և տարբերը բաները կը զանազանես՝
19 օրէնքէն խրատուած։ Եւ վստահ ես յանձն քո
լինել առաջնորդ կուրաց, լոյս խաւարելոցն,

20 Խրատուու անմտաց, վարդապետ տղայոց, և Թէ
ունիս գիտութեան և ճշմարտութեան կերպա-
21 րանքն յօրէնս։ Իսկ արդ դուն որ կ'ուսուցանես
ընկերդ, չե՞ս ուսուցաներ անձդ. որ կը քարո-
22 զես չգողանալ, կը գողանա՞ս. Որ կ'ըսես չշնալ,
կը շնա՞ս. որ կը գարշիս ի կուռց, սրբապղծու-
23 Թիւն կ'ընես. Որ կը պարծիս օրինօք, օրինա-
24 զանց ըլլալով՝ զԱստուած կ'անարգե՞ս։ Քանզի
Աստուծոյ անունը ձեր պատճառաւ կը հայհոյուի
հեթանոսաց մէջ, ինչպէս գրուած է։
25 Արդ Թլփատութիւնն ունի օգուտ, Եթէ պա-
հես օրէնս. իսկ Եթէ օրինաց դէմ յանցաւոր
26 ես, Թլփատութիւնդ եղաւ անթլփատութիւն։
Ուստի Եթէ անթլփատութիւնը պահէ օրինաց ի-
րաւունքը, ո՞չ ապաքէն անոր անթլփատութիւնը
27 պիտի համարուի Թլփատութիւն. Եւ այն որ ի բնէ
անթլփատութիւն է՝ օրէնքը կատարելով պիտի
դատապարտէ զքեզ, որ գրով և Թլփատութեամբ
28 յանցաւոր ես օրինաց։ Քանզի Հրեայ այն չէ որ
արտաքուստ է, և Թլփատութիւն այն չէ որ ար-
29 տաքուստ մարմնով է։ Այլ Հրեայ այն է որ ի
ներքուստ է, և Թլփատութիւն՝ սրտինը, հոգ-
ւով, և ոչ Թէ գրով. որոյ գովութիւնը ոչ Թէ
ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ։

Գլ. Գ

1 Ի՞նչ աւելի ունի ուրեմն Հրեայն, կամ ի՞նչ օ-
2 գուտ Թլփատութենեն, Շատ՝ ամէն կերպով.
Նախ այն՝ որ Աստուծոյ պատգամները հաւա-
3 տացուեցան անոնց։ Քանզի Եթէ ոմանք չհաւա-
տացին, ի՞նչ. միթէ անոնց անհաւատութիւնը կը
խափանէ՞ը Աստուծոյ հաւատարմութիւնը. քա-
4 լիցի։ Սակայն Աստուած ճշմարիտ Թող ըլլայ, և
բոլոր մարդիկ սուտ, ինչպէս որ գրուած է, Որ

քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատուես
5 լուս առնելդ դուն յաղթես։ Ուրեմն եթէ մեր ա-
նիրաւութիւնը յայտնի կը ցուցնէ Աստուծոյ ար-
դարութիւնը, ի՞նչ ըսենք. միթէ անիրաւ է Աս-
6 տուած որ կը բերէ բարկութիւնը. (Մարդկօրէն
կ'ըսեմ.) քա՛չ լեցի. ապա թէ ոչ ի՞նչպէս պի-
7 տի դատէ Աստուած զաշխարհս։ Քանզի եթէ Աս-
տուծոյ ճշմարտութիւնը կ'առաւելու իմ ստու-
թեամբս իւր փառացը համար, ալ ես ես ընդէ՞ր
8 կը դատուիմ իբրև մեղաւոր։ Ու չէ՞ համ
պէտ չէ ըսել, ինչպես ոմանք կ'ըսեն չարախօ-
սութիւն ընելով մեր վրայ թէ կ'ըսենք, Գործենք
չարը որ բարին գայ. որոց դատապարտութիւնն
յիրաւի է։

9 Ու արդ, ի՞նչ. աւելի՞ ունք իւիք. արդարև. և
ոչ իւիք. վասն զի յառաջագոյն մեղադրեցինք
զՀրէայս և զհեթանոսս թէ ամենեքին ընդ մեղ
10 ք տակ են. ինչպես գրուած է, թէ Արդար չկայ և
11 ոչ մի. Չկայ ոք որ իմանայ, չկայ ոք որ խնդրէ
12 զԱստուած։ Ամենքը խոտորեցան, միանգամայն
անպիտանացան. բարութիւն ընող չկայ, չկայ և
13 ոչ մի։ Բացուած գերեզման է անոնց կոկորդը.
իրենց լեզուաւ եղան նենգաւոր. իժերու թոյն կայ
14 անոնց շրթանց տակ. Անոնց բերանը լի է անիծիւք
15 և դառնութեամբ. Անոնց ոտքերնըն արագ են
16 թափել արիւն. կործանումն և թշուառութիւն
17 կայ անոնց ճամբաներուն մէջ. Ու խաղաղութեան
18 ճամբան չճանչցան. Աստուծոյ երկիւղը չկայ ա-
19 նոնց աչուըներուն առջև։ Գիտենք սակայն թէ
օրէնքն ինչ որ կ'ըսէ, կ'ըսէ անոնց որ ընդ օրինօք
են. որպէս զի ամէն բերան խցուի, և բոլոր աշխարհ
20 դատապարտուած ըլլայ Աստուծոյ առջև. Քանզի
օրինաց գործերէն ոեւէ մարմին մը պիտի չար-
դարանայ անոր առջև, քանզի օրինօք է մեղքը
ճանչնալ։

21 Բայց հիմա առանց օրինաց՝ Աստուծոյ արդա-
րութիւնն յայտնուած է, վկայեալ յօրինաց և
22 ի մարգարէից. Այսինքն Աստուծոյ արդարու-
թիւնը որ Յիսուսի Քրիստոսի հաւատքին է՝ բո-
լոր հաւատացելոց և անոնց ամենուն վրայ. քանի-
23 զի խտրութիւն չկայ. վասն զի ամենքը մեղանչ
24 և մրիտեալ են Աստուծոյ փառքէն. Ու անոր
շնորհօքը ձրի կ'արդարանան փրկութեամբը որ է
25 Քրիստոս Յիսուս. Զոր յառաջագոյն սահմանեց
Աստուած ի քաւութիւն հաւատով յարիւն նո-
րա, Աստուծոյ երկայնմտութեան առնելոյն յա-
ռաջագոյն գործուած մեղաց թողութիւն տալով
26 ցուցնելու համար իւր արդարութիւնը. Այսինքն
ցուցնելու համար իւր արդարութիւնն այս ժա-
մանակիս մէջ, որ ինք արդար ըլլայ, և արդա-
րացունէ զանոնք որ Յիսուսի հաւատքէն են։
27 Ուրեմն ո՞ւր է պարծանքը. խափանեցաւ. ո՞ր օ-
րէնքէն, գործերո՞ւն. ոչ, այլ հաւատոյ օրէնք-
28 քէն. Քանզի կը համարինք թէ մարդ կ'արդա-
29 րանայ հաւատով առանց գործոց օրինաց։ Միթէ
Աստուած միայն Հրէից է և հեթանոսաց ոչ.
30 այո, հեթանոսաց ևս։ Քանզի մի է Աստուած որ
կ'արդարացունէ թլփատութիւնն հաւատքէն և
31 անթլփատութիւնը՝ հաւատքով. Ուստի
մենք հաւատով կը խափանե՞նք օրէնքը. քա՛չ
լեցի. այլ կը հաստատե՞նք օրէնքը։

Գլ. Դ

1 Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրահամ
2 մեր նահապետն ըստ մարմնոյ. Քանզի եթէ Աբ-
րահամ գործով էր արդարացեալ, կ'ունենայր
3 պարծանք, բայց ոչ թէ Աստուծոյ առջև. Քանզի
ի՞նչ կ'ըսէ Գիրքը. Աբրահամ հաւատաց Աստու-
ծոյ, և այն համարուեցաւ նմա արդարութիւն

4 Բայց այն որ գործ մը կ'ընէ՝ վարձքը չհամարուիր
5 անոր իբրև շնորհք, այլ իբրև պարտք։ Իսկ այն
որ չգործեր, բայց կը հաւատայ անոր որ կ'արդա-
րացունէ ամբարիշտը, անոր հաւատքը կը հա-
6 մարուի նմա արդարութիւն։ Ինչպես Դաւիթ ևս
կ'ըսէ այն մարդուն երանութիւնը որուն Աս-
տուած արդարութիւն կը համարի առանց գոր-
7 ծոց. Երանի անոնց, որոց անօրէնութիւնները
ներուեցան, և որոց մեղքերը ծածկուեցան։
8 Երանի այն մարդուն որուն մեղք չհամարիր Տէրը։
9 Ուստի այս երանութիւնը թլփատութեա՞ն վրայ
է, թէ անթլփատութեան վրայ ևս. քանզի կ'ը-
սենք թէ հաւատքն արդարութիւն համարուե-
10 ցաւ Աբրահամու։ Ուրեմն ինչպէս համարուեցաւ.
մինչ ի թլփատութե՞ն էր, թէ չանթլփատու-
թեան. ոչ թէ ի թլփատութեան, այլ չանթլփա-
11 տութեան. Եւ թլփատութեան նշանն առաւ հինիք
արդարութեան հաւատոյն զոր ունէր անթլփա-
տութեան առնէին, որ ինք հայր բոլոր
բոլոր այն հաւատացելոց որ անթլփատութենէ են,
(անոնց ևս արդարութիւն համարուելու համար,)
12 եւ հայր թլփատութեան՝ ոչ միայն անոնց որ
թլփատութենէն են, այլ և անոնց որ կը քալեն
մեր հօրը Աբրահամու հաւատոյ չափիներուն մէջ
13 զոր ունեցաւ անթլփատութեան ժամանակ։ Զանի
Աբրահամու և անոր սերնդեան զաւիսարհ ժա-
ռանգելու խոստումը ոչ թէ օրէնքով եղաւ,
14 այլ հաւատոյ արդարութենէն։ Զանզի եթէ ժա-
ռանգ բլլային անոնք որ օրէնքէն են, ունայն
պիտի բլլար հաւատքը և խոստումը պիտի խա-
15 փանուէր։ Վասն զի օրէնքը բարկութիւն կը
գործէ. քանզի ուր օրէնք չկայ, օրինազանցու-
16 թիւն ևս չկայ։ Վասն որոյ ՚ի հաւատէ բլլալ է
հաւատքին է, որ շնորհօք եղած բլլայ, որպէս զի
խոստումը հաստատուն բլլայ բոլոր սերնդեան,

ոչ միայն անոր որ օրէնքէն է, այլ և անոր որ
է ի հաւատոյ Աբրահամու, որ մեր ամենուն հայրն
17 է, (ինչպէս որ գրուած է թէ Շատ ազգերու
հայր ըրի զքեզ։) Աստուծոյ առջև, որուն հաւա-
տաց նա, այն որ կենդանի կ'ընէ մեռածները, և
18 կը կոչէ չգոն իբրև գոյ։ Որ չյուսալուն յուսով
հաւատաց թէ շատ ազգերու հայր պիտի բլլար,
(ինչպէս որ բսուեցաւ ևս, թէ Ձեր սերունդդ
19 այսպէս պիտի բլլայ.) Եւ չբլլալով տկար ի հա-
ւատս՝ չնայեցաւ իւր մարմնոյն որ էր արդէն իբ-
րեւ մեռեալ, (քանզի իբր հարիւրամեայ էր,) և
20 ոչ Սատանայի արգանդն մեռելութեանը. Եւ ան-
հաւատութեամբ չերկմտեցաւ Աստուծոյ խոստ-
մանէն, այլ հաւատով զօրացաւ՝ փառք տուաւ
21 Աստուծոյ, Եւ իւր մտաց մէջ հաստատ պահեց
22 թէ այն որ խոստացաւ, կարող է և ընել։ Վասն
այսորիկ համարուեցաւ նմա արդարութիւն։
23 Բայց ոչ միայն նորա համար գրուեցաւ թէ
24 համարուեցաւ նմա, Այլ և մեզի համար որոց
պիտի համարուի, որ կը հաւատանք այնմ որ յա-
25 րոյց մեռեալներէն զՏէր մեր Յիսուս, Այն որ
մատնուեցաւ մեր յանցանաց համար, և յարեաւ
արդարացուցանելու համար զմեզ։

Գլ. Ե

1 Ուստի մենք հաւատով արդարացած բլլալով
խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ Տեառն
2 մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռաք. Որով մուտք
ընկալանք հաւատով այս շնորհաց մտանիան ևս,
յորում կեցած ենք, և կը պարծինք յուսով
3 փառացն Աստուծոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ
և կը պարծինք ի նեղութիւնս. քանզի գիտենք
4 թէ նեղութիւնը կը գործէ համբերութիւն, Եւ
համբերութիւնը՝ փորձառութիւն, և փորձառու-

5 Թիւնը՝ յոյս. Եւ յոյսն ամօթով չ՚ողուր. քանզի Աստուածոյ սէրը սփռեալ է մեր սիրտերուն
6 մէջ Հոգւոյն Սրբոյ ձեռօք, որ տրուեցաւ մեզ։ Վասն զի մինչ մենք դեռ տակաւ էինք, յարմար ժամանակին Քրիստոս մեռաւ ամաչչուոց հա-
7 մար։ Վասն զի արդարոյ մը համար հազիւ Թէ կը մեռնի ոք. (բայց բարի մարդու մը համար Թե-
8 րեւս համարձակի ոք մեռնել.) Սակայն Աստուած իւր սէրը որ մեր վրայ՝ յայտնեց, որ մինդեռ
9 մեղաւոր էինք, Քրիստոս մեռաւ մեզի համար, ուրեմն հիմա որ անոր արեանմէն արդարացանք, ո՛րչափ եւս առաւել անով պիտի ազատինք բար-
10 կաւթենէն։ Վասն զի եթէ, մինչ Թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք անոր Որդւոյն մահուամբ, ո՛րչափ եւս առաւել՝ մինչ հաշտուած
11 ենք՝ պիտի ապրինք անոր կենօքը։ Եւ ոչ միայն այս, այլ եւ կը պարծինք ևս յԱստուած Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք, որով արդէն ընկալանք հաշտութիւնը։
12 Վասն զի ինչպես որ մի մարդէ մեղքը մտաւ յաշխարհ, և այն մեղքին մահը, և այնպես բոլոր մարդոց վրայ տարածեցաւ մահը, *քանզի ամէն-
13 քը մեղան։ (Վասն զի մինչև օրէնքը մեղք կար յաշխարհի. բայց մեղք չհամարուիր ուր օրէնք
14 չկայ։ Սակայն մահը թագաւորեց յԱդամայ մինչեւ ի Մովսէս՝ Ադամայ յանցանաց նման չմեղան-
15 ղողներուն վրայ եւս, որ օրինակ էր անոր որ յա-
տոյ պիտի գար։ Բայց ոչ թէ ինչպես յանցանքը՝ նոյնպէս և շնորհքն է։ քանզի եթէ միոյն յան-
ցանօք շատերը մեռան, որչափ եւս առաւել Աստուծոյ շնորհքը և պարգեւը որ մի մարդուն Յիսուսի Քրիստոսի շնորհօքն է՝ աւելցաւ շատերուն
16 վրայ։ Եւ ոչ թէ այս պարգեւն այնպէս է՝ ինչպես

*կամ՝ որով

մէկէ մը որ մեղանչեց. քանզի դատաստանը մէկ դէպքէն դատապարտութեան մէջ Նէրեց, բայց շնորհքը շատ մեղքերէն փոքր յարդարութեան։
17 Վասն զի եթէ մի մարդուն մեղօք մահը թագաւորեց այն մէկով, ո՛րչափ եւս առաւել անոնք որ շնորհաց և արդարութեան պարգեւին առատութիւնը կ՚առնուն, պիտի թագաւորեն ի կեանս
18 միոյն Յիսուսի Քրիստոսի ձեռօք։) Ուրեմն ինչպէս միոյն յանցանօք բոլոր մարդոց դատապարտութեան չէ՜ր, նոյնպէս միոյն արդարութեամբ բոլոր մարդոց կենաց արդարու-
19 թեան չէր բոլոր մարդոց կենաց արդարու-
թեան։ Վասն զի ինչպես որ միոյ մարդուն անհնազանդութեամբ շատերը մեղաւոր եղան, նոյնպես միոյն հնազանդութեամբ շատերը
20 պիտի ըլլան արդար։ Սակայն օրէնքը մէջ մտաւ որ յանցանքը բազմանայ. բայց ուր առաւել եղաւ մեղքը, ևս առաւել եղաւ շնորհքը։ Որ
21 ինչպես մեղքը թագաւորեց մահուամբ, նոյնպէս շնորհքը թագաւորէ արդարութեամբ ի կեանս յաւիտենից Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։

Գլ. Զ

1 Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք հիմա. մնա՞նք ի մեղս,
2 որ շնորհքը բազմանայ։ Գա՛ւ լիցի. մենք որ մեռանք մեղաց, ի՞նչպէս դեռ կենանք անոր մէջ։
3 Չէ՞ք գիտեր, Թէ մենք որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուեցանք։
4 Անոր հետ թաղուեցանք մկրտութեամբ մահուան համար, որ ինչպես Քրիստոս փառօք Հօր յարեաւ ի մեռելոց, նոյնպէս և մենք քալենք կենաց
5 նորոգութեան մէջ։ Վասն զի եթէ անկակից եղանք անոր մահուանը նմանութեամբ, պիտի ըլ-
6 լանք նաև անոր յարութեանը։ Այս գիտնանք

որ մեր հին մարդը խաչակից եղաւ անոր, որպէս
զի մեղայ մարմինը խափանուի, որ այսուհետեւ
7 չծառայենք մեղայ։ Վասն զի այն որ մեռած է
8 հնչաց՝ արդարացած է ի մեղայ։ Արդ եթէ մենք
Քրիստոսի հետ մեռանք, կը հաւատանք թէ ա-
9 նոր հետ պիտի ապրինք եւս։ Գիտենք թէ
Քրիստոս որ յարուցեալ է ի մեռելոց՝ դարձեալ
չմեռնիր. այլ եւս մահը չունի իշխանութիւն անոր
10 վրայ։ Վասն զի մինչ մեռաւ, մեղայ մեռաւ մի
անգամ, եւ որ կենդանի է՝ կենդանի է Աստու-
11 ծոյ։ Այսպէս դուք ձեր անձերն համարեցէք մե-
ռած մեղայ, բայց կենդանի Աստուծոյ՝ Տէառն
12 մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։ Ուստի այլ եւս
մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմնոյն
13 վրայ, որ անոր ցանկութեանց հնազանդիք։ Եւ
մի՛ ընծայէք մեղայ ձեր անդամները գործիք ըլ-
լալ անիրաւութեան, այլ ձեր անձերն ընծայե-
ցէք Աստուծոյ, որպէս թէ մեռելներէ կենդա-
նացած, եւ ձեր անդամներն արդարութեան գոր-
14 ծիք Աստուծոյ։ Քանզի մեղքը ձեր վրայ պիտի
չիշխէ. վասն զի չէք ընդ օրինօք, այլ ընդ շնոր-
հօք։
15 Ուրեմն ի՞նչ. մե՞ղք գործենք որ չենք ընդ օ-
16 րինօք՝ այլ ընդ շնորհօք. քա՛ւ լիցի։ Չէ՞ գիտեր
թէ որուն որ կ'ընծայէք ձեր անձերը ծառայ ի
հնազանդութիւն, ծառայ էք որուն որ կը հնա-
զանդիք, թէ՛ մեղայ՝ ի մահ, եւ թէ՛ հնազան-
17 դութեան՝ յարդարութիւն։ Բայց գոհութիւն
Աստուծոյ, որ ԷՒ դուք մեղայ ծառայ էիք,
սակայն ի սրտէ հնազանդեցաք այն վարդապե-
տութեան դաղափարին որ յանձնուեցաւ ձեզ։
18 Ուստի դուք ազատ ըլլալով ի մեղայ՝ ծառայ
19 եղաք արդարութեան։ (Մարդկօրէն կ'ըսեմ,
ձեր մարմնոյն տկարութեան համար.) քանզի
ինչպէս ընծայեցիք ձեր անդամներն ծառայ

պղծութեան եւ անօրէնութեան յանօրէնութիւն,
նոյնպէս հիմա ընծայեցէք ձեր անդամները ծա-
20 ռայ արդարութեան ի սրբութիւն։ Վասն զի երբ
դուք էիք ծառայք մեղայ, ազատ էիք արդա-
21 րութենէ։ Ուրիմն ի՞նչ պտուղ ունէիք յայնժամ
այն բաներէն որովհետեւ հիմա կ'աչխատիք. քանզի ա-
22 նոնց վախճանը մահ է։ Բայց հիմա ազատուած ի
մեղայ եւ Աստուծոյ ծառաներ եղած՝ ունիք ձեր
պտուղը սրբութեամբ, եւ ի վախճանի յաւիտենա-
23 կան կեանք։ Քանզի մեղայ վարձքը մահ է,
բայց Աստուծոյ շնորհքն յաւիտենական
կեանք՝ Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։

Գլ. Ը

1 Ա՛ԻԹ չէ՞ք գիտեր, եղբայրներ, (քանզի կը խօ-
սիմ օրէնքը գիտցողներուն,) որ օրէնքը կ'իշխէ
2 մարդուս վրայ ցորչափ կենդանի է։ Քանզի առ-
նակինն օրինօք կապուած է իր ողջ էրկանը.
բայց եթէ այրը մեռնի, արձակուած է էրկանը
3 օրէնքէն։ Ուրեմն մինչ ողջ է այրը, ընացող պի-
տի ըսուի, եթէ ըլլայ ուրիշ էրկան. բայց եթէ
այրը մեռնի՝ ազատ կ'ըլլայ այն օրէնքէն, այնպէս
որ ընացող չըլլար, եթէ ըլլայ ուրիշ էրկանու։
4 Ուստի դուք ես, եղբարք իմ, Քրիստոսի մարմ-
նովը մեռաք օրինաց, որ ըլլաք ուրիշի մը, ա-
նոր՝ որ մեռելներէն յարութիւն առած է, որ-
5 պէս զի պտղաբեր ըլլանք Աստուծոյ. Քանզի մինչ
էինք մարմնով, մեղայ կիրքերը որ օրինօք կ'ըլ-
լային՝ կը գործէին մեր անդամներուն մէջ պտղա-
6 բեր ըլլալու մահուան։ Բայց հիմա արձակուցանք
օրէնքէն. քանզի մեռանք այնմ որով բռնուած
էինք, որպէս զի ծառայենք նորոգութեամբ
հոգւոյն, եւ ոչ թէ հնութեամբ գրոյն։
7 Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քա՛ւ

լեցի. բայց ես չէի ճանչնար մեղքը, եթէ ոչ օրէնքը. ինչպէս նաև չէի գիտեր ցանկութիւնը, եթէ
8 օրէնքն ըսած չըլլար, Մի՛ ցանկար. Բայց մեղքն առիթ առնելով պատուիրանքէն գոյացուց յիս բոլոր ցանկութիւնները. վասն զի առանց օ-
9 րինաց մեղքը մեռած է։ Եւ ես առանց օրինաց երբեմն կենդանի էի, բայց երբ պատուիրանքն
10 հասաւ, մեղքը կենդանացաւ, և ես մեռայ. Եւ պատուիրանքը որ կենաց համար էր, նոյն եղաւ
11 ինձ ի մահ, Քանզի մեղքն առիթ առնելով պատուիրանքէն խաբեց զիս, և անով մեռցուց։
12 Ուստի օրէնքը սուրբ է, և պատուիրանքը սուրբ և արդար և բարի։
13 Ուրեմն բարին մա՞հ եղաւ ինձ. քա՛ւ լեցի. այլ մեղքը, որպէս զի երեւայ թէ մեղք է, որ այն բարւով մահ գործեց ինձ, որ մեղքն ուսիլ մե-
14 դաւոր ըլլայ պատուիրանօքն։ Վասն զի գիտենք թէ օրէնքն հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ
15 ընդ մեղսք վաճառեալ։ Քանզի ինչ որ կ'ընեմ՝ չեմ ճանչնար. ոչ թէ ինչ որ կամիմ զայն կ'ը-
16 նեմ, այլ ինչ որ կ'ատեմ զայն կ'ընեմ, իսկ եթէ կ'ընեմ ինչ որ չեմ կամիր, հաւանութիւն
17 կու տամ օրինաց թէ բարի է, իսկ արդ ոչ թէ ես կ'ընեմ զայն, այլ մեղքը որ յիս կը բնակի,
18 Քանզի գիտեմ թէ յիս, այսինքն մարմնոյս մէջ, բարի բան չբնակիր. քանզի կամիլ կայ յիս, բայց
19 բարին ի գործ դնել չեմ գտներ. Քանզի ոչ թէ զբարին զոր կամիմ կ'ընեմ, այլ չարը զոր չեմ
20 կամիր՝ զայն կ'ընեմ։ Իսկ եթէ կ'ընեմ ինչ որ չեմ կամիր՝ այլ ևս ոչ թէ ես կ'ընեմ զայն, այլ
21 մեղքը որ յիս բնակեալ է։ Ուստի կը գտնեմ օ-
22 րէնք մը, որ երբ բարին ընել կը կամիմ, չարն իմ քովս է։ Վասն զի նայելով ներքին մարդուն՝
23 կը հաճիմ Աստուծոյ օրինաց. Բայց ուրիշ օրէնք կը տեսնեմ անդամներուս մէջ՝ որ կը պատերազ-

մի ընդդէմ օրինաց մտացս, և զիս գերի կ'ընէ
24 օրինաց մեղաց որ անդամներուս մէջ է։ Ինչ ո-
գորմելի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի ազատէ այս
25 մահացու մարմնէն։ Գոհութիւն Աստուծոյ Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք. ուրեմն ես
ինքն միօք կը ծառայեմ օրինաց Աստուծոյ, և մարմնով օրինաց մեղաց։

ԳԼ. Ը

1 Իսկ արդ չկայ դատապարտութիւն անոնց որ ի Քրիստոս Յիսուս են և չեն քալեր ըստ մարմնոյ*,
2 Քանզի ի Քրիստոս Յիսուս կենաց հոգւոյն օրէնքն
3 ազատեց զիս մեղաց և մահուան օրէնքէն։ Վասն զի այն որ անհնար էր օրինաց, վասն զի տկար էր մարմնով, Աստուած իւր Որդին ղրկեց ի նմանութիւն մարմնոյ մեղաց և մեղաց համար, և
4 դատապարտեց մեղքն ի մարմնի, Որ օրինաց արդարութիւնը կատարուի ի մեզ, որ չենք քալեր
5 ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ։ Քանզի անոնք որ մարմնաւոր են՝ մարմնոյ բաներըն կը խորհին, իսկ
6 անոնք որ հոգեւոր են՝ հոգւոյն բաներըն։ Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգեւոր խորհուրդը՝ կեանք և խաղաղութիւն։
7 Քանզի մարմնաւոր խորհուրդը թշնամութիւն է Աստուծոյ դէմ. վասն զի չհնազանդիր Աստուծոյ
8 օրինաց, մանաւանդ չկրնար իսկ։ Քանզի անոնք որ մարմնով են՝ չեն կրնար հաճոյ ըլլալ Աստու-
9 ծոյ։ Բայց դուք մարմնով չէք՝ այլ հոգւով, եթէ Աստուծոյ Հոգին բնակած է ի ձեզ. իսկ եթէ
10 ոք չունի Քրիստոսի Հոգին, անորը չէ։ Եւ եթէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմինը մեռած է մեղաց համար, և հոգին կենդանի է արդարութեան

*Որոնք կ'ապրին ոգիով, այլ ըստ հոգւոյ

11 համար, իսկ եթէ զծիսուս մեռեալներէն յարու-
ցանողին Հոգին բնակած է ի ձեզ, ապա այն որ
զԲրիստոս յարոյց մեռեալներէն՝ պիտի կենդանա-
ցուցէ ձեր մահկանացու մարմիններն իւր Հոգ-
ւովը որ կը բնակի ի ձեզ։
12 Ապա ուրեմն, եղբարք, պարտական ենք, ոչ
13 թէ մարմնոյն ըստ մարմնոյ ապրիլ. քանզի եթէ
ըստ մարմնոյ ապրիք, պիտի մեռնիք. բայց եթէ
սպանեցէք Հոգւով մարմնոյն գործերը, պիտի
14 ապրիք։ Վասն զի անոնք որ կ'առաջնորդուին
15 Աստուծոյ Հոգւովը, որդիք են Աստուծոյ։ Քան-
զի դուք չառաք ծառայութեան հոգին միւսան-
գամ յերկիւղ, այլ առիք որդեգրութեան հո-
գին, որով կ'աղաղակենք Աբբա Հայր։ Նոյն
16 ինքն Հոգին կը վկայէ մեր հոգւոյն հետ, թէ
17 որդիք ենք Աստուծոյ։ Եւ եթէ որդիք, ուրեմն
ժառանգ, ժառանգ Աստուծոյ, և ժառանգա-
կից Քրիստոսի. որ, եթէ ըլլանք հետը չար-
չարանաց, անոր փառացն ալ ըլլանք հաղորդ։
18 Վասն զի ես այսպէս կը դատեմ որ այս ժա-
մանակիս չարչարանքը չեն արժանի բաղդատ-
ուելու գալու փառաց որ պիտի յայտնուի ի մեզ։
19 Վասն զի արարածոց եռանդուն ակնկալութիւնը
կը սպասէ Աստուծոյ որդւոց յայտնուելուն։
20 Քանզի արարածք հնազանդեցան ունայնութեան՝
(ոչ թէ իրենց կամքը՝ այլ անոր համար որ
21 հնազանդեցուց,) Այն յուսով որ նոյն իսկ արա-
րածք ազատին ապականութեան ծառայութենէն
յազատութիւն փառաց որդւոցն Աստուծոյ։
22 Քանզի գիտենք թէ բոլոր արարածք մինչև ցարդ
23 կը հեծեծեն և երկունք կը կրեն ի միասին։ Եւ ոչ
այլ միայն, այլ և մենք իսկ որ Հոգւոյն ա-
ռաջին պտուղն ունինք, մենք մեզի կը հեծեծենք
յանձինս մեր սպասելով որդեգրութեան, այսինքն
24 քրկումն մեր մարմնոյն ազատութեանը. Քանզի

փրկուեցանք յուսով. բայց յոյսը որ կը տես-
նուի չէ յոյս. վասն զի այն զոր կը տեսնէ ոք՝
25 ընդ՞ի՞նչ այլ ևս պիտի յուսայ։ Իսկ եթէ զոր
չենք տեսներ՝ կը յուսանք, ապա կը սպասենք
26 համբերութեամբ։ Նոյնպես և Հոգին կը հասնի
յօգնութիւն մեր տկարութիւններուն. քանզի
ինչ բանէ համար ըստ արժանւոյն աղօթելու ենք,
չենք գիտեր. բայց ինքն Հոգին բարեխօս կ'ըլլայ
27 մեզի համար անբարբառ հեծեծութեամբ։ Եւ սիր-
տերը քննողը գիտէ թէ ինչ կը խորհի Հոգին,
քանզի Աստուծոյ կամքէն համեմատ կը բարեխօսէ
սրբոց համար։
28 Սակայն գիտենք թէ ամենայն ինչ ի բարին
գործակից կ'ըլլայ անոնց որ զԱստուած կը սիրեն,
29 որ նախասահմանութեամբ կոչուած են։ Վասն զի
զորս յառաջ կը ճանչնար՝ յառաջագոյն ևս սահ-
մանեց կերպարանակից ըլլալ իւր Որդւոյն պատ-
կերին. որպէս զի անդրանիկ ըլլայ նա չատ եղ-
30 բայրներու մէջ։ Եւ զորս յառաջագոյն սահմա-
նեց, նաև կոչեց. և զորս կոչեց, նաև արդարա-
ցուց. և զորս արդարացուց, նաև փառաւորեց։
31 Ուրեմն ինչ ըսենք այս բաներուն համար. եթէ
Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզ հա-
32 կառակ։ Այն որ իւր Որդւոյն չխնայեց՝ այլ մեր
ամենուն համար մատնեց զնա, ի՞նչպէս անոր
33 հետ չպարգևեր մեզ նաև ամէն բան։ Ո՞վ է որ
մեղադիր ըլլայ Աստուծոյ ընտրեալներուն. Աստ-
34 ուած է որ կ'արդարացուներ, Ո՞րն է ո՞վ է որ
կը դատապարտէ. Քրիստոս է որ մեռաւ, մանա-
ւանդ թէ յարեաւ իսկ, և է ընդ աջմէ Աստուծոյ,
35 որ և բարեխօս է մեզի համար. Ո՞րչափ ո՞վ պիտի
զատէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. տառապա՞նք,
թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ
36 մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ սո՞ւր. (ինչպէս որ
գրուած է, Ամէն օր կը սպանուինք քեզի հա-

մար, մարթուելու ոչխարի պէս կը համարուինք)
37 Ա՛պա այս ամենուն մէջ՝ ևս ահեղի յաղթող կ'ըլ-
38 լանք անով որ սիրեց զմեզ։ Քանզի քալ գիտեմ Թէ ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակք, և ոչ իշխանութիւնք, և ոչ զօրութիւնք, և ոչ ներ-
39 կայքս, և ոչ հանդերձեալքն, Եւ ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արա-
րած կրնայ զատել զմեզ ի սիրոյն Աստուծոյ որ է ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

ԳԼ. Թ

1 Ա՛ստուգիւ կ'ըսեմ Քրիստոսով, չեմ սուտր, (խրճա-
2 ևս կը վկայէ ինձ Հոգւով Սրբով,) Որ մեծ սրտմու-
3 թիւն է ինձ և անպակաս ցաւ սրտիս։ Քանզի ևս ինքն կը խնդրէի նզով լինել ի Քրիստոսէ իմ եղ-
բայրներուս և ազգականներուս համար ըստ
4 մարմնոյ, Որ են Իսրայէլացիք. որոց է որդեգրու-
թիւնը և փառքը և ուխտերը և օրէնադրութիւնը
5 պաշտօնը և խոստումնքը։ Որոց են նահա-
պետքը, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է
ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս,
6 Ամէն։ Բայց ոչ իբր Թէ Աստուծոյ խօսքը գետին
ինկած է. քանզի ոչ Թէ ամենքը որ Իսրայէլէ են՝
7 Իսրայէլացի են։ Եւ ոչ Թէ վասն զի Աբրահամու
սերունդ են, ամենքը որդիք են. այլ՝ Հասկաւ
8 պիտի կոչուի քեզ սերունդ։ Այսինքն՝ ոչ Թէ
անոնք որ են մարմնոյ որդիք՝ որդիք են Աստու-
ծոյ, այլ խոստման որդիքը կը համարուին սե-
9 րունդ։ Քանզի խոստման խօսքն այս էր, Թէ
Այս ժամանակ պիտի գամ, և Սառա պիտի ու-
10 նենայ որդի։ Եւ ոչ միայն այսպէս, այլ և Ռե-
բեկա, որ յղացաւ ի միոջէ, մեր հօրմէն Յիսահա-
11 կայ. Քանզի մինչ դեռ ծնած չէին, և մինչ դեռ
բարի կամ չար գործած չէին, (որպէս զի նախա-
սահմանութիւնն Աստուծոյ հաստատ մնայ ըստ

12 ընտրութեանն, ոչ թէ ի գործոց, այլ անկէ որ
13 կոչեց,) ըսուեցաւ անոր, Թէ Սբէջը պիտի ծա-
ռայէ կրասերին, ինչպէս որ գրուած է Թէ ԶՅա-
կոբ սիրեցի, բայց զԵսաւատեցի։
14 Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ անիրաւութիւն կայ
15 Աստուծոյ քով. քա՛ւ լիցի։ Քանզի կ'ըսէ Մով-
սիսի, Որու պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, և որու
16 պիտի գթամ՝ կը գթամ։ Ուրեմն ոչ անկէ է որ
կը կամի, և ոչ անկէ որ կ'ընթանայ, այլ Աս-
17 տուծմէ որ կ'ողորմի։ Քանզի Գիրքը կ'ըսէ Փա-
րաւոնին, Անոր համար վերցուցի զքեզ, որ զո-
րութիւնս ցուցնեմ ի քեզ, և բոլոր երկրի մէջ
18 պատմուի իմ անունս։ Ուստի որու կամի՝ կ'ո-
19 ղորմի, և զով կամի՝ կը խստացունէ։ Ուրեմն
պիտի ըսես ինձ, Թէ Ապա ընդէ՞ր մեղադիր կ'ըլ-
լայ. վասն զի ո՞վ դէմ դրաւ անոր կամացը։
20 Բայց դուն ո՞վ ես, մարդ, որ պատասխան կու-
տաս Աստուծոյ դէմ. միթէ ստեղծուածը կրնա՞յ
ըսել Ստեղծողին Թէ Ընդէ՞ր այդպէս ըրիր զիս։
21 Բրուտը չունի՞ իշխանութիւն կաւին վրայ՝ նոյն
շաղուածէն չինել աման, զմին՝ ի պատիւ, և
22 զմիսն՝ յանարգանս։ Ապա ի՞նչ ըսէ, եթէ
Աստուած կամելով ցուցնել բարկութիւնը և
յայտնել իւր զօրութիւնը, շատ երկայնմտու-
թեամբ հանդերձից ի կորուստս պատրաստուած
23 բարկութեան ամաններուն. Եւ, որպէս զի յայտնի
ընէ իւր փառաց մեծութիւնը ողորմութեան ա-
մաններուն վրայ, զորս յառաջագոյն պատրաս-
24 տեց ի փառս. Այսինքն զմեզ որ կոչեց, ոչ միայն
25 Հրեաներէն, այլ և հեթանոսներէն. Ինչպէս Ով-
սէէի մէջ ևս կ'ըսէ, Ա՛յն որ իմ ժողովրդս չէ՝
իմ ժողովրդիս պիտի կոչեմ, և այն որ սիրելի
26 չէ՝ սիրելի. Եւ պիտի ըլլայ Թէ ուր անոնց ըսուե-
ցաւ Թէ Դուք իմ ժողովրդիս չէք, հոն անոնք
27 պիտի կոչուին Կենդանի Աստուծոյ որդիք։ Նաև

Եսայի կ'աղաղակէ Իսրայէլի համար, Թէև Իսրայէլի որդւոց Թիւն ըլլայ իբրև զաւազ ծովու,
28 մնացորդ պիտի ազատի. Քանզի համառօտ և հակիրճ բան մը կ'ընէ արդարութեամբ. վասն զի
29 Տէրը հակիրճ բան մը պիտի ընէ երկրի վրայ։ Եւ ինչպես Եսայի բաւ յառաջագոյն, Եթէ զօրաց Տէրը սերունդ թողուցած չըլլար մեզ, պիտի ըլլայինք իբրեւ Սոդոմ, և Գոմորայ պիտի նմանէինք։

30 Ուրեմն ի՞նչ ըսենք. Թէ հեթանոսները որ արդարութեան եհաւէն չէին երթար՝ արդարութեան հասան, այն արդարութեան որ ի հաւատոյ է. Բայց Իսրայէլ որ կ'երթար զնետ օրինաց
31 արդարութեան՝ չհասաւ օրինաց արդարութեան։
32 Ընդէ՞ր. վասն զի ոչ Թէ ի հաւատոյ, այլ որպես Թէ օրինաց գործերէն ՚ի դէպ՝ արդարանալ. քանզի գլորեցան գայթակղութեան վիմին վրայ,
33 ինչպես գրուած է, Ահա կը դնեմ ի Սիօն քար գայթակղութեան, և վէմ գլորման. և ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ։

Գլ. Ժ

1 Եղբարք, իմ սրտիս փափաքը և աղօթքն առ Աստուած *Իսրայէլի վրայ է ի փրկութիւն։
2 Քանզի կը վկայեմ անոնց համար, Թէ նախնի գնաստանձն Աստուծոյ, բայց ոչ գիտութեամբ։
3 Վասն զի չգիտնալով Աստուծոյ արդարութիւնը, և կամելով հաստատել իրենց արդարութիւնը, չհնազանդեցան Աստուծոյ արդարութեան։ Քանզի օրինաց վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալ արդարութեան համար։
5 Վասն զի Մովսէս այն արդարութիւնը որ յօ-

*Ո՛նո՛ւ, անոնց

բինաց է՝ կը նկարագրէ. Թէ Զանոնք կատարող
6 մարդը պիտի ապրի անոնցմով։ Բայց այն արդարութեան համար որ ի հաւատոյ է՝ կ'ըսէ այսպէս. Մի՛ ըսեր քու սրտիդ մէջ, Ո՞վ պիտի հլէ
7 յերկինս, (այսինքն զՔրիստոս ի՛ջուցանել.) կամ Թէ Ո՞վ պիտի իյնէ անդունդը, (այսինքն զՔրիստոս հոս հանել ի մեռելոց։) Այլ ի՞նչ կ'ըսէ. Խօսքը մօտ է քեզ, քու բերնիդ մէջ և քու սրտիդ մէջ է, այսինքն հաւատոյ խօսքը զոր կը քարոզենք.
9 Վասն զի եթէ բերնովդ խոստովանիս Տէր զՅիսուս, և սրտիդ մէջ հաւատաս Թէ Աստուած
10 յարոյց զնա ի մեռելոց, պիտի փրկուիս. (Վասն զի սրտով կը հաւատայ մարդ յարդարութիւն, և բերանով կը խոստովանի ի փրկութիւն։)
11 Քանզի Գիրքը կ'ըսէ, Ով որ հաւատայ անոր՝
12 պիտի չամչնայ։ Վասն զի խարհութիւն չկայ ի մէջ Հրէին և Ցունին. վասն զի ամենուն Տէրը նոյն է, առատ առ ամենեսին որ կը կոչեն առ
13 Նա։ Քանզի ով որ Տէրոջը անունը կը կոչէ՝ պիտի փրկուի։
14 Ուրեմն ի՞նչպես պիտի կոչեն առ Նա որում չհաւատացին. կամ ի՞նչպես պիտի հաւատան անոր՝ որոյ վրայ չլսեցին. կամ ի՞նչպես պիտի
15 լսեն՝ առանց ուրուք քարոզելոյ. կամ ի՞նչպես պիտի քարոզեն, եթէ չղրկուին. ինչպես որ գրուած է, Ի՜նչպէս գեղեցիկ են ոտք աւետարանչաց խաղաղութեան, և աւետարանչաց բարեացս։ Բայց ամէնքը հնազանդ չեղան աւետարանին. քանզի Եսայի կ'ըսէ, Տէր, ո՞վ հաւատաց
17 մեր լուրն։ Ուրեմն հաւատքը լսելէն է, և լսելը՝
18 Աստուծոյ խօսքէն։ Բայց կ'ըսեմ, Մի՞թէ չլսեցի՞ն. մանաւանդ Բոլոր երկիր ելաւ անոնց հնչիւնը, և անոնց խօսքը՝ մինչև ի ծագս աշխարհի։
19 Բայց կ'ըսեմ, Մի՞թէ Իսրայէլ չգիտցա՞ւ. Նախ Մովսէս կ'ըսէ, Ես զձեզ ի նախանձ պիտի գրգռեմ

*անպիտան ժողովրդեանէ, և անմիտ ազգաւ պիտի
20 զայրացուցանեմ զձեզ։ Բայց Եսայի կը համարձակի
և կ'ըսէ, Ես գտանուեցայ անոնց՝ որ զիս չէին
խնդրեր, յայտնի եղայ անոնց՝ որ զիս չէին հար-
21 ցներ։ Սակայն Իսրայելի վրայ կ'ըսէ, Բոլոր օրը
ձգեցի ձեռքս անհնազանդ և հակառակող ժո-
ղովրդեան։

ԳԼ. ԺԱ.

1 Ուրեմն կ'ըսեմ, Մի՞թէ մերժե՞ց Աստուած իւր
ժողովուրդը. քա՛ւ լիցի. քանզի և ես իսրայե-
լացի եմ, Աբրահամու սերունդէն, Բենիամինի
2 ցեղէն։ Չմերժեց Աստուած իւր ժողովուրդը զոր
յառաջ ճանչցաւ։ Մի՞թէ չէ՛ք գիտեր ինչ կ'ըսէ
Գիրքը յեղիա. ի՞նչպէս կը գանգատի առ Աստ-
3 ուած Իսրայելի համար։ Տէր, սպաննեցին մար-
գարէներդ և փլուցին սեղաններդ, և միայն ես
4 մնացած եմ, և կը փնտռեն իմ անձս։ Բայց ի՞նչ
կ'ըսէ աստուածային պատասխանն անոր. Թողի
ինձ եօթն հազար մարդ որ ծունր չկրնեցին Բա-
5 ղաղու։ Նոյնպէս և այս ժամանակ մնացորդ կայ
6 ըստ ընտրութեան շնորհաց։ Ըե եթէ շնորհօք,
ոչ ևս գործերէն. ապա թէ ոչ՝ շնորհքն այլ ևս
շնորհք չըլլար։ Իսկ եթէ գործերէն է, շնորհք չէ։
7 ապա թէ ոչ՝ գործը գործ չըլլար՞։ Ուրեմն ի՞նչ
իսրայէլ չհասաւ այնմ զոր կը խնդրէր. բայց
ընտրուածներն հասան, և մնացածները կուրա-
8 ցան (ինչպէս գրուած է, Աստուած տուաւ անոնց
թմրութեան ոգի, աչքերներ՝ որովք պիտի չտես-
նեն, և ականջներ՝ որովք պիտի չլսեն,) մինչև
9 այսօր։ Ու Դաւիթ կ'ըսէ, Անոնց սեղանն ըլլայ

*Յունն. ոչ
†Ոմանք լսուին

անոնց որոգայթ և որս և գայթակղութիւն և
10 հատուցումն. Անոնց աչուքները մթանան որ
չտեսնեն, և անոնց թիկունքը միշտ կորացուր։
11 Ուրեմն կ'ըսեմ, Մի՞թէ վասն այնորի՞կ յանցան-
ըրին որ կործանին. քա՛ւ լիցի. այլ անոնց յան-
ցանօք հեթանոսաց փրկութիւն եղաւ, որ զա-
12 նոնք ի նախանձ գրգռէ։ Ուստի եթէ անոնց
յանցանքը մեծութիւն եղաւ աշխարհի, և անոնց
նուաստութիւնը՝ մեծութիւն հեթանոսաց, ո՛ր-
13 չափ ևս առաւել անոնց լրութիւնը։ Բայց կ'ըսեմ
ձեզ հեթանոսաց. որովհետև առաքեալ եմ հե-
14 թանոսաց, կը մեծարեմ իմ պաշտօնս. Որ թէ-
րևս զանոնք որ իմ մարմինս են՝ ի նախանձ
գրգռեմ, և ապրեցուցնեմ անոնցմէ զոմանս.
15 վասն զի եթէ անոնց մերժումն հաշտութիւն է
աշխարհի, ապա ընդունումն ի՞նչ պիտի ըլլայ,
16 եթէ ոչ կենդանութիւն ի մեռելոց։ Արդ եթէ
սուրբ է երախայրին, նաև զանգուածը. և եթէ
17 սուրբ է արմատը, ոստերն ևս։ Եթէ այն ոստե-
րէն ոմանք խլեցան, և դուն որ վայրենի ձիթենի
էիր՝ պատուաստեցար ի նոսա, և ձիթենւոյն ար-
18 մատին և պարարութեանը եղար հաղորդ, Ոս-
տերուն դէմ մի՛ պարծենար. իսկ եթէ պարծե-
նաս, ոչ թէ դուն վեր բռնած ես արմատը, այլ
19 արմատն զքեզ։ Ուրեմն պիտի ըսես, Ոստերը
20 խլեցան որ ես պատուաստուիմ։ Բարւոք է, ա-
նոնք անհաւատութեամբ խլեցան, և դուն հա-
ւատով հաստատուեցար. Մի՛ հպարտանար, այլ
21 վախցիր. Վասն զի եթէ Աստուած բնական ոս-
22 տերուն չխնայեց, թերևս չխնայէ և քեզ։ Ուստի
տես Աստուծոյ քաղցրութիւնը և խստութիւնը.
կործանելոց վրայ՝ խստութիւն, և քու վրադ՝
քաղցրութիւն, եթէ այն քաղցրութեան մէջ կե-
23 նաս. ապա թէ ոչ դուս ևս պիտի կտրուիս։ Իսկ
անոնք, եթէ անհաւատութեան մէջ չկենան,

պիտի պատուաստին. քանզի կարող է Աստուած
24 միւսանգամ պատուաստել զանոնք։ Ռանզի եթէ
դուն կտրուեցար ի բնէ վայրենի ձիթենիէն, և
արտաքոյ բնութեան պատուաստեցար բարի ձի-
թենւոյն վրայ, ո՛րչափ ևս առաւել անոնք որ
բնական ճիւղէք են՝ պիտի պատուաստին իրենց
25 ձիթենւոյն վրայ։ Վասն զի չեմ ուզեր, եղբարբ,
որ չգիտնաք այս խորհուրդը, (որպէս զի չհամա-
րիք զձեզ իմաստուն,) Թէ քար մասին եղաւ
կուրութիւն Իսրայէլի, մինչև մանէ հեթանոսաց
26 լրութիւնը. Եւ այսպէս բոլոր Իսրայէլ պիտի
փրկուի. ինչպէս գրուած է, Սիօնէ պիտի գայ
Փրկիչ և պիտի դարձնէ ամբարշտութիւնները
27 ի Յակոբայ։ Եւ այս է իմ ուխտս անոնց, երբ ա-
28 նոնց մեղքը վերցունեմ։ Ըստ աւետարանին ա-
նոնք թշնամի են ձեզի համար. իսկ ըստ ընտրու-
29 թեան՝ սիրելի են հարց համար։ Ռանզի Աստուա-
ծոյ պարգեւները և կոչումն առանց զղջանալոյ են։
30 Վասն զի ինչպէս դուք ժամանակաւ չէիք հաւա-
տար Աստուծոյ, և հիմա ողորմութիւն գտաք
31 *անոնց անհաւատութեամբը, նոյնպէս անոնք
հիմա անհաւատ եղան, որ ձեր ողորմութիւն
32 գտնելովն անոնք՝ ևս գտնեն ողորմութիւն։ Ռան-
զի Աստուած արգիլեց ամէնքն անհաւատութեան
մէջ, որ ամէնուն ողորմի։
33 Ո՜վ խորք մեծութեան և իմաստութեան և
գիտութեան Աստուծոյ. ի՜նչպէս անքննելի են
անոր դատաստանները, և անքնննելի են անոր
34 ճամբաները։ Վասն զի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտ-
35 քը, կամ ո՞վ խորհրդակից եղաւ անոր. Կամ ո՞վ
յառաջագոյն տուաւ անոր, որ փոխարէն արուի

*Կամ, մինչ անոնք անհաւատ էլին, (31) Նոյնպէս
անոնք հիմա անհաւատ եղան, մինչ դուք ողոր-
մութիւն գտաք, որպէս զի անոնք

36 անոր։ Ռանզի ամէն բան անկէ և անով և անոր
համար է։ Նմա փառք յաւիտեանս Ամէն։

ԳԼ. ՅԲ

1 Աւրդ կ՚աղաչեմ զձեզ, եղբարբ, Աստուծոյ ո-
ղորմութեամբը, որ ձեր մարմիններն ընծայէք
կենդանի զոհ սուրբ, հաճոյ Աստուծոյ, այն է
2 ձեր բանաւոր պաշտօնը. Եւ մի՛ կերպարանիք
այս աշխարհիս կերպարանօքն, այլ նորոգուեցէք
ձեր մտաց նորոգութեամբը, որ քննէք թէ ինչ է
Աստուծոյ կամքը, բարին և հաճոյն և կատար-
3 եալն։ Ռանզի ինձ արուած *շնորհօք կ՚ըսեմ ի-
րաքանչիւր ումիք որ ձեր մէջ է, որ չյորհի
գան զոր արժան է խորհել, այլ խորհի զգաս-
տանալ, ինչպէս որ Աստուած իւրաքանչիւրին
4 բաժնեց հաւատոյ չափը։ Վասն զի ինչպէս որ մի
մարմնոյ մէջ չատ անդամներ ունինք, և ան-
5 որ անդամները չունին մի և նոյն գործը, Այսպէս
մեք բազումքս մի մարմին եմք ի Քրիստոս, և
6 իւրաքանչիւր՝ իրարու անդամներ։ Ուստի որով-
հետև այլ և այլ պարգեւներ ունինք ըստ շնորհաց
որ արուած է մեզ, եթէ մարգարէութիւն՝ հա-
7 ւատոյ չափով, Եթէ սպասաւորութիւն՝ ի սպա-
սաւորութեան. այն որ կը վարդապետէ՝ ի վար-
8 դապետութեան, Այն որ կը յորդորէ՝ ի յորդոր,
այն որ կը բաշխէ՝ պարզութեամբ, այն որ վերա-
կացու է՝ փութով, այն որ կ՚ողորմի՝ զուարթու-
9 թեամբ։ Սէր՝ առանց կեղծաւորութեան, ատե-
10 լով չարը, յարելով բարւոյն. Ջեղայրսիրութե-
ամբ իրարու վրայ գթած, ի պատուել իրարու
11 հետ մրցող. Ի փոյթ՝ մի՛ վհեղրուտ. հոգւով եռա-
12 ցեք, Տէառն ծառայեցէք, Ուսուով խնդացէք,

*Ոմանք, շնորհօքն Աստուծոյ

Նեղութեան մէջ համբերեցէք, առէք աղօթեցէք.
13 Սուրբերուն պիտոյիցը հաղորդեցէք. հիւրասի-
14 րութեան հետևեցէք. Ձեզ հալածողներն օրհ-
15 նեցէք, օրհնեցէք և մի՛ անիծէք. խնդացէք ընդ-
16 խնդացողս, և լացէք ընդ լացողս. Իրարու վրայ
մի և նոյն խորհուրդն ունեցէք. մի՛ մտքատա-
նէք, այլ խոնարհներուն հետ գիմէք. զձեզ ի-
17 մաստուն մի՛ համարիք. Մի՛ հատուցանէք ումէք
չար փոխանակ չարի. բոլոր մարդոց առջև բարին
18 հոգացեք. Որչափ հնար է ձեզ՝ բոլոր մարդոց
19 հետ խաղաղութիւն ունեցեք. Սիրելիք, վրէժ-
խնդրութիւնը մի՛ ընէք ձեր անձերուն համար,
այլ տեղի տուէք բարկութեան. քանզի գրուած
է, իմ է վրէժխնդրութիւնն, ես պիտի հատուցա-
20 նեմ, կ'ըսէ Տէրը: Ուստի եթէ թշնամիդ քաղ-
ցեալ է, հաց տուր նմա, և եթէ ծարաւի է,
ջուր տուր նմա. քանզի զայս ընելով անոր գլխ-
21 նայն վրայ կրակի կայծեր կը դիզես: Մի՛ յաղ-
թուիր չարէն, այլ յաղթէ բարեաւ չարին:

Գլ. ԺԳ

1 Ամէն անձ թող հնազանդի էրէն վրայ կարգեալ
իշխանութեանց. վասն զի չկայ իշխանութիւն որ
չէ Աստուծմէ. և *անոնք որ կան՝ կարգեալ են
2 Աստուծմէ. Ուրեմն ով որ հակառակ կը կենայ
իշխանութեան, հակառակ կը կենայ Աստուծոյ
հրամանին. և անոնք որ հակառակ կը կենան՝
իրենց անձին դատապարտութիւն կ'ընդունին:
3 Վասն զի իշխանները չեն յերկիւղ բարի գործոց,
այլ չարաց. կամի՞ս չերկնչել իշխանութենէն.
բարի գործէ, և գովութիւն պիտի ընդունիս ան-
4 կէ. Քանզի Աստուծոյ սպասաւոր է նա բարւոյ

*Որմէ, այն իշխանութիւնները

համար քեզ. բայց եթէ դուն չար կը գործես՝
վախցիր. քանզի ոչ թէ ի զուր կապած է սուր
ընդ մէջ, վասն զի Աստուծոյ սպասաւոր է,
վրէժխնդիր ի բարկութիւն անոմ որ չար կը գոր-
5 ծէ: Վասն որոյ պարտ է հնազանդիլ, ոչ միայն
6 բարկութեան համար՝ այլ և խղճի համար: Այն
պատճառաւ նաև հարկ կու տաք, քանզի Աս-
տուծոյ սպասաւորներ են որ նոյն բանին հոգ կը
7 տանին: Ուստի հատուցէք ինչ որ պարտ է ամեն-
նուն. որուն հարկ՝ հարկը, որուն մաքս՝ մաքսը,
որուն երկիւղ՝ երկիւղը, որուն պատիւ՝ պատիւը:
8 Ամենևին պարտական մի՛ գտանիք ումէք
բայց միայն զիրար սիրելու. վասն զի ով որ կը
9 սիրէ ընկերը՝ կը կատարէ օրէնքը. Քանզի Մի՛
շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողնար, Մի՛ սուտ
վկայեր, Մի՛ ցանկար, և այլ որ և իցէ պատուէր
կը բովանդակուի յայս բան, Թէ Պու ընկերդ
10 սիրես քու անձիդ պէս: Սէրը չարութիւն չընէր
ընկերին. ուրեմն լրումն օրինաց սէրն է:
11 Եւ զայս, գիտնալով ժամանակը, Թէ հիմա
ժամանակ է մեզ արթննալ ի քնոյ. քանզի հիմա
փրկութիւնը մօտ է մեզ քան երբ հաւատացինք:
12 Գիշերը շատ անցաւ. և տիւը մերձեցաւ. ուստի
մեկդի ընենք խաւարին գործերը, և հագնինք
13 մեր վրայ լուսոյ զէնքը: Որպէս Թէ ի տուընչեան
քալենք պարկեշտութեամբ, մի՛ անառակու-
թեամբ և արբեցութեամբ, և մի՛ խառն ան-
կողնօք և պղծութեամբք, մի՛ հակառակու-
14 թեամբ և նախանձու: Այլ հագէք զՏէր Յիսուս
Քրիստոս, և մարմնոյ խնամ մի՛ տանէք ի ցանս
կութիւնս:

Գլ. ԺԴ

1 Զտկարն ի հաւատս ընդունեցէք, մի՛ տարակու-

2 սանաց որոյումներու համար։ Ումն կը հաւատայ
ուտել զամենայն, և ով որ տկար է՝ բանջար
3 կ'ուտէ։ Այն որ կ'ուտէ՝ չուտողը թող չանարգէ,
և այն որ չուտեր՝ թող չդատէ ուտողը, քանզի
4 Աստուած ընդունած է զնա։ Դու ո՞վ ես որ
կը դատես զայլոյ ծառայ. իւր Տէրոջը կը կանգնի
կամ կ'իյնայ; բայց պիտի կանգնի, քանզի *Աս-
5 տուած կարող է կանգնեցնել զնա։ Ումն կը յար-
դէ օր մը քան զայլ օր, այլ ումն կը յարգէ ամէն
6 օր. թող իւրաքանչիւր ոք հաճէ զիւր միտս։ Այն
որ կը յարգէ օրը, Տէրոջը կը յարգէ, և այն որ
չյարգեր օրը, Տէրոջը չյարգեր. և այն որ կ'ու-
տէ, Տէրոջը կ'ուտէ, քանզի կը գոհանայ Աս-
տուծմէ. և այն որ չուտեր, Տէրոջը չուտեր,
7 և կը գոհանայ Աստուծմէ։ Քանզի մեզի ոչ ոք
իւր անձին համար կ'ապրի, և ոչ ոք իւր անձին
8 համար կը մեռնի։ Քանզի եթէ ապրինք, Տէրոջը
համար կ'ապրինք, և եթէ մեռնինք, Տէրոջը հա-
մար կը մեռնինք. ուրեմն թէ՛ ապրինք և թէ՛
9 մեռնինք, Տէրոջն ենք։ Վասն զի Քրիստոս ևս
վասն այնորիկ մեռաւ և եապրեցաւ, որ մեռելոց
10 և կենդանեաց իշխէ։ Իսկ դուն ընդէ՞ր կը դատես
եղբայրդ, կամ ընդէ՞ր կ'անարգես եղբայրդ.
վասն զի ամէնքս պիտի կենանք Քրիստոսի առե-
11 նին առջև. քանզի գրուած է, կենդանի եմ ես,
կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունր պիտի կրկնուի ինձ,
12 և ամէն լեզու պիտի խոստովանի Աստուծոյ։ Ու-
րեմն մեզի իւրաքանչիւրը ոք հաշիւ պիտի տայ
13 Աստուծոյ իւր անձին համար։ Ուստի այլ ևս
չդատենք զիրար, այլ մանաւանդ զայս գրէք
ի մտի՝ չդնել խոչ կամ գայթակղութիւն եղբօր։
14 Զայս գիտեմ և հաստատուած եմ ի Տէր Յիսուս,

*Ոմն, Տէրը
†Ոմն, և չարեաւ և դարձեալ

որ բան մը ինքնին պիղծ չէ, բայց ով որ պիղծ
15 կը համարի բան մը՝ պիղծ է անոր։ Իսկ եթէ կե-
րակրոյ համար եղբայրդ տրտմի, ոչ ևս սիրով
վարուեցար. քու կերակրովդ մի՛ կորուսաներ
16 զնա որոյ համար Քրիստոս մեռաւ։ Արդ չլլայ
17 թէ ձեր բարւոյն համար չար խօսին։ Քանզի Աս-
տուծոյ արքայութիւնը չէ կերակուր և ըմպելի,
այլ արդարութիւն և խաղաղութիւն և խնդու-
18 թիւն ի Հոգին Սուրբ։ Քանզի եթէ ոք այս բանին
բուով կը ծառայէ Քրիստոսի, հաճելի է Աստուծոյ
19 և մարդոց գովելի։ Ապա ուրեմն զնետ երթանք
20 խաղաղութեան և չինութեան առ միմեանս։ Զրլ-
լայ թէ կերակրոյ պատճառաւ քակես Աստուծոյ
գործը. ամենայն ինչ մաքուր է. չար է այն մար-
դուն համար միայն որ կ'ուտէ ի գայթակղութիւն։
21 Լաւ է չուտել միս, և չխմել գինի, և ոչ այլ ինչ
որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ
22 կը տկարանայ։ Դուն հաւատք պահէ զայն առ Աստուծոյ առջև. երանի անոր որ իւր անձը
23 չդատապարտեր անով զոր կ'ընդունի։ Բայց
ով որ կը խղճէ, եթէ ուտէ կը դատապարտուի,
վասն զի չէ հաւատով. քանզի ինչ որ հաւատով
չէ՝ մեղք է։

ԳԼ. ԺԵ

1 Պարտ է մեզ որ կարող ենք՝ տկարներուն տկա-
րութիւնը վերցունել, և ոչ մեր անձին հաճոյ ըլ-
2 լալ։ Այլ մեզի իւրաքանչիւր ոք հաճոյ ըլլայ իւր ընկերին ի բարիս՝ քանզի
և Քրիստոս ոչ թէ իւր անձին հաճոյ եղաւ, այլ
ինչպէս գրուած է, Զթեզ նախատողաց նախա-
4 տինքն ինկան իմ վրաս։ Վասն զի ինչ որ յառա-

*Կամ, կը փորձէ

ջագոյն գրուեցաւ՝ գրուեցաւ ի մեր վարդապետութիւն, որպէս զի համբերութեամբ և մխիթարութեամբ Գրոց ունենանք յոյս։ Եւ համբերութեան և մխիթարութեան Աստուածը տայ ձեզ իբարու հնա մի և նոյն խորհուրդն ունենալ ըստ Յիսուսի Քրիստոսի. Որ միաբանութեամբ ի մի բերան փառաւորեք զԱստուած և զՅայր Տէրն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Վասն այսորիկ ընդունեցէք զիրար, ինչպէս և Քրիստոս ընկալաւ *զձեզ ի փառս Աստուծոյ։

Բայց կ'ըսեմ Թէ Յիսուսի Քրիստոսի Թլփատութեան պաշտօնեայ ըլլալն Աստուծոյ ճշմարտութեան համար էր, որ հաստատէր նախահարց խոստումը։ Սակայն հեթանոսներն ողորմութեան համար փառաւորեն զԱստուած. ինչպէս որ գրուած է, Վասն այսորիկ ազգերուն մէջ զքեզ պիտի գովեմ, և քու անուանդ սաղմոս պիտի երգեմ։ Եւ դարձեալ կ'ըսէ Թէ, Ով ազգեր, անոր ժողովրդեան ուրախակից եղէք։ Եւ դարձեալ Թէ Օրհնեցէք զՏէր, բոլոր ազգեր, և գովեցէք զնա, բոլոր ժողովուրդներ։ Եւ դարձեալ Եսայի կ'ըսէ, Յեսսէի արմատը պիտի ըլլայ, և որ ազգերուն իշխան պիտի կանգնի, անոր պիտի յուսան ազգերը։ Արդ յուսոյ Աստուածը լի ընէ զձեզ բոլոր ուրախութեամբ և խաղաղութեամբ ի հաւատալ, որպէս զի առատանաք յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ։

Եւ ես ինքն համոզուած եմ ձեզի համար, եղբարք, որ դուք լի էք բարութեամբ, լցեալ էք ամենայն գիտութեամբ, և կրնաք խրատել զմիմեանս։ Սակայն համարձակութեամբ գրեցի ձեզ փոքր ի շատ որպէս Թէ յիշեցնեմ ձեզ, եղբարք իմ, այն շնորհաց համար որ տրուած է ինձ

*Ոմանք, զձեզ

16 Աստուծմէ, Որ Յիսուսի Քրիստոսի սպասաւորն ըլլամ հեթանոսաց մէջ, և մատակարարեմ Աստուծոյ աւետարանը, որպէս զի հեթանոսաց ընծայուիլն ընդունելի ըլլայ՝ Սուրբ Հոգւով սրբուելով։ 17 Ուստի ունիմ պարծանս առ Աստուած 18 ի Քրիստոս Յիսուս։ Քանզի չեմ համարձակիր խօսել այն բաներէն մին զոր Քրիստոս իմ ձեռօքս գործած չէ՝ հնազանդեցնելու համար հեթանոսները բանիւ և գործով, Նշաններու և հրաշներու զօրութեամբ, *Աստուծոյ Հոգւոյն զօրութեամբ. այնպէս որ Երուսաղէմէ և շրջանակի մինչև Լիւրիկեցւոց կողմերը լցի Քրիստոսի աւետարանով։ Այնպէս ջանացի քարոզել աւետարանը, ոչ Թէ ուր Քրիստոսի անունն յիշուած էր, այն մի գուցե այլոց հիման վրայ շինեմ. այլ 21 ինչպէս գրուած է Թէ, Որոց չպատմուեցաւ անոր վրայ՝ պիտի տեսնեն, և որք չլսեցին՝ պիտի իմանան։ 22 Նաեւ վասն որոյ շատ արգելուեցայ գալ առ ձեզ։ 23 Բայց հիմա որ այս կողմերս այլ եւս տեղ չկայ ինձ, և շատ տարիներէ հետէ կը փափաքիմ յոյժ գալ 24 առ ձեզ, Երբ դէպ ի Սպանիա երթամ, †կը յուսամ՝ անցնելու ատեն տեսնել զձեզ, և ձեզմէ յառաջուիլ հոն, եթէ յառաջ քիչ մը լցուիմ 25 ձեզմով։ Բայց հիմա յԵրուսաղէմ կ'երթամ սպասարկել սուրբերուն։ 26 Վասն զի Մակեդոնացիք և Աքայեցիք յօժարեցան ողջոյն տալ սուրբերուն որ յԵրուսաղէմ են՝ քիչ մը հանգանակութիւն 27 ընել։ Յօժարեցան, վասն զի պարտական ալ են անոնց. քանզի եթէ հոգեւորէն անոնց ի հոգեւորս, պարտին սպասաւորել նաեւ 28 ի մարմնաւորս։ Ուրեմն կատարելով զայս և կնքելով անոնց այս պտուղը՝ պիտի անցնիմ ձեզի

*Ոմանք, Սուրբ

†Ոմանք, պիտի գամ առ ձեզ. վասն զի կը յուսամ

29 ի Սպանիա՝ Եւ զայս գիտեմ որ երբ գամ առ
ձեզ, Քրիստոսի *աւետարանին լի օրհնութեամբը
պիտի գամ։
30 Կ՚աղաչեմ զձեզ, եղբարք, ի Տէր մեր Յիսուս
Քրիստոս և սիրով Հոգւոյն, պատերազմակից ըլ-
լալ ինձ յաղօթս առ Աստուած ինձի համար,
31 Որպէս զի Հրէաստանի մէջ ազատիմ հաւատաց
չհնազանդողներէն, և պաշտօնս յերուսաղէմ ըն-
32 դունելի ըլլայ սրբոց, Որպէս զի կամօքն Աստու-
ծոյ ուրախութեամբ գալով առ ձեզ՝ հանգչիմ
33 ձեզի հետ։ Եւ Աստուած խաղաղութեան ըլլայ
ձեր ամենուն հետ։ Ամէն։

Գլ. ԺԶ

1 Կը յանձնեմ ձեզ մեր քոյրը Փիբէ, որ կենքրայի
2 եկեղեցւոյն սպասաւորն է։ Որ ընդունիք զնա
ի Տէր՝ ինչպէս արժան է սրբոց, և ինամ տանիք
նմա ինչ բանի մէջ որ պէտս ունենայ ձեզ. քանզի
և նա ինամ տարաւ շատերուն և ինձ եւս։
3 Ողջոյն տուէք Պրիսկիայ և Ակիւղասայ, գոր-
4 ծակցաց ի Քրիստոս Յիսուս։ (Որ իմ կենացս
համար տուին իրենց պարանոցները. որոց ոչ
միայն ես շնորհակալ եմ, այլ և բոլոր եկեղեցիք
5 հեթանոսաց.) Եւ անոնց առանին եկեղեցւոյն
եւս։ Ողջոյն տուէք իմ սիրելւոյս Նաենետոսի,
որ †Ասիայեայէ առաջին պտուղ է Քրիստոսի։
6 Ողջոյն տուէք Մարիամայ, որ մեր վրայ շատ
7 աշխատեցաւ։ Ողջոյն տուէք Անդրոնիկոսի և
Ցունեայ, իմ ազգականներուս և գերեկիցներուս,
որ ի մէջ առաքելոց երեւելիներ են, որք և յա-
8 ռաջ քան զիս եղան Քրիստոսի։ Ողջոյն տուէք
9 Ամպղեայ իմ սիրելւոյս ի Տէր։ Ողջոյն տուէք

*Ոմանք լսեն՝ †Կամ, Ասիայէ

Ուրբանոսի մեր գործակիցին ի Քրիստոս, և Ստաք-
10 եայ իմ սիրելւոյս։ Ողջոյն տուէք Ապելեսի, որ
11 ընտրեալ է ի Քրիստոս։ Ողջոյն տուէք անոնց որ
Արիստոբուղոսի տունէն են։ Ողջոյն տուէք Հե-
րոդիոնի իմ ազգականիս։ Ողջոյն տուէք անոնց
12 որ Նարկիսէ տունէն են ի Տէր։ Ողջոյն տուէք
Տրիփոնեայ և Տրիփոսեայ աշխատողաց ի Տէր։
Ողջոյն տուէք Պերսիդեայ սիրելւոյն, որ շատ
13 աշխատեցաւ ի Տէր։ Ողջոյն տուէք Ռուփոսի՝
ընտրելոյ ի Տէր, և անոր մօրը և իմին։ Ողջոյն
14 տուէք Ասինկրիտոսի, Փլեգոնտի, Երմասայ, Պատ-
րոբայ, Երմեսի և եղբարց որ անոնց հետ են։
15 Ողջոյն տուէք Փիղողոգոսի և Ցուլեայ, Նեռեայ
և անոր քրոջը, և Ողիմպասայ և բոլոր սրբոց որ
16 անոնց հետ են։ Ողջոյն տուէք միմեանց ի համ-
բոյր սրբութեան։ Ողջոյն կու տան ձեզ *ամենայն
եկեղեցիք Քրիստոսի։
17 Կ՚աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել այնպիսիները
որ կ՚ընեն հերձուածներ և գայթակղութիւններ
արտաքոյ այն վարդապետութեան զոր սորվե-
18 ցաք, և նա կեցէք անոնցմէ. քանզի այնպիսիք
չեն ծառայեր Տէառն մերոյ †Քրիստոսի, այլ ի-
րենց որովայնին. և քաղցր բանիւք և գովու-
19 թեամբ կը խաբեն պարզամտաց սիրտերը։ Քան-
զի ձեր հնազանդութիւնն հասած է ամենուն.
ուստի ուրախ եմ ձեր վրայ. բայց կ՚ուզեմ որ
իմաստուն ըլլաք դուք ի բարին, և միամիտ՝
20 ի չարն։ Եւ Աստուած խաղաղութեան խորտակէ
զՍատանայ վաղվաղակի ձեր ոտից տակ։ Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։‡
21 Ողջոյն կու տայ ձեզ Տիմոթէոս, գործակիցս,
և Ղուկիոս և Յասոն և Սոսիպատրոս, ազգա-

*Ոմանք լսեն՝ ‡Ոմանք կը յաւելուն, Ամէն։
†Ոմանք, Յիսուսի Քրիստոսի

22 կանչերու։ (Ողջոյն կու տամ ձեզ ի Տէր և ես
23 Տերտիոս որ այս Թուղթը գրեցի։) Ողջոյն
կու տայ ձեզ Գայիոս, իմ և բոլոր եկեղեցւոյն
հիւրընկալը։ Ողջոյն կու տայ ձեզ Երաստոս՝
գանձապետ քաղաքիս, և Կուարտոս եղբայր։
24 Շնորհք Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեր ա-
մենուն հետ։ Ամէն։
25 Արդ այնմ որ կարող է հաստատել զձեզ ըստ
աւետարանիս և ըստ քարոզութեան Յիսուսի
Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն որ
ծածկուած էր յաւիտենական դարերէ հետէ,
26 Եւ այժմ յայտնուեցաւ, և մարգարէական գրովք
ճանչցուեցաւ յաւիտենական Աստուծոյ հրամա-
նաւ բոլոր ազգաց՝ հնազանդելու համար հաւա-
27 տոյ, Միայնոյ խոհեմին Աստուծոյ՝ Յիսուսի
Քրիստոսի ձեռօք փառք յաւիտեանս։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, Աստուծոյ կամքովն Յիսուսի Քրիստոսի
առաքեալ ըլլալու կոչուած, և Սոսթենէս եղ-
2 բայր, Եկեղեցւոյն Աստուծոյ որ ի Կորնթոս,
Քրիստոս Յիսուսով սրբուածներուն, սուրբ ըլ-
լալու կոչուածներուն, ամենուն հետ որ ամէն

տեղ կը կոչեն զանուն Տէառն մերոյ Յիսուսի
3 Քրիստոսի, նոցա և մեր. Շնորհք և խաղաղու-
թիւն ձեզ յԱստուծոյ մեր Հօրմէն և ի Տէառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
4 Ցամենայն ժամ կը գոհանամ Աստուծմէս ձեզի
համար Աստուծոյ շնորհաց վրայ, որ տրուած է
5 ձեզ ի Քրիստոս Յիսուս. Որ դուք անով հարըս-
տացաք յամենայնի ամենայն խօսքով և ամե-
6 նայն գիտութեամբ. Ինչպէս Քրիստոսի վկայու-
7 թիւնն իսկ հաստատուեցաւ ի ձեզ. Որ դուք
չնուազիք և ոչ մի շնորհօքս, ապասելով յայտ-
8 նութեան Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որ
և պիտի հաստատէ զձեզ մինչև ի կատա-
րած՝ Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի օրը։
9 Հաւատարիմ է Աստուած, որով կոչուեցաք հա-
ղորդ ըլլալ իւր Որդւոյն՝ Տէառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։
10 Կ'աղաչեմ զձեզ, եղբարք, յանուն Տէառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մի և նոյն խօսքն
ունենաք ամենքդ, և երկպառակութիւն չըլլայ
ի ձեզ. այլ ըլլաք *հաստատուած մի և նոյն
11 մտաց և մի և նոյն խորհրդոյ վրայ։ Քանզի
ձեզի համար լուր հասաւ ինձ, եղբարք, ի
Քղուէեանց, թէ հակառակութիւններ կան ի
12 ձեզ։ Արդ կ'ըսեմ զայս, թէ ձեզմէ իւրաքանչիւր
ոք կ'ըսէ, Ես Պօղոսեան եմ, և Ես՝ թէ Ես
Ապողոսեան, և Ես՝ թէ Ես Կեփայեան, և
13 Ես՝ թէ Ես Քրիստոսեան։ Միթէ Քրիստոս
բաժնուա՞ծ է. միթէ Պօղո՞ս ի խաչ եղաւ ձեզի
համար, կամ թէ Պօղոսի՞ անուամբ մկրտուե-
14 ցաք։ Կը գոհանամ Աստուծմէ որ ձեզմէ ոչ ոք
15 մկրտեցի, միայն Կրիսպոս և Գայիոս։ Որպէս
16 զի չըսէ ոք թէ իմ անուամբս մկրտեցի։ Արդարև

*Յն՝ կատարեալ գործած

մկրտեցի նաև. Ստեփանեան տունը. և զայլ ոք
չեմ գիտեր ամենևին թէ մկրտեցի։
17 Քանզի Քրիստոս չղրկեց զիս մկրտել, այլ ա-
ւետարանել, ոչ թէ ՝ճարտարութեան խօսքե-
րով, որպէս զի ընդունայն չլիլայ Քրիստոսի
18 խաչը։ Քանզի խաչին քարոզութիւնը կորուս-
լոց յիմարութիւն է, բայց մեզ փրկելոցս զօրու-
19 թիւն Աստուծոյ է։ Վասն զի գրուած է, Խոս-
տումնեներուն իմաստութիւնը պիտի կորուսանեմ,
և հանճարեղներուն հանճարը պիտի խափանեմ։
20 Ո՞ւր է իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ այս
աշխարհի. ո՞չ ապաքէն Աստուած յիմարեցուց այս
21 աշխարհս իմաստութիւնը։ Քանզի, որովհետև,
իմաստութեամբն Աստուծոյ, աշխարհ չճանչ-
ցաւ իմաստութեամբ զԱստուած, հաճեցաւ Ա-
ստուած քարոզութեան յիմարութեամբն ապրե-
22 ցունել հաւատացեալները։ Քանզի Հրեայք նշան
կը խնդրեն, և Յոյնք իմաստութիւն կը փնտռեն։
23 Իսկ մենք կը քարոզենք զխաչեալն Քրիստոս,
Հրեից գայթակղութիւն և Յունաց յիմարութիւն։
24 Բայց անոնց որ կոչուած են, թէ՛ Հրեից և թէ՛
Յունաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և Ա-
25 ստուծոյ իմաստութիւն։ Քանզի յիմարն Աստուծոյ
իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Ա-
26 ստուծոյ հզորագոյն է քան զմարդիկ։ Արդարև
դուք ձեր կոչումը կը տեսնէք, եղբարք, որ ոչ
մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ, ոչ շատ զո-
27 բաւորներ, ոչ շատ ազնուականներ կոչեցաք։ Այլ
աշխարհիս յիմարներն ընտրեց Աստուած, որ յա-
մօթ ընէ իմաստունները. և աշխարհիս տկար-
ներն ընտրեց Աստուած, որ յամօթ ընէ զօրա-
28 ւորները։ Եւ աշխարհիս անտոհմիները և անարգ-
ներն ընտրեց Աստուած և որ չեն ինչ, որպէս զի
29 խափանէ զանոնք որ են ինչ. Որպէս զի և ոչ մի
30 մարմին պարծի Աստուծոյ առջև։ Իսկ դուք ան-

կէ եք Քրիստոս Յիսուսով, որ իմաստութիւն,
արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն եղաւ
31 մեզ Աստուծմէ. Որ ինչպէս գրուած է, Ով որ
կը պարծի՝ Տէր պարծի ի Տէր։

ԳԼ. Բ

1 Եւ ես, եղբարք, որ եկայ առ ձեզ, ոչ թէ խօս-
քի կամ իմաստութեան առաւելութեամբ եկայ
2 Աստուծոյ վկայութիւնն յայտնել ձեզ, վասն զի
չդրի ի մտի ուրիշ բան գիտնալ ձեր մէջ, բայց
3 միայն զՅիսուս Քրիստոս, և զնա խաչուած։ Եւ
ես տկարութեամբ և երկիւղիւ և շատ դողով
4 կեցայ ձեր քով. Եւ իմ խօսքս և քարոզու-
թիւնս ոչ թէ *մարդկային իմաստութեան համո-
զիչ խօսքերով էր, այլ ապացուցութեամբ հոգ-
5 ւոյն և զօրութեան. Որպէս զի ձեր հաւատքը չըլ-
լայ մարդոց իմաստութեամբ, այլ Աստուծոյ զօ-
6 րութեամբ։ Սակայն կատարեալներուն հետ իմաս-
տութիւն կը խօսինք. բայց ոչ թէ այս աշխարհիս
իմաստութիւնը, և ոչ այս աշխարհս ոչնչանալու
7 իշխաններուն. Այլ խորհրդով կը խօսինք Ա-
ստուծոյ ծածուկ իմաստութիւնը, զոր Աստուած
սահմանեց յառաջ քան զաշխարհ ի փառս մեր.
8 Զոր ոչ ոք այս աշխարհս իշխաններէն ճանչցաւ.
քանզի եթէ ճանչցած ըլլային, փառաց Տէրը չէին
9 հաներ ի խաչ. այլ ինչպէս գրուած է, Աչն բա-
ները զոր աչք տեսած չէ և ականջ լսած չէ
և մարդու սիրտ ինկած չէ, Աստուած պատրաս-
10 տեց անոնց որ կը սիրեն զնա։ Բայց Աստուած
յայտնեց մեզ իւր Հոգւով, քանզի Հոգին կը
11 քննէ զամենայն, նաև զխորս Աստուծոյ։ Վասն
զի ո՞վ ի մարդկանէ գիտէ մարդուններոը, բայց

*Որուն լսենին

միայն մարդուն հոգին որ է ի նմա. նոյնպես ոչ
ոք գիտէ զԱստուծոյն, բայց միայն Աստուծոյ
12 Հոգին։ Իսկ մենք ոչ զհոգին աշխարհիս հոգին
առինք, այլ զհոգին որ Աստուծմէ է. որ ճանչ-
13 նանք մեզ որ Աստուծմէ տրուեցաւ մեզ։ Որ և
կը խօսինք, ոչ թէ խոստերով զոր մարդկային
իմաստութիւնը կը սորվեցունէ, այլ զոր Հո-
գին կը սորվեցունէ, և զհոգևորս կը համեմա-
14 տենք հոգևորաց հետ։ Իսկ հոգեւոր մարդը
չընդունիր Աստուծոյ Հոգւոյն բաներըը, քանզի
անոնք յիմարութիւն են անոր, և չիրնար իսկ
15 գիտնալ, քանզի հոգևորապես կը քննուին։ Բայց
այն որ հոգևոր է՝ կը քննէ զամենայն, և ինք
16 չքննուիր ուրիշէ։ Քանզի «ո՞վ գիտցաւ Տէրոջը
միտքը, որ ըլլայ անոր խրատուհ։ բայց մենք
ունինք Քրիստոսի միտքը։

Գլ. Գ

1 Եւ ես, եղբարք, չկրցայ խօսել ձեզ՝ որպես հո-
2 գևորներուհ, այլ որպես մարմնաւորներուհ, Որ-
պես թէ Քրիստոսով տղայոց, կաթ չամրեցի ձեզ՝
ոչ թէ կերակուր, քանզի դեռ կարող չէիք, և
հիմա ևս տակաւին կարող՝ չէք, վասն զի դեռ
3 մարմնաւոր էք։ Որովհետև տակաւին ձեր մէջ
նախանձ և հակառակութիւն և բաժանումներ
կան, ո՞չ ապաքէն մարմնաւոր էք, և մարդկօրէն
4 կը քալէք։ Քանզի երբ ՅՆԽ ոք կ՚ըսէ թէ ես Պօ-
ղոսեան եմ, և միւսը՝ թէ ես Ապողոսեան, ո՞չ
ապաքէն մարմնաւոր էք։ Ուրեմն ո՞վ է Պօղոս
5 կամ ո՞վ է Ապողոս. Պաշտօնեաներ են որովք
հաւատացիք, և ինչպես որ Տէրը տուաւ. իւրա-
6 քանչիւրին։ Ես տնկեցի, Ապողոս ջուր տուաւ,

¶ Յնմանէ, Սուրբ Հոգին

7 բայց Աստուած աճեցուց։ Ուստի ոչ տնկողն է
ինչ, և ոչ ջուր տուողը այլ Աստուած որ աճե-
8 ցուց։ Տնկողը և ջուր տուողը մի են, և իւրա-
քանչիւր իւր վարձքը պիտի առնու իւր աշխա-
9 տութեան չափով։ Քանզի մենք Աստուծոյ գոր-
ծակից ենք. դուք Աստուծոյ մշակութիւն էք,
10 Աստուծոյ շինութիւն էք։ Աստուծոյ շնորհացը
չափով որ տրուեցաւ ինձ, իբրև իմաստուն ճար-
տարապետ հիմ դրի, բայց ուրիշ շինողն ու-
րիշ է. միայն թէ իւրաքանչիւրը թող դուրսնայ
11 թէ ինչպես կը շինէ։ Քանզի ոչ ոք այլ եւս ուրիշ
հիմ կրնայ դնել բաց ի գրուածէն, որ է Յիսուս
12 Քրիստոս։ Եթէ ոք այս հիման վրայ կը շինէ ոս-
կի, արծաթ, պատուական քարեր, փայտ, խոտ,
13 եղէգն, իւրաքանչիւր մարդու գործը յայտնի
պիտի ըլլայ. քանզի օրը պիտի հանէ յերևան,
վասն զի կրակով պիտի յայտնուի. և կրակը պի-
տի փորձէ թէ իւրաքանչիւր մարդու գործն ինչ-
14 պես է։ Եթէ գործը զոր կը շինէ ոք՝ մնայ, ինք
15 վարձք պիտի առնու։ Եթէ այրի այն զոր կը շինէ
ոք, վնաս պիտի կրէ. բայց ինք պիտի ազատի,
16 սակայն այնպէս որպես թէ կրակի միջէն։ Չէ՞ք
գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք, և Աս-
17 տուծոյ Հոգին բնակած է ի ձեզ։ Եթէ ոք Աստու-
ծոյ տաճարը կ՚ապականէ, Աստուած պիտի ապա-
կանէ զնա, քանզի Աստուծոյ տաճարը սուրբ է,
որ էք դուք։
18 Մի՛ ոք խաբէ զինք. եթէ ոք ի ձեզ իմաստուն
կը համարի զինք այս աշխարհիս մէջ, թող յիմար
19 ըլլայ՝ որպէս զի իմաստուն ըլլայ. Քանզի այս աշ-
խարհիս իմաստութիւնը յիմարութիւն է Աստու-
ծոյ առջև. վասն զի գրուած է թէ Նա իմաստ
մտաւններն իրենց խորամանկութեան մէջ կը բռնէ։
20 Եւ դարձեալ թէ Տէրը գիտէ խմաստուններուն
21 խորհուրդները որ ունայն են, Ուրեմն թող

22 չպարծի ոք ի մարդ. քանզի ամենայն ինչ ձեր է,
23 թէ Պօղոս, թէ Ապողոս, թէ Կեփաս, թէ աշխարհ, թէ կեանք, թէ մահ, թէ ներկայք և թէ հանդերձեալք՝ ամենայն ինչ ձեր է. իսկ դուք Քրիստոսի, և Քրիստոս՝ Աստուծոյ։

Գլ. Դ

1 Թող այսպէս համարիւն զմեզ մարդիկ, իբրև Քրիստոսի սպասաւորներ և Աստուծոյ խորհրդոց
2 տնտեսներ։ Արդ, տնտեսներուս մէջ կը խնդրուի
3 որ մարդ հաւատարիմ գտնուի։ Բայց ինձ ոչինչ է այս, որ դատուիմ ձենէ կամ մարդոց *դատաստեանէն, մանաւանդ որ ես իսկ իմ անձս չեմ
4 դատեր. (վասն զի ես իմ անձիս վրայ բան մը չեմ գիտեր. բայց ոչ թէ այսու կ'արդարանամ.) այլ
5 զիս դատողը Տէրն է։ Ուրեմն յառաջ քան ժամանակն մի՛ դատէք, մինչև գայ Տէրը որ պիտի հանի ի լոյս զգաղտնիս խաւարի, և յայտնի պիտի ընէ սրտերուն խորհուրդները. և անոնուն իւրաքանչիւրին գովութիւնը պիտի ըլլայ Աստուծմէ։
6 Ասոնք օրինակ բերի, եղբարք, իմ վրաս և Ապողոսի վրայ ձեզի համար, որ դուք մեզ սորվիք քան զգրուածն աւելի բան չխորհիլ, որ չըլլայ թէ ձենէ ոք հպարտանայ մէկուս մը համար
7 ուրիշի դէմ։ Քանզի ո՞վ է որ տարբեր կ'ընէ զքեզ. և ի՞նչ ունիս զոր առած չես. և եթէ առիր, ընդ՞ի՛նչ իբրև չառած կը պարծիս։
8 Արդէն յագեալ էք, արդէն հարստացաք, առանց մեզի թագաւորեցիք. և երանի թէ թագաւորէիք, որ և մենք ձեզի հետ թագաւորէինք։
9 Քանզի կարծեմ թէ Աստուած յետիններս ըրաւ զմեզ առաքեալներս մահապարտներու նման.

*Յոյն, օրուընէն

քանզի տեսարան եղանք աշխարհի և հրեշտակաց
10 և մարդկան։ Մենք յիմար Քրիստոսի համար, և դուք խաստան Քրիստոսով. մենք տկար, և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ, և մենք ա-
11 նարգեալ։ Մինչև այս օր և՛ կ'անօթենանք, և՛ կը ծարաւենք, և՛ մերկ կը մնանք, և՛ կը ծեծուինք,
12 և՛ աստանդական կը շրջինք, Ես մեր ձեռօք գործելով կ'աշխատինք. երբ կը նախատեն զմեզ, կ'օրհնենք. երբ կը հալածեն, կը համբե-
13 րենք. երբ կը հայհոյեն, կ'աղաչենք. իբրև աշխարհի ապտերուքիւնը, քան զամենեսին անարգ
14 ըլլալով մինչև ցարդ։ Այս բաները կը գրեմ ոչ թէ ամչցուներու համար զձեզ, այլ կը խրատեմ իբրև
15 սիրելի որդիներս. վասն զի Թէպէտև բիւր վարժապետներ ունենաք ի Քրիստոս, բայց ոչ շատ հայրեր, քանզի ի Քրիստոս Յիսուս ես ծնայ զձեզ ա-
16 ւետարանաւ։ Ուրեմն կ'աղաչեմ զձեզ, նմանող
17 եղէք ինձ։ Վասն որոյ զրկեցի առ ձեզ զՏիմոթէոս, որ իմ սիրելի որդիս է և հաւատարիմ ի Տէր, որ յիշեցնէ ձեզ ճամբաներս ի Քրիստոս, ինչպէս որ ամէն տեղ բոլոր եկեղեցիներուն մէջ կը սորվե-
18 ցնեմ։ Ոմանք հպարտացան, որպէս թէ պիտի
19 չգամ առ ձեզ։ Բայց վաղվաղակի պիտի գամ առ ձեզ, եթէ Տէրը կամի, և պիտի հասկնամ ոչ թէ հպարտացողներուն խօսքը, այլ զօրու-
20 թիւնը։ Վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը
21 ոչ թէ խօսքով է, այլ զօրութեամբ։ Ի՞նչ կ'ուզէք, գաւազանո՞վ գամ առ ձեզ, թէ սիրով և հեզութեան հոգւով։

Գլ. Ե

1 Ա՛ռ հասարակ կը լսուի թէ պոռնկութիւն կայ ձեր մէջ, և այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսաց

մէջ անգամ *չկայ, որպէս Թէ ոք իւր հօրը կինն
2 ունենայ, եւ դուք հպարտացած էք, և ոչ մանա-
ւանդ սուգ ըրիք, որ ձեր մէջէն վերցուի այս բանն
3 ընողը։ Բանդի Թէպէտ ես մարմնով հեռու եմ,
բայց հոգւով մօտ եմ. ուստի հիմա որպէս Թէ
4 մօտ ըլլալով որոշեցի, որ այս բանն ընողը, երբ
Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անունովը ի մի
վայր ժողովիք դուք և իմ հոգիս Տէառն մե-
5 րոյ Յիսուսի Քրիստոսի զօրութեամբը, Սատանայի
մատնէք այնպիսին՝ ի կորուստ մարմնոյն, որպէս
6 զի հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը։ Այդ ձեր
պարծանքն աղէկ չէ. չէ՞ք գիտեր որ փոքր մի
7 խմոր կը խմորէ ամբողջ զանգուածը։ Ի բաց մաքրեցէք հին խմորը, որ ըլլաք նոր զանգուած, ինչպէս որ անխմոր էք. քանդի Քրիստոս մեր զո-
8 հինը զոհուեցաւ մեզի համար։ Ուստի տօն կատարենք՝ ոչ հին խմորով և ոչ չարութեան և անզգամութեան խմորով, այլ անկեղծութեան
9 և ճշմարտութեան անխմոր հացիւ։ Գրեցի ձեզ
10 ի թղթին, պոռնիկներու հետ չխառնուիլ։ Եւ ձերէն, պոռնիկներու հետ չխառնուիլ։ Եւ ձերէն, ոչ Թէ այս աշխարհիս պոռնիկներուն հետ, կամ ագահներուն հետ, կամ յափշտակողներուն հետ, կամ կռապաշտներուն հետ. ապա Թէ ոչ՝
11 պարտ էր ձեզ աշխարհէս դուրս ելլել։ Բայց հիմա գրեցի ձեզ չխառնուիլ, այսինքն եթէ ոմն, եղբայր կոչուած, կա՛մ պոռնիկ է, կա՛մ ագահ, կա՛մ կռապաշտ, կա՛մ նախատող, կա՛մ արբեցող, կա՛մ յափշտակող, այնպիսւոյն հետ հաց
12 անգամ չուտել։ Վասն զի ի՞նչ գործ ինձ արտաքինները դատել. ո՞չ ապաքէն դուք ներքին-
13 ները կը դատէք. իսկ արտաքինները պիտի դատէ Աստուած. ուստի վերցուցէք չարը ձեր մէջէն։

*Ոմանք, չկըսուիր

Գլ. Ը

1 Ձեզնէ ոք եթէ բան մը ունենայ իւր ընկերին հետ,
կը համարձակի՞ անիրաւներու առջև դատուիլ և
2 ոչ սուրբերու առջև։ Չէ՞ք գիտեր որ սուրբերը
պիտի դատեն զաշխարհ. և եթէ աշխարհ կը
դատուի ձեզմէ, ուրեմն արժանի չէք դուք ընչին
3 դատեր ործելու։ Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակները պիտի դատենք. ո՞եր կը մնան ապա աշխար-
4 հայինքը։ Ուրեմն եթէ ձեր մէջ աշխարհային դատեր ունիք, եկեղեցւոյն անարգեալները նստուցէք
5 դատաւոր։ Ձեզ ամչցնելու համար կ'ըսեմ. այնչափ չըկայ ձեր մէջ իմաստուն ոք, որ կարող
6 ըլլայ իրաւունքը որոշել իւր եղբարց մէջ, Այլ եղբայր եղբօր հետ կը դատուի, և այն՝ անհաւա-
7 ցից առջև։ Արդարև բոլորովին յանցանք է այս ձեր մէջ, որ իրարու հետ դատեր ունիք. ընդէ՞ր
մանաւանդ դուք չէք կրեր անիրաւութիւն.
8 ընդէ՞ր մանաւանդ դուք չէք զրկուիր։ Այլ դուք
անիրաւութիւն կ'ընէք և կը զրկէք, և այն՝ եղ-
9 բայրերը։ Չէ՞ք գիտեր որ անիրաւք Աստուծոյ
արքայութիւնը պիտի չժառանգեն. մի՛ խաբուիք,
10 ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք, ոչ շնացողք, ոչ
էգ-տղամարդիկ, ոչ արուագործք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ նախատողք և ոչ յափշտակողք պիտի ժառանգեն Աստուծոյ թագա-
11 ւորութիւնը։ Եւ ձեզնէ ոմանք այսպիսի եիք. բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք, բայց արդարացաք յանուն Տէառն Յիսուսի և մեր Աստուծոյ Հոգւով։
12 Ամենայն ինչ օրինաւոր է ինձ, բայց ոչ ամենայն
ինչ օգտակար. ամենայն ինչ օրինաւոր է ինձ,
բայց ես բանի մը իշխանութեան տակ պիտի չըլ-
13 լամ։ Կերակուրները որովայնի համար են, և որովայնը՝ կերակուրներու. բայց Աստուած պիտի

խափանէ ԲՔ՝ այս և ԲՔ՝ անոնք։ Իսկ մարմինը չէ պոռնկութեան համար, այլ Տէրոջը, և Տէրը՝ մար-
14 մնոյն համար։ Եւ Աստուած որ յարոյց Տէրը,
15 պիտի յարուցանէ զմեզ իւր զօրութեամբ։ Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են. ուստի Քրիստոսի անդամները առնուլ պոռնկի
16 անդամները ընեմ. քա՛ւ լիցի։ Չէ՞ք գիտեր Թէ այն որ կը մտանէ պոռնկի՝ մի մարմին կ'ըլլայ. քանզի կ'ըսէ Դէ՛ւթ, Երկուքը մի մարմին պիտի
17 ըլլան։ Իսկ այն որ կը մտանէ Տէրոջը՝ մի հոգի
18 կ'ըլլայ։ Փախէ՛ք պոռնկութենէ։ Ամէն մեղք զոր կը գործէ մարդ, անոր մարմնէն դուրս է. բայց այն որ կը պոռնկի՝ իւր մարմնոյն դէմ կը մեղան-
19 չէ։ Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Հոգւոյն Սրբոյ որ ի ձեզ, զոր Աստուծմէ ունիք,
20 և դուք ձեր անձին չէք. Քանզի գնով գնուեցաք. ուստի փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն և հոգիներուն մէջ, որ Աստուծոյ են։

Գլ. Է

1 Արդ այն բաներուն համար որ դուք գրեցիք
2 ինձ, լաւ է մարդոյ որ կնոջ չմտնենայ, բայց պոռնկութեանց պատճառաւ իւրաքանչիւր Թող
3 ունենայ իւր կինը, և ամէն կին Թող ունենայ
4 իւր այրը։ Այրը իւր կնոջ Թող պարտքը հատու-
5 ցանէ, նոյնպէս կինը՝ իւր առն։ Կինը իւր մարմ-
նոյն չիշխեր, այլ այրը. նոյնպէս այրը իւր մարմ-
նոյն չիշխեր, այլ կինը։ Մի՛ զրկէք զմիմեանս, եթէ ոչ միաբանութեամբ առ ժամանակ մի ա-
ղօթքի պարապելու համար, և դարձեալ իրա-
րու դարձէք որ Սատանան չգրգռէ ձեզ ձեր ան-
6 ժուժկալութեան համար։ Ձայս կ'ըսեմ Թուլ տա-
7 լով և ոչ Թէ հրամայելով։ Քանզի կ'ուզէի որ բոլոր մարդիկ ըլլային երբեմն պէս, բայց իւրաքան-

չիւր ունի իւր պարգեւն Աստուծմէ, մին այսպես
8 և միւսն այնպես։ Բայց ամուրեաց և այրեաց կ'ը-
9 սեմ, լաւ է անոնց Եթէ կենան ինձի պէս։ Իսկ Եթէ չունին ժուժկալութիւն, Թող ամուսնանան,
10 քանզի լաւ է ամուսնանալ քան չեզնուլ։ Բայց ամուսնացելոց կը պատուիրեմ, ոչ ես այլ Տէրը,
11 որ կինը չզատուի յառնէն, (Իսկ Եթէ զատուի և՝ առանց ամուսնանալու մնայ, կամ իւր առն հետ հաշտուի,) և այրը իւր կինը Թող չձգէ։
12 Բայց ուրիշներուն ես կ'ըսեմ, ոչ Թէ Տէրը. Եթէ եղբայր մը անհաւատ կին ունի, և հաճոյ է նմա
13 անոր հետ բնակել, Թող չձգէ զնա։ Եւ կին մը որ անհաւատ այր ունի, և հաճոյ է նմա անոր
14 հետ բնակել, Թող չձգէ զնա։ Քանզի անհաւատ այրը սրբուած է կնաւ և անհաւատ կինը սրբուած է արամբ։ Ապա Թէ ոչ ձեր որդիքը
15 պիտի ըլլային պիղծ, բայց հիմա սուրբ են։ Իսկ Եթէ անհաւատը զատուի, Թող զատուի. եղբայր մը կամ քոյր մը այնպիսի պարագաներու մէջ չէ. սակայն Աստուած կոչեց զմեզ ի խաղա-
16 ղութիւն։ Քանի՞ գիտես, կին դու, Թերեւս պիտի ապրեցնես քու այրդ։ կամ ի՞նչ գիտես,
17 այր դու, Թերեւս պիտի ապրեցնես կինդ։ Միայն Թէ իւրաքանչիւրին ինչպես Տէրը բաժնեց, իւրաքանչիւր ինչպես Աստուած կոչեց, այնպես Թող երթայ, և բոլոր եկեղեցիներուն մէջ ես այսպէս պատուէր կու տամ։
18 Եթէ թլփատած ոք կոչուեցաւ, Թող դարձեալ անթլփատ չըլլայ. Եթէ չթլփատածներէն
19 ոք կոչուեցաւ, Թող չթլփատի։ Պատչ թլփատութիւնը բան մը չէ, և անթլփատութիւնը բան
մը չէ, այլ Աստուծոյ պատուիրանց պահպա-
20 նութիւնը։ Բայց իւրաքանչիւր ինչ կոչման մէջ
21 որ կոչուեցաւ, Թող անոր մէջ կենայ։ Ծառա՞յ կոչուեցար, փոյթ չըլլայ քեզ. բայց Եթէ կրնաս

22 ազատ ըլլալ, ընտրէ զայն, վասն զի ծառան որ
կոչուած է Տէրոջմէ՝ Տէրոջը ազատացեալն է·
նոյնպէս և ազատը որ կոչուած է՝ Քրիստոսի ծա-
23 ռան է· Դուք գնով գնուեցաք, մարդոց ծառայ
24 մի՛ ըլլաք· Եղբարք, իւրաքանչիւր ինչ կոչման մէջ
որ կոչուեցաւ, հոգ անոր մէջ կենայ Աստուծոյ
առջև·

25 Բայց կուսանաց համար հրաման չունիմ ի Տէա-
նէ, միայն թէ իբրև ողորմութիւն գտած Տէրոջմէ
26 հաւատարիմ ըլլալու՝ խրատ կու տամ· Ուրեմն
ես կը համարիմ թէ լաւ է այս այժմու նեղու-
թեան համար, այսինքն լաւ է մարդոյ որ այսպէս
27 ըլլայ· կապուած ես կնոջ, մի՛ խնդրեր արձակ-
ուիլ· արձակուած ես կնոջմէ, մի՛ խնդրեր կին·
28 իսկ եթէ ամուսնանաս, չմեղանչեցիր, և եթէ
կոյս ամուսնանայ, չմեղանչեց· բայց այնպիսիք
պիտի ունենան մարմնոյ նեղութիւն· սակայն ես
29 կը խնայեմ ձեզ· Բայց կ'ըսեմ զայս, եղբարք,
որ ժամանակս կարճեալ է· այլ և անոնք որ
30 կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին, և
անոնք որ կու լան՝ որպէս թէ չեն լար, և անոնք
որ կը խնդան՝ որպէս թէ չեն խնդար, և անոնք
31 որ կը գնեն՝ որպէս թէ չունին, և անոնք որ
կը վարեն զաշխարհս՝ որպէս թէ չվարչար չեն
վարեր· զանազի այս աշխարհիս կերպարանքը
32 կ'անցնի· Բայց ես կ'ուզեմ որ դուք անհոգ ըլ-
լաք· չամուսնացեալ մարդը կը հոգայ Տէրոջը
33 բաներէը, թէ ինչպէս հաճոյ ըլլայ Տէրոջը· իսկ
ամուսնացեալը կը հոգայ աշխարհիս բաներէը, թէ
34 ինչպէս հաճոյ ըլլայ իւր կնոջը· Եւ ամուսնացեալ
կինը և կոյսը կը տարբերին իրարմէ· Կանչէ կոյսը
կը հոգայ Տէրոջը բաներէը, որ սուրբ ըլլայ հոգւով
և մարմնով· իսկ ամուսնացեալ կինն կը հոգայ
աշխարհիս բաներէը, թէ ինչպէս հաճոյ ըլլայ իւր
35 առն· Բայց կ'ըսեմ զայս ձեր օգտին համար, ոչ

թէ ձեր վրայ վարմ ձգելու, այլ պարկեշտու-
թեան համար և Տէրոջը ծառայելու համար ա-
36 ռանց զարադանաց, իսկ եթէ ոք ամօթ կը համա-
րի իր կուսին համար, եթէ չափն անցած է, և
պէտք է այնպէս ըլլալ, ինչ որ կ'ուզէ՝ Թող ընէ,
37 մեղք չգործեր· Թող ամուսնանան· Բայց այն որ
հաստատ կը կենայ իւր սրտին մէջ, և հարկ չկայ
իւր վրայ, այլ իւր կամաց վրայ ունի իշխանու-
թիւն, և իւր սրտին մէջ այսպէս որոշած է որ
38 պահէ իւր կոյսը, աղեկ կ'ընէ· Ուստի այն որ
կ'ամուսնացունէ, աղեկ կ'ընէ· և այն որ չամուս-
39 նացուներ, աւելի աղեկ կ'ընէ· Կինը *կապուած է՝
որչափ ժամանակ ողջ է այրը· իսկ եթէ այրը
մեռնի, ազատ է ամուսնանալ որուն որ ուզէ,
40 միայն թէ Տէրոջմբ· Բայց ըստ իմ դատաստանս ա-
ւելի երանելի է, եթէ այնպէս կենայ· և կարծեմ
թէ ես ևս Աստուծոյ Հոգին ունիմ·

Գլ· Ը

1 Բայց կուռց զոհերուն վրայ գիտենք թէ ամէնքս
գիտութիւն ունինք· գիտութիւնը կը հպարտա-
2 ցունէ, բայց սէրը կը շինէ· Եւ եթէ ոք կը կարծէ
թէ բան մը գիտէ, դեռ բնաւ բան չգիտեր՝ ինչ-
3 պէս պարտ է գիտնալ· Իսկ եթէ ոք կը սիրէ
4 զԱստուած, անկէ ճանչցուած է· Ուստի կուռց
զոհուածներուն ուտելուս վրայ գիտենք թէ կուռքը
ոչինչ է յաշխարհի, և թէ չկայ այլ Աստուած
5 բայց ի միոյն· Քանզի թէև ըլլան, անուանբ աստ-
ուածներ, թէ՛ յերկինս և թէ՛ յերկրի, (ինչպէս
6 կան շատ աստուածներ և շատ տէրեր,) Բայց
մենք մի Աստուած ունինք, Հայր, որմէ ամէ-
նայն, և մենք ևս Դանով· և մի Տէր Յիսուս
Քրիստոս, որով ամենայն և մենք ևս Անով·

*Ոմանք, օրինօք կապուած Էկաւ, անոր համար

7 Բայց աւետնուն քոյ գիտութիւն չկայ. և ոմանք
կուռց վրայ խղճ ունենալով՝ մինչև հիմա կ'ուտեն իբրև կուռց զոհեալ, և իրենց խղճը, որովհետև տկար է, կը պղծուի։ Սակայն կերակուրը
8 չկերցուներ զմեզ Աստուծոյ առջև. քանզի ոչ, եթէ ուտենք, կ'աւելնանք, և ոչ, եթէ չուտենք,
9 կը պակսինք։ Բայց զգոյշ կեցէք, որ այդ ձեր իշխանութիւնը գայթակղութիւն չըլլայ տկարներուն։
10 Քանզի եթէ ոք տեսնէ զքեզ, որ գիտութիւն ունիս, կուսասան մէջ սեղան նստած, ոչ
սպաչքէն այն տկար մարդուն խղճն հաստատուի կուռքին պիտի առնու ուտել կուռց զոհուածը,
11 Եւ քու գիտութեամբդ կորսուի այն տկար եղ-
12 բայրը որոյ համար Քրիստոս մեռաւ։ Եւ այսպէս եղբայրներուն դէմ մեղանչելով և անոնց տկար
խղճը վիրաւորելով՝ կը մեղանչէք Քրիստոսի
13 դէմ։ Ուստի եթէ կերակուրը կը գայթակղեցունէ իմ եղբայրս, մես պիտի չուտեմ յաւիտեան
որ իմ եղբայրս չգայթակղեցունեմ։

Գլ. Թ

1 Ո՞չ սպաչքէն առաքեալ եմ. ո՞չ սպաչքէն տեսա
եմ. ո՞չ սպաչքէն գՏէր մեր Յիսուս Քրիստոս ու-
2 ղե՞ տեսայ. ո՞չ սպաչքէն դուք իմ գործս էք ի
3 Տէր։ Թէպէտև ուրիշներուն առաքեալ չըլլամ,
բայց ձեզ եմ անտարակոյս. քանզի իմ առաքե-
4 լութեանս կնիքը դուք էք ի Տէր։ Իմ պատաս-
5 խանս անոնց որ զիս կը քննեն՝ այս է. Մեթէ իշ-
խանութիւն չունինք ուտել և ըմպել։ Մեթէ
իշխանութիւն չունինք կին որ քոյր է շրջեցու-
6 նել, ինչպես ուրիշ առաքեալք և Տէրոջը եղ-
7 բայրները և Կեփաս։ Մեթէ ես և Բառնաբաս
միայն իշխանութիւն չունինք չգործել։ Ո՞վ կը
զինուորի երբեք իւր ծախուք. ո՞վ կը տնկէ այ-

զի և չուտէր անոր պտղէն. կամ ո՞վ կ'արածէ
8 ոչխարներ և չուտէր ոչխարներուն կաթէն. Մի-
թէ մարդկօրէն կ'ըսեմ զայս, կամ ոչ օրէնքն
9 նաև օրէնքը կ'ըսե զնոյն։ Քանզի գրուած է նաև.
յօրէնս Մովսիսի, Չկապես կալի մէջ ցորենը եզ-
դին ցուուկըս։ Մեթէ եզներո՞ համար փոյթ էր Ա-
10 ստուծոյ. Ո՞չ սպաչքէն մեզի համար կ'ըսէ։ վասն
զի մեզի համար գրուեցաւ. քանզի որ կը հեր-
կէ՝ պարտի յուսով հերկել, և այն որ կը կաս-
11 *վայելելու յուսով՝ եթէ մենք սերմանեցինք
ձեզ զհոգևորս, մե՞ծ բան է եթէ հնձենք ձեն-
12 զմոտիկաւորս։ եթէ այլք ունին ձեր վրայ այս
իշխանութիւնը, ո՞չ սպաչքէն և աւելի մենք.
բայց մենք չգործածեցինք այս իշխանութիւնը,
այլ ամէն բան կը համբերենք, որ աբգելք չըլ-
13 լանք Քրիստոսի աւետարանին։ Չէ՞ք գիտեր որ
տաճարին մէջ աշխատողները տաճարէն կ'ուտեն,
և անոնք որ սեղանին պաշտանեայներն են՝ սեղա-
14 նէն կ'առնուն բաժին։ Նոյնպես և Տէրը հրաման
տուաւ, որ աւետարանը քարոզողներն ապրին
15 աւետարանէն։ Բայց ես ասոնց և ոչ մին գրի ի
գործ, և ոչ գրեցի ասոնք որ այնպես ըլլայ ինձ,
քանզի լաւ է ինձ մանաւանդ մեռնիլ քան թէ
16 ոք ընդունայն ընէ իմ պարծանքս։ վասն զի ե-
թէ ես աւետարանը քարոզեմ, պարծանք չկայ
ինձ, քանզի իմ վրաս հարկ է. մանաւանդ վայ
17 է ինձ եթէ չքարոզեմ աւետարանը։ Քանզի եթէ
ակամայ՝ այն ինձ յանձնուած անտեսութիւն է։
18 Ուրեմն ինչ վարձք կ'ըլլայ ինձ. որ երբ կը քա-
րոզեմ, ձրի տամ Քրիստոսի աւետարանը, որպես
զի չարաչար չվարեմ իմ իշխանութիւնս աւետա-
19 րանին մէջ։ Քանզի ես որ ազատ էի ամենէն, իմ

*Ո՞ուն, իւր յոյսը վայելելու համար

անձս ամենուն ծառայ ըրի, որ չատերը չհլիմ։
20 Հրեից հետ եղայ իբրև Հրեայ որ զՀրեայս չհլիմ.
21 Անոնց որ ընդ օրինօք էին՝ եղայ իբրև ընդ օրինօք, (ոչ Թէ ես ընդ օրինօք էի,) որպես զի չահիմ զանոնք որ ընդ օրինօք են. անոնց հետ որ առանց օրինաց էին՝ եղայ իբրև առանց օրինաց, (ոչ Թէ առանց օրինաց էի Աստուծմէ, այլ Քրիստոսի օրինաց մէջ,) որպես զի չահիմ զանոնք
22 որ առանց օրինաց են. Տկարներուն հետ եղայ իբրև տկար, որ տկարները չահիմ. ամենուն հետ եղայ ամենայն, որ ամենայնիւ ապրեցունեմ զոմանս։ Եւ զայս կ'ընեմ աւետարանին համար, որ
23 անոր կցորդ ըլլամ։ Զէ՞ գիտեր Թէ, անոնք որ մասալարէզին մէջ կը վազեն, վազել կը վազեն ամենքը, բայց մին կ'առնու. մրցանակը. այնպէս
25 վազեցէք որ հասնիք։ Եւ ով որ կը մրցի՝ ամէն բանի մէջ կը պահէ զինք. անոնք՝ որպէս զի եղծանելի պսակն առնուն, և մենք՝ ան եղծանելին։ Ուստի ես այնպէս կը վազեմ, ոչ Թէ իբրև անստգութեամբ. ես այնպէս կը մրցիմ, ոչ Թէ
27 իբրև զհողմն ծեծելով. Այլ կը ճնշեմ մարմինս և կը նուաճեմ, որ, մինչ ուրիշներուն կը քարոզեմ, ես ինքն չգանուիմ խոտան։

Գլ. Ժ

1 Զեմ ուզեր որ անգէտ ըլլաք, եղբարք, որ մեր հայրերն, ամենքը ամպին տակ էին, և ամենքը
2 անցան ծովէն, Եւ ամենքը Մովսէսէս մկրտուեցան ամպին և ծովին մէջ, Եւ ամենքը նոյն հո-
4 գեւոր կերակուրը կերան, Եւ ամենքը նոյն հոգեւոր ըմպելին խմեցին, քանզի կը խմէին այն հոգեւոր վիմէն որ անոնց հետ կ'երթար. և այն
5 վէմը Քրիստոս էր։ Բայց ոչ Թէ անոնցմէ շա-

*Ոմանք լսեն՝

տերուն հաճեցաւ. Աստուած, քանզի անապատին
6 մէջ մեռած ինկան։ Եւ այն բաները մեզի օրինակ եղան, որ չարեաց ցանկացող չըլլանք, ինչպէս
7 անոնք ցանկացան։ Եւ ոչ կռապաշտ ըլլաք, անոնցմէ ոմանց պէս. ինչպէս գրուած է, Ժողովուրդը նստաւ ուտել և ըմպել, և ելան խա-
8 ղալ։ Եւ պոռնկութիւն չընենք, ինչպէս անոնցմէ ոմանք պոռնկեցան, և մի օրուան մէջ ինկան
9 քսան և երեք հազար հոգի։ Եւ զՔրիստոս չփորձենք, ինչպէս անոնցմէ ոմանք փորձեցին, և
10 կործանեցան օձերէն։ Եւ չմրմնջէք, ինչպէս անոնցմէ ոմանք մրմնջեցին, և կորուստն սատակչէն
11 բայց այս ամէնը կը պատահէր անոնց իբրև օրինակ. իսկ մեզ որոց գարերուն վախճանը հասաւ՝
12 գրուեցաւ խրատու համար։ Ուստի ով որ կը համարի Թէ հաստատուն կեցած է, թող զգուշանայ,
13 որ չինայ։ Ուրիշ փորձութիւն չէ պատահած ձեզ, բայց մարդկային. սակայն Աստուած հաւատարիմ է որ պիտի չթողու ձեզի փորձուիլ ի վեր քան զկարն ձեր, այլ փորձութեան հետ պիտի տայ նաեւ ելք, որ կարող ըլլաք համբերել։
14 Վասն որոյ, սիրելիք, կռապաշտութենէ փա-
15 խչէք։ Որպէս Թէ խնամուններու հետ կը խօսիմ.
16 դուք դատեցէք ինչ որ կ'ըսեմ։ Օրհնութեան բաժակը զոր կ'օրհնենք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է Քրիստոսի արեան. հացը զոր կը բեկանենք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է Քրիստոսի
17 մարմնոյն. Քանզի մենք բազումքս մի հաց՝ մի մարմին ենք, վասն զի ամենքս կը վայելենք այն
18 մի հացէն։ Նայեցէք մարմնաւոր իսրայէլ. ո՞չ ապաքէն այն զոհուածներն ուտողները հաղորդ-
19 են սեղանոյն։ Ուրեմն ի՞նչ կ'ըսեմ, Թէ կուռքը բան մ'է, կամ Թէ կռոց զոհուածը բան մ'է։
20 Բայց կ'ըսեմ Թէ այն բաները զոր հեթանոսները կը զոհեն՝ դիւաց կը զոհեն և ոչ Թէ Աստուծոյ. և

չեմ ուզեր որ դուք հաղորդ ըլլաք դիւաց. չէք
կրնար խմել Տէրոջը բաժակը և դիւաց բաժակը.
21 Չէք կրնար վայելել Տէրոջը սեղանէն և դիւաց
22 սեղանէն. Ի՞նախածնե՞ զդրգռենք Տէրը. միթէ
մենք քան զնա զօրաւո՞ր ենք:
23 Ամէնայն ինչ օրինաւոր է ինձ, բայց ոչ թէ ա-
մէնայն ինչ օգտակար. ամէնայն ինչ օրինաւոր է
24 ինձ, բայց ոչ ամէնայն ինչ ի շինուիլն. Մի՛ ոք
իւր անձին ինչ-որ ընդրէ, այլ և ընկերինը:
25 Ինչ որ սպանդանոցի միջ կը վաճառուի՝ կերէք,
26 և մի՛ քննէք խղճի համար. Քանզի երկիր իւր
լրութեամբ Տէրոջն է, և եթէ անհաւատներէն
ոք հրաւիրէ զձեզ, և ուզէք երթալ, ինչ որ կը
դրուի ձեր առջև, կերէք, և մի՛ քննէք խղճի
28 համար: Ապա եթէ ոք ըսէ ձեզ թէ կռոց զոհեալ
է այդ, անոր համար որ իմացուց և խղճի համար,
29 մի՛ ուտէք.* Սակայն խիղճ կ'ըսեմ՝ ոչ թէ ձերն,
այլ ընկերինը: Բայց ընդէ՞ր իմ ազատութիւնս
30 պիտի դատուի ուրիշին խղճեն. Եթէ ես դնդրհօք
կը վայելեմ, ընդէ՞ր հայհոյուիմ, որով համար
31 կը զոհանամ. Արդ թէ ուտէք, թէ ըմպէք և
թէ ինչ որ ընէք, ամէնայն ինչ ըրէք ի փառս Աս-
32 տուծոյ: Դայթակղութեան պատճառ մի՛ ըլլաք՝
ոչ Հրէից, ոչ ‡հեթանոսաց և ոչ Աստուծոյ եկե-
33 ղեցւոյն. Ինչպես և ես ամէն կերպով հաճոյ կ'ըլ-
լամ ամէնուն, և չեմ խնդրեր իմ անձիս օգուտը,
այլ շատերունը՝ որ փրկուին:

Գլ. ԺԱ

1 Նմանող լինիք ինձ, ինչպես և ես Քրիստոսի:
2 Արդ կը գովեմ զձեզ, եղբարք, որ յամէնայնի

*Ոմանք կը յաւելուն, վասն զի երկիրը իւր լրութեամբ Տէրոջն է:

†Կամ, շնորհակալութեամբ ‡Գրեթէ, Յունաց

կը յիշէք զիս, և ինչ որ պատուիրեցի կը բռնէք,
3 ինչպես որ ես աւանդեցի ձեզ: Բայց կ'ուզեմ որ
գիտնաք թէ գլուխ ամէնայն առն Քրիստոս է,
և գլուխ կնոջ այրը, և գլուխ Քրիստոսի՝ Աս-
4 տուած: Ամէն այր որ ծածկած գլխով կ'աղօթէ
կամ կը մարգարէանայ՝ անպատիւ կ'ընէ իւր
5 գլուխը: Եւ ամէն կին որ բաց գլխով կ'աղօթէ
կամ կը մարգարէանայ՝ անպատիւ կ'ընէ իւր
գլուխը. քանզի այնպէս կը համարուի որպէս թէ
6 ածիլուած ըլլայ: Վասն զի եթէ կինը չծածկուիր,
թող փոքրէ իւր մազերը. իսկ եթէ ամօթ է կնոջ
փոքրել կամ ածիլել իւր մազերը, թող ծած-
7 կուի: Պէտք չէ որ այրը ծածկէ իւր գլուխը, քան-
զի Աստուծոյ պատկերը և փառքն է. բայց կինը
8 փառք է առնոյ: Քանզի ոչ թէ այրը կնոջէ է, այլ
9 կինը՝ յառնէ: Վասն զի այրը չստեղծուեցաւ
10 կնոջ համար, այլ կինը՝ առն համար: Ահա պատ-
ճառաւ պէտք է որ կինը *չուք դնէ իւր գլխոյն
11 հրեշտակաց համար: Բայց ոչ կինն առանց առն,
12 և ոչ այրն առանց կնոջ ի Տէր: Վասն զի ինչպես
որ կինը առնէն, նոյնպես այրը կնոջէն միջոցաւ,
13 բայց ամէնքն Աստուծմէ: Դուք ձեզին դատե-
ցէք. կը վայելէ՞ կնոջ մարդոյ բաց գլխով աղօ-
14 թել Աստուծոյ առջև: Ո՞չ բնութիւնն իսկ կը
սորվեցնէ ձեզ որ այր մը եթէ երկար մազե-
15 րով է, անարգանք է անոր. Բայց կինը եթէ եր-
կար մազերով է, փառք է անոր. քանզի մազե-
16 րը ծածկոցի տեղ արուած են անոր: Սակայն ե-
թէ ոք կ'ուզէ հակառակող ըլլալ, մենք այնպի-
սի սովորութիւն չունինք, և ոչ Աստուծոյ եկե-
ղեցիները:
17 Բայց զայս պատուիրելով չեմ գովեր զձեզ,
քանզի ոչ թէ ի լաւ՝ այլ ի վատթարն կը ժո-

*Գրեթէ, իշխանութիւն

18 ղովիք՝ Բանդի նախ, երբ ի մի վայր կը ժողովիք
եկեղեցւոյ մէջ, կը լսեմ թէ հերձուածք կան
19 ձեր մէջ, և մասամբ մը կը հաւատամ։ Վասն զի
հարկաւ ձեր մէջ հերձուածներն ևս պիտի ըլլան,
20 որ անոնք որ ընտիր են ձեր մէջ՝ երևնան։ Ուս-
տի դուք որ ի մի վայր կը ժողովիք, Տէրունա-
21 կան ընթրիքն ուտել չէ այդ. Բանդի ուտելու-
ատեն իւրաքանչիւրը ոք նախ իւր ընթրիքը կ՚ա-
նու, և մին անօթի կը մնայ և միսը կ՚արբենայ։
22 Միթէ ուտելու և ըմպելու համար տուն չունի՞ք,
կամ թէ Աստուծոյ եկեղեցւոյն կ՚անարգէք, և ա-
մօթով կ՚ընէք չքաւորները. ինչ ըսեմ ձեզ,
23 գովի՞մ զձեզ յայդմ, չէմ գովեր։ Բանդի ես ըն-
կալայ Տէրոջմէն զոր և ձեզ աւանդեցի, թէ Տէր
Յիսուս ի գիշերին յորում կը մատնուէր՝ առաւ
24 հաց. Եւ գոհանալով կարեց և ըսաւ, Առէք, կե-
րէք, այս է մարմին իմ որ ձեզի համար կը բե-
25 կանի. զայս ըրէք ինձ յիշելու համար։ Նոյնպէս և
զբաժակն յետ ընթրեաց, և ըսաւ, Այս բաժակը
նոր ուխտն է իմ արեամբս. զայս ըրէք քանի
26 անգամ որ խմէք՝ ինձ յիշելու համար։ Վասն զի
քանի անգամ որ ուտէք այս հացը և խմէք այս
բաժակը, կը պատմէք Տէրոջը մահը մինչև գայ։
27 Ուստի ով որ ուտէ այս հացը կամ ըմպէ Տէրոջը
բաժակն անարժանապէս, պարտական պիտի ըլ-
28 լայ Տէրոջը մարմնոյն և արեանը։ Ուրեմն թող
մարդ փորձէ իւր անձը, և այնպէս ուտէ այն
29 հացէն և ըմպէ այն բաժակէն։ Վասն զի ով որ
անարժանապէս կ՚ուտէ և կ՚ըմպէ, իւր անձին
դատապարտութիւնը կ՚ուտէ և կ՚ըմպէ, քանզի
30 չորոշեր Տէրոջը մարմինը։ Վասն այսորիկ կան
ձեր մէջ շատ հիւանդներ և ցաւագարներ, և
31 շատեր ևս կը ննջենն։ Քանզի եթէ մեր անձերը
32 դատէինք, պիտի չդատուէինք։ Իսկ երբ կը դա-
տուինք, Տէրոջմէ կը խրատուինք, որ չդատա-

33 պարտուինք աշխարհի հետ։ Ուստի, եղբարք իմ,
երբ ի մի վայր կը ժողովիք ուտել, իրարու
34 սպասեցէք։ Իսկ եթէ ոք անօթի է, Թող ուտէ ի
տան, որպէս զի դատապարտութեան համար
չժողովիք։ Եւ ուրիշ բաներ պիտի պատուիրեմ
երբ գամ։

ԳԼ. ԺԲ

1 Բայց հոգևոր պարգևներուն վրայ չեմ ուզեր,
2 եղբարք, որ տգէտ ըլլաք։ Դուք գիտէք որ երբ
հեթանոս էիք, անմունչ կուռց կը տարուէիք՝
3 ինչպես որ կ՚առաջնորդուէիք։ Ուստի կ՚ինձացու-
նեմ ձեզ զայս թէ ոչ ոք Աստուծոյ Հոգւով խօ-
սելով Նզովեալ կը կոչէ զՅիսուս. և ոչ ոք կրնայ
4 Տէր կոչել զՅիսուս, եթէ ոչ Հոգւով Սրբով։ Ե-
5 պարգևները պէսպէս են, բայց նոյն Հոգի է։ Նա-
6 պաշտօնները պէսպէս են, բայց նոյն Տէր է։ Նոյն-
պէս ներգործութիւնները պէսպէս են, բայց նոյն
Աստուած է՝ որ կը ներգործէ զամենայն յամե-
7 նայնի։ Բայց Հոգւոյն յայտնութիւնը տրուած է
8 իւրաքանչիւր մարդու յօգուտս։ Միոյն տրուած է
Հոգւով խոսք իմաստութեան խօսք, ուրիշի մը գի-
9 տութեան խօսք՝ նոյն Հոգւոյն չափով։ Միւսին
հաւատք՝ նոյն Հոգւով. ուրիշին բժշկութեան
10 պարգևներ՝ նոյն Հոգւով։ Ուրիշին հրաշագոր-
ծութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝
հոգիները զանազանել, ուրիշին՝ պէսպէս լեզուներ,
11 ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն։ Բայց այս
ամէնը մի և նոյն Հոգին կը ներգործէ, և կը բաշ-
խէ իւրաքանչիւր ուրոյն ուրոյն, ինչպես և կամի։
12 Քանզի ինչպես որ մարմինը մի է և շատ ան-
դամներ ունի, և *այն մարմնոյն բոլոր անդամները
որ շատ են՝ մի մարմին են, նոյնպես և Քրիստոս,

*Ոմանք, այն մի

13 Քանզի մենք ամէնքս մկրտուեցանք մի Հոգւով
մի մարմին ըլլալու, թէ՛ Հրեայք, թէ՛ հեթանոսք,
թէ՛ ծառայք, թէ՛ ազատք, և ամէնքս խմեցինք
14 մի Հոգիէն։ Քանզի մարմինը մի անդամ չէ, այլ
15 շատ։ Եթէ ոտքն ըսէ, Որովհետև ես ձեռք չեմ,
16 մարմինէն չեմ, ոչ թէ անով չէ այն մարմինէն։ Եւ
եթէ ականջն ըսէ, Որովհետև ես աչք չեմ, մարմ-
17 նէն չեմ, ոչ թէ անով այն մարմինէն չէ։ Եթէ
բոլոր մարմինն աչք ըլար, ընկերքն ո՞ւր պիտի
ըլլային. եթէ բոլորը ընկերք ըլար, ո՞ւր պիտի
18 ըլլայինն հոտառելիքը։ Բայց հիմա Աստուած դրաւ
անդամներն, իւրաքանչիւրը մարմնոյն մէջ, ինչ-
19 պէս որ ինք կամեցաւ։ Ապա եթէ ամէնը մի ան-
20 դամ ըլլար, մարմինն ո՞ւր պիտի ըլլար։ Բայց
հիմա անդամները շատ են, և մարմինը՝ մի։
21 Չկրնար աչքն ըսել ձեռքին թէ Չես ինձ պիտոյ։
և ոչ գլխուն դլուխը ոտից թէ Չէք ինձ պիտոյ։
22 Մանաւանդ մարմնոյն այն անդամները որ չատ
23 անար կ'երեւնան՝ աւելի հարկաւոր են։ Եւ մարմ-
նոյն այն անպատիւ դրուս մանաւանդ կը համա-
րինք թէ անպատիւ են, անոնց աւելի պատիւ
կը դնենք. և այսպէս մեր անվայելուչ անդամներն
24 աւելի վայելչութիւն ունին։ Եւ մեր վայելուչ անդ-
ամներուն համար պէտք չէ. բայց Աստուած
մարմինը բարեխառնեց, և թերւոյն աւելի պա-
25 տիւ տուաւ, Որպէս զի մարմնոյն մէջ երկպառա-
կութիւն չըլլայ, այլ անդամները միև նոյն փոյթն
26 ունենան իրարու վրայ։ Եւ եթէ մի անդամը նեղ-
ուի, բոլոր անդամները կը նեղուին անոր հետ.
և եթէ փառաւորուի մի անդամը, բոլոր անդամ-
27 ները ի՛ւր բանականն անոր հետ։ Արդ դուք Քրիս-
տոսի մարմինն էք, և մանաւանդ առանձին անդ-
28 ամներ։ Եւ Աստուած եկեղեցւոյն մէջ դրաւ
նոմանս, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգա-
բէներ, երրորդ՝ վարդապետներ, յետոյ հրաշներ,

յետոյ բժշկութեանց պարգեւներ, օգնութիւններ,
կառավարութիւններ, լեզուներու տեսակներ։
29 Միթէ ամէնքն առաքեալ են. միթէ ամէնքը
մարգարէ՞ են. միթէ ամէնքը վարդապե՞տ են.
30 միթէ ամէնքը հրաշք կ'ընեն. Միթէ ամէնքը
բժշկութեան պարգեւներ ունին. միթէ ամէնքը
լեզուներ կը խօսին. միթէ ամէնքը կը թարգ-
մանե՞ն։
31 Բայց դուք նախանձաւոր եղէք այն չնորհաց
որ լաւագոյն են. և ես՝ ես աւելի լաւ ճամբայ
կը ցուցնեմ ձեզ։

ԳԼ. ԺԳ

1 Եթէ մարդոց և հրեշտակաց լեզուները խօսիմ
և սէր չունենամ, եղայ ես ձայն առւոյ պղինձ
2 կամ հնչեցնող ծնծղայ. Եւ եթէ ունենամ մար-
գարէութիւն, և հասկնամ ամէն խորհուրդ և
ամէն գիտութիւն, և եթէ ունենամ ամէն հա-
ւատք մինչև լեռներըը տեղափոխելու, և սէր չու-
3 նենամ, ոչինչ եմ։ Եւ եթէ բոլոր ինչքս ֆամրեմ
ուտելոց, և մարմինս տամ յայրուիլ, և սէր
4 չունենամ, չեմ օգտիր։ Սէրը երկայնամիտ է,
քաղցր է. սէրը նախանձիր, սէրը չգոռոզանար,
5 չհպարտանար, Չվարուիր անպարկեշտ, չխնդրեր
6 իրենը, չգրգռուիր, չխորհիր չար, Չձեղքը անի-
րաւութեան վրայ, այլ խնդակից է ճշմարտու-
7 թեան. Ամէնայնի կը զիջանի, ամէնայնի կը հա-
ւատայ, ամէնայնի կը յուսայ, ամէնայնի կը համ-
8 բերէ։ Սէրը բնաւ չիյնար. բայց եթէ մարգարէու-
թիւնք՝ պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի
դադարին, եթէ գիտութիւն՝ պիտի խափանի.
9 Քանզի մասամբ կ'ունենք, և մասամբ կ'ընենք
10 կը մարգարէանանք. Բայց երբ կատարեալը գայ,
11 անատեն մասամբ կ'ընենք պիտի խափանի։ Երբ

աղաչ էի, երբև աղաչ կը խօսէի, երբև աղաչ կը
խորհէի, երբև աղաչ կը համարէի. բայց երբ այլ
եղաչ, աղաչութեան բաներն ի բաց խափանեցի,
12 Քանզի հիմա մենք որպես թէ հայելւոյ մէջ կը
տեսնենք ընդ աղօտ, բայց անառեն՝ դէմ յան-
դիման. հիմա սեղեակ եմ գիտէ ի յաւէտ, բայց
անառեն այնպէս պիտի ճանչնամ, ինչպես ճանչ-
13 ցուեցայ։ Ուստի հիմա կը մնայ հաւատաք, յոյս,
սէր՝ այս երեքը, և սոսնց մեծագոյնը սէրն է։

Գլ. ԺԴ

1 Սիրոյ հետևէն գնացէք, և նախանձաւոր եղէք
հոգևոր պարգևներու, մանաւանդ որ մարգարէա-
2 նաք։ Վասն զի այն որ լեզուով կը խօսի՝ ոչ թէ
մարդոց կը խօսի, այլ Աստուծոյ, քանզի ոչ ոք
կը հասկնայ, այլ հոգւով կը խօսի խորհուրդներ։
3 Բայց ան որ կը մարգարէանայ, մարդոց կը խօսի
ի շինութիւն և ի մխիթարութիւն և ի սիրախանա-
4 նութիւն։ Այն որ լեզուով կը խօսի՝ իւր անձը կը շինէ, և
այն որ կը մարգարէանայ՝ եկեղեցին կը շինէ։
5 Կ'ուզեմ որ դուք ամէնքդ լեզուներ խօսիք,
բայց մանաւանդ որ մարգարէանաք, քանզի լաւ
է այն որ կը մարգարէանայ քան զայն որ լեզու-
ներ կը խօսի, բայց եթէ թարգմանէ որ եկեղե-
ցին շինութիւն առնու։
6 Եւ հիմա, եղբարք, եթէ ես գամ առ ձեզ լե-
զուներ խօսելով, ինչ օգուտ պիտի ընեմ ձեզ,
եթէ չխօսիմ ձեզ կա՛մ յայտնութեամբ, կա՛մ
գիտութեամբ, կա՛մ մարգարէութեամբ, կա՛մ
7 վարդապետութեամբ։ Եւ ձայն առանց անշունչ
բաներն անգամ, թէ սրինգ և թէ քնար, եթէ
ձայներու զանազանութիւն չտան, ինչպես պիտի
ճանչցուի թէ ինչ կը հնչուի սրինգով կամ քնա-
8 րով։ Քանզի եթէ փողն անորոշ ձայն հանէ, ո՞վ

9 պիտի պատրաստուի ի պատերազմ։ Նոյնպէս և
դուք եթէ լեզուով յայտնի խօսք չբսէք, խօս-
ուածն ինչպես պիտի հասկցուի. քանզի պիտի
10 ըլլաք ընդ օդս խօսողներ։ Ահա աշխարհի մէջ
ձայնի այնչափ տեսակներ կան, և անոնց և ոչ մին
11 առանց նշանակութեան է։ Ուստի եթէ ձայնին
զօրութիւնը չգիտնամ, ես բարբարոս պիտի ըլ-
լամ խօսողին, և խօսողը բարբարոս պիտի ըլայ
12 ինձ։ Նոյնպէս և դուք որովհետև նախանձաւոր
էք հոգևոր պարգևաց, խնդրեցէք որ առաւելուք
13 եկեղեցւոյն շինութեան համար։ Վասն որոյ այն
որ լեզուով կը խօսի՝ աղօթք թող ընէ որ
14 թարգմանէ։ Եւ քանզի եթէ ես աղօթք ընեմ
լեզուով, իմ հոգիս աղօթք կ'ընէ, բայց միաքս
15 անպտուղ է։ Ուրեմն ինչ է. աղօթք ընեմ հոգ-
ւով, աղօթք ընեմ և միաքս. սաղմոս երգեմ
16 հոգւով, սաղմոս երգեմ և միաքս։ Ապա թէ ոչ,
եթէ դուն հոգւով փառաբանես, նա որ իբրև
ագէտ կեցած է ինչպես պիտի բսէ Ամէն քու
գոհութեանդ. քանզի չգիտնար ինչ որ կ'բսես։
17 Թէպէտ դուն բարւոք կը գոհանաս, բայց միւսը
18 չշինուիր։ Կը գոհանամ Աստուծմէ որ քան զձեզ
19 ամէնքդ աւելի լեզուներով կը խօսիմ. Բայց
եկեղեցւոյն մէջ կ'ուզեմ հինգ խօսք խօսել
միաքս, որ ուրիշներուն ևս սորվեցնեմ, քան
թէ բիւրաւոր խօսք՝ լեզուով։
20 Եղբարք, տղայ մի՛ ըլլաք յիմաստութեան, այլ
եղէք տղայ ի չարիս, և կատարեալ եղէք յիմաս-
21 տութեան։ Գրուած է օրէնքին մէջ թէ Օտար
լեզուօք և օտար շրթամբք պիտի խօսիմ այդ ժո-
ղովրդեան, սակայն և այնպէս պիտի չլսեն ինձ,
22 կ'բսէ Տէրը։ Ուրեմն լեզուք նշանի համար են,
ոչ թէ հաւատացեալոց, այլ անհաւատից, բայց

---

*Ոմանք, իմ Աստուծմէս

մարգարէութիւնը՝ ոչ թէ անհաւատից, այլ հա-
23 ւատացելոց։ Արդ եթէ բոլոր եկեղեցին ի մի վայր
գայ, և ամենքը լեզուօք խօսին, և հոն ներկայ
ընդունողներ կամ անհաւատներ, պիտի չըսե՞ն թէ
24 դուք մոլեգնեալ եք։ Իսկ եթէ ամենքը մարգա-
րէանան, և անհաւատ մը կամ ուսեալ մը ներկայ
կը յանդիմանուի ամենէն, կը քննուի ամենէն,
25 Եւ անոր սրտին ծածուկ բաները կ'ըլլան յայտնի.
և այսպէս երեսի վրայ ինկած պիտի երկրպագէ
Աստուծոյ, և խոստովանի թէ արդարև Աստուած
ձեր մէջ է։
26 Ուստի ինչ է, եղբարք, երբ ի մի վայր կը ժո-
ղովիք, ձենէ իւրաքանչիւր սաղմոս ունի, վար-
դապետութիւն ունի, լեզու ունի, յայտնու-
թիւն ունի, թարգմանութիւն ունի. ամենը շի-
27 նութեան համար թող ըլլայ։ Եթէ ոք լեզու կը
խօսի, երկու հոգի, և թէ աւելի՝ երեք թող ըլ-
լայն, և այն ևս մի ըստ միջէ, և մին թող
28 թարգմանէ։ Բայց եթէ չկայ թարգմանող, թող
լուռ կենայ եկեղեցւոյն մէջ, և ինքզինք և Աստու-
29 ծոյ թող խօսի։ Իսկ մարգարէները երկու կամ ե-
րեք հոգի թող խօսին, և միւսները թող քննեն։
30 իսկ եթէ նստողներէն ուրիշի մը ևս յայտնու-
31 թիւն ըլլայ, առաջինը թող լռէ։ Զանզի ամենքդ
կրնաք մի ըստ միոջէ մարգարէանալ, որ ամենքը
32 սորվին և ամենքը մխիթարուին։ Եւ մարգարէից
33 հոգիները մարգարէից հնազանդ են։ Զանզի Աս-
տուած խռովութեան Աստուած չէ, այլ խաղա-
ղութեան, ինչպես որ սուրբերուն բոլոր եկեղե-
ցիներուն մէջ։
34 Ձեր կանայք եկեղեցիներուն մէջ լուռ կենան,
զանզի անոնց հրաման չկայ խօսել, այլ հնազանդ
35 ըլլալ, ինչպէս որ օրէնքն ևս կ'ըսէ։ Բայց եթէ
բան սորվիլ կ'ուզեն, թող հարցնեն տունը իրենց
արանց. զանզի կանանց անվայել է եկեղեցւոյ

36 մէջ խօսել։ Միթէ Աստուծոյ խօսքը ձենէ՞ ելաւ,
37 կամ թէ միայն ձեզ հասաւ։ Եթէ ոք կը կարծէ
թէ մարգարէ է, կամ հոգևոր, թող ստուգի-
գիտնայ թէ ինչ որ գրեցի ձեզ, Տէրոջը պատուէր-
38 ներն են. Բայց եթէ ոք ոգէտ է, թող ոգէտ
39 ըլլայ։ Ուստի, եղբարք, նախանձեցէք մարգա-
րէանալու, և լեզուներ խօսելը ևս մի՛ արգե-
40 լուր։ Եւ ամենայն ինչ թող ըլլայ պարկեշտու-
թեամբ և ըստ կարգի։

ԳԼ. ԺԵ

1 Եղբարք, կ'ի մացուներմ ձեզ աւետարանը զոր ևս
քարոզեցի ձեզ, զոր և ընկալաք և յորոյ վերայ
2 հաստատուած եք. Որով և կը փրկուիք, ե-
թէ պինդ բռնէք խօսքը զոր քարոզեցի ձեզ,
3 միայն եթէ ի զուր հաւատացած չէք։ Զանզի նախ
ևս աւանդեցի ձեզ զայն՝ զոր և ևս ընկալայ, թէ
Քրիստոս մեր մեղաց համար մեռաւ ըստ Գրոց,
4 Եւ թէ թաղեցաւ և յարեաւ երրորդ օրն ըստ
5 Գրոց, Եւ թէ երևեցաւ Կեփասի, և ապա երկո-
6 տասնից։ Ետոյ երևեցաւ աւելի քան հինգ
հարիւր եղբարց միանգամայն, յորոց շատերը կան
7 մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին։ Եւ յետոյ ե-
րևեցաւ Յակոբոս, յետոյ բոլոր առաքելոց։
8 Յուսկ յետոյ, որպես թէ վիժածի, երևեցաւ և
9 ինձ։ Վասն զի ես եմ փոքրագոյնն առաքելոց,
որ և չեմ արժանի կոչուելու առաքեալ, զանզի
10 հալածեցի զեկեղեցին Աստուծոյ։ Միայն թէ շնոր-
հօքն Աստուծոյ եմ ինչ որ եմ. և անոր շնորհքը
որ առ իս՝ ընդունայն չեղաւ, այլ քան զնոսա
ամենեսին աւելի աշխատեցայ. և ոչ թէ ես, այլ
11 Աստուծոյ շնորհքը որ ինծի հետ էր։ Ուստի թէ՛
ես և թէ՛ նոքա այսպէս կը քարոզենք, և դուք
այսպէս հաւատացիք։

12 Ուրեմն եթէ Քրիստոս կը քարոզուի թէ ու-
ղղեալներէն յարեաւ, ի՞նչպէս ձեզնէ ոմանք կ՚ըսեն
13 թէ մեռելոց յարութիւն չկայ, եթէ մեռելոց
յարութիւն չկայ, ուրեմն նաև Քրիստոս յարու-
14 թիւն առած չէ. եւ եթէ Քրիստոս յարութիւն
առած չէ, ուրեմն ընդունայն է մեր քարոզու-
15 թիւնը, ընդունայն է և ձեր հաւատքը. եւ կը
գտնուինք սուտ վկաչք Աստուծոյ. վասն զի վկայե-
ցինք Աստուծոյ համար, թէ յարոյց զՔրիստոս.
զոր արդարև չյարոյց, եթէ մեռելոչք չեն յառ-
16 ներ. քանզի եթէ մեռելոչք չեն յառներ, ապա
17 և Քրիստոս չէ յարուցեալ. եւ եթէ Քրիստոս չէ
յարուցեալ, ընդունայն է ձեր հաւատքը, տա-
18 կաւին ձեր մեղաց մէջ էք. Նոյնպէս և ննջեցեալք
19 ի Քրիստոս՝ կորսուած են. եթէ միայն այս կեանց
համար յուսացած ենք Քրիստոսի, ողորմելի ենք
20 քան զամենայն մարդիկ. Բայց արդ Քրիստոս
յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջե-
21 ցելոց. քանզի որովհետև մարդով եղաւ մահ,
22 մարդով և մեռելոց յարութիւն. Վասն զի ինչ-
պէս Ադամով ամենքը կը մեռնին, նոյնպէս Քրիս-
23 տոսով ամենքը կենդանի պիտի ըլլան. Բայց ի-
րաքանչիւր իր կարգաւ, առաջին պտուղ Քրիս-
տոս, յետոյ Քրիստոսականք ի գալստեան նորա.
24 Այնուհետև՝ վախճան, երբ Թագաւորութիւնը
պիտի տայ Աստուծոյ և Հօր ձեռքը, երբ խա-
փանէ ամէն իշխանութիւն և ամէն պետութիւն
25 և զօրութիւն. Քանզի նմա պարտ է Թագաւորել՝
մինչև դնի բոլոր թշնամիները իւր ոտից տակ.
26 վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մահն է.
27 վասն զի, հնազանդեցուց ամենայն ինչ անոր ո-
տից տակ. Բայց երբ կ՚ըսէ թէ Ամենայն ինչ
28 հնազանդած է անոր, յայտնի է թէ բաց յայն-
մանէ որ հնազանդեցուց անոր զամենայն։ Եւ երբ
ամենայն ինչ հնազանդ ըլլայ, յայնժամ Որդին ևս

պիտի հնազանդի անոր՝ որ հնազանդեցուց նմա
զամենայն, որպէս զի Աստուած ըլլայ ամենայն
29 յամենայնի։ Ապա թէ ոչ, ի՞նչ պիտի ընեն անոնք
որ մեռելոց համար կը մկրտուին, եթէ մեռեալք
պիտի չյառնեն երբեք. ընդէ՞ր ուրեմն կը մկրտուին
30 անոնց համար. Ընդէ՞ր մենք ևս վտանգի մէջ
31 կը մտնենք յամենայն ժամ. Վկայ կը բերեմ
պարծանքը զոր ունիմ ձեր վրայ ի Քրիստոս Ցի-
սուս ի Տէր մեր, որ ես ամէն օր կը մեռնիմ.
32 Եթէ եփեսոսի մէջ եղայ ըստ մարդկան ի գազա-
նամարտի, ի՞նչ օգուտ ի՞նձ, եթէ մեռեալք
չեն յառներ. ուտենք՝ և խմենք, քանզի վաղիւ
33 կը մեռնինք։ Մի խաբուիք, չար ընկերակցու-
34 թիւնները կ՚ապականեն բարի բարքը։ Արդարու-
թեամբ զգաստացէք և մեղք մի գործէք, քանզի
ոմանք Աստուծոյ գիտութիւնը չունին, ձեզ
ամչցնելու համար կ՚ըսեմ։
35 Բայց պիտի ըսէ ոք թէ ի՞նչպէս կը յառնեն
36 մեռեալք, կամ թէ ի՞նչ մարմնով կու գան։ Ան-
միտ, այն զոր դուն կը սերմանես, եթէ չմեռնի,
37 չկենդանանար. Եւ զոր կը սերմանես, ոչ թէ այն
մարմինը որ պիտի բուսնի՝ կը սերմանես, այլ
38 մերկ հատ, թէ գորնեի ըլլայ և թէ ուրիշ. Եւ
Աստուած մարմին կու տայ անոր ինչպէս և կը
39 կամի, և իւրաքանչիւր սերման իւր մարմինը։ Ոչ
ամէն մարմին մի մարմին է, այլ մարդոց մարմինն
ուրիշ է, և անասնոց մարմինն ուրիշ, և ձկանց
40 և՝ ուրիշ, և թռչնոց՝ ուրիշ, Կան երկնաւոր
մարմիններ, և երկրաւոր մարմիններ. բայց երկ-
նաւորներուն փառքն ուրիշ է, և երկրաւորնե-
41 րունն՝ ուրիշ, Արեւուն փառքն ուրիշ է, և լուս-
նին փառքն՝ ուրիշ, և աստղերուն փառքն՝ ու-
րիշ. և մի աստղ քան զմիւս աստղ տաբերք է

Պահ, ինձ. եթէ մեռեալք չեն յառներ, ուտենք

42 փառօք. Այսպէս է մեռելոց յարութիւնը. կը
սերմանուի ապականութեամբ, կը յառնի անա-
43 պականութեամբ. կը սերմանուի անարգութեամբ,
կը յառնի փառօք. կը սերմանուի տկարութեամբ,
44 կը յառնի զօրութեամբ. Կը սերմանուի հնչեալ
մարմին, կը յառնի հոգեւոր մարմին. Հնչեալ
45 մարմին կայ, և հոգեւոր մարմին կայ։ Նա այսպէս
գրուած է, Առաջին մարդն Ադամ եղաւ հնչէ
կենդանի, վերջինն Ադամ՝ հոգի կենդանարար։
46 Բայց ոչ թէ առաջ հոգեւորն, այլ հնչեալը, և
47 ապա հոգեւորը. Առաջին մարդը երկրէն է հողե-
48 ղէն, երկրորդ մարդը Տէր է յերկնից։ Ինչպէս
էր հողեղէնը՝ նոյնպէս և հողեղէնները, և ինչպէս
49 երկնաւորը՝ նոյնպէս և երկնաւորները. Եւ ինչ-
պէս հագած ենք հողեղինին կերպարանքը, երկ-
50 նաւորին կերպարանքը եւս պիտի հագնինք։ Բայց
զայս կ'ըսեմ, եղբարք, որ մարմին և արիւն Աս-
տուծոյ արքայութիւնը չեն կրնար ժառանգել.
և ոչ ապականութիւնը կը ժառանգէ անապակա-
նութիւնը։

51 Ահա խորհուրդ մը կ'ըսեմ ձեզ. Ամենքս պիտի
52 չննջենք, բայց ամենքս պիտի փոխուինք, Ծան-
կարծակի յաղագ թօթափիլ, վերջին փողոյ ա-
տենն. քանզի փող պիտի հնչէ, և մեռելոք պի-
տի յառնեն առանց ապականութեան, և մենք
53 պիտի փոխուինք։ Վասն զի պարտ է այս ապա-
կանացուին զգենուլ անապականութիւն, և այս
54 մահկանացուին զգենուլ անմահութիւն։ Բայց
երբ այս ապականացուն զգենու անապականու-
թիւն, և այս մահկանացուն զգենու անմահու-
թիւն, յայնժամ պիտի կատարուի այն խօսքը
որ գրուեցաւ Թէ Մահ կլկղմեցաւ յաղթութեան
55 մէջ։ Ո՞ւր է, ով մահ, քու խայթոցդ. ո՞ւր է,
56 ով գերեզման, քու յաղթութիւնդ։ Մահուս խայ-
57 թոցը մեղքն է, և մեղացդ օրէնքը։ Բայց

գոհութիւն Աստուծոյ, որ յաղթութիւն կու տայ
մեզ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։
58 Ուստի, եղբարք իմ սիրելիք, հաստատուն կե-
ցէք, անշարժ կեցէք և միշտ աւելցէք Տէրոջը
գործին մէջ, գիտնալով որ ձեր աշխատութիւնն
ընդունայն չէ Տէրոջմէ։

Գլ. ԺԶ

1 Բայց սուրբերուն համար ողորմութեան ժողովելոյ
վասն, ինչպէս որ պատուէր տուի Գաղատացւոց
2 եկեղեցիներուն, դուք ևս այնպես ըրէք։ Ամեն
միաշաբաթի ոք ձենէ իւրաքանչիւր իրեն քով
3 դիզէ ինչ որ կը յաջողի, Մի գուցէ երբ գամ,
անատեն ժողովուածները ըլլան. և երբ գամ, որոց
դուք հաճիք, զանոնք թուղթերով պիտի ղրկեմ*
4 տանիլ ձեր պարգեւները յերուսաղէմ. Եւ եթէ
իմ երթալս ևս արժան գատուի, Թող երթան
5 ինծի հետ։ Սակայն ես պիտի գամ ձեզ, երբ
Մակեդոնիայէ անցնիմ. (քանզի Մակեդոնիայէ
6 կ'անցնիմ.) Եւ թերևս ձեր քով մնամ, կամ
ձմերեմ, որ դուք յուղարկէք զիս ուր որ պիտի
7 երթամ։ Քանզի չեմ ուզեր զձեզ հիմա հարևա-
նցիկ տեսնել, բայց յոյս ունիմ որ ժամանակ մը
8 ձեր քով կենամ, եթէ Տէրը հրաման տայ։ Սա-
կայն Եփեսոս պիտի մնամ մինչև Պենտեկոստէ.
9 Քանզի մեծ և արդիւնաւոր դուռ բացուած է
ինծի, և շատ հակառակորդներ կան։
10 Արդ եթէ Տիմոթէոս գայ, նայեցէք որ ձեր
քով առանց երկիւղի ըլլայ. քանզի Տէրոջը գործը
11 կը գործէ, ինչպես և ես։ Ուստի ոչ ոք արհա-
մարհէ զնա, այլ խաղաղութեամբ յուղարկեցէք
զնա, որ գայ առ իս. քանզի անոր կը սպասեմ

*կամ, յանձնարարութիւն ընէք թուղթերով, ես
զանոնք

12 եղբայրներով հանդերձ։ Իսկ Ապողոս եղբօր հա-
մար, շատ աղաչեցի անոր որ գայ եղբայրներուն
հետ առ ձեզ. և բնաւ կամք չունեցաւ գալ հիմա,
բայց պիտի գայ՝ երբ յարմար ժամանակ գտնէ։
13 Արթուն կեցէք, հաստատուն կեցէք ի հա-
14 ւատս, ժիր եղէք, զօրացէք։ Ամենայն ինչ ձեր
ըլլայ սիրով։
15 Կ՚աղաչեմ զձեզ, եղբարք, (գիտէք դուք Ստե-
փանեայ ընտանիքը թէ Աքայիոյ առաջին պտուղն
է, և իրենց անձերը նուիրեցին սուրբերուն
16 սպասաւորութեանը) Որ հնազանդ ըլլաք այն-
պիսեաց, և ամենուն որ հետ կը գործեն և
17 կ՚աշխատին։ Ուրախ եմ ես Ստեփանեայ և փոր-
տունատոսի և Աքայիկոսի գալստեան վրայ, որ
18 ձեր պակասութիւնն անոնք լցին. Քանզի հան-
գուցին իմ հոգիս և ձերը. ուստի ճանչցէք այն-
պիսիները։
19 Ողջոյն կու տան ձեզ Ասիոյ եկեղեցիները. ողջոյն
շատ կու տան ձեզ ի Տէր Ակիւղաս և Պրիսկիլլա
20 իրենց առնին եկեղեցեաւ։ Ողջոյն կու տան ձեզ
բոլոր եղբարք. ողջոյն տուէք իրարու սուրբ
համբուրիւ։
21 Ա.յս ողջոյնը իմ ձեռացս Պօղոսի է։ (22) Եթէ
ոք չսիրեր զՏէր Յիսուս Քրիստոս, նզովեալ ըլլայ.
23 *Մեր Տէրը կուգայ՝։ Շնորհք Տէրոջ մերոյ Յի-
24 սուսի Քրիստոսի ընդ ձեզ. Իմ սէրս ձեր ամե-
նուն հետ ըլլայ ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

*Յայտ. (Ապոկալիպսիս) Մարան աթա

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուս Քրիստոսի՝ կամօքն
Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր. Աստուծոյ եկե-
ղեցւոյն որ Կորնթոսի մէջ է, և բոլոր սրբոց որ
2 են բոլոր Աքայիա. Շնորհք և խաղաղութիւն ձեզ
Աստուծմէ մեր Հօրմէն և ի Տեառնէ Յիսուս
Քրիստոսէ,
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, Հայր գթութեանց և Աստուած
4 ամենայն մխիթարութեան. Որ կը մխիթարէ զմեզ
մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որ և մենք կա-
րող ըլլանք մխիթարել զանոնք որ ամէն նե-
ղութիւններու մէջ են՝ մխիթարութեամբն որով
5 կը մխիթարուինք Աստուծմէ. Քանզի ինչպէս որ
Քրիստոսի չարչարանքը շատ եղան մեր վրայ,
նոյնպէս և մեր մխիթարութիւնը շատ կ՚ըլլայ
6 Քրիստոսի ձեռօքս։ Իսկ եթէ նեղութիւն կրենք,
ձեր մխիթարութեան և փրկութեան համար է, և
եթէ մխիթարուինք, ձեր մխիթարութեան և
փրկութեան համար է, որ կը յաջողի համբերե-
լով այն չարչարանաց՝ որովք և մենք կը չարչար-

7 ուինք. Եւ մեր յոյսն հաստատուն է ձեզի համար, քանզի գիտենք թէ ինչպէս որ հաղորդ էք չարչարանաց, նոյնպէս պիտի ըլլաք և մխիթարու-
8 թեան, վասն զի չեմ ուզեր որ անգէտ ըլլաք, եղբարք, նեղութեանց որ պատահեցան մեզ յԱսիա, թէ քան զկարողութիւն մեր չատ աւելի ծանրացանք, մինչև ի կենաց իսկ անյոյս եղանք.
9 Բայց ունեցանք յանձինս մահուան վճիռը, որպէս զի մեր անձերուն չապաւինինք, այլ Աստու-
10 ծոյ՝ որ կը յարուցանէ զմեռեալս. Որ և փրկեց
11 զմեզ և կը փրկէ այնպիսի մեծ մահուանէ. Որուն կը յուսանք թէ տակաւին պիտի փրկէ, օգնակա-նութեամբ ձեր աղօթից մեզի համար. որպէս զի այն շնորհաց համար որ չատերուն կողմանէ եղած է մեզ՝ գոհութիւն տրուի մեզի համար չատերէն։
12 Քանզի մեր պարծանքն այս է, մեր խղճին վկայութիւնը, թէ պարկեշտութեամբ և անկեղծութեամբն Աստուծոյ, ոչ թէ մարմնաւոր իմաստութեամբ, այլ շնորհօքն Աստուծոյ վարուեցանք յաշխարհի, բայց մանաւանդ դէպ ի ձեզ։
13 Քանզի ոչ այլ ինչ կը գրենք ձեզ բայց զայն զոր դուք կը կարդաք և կը ճանչնաք. և կը յու-
14 սամ թէ մինչև ի վախճան պիտի ճանչնաք. ինչպէս որ փոքր ի չատ ճանչցաք զմեզ, թէ ձեր պարծանքն ենք, ինչպէս և դուք մերը՝ Տէր Յիսուսի օրը։
15 Եւ այս վստահութեամբ կ'ուզէի նախ գալ առ ձեզ, որպէս թ երկրորդ անգամ շնորհք ըն-
16 դունիք. Եւ ձեզնէ անցնել ի Մակեդոնիա, և դարձեալ ի Մակեդոնիոյ գալ առ ձեզ, և ձեզնէ
17 յուղարկիլ ի Հրեաստան։ Ուստի այս զոր խորհեցայ, միթէ թեթևութեամբ չարժեցայ. կամ թէ այն զոր կը խորհիմ, ըստ մարմնոյ կը խորհիմ,
18 որ իմ կողմանէս ըլլայ այո այո, և ոչ ոչ։ Սակայն հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքն

19 առ ձեզ այո և ոչ չէր։ Քանզի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս որ մեզմով քարոզուեցաւ ձեզ, (ինձմով և Սիղուանոսիւ և Տիմոթէոսիւ,) այո և
20 ոչ չեղաւ, այլ եղաւ այո ի նմա. Քանզի որչափ կան խոստումնք Աստուծոյ, են այո ի նմա, և
21 ամէն ի նմա ի փառս Աստուծոյ մեր ձեռօքս։ Բայց այն որ հաստատեց զմեզ ի Քրիստոս ձեզի հետ,
22 և օծեց զմեզ, Աստուած է. Որ և կնքեց զմեզ, և տուաւ Հոգւոյն գրաւը մեր սիրտերուն մէջ։
23 Բայց ես զԱստուած վկայ կը կոչեմ իմ անձիս, որ ձեզ խնայելու համար տակաւին չեկայ Կորնթոս։
ոչ թէ ձեր հաւատոյն վրայ կը տիրենք, այլ գործակից ենք ձեր ուրախութեանը. վասն զի կը կենաք հաւատալ։

Գլ. Բ

1 Սակայն ես ինձէն որոշեցի զայս, որ նորէն
2 տրտմութեամբ չգամ առ ձեզ։ Քանզի եթէ ես տրտմեցուցեմ զձեզ, ո՞վ է որ ուրախ պիտի ընէ
3 զիս, եթէ ոչ այն որ կը տրտմի ինէ։ Եւ զայս •գրեցի, որ երբ գամ, տրտմութիւն չկրեմ առնոյնմէ, ուստի պարտ է ինձ ուրախ լինել. քանզի վստահ եմ ձեր ամենուն վրայ, որ իմ ուրախու-
4 թիւնս ձեր ամենուն է։ Քանզի չատ նեղութենէ և սրտի տագնապէ գրեցի ձեզ բազում արտասուօք. ոչ թէ որ դուք տրտմիք, այլ որ գիտնաք սէրը զոր ունիմ մանաւանդ առ ձեզ։
5 Բայց եթէ ոք տրամեցուց, ոչ թէ զիս տրամեցուց, այլ փոքր ի չատէ (որ չծանրացնեմ չատս)
6 ձեր ամէնքս։ Հերիք է այնպիսւոյն այն պատիժը
7 որ չատերէն եղաւ։ Ուստի ընդ հակառակն պարտ է մանաւանդ ներել անոր և մխիթարել զնա, որ

•Ոմն., գրեցի ձեզ

8 չընկղմի աւելի սրտմտութենէն։ Ուստի կ՚աղաչեմ
9 զձեզ, որ անոր վրայ հաստատէք սէրը։ (Քանզի
և վասն այնորիկ գրեցի, որ զձեզ փորձելով գիտա-
10 նամ թէ հնազանդ էք յամենայնի։ Եւ որուն
դուք բան մը կը ներէք, և ես. քանզի եթէ և ես
ներեմ, որուն ես ներեմ՝ ձեզի համար է Քրիս-
11 տոսի Կողմանէ.) Որ զկնայն չներենք Սատանայէ.
քանզի չգիտցող չենք անոր խորհուրդներըն։
12 Արդ երբ ես Տրովադա հասայ Քրիստոսի աւե-
տարանը խօսելու, և դուռ բաց եր ինձ ի Տէր,
13 իմ հոգւոյս մէջ հանգիստ չունէի, քանզի Տիտոս
եղբայրս չգտայ. այլ հրաժարելով անոնցմէ գնացի
ի Մակեդոնիա։
14 Բայց գոհութիւն Աստուծոյ որ միշտ յաղթող
կ՚ընէ զմեզ Քրիստոսով, և յայտնի կ՚ընէ միջոցով
15 ամէն տեղ դնա ճանչնալուն հոտը. Քանզի մենք
Քրիստոսի անոյշ հոտ ենք Աստուծոյ առջև
փրկուողց մէջ և կորսուողց մէջ. Ոմանց հոտ
մահուան ի մահ, և ոմանց կենդանութեան հոտ
17 ի կեանս. և առ այս ո՞վ բաւական է։ Քանզի
չենք չաւերուն պէս, որ կը խարդախեն Աստու-
ծոյ խօսքը, այլ որպէս թէ անկեղծութեամբ,
այլ որպէս թէ Աստուծմէ՝ Աստուծոյ առջև կը
խօսինք ի Քրիստոս։

Գլ. Գ

1 Կը սկսի՞նք յանձն առնել դարձեալ մեր անձերը.
կամ թէ, ոմանց պէս, պիտոյ են մեզ յանձնարա-
2 րութեան թուղթեր առ ձեզ կամ ձեներէ։ Այլ մեր
թուղթը դուք էք մեր սիրտերուն մէջ գրուած,
ճանչցուած և կարդացուած բոլոր մարդկանէ.
3 ցայտնի ըլլալով որ դուք Քրիստոսի թուղթն էք

կամ, առջև

մեր սպասաւորութեամբ, ոչ թէ մելանով գրուած,
այլ կենդանի Աստուծոյ Հոգւով, ոչ թէ քարե-
ղէն տախտակներու վրայ, այլ սրտի մարմնեղէն
4 տախտակներուն վրայ։ Եւ այսպէս վստահութիւն
ունինք մենք Աստուծոյ վրայ Քրիստոսի ձեռօք.
5 Ոչ թէ մենք ինքնին բաւական ենք բան մը խոր-
հիլ որպէս թէ մենէ, այլ մեր բաւականութիւնն
6 Աստուծմէ է. Որ և բաւական ըրաւ զմեզ ըլլալ
պաշտօնեաներ նոր կտակարանին, ոչ թէ գրոյն,
այլ հոգւոյն. քանզի գիրը կը սպանանէ, բայց
7 հոգին կ՚ապրեցունէ։ Իսկ եթէ քարերու վրայ
գրով փորուած մահուան պաշտօնը փառաւոր եղաւ,
որ իսրայէլի որդիքը կարող չէղան Մովսէսի երեսը
նայիլ անոր երեսին փառացը համար, որ պիտի
8 խափանուէր, Ո՛րչափ եւս առաւել Հոգւոյն պաշ-
9 տօնը պիտի ըլլայ փառաւոր։ Քանզի եթէ դատա-
պարտութեան պաշտօնը փառաւոր էր, ո՛րչափ եւս
առաւել արդարութեան պաշտօնը պիտի ըլլայ
10 փառաւոր։ Վասն զի այն որ փառաւոր էր՝ այս մա-
սին փառաւոր չէ գերազանց փառաց պատճա-
11 ռաւ։ Քանզի եթէ այն որ պիտի խափանուէր՝
փառաւոր էր, ո՛րչափ եւս առաւել այն որ կը կենայ՝
12 պիտի լինի փառաւոր։ Ուստի այսպիսի յոյս ու-
նենալով, չատ համարձակութեամբ կը վարուինք.
13 Եւ ոչ թէ ինչպէս Մովսէս կը ձգէր քող իր երե-
սին վրայ, որ իսրայէլի որդիքը չնայէին այն խա-
14 փանելի իրաց վախճանին։ Սակայն անոնց միտքը
կուրացան. քանզի մինչև ցայսօր նոյն քողը
ձգուած է հին կտակարանին ընթերցուածոց
վրայ, և չվերնար, (քանզի Քրիստոսով կը խա-
15 փանուի,) Այլ մինչև ցայսօր, երբ կը կարդանի
Մովսէս, անոնց սրտին վրայ կը կենայ քողը։
16 Բայց երբ դառնան առ Տէր, անատեն պիտի
17 վերնայ քողը։ Արդ Տէրը Հոգին է. և ուր Տէրոջը
18 Հոգին կայ, հոն ազատութիւն կայ։ Բայց մենք

ամէնքս բայց երեսօք Տէրոջը փառքը որպէս թէ հայելւոյ մէջ տեսնելով, նոյն պատկերին կը նոր-
19 զուինք փառաց ի փառս, որպէս Թէ Տէրոջը Հոգիէն։

Գլ. Դ

1 Ունանք այս պաշտօնն ունենալով, ինչպէս որ ողոր-
2 մութիւն գտանք, չենք ձանձրանար. Այլ հրաժարեցանք ամօթալի ծածուկ բաներէն, և չենք վարուիր խորամանկութեամբ, և չենք նենգեր Աստուծոյ խօսքը. այլ ճշմարտութիւնը յայտնելով՝ կ'ընծայինք մեր անձերը ամէն մարդու խղճ-
3 ին Աստուծոյ առջեւ, իսկ եթէ մեր աւետարանը ծածկուած ալ է, կորսուելոց մէջ ծածկուած է,
4 որոց մէջ այս աշխարհիս աստուածը կուրացուց անհաւատներուն մտքը, որ չծագէ անոնց վրայ լոյս փառաց աւետարանին Քրիստոսի որ ինքն է
5 Աստուծոյ պատկերը։ Քանզի ոչ Թէ մեր անձերը կը քարոզենք, այլ զՅիսուս Քրիստոս Տէր, և
6 զմեզ՝ ձեր ծառաներն Յիսուսի համար։ Վասն զի Աստուած որ հրաման ըրաւ խաւարէ լոյս ծագել, ինք ծագեց մեր սիրտերուն մէջ՝ տալու համար Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը յանձինն
7 Յիսուսի Քրիստոսի։ Արդ ունինք մենք այս գանձը հողեղէն անօթներու մէջ, որ զօրութեան առաւելութիւնն ըլլայ Աստուծմէ, և ոչ մենէ։
8 Ամէն կողմանէ վշտացած ենք, բայց ի նեղ չինած չենք. կարօտեալ ենք, բայց յուսահատեալ չենք.
9 Հալածեալ ենք, բայց լքեալ չենք. վար նետուած
10 ենք, բայց կորսուեալ չենք. Յամենայն ժամ *Յիսուսի մահը կը կրենք մեր մարմիններուն մէջ, որ նաև Յիսուսի կեանքն յայտնուի մեր մար-

*Ոմանք, Տէր Յիսուսի

11 մինիներուն մէջ։ Վասն զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի համար միշտ ի մահ կը մատնուինք, որ և Յիսուսի կեանքն յայտնի ըլլայ
12 մեր մահկանացու մարմիններուն մէջ։ Ուստի մահը մեր մէջ կը գործէ, և կեանքը՝ ձեր մէջ։
13 Բայց հաւատալով նոյն հոգին ունինք, ինչպէս որ գրուած է, Հաւատացի, վասն որոյ և խօսեցայ. մենք ևս կը հաւատանք, վասն որոյ և
14 կը խօսինք. Ցայս գիտնալով Թէ այն որ զՏէր Յիսուս յարոյց՝ զմեզ ևս պիտի յարուցանէ Յիսուսիս, և ՚ի մէջ պիտի կեցուցնէ ձեզմով
15 հանդերձ. Քանզի ամենայն ինչ ձեզի համար է, որ շնորհքն առատանալով՝ շատերուն միջոցաւ գոհութիւն աւելցուն ի փառս Աստուծոյ։
16 Վասն որոյ չենք ձանձրանար. բայց Թէպետ մեր այս արտաքին մարդը կ'ապականի, սակայն
17 մեր ներքինը կը նորոգուի օր ըստ օրէ։ Քանզի մեր վայրկենական Թեթեւ նեղութիւնն առաւել քան զառաւել փառաց յաւիտենական առաւե-
18 լութիւն կը գործէ մեզ։ Վասն զի չենք նայիր այնց որ կ'երեւին, այլ այնց որ չեն երեւիր. քանզի երեւելիքս առ ժամանակ մի են, իսկ այնք որ չեն երեւիր՝ յաւիտենական։

Գլ. Ե

1 Վասն զի գիտենք որ եթէ մեր երկրաւոր վրանի տունը քակուի, ունինք շինուած Աստուծմէ ան-
2 ձեռագործ յաւիտենական տուն յերկինս։ Եւ արդարեւ ասոր մէջ կը հառաչենք՝ մեր երկնաւոր
3 բնակութիւնն հագնել փափաքելով. Միայն Թէ
4 երբ հագնինք զայն, մերկ չգտնուինք։ Վասն զի մենք որ այս վրանին տակ ենք՝ կը հառաչենք ծանրութիւն կրելով. քանզի չենք ուզեր հանել, այլ ի վերայ հագնել, որ մահկանացուն ընկղմի

5 ի կենաց, իսկ այն որ զմեզ կը պատրաստէ առ այս՝
Աստուած է, որ նաև առաւ մեզ Հոգւոյն գրա-
6 բեր։ Ուստի յամենայն ժամ համարձակութիւն
ունինք, և գիտենք թէ ցորչափ մարմնով մէկ կը
7 կենանք, Տէրոջմէ հեռու ենք։ (Վասն զի հաւա-
8 տով կը քալենք, ոչ թէ երեւութիւ։) Ուստի կը
համարձակինք, և աւելի ևս կ'ուզենք հեռանալ
9 մարմնէ և Տէրոջը քով կենալ։ Վասն որոյ կը
ջանանք ևս, որ թէ՛ կենանք և թէ՛ հեռանանք,
10 հաճոյ ըլլանք անոր։ Վասն զի պէտք է որ ա-
մէնքս Քրիստոսի առջեւն յայտնուինք, որ իւ-
րաքանչիւր առնու իւր մարմնով գործուածնե-
րուն փոխարէնը, ինչ որ գործած է, թէ՛ բարի
և թէ՛ չար։

11 Ուստի Տէրոջը երկիւղը գիտնալով՝ մարդոց
միտքը կը համոզուցնենք. սակայն մենք Աստու-
ծոյ առջեւ յայտնի ենք, և կը յուսամ թէ ձեր
12 խղճին մէջ ևս յայտնի ենք։ Ոչ թէ նորէն մեր
անձերը կ'ընծայինք ձեզ. այլ պատճառ կու-
տանք ձեզ՝ պարծել մեր վրայ, որ ունենաք
պատասխան անոնց որ առ ի տես կը պարծին, և
13 ոչ սրտով։ Քանզի եթէ ցնորած ենք, այն Աս-
տուծոյ համար է, և եթէ զգաստ ենք, այն ձե-
14 զի համար է։ Վասն զի Քրիստոսի սէրը կը սոի-
պէ զմեզ. քանզի մեր դատումն այս է որ եթէ
մին ամենուն համար մեռաւ, ուրեմն ամէնքը
15 մեռան։ Եւ ամենուն համար մեռաւ, որ անոնք
որ կենդանի են՝ այլ ևս չըլլան կենդանի իրենց
անձերուն, այլ անոր՝ որ անոնց համար մեռաւ
16 և յարեաւ։ Ուստի այսուհետեւ մենք ոչ զոք գի-
տենք մարմնով, և թէպէտ ճանչցանք զՔրիստոս
17 մարմնով, այլ հիմա չենք ճանչնար այնպէս։ Ու-
րեմն եթէ ոք է ի Քրիստոս, նոր ստեղծուած է.
հիներն անցան, և ահա ամենայն ինչ նոր եղաւ։
18 Սակայն ամենայն ինչ Աստուծմէ է, որ հաշտե-

ցուց զմեզ իրեն հետ Յիսուսի Քրիստոսի ձեռօք,
19 և առաւ մեզ հաշտութեան պաշտօնը։ Այսինքն
Աստուած էր որ Քրիստոսով հաշտեցուց աշխարհս
իրեն հետ, և անոնց յանցանքը չհամարեցաւ
անոնց, և հաշտութեան խօսքը դրաւ մեր մէջ։
20 Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ'ը-
ննենք, իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզ-
մով. կ'աղաչենք Քրիստոսի կողմանէ, հաշտուե-
21 ցէք Աստուծոյ հետ։ Վասն զի զնա, որ մեղք չէր
գիտեր, մեզի համար *մեղսաւոր համարեցաւ՝, որ
մենք անոր միջոցաւ Աստուծոյ արդարութիւն ըլ-
լանք։

Գլ. 6

1 Ուստի և մենք գործակից լինելով կ'աղաչենք որ
Աստուծոյ շնորհքն ի զուր ընդունած չըլլաք։
2 Քանզի կ'ըսէ, Ընդունելի ժամանակ լսեցի քեզ,
և փրկութեան օրն օգնեցի քեզ. ահա հիմա է
ժամանակ ընդունելի, ահա հիմա է օր փրկու-
3 թեան։ Բնաւ բանով մը գայթակղութիւն չենք
4 տար, որ պաշտօնը չարատի. Այլ յամենայնի
կ'ընծայենք մեր անձն իբրև Աստուծոյ սպասա-
ւորներ՝ շատ համբերութեամբ վիշտերու մէջ,
5 տառապանաց, նեղութեանց, դժուարու-
րաց, խռովութեանց, աշխատութեանց, հսկմանց,
6 ծոմերու մէջ, Մաքրութեամբ, գիտութեամբ,
երկայնմտութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ
7 Հոգւով, անկեղծ սիրով, ճշմարտութեան խօս-
քով, Աստուծոյ զօրութեամբ, արդարութեան
8 զինուք՝ որ յաջմէ և ի ձախմէ է. փառաց և ա-
նարգութեամբ, պարսաւանաց և գովութեամբ.
9 մոլորեցուցիչներու պէս՝ և ճշմարիտներ. Անծա-

*Յն՝ն, մեղք ըրաւ.

նօթներու պէս՝ և ծանօթներ. մեռնողներու պէս՝ և ահա կենդանի ենք. պատժուածներու
10 պէս՝ և չսպաննուածներ. Տրտմածներու պէս՝ և միշտ ուրախ ենք. աղքատներու պէս՝ և շատերը կը հարստացունենք. բան մը չունեցողներու պէս՝
11 և ամէնայն ինչ ունինք. Մեր բերանը բացուած է ձեզ, ով Կորնթացիք, մեր սիրտը՝ լայնցած.
12 Դուք մեր կողմանէ չէք նեղուիր, այլ *ձեր գո-
13 թիյն կողմանէ՝ կը նեղուիք. Ուստի ի հատուցումն (իբրև առ որդիս կը խօսիմ,) դուք ևս լայնցէք։
14 Անհաւասարից հետ մի՛ ըլլաք օտար լծակից. քանի՞ հրնչ համակցութիւն ունի արդարութիւն անօրէնութեան հետ, և ի՞նչ հաղորդութիւն ու-
15 նի լոյսը խաւարին հետ. Եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարայ հետ, կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալն անհաւատին հետ. Եւ ի՞նչ
16 յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռ-քերու հետ. վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճար էք, ինչպէս և Աստուած ըսաւ, Թէ Անոնց մէջ պիտի բնակիմ և անոնց մէջ պիտի քալեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ, և անոնք ժողովուրդ
17 պիտի ըլլան ինձ, վասն որոյ ելէք անոնց մէջէն և զատուեցէք, կ'ըսէ Տէրը, և պիղծ բանի մի՛
18 դպչիք. Եւ ես պիտի ընդունիմ զձեզ, և ես Հայր պիտի ըլլամ ձեզ, և դուք որդիք և դուստրեր պիտի ըլլաք ինձ, կ'ըսէ Տէր Ամենակալ։

Գլ. Է

1 Ուստի, սիրելիք, որոյհետև ունինք այս խոստումները, մաքրենք մեր անձերը մարմնոյ և հոգւոյ ամէն պղծութենէ, և կատարեալ գործ ենք սրբութիւնը երկիւղիւն Աստուծոյ։

*Կամ, ի ներքս ի ձեզ

2 *Ընդունեցէք զմեզ. մարդու վնաս չըրինք, ոչ
3 նղծեցինք զոք, ոչ զրկեցինք զոք։ Ոչ թէ դատապարտելու համար կ'ըսեմ ձեզ. վասն զի ես յառաջագոյն ըսած եմ թէ դուք մեր սիրտերուն
4 մէջ էք՝ մեռնելու և ապրելու. Չափ հետ շատ է համարձակութիւնս ձեր վրայ. շատ է պարծանքս ձեզի համար. լի եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ մեր բոլոր նեղու-
5 թիւններուն մէջ։ Վասն զի երբ մենք Մակեդոնիա հասանք, մեր մարմինը բնաւ հանգիստ չունեցաւ, այլ ամէն կողմանէ նեղութիւն կը կրէինք. արտաքուստ պատերազմներ կային, ներքուստ՝
6 երկիւղներ. Բայց Աստուած որ խոնարհները կը մխիթարէ՝ մխիթարեց զմեզ Տիտոսի գալստեամբ,
7 Եւ ոչ միայն անոր գալստեամբ, այլ այն մխիթարութեամբ ևս՝ որով մխիթարուած էր նա ձեզմով, երբ պատմեց մեզ ձեր բաղձանքը, ձեր ողբը, ձեր նախանձը վասն իմ, այնպէս որ աւելի ևս
8 ուրախ եղայ։ Քանզի եթէ զձեզ տրտմեցուցի այն թղթով, չեմ զղջար, (թէև զղջացած էի,) քանզի կը տեսնեմ որ այն թուղթը տրտմեցուց ձեզ,
9 թէև առ ժամանակ մի։ Արդ ուրախ եմ, ոչ թէ վասն զի տրտմեցաք, այլ վասն զի ապաշխարութեան համար տրտմեցաք. քանզի դուք ըստ Աստուծոյ տրտմեցաք, այնպէս որ ոչ իւրք կրնք
10 ինաս մենէ։ Քանզի տրտմութիւնը որ ըստ Աստուծոյ է՝ կը գործէ փրկութեան համար ապաշխարութիւն որ չէ զղջանալի. բայց աշխարհի
11 տրտմութիւնը մահ կը գործէ։ Քանզի ահա նոյն իսկ ձեր տրտմելն ըստ Աստուծոյ, ձեր մէջ որչափ ջանք գործեց, որչափ չքմեղութիւն, որչափ սրտմտութիւն, որչափ երկիւղ, որչափ անձուկ, որչափ նախանձ, որչափ վրէժխնդրութիւն. ա-

*Կամ, Համբերեցէք մեզ

մենայնի ցուցիք զձեզ թէ մաքուր էք այդ
12 գործոյն մէջ։ Ուրեմն այս որ գրեցի ձեզ, ոչ թէ
զրկանաք ընդողին համար էր, եւ ոչ թէ զրկանք
կրողին համար, այլ որպէս զի հոգը զոր ձեր վրայ
ունինք՝ յայտնի ըլլայ ձեզ Աստուծոյ առջեւ։
13 Ուստի ձեր այն մխիթարութեան համար մխի-
թարուեցանք. եւ աւելի չատ ուրախացանք Տի-
տոսի ուրախութեան համար, քանզի անոր հո-
14 գին ձեր ամենուն հանգիստ գտած էր։ Վասն զի
ինչ որ անոր առջեւ պարծեցայ ձեզի համար,
ամօթով չեղայ· այլ ինչպէս որ ամէն բան ճշմար-
տութեամբ խօսեցանք ձեզ, նոյնպէս Տիտոսի
15 առջեւ մեր պարծելը ճշմարիտ եղաւ։ Նաեւ անոր
սէրն աւելի է ձեր վրայ, երբ կը յիշէ ձեր ամե-
նուն հնազանդութիւնը, թէ ինչպէս ահով եւ դո-
16 ղութեամբ ընդունած էք զնա։ Ուստի ուրախ
եմ որ յամենայնի վստահութիւն ունիմ ձեր
վրայ։

Գլ· Ը

1 Ա՛ռդ, եղբայրներ, կը ծանուցանենք ձեզ Աս-
տուծոյ շնորհքը, որ արուած է Մակեդոնացւոց
2 եկեղեցիներուն։ Որ նեղութեան մեծ փորձին
մէջ անոնց ուրախութեան առատութիւնը եւ է-
ութիւնը, եւ անոնց ծանր աղքատութիւնն աւելի
3 մեծ առատաձեռնութիւն եղաւ։ Քանզի կը վկա-
յեմ որ ըստ կարողութեան իւրեանց եւ աւելի
4 քան զկարողութիւն իւրեանց յօժարակամ
ըլլալով, շատ աղաչանօք կ'աղաչէին զմեզ ընդու-
նել տուրքը եւ տուրքերուն համար եղած պաշտօ-
5 նին մասնակցութիւնը։ Եւ ոչ թէ որչափ մենք
կը յուսայինք, այլ իրենց անձերն եւ տուին,
նախ՝ Տէրոջը, եւ ապա մեզ՝ Աստուծոյ կամքը։
6 Որ Տիտոսի աղաչեցինք թէ ինչպէս որ յառաջ-

գոյն սկսաւ, նոյնպէս եւ ձեր մէջ կատարէ նաեւ
7 այդ շնորհքը։ Բայց ինչպէս որ յամենայնի առա-
տացած էք դուք, (հաւատով եւ խօսքով եւ գի-
տութեամբ եւ ամէն չնչին եւ սիրով որ ձեզի
մեր վրայ է,) Դուք շէ՛ որ այդ շնորհքով եւս առա-
8 տանաք։ Ոչ թէ հրամայելով կ'ըսեմ, այլ ուրիշ-
ներուն չնչին պատճառաւ, եւ որպէս զի փորձեմ
9 ձեր սիրոյն հարազատութիւնը։ Քանզի դուք գի-
տէք Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը,
թէ նա ձեզի համար աղքատ եղաւ՝ այն որ հա-
րուստ էր, որ դուք անոր աղքատանալովը հա-
10 րստանաք։ Եւ յայսմ խրատս մը կու տամ·
քանզի այս ձեր օգտին համար է, դուք որ ոչ
միայն ընելը, այլ եւ կամենալն յառաջագոյն սկը-
11 սաք հերուընէ։ Ուստի հիմա ընեցէք եւ կատարե-
ցէք, որ ինչպէս կամաց յօժարութիւն կայ, նոյն-
12 պէս եւ ընելն ըլլայ ըստ չափոյն որ ունիք։ Վասն
զի եթէ առաջ յօժարութիւն ըլլայ, ընդ ըստ
չափոյն որ ունի ոք՝ ընդունելի է, եւ ոչ թէ ըստ
13 չափոյն որ չունի։ Քանզի ոչ թէ ուրիշներուն
14 հանգիստ եւ ձեզ նեղութիւն, Այլ հաւասարու-
թեամբ՝ առ այժմ ձեր աւելին անոնց պակասու-
թեանը, որպէս զի անոնց աւելին եւս ըլլայ ձեր
պակասութեանը, որ հաւասարութիւն ըլլայ·
15 ինչպէս կը գրուած է, Թէ Այն որ շատ ժողվեց
16 չաւելցաւ, և այն որ սակաւ՝ չպակսեցաւ։ Բայց
գոհութիւն Աստուծոյ որ դրաւ նոյն հոգը ձեր
17 վրայ Տիտոսի սիրտը. Քանզի ընկալաւ աղաչանքն,
և վասն զի չատ կը յօժարամտութիւնը, իւր
18 կամքը ելաւ առ ձեզ։ Եւ անոր հետ զրկեցինք
այն եղբայրը որոյ գովաբութիւնն չաւետարանին
19 ի բոլոր եկեղեցիներուն մէջ։ Եւ ոչ միայն
այսչափ, այլ նաեւ եկեղեցիներէն ընտրուեցաւ
ուղեկից ըլլալ մեզ այս սրոց մէջ, զոր մենք
կը մատակարարենք Տէրոջը փառացը համար, և

20 *ձեր յօժարութեամբը։ Կը զգուշանայինք սակայն
որ արատ չդներ ոք մեր վրայ այս առատութեան
21 մէջ զոր կը մատակարարենք, քանզի ոչ միայն
Տէրոջը առջև, այլ և մարդոց առջև կը հոգանք
22 ինչ որ բարի է։ Եւ անոնց հետ ղրկեցինք մեր
եղբայրը, զոր շատ բաներու մէջ փորձելով՝ շատ
անգամ յօժարամիտ գտած ենք, և հիմա աւելի
եւս յօժարամիտ բաղում վստահութեամբ ձեր
23 վրայ։ Եթէ ի՛նչ հարցնէ Տիտոսի համար, նա իմ
ընկերս է և ձեր մէջ իմ գործակիցս. իսկ եթէ
մեր եղբայրներուն համար, անոնք եկեղեցիներէն
24 ղրկուածներ են, և փառք Քրիստոսի։ Ուստի
տուէք անոնց ձեր սիրոյն և մեր ձեր վրայ պար-
ծանաց ապացոյցը եկեղեցիներուն առջև։

Գլ. Թ

1 Քանզի ապաստուրութեան վրայ որ առ սուրբս՝
2 աւելորդ է ինձ գրել ձեզ. Քանզի գիտեմ ձեր
յօժարամտութիւնը, որով վրայ կը պարծենամ
ձեզի համար Մակեդոնացւոց մէջ, թէ Աքայեցիք
հերուընէ պատրաստ են. և ձեր նախանձը գրգռեց
3 շատերը։ Եւ ղրկեցի եղբայրները, որ մեր պար-
ծանքը ձեզի համար չպղտմ ունայն չըլլայ, այլ
4 պատրաստ գտնուիք, ինչպես որ ըսած եմ. Որ
մի գուցէ երբ Մակեդոնացիք իմ հետս գան և
ձեզ անպատրաստ գտնեն, մենք (որ չըսենք թէ
դուք) ամօթով մնանք այս ապարծանաց վստա-
5 հութեան մէջ։ Ուստի հարկաւոր համարեցայ ա-
ղաչել եղբայրներուն, որ յառաջագոյն գան առ
ձեզ, և յառաջագոյն կարգէ դնեն այն ձեր յա-
ռաջագոյն ծանուցուած ընծան, որ պատրաստ

*Ոմն., մեր
†Ոմն. չունին

ըլլայ, այնպես որ ընծայի պես ըլլայ, և ոչ թէ
6 ագահութեան պէս։ Բայց զայս կը ծանուցանեմ թէ
ով որ խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի
հնձէ, և ով որ առատութեամբ կը սերմանէ՝ ա-
7 ռատութեամբ պիտի հնձէ. Իւրաքանչիւրը ինչ-
պես որ իւր սրտով կը յօժարի, ոչ թէ տրտում-
թեամբ կամ ստիպմամբ. քանզի Աստուած յօ-
8 ժարակամ տուողը կը սիրէ։ Եւ կարող է Աս-
տուած ամէն չնորհք առատօրէն տալ ձեզ, որ
յամենայնի ունենալով միշտ ինչ որ պիտոյ է ձեզ՝
9 առատանաք բոլոր բարի գործերով. Ինչպես
գրուած է, Տարածեց, տուաւ աղքատաց. անոր
10 արդարութիւնն յաւիտեան կը մնայ։ Եւ նա որ
սերմ ցանողին սերմ կը պարգեւէ, *և՛ հաց՝ ի կե-
րակուր, պարգեւէ և աւելցունէ՛ ձեր սերմանիքը,
և իրապտղացունէ ձեր արդարութեան պտուղները.
11 Որ յամենայնի հարստանաք ամէնայն առատա-
թեամբ, որ մեր ձեռօք կը պատճառէ գոհութիւն
12 Աստուծոյ։ Քանզի այս պաշտօնիս մատակարա-
րութիւնն է ոչ միայն լնուլ սուրբերուն պակա-
սութիւնը, այլ և առատանալ բազում գոհու-
13 թիւններ առ Աստուած, երբ այս պաշտօնին փոր-
ձով կը փառաւորին զԱստուած ձեր հնազանդու-
թեանը համար Քրիստոսի աւետարանը դաւանե-
լու, և այն առատաձեռնութեան համար որով
հաղորդակցութիւն կ՚ընէք անոնց և ամենուն.
14 Եւ կ՚աղօթեն ձեզի համար՝ անձուկ ունենալով
առ ձեզ Աստուծոյ գերազանց չնորհաց համար
15 որ ի ձեզ է։ Գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպա-
տում պարգեւին համար։

*Ոմն., հերակրող համար հաց և սպիտակ պար-
գեւէ, և սպիտակ աւելցունէ
†Ոմն., սպիտակ բազմացունէ

Գլ. Ժ

1 Բայց ես Պօղոս կ'աղաչեմ զձեզ Քրիստոսի հեզութեան և քաղցրութեանը համար, ես որ երես առ երես խոնարհ եմ ձեր մէջ, բայց ի հեռուստ
2 կը համարձակիմ ձեզ, կ'աղաչեմ որ ի մօտ չհամարձակիմ այն վստահութեամբ, որով միտք ունիմ համարձակել ոմանց վրայ, որ մեր վրայ այնպէս կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քալենք։
3 Վասնզի թէպէտ կը քալենք ի մարմնի, բայց ոչ թէ
4 ըստ մարմնոյ կը զինուորենք. վասնզի մեր զինուորութեան զէնքը չէ մարմնաւոր, այլ զօրաւոր Աստուծով՝ ամրոցները քակելու. մենք խորհուրդ-
5 ներ կը քակենք, եւ ամէն բարձր բան հպարտացեալ Աստուծոյ գիտութեանը դէմ, և ամէն միտք գերի կ'ընենք Քրիստոսի հնազանդութեան,
6 եւ պատրաստ ենք վրէժ առնուլ ամէն անհնազանդութենէ, երբ ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ։ Արդարեւս երեւութիւն կը
7 նայիք. եթէ ոք վստահ ըլլայ իւր անձին վրայ թէ Քրիստոսին է, այնպիսին դարձեալ ինքնին
8 Թող խորհի, թէ ինչպէս Քրիստոսին է նա, նոյնպէս և մենք*։ Քանզի եթէ աւելի եւս պարծելու ըլլամ այս մեր իշխանութեան վրայ զոր Տէրը տուաւ մեզ՝ շինել զձեզ և ոչ թէ քակել, պիտի
9 չամչնամ. Որ այնպէս չհամարուիմ, որպէս թէ
10 Թուղթերով երկիւղ կու տամ ձեզ. Քանզի Թուղթերը, կ'ըսեն, ծանր և զօրաւոր են, բայց մարմ-
11 նոյն երեւոյթը տկար, և խօսքն՝ անարգ. Այնպիսին Թող գայս խորհի, որ մենք ինչպես ի հեռուստ
12 ենք բանիւ մեր Թուղթերով, ի մօտ ես այնպես պիտի ըլլանք գործով։ Քանզի չենք համարձակիր մեր անձն ի կրնս դնել և բաղդատել ոմանց հետ,

*Ոմն՝ ՀԼյաւելուած՝ Քրիստոսին ենք

որ կը գովեն զինքեանս. բայց անոնք չափելով իրենց անձերն իրենցմով և բաղդատելով զիրենք
13 իրենց հետ՝ չեն հասկնար։ Սակայն մենք ոչ թէ յանդուգն կը պարծենանք, այլ այն կանոնին չափով զոր Աստուած բաժին տուաւ մեզ հասնել
14 մինչև առ ձեզ. Ոչ թէ որպես թէ մենք հասած չենք առ ձեզ, և զանձինս քան զչափն աւելի կ'երկնցուցնենք. քանզի Քրիստոսի աւետարանովը
15 հասանք մինչև առ ձեզ։ Եւ ոչ թէ յանդգնելով կը պարծինք ուրիշներուն աշխատանօք, այլ յոյս ունինք որ երբ ձեր հաւատքն աւելնայ, մեր կանոնին չափով աւելի ընդարձակուինք ձեզմով,
16 Անդր եւս քան զձեզ աւետարանը քարոզել, և ոչ թէ պատրաստ բաներու վրայ պարծել ու-
17 րիշի կանոնով։ Բայց ով որ կը պարծի Թող ի Տէր
18 պարծի. Վասն զի ոչ թէ այն որ իւր անձը կը գովէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրը կը գովէ։

Գլ. ԺԱ

1 Երանի թէ փոյ մը համբերէիք անմտութեանս.
2 և արդարև համբերեցէք ինձ։ Վասն զի ձեր վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովՀ. քանզի ես զձեզ խօսեցայ մի երկան իբրև մաքուր կոյս
3 Քրիստոսի դիմաց հանելու։ Միայն թէ կը վախնամ՝ գուցէ ինչպես որ օձը խաբեց զԵւա խորամանկութեամբ, այնպես ձեր միտքերն ապակա-
4 նին միամտութենէն որ ի Քրիստոս։ Վասն զի եթէ ոք գայ և քարոզէ ուրիշ Յիսուս զոր մենք չքարոզեցինք, կամ առնուբ ուրիշ հոգի զոր չառիք, կամ ուրիշ աւետարան զոր չէք ընդու-
5 նած, այնէհաղ ազեկ կը համբերիք։ Քանզի ես այսպէս կը համարիմ թէ քան զբեւեռի առա-
6 քեալս բանով մը պակաս չեմ, Եւ թէպէտ խօս-

քի կողմանէ անվարժ եմ, բայց ոչ թէ գիտութեան կողմանէ. սակայն յամենայնի բոլորովին
7 մեր անձերն յայտնի ըրինք ձեզ։ Միթէ յանցաւոր եղայ որ ես ինքզինքս ձեր փառաբերելով ձեզ իմ անձս խոնարհեցուցի, որ դուք
8 բարձրանաք։ Ուրիշ եկեղեցիներէ կողոպտեցի՝
9 ձրիակ առնելով որ ծառայեմ ձեզ։ Եւ մինչ ձեր քով էի, երբ կարօտութիւն մը ունեցայ, ոչ ումմէ ձանձրութիւն տուի. քանզի իմ կարօտութիւնս լցին եղբարք որ եկան Մակեդոնիայէ. և յամենայնի պահեցի անձս և պիտի պահեմ ձան-
10 րութիւն տալէ ձեզ։ Քրիստոսի ճշմարտութիւնը կայ յիս, որ այս իմ պարծանքս պիտի չխափա-
11 նուի ինչ։ Ա՞ստկայիոյ կողմերը։ Ընդէ՞ր. որպէս թէ
12 չեմ սիրեր զձեզ. աստուած գիտէ։ Բայց ինչ որ կ՚ընեմ պիտի ընեմ ես, որ կարմէ առնոց պատճառը որ պատճառ կը փնտռեն, որպէս զի ինչ բանով որ կը պարծին, իրենք ես
13 մեզի պէս գտնուին։ Քանզի այնպիսիք սուտ առաքեալներ, խաբեբայ գործաւորներ ըլլալով, Քրիստոսի առաքեալներուն կերպարանքը կ՚առ-
14 նուն։ Եւ իրենց վրայ։ Եւ զարմանք չէ, քանզի ինքն իսկ Սատանայ լուսաւոր հրեշտակի կերպարանք
15 կ՚առնու։ Ապա մեծ բան չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան պաշտօնեաներու նըման կերպարանք կ՚առնուն. որոց վախճանն ի-
16 րենց գործերուն համեմատ պիտի ըլլայ։ Դարձեալ կ՚ըսեմ, մի՛ ոք անմիտ համարի զիս, ապա թէ ոչ գոնէ իբրև անմիտ ընդունեցէք զիս, որ և
17 ես փիչ մը պարծիմ։ Ինչ որ ես կը խօսիմ՝ կը խօսիմ ոչ թէ ըստ Տեառն, այլ որպէս թէ անմտութեամբ այդ պարծելուն վստահութեամբս։
18 Որովհետև շատերը մարմնոյ կողմանէ կը պար-
19 ծին, ես ևս պիտի պարծիմ։ Քանզի դուք խոհեմասուն ըլլալով՝ յօժարութեամբ կը հանձերէք

20 անմիտներուն։ Վասն զի կը հանձերէք, եթէ ոք ծառայեցուցանէ զձեզ, եթէ ոք չէր առներ ուտէ, եթէ ոք առնու, եթէ ոք հպարտանայ,
21 եթէ ոք ձեր երեսին զարնէ։ Իբրև հեգնելով կ՚ըսեմ, որպէս թէ մենք տկար էինք. բայց ինչ բանով որ կը համարձակի ոք՝ (անմիտ կ՚ըսեմ,) կը համարձակիմ և ես։ Եբրայեցի՞ են, և ես. Իսրայելացի՞ են, և ես. Աբրահամա-
23 ծո՞ւնդ են, և ես. Քրիստոսի պաշտօնեանե՞ր են, (յիմարաբար կ՚ըսեմ՝) և աւելի ես. աշխատասնօք՝ աւելի, ծեծերով՝ և աւելի, բանտարկութեամբ՝ աւելի, մահուան վտանգներով բազում
24 անգամ. Հրեաներէն հինգ անգամ քառասնէ
25 միով պակաս ընդ կերայ. երեքց ձողկեցայ. մի անգամ քարկոծուեցայ. երեքց նաւաբեկութեան հանդիպեցայ. գիշեր մը և ցերեկ մը անդունդը
26 անցայ. շատ անգամ ճանապարհորդութեանց մէջ գետոց վտանգ, ի վտանգս գետերէ, ի վտանգս ա-ւազակներէ, ի վտանգս ազգէս, ի վտանգս հեթանոսներէ, ի վտանգս քաղաքի մէջ, ի վտանգս անապատի մէջ, ի վտանգս ծովու վրայ, ի վտանգս
27 սուտ եղբայրներու մէջ. եղայ ի վաստակս և յաշխատանս, շատ անգամ ի տքնութեան, ի քաղց և ի ծարաւ, շատ անգամ յանօթութեան, ի ցուրտ
28 և ի մերկութեան. Թող արտաքին նկըն-ընկնէրն, ամէն օրուան զբաղումը, բոլոր եկեղեցիներուն
29 հոգը կը դիմադրէ իմ վրաս։ Ո՞վ կը տկարանայ, և ես չեմ տկարանար. ո՞վ կը գայթակղի, և ես
30 չեմ տոչորիր։ Եթէ պարծել պէտք է, տկա-
31 րութեանս բաներուն վրայ պարծիմ։ Աստուած և Տէրտն Յիսուսի Քրիստոսի Հայրը որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ չեմ սուր։
32 Դամասկոսի մէջ Արետա արքային ազգապետը զիս բռնել ուզելով՝ Դամասկացւոց քաղաքը
33 պահապաններ դրած էր. և ես պատուհանէ մը

զամբիւղով պարսպէն վար թողուեցայ, և փախայ անոր ձեռքէն։

ԳԼ. ԺԲ

1 Պարծել *արդարև անօգուտ է ինձ. միայն թէ
Տէրոջը տեսիլներուն և յայտնութիւններուն գաս-
2 Մարդ մը գիտեմ Քրիստոսով չորեքտասան ա-
մաք յառաջ, (եթէ մարմնով էր՝ չեմ գիտեր, և
եթէ առանց մարմնոյ՝ չեմ գիտեր, Աստուած
գիտէ,) այնպիսին յափշտակուեցաւ մինչև յեր-
3 րորդ երկինս։ Ու գիտեմ այնպիսի մարդ մը,
(եթէ մարմնով և եթէ առանց մարմնոյ՝ չեմ գի-
4 տեր, Աստուած գիտէ,) Որ դրախտը յափշտա-
կուեցաւ և լսեց անճառելի խօսքեր, զոր արժան
5 չէ մարդոյ խօսել։ Ես այնպիսւոյն համար պիտի
պարծիմ. բայց իմ անձիս համար պիտի չպար-
6 ծիմ, այլ միայն տկարութեանցս վրայ։ Քանի
մի եթէ պարծել ուզիմ, անմիտ պիտի չըլլամ,
վասն զի ճշմարիտը պիտի ըսեմ. բայց կը խնայեմ,
մի գուցէ ոք հաւատի յիս աւելի քան զոր կը
7 տեսնէ զիս կամ կը լսէ ինէ։ Եւ որպէս զի աւելի
չհպարտանամ յայտնութեանց համար, մարմնոյ
խայթոց տրուեցաւ ինձ, Սատանայի հրեշտակ,
8 Նեղել զիս որ չհպարտանամ։ Վասն այսորիկ ե-
9 րեք անգամ զՏէր աղաչեցի զի ետքէն ինէ։ Եւ ըսաւ
ինձ, իմ շնորհքս հերիք է քեզ, քանզի իմ զո-
րութիւնս տկարութեան մէջ կը կատարուի. ուս-
տի մեծ յօժարութեամբ իմ տկարութիւններուս
վրայ մանաւանդ պիտի պարծիմ, որ Քրիստո-
10 սի զօրութիւնն հանգչի իմ վրաս։ Վասն որոյ
հաճեալ եմ ես տկարութիւններու, նախատա-
նաց, տառապանաց, հալածանաց, նեղութեանց

*Ոմանք, պէտք է, բայց

Քրիստոսի համար. քանզի երբ կը տկարանամ,
11 յայնժամ զօրաւոր եմ։ Ես անմիտ եղայ *պար-
ծելով. դուք ստիպեցիք զիս. վասն զի պարտ
էր ինձ ձենէ վկայութիւն առնուլ, քանզի ես
քան զերևելի առաքեալս ոչ իւիք պակաս գըտ-
12 նուեցայ, թէև ես ոչինչ եմ։ Արդարև ձեր մէջ
առաքելոյ նշաններ գործուեցան ամենայն համ-
բերութեամբ, նշանօք և հրաշիւք և զօրու-
13 թեամբք։ Վասն զի այլ ի՞նչ կայ որով պակաս
գտնուեցաք քան զայլ եկեղեցիս, բայց միայն
այնու որ ձանձրութիւն չտուի ձեզ. ներեցէք
ինձ այդ յանցանքը։
14 Ահա այս երրորդ անգամ է որ կը պատրաս-
տուիմ գալ առ ձեզ. և ձանձրութիւն պիտի չը-
տամ ձեզ, վասն զի չեմ փնտռեր զձերն, այլ
զձեզ. քանզի որդիք պարտական չեն ծնողաց
համար բան դիզել, այլ ծնողք՝ որդւոց համար։
15 Եւ ես մեծ յօժարութեամբ ծախք պիտի ընեմ,
և ծախք պիտի ըլլամ ես ձեր անձերուն համար,
թէպետև աւելի սիրելով զձեզ՝ աւելի փչ սի-
րուիմ։
16 Սակայն Թող ըլլայ որ ես ծանրութիւն չտուի
ձեզ, այլ, վասն զի խորագէտ էի, խելօք բըռ-
17 նեցի զձեզ։ Միթէ ազահեցի՞ ձենէ բան մը ա-
18 նոնց ձեռօք զորս դրկեցի առ ձեզ։ Տիտոսի ա-
ղաչեցի, և անոր հետ դրկեցի այն եղբայրը. մի-
թէ ձենէ բան մը ազահե՞ց Տիտոս. ոչ ապաքէն
նոյն հոգւով քալեցինք, ոչ ապաքէն նոյն ճամ-
բով։
19 Դարձեալ կը կարծէք թէ ձեր առջև չատագո-
վութիւն կ՚ընենք. Աստուծոյ առջև Քրիստոսով
կը խօսինք. և ամէն բան, սիրելիք, ձեր շինու-

20 թեան համար է. Քանզի կը վախնամ թէ գուցէ

*Ոմանք ըսէին

երը գամ, չդանեմ զձեզ ինչպես կը կամիմ, և
ես գանուիմ ձեզ ինչպես դուք չէք կամիր. գու-
ցե ըլլան դարձեալ վէճք, նախանձք, սրամտու-
թիւնք, զրգռութիւնք, չարախօսութիւնք, բան-
սարկութիւնք, ամբարտաւանութիւնք, խառնուա-
21 թիւնք. գուցէ երբ դարձեալ գամ, իմ Աս-
տուածս նկատն ընէ զիս ձեր քովէ, և սուգ ընեմ
չատերուն համար որ յառաջագոյն մեղան, և
չապաշխարեցին պղծութեան և պոռնկութեան
և գիշութեան համար զոր գործեցին,

ԳԼ. ԺԳ

1 Այս երրորդ անգամ է որ կուգամ առ ձեզ.
երկու կամ երեք վկաներու բերնէ պիտի հաս-
2 տատուի ամէն բան. Ծառայագոյն բաած եմ, և
յառաջագոյն կ'ըսեմ (որպէս թէ երկրորդ ան-
գամ ներկայ, թէև հիմա ի հեռուստ կը գրեմ)
յառաջագոյն մեղանչողներուն և ուրիշ ամենուն
3 որ եթէ դարձեալ գամ պիտի չխնայեմ. վասն
զի ապացոյց կը խնդրէք թէ Քրիստոս կը խօսի
ինձմով, այն որ տկարացած չէ առ ձեզ, այլ զօ-
4 բացած է ի ձեզ. Որ թէպէտ խաչուեցաւ տկա-
րութեամբ, բայց կենդանի է զօրութեամբն Աս-
տուծոյ. քանզի և մենք թէպէտ կը տկարանանք
անով, բայց կենդանի պիտի ըլլանք անոր հետ
5 զօրութեամբն Աստուծոյ ի ձեզ. փորձեցէք ձեր
անձերը թէ ե՞ր ի հաւատս. քննեցէք ձեր անձե-
րը. չէ՞ք գիտեր ձեր անձերը որ Յիսուս Քրիստոս
6 ի ձեզ է, մէյն թէ խոտան չըլլաք։ Բայց կը
յուսամ թէ պիտի գիտնաք թէ մենք խոտան
7 չենք։ Եւ կը խնդրեմ Աստուծմէ որ չար բան մը
չընէք. ոչ թէ որ մենք ընտիր երեւինք, այլ որ
դուք զարիւն գործէք, թէև մենք իբրև խոտան
8 ըլլանք։ Քանզի ոչինչ կարող ենք ճշմարտութեան

9 դէմ, այլ ճշմարտութեան համար։ Վասն զի ու-
րախ ենք, երբ մենք կը տկարանանք և դուք
զօրաւոր էք, և մենք ձեր այդ հաստատութեան
10 համար կ'աղօթենք։ Ուստի զայս կը գրեմ ձեզ
ի հեռուստ, որ երբ գամ, տատակութեամբ չվա-
րուիմ այն իշխանութեան համեմատ, զոր Տէրը
տուաւ ինձ ի շինել և ոչ ի քակել։
11 Վերջապէս, եղբարք, ողջ եղէք, հաստատուն
կեցէք, միսիթարուեցէք, միաբան եղէք, խա-
ղաղութիւն ըրէք. և սիրոյ և խաղաղութեան
12 Աստուածը պիտի ըլլայ ձեր հետ. Ողջոյն տուէք
իրարու սուրբ համբուրիւ. ողջոյն կուտան ձեզ
13 բոլոր սուրբերը։ Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը
և Աստուծոյ սէրը և Հոգւոյն Սրբոյ հաղորդու-
թիւնը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ (ոչ ի մարդկանէ և ոչ մար-
դու ձեռօք, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի,
և Աստուծոյ Հօր որ յարոյց զնա ի մեռելոց)
2 Եւ բոլոր եղբարքը որ իմ հետս են՝ Գաղատիոյ ե-
3 կեղեցիներուն։ Շնորհք և խաղաղութիւն ձեզ
Հօր Աստուծմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ,

4 Այն որ իւր անձր տուաւ մեր մեղայ համար, որ
զմեզ փրկէ այժմու չար աշխարհէն՝ Աստուծոյ և
5 մեր Հօր կամաց համեմատ, Որում փառք յա-
ւիտեանս յաւիտենից, Ամէն։
6 Կը զարմանամ որ այդպէս վազ կը փոխուիք
անկէ որ կոչեց զձեզ Քրիստոսի շնորհաց՝ յայլ
7 աւետարան, Որ չկայ ուրիշ. միայն թէ կան ո-
մանք որ զձեզ կը խռովեցունեն, և կամին խան-
8 գարել Քրիստոսի աւետարանը։ Բայց եթէ մենք
կամ հրեշտակ յերկնից աւետարանի ձեզ այլ
ինչ քան զոր մենք աւետարանեցինք ձեզ, նզովե-
9 ալ ըլլայ։ Ինչպէս որ առաջ ըսինք, հիմա ես
կ'ըսեմ, եթէ ոք քարոզէ ձեզ ուրիշ աւետա-
րան քան զոր ընդունեցիք, նզովեալ ըլլայ։
10 Գանդի հիմա զմարդիկ կը համեցունեմ թէ զԱս-
տուած. կամ մարդոց հաճոյ ըլլալ կը խնդրեմ.
քանդի եթէ տակաւին մարդոց հաճոյ ըլլայի, այլ
ես Քրիստոսի ծառայ չէի։
11 Կը ծանուցանեմ ձեզ, եղբարք, աւետարանը
որ ինէ քարոզուեցաւ, թէ մարդու գործ չէ այն։
12 Գանզի ես ինչ մարդէ չառի զայն, և չսորվեցայ,
13 այլ Յիսուսի Քրիստոսի յայտնութենէն։ Վասն զի
լսած եք դուք իմ նախկին վարքս ի Հրէութեան,
ի՛նչպէս յանդիման կը հալածէի Աստուծոյ եկեղ-
14 ցեցին և կը կործանէի զայն. Եւ հայրենի տան-
դութիւններուս չատ նախանձաւոր ըլլալով յա-
ռաջադէմ էի ի Հրէութեան քան զրազում հա-
15 սակակից իմ որ ազգիս մէջ էին։ Բայց երբ
կամեցաւ Աստուած (որ որոշեց զիս մօր ո՛ր-
16 վայնէն, և իւր շնորհօք կոչեց զիս,) Իւր Որդին
յայտնել *ինձ, որ քարոզեմ զնա հեթանոսաց
մէջ, իսկոյն բան մը չիմացուցի մարմնոյ և արեան,
17 Եւ ոչ Երուսաղէմ ելայ անոնց քով որ յառաջ

*Պաւ, ինձմով

քան զիս առաքեալ էին, այլ գնացի Արաբիա, և
18 դարձեալ դարձայ ի Դամասկոս։ Ցետոյ երեք տա-
րի հաքը ելայ Յերուսաղէմ տեսնել զՊետրոս,
19 և կեցայ անոր քով հնգետասան օր. Սակայն ա-
ռաքեալներէն զայլ ոք չտեսայ, բայց միայն զՅա-
20 կոբոս, զեղբայր Տիառն։ Արդ՝ զոր գրեմ
21 ձեզ, ահա Աստուծոյ առջև, չեմ սուտ։ Ցետոյ ե-
22 կողմերը։ Եւ զիս
երես առ երես չէին ճանչնար եկեղեցիք որ
23 Հրէաստանի մէջ էին Քրիստոսով. Միայն լսած
էին թէ այն որ ժամանակաւ կը հալածէր զմեզ,
հիմա ինք կը քարոզէ այն հաւատքը՝ որ եր-
24 բեմն կը կործանէր. Եւ ինձմով զԱստուած կը
փառաւորէին։

ԳԼ. Բ

1 Ցետոյ տասնուչորս տարի հաքը դարձեալ Երու-
սաղէմ ելայ Բառնաբայ հետ՝ զՏիտոս առնելով
2 և մինչեւ։ Եւ ելայ յայտնութեամբ, և անոնց ի-
մացուցի աւետարանը զոր հեթանոսաց մէջ կը
քարոզեմ, բայց առանձին անոնց որ երեւելիները
էին, որպես զի ի զուր չվազեի կամ վազած չըլլա-
3 յի։ Բայց ոչ թէ Տիտոս որ իմ հետս էր, Յոյն ըլ-
4 լալով՝ ստիպուեցաւ թլփատուիլ. Մանաւանդ
ներս սպրդող սուտ եղբարց համար որ առնելով
մտան ներս լրտեսել մեր ազատութիւնը զոր ու-
նինք ի Քրիստոս Յիսուս, որպես զի ծառայեցու-
5 նեն զմեզ. Որոց ոչ մը տուեն անգամ չտնաա-
ցինք հնազանդիլ, որ աւետարանին ճշմարտու-
6 թիւնը հաստատուն մնայ ձեր մէջ։ Բայց անոնք
որ կը կարծուէին բան մը ըլլալ, (ինչ որ էին՝
այն փոյթ չէ ինձ. Աստուած մարդոց այտառու-
թիւն չըներ. վասն զի ինծի կարծուածները բան
7 մը չիմացուցին ինձ։ Այլ ընդհակառակն, երբ

տեսան թէ անթլփատներուն աւետարանը յանձնուած է ինձ, ինչպէս Պետրոսի թլփատութեան
8 բունը. (Վասն զի այն որ յայտնեց Պետրոսի յառաքելութիւն թլփատութեանը, ինձ ևս յայտնեց հեթանոսներուն.) Եւ երբ գիտցան շնորհքը որ տրուած է ինձ՝ Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս որ սիւնք համարուած էին, տուին ալ հաւանութեան ինձ և Բառնաբայ, որ մենք Ընդ-
9 հեթանոսներուն, և անոնք՝ թլփատութեանը
10 բուն. Միայն թէ աղքատները յիշենք. որ և ես փութացայ ընել զնոյն: Բայց երբ Պետրոս եկաւ
11 Անտիոք, դէմ կեցայ անոր. քանզի մեղադրելի
12 էր. վասն զի մինչդեռ ոմանք եկած չէին Յակոբոսի քովէն, հեթանոսներուն հետ կ'ուտէր. բայց երբ եկան, ետ կը կենար և կը զատէր ինքզինքը, վախնալով անոնցմէ որ թլփատութենէն էին.
13 եւ անոր հետ կեղծաւորեցան միւս Հրեայք ևս, այնպէս որ Բառնաբաս ևս մխրճուեցաւ անոնց կեղծաւորութեանը: Բայց ես երբ տեսայ թէ ուղիղ չէին
14 քալեր աւետարանին ճշմարտութեան մէջ, ամենուն առջև ըսի Պետրոսի, եթէ դուն, որ Հրեայ ես, հեթանոսի պէս և ոչ Հրեի պէս կ'ապրիս, ի՞նչպէս կրնաս հեթանոսները ստիպել Հրէի
15 պէս ըլլալ: Մենք որ ի բնէ Հրեայ ենք, և ոչ թէ հեթա-
16 նոսներէն մեղաւորք, Ցայս գիտնալով թէ մարդ օրէնքին գործերէն չկրնար արդարանալ, այլ Յիսուսի Քրիստոսի հաւատքին, մենք ևս Քրիստոս Յիսուսի հաւատացինք՝ որ արդարանանք Քրիստոսի հաւատքին, և ոչ թէ օրէնքին գործերէն, քանզի օրէնքին գործերէն բնաւ մարմին մը ա-
17 տի չարդարանայ: Իսկ եթէ մենք որ կ'ուզենք Քրիստոսով արդարանալ՝ մեղաւոր գտնուինք, ուրեմն Քրիստոս մեղսց պաշտօնեայ եղաւ. քա'ւ
18 լիցի. Քանզի եթէ ես վերստին կը շինեմ ինչ որ
19 քակեցի, իմ անձս յանցաւոր կը ցուցնեմ: Քանզի ես օրէնօք մեռայ օրէնսց, որ կենդանի ըլլամ
20 Աստուծոյ: Քրիստոսի հետ իւսչ եղայ. և այսուհետև կենդանի եմ ոչ թէ ես, այլ Քրիստոս կենդանի է յիս. բայց ես որ հիմա մարմնովս կ'ապրիմ՝ կ'ապրիմ հաւատով Աստուծոյ Որդւոյն, այն որ զիս սիրեց և իւր անձը մատնեց ինձ-
21 ծի համար: Ես չեմ խափաներ Աստուծոյ շնորհքը. քանզի եթէ արդարութիւնն օրէնքէն էր, ուրեմն Քրիստոս ի զուր մեռաւ:

Գլ. Գ

1 Ո անմիտ Գաղատացիք, ո՞վ հրապուրեց զձեզ՝, որոց աչաց առջև նկարագրուեցաւ Յիսուս Քրիս-
2 տոս ձեր մէջ ի խաչ ելած: Սա միայն կ'ուզեմ սորվիլ ձենէ. Օրինա՞ց գործերով առիք Հոգին,
3 թէ՝ լսելով և հաւատալով: Այդչափ անմի՞տ եք. հոգւով սկսաք, և հիմա մարմնո՞վ պիտի վերջա-
4 նա՞ք. Այնչափ բաներ կրեցիք ի զո՞ւր, (եթէ ե-
5 ղան ի զո՞ւր.) Ուստի այն որ բաշխեց ձեզ Հոգին և գործեց զօրութիւններ ի ձեզ, օրինա՞ց գործե-
6 րէն էր, թէ լսելով և հաւատալով: Ինչպէս Աբրահամ հաւատաց յԱստուած և համարուեցաւ
7 նմա արդարութիւն, Ուրեմն գիտցէք թէ անոնք
8 որ հաւատքէն են՝ որդիք են Աբրահամու: Եւ Գիրքն յառաջագոյն գիտնալով թէ Աստուած հեթանոսները կարդարացուէ հաւատով՝ յա-
9 ռաջագոյն ուրախս տուաւ Աբրահամու, թէ Բեզմով պիտի օրհնուին բոլոր ազգերը: Ուստի անոնք որ հաւատքէն են՝ կ'օրհնուին հաւա-
10 տացեալ Աբրահամու հետ: Վասն զի անոնք որ օրէնսց գործերէն են՝ անիծից տակ են.

---

*Ոմն՝ կը յոռետեսն, չհնազանդելը ճշմարտութեան

քանզի գրուած է Թէ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ չկենար օրինաց գրքին բոլոր գրուածները
11 ներուն մէջ որ զանոնք կատարէ։ Եւ Թէ օրէնքով ոչ ոք կրնայ արդարանալ Աստուծոյ առջեւ, այն յայտնի է. քանզի Արդարը հաւատքէն պիտի ապրի։ Բայց օրէնքը հաւատքէն չէ, այլ Ով
12 որ կը կատարէ այն բաներն՝ անոնցմով պիտի ապրի։ Քրիստոս դնեց զմեզ օրէնքին անէծքէն՝
13 մեզ համար ըլլալով անէծք. (քանզի գրուած է Թէ Անիծեալ է այն ամէնը որ կը
14 կախուի փայտէ.) Որպէս զի Աբրահամու օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով. որ մենք Նա Հոգւոյն խոստումին առնենք հաւատովն։ Մարդիկըն կ'ըսեմ, եղբայրներ. արդարեւ կտակը զոր կը հաստատէ մարդ ոչ ոք կը խափանէ, և ոչ կը յաւելու ուրիշ պայ-
16 մանը անոր վրայ։ Արդ, խոստումնքն Աբրահամու և անոր սերնդեան եղան. չըսեր, Եւ սերնդոցդ որպէս Թէ չատերու, այլ որպէս Թէ մէ-
17 միւի, Եւ քու սերնդեանդ, որ է Քրիստոս։ Բայց զայս կ'ըսեմ. կտակը՝ որ յառաջագոյն Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով, օրէնքը որ գրուեցաւ չորս հարիւր երեսուն տարիէ հետէ, չկրնար անվաւեր ընել՝ խոստումը խա-
18 փանելու համար։ Վասն զի եթէ ժառանգութիւնը օրէնքէն կ'ըլլայ, ուրեմն ոչ եւս խոստումէն է. բայց Աբրահամու խոստմամբ շնորհեց Աստուած։
19 Ապա ուրեմն ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանաց համար վրայ աւելցաւ, (մինչեւ գայ սերունդը որուն խոստացուած էր,) հրեշտակներով սրբուած միջնորդի մը ձեռօք։ Բայց միջնորդը չէ-
21 նորդ չէ միոյ. սակայն Աստուած մի է։ Ուրեմն օրէնքը հակառակի է Աստուծոյ խոստումներուն. քա՛ւ լիցի. քանզի եթէ տրուած ըլլար այնպիսի

օրէնք մը որ կարող ըլլար կենդանի ընել, ստու-
22 գիւ արդարութիւնը կ'ըլլար օրէնքեն։ Բայց Գիրքն ամէնքը փակեց մեղայ ատկ, որ խոստումն հաւատով է Յիսուս Քրիստոս տրուի հա-
23 ւատացեալոց։ Բայց մինչ եկած չէր հաւատքը, փակուած կը պահուէինք օրէնքին տակ, ապառնիւվ
24 հաւատացի որ պիտի յայտնուէր։ Ուրեմն օրէնքը մեր դաստիարակն եղաւ է Քրիստոս, որ մենք
25 հաւատով արդարանանք։ Բայց երբ հաւատքը
26 եկաւ, այլ ևս դաստիարակի տակ չենք։ Քանզի ամէնքդ Աստուծոյ որդիք էք հաւատովը որ է
27 Քրիստոս Յիսուս։ Քանզի դուք ամէնքդ որ Քրիստոսով մկրտուեցաք, զՔրիստոս հագած էք։
28 Այսուհետ՝ ոչ Հրեայ կայ, և ոչ Յոյն. ոչ ծառայ կայ, և ոչ ազատ. ոչ արու կայ, և ոչ էգ. քանզի դուք ամէնքդ մի էք է Քրիստոս
29 Յիսուս։ Ապա եթէ դուք Քրիստոսին էք, ուրեմն Աբրահամու սերունդ էք, և ժառանգ ըստ խոստման։

Գլ. Դ

1 Բայց կ'ըսեմ, որչափ ժամանակ ժառանգը տղայ է, չունի տարբերութիւն ծառայէ, Թէև ամենուն
2 տէրն է. Այլ խնամակալաց և հոգաբարձուաց
3 տակ է՝ մինչև հօրմէն որոշեալ ժամանակը։ Այսպէս և մենք երբ տղայ էինք, աշխարհիս սկզբանց
4 տակ ծառայ եղած էինք։ Բայց երբ ժամանակը լրացաւ, ղրկեց Աստուած իւր Որդին որ եղաւ
5 ի կնոջէ, մաւռ. ընդ օրինօք, Որպէս զի փրկէ զանոնք որ ընդ օրինօք են, որպէս զի մենք որ-
6 զեգրութիւնն ընդունինք։ Եւ որովհետև դուք որդիք էք, Աստուած ղրկեց *Ձեր սիրտերուն

*Ոմանք, մեր

մէջ իւր Որդւոյն Հոգին որ կ'աղաղակէ Աբբա
7 Հայր։ Ուստի այլ եւս ծառայ չես, այլ որդի. և
եթէ որդի, ապա և ժառանգ Աստուծոյ ի Քրիս-
8 տոս։ Բայց մինչ չէիք գիտեր զԱստուած, կը ծա-
9 ւայէիք անոնց որ չէին իրնէ աստուածներ։ Սա-
կայն հիմա որ ճանչցաք զԱստուած, մանաւանդ
Թէ ճանչցուեցաք Աստուծմէ, ի՞նչպէս դարձեալ
կը դառնաք այն տկար և աղքատ սկզբանց, որոց
10 դարձեալ կ'ուզէք ծառայել։ Օրերը կը խորհիք,
11 և ամիսները և ժամանակները և տարիները։ կը
վախնամ ձեզմէ, Թէ գուցէ ի դուր աշխատած եմ
ձեր վրայ։
12 Իրարև զիս եղէք, քանզի և ես իրարև զձեզ եղայ,
եղբայրներ, կ'աղաչեմ զձեզ. դուք ինծա ոչ
13 սուցած չէք ինձ։ Գիտէք Թէ մարմնոյս տկարու-
Թեամբ առաջին անգամ քարոզեցի ձեզ աւետա-
րանը. և փորձութիւնը զոր կը կրէի մարմնոյս
14 վրայ՝ Զանարգեցիք և չարհամարհեցիք, այլ իբրև
զհրեշտակ Աստուծոյ ընկալաք զիս, իբրև զՔրիս-
15 տոս Յիսուս։ Ուրեմն ի՞նչ էր այն ձեր երանու-
Թիւնը. քանզի ես կը վկայեմ ձեզ որ, եթէ հնար
էր, ձեր աչուըները պիտի հանէիք և տայիք ինձ։
16 Ուստի ձեր Թշնամին եղայ վասն զի ճշմարիտ
17 խօսեցայ ձեզ։ Նախանձաւոր են ձեզ, ոչ Թէ
ի բարին, և կ'ուզեն արգելուլ Դձեզ, որ նախան-
18 ձաւոր ըլլաք անոնց։ Սակայն լաւ է միշտ նախան-
ձաւոր ըլլալ բարւոյն, և ոչ միայն երբ ձեր մէջ
19 եմ։ Որդեակք իմ, զորս վերստին կ'երկնեմ
20 մինչև Քրիստոս կերպաւորի ի ձեզ, կ'ուզէի հիմա
ձեր մէջ ըլլալ, և փոխել ձայնս. քանզի տարա-
կուսած եմ ձեր վրայ։
21 Ըսէք ինձ, դուք որ ընդ օրինօք կ'ուզէք ըլ-

*կամ, ո՞չ է
†կամ, զձեզ

22 լալ, չէ՞ք լսեր օրէնքը, վասն զի գրուած է Թէ
Աբրահամ երկու որդի ունէր, զմին՝ աղախնէն,
23 և զմիւսն՝ ազատ կնոջէն։ Բայց այն որ աղախնէն
էր՝ մարմնով կողմանէ ծնած էր, իսկ այն որ ազատ
24 կնոջէն՝ խոստման համեմատ. Ասոնք բաներն այլա-
բանօրէն կը մեկնուին. քանզի ասոնք են երկու
կտակարանները, մին՝ Սինայ լեռնէն որ ծառայու-
25 Թեան համար կը ծնանի, որ է Հագար. Քանզի
Հագար Արաբիոյ մէջ Սինայ լեռն է, և կը համե-
մատի այժմու Երուսաղէմի որ իւր զաւակներով
26 կը ծառայէ։ Բայց վերին Երուսաղէմ ազատ է,
27 որ մեր *ամենուն մայրն է։ Քանզի գրուած է,
Ո՛վ չծնանող ամուլ, ցնծա. ո՛վ երկունք չկրող,
գոչէ և աղաղակէ. քանզի լքելոյն որդիքը շատ են
28 քան անոր որ այր ունի։ Ուստի մենք, եղբայր-
29 ներ, իսահակայ պէս խոստման որդիք ենք։ Բայց
ինչպէս անառեն մարմնով կողմանէ ծնածը կը հա-
լածէր զայն որ հոգւոյն կողմանէ էր, նոյնպէս և
30 հիմա։ Սակայն ի՞նչ կ'ըսէ Գիրքը. Դուրս հանէ
այդ աղախինը և անոր որդին, քանզի աղախնոյն
որդին պիտի չժառանգէ ազատ կնոջ որդւոյն հետ։
31 Ուստի, եղբարք, մենք աղախնոյն որդիքը չենք,
այլ ազատին։

Գլ. Ե

1 Ուստի տմարը կեցէք այն ազատութեամբ որով
Քրիստոս ազատեց զմեզ, և մի՛ մանէք դարձեալ
2 ծառայութեան լծոյ տակ։ Ահա ես Պօղոս կ'ըսեմ
ձեզ որ, եթէ թլփատուիք, Քրիստոս օգուտ չընէր
3 ձեզ։ Եւ դարձեալ կը վկայեմ ամէն մարդու որ
կը թլփատուի, Թէ պարտական է կատարել բոլոր
4 օրէնքը։ Խափանած էք դուք Քրիստոսէ, որ

*Յունարէն կոյնին

կ՚ուղէք արդարանալ օրինքով, ինկած եք շնորհ-
5 քէն։ Քանզի մենք Հոգւով կը սպասենք արդա-
6 րութեան յուսոյն հաւատովս։ Վասն զի Քրիստոս
Յիսուսի քով ոչ թլփատութիւնը բանի մը կա-
րող է, և ոչ անթլփատութիւնը, այլ հաւատքը
7 որ սիրով ի գործ կը դրուի։ Դուք բարւոք կ՚ըն-
թանայիք. ո՞վ ետ կեցուց զձեզ չհնազանդել
8 ճշմարտութեան։ Այս դրդումն անկէ չէ որ կոչեց
9 զձեզ։ Քիչ մը խմոր կը խմորէ բոլոր զանգուածը։
10 Ես վստահ եմ ձեր վրայ Տիրոջմէ, որ ուրիշ բան
պիտի չխորհիք, և այն որ կը խանգարեցնէ զձեզ,
11 պիտի կրէ դատապարտութիւն ով որ է։ Սակայն,
եղբարք, եթէ ես տակաւին թլփատութիւն կը
քարոզեմ, այլեւ ընդէ՞ր կը հալածուիմ. ուրեմն
12 խաչին գայթակղութիւնը խափանուած է։ Երանի
թէ բոլորովին կտրուէին անոնք որ կը խանգա-
րեցնեն զձեզ։

13 Վասն զի դուք ազատութեան կոչուած եք, եղ-
բարք. միայն թէ ազատութիւնը չըլլայ պատճա-
ռանք մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք իրարու։
14 Քանզի բոլոր օրէնքն ի մի բան կը կատարուի,
յայտ թէ, դու ընկերդ սիրես քու անձիդ
15 պէս։ Այլ եթէ զիրար խածնէք և ուտէք, զգոյշ
16 եղէք որ չսպառիք իրարմէ։ Միայն թէ կ՚ըսեմ,
Հոգւով քալեցէք և մարմնոյ ցանկութիւնը պիտի
17 չկատարէք։ Քանզի մարմինը կը ցանկայ հակա-
ռակ հոգւոյ, և հոգին՝ հակառակ մարմնոյ. և
ասոնք իրարու հակառակ են, որպէս զի ինչ որ
18 կ՚ուզէք՝ զայն չընէք։ Իսկ եթէ կ՚առաջնորդուիք
19 ի Հոգւոյն, այլեւ ընդ օրինօք չէք։ Արդ մարմ-
նոյն գործերը յայտնի են, որ են՝ շնութիւն,
20 պոռնկութիւն, պղծութիւն, գիճութիւն, կռա-
պաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւնք,
կռիւք, նախանձք, բարկութիւնք, հակառա-
կութիւնք, երկպառակութիւնք, բաժանմունք,

21 Զարհուրութիւնք, մարդասպանութիւնք, արբե-
ցութիւնք, անառակութիւնք, և ինչ որ ասոնց
նման են. որ այժմէն կ՚ըսեմ ձեզ, ինչպես յա-
ռաջագոյն ևս կ՚ըսէի, թէ այսպիսի բաներ գոր-
ծողներն Աստուծոյ արքայութիւնը պիտի չժա-
22 ռանգեն։ Բայց Հոգւոյն պտուղն այս է. սէր,
ինդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն,
23 քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն,
հեզութիւն, ժուժկալութիւն. այսպիսի բաներուն
24 դէմ օրէնք չկայ։ Եւ անոնք որ Քրիստոսին
են՝ մարմինն իր խաչ հանեցին կրիւք և ցանկու-
25 թեամբք հանգերձ։ Եթէ Հոգւով կ՚ապրինք,
26 Հոգւոյն հաւասար քալենք։ Անապարհ չըլլանք՝
զիրար գրգռելով, երբարու վրայ նախանձելով։

Գլ. Զ

1 Եղբարք, եթէ ոք յանկարծ ինչ և իցէ յանցանօք
բռնուի, դուք որ հոգևոր եք՝ հեզութեան հոգւով
բերէք զայնպիսին յաղագս Քրիստոսի. քու անձիդ ևս
2 զգոյշ եղիր որ փորձուես մէկ չկենաս։ Իրարու
նեղութիւնները կրեցէք, և այնպես կատարեցէք
3 Քրիստոսի օրէնքը։ Քանզի եթէ ոք գինք բան մը
4 ըլլալ կը համարի և չէ, իւր անձը կը խաբէ։ Բայց
ամէն մարդ թող հետ իւր գործը լաւ ըլլայ, և ապա իւր
անձին վրայ միայն պարծանք ունենայ, և ոչ թէ
5 ուրիշի վրայ։ Քանզի իւրաքանչիւր օձ պիտի կրէ
իւր բեռը։
6 Խօսքին աշակերտութիւն ընողն ամէն բարի
7 բաներու մասնակից ընէ վարդապետը։ Մի՛ խա-
8 բուիք, Աստուած ծաղր չըլլար, վասն զի ինչ որ
կը սերմանէ մարդ, նոյնը պիտի հնձէ. ով որ
կը սերմանէ իւր մարմնոյն, մարմինէն պիտի հնձէ
ապականութիւն. և ով որ կը սերմանէ Հոգւոյն,
9 Հոգիէն պիտի հնձէ յաւիտենական կեանք։ Բայց

բարի գործելէ չձանձրանանք, քանզի յարմար
ժամանակին պիտի հնձենք, եթէ չվհուձանք։
10 Ուստի մինչդեռ ժամանակը մեր ձեռքն է, բա-
րիք ընենք ամենուն, մանաւանդ հաւատոյ ըն-
տանիներուն։
11 Նայեցէք, որպիսի՛ գիրերով գրեցի ձեզ իմ ձե-
12 ռօք։ Անոնք որ կ՚ուզեն մարմնոյ կողմանէ բարի
երեւնալ, ան՛նք կը սպիպեն ձեզ թլփատուիլ,
միայն թէ խրիստոսի խաչին համար չհալածուին։
13 Քանզի անոնք իսկ որ թլփատուած են՝ չեն պա-
հեր օրէնքը, այլ կ՚ուզեն որ դուք թլփատուիք,
14 որ իրենք ձեր մարմնով պարծին։ Բայց ես,
քա՛ւ լիցի որ պարծիմ, բայց միայն ի խաչն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով աշխարհ
15 ի խաչ ելած է ինձ, և ես աշխարհի։ Քանզի Քրիս-
տոս Յիսուսով ոչ թլփատութիւնն է բան մը, և
16 ոչ անթլփատութիւնը, այլ նոր ստեղծուած։ Եւ
այն ամէնը որ այս կանոնիս համեմատ կը քալեն՝
խաղաղութիւն և ողորմութիւն ըլլայ անոնց վրայ,
17 և Աստուծոյ իսրայէլին վրայ։ Այսուհետեւ մարդ-
մը ինծի չյոգնեցնուներ, քանզի ես Տէր Յիսուսի
18 վիրաց նշաններն իմ մարմնոյս վրայ կը կրեմ։ Եղ-
բարք, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը
ձեր հոգւոյն հետ ըլլայ, Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն
Աստուծոյ, սուրբերուն որ են յԵփեսոս և հաւա-
2 տացելոց ի Քրիստոս Յիսուս։ Շնորհք և խաղա-
ղութիւն ձեզ Աստուծմէ մեր Հօրմէն և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ օրհնեց զմեզ ամէն հոգևոր
օրհնութեամբք երկնաւորներուն մէջ ի Քրիստոս։
4 Ինչպէս ընտրեց զմեզ անով յառաջ քան աշխար-
հիս սկիզբը, որ սուրբ և անարատ ըլլանք անոր
5 առջև սիրով։ Եւ յառաջագոյն սահմանեց զմեզ
իրեն որդեգիր ըլլալ Յիսուսի Քրիստոսի ձեռօք
6 իւր կամաց հաճութեանը պէս, ի գովութիւն իւր
փառաւոր շնորհաց, որով զմեզ զարդարեց Սի-
7 րելոյն ձեռօք։ Որով ունինք փրկութիւն անոր
արեանը միջոցաւ, թողութիւն մեղաց՝ ըստ չա-
8 փոյ ճոխութեան շնորհաց նորա, Զոր մեր վրայ
առելցուց բոլոր իմաստութեամբ և գիտութեամբ,
9 Յայտնելով մեզ իւր կամաց խորհուրդը իւր հա-
ճութեանը պէս, զոր նախասահմանած էր ի նմա-
10 Որ ժամանակաց լրման անտեսութեան մէջ բովան-

*Որոնէ, անուշ

զակէ ամենայն ինչ ի Քրիստոս, ինչ որ յերկինս
11 և ինչ որ յերկրի ի նմա, որով մեզ և ժառանգութիւն առինք, յառաջագոյն որոշուած ըստ
նախասահմանութեամբ նորա որ ի գործ կը դնէ
12 ամէն բան իւր կամացը խորհրդով. Որ մենք առաջ յուսացողներս. Որով դուք և
13 Քրիստոսի վրայ յուսացողներս. Որով վրայ դուք և յոյսացած, երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, որուն նաև հաւատալով կնքուեցաք խոստացեալ Սուրբ
14 Հոգւով. Այն որ մեր ժառանգութեան գրաւն է մինչև ասացուածին փրկութիւնը՝ անոր փառաց գովութեանը համար։
15 Ուստի և ես, երբ լսեցի հաւատքը զոր ունիք ի Տէր Յիսուս, և սէրը զոր ունիք բոլոր սուր-
16 բերուն վրայ, Չեմ դադարիր գոհանալէ ձեզի համար,
17 մաս, յիշելով զձեզ աղօթներուս մէջ. Որ Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուածը, փառաց Հայրը, տայ ձեզ իմաստութեան և յայտնութեան
18 հոգին գիտնալ զնա. Որպէս զի ձեր սիրտերուն աչաց լուսաւորուելովը գիտնաք թէ ինչ է անոր կոչման յոյսը, և ինչ է անոր ժառանգութեան
19 փառաց ճոխութիւնը սուրբերուն մէջ, Եւ ինչ է անոր զօրութեան գերազանց մեծութիւնն ի մեզ,
հաւատացեալս, անոր հզօր զօրութեանը ներ-
20 գործութեամբ, Զոր Քրիստոսի վրայ ի գործ դրաւ, երբ յարոյց զնա ի մեռելոց, և նստոյց իւր աջ
21 կողմն յերկինս Ամէն իշխանութեան և պետութեան և զօրութեան և տէրութեան վրայ, և ամէն անուան վրայ որ կ'անուանուի, ոչ միայն այս
22 աշխարհիս մէջ, այլ և հանդերձելոյն մէջ. Եւ ամէն բան անոր ոտից տակ հնազանդեցուց, և ամէն բաներու վրայ զինք գլուխ եկեղեցւոյ,
23 Որ անոր մարմինն է, լրումն նորա՝ որ կը լնու զամենայն յամենայնի,

Գլ. Բ

1 Եւ ՚ի՛նքնաձայօրէն զձեզ որ մեռած էիք յանցա-
2 նաց և մեղաց մէջ, Որոց մէջ երբեմն կը քալէիք ըստ ընթացից աշխարհիս, ըստ իշխանի իշխանութեան օդոյս, այն ոգւոյն որ հիմա կը գործէ
3 յորդիս ապստամբութեան. Որոց մէջ երբեմն մենք ամէնքս կը շրջէինք մեր մարմնոյն ցանկութիւններով, և կը կատարէինք մարմնոյն և մտաց կամքը, և էինք բնութեամբ բարկութեան որ-
4 դիք, ինչպէս ուրիշները. Բայց Աստուած որ մեծ է ողորմութեամբ, իւր առատ սիրոյն համար ո-
5 րով սիրեց զմեզ, երբ յանցանաց մէջ մեռած էինք, կենդանացուց զմեզ Քրիստոսի հետ,
6 (դուք շնորհօք փրկուած եք,) Եւ անոր հետ յարոյց ընդ և անոր հետ նստոյց երկնաւորներուն
7 մէջ ի Քրիստոս Յիսուս, Որ գալու դարերու մէջ յայտնի ընէ իւր շնորհոյ գերազանց մեծութիւնը քաղցրութեամբն որ ցուցուց մեր վրայ ի Քրիս-
8 տոս Յիսուս։ Վասն զի շնորհօք փրկուած եք դուք հաւատոյ միջոցաւ. և այս ոչ թէ ձեզնէ է,
9 այլ Աստուծոյ պարգեւն է. Ոչ թէ գործերէն, որ-
10 պէս զի չպարծի ոք. Քանզի մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած բարի գործերու համար, որոց Աստուած յառաջագոյն պատրաստեց զիրենք որ անոնց մէջ քալենք։
11 Ուստի յիշեցէք որ դուք, երբեմն ըլլալով մարմնով հեթանոսներ, (որ անթլփատութիւն կ'ըսուին անոնցմէ որ կ'ըսուին թլփատութիւն
12 ձեռագործ ի մարմնի,) Էիք անառն անանց Քրիստոսէն, և հեռացած էիք Իսրայելի քաղաքակցութենէն, և օտարացած՝ խոստման ուխտերէն, և բնաւ յոյս չունէիք, և աշխարհի մէջ
13 անաստուած էիք։ Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ երբեմն հեռաւոր էիք, մերձաւոր

14 Եղաք Քրիստոսի առեւտրը։ Վասն զի նա է մեր
խաղաղութիւնը, որ երկուքը մի ըրաւ, և միջ-
նորմը, այսինքն թշնամութիւնը, քակեց իւր
15 մարմնով, Եւ խափանեց պատուիրաններուն օ-
րէնքը որ հրամաններով էր. որ իրմով այն եր-
կուքը մի նոր մարդ հաստատէ, և խաղաղութիւն
16 ընէ. Եւ հաշտեցնէր երկուքն ի մի մարմին Աս-
տուծոյ հետ խաչովը. քանզի անով սպանեց
17 թշնամութիւնը. Եւ եկաւ խաղաղութիւն քարո-
զեց ձեզ որ հեռուն էիք, և անոնց՝ որ մօտ էին։
18 Քանզի անոր ձեռօք մենք երկուքս ունինք մի
19 Հոգւով մտնենալն առ Հայր։ Ուրեմն այլ ևս
օտար և պանդուխտ չէք, այլ սուրբերուն քա-
20 ղաքակից և Աստուծոյ ընտանիք։ Շինուած ա-
ռաքելոց և մարգարէից հիման վրայ, որոյ ան-
21 կեան գլուխը Յիսուս Քրիստոս է. Որով բոլոր
շէնքն ի միասին յարմարութեամբ կապմուած՝
22 կ'աճի և կ'ըլլայ սուրբ տաճար ի Տէր. Որով և
դուք ի միասին կը շինուիք ըլլալ Աստուծոյ բնա-
կարան Հոգւով։

Գլ. Գ

1 Ասոր ես Պօղոս, կապեալ Յիսուսի Քրիստոսի
2 ձեզ հեթանոսաց համար. Անշուշտ լսած էք Աս-
տուծոյ շնորհաց առաքելութիւնը որ տրուած է
3 ինձ ձեզի համար, Թէ ինձ այն խորհուրդը յայտ-
նութեամբ ցուցուեցաւ. (ինչպէս յառաջագոյն
4 համառօտիւ գրեցի Ձեզ, Որով կրնաք կարդալ
և ի միտ առնուլ իմ տեղեակ ըլլալս Քրիստոսի
5 խորհրդոյն.) Որ ուրիշ դարերու մէջ չծանուցուե-
ցաւ մարդոց որդիներուն, ինչպէս հիմա Հոգւով
յայտնուեցաւ իւր սուրբ առաքեալներուն և մար-
6 գարէներուն. Որ հեթանոսներն ըլլան Քրիստոս-
ով ժառանգակից և մարմնակից և անոր խոստ-

7 մանը հաղորդ աւետաբանով. Որոյ ես սպասա-
ւոր եղայ Աստուծոյ շնորհաց պարգեւին համեմատ
որ տրուեցաւ ինձ իւր զօրութեան ներգործու-
8 թեամբը. ինձ՝ որ բոլոր սրբոց փոքրագոյնին եմ,
այս շնորհքը տրուեցաւ, հեթանոսաց մէջ Քրիս-
9 տոսի անքննելի ճոխութիւնը քարոզել, Եւ ա-
մէնքը լուսաւորել, Թէ ինչ է այն խորհրդոյն
անօրէնութիւնը որ ի յաւիտենից ծածկուած էր
10 Աստուծոյ վրով որ ամէն բան *ստեղծեց. Որ
հիմա Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը
եկեղեցւոյ ձեռօք յայտնի ըլլայ իշխանութեանց
11 և պետութեանց որ յերկինս են, իր յաւիտե-
նական նախասահմանութեան համեմատ, զոր
բրաւ ձեռօք Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
12 Որով ունինք համարձակութիւն և մտանելով
վստահութեամբ հաւատալով ի նմա։
13 Ուստի կ'աղաչեմ որ չձանձրանաք իմ նեղու-
թիւններուս պատճառաւ, որ ձեզի համար են,
14 և որ ձեր փառքն են։ Վասն որոյ ծունր դնելով
15 Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հօր առջև, Որմէ
ամէն ազգաւորմէ յերկինս և յերկրի կ'առնուի
16 անուն, Կ'աղաչեմ որ տայ ձեզ իւր փառաց ճո-
խութեանը չափով՝ զօրութեամբ հաստատուիլ
17 իւր Հոգւովը ի ներքին մարդն. Որպէս զի Քրիս-
տոս բնակի հաւատով ձեր սիրտերուն մէջ, և
դուք սիրով արմատացած և հաստատուած ըլ-
18 լաք, Որ կարենաք հասկնալ բոլոր սուրբերուն հետ,
Թէ ինչ է լայնութիւնը և երկայնութիւնը
19 և խորութիւնը և բարձրութիւնը. ԵՒ յանձին ճանչ-
նալ Քրիստոսի սէրը որ առաւել է քան զգիտու-
թիւն, որպէս զի լցուիք Աստուծոյ բոլոր լրու-
20 թեամբը։ Արդ անոր որ կարող է առաւելութեամբ
ընել առաւել քան զամենայն զոր կը խնդրենք

*Ոմն., Յիսուս Քրիստոսով ստեղծեց

կամ կը խորհինք, այն զօրութեամբ որ մեր մէջ
21 կը գործուի, նման փառք յհկեղեցւոյ Քրիստոս
Յիսուսով բոլոր դարերու մէջ յաւիտեանս յա-
ւիտենից։ Ամէն։

Գլ. Դ

1 Ուստի կ'աղաչեմ զձեզ ես որ Տէրոջը համար
կապուած եմ, որ դուք այնպէս քալէք, ինչպէս
2 կը վայելէ կոչմանը որով կոչուեցաք, Ամենայն
խոնարհութեամբ և հեզութեամբ, երկայնմտու-
3 թեամբ, սիրով ներելով միմեանց, ջանալով պա-
հել Հոգւոյն Սբ֊ոյ միաբանութիւնը խաղաղու-
4 թեան կապով. Մի մարմին և մի հոգի, ինչպէս որ
5 կոչուեցաք ձեր կոչմանը մի յոյսով. Մէ՛ Տէր,
6 մի հաւատք, մի մկրտութիւն. Մէ՛ Աստուած
և Հայր ամենուն, որ է ամենուն վրայ և ամենուն
7 հետ և *ձեր ամենուն մէջ։ Բայց մեզ իւրաքան-
չիւրին տրուած է շնորհք Քրիստոսի պարգեւին
8 չափով։ Վասն որոյ կ'ըսէ Թէ Բարձրը ելաւ, գե-
րեց գերութիւնը, և տուաւ պարգեւներ մարդոց։
9 Ելաւն ի՞նչ է, եթէ ոչ որ իջաւ առաջ երկրին
10 վարի կողմերը։ Այն որ իջաւ՝ նոյն է որ ելաւ
քան զբոլոր երկինս ի վեր, որպէս զի լնու զամե-
11 նայն։ Եւ ինք տուաւ զոմանս առաքեալս, զո-
մանս՝ մարգարէս, զոմանս՝ աւետարանիչս, զո-
12 մանս՝ հովիւս և վարդապետս, Սուրբերուն կա-
տարելութեանը համար, պաշտօնին գործին հա-
մար, Քրիստոսի մարմնոյն շինութեանը համար.
13 Մինչև որ ամենքս հասնինք միաբանութեան հա-
ւատոյ և Աստուծոյ Որդին ճանչնալու, կատար-
եալ մարդ ըլլալու, Քրիստոսի լիութեան հասա-

*Ոմանք, մեր

14 կին չլլան ունայնալու. Որ այսուհետև չըլլանք
տղայք երերել և տարին անդին տատանուիլ
վարդապետութեան ամէն հովէն՝ մարդոց խա-
բեութեամբ, որ խորամանկութեամբ կը խարեն
15 մոլորեցնելու. Այլ սիրով հետևելով ճշմարտու-
թեան, աճինք յամենայնի անով որ գլուխ է,
16 այսինքն՝ Քրիստոս. Որմէ բոլոր մարմինը միան-
գամայն կազմուած, և բոլոր յօդուածներով ի-
րարու հաղորդուելով կցուած, իւրաքանչիւր մա-
սին չափով գործելովը, կատարած աճումի մարմնոյն
իրեն շինութեանը համար սիրով։
17 Ուստի զայս կ'ըսեմ և կը վկայեմ ի Տէր, որ
դուք այլևս չքալէք ինչպես ուրիշ հեթանոսները
18 կը քալեն իրենց մտաց ունայնութեանը մէջ. Որոց
խաւարած է, և օտարացած են
Աստուծոյ կեանքէն տգիտութեան պատճառաւ
որ անոնց մէջ է իրենց սրտին *կուրութեանը
19 համար. Որ անզգայ ըլլալով, զիրենք անառակու-
թեան տուին, գործել ամէն կերպ պղծութիւն
20 †ագահութեամբ։ Բայց դուք այսպես չսորվեցաք
21 զՔրիստոս, եթէ անոր վրայ լսեցիք և անկէ սոր-
ված էք, ինչպէս որ է ճշմարտութիւնը Յիսուսի
22 մէջ. Որպէս զի ի բաց հանէք ձեզի այն որ չէր
առաջին վարմանն պէս է, հին մարդը, որ ապա-
23 կանելով է խաբեալ ցանկութեամբք, եւ ձեր
24 մտաց հոգւովը նորոգուիք, եւ հագնիք նոր մար-
դը, այն որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած
է արդարութեամբ և ճշմարիտ սրբութեամբ։
25 Ուստի սուտը թողլով՝ ճշմարտու-
թիւն խօսեցէք իւրաքանչիւր իր ընկերին հետ,
26 զի մենք իրարու անդամներ ենք։ Բարկացաք,
մի՛ մեղանչէք. արեգակը ձեր բարկութեան վրայ

*Յոյն, բթութեանը
†Կամ, անյագութեամբ

27 չմանէ։ Եւ Սատանային տեղի մի՛ տաք։ (28) Ով
որ գողութիւն կ'ընէր, այլ ևս չգողնայ, այլ մա-
նաւանդ բարի գործի պարապելով աշխատի իւր
ձեռօքն, որ կարող ըլլայ *տալ անոր որ կարօտ է։
29 Ամպականալ խօսք չելլէ ամենևին ձեր բերնէն,
այլ ինչ որ բարի է չինութեան համար ըստ պի-
30 տոյից, որպէս զի լսողներուն չնորհք տայ։ Եւ
մի՛ տրտմեցունէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով
31 կնքուեցաք փրկութեան օրուան համար։ Ամէն
դառնութիւն և բարկութիւն և սրամտութիւն
և աղաղակ և հայհոյութիւն վերցուի ձենէ բոլոր
32 չարութեամբ հանդերձ։ Եւ իրարու հետ քաղցր
եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս Աս-
տուած Քրիստոսով ներեց ձեզ։

Գլ. Ե

1 Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի որդիներու
2 պէս։ Եւ սիրով քալեցէք, ինչպէս և Քրիստոս
սիրեց զմեզ և իւր անձը մատնեց մեզի համար՝
անուշահոտ պատարագ և զոհ ըլլալով Աստուծոյ։
3 Բայց պոռնկութիւնն և ամէն պղծութիւն կամ
ագահութիւն անունն անգամ չլսուիլ ձեր մէջ,
4 (ինչպէս որ կը վայելէ սուրբերուն), Եւ գաղտու-
թիւն կամ յիմարական խօսք կամ խեղկատա-
կութիւն որ չվայելեր, այլ մանաւանդ գոհութիւն։
5 †Քանզի գիտէք՝, որ բնաւ պոռնիկ կամ պիղծ
կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստոսի և Աս-
տուծոյ թագաւորութեան մէջ ժառանգութիւն
6 չունի։ Թող չխաբե ոք զձեզ ունայն խօսքերով։
քանզի այս բաներուն համար Աստուծոյ բարկու-
թիւնը կու գայ անհնազանդութեան որդւոց վրայ։

*Յայն, հաղորդել
†Կամ, Այս իմանալով գիտնաք

7 Ուստի անոնց հաղորդ մի՛ ըլլաք։ (8) Քանզի երբեմն
դուք խաւար եիք, բայց հիմա լոյս էք ի Տէր.
9 լուսոյ որդիներու պէս քալեցէք. Վասն զի *Հոգ-
ւոյն պտուղն ամէն բարութեամբ և արդարու-
10 թեամբ և ճշմարտութեամբ է։ Քննեցէք ինչ է
11 Տէրոջը հաճելին. Եւ կցորդ մի՛ ըլլաք խաւարին
անպտուղ գործերուն, այլ մանաւանդ յանդիմա-
12 նեցէք։ Քանզի անոնց մէջ ծածուկ գոր-
13 ծուածները խօսիլ անգամ ամօթ է։ Բայց ամէն
բան յանդիմանուելով՝ լուսով յայտնի կ'ըլլայ՝
14 քանզի ամէն բան որ յայտնի կ'ըլլայ՝ լոյս է։ Անոր
համար կ'ըսէ, Արթնցիր դուն որ կը քնանաս, և
կանգնէ մեռելներէն, և Քրիստոս լոյս պիտի տայ
քեզ։
15 Ուստի նայեցէք թէ ինչպէս զգուշութեամբ
16 պիտի քալէք, ոչ թէ անմիտներու պէս, Այլ ի-
մաստուններու պէս. գնեցէք ժամանակը, քանզի
17 օրերս չար են։ Վասն որոյ անմիտ մի՛ ըլլաք, այլ
18 իմացէք թէ ինչ է Տէրոջը կամքը։ Եւ մի՛ արբե-
նաք գինւով յորում անառակութիւն կայ, այլ
19 Հոգւով լցուեցէք. Եւ սաղմոսիք և օրհնու-
թեամբ և հոգևոր երգերով ձեր մէջ խօսակ-
ցելով՝ երգեցէք և սաղմոս ըսէք Տէրոջը ձեր
20 սիրտերուն մէջ։ Միշտ ամէն բանի համար
գոհութիւն տուէք Աստուծոյ և Հօր յանուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
21 Իրարու հնազանդ եղէք երկիւղիւն †Աստուծոյ։
22 Կանայք հնազանդ ըլլան իւրեանց արանց որպես
23 թէ Տեառն. Քանզի այրն է գլուխ կնոջ, ինչպէս
և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և ինքն է
24 փրկիչ մարմնոյն։ Ուստի ինչպէս եկեղեցին հնա-
զանդ կ'ըլլայ Քրիստոսի, նոյնպէս և կանայք ա-
25 մէն բանի մէջ՝ իւրեանց արանց։ Արք, սիրեցէք

*Ոմանք, լուսոյ †Ոմանք, Քրիստոսի

զկանայս ձեր, ինչպես և Քրիստոս սիրեց զեկեղեցին, և իւր անձը մատնեց անոր համար։ Որպէս զի սրբէ զնա և մաքրէ աւազանին ջրով բանիւ։ Որ ինքը կեցուցէ զեկեղեցին իւր դիմացը փառաւոր, որ չունենայ պատ կամ խորտոմ-Թիւն կամ այսպիսի ինչ, այլ որ ըլլայ սուրբ և անարատ։ Նոյնպէս և արք պարտին սիրել իրենց կիներն իրենց մարմիններուն պէս։ ով որ իւր կինը կը սիրէ՝ իւր անձը կը սիրէ։ Քանզի ոչ ոք երբեք կ'ատէ իւր անձը, այլ կը սնուցանէ և կը խնամէ զայն, ինչպես որ *Տէրը՝ զեկեղեցին։ Վասն զի մենք անոր մարմնոյն անդամներն ենք՝ անոր մարմինէն և անոր ոսկրներէն։ Վասն որոյ մարդ պիտի Թողու իւր հայրը և մայրը, և յարի իւր կնոջը, և երկուքը պիտի ըլլան մի մարմին։ Այս խորհուրդը մեծ է, բայց ես կ'ըսեմ Քրիստոսի և եկեղեցւոյ վրայ։ Սակայն ձեռնէ իւրաքանչիւր ոք իւր կինն այնպէս սիրէ՝ որպէս Թէ իւր անձը, և կինն ակնածէ իւր առնէն։

Գլ. Զ

Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողացն ի Տէր, զի այն է արժանը։ Պատուէ զհայրդ և մայրդ, (որ առաջին պատուիրանն է խոստմամբ,) Որպէս զի բարի ըլլայ քեզ, և երկար կեանք ունենաս երկրի վրայ։ Եւ դուք, հարք, մի՛ բարկացունէք ձեր որդիներն, այլ սնուցէք զնոսա Տէրոջը վարժութեամբ և խրատով։ Ծառայք, հնազանդ եղէք ձեր տերանց ըստ մարմնոյ, ահիւ և դողութեամբ ձեր սրտին միամտութեամբը, որպես Թէ Քրիստոսի։ Ոչ Թէ մարդահաճոյի պէս առ ականէ ծառայելով, այլ Քրիստոսի ծառաներու պէս՝

*Ծ. Տէրը, Քրիստոս

7 կատարելով ի սրտէ Աստուծոյ կամքը։ Ծառայութեամբ ծառայելով որպէս Թէ Տէառն, և ոչ
8 Թէ մարդոց։ Գիտնալով որ իւրաքանչիւր ինչ բարիք որ ընէ, զնոյն պիտի ընդունի Տէրոջմէն,
9 Թէ՛ ծառայ ըլլայ և Թէ՛ ազատ։ Եւ դուք, տեարք, զնոյն ըրէք անոնց, և Թողէք սպառնալիքը, գիտնալով որ Ա՛ ձեր և՛ ձեր Տէրն յերկինս է։ և աստուածին չկայ անոր քով։
10 Այսուհետև, եղբարք, զօրացէք Տէրոմբ և անոր զօրութեան կարողութեամբը։ Հագէք ձեր
11 վրայ Աստուծոյ սպառազինութիւնը, որ կարող
12 ըլլաք դէմ դնել հնարից Սատանային։ Քանզի մեր պատերազմը չէ արեան և մարմնոյ հետ, այլ իշխանութիւններու։ Ն պետութիւններու հետ, Ն այս *խաւարային աշխարհիս՝ իշխաններուն հետ, չար ոգիներուն հետ որ երկնաւորներուն մէջ են։
13 Վասն որոյ, առէք ձեր վրայ Աստուծոյ սպառազինութիւնը, որ կարող ըլլաք դէմ դնել չարու-
14 Թեան օրը, Եւ ամէն բան կատարելէ ետքը հաստատուն կենալ։ Ուստի կեցէք, ճշմարտութեամբ պնդելով ձեր մէջքը, և հագնելով արդարու-
15 Թեան զրահը։ Եւ ձեր ոտքերնուն հագցնելով խաղաղութեան աւետարանին պատրաստութիւ-
16 նը։ Եւ ի վերայ ամենայնի առէք հաւատոյ վահանը, որով կարող պիտի ըլլաք մարել չարին
17 ամէն կրակոտ նետերը։ Եւ առէք փրկութեան սաղաւարտը, և Հոգւոյն սուրը՝ որ Աստուծոյ
18 խօսքն է։ Ամենայն աղօթիւք և խնդրուածովք աղօթք ըրէք յամենայն ժամ Հոգւով, և ատոր վրայ հսկեցէք կատարեալ յարատեւութեամբ և
19 աղաչանօք բոլոր սուրբերուն համար, Ինձի համար ևս, որպէս զի խօսք տրուի ինձ որ բանամ բերանս համարձակութեամբ յայտնել աւետարա-

*Ծ. Տէրը, աշխարհիս խաւարին

20 Նին խորհուրդը. Որոյ համար գէտպանութիւն
կ'ընեմ կապանօքս, որ այնու համարձակիմ խօ-
սել ինչպէս որ պէտք է։
21 Բայց որպէս զի դուք ևս գիտնաք իմ վրաս
թէ ինչ կ'ընեմ ես, ամենայն ինչ պիտի ցուցնէ
ձեզ Տէրքիկոս սիրելի եղբայրը և հաւատա-
22 րիմ պաշտօնեայն ի Տէր։ Զոր այս բանին համար
զրկեցի ձեզ, որ գիտնաք դուք մեր վրայ, և
նա մխիթարէ ձեր սիրտերը։
23 Խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատով
հանդերձ Հօր Աստուծմէ և ի Տեառնէ Յիսուսէ
24 Քրիստոսէ։ Շնորհք ամենուն հետ որ անկեղծա-
թեամբ կը սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս։ Ամէն։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Տիմոթէոս, ծառայք Յիսուսի Քրիստոսի,
Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն որ ի Փի-
լիպպէ են՝ եպիսկոպոսներով և սարկաւագներով.
2 Շնորհք և խաղաղութիւն ձեզ Աստուծմէ մեր
Հօրմէն և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն անգամ որ
4 կը յիշեմ զձեզ, Ուրախութեամբ աղօթելով միշտ

ձեր ամենուն համար իմ բոլոր խնդրուածոցս
5 մէջ, վասն զի առաջին օրուընէ մինչև հիմա հա-
6 ղորդ եք աւետարանին. Այս մասին վստահ ըլլա-
լով թէ այն որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ,
պիտի կատարէ մինչև Յիսուսի Քրիստոսի օրը.
7 ինչպէս և ինձ արժան է խորհիլ զայս ձեր ամե-
նուն վրայ, վասն զի *ունիմ զձեզ սրտիս մէջ, և
վասն զի իմ կապերուս մէջ, և աւետարանին ջա-
տագովութեան և հաստատութեան մէջ, ամենքդ
8 հաղորդ եք ընդհաց որ եղած է ինձ։ Քանզի վկայ
է ինձ Աստուած, թէ ինչպէս անձուկ ունիմ ձեր
9 ամենուն Քրիստոս Յիսուսի գթով։ Ու այս ա-
ղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ առաւե-
լու գիտութեամբ և ամենայն ընտրողութեամբ,
10 Որ դուք սուրբը բաները զանազանէք, որպէս զի
մինչև Քրիստոսի օրն ըլլաք անկեղծ և առանց
11 գայթակղութեան. Արդարութեան պտուղներով
լցուած Յիսուսի Քրիստոսի ձեռօք ի փառս և
ի գովեստ Աստուծոյ։
12 Կ'ուզեմ որ գիտնաք, եղբարք, թէ ինչ որ
պատահեցաւ ինձ՝ ևս աւելի պատճառ եղաւ ա-
13 ւետարանին յառաջադիմութեան. Մինչև իմ կա-
պերս որ Քրիստոսի համար են՝ յայտնի եղան բո-
14 լոր պալատան մէջ և ուրիշ ամենուն. Ու եղբայր-
ներուն որ ի Տէր՝ շատերը քաջալերուեցան իմ
կապերէս, ևս աւելի համարձակել խօսել Աստու-
15 ծոյ խօսքն առանց երկիւղի։ Ոմանք առ նախանձ
ձու և հակառակութեան, և ոմանք առ բարեհա-
16 րութեան կը քարոզեն զքրիստոս. †Ասոնք հա-
կառակութեան համար կը պատմեն զքրիստոս,
ոչ թէ անկեղծութեամբ, կարծելով աւելցնել

*կամ, վասն զի ունիք զիս չէք սրտերնուն մէջ
†Ոմանք՝ 17 Եբրայեցի տառը՝ յետ 16 Եբրայեցի տառին
դրուին

17 վիշտ իմ կապերուս վրայ. իսկ ասոնք սիրոյ հա-
մար, քանզի գիտեն Թէ կեցած եմ պատասխան
18 տալ աւետարանին համար։ Բայց ի՞նչ է. ո՛ր կեր-
պով որ ըլլայ, Թէ՛ պատճառանօք և Թէ՛ ճշմար-
տութեամբ, Քրիստոս կը պատմուի, և սորը վրայ
19 ուրախ եմ և ուրախ ալ պիտի ըլլամ, Քանզի
գիտեմ Թէ սորը վախճանին իմ փրկութեանս
համար պիտի ըլլայ ձեր ինդրուածովը, և Ցի-
20 սուսի Քրիստոսի Հոգւոյն օգնականութեամբ, իմ
եռանդուն ակնկալութեանս և յուսոյս համե-
մատ, որ բանով մը ամօթ չկրեմ, այլ կատար-
եալ համարձակութեամբ ինչպէս միշտ, Նոյնպէս
և այժմ Քրիստոս փառաւորի իմ մարմնոյս մէջ
21 Թէ՛ ապրիմ և Թէ՛ մեռնիմ, Քանզի ինծի համար
22 ապրիլ Քրիստոս է, և մեռնիլ՝ օգուտ։ Ապա
եթէ ապրելս ի մարմնի գործոյս,
23 այլ և չեմ գիտեր զո՛րն ընտրեմ։ Երկուս կողմ-
մանէ ես նեղը մնացած եմ, ունենալ և Քրիստոսի
հետ ըլլալ փափաքելով, քանզի այն չատ աւելի
24 լաւ է, Բայց մնալ ի մարմնի ձեզի համար աւելի
25 հարկաւոր է։ Եւ առ այս համոզուած ըլլալով՝
գիտեմ որ պիտի կենամ և մնամ ձեր ամենուն
հետ, որ գուք զարգանաք և ուրախ ըլլաք հա-
26 ւատով. Որ ձեր պարծանքն իմ վրաս աւելի ըլ-
լայ Քրիստոս Յիսուսով՝ իմ գալստեանս պատ-
ճառաւ դարձեալ առ ձեզ։
27 Միայն Թէ ինչպէս կը վայելէ Քրիստոսի աւե-
տարանին, այնպէս վարուեցէք. որ Թէ՛ գամ և
ձեզի տեսնեմ, և Թէ՛ հեռու ըլլամ, ձեր վրայ
լսեմ որ գուք հաստատուն կը կենաք մի հոգւով,
և միաչունչ պատերազմակից կ'ըլլաք աւետարա-
28 նին հաւատոյն համար. Ու բանով մը մի՛ զար-
հուրիք հակառակորդներէն, որոց կորստեան ա-
29 պացոյց է այն, և ձեզ՝ փրկութեան, Այն ալ
Աստուծմէ է. քանզի ձեզ տրուեցաւ Քրիստոսի

համար ոչ միայն հաւատալ անոր, այլ և անոր
30 համար չարչարուիլ, Նոյն պատերազմն ունենա-
լով՝ զոր տեսաք յիս և հիմա կը լսէք իմ վրաս։

Գլ. Բ

1 Ուստի եթէ կայ Քրիստոսով մխիթարութիւն,
եթէ սիրոյ սփոփանք, եթէ Հոգւոյ հաղորդու-
2 թիւն, եթէ գթութիւն և ողորմութիւն, Ուրա-
խութիւնս լցէք դուք, նոյն խորհուրդն ունե-
ցէք, մի և նոյն սէրն ունենալով, միաչունչ, միա-
3 խորհուրդ. Մի՛ ինչ հակառակութեամբ կամ
անպարծեցողութեամբ, այլ խոնարհութեամբ զիրար
4 լաւ համարեցէք քան ձեր անձերը. Միայն ձեր
անձերուն մի՛ նայիք. այլ իւրաքանչիւր իւր ըն-
5 կերներ Նաև։ Զենի իւրաքանչիւրը ոք Թող ունե-
6 նայ նոյն միտքը, որ էր ի Քրիստոս Յիսուս. Որ
Աստուծոյ կերպարանքն ունենալով, *յափչտա-
կութիւն չհամարեցաւ ըլլալն հաւասար Աստու-
7 ծոյ. Այլ զանձն ունայնացոյց ծառայի կերպա-
րանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կեր-
8 պարանօք գտնուելով իբրև զմարդ, խոնար-
հեցոյց զինք, հնազանդ եղաւ մինչև ի մահ, և
9 ի մահ խաչի։ Վասն որոյ և Աստուած բարձրացոյց
զնա յոյժ, և տուաւ նմա անուն որ ի վեր է քան
10 զամենայն անուն. Որ յանուն Յիսուսի ամէն
ծունր կրկնի, երկնաւորաց և երկրաւորաց և
11 անդրադամեռեալնաց, Եւ ամէն լեզու դաւանի
Թէ Յիսուս Քրիստոս Տէր է ի փառս Աստուծոյ
12 Հօր։ Ուստի, սիրելիք իմ, ինչպէս միշտ հնա-
զանդ եղաք, ոչ միայն ի ներկայութեանս, այլ
և աւելի հիմա ի բացակայութեանս, ահիւ և
դողութեամբ ձեր անձերուն փրկութիւնը գոր-

*կամ, յափչտակելու բան

13 ծեցէք. Քանզի Աստուած է որ ձեր մէջ կը գործէ կամելը և ընկալ է՛ր հաճութեանը համար։
14 Ամէն բան առանց արտնջանաց և վէճի ըրէք։
15 Որ ըլլաք ամրիծ և անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղադրանաց, կամակոր և խոտորեալ ազգին մէջ. որոյ մէջ դուք լուսաւորներու
16 պէս կը փայլիք յաշխարհի, կենաց խօսքը պնդբռնելով՝ պարծանք ըլլալու համար ինձ Քրիստոսի օրը, թէ ի զուր չըվազեցի, և ի զուր չաշ-
17 խատեցայ։ Բայց թէպէտ և ձեր հաւատոյ պատարագին և պաշտաման վրայ ընծայուիմ, կ'ուրախանամ և ձեր ամենուն ուրախակից եմ։
18 Նոյնպէս և դուք ուրախացէք և ուրախակից եղէք ինձ։
19 Արդ կը յուսամ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղ առ ձեզ ղրկել, որ և իմ սիրտս հանգչի երբ
20 գիանամ ձեր վիճակը։ Քանզի չէ՛ր պատկից ոքը նմանը չունիմ, որ մտերմաբար հոգայ ձեզի համար։
21 Քանզի ամէնքը կը փնտռեն իրենցը՝ ոչ թէ Յի-
22 սուսի Քրիստոսինը։ Բայց դուք գիտէք անոր փորձը, որ ինչպես որդի հօր հետ՝ ինծի հետ
23 ռայեց ինծի հետ յաւետարանին։ Ուստի կը յուսամ ղրկել զնա վաղ, երբ տեսգիամ թէ ինչ
24 պիտի ըլլամ։ Բայց վստահութիւն ունիմ ի Տէր
25 որ և ես ի մօտոյ պիտի գամ։ Միայն թէ հարկաւոր համարեցայ ղրկել առ ձեզ զԵպափրոդիտոս զիմ եղբայր և գործակից և զինուորակից, զոր դուք ղրկեցիք և ոչ իմ պիտոյից ծառայեց։
26 Վասն զի և ինք կը փափաքէր յոյժ [տեսնել] զձեզ ամենդդ. և կը տրտմէր որ լսած էիք թէ
27 հիւանդացաւ։ Եւ արդարև հիւանդացաւ մերձ ի մահ, բայց Աստուած ողորմեցաւ նմա. ոչ թէ նմա միայն, այլ և ինձ, որ տրտմութեան վրայ
28 տրտմութիւն չունենայի։ Վասն որոյ աւելի փութով ղրկեցի զնա որ դուք տեսնելով զնա դարձեալ ուրախ ըլլաք, և ես առանց տրտմութեան
29 ըլլայ։ Ուրեմն ընդունեցէք զնա ի Տէր ամենայն ուրախութեամբ, և բանեցէք այնպիսիները
30 պատուականներու կարգը։ Քանզի մօտեցաւ ի մահ Քրիստոսի գործին համար՝ վտանգէ մէջ դնելով իւր կեանքը, որ լեցնէ ձեր ծառայութեան պակասութիւնն առ իս։

Գլ. Գ

1 Ուստի, եղբարք, ուրախ եղէք ի Տէր։ Նոյն բաները գրել ձեզ ինձ ձանձրութիւն չէ, և ձեզ ա-
2 պահովութիւն է։ Զգուշացեք չուներէն, զգուշացեք չար մշակներէն, զգուշացեք կրճատու-
3 թենէն։ Քանզի Թլփատութիւնը մենք ենք, որ հոգւով կը պաշտենք զԱստուած, և կը պարծինք Քրիստոս Յիսուսով, և մարմնով վրայ չէ մեր
4 վստահութիւնը։ Թէպէտ և ես ունիմ վստահութիւն մարմնոյ վրայ. եթէ այլ ոք կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմնոյ վրայ, ես աւելի ես։
5 Ութօրեայ Թլփատուած, Իսրայելի ազգէն, Բենիամինի ցեղէն, Եբրայեցի՝ Եբրայեցիներէ, ըստ
6 օրինաց փարիսեցի. Նախանձաւոր ըլլալու կողմանէ կը հալածէի եկեղեցին. օրէնքին արդարու-
7 թեանը կողմանէ անարատ էի։ Բայց ինչ որ շահ էր ինձ, զայն վնաս համարեցայ Քրիստոսի համար։
8 Եւ արդարև զամենայն ինչ վնաս կը համարիմ վասն գերազանց գիտութեան Տեառն իմոյ Քրիստոսի Յիսուսի. որոյ վասն զկնի ելայ ամենայնէ, և աղտեղութիւն կը համարիմ, որ զՔրիստոս շա-
9 հիմ, Եւ անոր մէջ գտնուիմ, ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ որ օրէնքէն է, այլ ի Հաւատոյն Քրիստոսի այն արդարութիւնը որ Աս-
10 տուծմէ է հաւատով։ Ճանչնալ զնա և անոր յարութեան զօրութիւնը և անոր չարչարանաց հա-

ղորդութիւնը, առնուլ անոր մահուան կերպա-
11 բանքը. Որ Թէրևս հասնիմ մեռելոց յարու-
12 թեան, ոչ Թէ ես արդէն առած եմ, կամ արդէն
կատարեալ եղած եմ, այլ զհետ եմ որ բռնեմ
հշդաձուլը, որոյ համար և բռնուեցայ Քրիստոս
13 Յիսուսէ։ Եղբարք, ես չեմ համարիր Թէ բռնած
եմ. բայց բան մը Յ՚ընէ, մոռնալով եւսիններըն
14 և դիմելով առջիններուն, Ըստ նպատակին կը
վազեմ ի մրցանակն Աստուծոյ վերին կոչման որ
15 ի Քրիստոս Յիսուս։ Ուստի մենք ամենքս որ
կատարեալ ենք՝ զայս խորհինք, և եթէ կը խոր-
հինք բան մը ուրիշ կերպով, զայն ևս պիտի
16 յայտնէ ձեզ Աստուած։ Միայն Թէ առ ինչ որ
հասած ենք՝ նոյն կանոնին համեմատ քալենք,
17 նոյն խորհուրդն ունենանք։ Նմանող եղէք ինձ,
եղբարք, և նայեցէք անոնց որ կը քալեն այնպես,
18 ինչպես որ օրինակ ունիք զմեզ։ Քանզի շատերը
կը քալեն, որոց համար շատ անգամ կ՚ըսէի ձեզ,
և հիմա լալով ևս կ՚ըսեմ, Թէ են Քրիստոսի խա-
19 չին թշնամիներ։ Որոց վախճանը կորուստ է, որոց
Աստուածը որովայնն է, և փառքն՝ յամօթ իւր-
20 եանց, որ երկրաւոր բաները կը մտածեն։ Բայց
մեր *քաղաքականութիւնն յերկինս է, ուստի և
կը սպասենք Փրկչին, Տեառն Յիսուսի Քրիստոսի։
21 Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը կերպա-
րանակից ըլլալ իւր փառաւոր մարմնոյն, այն
զօրութեամբ որ կարող է հնազանդեցնել ա-
մէնն իրեն տակ։

Գլ. Գ

1 Ուստի, եղբարք իմ սիրելիք և անձկալիք, ու-

*կամ, կենցաղավարութիւնը

րախութիւնս և պսակս, այսպես հաստատուն կե-
ցէք ի Տէր, սիրելիք։
2 Զեւոդիա կ՚աղաչեմ և զՍինտիքէ կ՚աղաչեմ որ
3 մի և նոյն խորհուրդն ունենան ի Տէր։ Արդարև
զքեզ ևս կ՚աղաչեմ, ճշմարիտ լծակից ՛ս, դու ևս
օգնական եղիր անոնց, որ ինձի հետ աշխատեցան
յաւետարանին՝ կղեմէս և ուրիշ գործակիցներուս
4 հետ, որոց անուանք կենաց գիրքին մէջ են։ Ու-
րախ եղէք ի Տէր յամենայն ժամ. գարձեալ կ՚ը-
5 սեմ, ուրախ եղէք։ Ձեր գթագրութիւնն յայտնի
6 ըլլայ ամէն մարդու. Տէրը մօտ է։ Բանի մը հա-
մար հոգ մի՛ ընէք. այլ ամէն բանի մէջ աղօ-
թիւք և պաղատանօք, գոհութեամբ հանդերձ,
ձեր խնդրուածքներն յայտնի ըլլան Աստուծոյ.
7 Ու Աստուծոյ խաղաղութիւնը որ ի վեր է քան
զամենայն միտս՝ ձեր սիրտերը և միտքը պիտի
8 պահպանէ Քրիստոս Յիսուսով։ Վերջապէս, եղ-
բարք, ինչ որ ճշմարտութեամբ է, ինչ որ պար-
կեշտութեամբ, ինչ որ արդարութեամբ, ինչ որ
մաքրութեամբ, ինչ որ սիրալի, ինչ որ բարի
հառաչուած, ինչ առաքինութիւն և ինչ գովու-
9 թիւն որ կայ, զանոնք խորհեցէք։ Ինչ որ սոր-
վեցաք և առիք և լսեցիք և տեսաք իմ վրաս,
զայն ըրէք. և խաղաղութեան Աստուածը ձեզի
հետ պիտի ըլլայ։
10 Մեծապէս ուրախացայ ի Տէր, որ հոգը զոր ու-
նիք իմ վրաս՝ հիմա նորոգուեցաւ, ինչպես և
կը հոգայիք ևս, միայն Թէ պատեհութիւն չու-
11 նէիք։ Ոչ Թէ կարօտութեան համար կ՚ըսեմ,
քանզի ես սորվեցայ գոհ ըլլալ իմ վիճակիս մէջ։
12 Գիտեմ չքաւորութիւն կրել, գիտեմ շատ ունե-
նալ. ամէն բանի մէջ ամէն կերպով քաջ սոր-
ված եմ Թէ յագենալ, Թէ անօթենալ, Թէ
13 շատ ունենալ և Թէ չքաւորիլ։ Ամէն բանի

14 կարող եմ *անոնք որ զօրացուց զիս։ Բայց բարւոք
ըրիք որ նեղութեանս մէջ հաղորդ եղաք ինձ։
15 Դուք ևս գիտէք, Փիլիպպեցիք, որ ի սկզբան
աւետարանին երբ ես Մակեդոնիայէ ելայ, բնաւ
եկեղեցի մը հաղորդութիւն չբրաւ ինծի հետ
տալոյ և առնելոյ կողմանէ, այլ միայն դուք։ Որ
16 Թեսաղոնիկէ ևս մի անգամ և երկիցս զրկեցիք
17 ինչ որ պիտոյ էր ինծի։ Ոչ թէ տուրքը կը փնտռեմ,
այլ պտուղ կը փնտռեմ որ ձեր հաշուին վրայ
18 աւելնայ։ Բայց ես ամէն բան առած եմ և ա-
ւաւտօրէն ունիմ. լցուած եմ՝ Եպափրոդիտոսի
ձեռօք ձեր ընծաներէն ընդունելով, որ անոյշ հոտ
19 է, ընդունելի պատարագ, հաճոյ Աստուծոյ։ Եւ
իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը պիտի լնու
իր շռնութեան չափովը փառօք՝ Քրիստոս Յի-
20 սուսի ձեռօք։ Արդ Աստուծոյ և մեր Հօրը փառք
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
21 Ողջոյն տուէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յի-
22 սուսով։ Ողջոյն կու տան ձեզ եղբարք որ իմ
23 հետս են։ Ողջոյն կու տան ձեզ բոլոր սուրբերը,
24 մանաւանդ անոնք որ կայսեր տունէն են։ Շնորհք
Տեառն Յիսուսի Քրիստոսի ձեր ամենուն հետ ըլ-
լայ։ Ամէն։

*Ոմանք, Քրիստոսով

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամքն
2 Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր, ի Քրիստոս
սուրբ և հաւատացեալ եղբարց որ ի Կողոսա են.
3 Շնորհք և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ մեր
Հօրմէն [և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ]։

Զամենայն ժամ ձեզի համար աղօթելով՝ կը
գոհանանք Աստուծմէ և Տեառն մերոյ Յիսուսի
4 Քրիստոսի Հօրմէն, լսելով ձեր հաւատքն ի Քրիս-
տոս Յիսուս, և սէրը զոր բոլոր սուրբերուն վրայ
5 ունէք, Այն յուսոյ համար որ կը պահուի ձեզ
յերկինս, որոյ վրայ առաջուց լսեցիք ճշմարտա-
6 նին ճշմարտութեան խօսքով, Որ հասաւ ձեզ,
որպէս և բոլոր աշխարհ, և է պտղաբեր [և աճե-
ցուն,] ինչպէս ձեր մէջ, այն օրէնքն որ դուք
լսեցիք և ճանչցաք Աստուծոյ շնորհքը ճշմար-
7 տութեամբ, Ինչպէս որ սորվեցաք մեր սիրելի
ծառայակիցէն Եպափրասէ, որ ձեզի համար հա-
8 ւատարիմ պաշտօնեայ է Քրիստոսի, Որ և պատ-
մեց մեզ ձեր սէրն Հոգւով։
9 Վասն որոյ և մենք այն օրէնքէ որ լսեցինք՝
չենք դադրիր ձեզի համար աղօթելէ և խընդ-
րուածներ մատուցանելէ, որ կատարեալ ըլլաք

անոր կամացը գիտութեամբ բոլոր իմաստու-
10 թեամբ և հոգւոյր հանճարով. Որ գուա ՏԷրոջը
արժանի կերպով քալէք ամէն բանի մէջ հաճե-
ցունելով ՅԻ, ամէն բարի գործերու մէջ պտղա-
բեր ըլլալով, և աճելգուն Աստուծոյ գիտու-
11 թեամբը. Անոր փառաց կարողութեանը համե-
մատ ամենայն զօրութեամբ զօրացեալ բոլոր
համբերութեան և երկայնմտութեան համար ու-
12 րախութեամբ, Գոհանալով Հօրէ, որ արժանա-
ցուց զմեզ մասնակից ըլլալ լուսոյ մէջ Բաւ[illegible]
13 սուրբերուն վիճակին. Որ ազատեց զմեզ խաւա-
րէն իշխանութենէն, և փոխադրեց ի Թագաւո-
14 րութիւն իւր սիրելի Որդւոյն. Որով վրկութիւն
ունինք անոր արեամբ, այսինքն մեղաց թողու-
15 թիւն. Որ է պատկեր անեռևութենին Աստուծոյ,
16 անդրանիկ ամենայն արարածոց. Զանգի անով
ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ յերկինս և ինչ
որ յերկրի, անոնք որ կ'երևին և անոնք որ չեն
երևիր, Թէ աթոռք, Թէ տէրութիւնք, Թէ պե-
տութիւնք, Թէ իշխանութիւնք· ամենայն անով
17 և անոր համար ստեղծուեցաւ. Եւ նա է յառաջ
քան զամենայն, և ամենայն ինչ անով կը կենայ
18 հաստատ. Եւ նա է մարմնոյն, այսինքն եկեղեց-
ւոյն, գլուխը· որ սկիզբն է, անդրանիկ ի մեռե-
լոց, որպէս զի ըլլայ ամէն բանի մէջ նախապատիւ.
19 Զանգի Հայրը հաճեցաւ որ բոլոր լրումն Աստուա-
20 ծութիւն բնակի անոր մէջ. Եւ անով հաշտեցունէ
ամէնքն իրեն հետ, խաղաղութիւն ընելով անոր
խաչին արեամբը, անով ՍԻ[illegible]Թէ զանոնք որ
երկրի վրայ են, և Թէ զանոնք որ յերկինս
21 Եւ զձեզ որ երբեմն օտարացեալ և թշնա-
22 միք մտօք ի գործս չարութեան, Հիմա հաշտե-
ցուց բուն իւր մարմնով, մահուամբ, որ կեցուցէ
զձեզ անոր դիմացը սուրբ և ամբիծ և անպատ.
23 Նթէ կենաք հիմնուած և հաստատուն ի հաւատս

և առանց խախտելու ի յուսոյ աւետարանին զոր
լսեցիք, որ քարոզուեցաւ բոլոր արարածոց երկ-
24 նից տակ, որոյ ես, Պօղոս, եղայ սպասաւոր. Հիմա
ուրախ եմ ի չարչարանս իմ ձեզի համար, և Քրիս-
տոսի նեղութիւններուն պակասութիւնը կը լնում
իմ մարմնոյս մէջ անոր մարմնոյն համար որ է
25 եկեղեցին. Որոյ ես սպասաւոր եղայ Աստուծոյ
անտեսութեամբը որ տրուեցաւ ինձ ձեզի համար՝
26 լիով քարոզել Աստուծոյ խօսքը, Այն խորհուրդը
որ ծածկուած էր դարերէ և ազգերէ հետէ, և
27 յայտնուեցաւ հիմա անոր սուրբերուն. Որոց կա-
մեցաւ Աստուած իմացունել, Թէ ինչ է այս
խորհրդոյն փառաւոր ծոմութիւնը հեթանոսաց
28 մէջ, որ է Քրիստոս ի ձեզ, յոյսն փառաց. Զոր
մենք կը քարոզենք, և ամէն մարդ կը խրատենք,
և ամէն սորվեցունենք ամէն մարդ ամենայն իմաս-
տութեամբ, որպէս զի կեցուցնենք ամէն մարդ
29 կատարեալ ի Քրիստոս Յիսուս, Որոյ համար և
ես կ'աշխատիմ՝ Ջանալով անոր ներգործութեանը
համեմատ որ զօրութեամբ է գործ կը դրուի յիս։

Գլ. Բ

1 Փառզի կ'ուզեմ որ գիտնաք Թէ ինչպէս մեծ
մարտիկութիւն ունիմ ձեզի համար և Լաւոդիկեացւոց
համար, և անոնց ամենուն համար որ տեսած չեն
2 իմ երեսս մարմնով. Որ անոնց սիրտերը մխի-
թարուին սիրով միացեալ, և հասնին ի բովանդակ
ճոխութիւն լիուլի իմացման, այսինքն ի գիտուս-
թիւն խորհրդոյն Հօր Աստուծոյ և Քրիստոսի,
3 Յորում պահուած են իմաստութեան և գիտու-
4 թեան բոլոր գանձերը։ Եւ զայս կ'ըսեմ, որ ոչ ոք
5 հրապուրական բանիւք մոլորեցունէ զձեզ։ Որ
Թէպէտ մարմնով հեռու եմ, բայց հոգւով ձեզի
հետ եմ, և կ'ուրախանամ երբ կը տեսնեմ ձեր

բարեկարգութիւնը և ձեր հաւատոյ հաստատու-
6 թիւն ի Քրիստոս։ Ուստի ինչպէս որ ընդունեցիք զՏէր Յիսուս Քրիստոս, անով քալեցէք։
7 Արմատացեալ և շինեալ ի նմա, և հաստատեալ ի հաւատս՝ ինչպէս սորվեցաք, և անոր մէջ առեցէք գոհութեամբ։ Զգուշացէք, որ գերի չլինիք ոք զձեզ փիլիսոփայութեամբ և ունայն խաբկանութեամբ, որ ի ըստ աւանդութեան մարդկան, ըստ սկզբանց աշխարհին, և ոչ ըստ Քրիստոսի։
9 Քանզի բոլոր լրումն Աստուածութեան կը բնակի
10 ի նմա մարմնապէս։ Եւ դուք ևս լցուած էք անով, որ է գլուխ ամենայն իշխանութեան և պետու-
11 թեան. Որով դուք թլփատուեցաք անձեռադործ թլփատութեամբ՝ մերկանալով մեղաց մար-
12 մինը թլփատութեամբն Քրիստոսի. Թաղուելով անոր հետ մկրտութեամբ, որով նաև անոր հետ յարեաք հաւատով ներդործութեանն Աստուծոյ
13 որ յարոյց զնա ի մեռելոց։ Եւ զձեզ որ մեռած էիք յանցանաց և ձեր մարմնոյն անթլփատութեան մէջ՝ կենդանացուց անոր հետ, ներելով
14 մեզ ձեր բոլոր յանցանքը, Եւ ջնջեց հրամաններով մեզ հակառակող ձեռագիրը որ մեզի դէմ կը կենար, և վերցուց զայն ի միջոյ և բևեռեց
15 խաչափայտին։ Եւ մերկացուց իշխանութիւնները և պետութիւնները, և յայտնապէս խայտառակեց՝ յաղթելով անոնց *անով։
16 Ասա թող չդատէ ոք զձեզ ուտելու կամ խմելու, կամ տօներու կամ ամսագլուխներու կամ
17 շաբաթներու կողմանէ. Որ գալու բաներուն
18 ստուերն են, բայց մարմինը Քրիստոսինն է։ Մրցանակէն չզրկէ զձեզ ոք որ կը կամի խոնարհութեամբ և հրեշտակաց կրօնիւք մէջտեղ ըլլալ, այն բաներուն վրայ տեսած չէ, իւր մարմնոյն

*Կամ, իւր անձովը

19 մտօք ի զուր հպարտանալով. Եւ չբռներ Գլուխը, ուստի բոլոր մարմինը յօդուածներով և խաղերով հաղորդուած և ի մէկ կցուած կ'աճի
20 ամմանման Աստուծոյ։ Իսկ եթէ դուք Քրիստոսի հետ մեռաք այս աշխարհիս սկզբանց, այլ ևս ընդ-
21 կը աշխարհիս մէջ կենդանիներուն պէս կը հնա-
22 զանդիք ՝ձեռնէ՝ կանոններու, ըմբռնէ, Մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛ դպչիր, (Որոց ամէնքն ապականութեան համար են գործածութեամբ,)
23 ըստ պատուիրանաց և վարդապետութեանց մարդկան, Որ խմաստութեան կերպարանք ունին ինքնակամ կրօնիւք և խոնարհութեամբ և չխնայելով մարմնոյ, չէայն ոչ թէ պատուոյ արժանի էն, այլ մարմինը յագեցնելու կը ծառայեն։

Գլ. Գ

1 Արդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ուրեմն խնդրեցէք վերին բաները, ուր Քրիստոս
2 կը նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Վերին բաները խորհեցէք, ոչ թէ գայնս որ երկրիս վրայ են։
3 Քանզի դուք մեռաք, և ձեր կեանքը պահուած
4 է Քրիստոսի հետ յԱստուած։ Երբ Քրիստոս, մեր կեանքն, յայտնուի, յայնժամ և դուք պիտի յայտնուիք անոր հետ փառօք։
5 Ուստի սպաննեցէք ձեր երկրաւոր անդամները. պոռնկութիւնը, պղծութիւնը, անառակ կիրքը, չար ցանկութիւնը և ագահութիւնը որ է կռա-
6 պաշտութիւն, Որոց համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդւոց վրայ։
7 Որոց մէջ և դուք կը քալէիք երբեմն, երբ կ'ապրէիք անոնց մէջ։ Բայց հիմա ի բաց թողուցէք
8 և դուք ամէնը. զբարկութիւն, զսրամտութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, անհամեստ խօսքեր
9 ձեր բերանէրնէն։ Մի՛ սուտ իրարու. մերկացէք

10 հին մարդը իւր գործերովը, եւ հագիք նորը
գիտութեամբ նորոգուած ըստ պատկերի Արար-
11 չին իւրոյ. Ուր Ցոյն և Հրեայ, Թլփատութիւն և
անթլփատութիւն, Բարբարոս, Սկիւթացի, Ծա-
առայ կամ ազատ չկայ. այլ Քրիստոս է ամենայն
12 և յամենայնին։ Ուստի Աստուծոյ ընտրեալ սուր-
բերու և սիրելիներու պէս հագիք ձեր վրայ
զգութ, ողորմութիւն, զգաստութիւն, զսո-
նարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն,
13 համբերելով իրարու և ներելով իրարու, եթէ
ոք արատնչ ունի զոմիք. ինչպէս Քրիստոս
14 ներեց ձեզ, նոյնպէս և դուք։ Եւ ի վերայ այսր
ամենայնի հաշէ սէրը, որ կատարելութեան կապն
15 է. Եւ Աստուծոյ խաղաղութիւնը թագաւորէ
ձեր սիրտերուն մէջ, առ որ կոչեցաք միով
16 մարմնով. և գոհացող եղէք։ Քրիստոսի խօսքը
բնակի ի ձեզ առատապէս ամենայն իմաստու-
թեամբ՝ ուսուցանել զիրար և խրատել, սաղ-
մոսիք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք
ձեր սիրտերուն մէջ շնորհօք օրհնել զԱստուած։
17 Եւ ամենայն ինչ զոր կ՚ընէք Թէ՛ բանիւք և Թէ՛
գործովք՝ բոլորն ըէե յանուն Տեառն Ցիսուսի,
մատուցանելով ի ձեռն նորա գոհութիւն Աստու-
ծոյ և Հօր։
18 Կանայք, հնազանդ եղէք ձեր արանց, ինչպէս
19 որ վայել է Տէրոջմէ։ Արք, սիրեցէք զկանայս
20 ձեր, և դառն մի՛ ըլլաք անոնց։ Որդիք, հնա-
զանդ եղէք ձեր ծնողաց յամենայնի, քանզի այն
21 է հաճոյ առաջի Տեառն։ Հարք, մի՛ բարկացուներ
22 ձեր որդիները, որ չվհատին։ Ծառաներ, հնա-
զանդ եղէք յամենայնի ձեր մարմնաւոր տէրանց,
ոչ Թէ առ ականջ ծառայելով իբրև մարդահա-
ճոյք, այլ միամտութեամբ սրտի վախնալով Տէ-

*Ոմն։, Քրիստոսի

23 րոյմէ. Ինչ որ կ՚ընէք՝ ըրէք սրտի մաօք, որպէս
24 Թէ Տէրոջը և ոչ Թէ մարդոց, Գիտնալով Թէ
պիտի առնուք ժառանգութեան հատուցումն
ի Տեառնէ. քանզի կը ծառայէք Քրիստոսի Տեառն.
25 Բայց անօրէնը պիտի ընդունի իւր անօրէնութեան
ապրանքը, և չկայ աստուածութիւն։

Գլ. Դ

1 Տէրեր, իրաւունք և հաւասարութիւն տուէք
ձեր ծառաներուն, գիտնալով Թէ դուք ևս ու-
նիք Տէր յերկինս։
2 Անդադար աղօթքի հաւէ եղէք, անոր մէջ
3 արթուն մնալով գոհութեամբ։ Աղօթք ըրէք
նաև մեզի համար, որ Աստուած բանոյ մեզ
խօսքի դուռն խօսել Քրիստոսի խորհուրդը, ո-
4 րոյ համար կապուած ևս եմ, Որ յայտնի ընեմ
զայն՝ ինչպէս որ պարտ է ինձ խօսել։ Իմաստու-
թեամբ վարուեցէք արտաքինները հաւ՝ գնե-
6 լով ժամանակը։ Ձեր խօսքն ըլլայ ամէն ժամա-
նակ շնորհօք՝ որպէս Իւ աղով համեմեալ, և գիտ-
նաք Թէ ինչպէս վայել է ձեզ տալ պատասխան
իւրաքանչիւր ումեք։
7 Այլ իմ վրաս բոլորը պիտի իմացունէ ձեզ
Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշ-
8 տօնեայն և ծառայակից ի Տէր։ Զոր զրկեցի ձեզ
այդ բանին համար, որ *գիտնայ ձեր վրայ, և՝
9 մխիթարէ ձեր սիրտերը, Ընեսիմոս հաւատարիմ
և սիրելի եղբօր հետ՝ որ ձենէ է. անոնք պիտի
իմացունեն ձեզ ամէն բան ինչ որ հոս կայ,
10 Ողջոյն կու տայ ձեզ Արիստարքոս, գերեկից իմ,
և Մարկոս, եղբօրորդին Բառնաբայ, (որուն հա-
մար պատուէր առիք. եթէ գայ առ ձեզ, ընդու-

*Ոմն։, որ գիտնաք մեր վրայ, և ինք

11 Նեցէք զնա,) Եւ Յիսուս, որ Յուստոս կոչուած է,
որ Թլփատութենէ են. ասոնք միայն գործակից
եղան ինձ Աստուծոյ թագաւորութեան մէջ, որք
12 և եղան ինձ մխիթարութիւն. Ողջոյն կու տայ
ձեզ Եպափրաս, Քրիստոսի ծառայն, որ ձենէ է,
ամէն ժամանակ ձեզի համար չանալով յաղօթս,
որ կենաք կատարեալ և լի Աստուծոյ բոլոր կա-
13 մացը մէջ. Քանզի կը վկայեմ անոր համար թէ
չատ նախանձ ունի ձեզի համար և անոնց համար
14 որ Լաւոդիկիա և Երապոլիս են. Ողջոյն կու
15 տայ ձեզ սիրելի Ղուկաս բժիշկ և Դեմաս. Ողջոյն
տուէք եղբայրներուն որ ի Լաւոդիկիա են, և
16 Նիմփասայ և անոր առանին եկեղեցւոյն. Եւ երբ
կարդացուի այս Թուղթը ձեր մէջ, Լաւոդիկե-
ցւոց եկեղեցւոյն մէջ ևս կարդալ տուէք. և
դուք զայն որ Լաւոդիկիայէն է՝ կարդացէք.
17 Եւ ըսէք Արքիպպոսի, Զգոյշ եղիր սպասաւորու-
թեանդ զոր առիր Տէրոջմէ, որպէս զի կատարես
18 զայն. Ահա ողջոյն իմով ձեռքին Պօղոսի է. յիչե-
ցէք իմ կապերս. Շնորհք ընդ ձեզ. Ամէն.

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, Թեսաղոնի-
կեցւոց եկեղեցւոյդ յԱստուած Հայր և ի Տէր
2 Յիսուս Քրիստոս. Շնորհք և խաղաղութիւն ձեզ
[յԱստուծոյ մեր Հօրմէն և ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ].
Կը գոհանանք Աստուծմէ հանապազ ձեր ամե-
նուն համար՝ յիչելով զձեզ մեր աղօթներուն մէջ.
3 Անդադար յիչելով ձեր հաւատոյ գործը և սիրոյ
աշխատութիւնը և Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի յուսոյն համբերութիւնը՝ Աստուծոյ և մեր
4 Հօրը առջև. Եւ գիտնալով, Աստուածմէ սիրուած
5 եղբայրներ, ձեր ընտրութիւնը, Որ մեր աւետա-
րանը ոչ թէ խօսքով միայն եղաւ ձեզ, այլ և
զօրութեամբ և Հոգւով Սրբով և չատ ապդուու-
թեամբ, ինչպես գիտէք Ե՛ թէ ի՛նչպես կեցանք
6 ձեր մէջ ձեզի համար։ Դուք ևս մեզ և Տէրոջը
նմանող ըլլալով՝ ընդունեցիք խօսքը չատ նե-
ղութեան մէջ ուրախութեամբ Հոգւոյն Սրբոյ.
7 Այնպէս որ օրինակ եղաք բոլոր հաւատացեալց
8 որ են ի Մակեդոնիա և յԱքայիա։ Քանզի ձենէ
հռչակուեցաւ Տէրոջը գործը, ոչ միայն ի Մակե-
դոնիա և յԱքայիա, այլ և ամէն տեղ ձեր հա-

աստքը որ յԱստուած տաքածուեցաւ, այնպէս
9 որ հարկ չէ մեզ այլ եւս բան մը խօսել, քանզի
իրենք կը պատմեն մեզի համար, թէ ի՛նչպէս
մուտ ունեցանք առ ձեզ, և ի՛նչպէս դուք դար-
ձաք ի կռոց յԱստուած՝ ծառայել կենդանի և
10 ճշմարիտ Աստուծոյ, Եւ սպասել անոր Որդւոյն
յերկինից· զոր ինքն յարոյց ի մեռելոց, այսինքն
զՅիսուս, որ կ՚ազատէ զմեզ գալուստ բարկութենէն։

Գլ. Բ

1 Քանզի, եղբարք, դուք ինքնին գիտէք մեր առ-
2 ձեզ մուտը որ չեղաւ ի զուր. Այլ առաջ փիլիպ-
պէի մէջ չարչարուելով և անարգուելով, ինչպէս
գիտէք, համարձակութիւն առինք մեր Աստու-
ծով՝ պատմել ձեզ Աստուծոյ աւետարանը մեծ
3 հակառակութեան մէջ։ Քանզի մեր յորդորանքը
ոչ մոլորութենէն է և ոչ պղծութենէն և ոչ խա-
4 բէութեամբ. Այլ, ինչպէս որ մենք Աստուծմէ
ընտրուեցանք որ աւետարանն հաւատացուի մեզ,
այնպէս կը խօսինք, ոչ թէ մարդոց հաճոյ լլլա-
նու համար, այլ Աստուծոյ՝ որ մեր սիրտերը կը
5 քննէ. Քանզի չեղանք բնաւ չողոքորթութեան
խօսքով, ինչպէս գիտէք, և ոչ ագահութեան
6 պատճառանօք, վկայ է Աստուած, Եւ ի մարդ-
կանէ չփնտռեցինք փառք, ոչ ձեզնէ և ոչ ուրիչ-
7 ներէն, Թէև կրնայինք, իբրև Քրիստոսի առաք-
եալներ, ծանրութիւն տալ· բայց եղանք քաղցր
ձեր մէջ, ինչպէս դայեակ կը խնամէ իւր մանուկ-
8 ները. Նոյնպէս մենք, փափաք ունենալով ձեր
վրայ, կը յօժարէինք ոչ միայն Աստուծոյ աւե-
տարանը տալ ձեզ, այլ և մեր անձերը, վասն զի
9 սիրելիներ եղաք մեզ։ Քանզի կը յիշէք, եղբարք,
մեր աշխատութիւնը և չանքը, որ ձեռնէ ուժգ
ծանրութիւն չտալու համար մեր և գիշեր գոր-

ծելով՝ քարոզեցինք ձեզ Աստուծոյ աւետարանը,
10 վկայ եք դուք, և Աստուած եւս, Թէ ի՛նչպէս
սրբութեամբ և արդարութեամբ և անբասաւ-
11 թեամբ եղանք ձեզի հետ որ հաւատացիք։ Ինչ-
12 պէս գիտէք որ իրեւ հայր իւր որդիներն Ա՛նհէս
կը յորդորէինք ձեզի իւրաքանչիւրը և կը մխի-
թարէինք և վկայութիւն կը դնէինք որ դուք քա-
լեիք ինչպես վայել է Աստուծոյ որ կոչեց զձեզ
13 ի թագաւորութիւնն իւր և ի փառս։ Վասն որոյ և
մենք անդադար կը գոհանանք Աստուծմէ, որ
Աստուծոյ խօսքը լսելով մենէ ընդունեցիք, ոչ
թէ էրէ՛ մարդոց խօսք, այլ, ինչպէս է ճշմար-
տապէս, էրէ՛ Աստուծոյ խօսք, որ և կը գործէ
14 ի ձեզ որ կը հաւատաք։ Քանզի դուք, եղբարք,
նմանող եղաք Աստուծոյ եկեղեցիներուն որ
Հրէաստանի մէջ են ի Քրիստոս Յիսուս. քանզի
դուք ևս կրեցիք զնոյն ձեր համազգիներէն, ինչ-
15 պէս անոնք ի Հրէից· Որ և զՏէր Յիսուս մեռու-
ցին, և *մարգարէները, և զմեզ հալածեցին, և
Աստուծոյ անհաճոյ և բոլոր մարդոց հակառակ
16 են, Ել. կ՚արգելուն մեզ խօսել հեթանոսաց անոնց
փրկութեանը համար, որ իրենց մեղաց չափը լե-
ցունեն միշտ· և բարկութիւնն անոնց վրայ հա-
սած է մինչև խսպառ։
17 Իսկ մենք, եղբարք, արդարև ձեզնէ որբ մնա-
ցինք երեսով և ոչ թէ սրտով, բայց չնացանք
մանաւանդ տեսնել ձեր երեսը մեծ փափաքով։
18 վասն որոյ ես Պօղոս մի անգամ և երկից կա-
մեցայ գալ առ ձեզ բայց արգելից զմեզ Սատա-
19 նայ։ Քանզի ո՞վ է մեր յոյսը կամ ուրախութիւ-
նը կամ պարծանաց պսակը, եթէ ոչ դուք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առջև անոր

*Ոմանք, իրենց մարգարէները

20 գալատեան առաքեր, վասն զի դուք էք մեր վճռքը և ուրախութիւնը։

Գլ. Գ

1 Ուստի այլ ևս չկրնալով համբերել, բարւոք
2 թուեցաւ մեզ Աթենք միայն մնալ մենակ. Եւ զՏիմոթէոս մեր եղբայրը և Աստուծոյ պաշտօնեան և մեր գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ զրկեցինք հաստատել և մխիթարել զձեզ ձեր
3 հաւատոյն համար. Որ այս նեղութիւններուն մէջ չլինի ոչ ոք խախտ. քանզի դուք ինքներնիդ գիտէք թէ կեցած ենք այդ բաներուն համար։
4 Քանզի մինչ էինք առ ձեզ, յառաջագոյն կ'ըսէինք ձեզ թէ պիտի հանդիպինք նեղութիւննե-
5 րու, ինչպէս եղաւ իսկ, և գիտէք։ Վասն որոյ ևս չկրնալով աւելի համբերել, զրկեցի գիտնալ ձեր հաւատքը, որ մի գուցէ փորձողը փորձած ըլլայ զձեզ, և մեր աշխատութիւնն ըլլայ ընդու-
6 նայեւ բայց հիմա, երբ Տիմոթէոս ձենէ առ մեզ եկաւ, և տուաւ մեզ ձեր հաւատոյ և սիրոյն ա-ւետիսը, որ ամէն ժամանակ ունիք ի մտի մեր բարի յիշատակը, և կը փափաքիք տեսնել զմեզ,
7 ինչպես և մենք՝ զձեզ. վասն այսորիկ, եղբարք, մխիթարուեցանք ի ձեզ մեր բոլոր վիշտերուն և
8 նեղութիւններուն վրայ ձեր հաւատովը. քանզի հիմա կենդանի ենք մենք, եթէ դուք հաստատուն
9 կենաք ի Տէր։ Քանզի ի՞նչ գոհութիւն կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայ այն ամէն ուրախութեան համար զոր կ'ուրախանանք վասն
10 ձեր մեր Աստուծոյն առջև, եւ գոյգ և գիշերկ կ'աղաչենք յոյժ յոյժ ձեր երեսը տեսնել, և
11 լնուլ ձեր հաւատոյն պակասութիւնները։ Բայց ինքն Աստուած և Հայր մեր և Տէր մեր Յիսուս
12 Քրիստոս յաջողէ մեր ճամբան դէպ ի ձեզ։ Եւ ձեզ ալ շատցնէ և աւելցնէ Տէր ձեր սէրն իրարու-

վրայ ինչպէս որ մենք ևս ձեր վրայ ՝՝՝

պատուիրեցինք ձեզ,) որ պարկեշտութեամբ վարուիք արտաքինները հետ, և կարօտ չըլլաք *իմիք։

12 Զենք ուզեր, եղբարք, որ ագէտ ըլլաք ննջեցելոց համար, որպէս զի չտրտմիք ինչպէս ուրիշ-
13 ները որ չունին յոյս։ Քանզի եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած ննջեցեալներն Յիսուսիս պիտի բերէ անոր
14 հետ։ Վասն զի զայս կ'ըսենք ձեզ Տէրոջը խօսքով, թէ մենք որ կենդանի կը մնանք մինչև ի գալուստն Տէառն, պիտի չանցնինք ննջեցեալնե-
15 րէն առաջ։ Քանզի Տէրն ինքնին պիտի իջնէ յերկինից, աղաղակութեան հրամանաւ, հրեշտակապետին ձայնիւ և Աստուծոյ փողով, և մեռելք ի Քրիստոս՝ պիտի յառնեն յառաջա-
16 գոյն։ Ցետոյ մենք որ կենդանի մնացած ենք՝ պիտի յափշտակուինք նոքօք հանդերձ ամպովք երկիր ընդ առաջ Տէառն օդոյն մէջ, և այնպէս
17 յաւիտեան պիտի ըլլանք Տէրոջը հետ։ Ուստի մխիթարեցէք զերար այս խօսքերով։

Գլ. Ե

1 Բայց ժամերուն և ժամանակներուն համար, եղ-
2 բարք, չէ պարտ գրել ձեզ։ Քանզի դուք ինքնին քաջ գիտէք թէ օրն Տէառն իբրև գող գի-
3 շերով այնպէս կը հասնի։ Երբ ըսեն թէ խաղաղութիւն և ապահովութիւն է, անառակն կորուստը պիտի հասնի յանկարծ անոնց վրայ յղու-
4 երկանց պէս, և պիտի չազատին։ Բայց դուք, եղբարք, խաւարի մէջ չէք, որ այն օրն իբրև
5 գող հասնի ձեր վրայ։ Քանզի դուք ամէնքդ էք որդիք լուսոյ և որդիք աւուրընկան։ Գիշերուան
6 չենք, խաւարի չենք։ Ուրեմն չքնանանք ինչպէս

*Կամ, ուամբք

7 ուրիշները, այլ ըլլանք արթուն և զգաստ։ Քանզի անոնք որ կը քնանան՝ գիշերը կը քնանան, և
8 անոնք որ կ'արբենան՝ գիշերը կ'արբենան։ Բայց մենք, որովհետև աւուրընկան ենք, ըլլանք զգաստ, և հագնինք մեր վրայ հաւատոյ և սիրոյ
9 զրահը և փրկութեան յուսոյ սաղաւարտը։ Քանզի Աստուած չրռնչեց զմեզ բարկութեան համար, այլ փրկութիւն ստանալու համար Տէառն մերոյ
10 Յիսուսի Քրիստոսէ ձեռօք։ Որ մեզի համար մեռաւ, որպէս զի Թէ՛ արթուն ըլլանք և Թէ՛ քնա-
11 նանք, անոր հետ ի միասին ապրինք։ Վասն որոյ մխիթարեցէք զերար և շինեցէք տուէք իրարու ինչպես որ կ'ընէք իսկ։
12 Եւ կ'աղաչենք զձեզ, եղբարք, ճանչնալ ձեր աշխատաւորները և վերակացուներն ի Տէր, և
13 ձեր խրատիչները։ Եւ մեծապէս պատուեցէք զնոսա սիրով անոնց գործին համար։ Իրարու
14 հետ խաղաղութիւն ունեցէք։ Եւ կ'աղաչենք զձեզ, եղբարք, խրատեցէք անկարգները, մխիթարեցէք վհատսիրտները, ձեռնտու եղէք տկա-
15 րաց, երկայնամիտ եղէք ամենուն։ Զգուշացէք որ չհատուցանէ ոք ումէք չար փոխանակ չարի։ այլ միշտ բարւոյն ձգտեա եղէք Թէ՛ իրարու և
16 Թէ՛ ամենուն։ Ուրախ եղէք հանապազ։ (17) Ան-
18 դադար աղօթք ըրէք։ Ցամենայնի գոհացեք։ քանզի այս է Աստուծոյ կամքն ի Քրիստոս Յի-
19 սուս ձեր վրայ։ ԶՀոգին մի՛ մարէք։ (20) Մար-
21 գարէութիւնները մի՛ արհամարհէք։ Ցամենայն
22 ինչ փորձեցէք, զբարին պընդ բռնեցէք։ Ամէն
23 տեսակ չար բանէ հեռ կեցէք։ Եւ ինքն Աստուած խաղաղութեան բոլորովին սուրբ ընէ զձեզ, և ձեր բոլոր հոգին և հոգին և մարմինը պահուին անարատ Ցհնչ Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
24 գալստեան։ Հաւատարիմ է այն որ կոչեց զձեզ, որ և պիտի կատարէ։

25 Եղբարք, աղօթք ըրէք մեզի համար ։ (26) Ող-
ջոյն տուէք բոլոր եղբայրներուն սուրբ համբու-
27 բիւ։ Կ՚երդմնցնեմ զձեզ ի Տէր, որ այս Թուղթը
28 կարդացուի բոլոր սուրբ եղբայրներուն։ Տէառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլ-
լայ։ Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՒ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, Թեսաղոնի-
կեցւոց եկեղեցւոյդ. յԱստուած Հայր մեր և ի Տէր
2 Յիսուս Քրիստոս. Շնորհք և խաղաղութիւն ձեզ
յԱստուծոյ մերմէ Հօրմէն և ի Տէառնէ Յիսուսէ
Քրիստոսէ։
3 Պարտիմք յամենայն ժամ գոհանալ Աստուծմէ
ձեզի համար, եղբարք, ինչպէս և կը վայելէ,
քանզի ձեր հաւատքը կ՚աճի յոյժ, և ձեր ամե-
նուն իւրաքանչիւրին սէրն իրարու վրայ կ՚աւելը-
4 նայ ։ Այնպէս որ մենք ևս կը պարծինք ձեզմով
Աստուծոյ եկեղեցիներուն մէջ ձեր համբերութեան
և հաւատոյն համար ձեր բոլոր հալածանաց և
5 նեղութեանց մէջ որոց կը համբերէք։ Որ է Աս-
տուծոյ արդար դատաստանին ապացոյցը, որ
դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեան,
6 որոյ համար և նեղութիւն կը կրէք. քանզի Աս-

տուծոյ առՀԱ իրաւունք է ձեր նեղիչներուն հա-
7 տուցանել նեղութիւն, եւ ձեզ նեղելոցդ՝ մեզի
հետ հանգիստ, Տէր Յիսուսի յերկինից յայտնուե-
լու ժամանակը իւր զօրաւոր հրեշտակներով,
8 Բորբոքեալ հրով առնուլ վրէժ անծանից որ չեն
ճանչնար զԱստուած, և որ չեն հնազանդիր աւե-
9 տարանին Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որք
պիտի պատժուին յաւիտենական սատակմամբ
Տէրոջը երեսէն և անոր փառաց զօրութենէն,
10 Երբ գայ փառաւորուիլ իւր սուրբերուն մէջ, և
հիանալի ըլլալ բոլոր հաւատացելոց մէջ (քանզի
մեր վկայութիւնը ձեր մէջ հաւատացաք եղաւ,)
11 այն օրը։ Ա,յս պատճառաւ իսկ ձեզի համար ա-
ղօթք կ՚ընենք միշտ, որ Աստուած մեր արժանի
ընէ զձեզ չէր կոչման, և կատարէ ՚ի բարու-
թեան բոլոր հաճութիւնը, և հաւատոյ գործը՝
12 զօրութեամբ։ Որ Տէառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի անունը փառաւորուի ՚ի ձեզ, և դուք ևս
ի նմա՝ մեր Աստուծոյն և Տէառն Յիսուսի Քրիս-
տոսի շնորհաց համեմատ։

ԳԼ. Բ

1 Կ՚աղաչենք զձեզ, եղբարք, Տէառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի գալստեան և մեր ժողովուրդն
2 համար անոր քով, Որ չշուռով չխախտիք ի մտաց,
և չխռովիք՝ ոչ հոգւով և ոչ խօսքով, և ոչ իսկ
թղթով իբր թէ մենէ, որպես թէ Քրիստոսի օրը
3 եկած հասած է։ Մի՛ ոք խաբէ զձեզ կերպով մի-
քանզի այն օրը պիտի չգայ նախ ապըս-
տամբութիւնը, և յայտնուի մեղայ մարդը, կո-
4 րըստան որդին, Հակառակորդն հպարտացեալ
ամենուն վրայ որ Աստուած կ՚ըսուի կամ կը պաշ-
տուի, մինչև Աստուծոյ տաճարին մէջ *պիտի նստի,

*Ոմանք, Աստուծոյ պէս պիտի

5 և ցուցնէ զինք թէ Աստուած է։ Զի՞նք յիշելը որ
6 երբ ձեր փոխն էի, կ'ըսէի ձեզ այս բաները։ Եւ
հիմա գիտէք թէ ինչ է այն որ կ'արգելէ, որ
7 յայտնուի նա իւր ժամանակին։ Քանզի անօրէ-
նութեան խորհուրդն արդէն իսկ կը զօրանայ.
բայց այն որ հիմա կ'արգելէ, պէտ՝ ըզէնէ՝ մինչև
8 որ ինք վերնայ ի միջոյ։ Եւ ապա պիտի յայտնուի
այն անօրէնը, զոր Տէր [Յիսուս] պիտի սպառէ
իւր բերնին շնչովը, և պիտի կորուսանէ իւր
9 գալստեան երեւմամբ, նա որոյ գալուստը Սատա-
նայի ազդեցութեամբն է բոլոր զօրութեամբ և
10 նշաններով և սուտ հրաշիւք, եւ անիրաւութեան
բոլոր խաբէութեամբ կորուսելոց վրայ. քանզի
ճշմարտութեան սէրը չընկալան որ փրկուէին.
վասն որոյ և Աստուած պիտի ղրկէ անոնց զօրեղ
11 մոլորութիւն որ հաւատան սուտութեան, Որպէս զի
դատապարտուին ամէնքը որ չհաւատացին ճշմար-
տութեան, այլ յօժարեցան յանօրէնութիւն։
12 Բայց մեզ պարտ է միշտ գոհանալ Աստուծմէ
ձեզի համար, Տէրոջմէ սիրուած եղբայրներ, քան-
զի Աստուած յառաջագոյն ընտրեց զձեզ փրկութիւ
Հոգւոյն սրբելովը և ճշմարտութեան հաւատովը։
13 Ուր որ կոչեց զձեզ մեր աւետարանաւ՝ ստանալ
Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիստոսի փառքը։
14 Ուստի, եղբարք, հաստատուն կեցէք, և պինդ
բռնեցէք աւանդութիւնները զորս սորվեցաք
15 թէ՛ բանիւ և թէ՛ մեր թղթով։ Եւ ինքն Տէր մեր
Յիսուս Քրիստոս և Աստուած Հայր մեր, որ սի-
րեց զմեզ և տուաւ մեզ յաւիտենական մխիթա-
16 րութիւն և բարի յոյս շնորհօք, Մխիթարէ ձեր
սիրտերը և հաստատէ զձեզ ամէն բարի խօսքե-
րու և գործերու մէջ։

Գլ. Գ

1 Վերջապէս, եղբարք, մեզի համար աղօթք ըրէք,
որպէս զի Տէրոջը խօսքը յառաջանայ և փառա-
2 ւոր ըլլայ, ինչպես ձեր մէջ. Եւ որպէս զի ազա-
մէնք աներեսու և չար մարդկանէ. քանզի ամէն-
3 քը չունին *հաւատաք։ Բայց հաւատարիմ է Տէր,
4 որ պիտի հաստատէ զձեզ և պահէ չարէն։ Եւ ու-
նինք ձեր վրայ վստահութիւն ի Տէր, թէ ինչ որ
պատուիրեցինք ձեզ՝ կ'ընէք և պիտի ընէք եւս։
5 Եւ Տէրը ուղղէ ձեր սիրտերն Աստուծոյ սիրոյն
և Քրիստոսի համբերութեանը։
6 Եւ կը պատուիրենք ձեզ, եղբարք, Տէառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի անուամբ, որ եղ կենաք
ամէն եղբօրէ որ անկարգութեամբ կը վարուի,
և ոչ այն աւանդութեան պէս զոր առաւ
7 մեզնէ։ Քանզի դուք ինքնին գիտէք թէ ինչ-
պէս պարտիք նմանիլ մեզ. քանզի մենք
8 ձեր մէջ անկարգութեամբ չվարուեցանք, Եւ ոչ
ուրուբ հացը կերանք ձրի, այլ չանիւ և ուխտա-
մութեամբ գշտյգ և գշերեկ կը գործէինք՝ ծան-
9 րութիւն չտալու համար ձեզնէ ուրիք։ Ոչ թէ
վասն զի իշխանութիւն չունէինք, այլ որպէս զի
մեր անձերն ընենք ձեզ օրինակ որ նմանիլ ըլ-
10 լաք մեզ, վասն զի մինչ էինք առ ձեզ, զայս կը
պատուիրէինք ձեզ, թէ ով որ չուզեր գործել,
11 թող չուտէ եւս։ Արդ՝ կը լսենք թէ ոմանք ձեր
մէջ անկարգութեամբ կը վարուին, և գործ չեն
12 գործեր, այլ հետաքրքիր կը չրջին։ Այնպիսեաց
պատուէր կու տանք և կ'աղաչենք ի Տէր մեր Յի-
սուս Քրիստոս, որ հանդարտութեամբ գործեն և
13 ուտեն իրենց հացը։ Բայց դուք, եղբարք, մի՛
14 ձանձրանաք բարիս գործելէ, Իսկ եթէ ոք չհնա-

*Կամ, հաւատարմութիւն

զանդիր մեր խօսքին այս Թղթով, նշանակեցէք զնա, և անոր հետ մի՛ խառնուիք, որ ամչնայ։
15 Բայց մի՛ իբրև թշնամի համարիք, այլ խրատեցէք
16 իբրև եղբայր։ Եւ ինքն խաղաղութեան Տէրը տայ ձեզ խաղաղութիւն միշտ ամէն կերպով։ Տէրը ձեր ամենուն հետ ըլլայ։
17 Ա՛յս ողջոյնս իմ ձեռքին Պօղոսի է, որ բոլոր Թուղթերուն մէջ նշան է. այսպէս կը գրեմ։
18 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի ըստ հրամանի մեր Փրկչին Աստուծոյ և *Քրիստոսի Յի-
2 սուսի՝ որ մեր յոյսն է, Տիմոթէոսի հարազատ որդւոյս հաւատով։ Շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն յԱստուծոյ մեր Հօրմէն և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Ինչպէս աղաչեցի զքեզ, մնալ յԵփեսոս երբ կ՚երթայի Մակեդոնիա, որ պատուիրես ոմանց
4 չսորվեցնել օտար ուսմունք, Եւ չնայել առասպելներու և ազգահամարներու, որ վերջ չունին,

*Ոմն, Տեառն Յիսուսի Քրիստոսի

որ պատճառ կ՚ըլլան վէճերու մանաւանդ քան
5 Աստուծոյ *չինութիւնը որ կ՚ըլլայ հաւատով։ Իսկ պատուիրանին վախճանը սէր է սուրբ սրտէ և
6 բարի խղճէ և անկեղծ հաւատով։ Ոմանք խոտորելով ոմանք դնացին ունայն խօսքերու հետևէ։
7 Կ՚ուզեն ըլլալ վարդապետ օրինաց. բայց չեն հասկնար, ո՛չ ինչ որ կը խօսին, և ո՛չ ինչու հա-
8 մար կը պնդենն։ Արդ գիտենք թէ օրէնքը բարի է, եթէ ոք գործածէ զայն ըստ օրինի։ Բայց զայս
9 Թող գիտնայ որ արդարոյ համար չէ օրէնքը, այլ անօրինաց և անհնազանդից համար, ամբարշտաց և մեղաւորաց, անսրբոց և պղծոց, զեղբ և
10 զմայր հարկանողաց, մարդասպանաց, Պոռնկաց, արուագիտաց, մարդագողաց, ստախօսաց, ստերբմանց, և կամ ուրիշ ինչ որ հակառակ է
11 աղեամիտ վարդապետութեան, Ըր երանելոյն Աստուծոյ փառաւոր աւետարանին համեմատ է,
12 որ յանձնուեցաւ ինձ։ Եւ շնորհակալ եմ անոր որ զօրացոյց զիս, այսինքն՝ Քրիստոսի Յիսուսի Տեառն մերոյ, որ հաւատարիմ համարեցաւ զիս՝
13 դրաւ այն պաշտաւորութեան մէջ. Ըր առաջ հայհոյիչ էի և հալածիչ և թշնամանող. բայց ո-ղորմութիւն գտայ, քանզի անհաւատութեան մէջ
14 անգիտութեամբ ըրի։ Եւ Տեառն մերոյ շնորհքը չատ եղաւ յոյժ —ԼԽ հաւատով և սիրով որ
15 ի Քրիստոս Յիսուս։ Ա՛յս խօսքն հաւատարիմ է և բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս յաշխարհ եկաւ փրկել զմեզ-
16 ւոքս, որոց գլուխը ես եմ. Բայց վասն այնորիկ գտայ ողորմութիւն, որ նախ և առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս ցուցնէ բոլոր երկայնամտութիւնն իբրև օրինակ անոնց որ պիտի հաւատային
17 անոր յաւիտենական կեանց համար։ Արդ թա-

*Պահ, անսեասութեանը

գաւօրին յաւիտենից՝ անեղծ և աներեւոյթ,
*միայնոյն Աստուծոյ փառք և պատիւ յաւիտեանս
յաւիտենից. Ամէն։
18 Այս պատուէրը կ՚աւանդեմ քեզ, որդեակ Իմ
Տիմոթէոս, ըստ մարգարէութեանց որ յառաջա-
գոյն եղան քու վրադ, որ անոնցմով պատերազ-
19 միս այն բարի պատերազմը, եւ ունենաս հաւատք
և մաքուր խղճմտանց, զոր ոմանք իրենցմէ մերկե՛
նետելով՝ նաւակոծութիւն կրեցին հաւատոյ կոր-
20 մանէ. Որոց են Հիմենէոս և Ալէքսանդրոս, զորս
ես մատնեցի Սատանայի, որ սորվին չհայհոյել։

Գլ. Բ

1 Արդ կ՚աղաչեմ նախ քան զամենայն ընել ա-
ղօթք, խնդրուած, աղաչանք, գոհութիւն բոլոր
2 մարդոց համար, Մանաւանդ թագաւորաց և բո-
լոր իշխանաց համար. որ խաղաղ և հանդարտ
կեանք վարենք բոլորովին աստուածպաշտու-
3 թեամբ և պարկեշտութեամբ. Քանզի այն է բա-
րին և ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջև,
4 Որ կ՚ուզէ թէ բոլոր մարդիկ փրկուին և դան
5 ի գիտութիւն ճշմարտութեան. Քանզի մի է Աս-
տուած, և մի միջնորդ ի մէջ Աստուծոյ և մարդ-
6 կան, Քրիստոս Յիսուս մարդը, Որ իր անձը
տուաւ փրկանք վասնանակ ամենուն՝ բուն ժա-
7 մանակին վկայութիւն ըլլալու. Որոյ ես դրուե-
ցայ քարոզիչ և առաքեալ, (ճշմարիտ կ՚ըսեմ
[ի Քրիստոս] և չեմ սուտը,) հեթանոսաց վարդա-
8 պետ հաւատով և ճշմարտութեամբ. Արդ կ՚ու-
զեմ որ ամէն տեղ աղօթք ընեն՝ սուրբ
ձեռուըներ վերցունելով առանց բարկութեան և
9 երկմտութեան. Նոյնպէս և կանայք վայելուչ

*Ոմն., միայն իմաստուն

հանդերձի, ամօթխածութեամբ և պարկեշտու-
թեամբ զարդարեն զիրենք, ոչ թէ հիւսուածնե-
րով կամ ոսկեով կամ մարգարտօք կամ մեծա-
10 գին հանդերձիւք, Այլ բարի գործերով՝ ինչպես
վայել է աստուածպաշտութիւնը գաւանող կա-
11 նանց։ Կին մարդը թող սորվի լռութեամբ ամե-
12 նայն հնազանդութեամբ։ Բայց կնոջ մարդոյ հրա-
ման չեմ տար սորվեցնել, և ոչ իշխել առն,
13 այլ լուռ կենալ։ Քանզի առաջ Ադամ ստեղծուե-
14 ցաւ, և ապա Եւայ։ Եւ Ադամ չխաբուեցաւ, այլ
15 կինը խաբուեցաւ և յանցանք գործեց։ Սակայն
պիտի փրկուի նա որդեծնութեամբ, եթէ կենան
հաւատոյ և սիրոյ և սրբութեան մէջ պարկեշ-
տութեամբ։

Գլ. Գ

1 Այս խօսքը հաւատարիմ է. եթէ ոք եպիսկո-
պոսութեան կը ցանկայ, բարի գործոյ կը ցանկայ։
2 Ուստի պարտ է եպիսկոպոսն լինել անթարտ,
միոյ կնոջ այր, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւ-
3 րասէր, սորվեցունելու յարմար, Մի՛ գինեմոլ,
մի՛ հարկանող, *այլ հանդարտ, մի՛ կռուող, մի՛
4 արծաթասէր։ Որ իր տանը բարւոք վերակացու
ըլլայ, իր զաւակներն հնազանդութեան մէջ պա-
5 հելով ամենայն ծանրութեամբ. (Ապա եթէ ոք
իր տանը վերակացու ըլլալ չգիտնայ, ի՞նչպես
պիտի ըլլայ հոգաբարձու Աստուծոյ եկեղեցւոյն.)
6 Մի՛ նորահաւատ, որ հպարտանալով չյինայ Սա-
7 տանայի դատապարտութեան մէջ։ Այլ պարտ է
նմա արտաքիններէն ևս բարի վկայութիւն ու-
նենալ, որ նախատանաց և Սատանայի որոգայ-
թին մէջ չյինայ։

*Ոմն., մի՛ ղօշաքաղ, այլ

8 Նոյնպէս և սարկաւագունք ըլլան ծանրաբարոյ,
9 մի՛ երկլեզու, մի՛ գինեսէր, մի՛ զօշաքաղ. Այլ
հաւատոյ խորհուրդը պահեն մաքուր խղճի-
10 մտաց։ Եւ ասոնք նախ թող փորձուին, և ապա,
եթէ անմեղադրելի գտնուին, կատարեն սարկա-
11 ւագութեան պաշտօնը։ Նոյնպէս և կանայք ծան-
րաբարոյ ըլլան, մի՛ չարախօս, այլ զգաստ, հաւա-
12 տարիմ յամենայնի։ Սարկաւագունք ըլլան միոյ
կնոջ այր, և բարւոք վերակացութիւն ընծ որ-
13 դոց և իրենց տան։ Քանզի անոնք որ բարւոք
կը կատարեն սարկաւագութեան պաշտօնը, բարի
աստիճան կը շահին իրենց, և մեծ համարձակու-
թիւն հաւատոյ մէջ որ ի Քրիստոս Յիսուս։
14 Ասոնք կը գրեմ քեզ՝ յուսալով գալ առ քեզ
15 ի մօտոյ. Բայց եթէ յամենամ, գիտասս թէ ինչ-
պէս պարտ է քեզ շրջել Աստուծոյ տանը մէջ, որ
է կենդանի Աստուծոյ եկեղեցին, սիւն և հաստա-
16 տութիւն ճշմարտութեան։ Եւ յայտնապէս մեծ է
խորհուրդն աստուածպաշտութեան. Աստուած
յայտնուեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով,
երեւեցաւ հրեշտակաց, քարոզուեցաւ հեթանո-
սաց մէջ, հաւատացուեցաւ յաշխարհի, համբար-
ձաւ փառօք։

Գլ. Դ

1 Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ ի յետին ժամա-
նակս ոմանք պիտի ապստամբին ի հաւատոյ, և
միտ պիտի դնեն մոլորեցուցիչ ոգիներու և դիւաց
2 ուսմանց, Մահասնեներուն կեղծաւորութեամբը,
3 որոց խիղճը խանձուած է. Որ պիտի արգիլուն
ամուսնանալ, և եռ պիտի պահեն կերակուր-
ներէ՛ զորս Աստուած ստեղծած է որ հաւատա-
ցեալք և ճշմարտութիւնը ճանչցողները վայելեն
4 գոհութեամբ. Քանզի ինչ որ Աստուած ստեղծեց՝

բարի է, և մերժելու բան չկայ, եթէ գոհու-
5 թեամբ ընդունուի. Քանզի Աստուծոյ խօսքովը
6 և աղօթիւք կը սրբուի։ Ցիշեցունելով ասոնք
եղբայրներուն պիտի ըլլաս բարի պաշտօնեայ Յի-
սուս Քրիստոսի, և պիտի սնանիս հաւատոյ խօս-
քերով և այն բարի վարդապետութեամբ որուն
7 եղար հետեւող։ Բայց ևս կեղծ պիտի պատա-
ւական առասպելներէ, և վարժեցուր քու անձդ
8 աստուածպաշտութեան. Քանզի մարմնոյ վար-
ժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աս-
տուածպաշտութիւնն ամէն բանի օգտակար է,
որ թէ ներկայ և թէ՛ ապառնի կենաց խոստումն
9 ունի։ Այս խօսքը հաւատարիմ է և բոլորովին
10 ընդունելութեան արժանի։ Քանզի բուն ասոր
համար կ'աշխատինք և նախատինք կը կրենք,
վասն զի կենդանի Աստուծոյ յուսացած ենք, որ
բոլոր մարդոց Փրկիչն է, մանաւանդ հաւատա-
11 ցելոց։ Այս բաները պատուիրէ և սորվեցուր։
12 Քու մանկութիւնդ չանարգէ ոք. այլ օրինակ
եղիր հաւատացելոց՝ բանիւ, վարուք, սիրով,
13 *հաւատով և մաքրութեամբ։ Մինչև ես գամ
միտ դիր կարդալու, յորդորելու, ուսուցանելու։
14 Անհոգ մի՛ ըլլար պարգեւին վրայ որ ի քեզ է, որ
մարգարէութեամբ տրուեցաւ քեզ երէցներուն
15 ձեռնադրութեամբը։ Աստոնց վրայ խորհէ և ա-
ստոնց պարապէ, որ քու յառաջդիմութիւնդ
16 յայտնի ըլլայ †ամենուն։ Զգուշացիր քու անձիդ
և վարդապետութեանդ, և միշտ ատոնց մէջ
կեցիր. քանզի այդպէս ընելով՝ պիտի ապրեցու-
նես և՛ զքեզ և՛ զանոնք որ կը լսեն քեզ։

---

*Ոմանք, հոգւով, հաւատով

†կամ, ամէն բանի մէջ

Գլ. Ե

1 Ընդոյն մի՛ սասաներ, այլ իբրև հայր յորդորէ ՚ՁՆ.
2 երիտասարդներն՝ իբրև եղբայր, Զպատասունս՝ իբրև զմարս, զմանկամարդս՝ իբրև զքոյր, ամե-
3 նայն մաքրութեամբ։ Զայրիս պատուէ, զանոնք
4 որ ճշմարտապէս այրի են։ Իսկ եթէ այրի մը որ-
դիներ կամ թոռներ ունի, թող նախ անոնք
սորվին իրենց տան մէջ որդիական գութ ցուցնել,
և փոխարէն հատուցանել իրենց ծնողաց. զանոնք
5 այն է բարի և ընդունելի Աստուծոյ առջև. իսկ
այն որ ճշմարտապէս այրի է և մինակ մնացած,
իւր յոյսն Աստուծոյ վրայ դրած է, և գիշեր ցե-
6 րեկ աղօթից և աղաչանաց կը պարապի. Բայց
7 փափկասէր այրին կենդանւոյն մեռած է։ Եւ այս
8 բաները պատուիրէ, որ անարատ ըլլան։ Բայց
եթէ ոք իրեններուն և մանաւանդ իւր ընտա-
նեաց հոգ չտանիր, այնպիսին ուրացած է հա-
9 ւատքը, և չար է քան զանհաւատն։ Այրիներս
կարգը Թող գաստի այրին որ վաթսուն տարուը-
10 նէ պակաս չէ, միայ առն կին, Բարի գործերով
վկայեալ. Թէ որդիներ սնուցած ըլլայ, Թէ հիւ-
րերը ընդունած ըլլայ, Թէ սուրբերուն ոտքերները
լուացած ըլլայ, Թէ նեղելոց օգնութիւն ըրած
ըլլայ, Թէ ամէն գործով բարեգործութեան մէջ
11 յառաջանած ըլլայ։ Բայց մերժէ մանկամարդ այ-
րիները. քանզի երբ Քրիստոսի դէմ չանբռնելով
կ'ըլլան անձնասէր հեշտասիրութեան, ամուս-
12 նանալ կ'ուզեն։ Եւ դատապարտութիւն կ'ընդ-
ունին, քանզի սկզբի նեռացին իրենց առաջին
13 հաւատքէն։ Նաև կը սորվին ծոյլ ըլլալ, չրջղզ
տանի ի տուն. և ոչ միայն ծոյլ, այլ և չատախօս
և հետաքրքիր, և կը խօսին անպատեհ բաներ։
14 Ուստի կ'ուզեմ որ մանկամարդ կանայք ամուս-
նանան, որդիս ծնանին, ըլլան անաչէն և նախա-

15 տանաց պատճառս չտան հակառակորդին։ Քանզի
արդէն ոմանք Սատանայի հետևէն խոտորեցան։
16 Եթէ հաւատացեալ այր կամ կին մարդ այրիներ
ունի, Թող օգնութիւն ընէ անոնց, և եկեղեցին
չծանրաբեռնի, որ ճշմարտապէս այրիներուն օգ-
նութիւն ընէ։
17 Բարւոք վերակացութիւն ընող երիցունք
կրկին պատուոյ արժանի Թող համարուին, մա-
նաւանդ անոնք որ կ'աշխատին խօսքը քարոզե-
18 լով և սորվեցնելով։ Քանզի Գիրքը կ'ըսէ Թէ
կալի մէջ ասլատող եզին դունչը չկապես, և
19 Թէ՝ Մշակն արժանի է իւր վարձուն։ Երիցու
վրայ ամբաստանութիւն մի՛ ընդունիր, բայց
20 միայն երկու կամ երեք վկայից։ Զանոնք որ
մեղք կը գործեն՝ ամենուն առջև յանդիմանէ,
21 որ և ուրիշները վախնան։ Վկայութիւն կը դնեմ
Աստուծոյ առջև և Տիսուս Քրիստոսի և ընտ-
րեալ հրեշտակաց, որ այս բաները պահես ա-
ռանց նախապաշարման, բան մը այառութեամբ
22 չընելով։ Եռատով ուրուք վրայ ձեռք չդնես, և
ուրիշներուն մեղաց հաղորդ չըլլաս. դուն զքեզ
մաքուր պահէ։
23 Ա յսուհետև լոկ ջուր չխմես, այլ փիչ մը գինի
ևս գործածէ ստամոքսիդ և յաճախ հիւան-
դութեանցդ համար։
24 Կան մարդիկ որոց մեղքը յայտնի են, և յա-
ռաջագոյն դատաստանի հասած. և կան՝ որոց
25 հետևէն կ'երթան։ Նոյնպես և գործոց բարի գոր-
ծերն յայտնի են. և անոնք որ ուրիշ կերպ են՝
չեն կրնար ծածուկ մնալ։

---

*Ոմն՝, Տէր Յիսուս

Գլ. Ջ

1 Ա.Ժ[1]ՆՔԸ որ ծառայութեան լծոյ տակ են՝ իրենց
տէրերն ամէն պատուոյ արժանի համարին, որ
Աստուծոյ անունը և վարդապետութիւնը չհայ-
2 հոյուի. եւ անոնք որ հաւատացեալ տէրեր ու-
նին, թող չարհամարհեն վասն զի եղբարք են,
այլ ծառայեն մանաւանդ, քանզի հաւատացեալ
են և սիրելի, որ բարերարութեան մասնակից
3 են. սորվեցուր այս բաները և յորդորէ։ եթէ
ոք ուրիշ կերպ սորվեցնէ, և չլսէ Տէառն մեր
Յիսուսի Քրիստոսի ողջամիտ խօսքերը, և
այն վարդապետութիւնը որ աստուածպաշտու-
4 թեան համեմատ է՝ Անհոգին հպարտացած է և
ոչինչ գիտէ, այլ ախտացած է վէճերով և բա-
նակռուութեամբք. յորոց կ'ըլլան նախանձ,
5 կռիւ, հայհոյութիւններ, չար կասկածներ, Ու-
նայն վէճեր մտօք ապականեալ և ճշմարտութե-
նէ հեռացեալ մարդոց, որ չահավաճառութիւն
կը համարին աստուածպաշտութիւնը. այնպիսի-
6 ներէն մէկդի կեցիր։ Սակայն աստուածպաշտու-
թիւնը բաւականութեամբ հանդերձ մեծ չահա-
7 վաճառութիւն է։ Քանզի ոչինչ բերինք աշ-
խարհ, և յայտնի է թէ ոչինչ կրնանք տանել։
8 Այլ ունենալով կերակուր և հանդերձ՝ անոնց-
9 մով բաւականանանք։ Բայց անոնք որ կ'ուզեն
հարստանալ, կ'ինկնան փորձութեան և որո-
գայթի և բազում անմիտ և վնասակար ցանկու-
թիւններու մէջ, որ ատակման և կորստեան
10 մէջ կ'ընկղմեն զմարդիկ։ Քանզի ամէն չարու-
թեան արմատ արծաթասիրութիւնն է. որուն ո-
մանք անձնատուր ըլլալով՝ մոլորեցան ի հաւա-
տոց և խոցեցին զիրենք չատ ցաւերով։
11 Բայց դուն, ով մարդ Աստուծոյ, փախիր այս
բաներէն, և դիմ զհետ արդարութեան, աս-

տուածպաշտութեան, հաւատոյ, սիրոյ, համբե-
12 րութեան, հեզութեան. Պատերազմէ հաւատոյ
բարի պատերազմը, բռնէ յաւիտենական կեանքը
առ որ կոչուեցար, և դաւանեցար բարի դաւա-
13 նութիւնը չատ վկաներուն առջեւ։ Կը պատուիրեմ
քեզ առաջի Աստուծոյ որ կենդանի կ'ընէ զամե-
նայն, և Քրիստոսի Յիսուսի՝ որ Պոնտացւոյ Պի-
14 ղատոսի առջեւ վկայեց բարի դաւանութիւնը, Որ
դուն այն պատուէրը պահես ամրիծ անարատ
մինչեւ Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յայտնու-
15 թիւնը, Զոր իւր ժամանակին պիտի ցուցնէ երա-
նելին և մի միայն Հզօրն, Թագաւորն Թագաւո-
16 րաց և Տէրն տերանց. Որ միայն ունի անմահու-
թիւն՝ և անմերձենալի լուսոյ մէջ կը բնակի, զոր
ոչ ոք ի մարդկանէ տեսաւ, և ոչ տեսանել կա-
րող է, որուն պատիւ և զօրութիւն յաւիտեանս։
Ամէն։
17 Մեծատանց որ այս աշխարհի մէջ են՝ պատուէր
տուր չհպարտանալ, և չդնել իրենց յոյսն անըս-
տոյգ հարստութեան վրայ, այլ կենդանի Աս-
տուծոյ, որ ամէն բան կու տայ մեզ վայելել ա-
18 ռատապէս, բարիս գործել, հարստանալ բարի
գործերով, ըլլալ առատաձեռն, հաղորդ ուրիշ
19 ոեոոյնց, Դանձել իրենց անձերուն բարի հիմն
հանդերձելոյն համար, որ յաւիտենական կեանքն
առանան։
20 Ով Տիմոթէոս, ինչ որ քեզ ա.անդը պահէ,
փախչելով պիղծ ունայնաբանութիւններէ և
առտանուն գիտութեան հակառակութիւններէն,
21 Զորս ոմանք դաւանելով մոլորեցան ի հաւատոց։
Շնորհք ընդ քեզ։ Ամէն։

---

[1] Ոմանք, Ճշմարիտ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամքո՛վ
Աստուծոյ ըստ խոստման կենաց որ է ի Քրիստոս
2 Յիսուս, Տիմոթէոսի սիրելի որդւոյս շնորհք, ո-
ղորմութիւն և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ
և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Շնորհակալ եմ Աստուծոյ որո՛ր կը պաշտեմ ի
նախնեաց մաքուր խղճիւ, (երբ անպակաս կը
յիշեմ զքեզ իմ աղօթիներուս մէջ գոյզ և գի-
4 րեկ, ցանկանալով տեսնել զքեզ, և յիշելով
արտասուքդ, որ ուրախութեամբ լցուիմ,)
5 Մխիթարելով անկեղծ հաւատքը որ ի քեզ, որ
բնակեցաւ յառաջագոյն ի հանիկ Լաւոդէ և ի
մայրդ Եունիկէ, և համոզուած եմ թէ ի քեզ ևս
6 կայ։ Վասն որոյ կը յիշեցնեմ քեզ արծարծել
Աստուծոյ պարգեւը, որ պատճառ է քեզ իմ ձեռ-
7 նադրութեամբս։ Քանզի Աստուած երկիւղու-
թեան հոգի չտուաւ մեզ, այլ՝ զօրութեան և սի-
8 րոյ և զգաստութեան։ Ուստի մի՛ ամաչեր
քիր Տեառն մերոյ վկայութիւնը, և ոչ ինձ կա-
պեալս անոր համար։ այլ մասնակից եղիր աւե-
տարանին չարչարանաց ըստ զօրութեանն Աստու-
9 ծոյ. Որ փրկեց զմեզ և տուրը կոչմամբ կոչեց,
ոչ թէ մեր գործերուն համեմատ, այլ ըստ իւր

նախասահմանութեան և շնորհաց, որ տրուեցաւ
մեզ Քրիստոս Յիսուսիս յառաջ քան զժամա-
10 նակս յաւիտենից, բայց հիմա յայտնուեցաւ ե-
րեւմամբ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ
խափանեց զմահ, և հանեց ի լոյս զկեանս և զան-
11 մահութիւնն աւետարանին միջոցաւ. Որոյ ես
դրուեցայ քարոզիչ և առաքեալ և վարդապետ
12 հեթանոսաց։ Վասն որոյ և կը կրեմ այս չար-
չարանքս. բայց ամօթ չեմ համարիր, քանզի
գիտեմ թէ որո՛ւ հաւատացած եմ, և համոզուած
եմ թէ ինչ որ աւանդեցի անոր՝ կրնայ պահել
13 մինչեւ այն օրը։ Պէտք բռնէ այն ողջամիտ խօսքե-
րուն օրինակը, զորս լսեցիր ինէ, հաւատով և
սիրով որ ի Քրիստոս Յիսուս։
14 Պահէ բարի աւանդն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ
15 որ ի մեզ բնակած է։ Գիտես որ երես դարձուցին
ինէ ամէնքը որ էին յԱսիա, յորոց են Փիգելոս
16 և Հերմոգինէս։ Տէրը ողորմութիւն տայ Ընեսի-
փորոսի տան, քանզի հանգոյց զիս շատ անգամ,
17 և ամօթ չհամարեցաւ շղթայս. Այլ երբ եկաւ
Հռոմ, փնտռեց զիս բարւոյ չափ, և գտաւ։
18 (Տէրը տայ անոր որ այն օրը ողորմութիւն գտնէ
Տէրոջմէն։) և Եփեսոսի մէջ ևս թէ որչափ սպա-
սաւորութիւն ըրաւ ինձ, դուն քա՛լ գիտես։

ԳԼ. Բ

1 Արդ դուն, որդեակ իմ, զօրացիր շնորհօք որ է
2 ի Քրիստոս Յիսուս։ Եւ այն բաները զորս լսեցիր
ինէ բազում վկայիս՝ յանձնէ հաւատարիմ մար-
դոց, որ կարող ըլլան ուրիշներուն ևս սորվեցու-
3 նել։ Նէ՛ւ Արդ դուն համբերէ նեղութիւններու իբրև
4 բարւոք զինուոր Յիսուսի Քրիստոսի։ Ոչ ոք որ
զինուոր է՝ կը զբաղի այս կենաց գործերով, որ-
5 պէս զի հաճոյ ըլլայ զօրավարին։ Եւ եթէ ոք կը

6 մրցել, չպսակուիը, եթէ չմրցիը ըստ օրինի։ Աչխա-
7 տող երկրագործին պարտ է նախ պտուղներէն
8 վայելել։ Խոսցիը ինչ որ կ'ըսեմ. Տէրը խնաստու-
9 Թիւն տայ քեզ յամենայնի։ Ցիչ պիտուս Քրիս-
10 տոս Դաւիթի ցեղէն, յարուցեալ ի մեռելոց ըստ
11 աւետարանին, Յորում կը չարչարուիմ իբրև չա-
12 րագործ կապանօք չար։ բայց Աստուծոյ խօսքը
13 կապուած չէ։ Ուստի ամենայնի կը համբերեմ
14 ընտրելոց համար, որ և անոնք հասնին փրկու-
15 Թեան որ է Քրիստոս Յիսուս յաւիտենական փա-
16 ռօք։ Ահա խօսքն հաւատարիմ է. վասն զի եթէ
17 մեռանք ընդ հետ, ընդ հետ ևս պիտի ապրինք,
18 եթէ համբերենք, ընդ հետ ևս պիտի Թագաւո-
19 րենք. եթէ ուրանանք զնա, նա ևս պիտի ու-
20 րանայ զմեզ։ եթէ չհաւատանք, ինք կը մնայ հա-
21 ւատարիմ, չկրնար ուրանալ իւր անձը։ Ասոնք
22 յիչեցուր՝ Տէրոջը առջև վկայութիւն դնելով,
23 չընել բանակռիւ յանօգուտս, ի կործանումն լսո-
24 ղաց։ Ջանա ընտիր կացուցանել քու անձդ Ա-
25 ստուծոյ առջև, իպակ առանց ամօթոյ, ճչմարտու-
26 Թեան խօսքն ուղիղ բացատրելով։ Բայց մէկդի
27 կեցիը պիղծ և ունայն խօսքերէն. քանզի անոնք
28 աւելի յառաջ կ'երթան ամբարչտութեան մէջ.
29 Եւ անոնց խօսքը ճարակ կը գտնէ քաղցկեղի
30 պէս. որոց կարգն են Հիմենէոս և Փիղետոս. Որ
31 ճչմարտութենէ մոլորեցան, և կ'ըսեն Թէ Յա-
32 րութիւնն արդէն եղած է, և կը կործա-
33 նեն անոնց հաւատքը։ Բայց Աստուծոյ հիմն
34 հաստատուն կը կենայ, և ունի այս կնիքը,
35 Թէ Տէրը կը ճանչնայ զանոնք որ իւրն են. և՝
36 Անիրաւութենէ մէկդի Թող կենայ այն ամէնը որ
37 կ'անուանէ *Քրիստոսի անուն։ Սակայն մեծ տան
38 մէջ կան ոչ միայն ոսկեղէն և արծաթեղէն ա-

*Ոմն։ Տէրոջը

մաններ, այլ և՝ փայտեղէն և հողեղէն, և ա-
21 մանք՝ իպատիւ, և ամանք՝ յանարգանս։ Ուստի
եթէ ոք մաքրէ իւր անձն այնպիսի բաներէ, պի-
տի ըլլայ անօթ պատուական, սրբուած և պիտա-
նի Տէառն, ամէն բարի գործերու պատրաստուած։
22 Նրհատասարական ցանկութիւններէ ևս փախիր,
և գնա զհետ արդարութեան, հաւատոյ, սիրոյ,
խաղաղութեան անոնց հետ որ Տէրոջը անուանէ կը
23 կոչեն մաքուր սրտով։ Բայց յիմար և անիմաստ
վէճերէ հրաժարէ, գիտնալով Թէ անոնցմէ կը
24 ծնանին կռիւներ. Եւ Տէրոջը ծառային չէ պարտ
կռուիլ, այլ լինել քաղցր առ ամենեսին, ուսու-
25 ցանող, անոխակալ, Հեզութեամբ խրատելով
հակառակորդները, որ Թերևս Աստուած տայ ա-
նոնց ապաշխարութիւնն ճանչնալ ճչմարտութիւնը,
26 Եւ սքանչին Սատանային որոգայթէն, որմէ
բռնուած են ըստ կամաց նորա։

Գլ. Գ

1 Եւ զայս գիտցիը որ յար ժամանակներ պիտի գան
2 հառչ օրերը. Քանզի մարդիկ պիտի ըլլան անձ-
նասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ,
հայհոյիչ, ծնողաց անհնազանդ, տպերախտ, ան-
3 սուրբ, Անգութ, անհաչտ, բանսարկու, անժուժ-
4 կալ, դաժանաբարոյ, անբարեսէր, Մատնիչ,
յանդուգն, գոռոզ, ցանկասէր մանաւանդ քան
5 աստուածասէր. Որ ունին աստուածպաշտու-
Թեան կերպարանքը, բայց ուրացած են անոր
6 զօրութիւնը. ասոնցմէ ևս խորչիր. Քանզի ասոնց-
մէ են որ կը սպրդին առներըը, և գերի կ'ընեն
մեղօք բեռնաւորեալ տկարամիտ կիներ, վարուած
7 պէսպէս ցանկութիւններէ, Որ միշտ կը սորվին,
և երբեք չեն կրնար հասնիլ ճչմարտութիւնը
8 ճանչնալու. Այլ ինչպես Յաննէս և Յամբրէս հա-

կառակ կեցան Մովսիսի, նոյնպէս և աստնք հա-
կառակ կը կենան Ճշմարտութեան. ապականեալ
մտօք մարդիկ, հաւատոյ մէջ անպիտանները են։
9 Բայց աւելի յառաջ պիտի չերթան, քանզի ատոնց
անմտութիւնն յայտնի պիտի ըլլայ ամենուն, ինչ-
10 պէս եղաւ անոնցը, իսկ դուն տեղեակ եղար իմ
վարդապետութեանս, վարուքս, դիտաւորու-
թեանս, հաւատոյս, երկայնմտութեանս, սիրոյս,
11 համբերութեանս, Հալածանացս, չարչարանացս,
ինչպէս եղան ինձ Յ[ի]կոնիոն և ի
Լիւստրա, որպիսի հալածանաց համբերեցի, և
12 ամենէն ազատեց զիս Տէրը։ Եւ բոլոր անոնք որ
կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրել ի Քրիս-
13 տոս Յիսուս՝ պիտի կրեն հալածանք։ Բայց չար և
խաբեբայ մարդիկ պիտի յառաջանան չարութեան
14 մէջ՝ մոլորեցնելով և մոլորելով։ Սակայն դուն
հաստատուն կեցիր այն բաներուն մէջ զորս ու-
սար և հաւատաք եղար, քանզի գիտես թէ որմէ՛
15 ուսած ես. Նաև ի մանկութենէդ հետ գիտես
զսուրբ Գիրս, որ կրնան իմաստուն ընել զքեզ ի
փրկութիւն հաւատով որ ի Քրիստոս Յիսուս։
16 *Բոլոր Գիրքն Աստուծոյ շնչյն է և օգտակար՝
սորվեցնելու, յանդիմանելու, ուղղելու և
17 խրատելու յարդարութիւն, որպէս զի Աստուծոյ
մարդը կատարեալ ըլլայ՝ պատրաստուած բոլոր
բարի գործերու։

Գլ. Դ

1 Ա.յս վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առջև և
Յիսուսի Քրիստոսի, որ պիտի դատէ զկենդանիս
և զմեռեալս իւր յայտնութիւնն և թագաւորու-

*կամ, Բոլոր աստուածաշունչ Գիրքն օգտակար
ևս է

2 թեան առնը. Քարոզէ խօսքը, մնադրութեամբ
պարապէ ըստ ժամանակին և ժամանակէ դուրս,
յանդիմանէ, սաստէ, յորդորէ ամենայն երկայն-
3 մտութեամբ և վարդապետութեամբ։ Քանզի ժա-
մանակ պիտի գայ որ պիտի չհանուն առղջամիտ վար-
դապետութեան, այլ իրենց ցանկութիւններուն
համեմատ պիտի դիզեն իրենց վարդապետներ ի-
4 րենց լսելեաց մարմնխելովը։ Եւ Ճշմարտութենէն
պիտի դարձունեն իրենց լսելիքը, և պիտի մոլո-
5 րին առասպելներու կողմ։ Բայց դուն արթուն
կեցիր յամենայնի, նեղութիւններու համբերէ,
աւետարանչի գործ գործէ, կատարէ քու պաշ-
6 տօնդ։ Քանզի ես արդէն ընծայուելու եմ, և
7 ժամկոնլուս ժամանակն հասած է։ Բարւոք պատե-
րազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի,
8 հաւատքը պահեցի։ Այսուհետև կայ ինձ
արդարութեան պսակը, զոր Տէրը, արդար Դատա-
ւորը, պիտի տայ ինձ այն օրը, և ոչ ինձ միայն
այլ և ամենուն՝ որ անոր յայտնութիւնը սիրեցին։
9 Ջանա վազ գալ առ իս. քանզի Դեմաս թողուց
զիս սիրելով գայժամս աշխարհ, և գնաց Թեսա-
10 ղոնիկէ. Կրեսկէս՝ Գաղատիա, Տիտոս՝ Դալմա-
11 տիա. Ղուկաս միայն ընդ իս է. զՄարկոս առ-
նուս բերես հետդ, քանզի օգտակար է նա ինձ
12 սպասաւորութեան համար։ Եւ ես զՏիւքիկոս
13 ղրկեցի Եփեսոս։ Վերարկուն զոր Թողի Տրովա-
դա Կարպոսի քով, երբ կու գաս, բեր, նաև
14 մատեանները, մանաւանդ մագաղաթները։ Աղէք-
սանդրոս դարբին չատ չարութիւն ըրաւ ինձ.
Տէրը *հատուցանէ նմա ըստ գործերուն համե-
15 մատ։ Դուս ևս զգուշանաս անկէ, քանզի չատ
16 հակառակեցաւ մեր խօսքերուն։ Առաջին անգամ
որ պատասխան տուի առաջին առջև, իմ կողմ-

*Ոմանք, պիտի հատուցանէ

մանէս ոչ ոք կեցաւ ինծի հետ, այլ ամէնքը թո-
17 ղին զիս. այս չհամարուի անոնց։ Բայց Տէրը կե-
ցաւ ինծ. եւ զօրացուց զիս, որ քարոզութիւնն լը-
րնայ իմ միջոցովս, եւ բոլոր հեթանոսները լսեն.
18 եւ ազատեցայ առիւծուն բերնէն։ Եւ Տէրը պի-
տի ազատէ զիս ամէն չար գործէ, եւ ապահովու-
թեամբ պիտի հասցունէ իր երկնային թագաւո-
րութիւնը. նմա փառք յաւիտեանս յաւիտենից։
Ամէն։
19 Ողջոյն տուր Պրիսկեայ եւ Ակիւղասայ, եւ Ոնե-
20 սիփորայ տանը։ Երաստոս մնաց ի Կորնթոս. եւ
21 զՏրոփիմոս Թողի ի Միլիտոս հիւանդացեալ։ Ջա-
նա գալ յառաջ քան զձմեռն։ Ողջոյն կու տան
քեզ Եբուղոս եւ Պուդէս եւ Լինոս եւ Կղոդիա եւ
22 բոլոր եղբարքն։ Տէր Յիսուս Քրիստոս քու հոգ-
ւոյդ հետ ըլլայ. շնորհք ընդ ձեզ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, ծառայ Աստուծոյ եւ առաքեալ Յիսուսի
Քրիստոսի, ըստ հաւատոյ ընտրելոցն Աստուծոյ,
եւ գիտութեան ճշմարտութեան որ է ըստ աս-
2 տուածպաշտութեան, յուսիտենական կենաց յու-
սով, զոր ինքն անսուտն Աստուած խոստացաւ

3 յառաջ քան զժամանակս յաւիտենից, բայց յայ-
տնեց իւր խօսքը բուն ժամանակին քարոզութեամբ,
որ յանձնուեցաւ ինձ մեր Փրկչին Աստուծոյ հրա-
4 մանաւ, Տիտոսի, հարազատ որդւոյս հասարակաց
հաւատով, շնորհք և խաղաղութիւն չնաւտուծոյ
Հօրէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ մեր Փրկչէն։
5 Վասն այնորիկ Թողի զքեզ ի Կրետէ, որ ինչ
պակաս որ կայ, ուղղես, և իւրաքանչիւր քաղաքի
մէջ կարգես երէցներ, ինչպէս պատուիրեցի քեզ.
6 Եթէ ոք անմեղադրելի է, միոյ կնոջ այր, և հաւա-
տացեալ տղաք ունի, որ անառակութեան համար
7 ամբաստանուած չեն կամ անհնազանդ. Քանզի
եպիսկոպոսին պարտ է անմեղադրելի ըլլալ Աս-
տուծոյ տնտեսի պէս. մի՛ յանդուգն, մի՛ բարկա-
ցող, մի՛ գինեմոլ, մի՛ հարկանող, մի՛ զօշաքաղ,
8 Այլ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ,
9 ժուժկալ, Հաստատ բռնելով վարդապետութեան
հաւատարիմ խօսքը, որ կարող ըլլայ օղջամիտ
վարդապետութեամբ յորդորել, և յանդիմանել
10 հակառակորդները։ Քանզի շատ են անհնազանդք,
զրահասք և մոլորեցուցք, մանաւանդ անոնք որ
11 թլփատութենէ են. Զորս պարտ է պատժաձեղուս-
նել, որ ամբողջ տուներ կը կործանեն, և կը սո-
վրեցունեն անպատեհ բաներ զօշաքաղութեան
12 համար։ Անոնցմէ մին, բուն իսկ անոնց մարգա-
բէն, ըսաւ, Կրետացիք միշտ ստահօսք են, չար
13 գազաններ, դատարկապօրաք։ Այս վկայութիւնը
ճշմարիտ է. վասն որոյ սաստիկ յանդիմանէ զա-
14 նոնք, որ առողջանան ի հաւատս։ Եւ չհայեն Հրէա-
կան առասպելաց և ճշմարտութենէ հեռացոյց
15 մարդոց պատուէրներուն։ Ամէն բան մաքուր է
մաքուրներուն, բայց պիղծերուն և անհաւատ-
ներուն չկայ մաքուր բան, այլ անոնց թէ միտքն

*Ոմանք, ողջմտութիւն և

16 և թէ՛ խիղճը պղծուած են, կը խոստովանին թէ
կը ճանչնան զԱստուած, բայց կ՚ուրանան գոր-
ծով, ըլլալով պիղծ և անհնազանդ, և առ. ամե-
նայն բարի գործ անպիտան։

Գլ. Բ

1 Բայց դուն խօսէ ինչ որ կը վայելէ ողջամիտ վար-
2 դապետութեան. Ծերերուն՝ զգաստ ըլլալ, ծան-
րաբարոյ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատով, սիրով,
3 համբերութեամբ։ Նոյնպէս և պատուական այ-
պիսի վարք ունենալ, ինչպէս կը վայելէ սրբու-
թեան, ոչ բանսարկու ըլլալ, ոչ *գինեմոլ, այլ
4 բարի խրատ տուող։ Որ խրատեն զմանկամարդս
5 ըլլալ այրասէր և որդեսէր, խոհեմ, ողջամիտ,
տնաշէն, բարեգործ, հնազանդ իրենց արանց,
6 որպէս զի չհայհոյուի Աստուծոյ խօսքը։ Նոյնպէս
7 և զերիտասարդս յորդորէ խոհեմ ըլլալ։ Յամե-
նայնի ցուցնելով քու անձդ օրինակ բարի գոր-
ծերու, վարդապետութեան մէջ անեղծութիւն,
8 պարկեշտութիւն, ողջամիտ և անմեղադրելի խօսք,
որ հակառակ կեցողն ամչնայ, և մեր վրայ չար
9 բան չունենայ ըսելու։ Ծառաներուն՝ հպատակ
իրենց տերանց հնազանդ ըլլալ, և յամենայնի
10 հաճելի։ ոչ հակառակախօս, ոչ խորտիկ, այլ բո-
լորովին բարի հաւատարմութիւն ցուցնեն, որ
ամէն բանի մէջ զարդարեն մեր Փրկչին Աստուծոյ
11 վարդապետութիւնը։ Քանզի Աստուծոյ փրկարար
12 շնորհքը երեւեցաւ բոլոր մարդոց, Եւ կը խրատէ
զմեզ որ ուրանալով ամբարշտութիւնը և աշխար-
հային ցանկութիւնները, սոսկինք այժմու աշխար-
հի մէջ զգաստութեամբ և արդարութեամբ և բա-
13 բեպաշտութեամբ, Եւ սպասենք երանելի յուսոյն,

*Յոյն, ծառայացեալ բազումի դիւրոյ

և մեծին Աստուծոյ և մեր Փրկչին Յիսուսի Քրիս-
14 տոսի փառաց յայտնութեան։ Որ տուաւ իւր անձը
մեզի համար, որ ազատէ զմեզ ամէն անօրէնու-
թենէ, և մաքրէ իրեն սեպհական ժողովուրդ՝
15 բարի գործերու նախանձաւոր։ Այդ բաները խօսէ
և յորդորէ և յանդիմանէ բոլորովին սաստելով,
ոչ ոք անարգէ զքեզ։

Գլ. Գ

1 Յիշեցուր անոնց հնազանդիլ իշխանութեանց և
պետութեանց և հպատակ ըլլալ, և պատրաստ
2 գտնուիլ ամէն բարի գործերու։ Ոչ զոք հայհոյել,
չըլլալ կռուարար, այլ հեզ, ցուցնել ամէն մար-
3 դու բոլորովին քաղցրութիւն։ Քանզի մենք ևս
երբեմն էինք անմիտ, անհնազանդ, մոլորեալ, և
կը ծառայէինք պէսպէս ցանկութեանց և հե-
ւութեանց, կը վարուէինք չարութեամբ և նա-
4 խանձու, ատելի էինք, և կ՚ատէինք զերար։ Բայց
երբ յայտնուեցաւ մեր Փրկչին Աստուծոյ քաղցր-
5 րութիւնը և մարդասիրութիւնը, ոչ թէ արդա-
րութեան գործերէն զոր ըրինք մենք, այլ ըստ
իւր ողորմութեան փրկեց զմեզ վերստին ծնանել
աւազանին միջոցաւ և նորոգմամբ Հոգւոյն Սրբոյ,
6 Զոր առատութեամբ թափեց մեր վրայ Յիսուսի
7 Քրիստոսի մեր Փրկչին ձեռօք, Որ անոր շնորհքին
արդարացած՝ ըլլանք ժառանգ յաւիտենական
8 կենաց յուսով։ Այս խօսքն հաւատարիմ է, և
կ՚ուզեմ որ այս բաներուն վրայ հաստատուն ըլ-
լաս, որպէս զի հաւատացեալք յԱստուած փոյթ
տանին բարի գործերու վրայ ըլլալ։ Ասոնք են
9 բարի և մարդոց օգտակար։ Բայց դուն զգուշա-
ցիր յիմարական վիճեցուկ և ազգահամարներէ և
հակառակութիւններէ և օրինաց վրայ կռիւներէ,
10 զանոնք անօգուտ են և անոտի։ Հերձուածող մար-

դէ, առաջին և երկրորդ անգամ խրատեցէք տաքը,
11 հրաժարեր, Գիտնալով որ այնպիսին խոտորած է,
և մեղք կը գործէ ինքզինք դատապարտելով։
12 Երբ զԱրտեմաս կամ զՏիւքիկոս ղրկեմ առ
քեզ, չանա գալ առ իս ի Նիկոպոլիս, քանզի
13 ձրէ ի մտի ձմեռել հոն։ ԶԶենաս օրինական և
զԱպողոս փութով յուղարկէ, հոգ պահելով որ
14 անոնց բան չպակսի։ Եւ մերոյներն ևս թող սոր-
վին բարի գործերու թեւակոխել ըստ կարևոր
15 պիտոյից, որպէս զի չըլլան անպտուղ։ Ողջոյն
կու տան քեզ ամենքը որ ինծի հետ են. ողջոյն
տուր անոնց որ զմեզ կը սիրեն հաւատով. շնորհք
ձեր ամենուն հետ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 Պօղոս, կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տիմո-
թէոս եղբայր, փիլիմոնի մեր սիրելւոյն և գոր-
2 ծակից, Եւ Ափփիայ սիրելւոյ, և Արքիպպոսի մեր
3 գինուորակցին, և առանին եկեղեցւոյդ. Շնորհք
և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ մեր Հօրմէն և
ի Տէառնէն Յիսուսէ Քրիստոսէ։
4 Կը գոհանամ միշտ իմ Աստուծմէս յիշելով զքեզ
5 աղօթիներուս մէջ, երբ կը լսեմ սէրը և հաւատքը
զոր ունիս առ Տէր Յիսուս և առ ամենայն սուրբս,
6 Որ քու հաւատոյդ հաղորդակցութիւնը արդիւ-

նաւոր ըլլայ, երբ ճանչցուի ամէն բարութիւն որ
7 եղած է *ի ձեզ ի Քրիստոս Յիսուս։ Քանզի չատ
ուրախութիւն և մխիթարութիւն ունինք քու
սիրոյդ վրայ, որ սուրբերուն սիրտերը քեզմով
հանգչած են, եղբայր։
8 Վասն որոյ թէև չատ համարձակութիւն ունիմ
Քրիստոսով հրամայելու քեզ ինչ որ վայելուչ է,
9 Բայց մանաւանդ սիրոյ համար կ'աղաչեմ, իբրև
այնպիսի որպիսի Պօղոս ծերացեալ, և հիմա ծի-
10 սուած Քրիստոսի համար կապեալ ևս, կ'աղաչեմ
զքեզ իմ որդւոյս Ընեսիմոսի համար զոր ծնայ
11 իմ կապանացս մէջ. Որ երբեմն անպիտան էր
քեզ, բայց հիմա թէ քեզ և թէ՛ ինծ պիտանի է.
12 Զոր ես դրկեցի. դուն ևս ընդունէ զնա որ է իմ
13 սրտիս. Զոր կամէի պահել առ իս, որ փոխանակ
քու սպասաւորութիւն ընէր ինձ աւետարանին
14 կապանաց մէջ։ Բայց առանց քու կամացդ չուզե-
ցի բան մը ընել, որ քու բարերարութիւնդ ե-
ղած չըլլայ իբր թէ ստիպմամբ, այլ կամաւ։
15 Գանզի թերևս այս պատճառաւ զատուեցաւ նա
առ ժամանակ մի, որ յաւիտեան ունենաս զնա,
16 Ոչ թէ այլ ևս իբրև ծառայ, այլ ի վեր քան
ղծառայ, իբրև սիրելի եղբայր. Ե՛նէ ինծ այս-
պէս է, ո՛րչափ ևս աւելի պիտի ըլլայ քեզ թէ՛
17 մարմնով կողմանէ և թէ՛ Տէրոջը։ Ուստի եթէ դին
հաղորդ կը համարիս ինձ, ընդունէ զնա որպես
18 թէ զիս։ Եւ եթէ անրաւութիւն ըրած է քեզ
կամ պարտք ունի, զայն անցուր իմ հաշուոյս.
19 Ես Պօղոս իմով ձեռամբ գրեցի, ես կը հատու-
ցանեմ, որ չըսեմ քեզ թէ դուն ևս քու անձդ.
20 պարտական ես ինձ։ Այո, եղբայր, թող քենի
ունենամ այս օգուտը Տէրոմբ. հանգչեցուր իմ
21 սրտիս *ի Տէր։ Քու հնազանդութեանդ վստահա-

*Ոմանք, ի մեզ †Ոմանք, ի Քրիստոս

նալով գրեցի քեզ, քանզի գիտեմ թէ պիտի ընդհատ աւելի քան զոր կ'ըսեմ։
22 Միանգամայն բնակարան ևս պատրաստէ՛ ինձ, քանզի կը յուսամ թէ ձեր աղօթից միջոցաւ պի-
23 տի շնորհուիմ ձեզ։ Ողջոյն կու տայ քեզ Եպափրաս, գերեկից իմ ի Քրիստոս Ցիսուս. Նո-
24 Մարկոս, Արիստարքոս, Դեմաս, Ղուկաս, գործա-
25 ծակիցք իմ։ Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի շնորհքը ձեր հոգւոյն հետ ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Աստուած որ բազում մասամբք և բազում ե-
ղանակօք կանխաւ խօսեցաւ հայրերուն հետ մար-
2 գարէից, Այս յետին օրերը խօսեցաւ մեզի հետ
Ե՛ր Որդւովը, զոր դրաւ ժառանգ ամենայնի, ո-
3 րով և զաշխարհս ստեղծեց, Որ է լոյս փառաց և
բուն պատկեր էութեան նորա, որ իւր զօրու-
թեան խօսքովն ամէն բան կը կրէ, և իւր ան-
ձամբը սրբեց մեր մեղքերը և նստաւ բարձրերը
4 Աստուածային մեծութեան ա՛ջ կողմը։ Եւ այնչափ աւելի
եղաւ քան զհրեշտակս գերազոյն քան զնոսա աւելի
5 լաւ անուն ժառանգեց։ Քանզի հրեշտակներէն
որո՞ւմ բսաւ երբեք, Դու ես իմ Որդիս, ես այսօր

ծնայ զքեզ։ և դարձեալ Ես անոր Հայր պիտի
6 ըլլամ, և նա Որդի պիտի ըլլայ ինձ։ Եւ դարձեալ,
երբ Անդրանիկը կը մուծանէ յաշխարհ, կ'ըսէ,
Աստուծոյ բոլոր հրեշտակները Թող երկրպագեն
7 անոր։ Եւ հրեշտակներուն վրայ կ'ըսէ, Որ իւր
հրեշտակները կ'ընէ հոգիներ, և իւր պաշտօնեա-
8 ները՝ կրակի բոց։ Սակայն Որդւոյն կ'ըսէ, Քու
աթո՛ռդ, ով Աստուա՛ծ, յաւիտեանս յաւիտենից
է. քու Թագաւորութեանդ գաւազանը ուղղու-
9 թեան գաւազան է։ Սիրեցիր զարդարութիւն և
ատեցիր զանօրէնութիւն. վասն որոյ, ով Աս-
տուա՛ծ, քու Աստուածդ օծից զքեզ ուրախու-
10 թեան իւղով առաւել քան զընկերս քու։ Եւ՝
Դուն, ով Տէր, ի սկզբանէ զերիր երկրին հիմերը,
11 և երկինք քու ձեռացդ գործն է. Անոնք պիտի
կորսուին, բայց դու կը կենաս և կը մնաս. և ա-
12 մէնքը հանդերձի պէս պիտի մաշին, Եւ վերար-
կուի պէս պիտի գալարես զանոնք, և պիտի
փոխուին. բայց դու նոյն ես, և քու տարիներդ
13 պիտի չպակսին։ Եւ հրեշտակներէն որո՞ւմ ըսաւ
երբեք, Իմ աջ կողմն նստէ, մինչև դնեմ քու
14 թշնամիներդ պատուանդան ոտիցդ։ Ո՞չ ապաքէն
անոնց ամէնքը սպասաւորող հոգիներ են, որ կը
ղրկուին ի սպասաւորութիւն անոնց համար որ
պիտի ժառանգեն փրկութիւն։

ԳԼ. Բ

1 Վասն որոյ պարտ է մեզ աւելի եւս միտ դնել
այն բաներուն զորս լսեցինք, որպէս զի չպակ-
2 սինք երբեք։ Վասն զի եթէ խօսքը որ հրեշ-
տակներուն միջոցաւ բսուեցաւ՝ հաստատուն ե-
ղաւ, և ամէն յանցաւորութիւն և անհնազան-
3 դութիւն առաւ արդար հատուցումն, Ա՜ռ մենք
ինչպէս պիտի ազատինք, եթէ անհոգ ըլլանք

այնպիսի մեծ փրկութենէ, որ խօսուելու սկիզբն առաւ Տէրոջմէ, և լսողներուն ձեռօք հաստատուեցաւ առ մեզ. 4 Աստուած ևս վկայեց նշանօք և հրաշիւք և պէսպէս զօրութեամբք և Սուրբ Հոգւոյն պարգևներով՝ ինչպես ինք կամեցաւ։ 5 Քանզի ոչ թէ հրեշտակներուն հնազանդեցուց գալու աշխարհը, որոյ վրայ կը խօսինք մենք. 6 Այլ ոմն տեղ մը վկայեց և ըսաւ, Ինչ է մարդ որ կը յիշես զնա, կամ մարդու որդին որ այցելութիւն կ'ընես անոր. փոքր մի խոնարհ ըրիր զնա քան զհրեշտակս. փառօք և պատուով պսակեցիր զնա, և դու ձեռացդ գործերուն վրայ 8 կեցուցիր զնա. Ամէն բան հնազանդեցուցիր անոր ոտից տակ. ուստի երբ հնազանդեցուց նմա ամէնքը, չթողուց բան մը անհնազանդ նմա. բայց հիմա դեռ չենք տեսներ ամէնքը անոր հնազանդած. Սակայն կը տեսնենք փառօք և պատուով պսակուած զԻիսուս որ քան զհրեշտակս փոքր մի խոնարհ եղած էր մահուան չարչարանաց համար, որպէս զի շնորհօքն Աստուծոյ մահ ճաշակէ ամենուն համար։ 10 Վասն զի կը վայելէր Անոր, (որոյ համար ամէն բան, և որով ամէն բան եղած է,) շատ որդիներ մուծանելու առեն ի փառս՝ կատարել անոնց փրկութեան Առաքինապետը չարչարանօք։

11 Վասն զի այն որ կը սրբէ և այն որ կը սրբուին, ամէնքն ի միոջէ են. վասն որոյ առթի չհամարիր 12 եղբայր կոչել զանոնք, ըսելով, Ձեռ անուանդ պիտի պատմեմ եղբայրներուս, ժողովի մէջ պիտի գովեմ զքեզ։ 13 Եւ դարձեալ, Ես անոր պիտի յուսամ. և դարձեալ, Ահա ես և մանկունքը զոր տուաւ ինձ Աստուած։ 14 Ուստի, որովհետև մանկունք հաղորդ եղան մարմնոյ և արեան, ինքն ևս եղաւ անոնց բաժանորդ, որ ի՛ր մահուամբն ունայնացուցէ զայն որ մահուան

15 իշխանութիւնն ունէր, այսինքն զԱսատանայ. Եւ ազատէ զանոնք որ մահուն երկիւղով կ'ապրէին 16 միչտ ի ծառայութեան։ Քանզի ոչ երբեք հրեշտակաց ձեռք կը բռնէ, այլ Աբրահամու սերընդից։ 17 Վասն ձեռք կը բռնէ, վասն որոյ պարտ էր նմա բոլորովին նմանիլ եղբայրներուն, որ ըլլայ ողորմած և հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ կողմանէ, ժողովրդեան մեղքը քաւելու։ 18 Քանզի յորում ինքն չարչարեցաւ փորձութիւն կրելով կրնայ փորձանաւորաց ևս օգնական ըլլալ։

Գլ. Գ

1 Ուստի, սուրբ եղբայրներ, երկնային կոչման մասնակիցներ, նայեցէք մեր դաւանութեան Առաքեալին և Քահանայապետին, Յիսուսի Քրիստոսի. Որ հաւատարիմ է անոր որ զնա, ինչպես և 3 Մովսէս՝ անոր բոլոր տան մէջ։ Քանզի ինք արժանացաւ քան զՄովսէս աւելի փառաց, որչափ աւելի պատիւ կ'ունենայ քան չինողը զտունը։ 4 Քանզի ամէն տուն կը չինուի յումեքէ, բայց այն որ ամէն բան չինեց՝ Աստուած է։ 5 Եւ արդարև Մովսէս հաւատարիմ էր անոր բոլոր տանը մէջ իբրև ծառայ՝ ըսուելու բաներուն վկայ 6 ըլլալու համար, Բայց Քրիստոս՝ իբրև որդի իր տանը վրայ, որոյ տունը մենք ենք, միայն թէ հաստատ բռնենք հաւատարմութիւնը և յուսոյն պարծանքը մինչև ի վախճան։

7 Ուստի, ինչպես կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ 8 պիտի լսէք անոր ձայնին, Մի՛ խստացուցէք ձեր սիրտերն, ինչպես երբ բարկացուցին զԱստուած 9 փորձութեան օրն անապատին մէջ, Ուր ձեր հայրերը փորձեցին զիս, քննեցին զիս, և տեսան 10 քառասուն տարի իմ գործերս. Վասն որոյ զղուե-

ցայ այն աղքէն, և ըսէ, Մի՛յս մոլորած են սրտով,
11 և չ՚ճանչցան իմ ճամբաներս. ուստի երդուայ իմ
բարկութեանս մէջ թէ պիտի չմտնեն իմ հան-
12 գիստս։ Նայեցէ՛ք, եղբարք, որ ձեզմէ մէկուն մէջ
չըլլայ անհաւատութեան չար սիրտ ապստամբ ըլ-
13 լալ կենդանի Աստուծմէ։ Այլ ամէն օր յորդո-
րեցէ՛ք զիրար, մինչդեռ այսօր կ՚ըսուի, որ ձեզմէ
14 ոչ ոք յաստանայ մեղուց խաբէութեամբ։ Քանզի
մենք Քրիստոսի մասնակից եղած ենք, միայն թէ
հաստատ բռնենք վստահութեան սկիզբը մինչև
15 ի վախճան։ Մինչ դեռ կ՚ըսուի, Այսօր եթէ պիտի
լսէք անոր ձայնին, մի՛ խստացուցէ՛ք ձեր սիրտերը
16 ինչպես բարկացուներնուս ատենը։ Քանզի՞ ոմանք
լսեցին և բարկացուցին, բայց ոչ թէ՝ այն ամէնը
17 որ ելած էին Եգիպտոսէ Մովսէսէ ձեռօք։ Ցորո՞ց
զղուեցաւ այն քառասուն տարին։ ո՞չ ապաքէն
մեղանչողներէն, որոց ոսկորներն ինկան անապա-
18 տին մէջ։ Եւ որո՞ց հա՛մբ երդուաւ որ չմտնեն իր
19 հանգիստը, եթէ ոչ անհաւատներուն։ Եւ կը տես-
նենք որ չկրցան մտնել անհաւատութեան համար։

Գլ. Դ

1 Ասկա ուրեմն վախնանք, որ ձեզմէ ոք գրկուած
չգտնուի անոր հանգիստը մտնելու խոստմանէն
2 որ մնացած է դէ՛ւ քանզի մենք ևս աւետիս առած
ենք անոնց պէս։ բայց անոնց օգուտ չըրաւ լսել
3 այն խօսքը, քանզի հաւատով խառնուած չէր
լսողներուն մէջ։ Իսկ մենք որ հաւատացինք՝
կը մտնենք հանգիստը։ ինչպես ըսաւ, Ուստի
երդուայ իմ բարկութեանս մէջ թէ պիտի չմտնեն
իմ հանգիստս։ Թէև անոր գործերն աշխարհի
4 սկիզբէն եղած էին։ Քանզի Գէ՛ր այսպես կ՚ըսէ

[1] Կա՛մ, որո՞նք լսեցին և բարկացուցին. ո՛չ ապաքէն

տեղ մը եօթներորդ օրուան համար, ու Աստուած
հանգեաւ եօթներորդ օրը իւր բոլոր գործերէն։
5 Ու հոս դարձեալ կ՚ըսէ թէ պիտի չմտնեն իմ հան-
6 գիստս։ Ուստի որովհետև ոմանց կը մնայ մտնել
հոն, և անոնք որ յառաջագոյն առած էին աւե-
7 տիս, չմտան անհաւատութեան համար, Դարձեալ
կը սահմանէ օր մը և կ՚ըսէ, Այսօր, Դաւթի բեր-
նով այնչափ ժամանակ հետքէս որ ըսուե-
ցաւ, Այսօր եթէ պիտի լսէք անոր ձայնին, մի՛
8 խստացունէք ձեր սրտերը։ Քանզի եթէ Յեսուս
հանգուցած ըլլար զանոնք, այնուհետև ուրիշ
9 օրուան համար չէր ըսեր։ Ուրեմն Աստուծոյ ժո-
10 ղովրդեան կը մնայ դէ՛ւ հանգիստ։ վասն զի այն
որ մտաւ անոր հանգիստը, այլ և հանգեաւ իւր
11 գործերէն, ինչպես Աստուած իրեններէն։ Ուրեմն
ջանանք մտնել այն հանգիստը, որ նոյն անհա-
12 պատութեան օրինակին պէս չինայ ոք։ Քանզի
Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրեղ, և հատու
քան զամենայն երկսայրի սուր, և կը թափանցէ
մինչև բաժնել չունչը և ոգին, յօդուածներըը և
ծուծը, և քննիչ է մտաց և խորհրդոց սրտին։
13 Ու չկայ արարած որ չերևնայ անոր դիմացը, այլ
ամէն բան բաց և յայտնի է անոր աչաց առջև,
որուն պէտք է տալ մեր հաշիւը։
14 Արդ մենք որ մեծ քահանայապետ ունինք
անցած ընդ երկինս, զՅիսուս Աստուծոյ Որդին,
15 պինդ բռնենք դէր դաւանութիւնը։ Քանզի ոչ թէ
ունինք այնպիսի քահանայապետ որ կարող չէ
կարեկից ըլլալ մեր տկարութիւններուն, այլ ամէն
կերպով փորձուեցաւ իբրև մեզ, բայց առանց
16 մեղաց։ Ուստի այսուհետև համարձակութեամբ
մտանենք շնորհաց աթոռին առջև, որ ընդու-
նինք ողորմութիւն և գտնենք շնորհք օգնել դէղ
ի դէպ ժամանակի։

Գլ. Ե

1 Քանզի ամէն քահանայապետ մարդոց մէջէն առ-
նուած՝ մարդոց համար կը կենայ Աստուծոյ կողմը,
որպէս զի պատարագներ և զոհեր մատուցանէ
2 մեղաց համար. Եւ կարող է կարեկից ըլլալ անոնց
որ տգէտ և մոլորեալ են, քանզի ինքն ևս պա-
3 տրեալ է տկարութեամբ. Եւ այս պատճառաւ
պարտական է, ինչպէս ժողովրդեան, նոյնպէս
իւր անձին համար մատուցանել մեղաց պատա-
4 րագ. Եւ ոչ ՔԵ ոք ինքնին կ'առնու այս պա-
տիւը, այլ նա որ Աստուծմէ կոչուած է, ինչպէս
5 Ահարոն. Նոյնպէս և Քրիստոս ոչ ՔԵ իւր անձը
մեծարեց քահանայապետ ըլլալ, այլ նա՝ որ ըսաւ
անոր ՔԵ Դու ես իմ Որդիս, ես այսօր ծնայ
6 զքեզ. ինչպէս և այլուր կ'ըսէ, Դու յաւիտեան
7 քահանայ ես ըստ կարգին Մելքիսեդեկի. Որ իւր
մարմնոյն օրերը աստիճ գոչմամբ և արտասուօք
աղօթք և աղաչանք մատոյց անոր՝ որ կարող էր
մահուանէ ազատել զնա, և լսուեցաւ *առ եր-
8 կիւղածութեանն՝, Եւ ՔԵպէտ Որդի էր, իւր չար-
9 չարանքէն սորվեցաւ հնազանդութիւն. Եւ կա-
տարուելով՝ եղաւ պատճառ յաւիտենական փրկու-
10 թեան բոլոր իրեն հնազանդողներուն, Եւ Աս-
տուծմէ կոչուեցաւ քահանայապետ ըստ կարգին
11 Մելքիսեդեկի։ Որոյ վրայ ունինք բանալու շատ բան,
որ և դժուարին է մեկնել, քանզի ձեր լսելիքը
12 բթացած են. Վասն զի, մինչ պարտ էր ձեզ ժա-
մանակին նայելով ուսուցանող ըլլալ, դարձեալ
պէտք ունիք ուսանիլ ՔԵ ինչ են Աստուծոյ պատ-
գամներուն առաջին սկզբունքը, և կարօտ եղաք
13 կաթին, ոչ ՔԵ հաստատուն կերակրոյ։ Քանզի
ամէն ումինը որ կաթնկեր է՝ անհմուտ է արդա-

*Կամ, երկիւղին պաշտելով

14 րութեան խօսքին, վասն զի տղայ է։ Բայց հաս-
տատուն կերակուրն է կատարելոց համար, որոց
զգայարանքը սովորութեամբ կրթուած են որո-
շել բարին և չարը։

Գլ. Զ

1 Ուստի Թողլով առաջին ուսանելիքը Քրիստոսի
վրայ՝ գանք կատարելոյն, չդնելով դարձեալ հիմն
մեռած գործերէն ապաշխարութեան, և հաւա-
2 տոյ առ Աստուած, Մկրտութիւններուն վար-
դապետութեան, և ձեռք դնելու, և մեռելոց
յարութեան, և յաւիտենական դատաստանին։
3 Եւ այս պիտի ընենք, եթէ Աստուած հրամայ
4 տայ։ Քանզի անհնար է միանգամ լուսաւորելոց,
որ առին երկնաւոր պարգեւին համը, և հաղորդ
5 եղան Հոգւոյն Սրբոյ, Եւ առին Աստուծոյ բարի
խօսքին և հանդերձեալ աշխարհին զօրութիւն-
6 ներուն համը, Եթէ խնան, դարձեալ նորոգուիլ
ապաշխարութեամբ. վասն զի Աստուծոյ Որդին
կրկին խաչը կը հանեն իրենց անձանց, և կը խա-
7 տահակեն։ Քանզի երկիր որ կը խմի իր վրայ
շատ անգամ եկած անձրևը, և կը բերէ ար-
դիւնք պիտանի անոնց որոց համար կը մշակուի,
8 կ'ընդունի օրհնութիւն Աստուծմէ։ Բայց այն որ
կը բերէ փուշ և տատասկ՝ անպիտան է և անի-
9 ծից մօտ, և անոր վերջն այրումն է։ Իսկ մենք,
սիրելիք, ունինք ձեր վրայ լաւագոյն և փրկու-
թեան վերաբերեալ յոյսեր, թէև այսպէս կը
10 խօսինք։ Քանզի անիրաւ չէ Աստուած, որ մոռ-
նայ ձեր գործը, և սէրը զոր ցուցիք անոր ան-
ուանը համար, որ և ծառայեցիք սուրբերուն և
կը ծառայէք։
11 Բայց մենք կը բաղձանք որ ձեզմէ իւրաքանչիւր
ոք ցուցնէ նոյն ջանքը յուսոյն հաստատուելուն

12 մինչև վերջը՝ որպէս զի չհեղգաբ, այլ նմանող
ըլլաք անոնց որ հաւատով և համբերութեամբ
13 ժառանգեցին խոստումները։ Վասն զի երբ Ա-
տուած խոստացաւ Աբրահամու, որովհետև չկար
14 մեծագոյն ոք որով վրայ երդնուր, երդուաւ իր
անձին վրայ և ըսաւ, Այո, օրհնելով պիտի օրհ-
նեմ զքեզ, և բազմացուցնելով պիտի բազմացու-
15 նեմ զքեզ։ Եւ այսպէս համբերելով հասաւ
16 խոստման։ Քանզի մարդիկ կ'երդնուն մեծագու-
նի վրայ, և հաստատութեան համար անոնց ա-
17 մէն հակառակութեան վախճանն է երդումը։ Ցո-
րում Աստուած կամենալ աւելի ևս ցուցնել իր
խորհրդոյն անփոփոխութիւնը խոստման ժառան-
18 գաւորներուն, երդումը մէջ դրաւ։ Որ երկու
անփոփոխելի բաներով որովք անկարելի է Ա-
տուծոյ ստել՝ ունենանք հաստատուն մխիթա-
րութիւն մենք որ ապաստանեցանք պինդ բռնել
19 մեր առջև դրուած յոյսը։ Զոր ունինք իբրև
հաստատ և անշարժ խարիսխ մեր անձին, որ և
20 կը մտնէ վարագուրին ներքին կողմը։ Ուր Ցի-
սուս իբրև Առաջնորդ մտաւ մեզի համար՝ յա-
ւիտենական քահանայապետըլլալով ըստ կարգին
Մելքիսեդեկի։

Գլ. Ե

1 Քանզի այս Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղե-
մայ, քահանայ Աստուծոյ բարձրեալ, որ դիմա-
ւորեց զԱբրահամ, երբ կը դառնար նա թագա-
2 ւորներուն կոտորածէն, և օրհնեց զնա։ Որուն
և Աբրահամ տասանորդ տուաւ ամենէն. որ կը
թարգմանուի նախ՝ թագաւոր արդարութեան,
և ապա թագաւոր Սաղեմայ, այն է՝ թագաւոր
3 խաղաղութեան, Անհայր, անմայր, առանց ազ-
գահամարի, որոյ ոչ օրերուն սկիզբը կայ, և ոչ

կենաց վախճանը. և ըլլալով նման Որդւոյն Աս-
տուծոյ՝ կը կենայ և կը մնայ միշտ քահանայ։
4 Արդ նայեցէք թէ ո՛րչափ մեծ ումն էր սա, ո-
րում Աբրահամ նահապետն իսկ տասանորդ
5 տուաւ աւարէն։ Եւ անոնք որ Ղեւեայ որդինե-
րէն են որ քահանայութիւնը կ'առնուն՝ պատուէր
ունին առնուլ տասանորդ ժողովուրդէն ըստ օ-
րինաց, այսինքն իրենց եղբայրներէն, թէպէտև
6 անոնք ելած են Աբրահամէ երանքէն. Բայց նա
որոյ ազգահամարն անոնցմէ չէր՝ տասանորդ ա-
ռաւ Աբրահամէ և օրհնեց զնա որ առած էր
7 խոստումները։ Սակայն առանց ամենայն հակա-
ռակութեան է թէ փոքրը կ'օրհնուի մեծէն։
8 Եւ հոս մահկանացու մարդիկ կ'առնուն տա-
սանորդ, բայց հոն վկայուած է թէ կենդանի է։
9 վկայուած է թէ կենդանի է։ Եւ կրնայ ըսուիլ
թէ Ղեւի ևս որ տասանորդ կ'առնու՝ տասանորդ
10 տուաւ Աբրահամու ձեռօք. Քանզի դեռ իր հօ-
րը երանքն էր, երբ Մելքիսեդեկ դիմաւորեց
զնա։
11 Արդ եթէ կատարելութիւնը Ղեւացւոց քա-
հանայութեան ձեռօք էր, (որովհետև ժողովուրդն
անոր տակը դրուեցաւ ընդ օրինօք,) ինչ պէտք
էր որ ուրիշ քահանայ ելլէր ըստ կարգին Մել-
քիսեդեկի, և չըսուէր ըստ կարգին Ահարոնի։
12 Քանզի երբ քահանայութիւնը փոխուեցաւ, հարկ
13 էր որ օրինաց ևս փոփոխութիւն ըլլար։ Ե՛ր-
կուքն էլ, վասն զի այն որոյ համար այսպէս
կ'ըսուի, կը վերաբերէր ուրիշ ցեղի, որմէ ոչ ոք
14 երբեք մատեցաւ սեղանին. Քանզի յայտնի է թէ
մեր Տէրը յառաջ եկաւ Յուդայի ցեղէն, որ ցե-
ղին վրայ Մովսէս բան մը չըսաւ քահանայու-
15 թեան համար։ Եւ այս աւելի ևս յայտնի է, մինչ
ուրիշ քահանայ կ'ելլէ Մելքիսեդեկի նմանու-
16 թեամբ, որ ոչ թէ եղաւ ըստ մարմնաւոր պատ-

ուբրանին օրինաց, այլ ըստ զօրութեան անվախ-
17 ճան կենաց։ Քանզի կը վկայէ Թէ Դու յաւիտեան
18 քահանայ ես ըստ կարգին Մելքիսեդեկի։ Վասն
զի առաջին պատուէրը կը խափանուի իւր տկա-
19 րութեան և անշահութեան համար, (քանզի օ-
րէնքը բան մը կատարեալ չըրաւ,) և փոխանակ
այնր կը մնայ լաւագոյն յոյս մը որով կը մօտե-
նանք Աստուծոյ։
20 Եւ որչափ չեզաւ ֆհՃանայ առանց երդման,
(քանզի անոնք առանց երդման քահանայ եղած
21 են, իսկ սա երդմամբ՝ անոր ձեռօք որ ըսաւ ա-
նոր, Տէրը երդուաւ և պիտի չզղջայ, Դուն յա-
ւիտեան քահանայ ես ըստ կարգին Մելքիսեդե-
22 կի,) Այնչափ աւելի լաւ ուխտի երաշխաւոր ե-
ղաւ Յիսուս։
23 Եւ անոնք եղած են չատ քահանաներ, վասն
զի անոնց մէկը մեռնելէն ետքը եղած է մնը-
24 բայց սա յաւիտեան կենալուն համար՝ անանցա-
25 նելի ունի քահանայութիւնը. Ուստի բոլորովին
կարող ևս է ապրեցնելու զանոնք որ անով կու-
գան առ Աստուած, քանզի ինք միշտ կենդանի է
բարեխօս ըլլալ անոնց համար։
26 Վասն զի կը վայելէր մեզ այսպիսի քահանայա-
պետ, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներէ
զատուած և քան զերկինս վեր բարձրացած։
27 Որուն ամէն օր հարկ չէ, ինչպէս ուրիշ քահանա-
յապետաց, առաջ իւր մեղաց համար մատուցա-
նել պատարագ և ապա ժողովրդեան ծղջց հա-
մար. վասն զի անգամ մը ըրաւ զայն՝ իւր անձը
28 պատարագ մատուցանելով։ Քանզի օրէնքը կը
կարգէ քահանայապետ տկարութեամբ պաշար-
ուած մարդիկ, բայց երդման խօսքը, որ օրէնքէն
ետքն եր, զՈրդին որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼ. Ը

1 Եւ ըսուածներուն բովանդակութիւնն այս է. ու-
նինք այնպիսի քահանայապետ որ նստաւ յեր-
կինս Ամենայն մեծութեան աթոռին աջ կողմը.
2 Պաշտօնեայ սրբարանին, և ճշմարիտ խորանին զոր
3 Տէրը կանգնեց և ոչ մարդ. Քանզի ամէն քահա-
նայապետ կարգուած է մատուցանելու պատա-
րագներ և զոհեր, ուստի հարկ է և սա ունե-
4 նալ բան մը զոր մատուցանէ. Քանզի եթէ երկրի
վրայ ըլլար, և ոչ իսկ կ'ըլլար քահանայ, վասն
զի կան քահանաներ որ կը մատուցանեն ըստ օ-
5 րինաց պատարագները. (Որք երկնային բաներուն
նմանութեամբ և ստուերովը կը պաշտեն, ինչպէս
որ Մովսէսի հրամայուեցաւ, երբ պիտի չիներ
խորանը. քանզի ըսաւ, Տես, ամէնը չինես ըստ
6 օրինակին որ ցուցուեցաւ քեզ լերան վրայ.) Բայց
հիմա ճչնոց հասաւ աւելի գերազանց պաշտօնի,
որչափ լաւագոյն խոստումներով հաստատուած
լաւագոյն ուխտի միջնորդ է։
7 Քանզի եթէ առաջինն անմեղադրելի ըլլար, երկ-
8 րորդին տեղ չէր փնտռուեր. Քանզի կը յանդի-
մանէ զանոնք և կ'ըսէ, Ահա օրեր կուգան, կ'ը-
սէ Տէրը, որ խոստացուի տան հետ և Ցուդայի տան
9 հետ պիտի ընեմ նոր ուխտ, Ոչ Թէ այն ուխտին
պես զոր ըրի անոնց հայրերուն հետ, այն օրը որ
անոնց ձեռքէն բռնեցի հանել զանոնք Եգիպտոսի
երկրէն. վասն զի անոնք չկեցան իմ ուխտիս մէջ,
և ես անհոգ եղայ անոնց վրայ, կ'ըսէ Տէրը։
10 Քանզի այս է ուխտը զոր պիտի ընեմ Իսրայելի
տան հետ այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը. պիտի
դնեմ իմ օրէնքս անոնց մտացը մէջ, և պիտի
գրեմ զանոնք անոնց սրտին վրայ, և ես պի-
տի ըլլամ անոնց Աստուած, և անոնք պիտի
11 ըլլան ինծ ժողովուրդ։ Եւ բնաւ պիտի չսորվեցուս

նեն իւրաքանչիւր իւր ընկերին, և իւրաքանչիւր
իւր եղբօրը, ըսելով, Ճանչցիր Տէրը. քանզի ա-
նոնց փոքրէն մինչև մեծն ամէնքը պիտի ճանչնան
12 զիս. վասն զի ներող պիտի ըլլամ անոնց անիրա-
ւութիւններուն, և այլ ևս պիտի չյիշեմ անոնց
մեղքերը և անօրէնութիւնները։
13 Նոր ուխտ ըսելով հնացուց առաջինը. և այն
որ կը հնանայ և կը ծերանայ՝ այնուհետև մօտ է
կորստեան։

Գ Լ. Թ

1 Արդարև առաջին ուխտն իսկ ունէր պաշտաման
կանոնադրութիւնները և աշխարհային սուրբ տե-
2 ղը։ Քանզի կազմուեցաւ առաջին խորանը որ
Սրբութիւն կը կոչուէր, յորում էին աչտանակը
3 և սեղանը և առաջաւորութեան հացը։ Եւ յետ
երկրորդ վարագուրին կար խորանը որ կը կոչուէր
4 Սրբութիւն սրբութեանց, Յորում էին ոսկի բուր-
վառը, և ուխտին տապանակն ամէն կողմանէ
ոսկւով պատած. յորում էին ոսկի սափորը որ
ունէր մանանան, և Ահարոնի գաւազանը որ ծաղ-
5 կեցաւ, և ուխտին տախտակները, Եւ անոր վրայ
փառաց քերովբէները որ հովանի կ'ընէին գա-
ւութեան վրայ, որոց համար չէ այժմուս խօսել
մի քա՛ մի՛ ոչ։
6 Եւ մինչ այս բաներն այսպէս կարգադրուած
էին, առաջին խորանն հանապազ կը մտնէին քա-
7 հանաները կատարել պաշտամունքը. Բայց երկ-
րորդին մէջ տարին անգամ մի՛ կը դնէր քահա-
նայապետը միայն, ոչ թէ առանց արեան, զոր կը
մատուցանէր իրեն համար և ժողովրդեան յան-
8 ցանց համար, Հոգին Սուրբ զայս ցուցնելով
թէ սրբարանին ճանապարհն յայտնի եղած չէր,
9 մինչ դեռ առաջին խորանը կը կենար, Որ օրինակ

էր այն ժամանակին երբ պատարագներ և զոհեր
կը մատուցուէին, որ խղճի կողմանէ չէին կրնար
կատարեալ ընել պաշտօն մատուցանողը, այլ էին
10 միայն, կերակրովք և ըմպելեօք, Եւ պէսպէս
լուացմամբք, մարմնոյ արարողութիւններ, որ կը
11 կենային մինչև ուղղութեան ժամանակը։ Բայց
Քրիստոս որ եկաւ, գալու բարեաց Քահանայա-
պետ, աւելի մեծ և կատարեալ խորանաւ, որ չէ
ձեռագործ, այսինքն որ չէ այս աշխարհաշինութենէն,
12 Եւ ոչ նոխազներու և զուարակներու արեամբ,
այլ իւր արեամբը մի անգամ մտաւ Սրբարանը
առացած բլլալով յաւիտենական փրկութիւն։
13 Վասն զի եթէ ցուլերու և նոխազներու արիւնը և
երինջոց մխիթը սրսկուելով՝ պղծեալները կը սրբէր
14 մարմնոյ մաքրութեան կողմանէ, Ո՛րչափ ևս ա-
ռաւել Քրիստոսի արիւնը որ յաւիտենական Հոգ-
ւոյն ձեռօք մատոյց իւր անձն անարատ պատա-
րաւ Աստուծոյ՝ պիտի սրբէ ձեր խիղճը մեռած
գործերէ՝ պաշտել զԱստուած կենդանի։
15 Եւ վասն այնորիկ միջնորդ է նոր ուխտի, որ-
պէս զի, մեռ մանն ըլլալով ի քաւութիւն առա-
ջին ուխտին ժամանակ ներ՝ ան ա՛ յանցանաց,
կոչուածներն առնուն յաւիտենական ժառան-
16 գութեան խոստումը։ Քանզի ուր կտակ կայ,
17 հարկ է որ կտակարարին մահը մանե՛ մէջ. Վասն
զի կտակը յետ մահուան հաստատուն կ'ըլլայ.
քանզի բնաւ գործադրութիւն չունի մինչ կտա-
18 կարարը ողջ է։ Վասն որոյ առաջին ուխտն ևս
19 առանց արեան չէր հաստատուեր։ Քանզի երբ
Մովսէս խօսեցաւ օրինաց ամէն պատուէրները
բոլոր ժողովրդեան, ցուլերուն և նոխազներուն
արիւնն առնելով՝ սրսկեց ջրով և կարմիր բրդով
և զոպային բուն գիրքին և բոլոր ժողովրդեան
20 վրայ. Եւ ըսաւ, Այս է արիւն ուխտին զոր Աս-
21 տուած պատուիրեց ձեզ։ Եւ խորանին վրայ և

պաշտօնին բոլոր գործիներուն վրայ նոյնպէս
22 օրսկեց արիւնը։ Եւ գրեթէ ամէն բան արեամբ
կը մաքրուի ըստ օրինաց, և առանց արեան հեղ-
ման չըլլար Թողութիւն։
23 Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրի-
նակները մաքրուէին ասոնցմով, բայց բուն երկ-
24 նաւորները զան զոսյա լաւագոյն զոհերով։ Քանզի
Քրիստոս ոչ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ
ճշմարտին օրինակն է, այլ բուն յերկինս՝ որ հիմա
25 ներկայանայ Աստուծոյ առջև մեզի համար։ Ոչ որ
չատ անգամ մատուցանի իւր անձը պատարագ,
ինչպէս քահանայապետը, որ ամէն տարի կը մտնէ
26 սրբարանը արեամբ որ իւրը չէ. Ապա թէ ոչ՝
պարտ էր նմա ասկարկի սկիզբէն հետէ չատ ան-
գամ չարչարուիլ. բայց հիմա մի անգամ յաւե-
րումն վերջը յայտնուեցաւ իւր անձին պատարա-
27 գով՝ մեկնի նեռելու համար մեղքը։ Եւ ինչպէս
որ մարդոց սահմանուած է մի անգամ մեռանիլ,
28 և այնուհետև դատաստան, նոյնպէս և Քրիստոս
մի անգամ մատուցեցաւ պատարագ՝ չատերուն
մեղքը վերցնելու համար, բայց երկրորդ ան-
գամ, առանց մեղաց, փրկութեան համար սպասի
յայտնուի անոնց որ կը սպասեն անոր։

Գլ. Ժ

1 Քանզի օրէնքը որ ունի գալու բարեաց սուտերը
և. ոչ թէ այն բաներուն բուն կերպարանքը՝
չկրնար միւռ ամէն տարի մատուցուած նոյն զո-
հերով երբեք կատարեալ ընել զանոնք որ կը մօ-
2 տենան։ Ապա թէ ոչ, ոչ ապաքէն պիտի դադա-
րէին մատուցուելէ. վասն զի պաշտօն մատուցա-
նողները, մի անգամ մաքրուելէն ետքը, մեղաց
վրայ այլ և խղճի յանդիմանութիւն պիտի չու-
3 նենային. Բայց անոնցմով ամէն տարի մեղաց յի-

4 շատակութիւն կ'ըլլայ. Քանզի նոխազներու և
ցուլերու արիւնը չկրնար վերցնել մեղքերը։
5 Վասն որոյ աշխարհ մանելու առեն կ'ըսէ, Զոհ
և ընծայ չուզեցիր, այլ մարմին պատրաստեցիր
6 ինձ. Ողջակէզներու և մեղաց պատարագներու
7 չհամեցար։ Անատեն ըսի, Ահա կու գամ, (գիրքի
տոմսի մէջ գրուած է ինծի համար), քու կամքդ
8 ընելու, ով Աստուած։ Վերը ըսելով թէ Զուզե-
ցիր զոհեր և ընծաներ և ողջակէզներ և մեղաց
պատարագներ և չհամեցար անոնց, (որ օրինաց
9 համեմատ կը մատուցուին,) ետքն կ'ըսէ, Ահա
կու գամ քու կամքդ ընելու, ով Աստուած։ Ա-
10 ռաջինը կը վերծէ որ երկրորդը հաստատէ. Որով
կամքը մենք ևս սրբուեցանք՝ Յիսուսի Քրիս-
տոսի մարմնոյն մի անգամ պատարագուելովը։
11 Եւ ամէն քահանայ կը կենայ օր ըստ օրէ իւր
պաշտամանն մէջ, և կը մատուցանէ չատ անգամ
նոյն զոհերը որ երբեք չեն կրնար մեղքերը վեր-
12 ցունել. Բայց սա, մի զոհ մատուցանելով մեղաց
համար, յաւիտենաւորապէս նստաւ Աստուծոյ աջ
13 կողմը. Եւ այսուհետև կը սպասէ, մինչև որ անոր
թշնամիները գրուին պատուանդան անոր ոտից։
14 Քանզի միով պատարագաւ մշտենաւորապէս
կատարեց սրբուածները։
15 Նա Հոգին Սուրբ ևս վկայութիւն կու տայ մեզ.
16 քանզի յառաջագոյն ըսելէն ետքը թէ Ա՛յս է
ուխտը զոր պիտի ընեմ անոնց հետ այն օրերէն
ետքը, (կ'ըսէ Տէրը,) իմ օրէնքս պիտի դնեմ
անոնց սրտին մէջ, և պիտի գրեմ զանոնք անոնց
17 մտացը մէջ, ետքն կ'ըսէ թէ Ա՛լ և պիտի չյիշեմ
անոնց մեղքերը և անոնց անօրէնութիւնները։
18 Իսկ ուր ասոնց թողութիւն կայ, ալևս չէ այլ և
մեղաց համար պատարագ։
19 Ուրեմն, եղբարք, համարձակութիւն ունենա-
20 լով մտնել սրբարանը Յիսուսի արեամբ, Այն նոր

և կենդանի Ճանապարհաւ զոր բացաւ մեզ վա-
21 րագուրեան միջնէն, որ է իւր մարմինը, եւ ո՛ւնե-
22 լով մեծ քահանայ Աստուծոյ տանը վրայ, Մօտե-
նանք ճշմարիտ սրտով, լի հաւատով, մեր սիր-
տերը չար խղճէն մաքրուած, և մեր մարմինները
23 մաքուր ջրով լուացուած· բռնենք յուսոյն դա-
ւանութիւնն անշարժ, քանզի հաւատարիմ է այն
24 որ խոստացաւ։ Եւ իրարու հոգ տանինք՝ խթա-
25 խուելով սիրոյ և բարի գործերու։ Եւ չթողունք
ի մի վայր ժողովիլը, ինչպես ոմանք սովոր են,
այլ յորդորենք զիրար, և այնչափ աւելի, որչափ
կը տեսնէք որ օրը կը մօտենայ։
26 Վասն զի եթէ ճշմարտութեան գիտութիւնն
ընդունելէն ետքը՝ կամաւ մեղանչենք, ոչ ևս կը
27 մնայ մեզի համար զոհ, Այլ ահեղ ակնկալութիւն
դատաստանին, և կրակի բարկութիւն որ պիտի
28 ուտէ հակառակորդները։ Եթէ ոք անարգէր Մով-
սէսի օրէնքը, կը մեռնէր առանց ողորմութեան
29 երկու կամ երեք վկայիւք։ Ապա ո՛րչափ աւելի
սաստիկ պատժոյ արժանի կը կարծէք թէ պիտի
համարուի այն, որ Աստուծոյ Որդին առ-ոն կո-
խեց, և անմաքուր համարեցաւ ուխտին արիւնը
որով սրբուեցաւ, և նախատեց շնորհաց Հոգին։
30 Քանզի գիտենք զնա որ ըսաւ, Իմն է վրէժխընդ-
րութիւն, ես պիտի հատուցանեմ, կ՚ըսէ Տէրը, և
դարձեալ՝ Տէրը պիտի դատէ իւր ժողովուրդը։
31 Ահաւոր է իյնալ կենդանի Աստուծոյ ձեռքը։
32 Արդ յիշեցէք առաջին օրերը յորս լուսաւորուե-
33 լէն ետքը շատ սաստիկ չարչարանք կրեցիք· Եր-
բեմն նախատանօք և վիշտերով խայտառակուած,
երբեմն ևս կցորդ ըլլալով անոնց որոց հետ այս-
34 պէս կը վարուէիք։ Քանզի չարչարակից եղաք *ինձ
իմ կապերուս մէջ՚, և ձեր ստացուածոց յափշտա-

*Ոմանք, կապուածներուն

կութիւնը յանձն առիք ուրախութեամբ, գիտ-
նալով թէ լաւագոյն և մնայուն ստացուածք
35 ունիք ձեզ յերկինս։ Ուստի մի՛ նետէք ձեր
վստահութիւնը, որ մեծ վարձուց հատուցում
36 ունի։ Վասն զի պարտ է ձեզ համբերութիւն, որ
Աստուծոյ կամքն ըրած՝ վայելէք խոստումը։
37 Քանզի փոքր մի և այն որ գալոց է պիտի գայ
38 և պիտի չյամենայ։ Եւ Արդարն ի հաւատոց պի-
տի ապրի։ և եթէ ոք ետ քաշուի, իմ հոգիս
39 անոր չհաճիր։ Բայց մենք ետ չենք քաշուիր ի
կորուստ, այլ կը հաւատանք ի փրկութիւն
հոգւոյ։

Գլ. ԺԱ

1 Արդ հաւատքն է յուսացուած բաներուն հաս-
տատութիւնը և չերևցած բաներուն ապացոյցը։
2 Վասն զի անով առաքիններն առին վկայութիւն։
3 Հաւատով կ՚իմանանք թէ աշխարհք հաս-
տատուեցան Աստուծոյ խօսքովը, և աներևոյթ
բաներէն եղան տեսնք որ կ՚երևին։
4 Հաւատով Աբէլ քան զկայէն մատոյց Աստուծոյ
լաւագոյն զոհ, որով վկայուեցաւ լինել արդար,
քանզի անոր պատարագներուն վրայ վկայութիւն
եղաւ Աստուծմէ։ և անով, թէպէտ մեռաւ, դար-
ձեալ խօսի։
5 Հաւատով Ենովք փոխադրուեցաւ որ մահ
չտեսնէր։ և չէր գտնուեր, վասն զի Աստուած
փոխադրեց զնա։ քանզի յառաջ քան փոխադ-
րութիւը վկայուեցաւ թէ հաճոյ էր Աստուծոյ։
6 Բայց առանց հաւատոյ անհնար է հաճոյ ըլլալ
Աստուծոյ։ վասն զի այն որ կը մօտենայ Աս-
տուծոյ, պարտի հաւատալ թէ կայ Աստուած,
և թէ վարձահատոյց կ՚ըլլայ անոնց որ կը խնդրեն
զնա։

7 Հաւատով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ՝
դեռ չերեւցած բաներուն համար, վախնալով չի-
նեց տապանը իւր տանը փրկութեան համար, ո-
րով աշխարհս դատապարտեց, և ժառանգաւոր
եղաւ արդարութեան որ հաւատով է։
8 Հաւատով Աբրահամ, երբ կոչուեցաւ, հնա-
զանդեցաւ ելլել այն տեղը զոր պիտի առնուն
ժառանգութիւն. և ելաւ գնաց, և չէր գիտեր
9 թէ ուր կերթար։ Հաւատով պանդխտացաւ ա-
րտերեաց երկրին մէջ որպէս թէ յօտարութեան,
և վրաններու մէջ բնակեցաւ, Իսահակայ և Յա-
կոբայ հետ, որ անոր հետ ժառանգորդ էին նոյն
10 խոստման. Քանզի կը սպասէր հիմնարկ հաս-
տատուած քաղաքին, որոյ ճարտարապետ և ա-
բարիչ Աստուած է։
11 Հաւատով և ինքն Սառա առաւ զօրութիւն
սերմն ընդունելու զօրութիւն, և անցեալ հա-
սակի մէջ ծնաւ զրկ. քանզի հաւատարիմ հա-
12 մարեցաւ զնա որ խոստացաւ։ Ուստի այն միեն
ծնան, (և այն իբրև ի մեռելոյ,) բազմութեան
կոյնանէ իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ
առ ափն ծովու առանց թուոյ։
13 Ասոնց ամենքը հաւատով մեռան՝ խոստումնքը
չստացած, այլ հեռուէն տեսան զանոնք և *ողջու-
նեցին, և խոստովանեցան թէ իրենք օտար և
14 պանդխտ էին երկրի վրայ։ Քանզի անոնք որ
այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ
15 գաւառ մը կը խնդրեն։ Եւ արդարև եթէ յիշէին
ուսկի ելան, ժամանակ ունէին հոն դառնալու։
16 Բայց հիմա կը փափաքին լաւագոյն ՝ուռաբ մը,
այսինքն երկնաւորին. ուստի ամօթ չհամարիր
Աստուած անոնց Աստուածն ըսուիլ, քանզի ինք
պատրաստեց անոնց քաղաք։

*Ոմն, հաւատալով ողջունեցին

17 Հաւատով Աբրահամ, երբ փորձուեցաւ, մա-
տոյց զԻսահակ. և այն որ խոստումնքն առած
18 էր՝ կը մատուցանէր Է՛ր միածոր որդին. Որուն
ըսուեցաւ Թէ Իսահակ պիտի կոչուի քեզ սե-
19 րունդ. Քանզի կը խորհէր Թէ Աստուած մեռել-
ներէն իսկ կարող էր յարուցանել. որմէ օրինա-
կաւ ընկալաւ զայն։
20 Հաւատով Իսահակ գալիք բաներուն նկատմամբ
21 օրհնեց զՅակոբ և զԵսաւ։ Հաւատով Յակոբ, երբ
կը մեռնէր, օրհնեց Յովսեփայ որդիներէն իւրա-
քանչիւրը, և երկրպագեց ի ծայր իւր գաւազա-
22 նին։ Հաւատով Յովսէփ, երբ կը վախճանէր, յի-
շեցուց Թէ Իսրայելի որդիքը պիտի ելլէին Եգիպ-
տոսէ, և պատուէր տուաւ իւր ոսկրներուն համար։
23 Հաւատով, երբ ծնաւ Մովսէս, իւր ծնողաց
ձեռօք երեք ամիս պահուեցաւ ծածուկ. քանզի
գեղեցիկ տեսան տղան, և չվախցան Թագաւո-
րին հրամանէն։ Հաւատով Մովսէս երբ մեծցաւ,
չամձն չառաւ կոչուիլ որդի դստերն Փարաւոնի.
25 Քանզի լաւ համարեցաւ չարչարուիլ Աստուծոյ ժո-
ղովրդեան հետ, քան վայելել մեղաց ժամանակա-
26 ւոր զուարճութիւնը. Եւ աւելի մեծ հարստու-
թիւն համարեցաւ Քրիստոսի նախատինքը քան
Եգիպտոսի գանձերը. քանզի դիտելով կը սպա-
27 սէր վարձուց հատուցման։ Հաւատով Թողուց
զԵգիպտոս, և չվախցաւ Թագաւորին բարկութե-
նէն. քանզի համբերեց, որպէս Թէ կը տեսներ
28 Անտեսանելին։ Հաւատով ըրաւ զատիկը և արեան
սրսկումը, որպէս զի անդրանիկներուն սատակիչը
չմերձենար անոնց։
29 Հաւատով անցան Կարմիր ծովէն որպէս Թէ
ցամաքէ. որոյ փորձն ընկալով Եգիպտացիք ըն-
կղմեցան։
30 Հաւատով Երիքովի պարիսպներն ինկան, երբ
եօթն օր անոնց բոլորտիքը շրջեցան։

31 Հաւատով անհաւատներուն հետ չկորսուեցաւ
Ռահաբ պոռնիկ, որ ընդունած եր լրտեսները
խաղաղութեամբ։
32 Եւ այլ ևս ի՞նչ ըսեմ. քանզի ժամանակը բա-
ւական չէ որ պատմեմ Գեդէոնի և Բարակայ և
Սամփսոնի և Եփթեայեայ և Դաւիթ և Սամուէլի
33 և մարգարէներուն համար. Որ հաւատով յաղ-
թեցին թագաւորութիւններու, գործեցին արդա-
րութիւն, հասան խոստումներու, խցեցին առիծ-
34 ներու բերան, Մարեցին կրակի զօրութիւնը, ա-
զատեցան սրոյ բերնէ, զօրացան տկարութենէ,
զօրաւոր եղան պատերազմի մէջ, ցրուեցին օ-
35 տարներու բանակներ. Կանայք ընդունեցին յա-
րութեամբ իրենց մեռեալները. ոմանք չարչարուե-
ցան և չընդունեցին ազատութիւնը, որ լաւա-
36 գոյն յարութեան հասնէին. Եւ այլք նախատա-
նաց և գանից, նաև կապանաց և բանտից փորձն
37 առին. Քարկոծեցան, սղոցեցան, փորձանաց մէջ
բնկան, մեռան սպանմամբ սրոյ, ոչխարի մորթե-
րով և այծի մորթերով չրչեցան, կաթսութիւն
38 կրելով, ի նեղ խնալով, չարչարուելով, (Որոց
արժանի չէր աշխարհս,) մոլորելով անապատնե-
րու և լեռներու և այրերու և երկրի խոռոչնե-
րու մէջ.
39 Եւ ասոնց ամէնքը հաւատով վկայուած՝ չառին
40 խոստումը. Քանզի Աստուած մեզի համար կան-
խաւ լաւագոյն բան պատրաստեց, որ առանց մեզ
չկանխին կատարման։

ԳԼ. ԺԲ

1 Ուստի և մենք որ այսչափ վկաներու *բազմու-
թիւն ունինք պատած մեր բոլորտիքը, մեկդի

*Յոյն. ամպը

նետենք ամէն ծանրութիւն, և պինդ դիւրաւ պա-
տուող մեզքը, և համբերութեամբ վազենք մեր
2 առջև դրուած ասպարիզին ընթացքը, Յիսուսի
նայելով, հիմ հաւատոյ առաջնորդին և կատա-
րողին, որ ան ուրախութեան համար որ անոր
առջև կեցած էր՝ յանձն առաւ խաչը, արհամար-
հեց ամօթը, և նստաւ Աստուծոյ աթոռին աջ
կողմը։
3 Արդ յիշեցէք զնա, որ այսպէս համբերեց մե-
զաւորներուն իրեն դէմ հակառակ խօսելուն, որ
4 չյոգնիք և չհուսկնաք յանձինս ձեր։ Տակաւին
արեամբ չափ պատերազմելով հակառակ չկեցաք
5 մեզաց. Եւ մոռցաք յորդորանքը որ կը խօսի
ձեզի հետ իբրև որդիներու հետ, Որդեակ իմ,
մի՛ անարգեր Տէրոջը խրատը, և յանդիմանուե-
6 լով անկէ՝ մի՛ թուլնար։ Վասն զի Տէրը կը խրատէ
զոյն զոր կը սիրէ, և կը ծեծէ ամէն որդի զոր
7 կ՚ընդունի։ Եթէ համբերէք խրատուս, Աստուած
կը վարուի ձեզի հետ իբրև որդիներու հետ.
քանի՞ որդի է այն զոր հայրը չպատժեր։
8 Իսկ եթէ բոլոր առանց խրատուս, որուն ամէնը
մասնակից եղան, ուրեմն խորթ էք դուք, և
9 ոչ թէ որդիք։ Նաև մեր մարմնաւոր հայրերը
խրատիչ ունէինք, և ամաչէինք կը պատկառէինք.
ո՞չ ապագային աւելի ևս պիտի հնազանդինք հոգւո-
10 ներուն Հօրը և ապրինք։ Քանզի ասոնք քիչ օ-
րեր կը խրատէին ինչպէս հաճոյ կը թուէր
անոնց, բայց նա ի՛ր օգտին համար՝ որ հաղորդ
11 ըլլանք անոնց սրբութեանը։ Եւ ամէն
խրատ նոյն ժամանակ չթուիր ուրախարար, այլ
տրտմական, բայց յետոյ կը հատուցանէ արդա-
րութեան խաղաղարար պտուղն անով վարժուող-
ներուն։

*Յոյն. ամպը

12 Ուսանի հաստատեցէք Թուղթած ձեռնարկները և
13 տակաւ ծուռնկերը. Եւ ուղիղ ճամբաներ ըրէք ձեր
ոտուրներուն, որպէս զի այն որ կաղ է՝ *չխոտո-
14 րի, այլ մանաւանդ բժշկուի. խաղաղութեան հե-
տևէ եղէք ամենուն հետ և սրբութեան, առանց
15 որոյ ոչ ոք պիտի տեսնէ զՏէր։ Զգուշացէք, որ
Աստուծոյ շնորհքէն ետ չմնայ ոք, որ դառնու-
թեան արմատ վեր երևնալով չնեղէ զՅէս, և
16 շատեր պղծուին անով. Որ չըլլայ ոք պոռնիկ,
կամ անսուրբ՝ նետաղ պէս, որ մի կերակրոյ
17 համար վաճառեց իւր անդրանկութիւնը։ Քանզի
գիտէք թէ, թէպէտ յետոյ կամեցաւ ժառանգել
օրհնութիւնը, բայց մերժուեցաւ. քանզի ապա-
շաւի տեղի չգտաւ հերը վրայ, թէպէտև ար-
տասուօք խնդրեց զայն։
18 Քանզի դուք մտեցած չէք չօշափելի լերան որ
կրակով կը վառէր, և օդ միգին և խաւարին և
19 մրրկին, Եւ փողոյն հնչուելուն, և խօսքերուն
ձայնին, զոր լսողներն աղաչեցին որ այն խօսքն
20 այլ ևս չրսուէը անոնց։ Վասն զի չէին կրնար տա-
նել այն հրամանին, Եթէ գազան ևս մերձենաը
21 լերանը, պիտի քարկոծուէրթ։ Եւ այնպէս ահա-
գին էր երևոյթը որ Մովսէս ըսաւ, Սաստիկ կը
22 վախնամ և կը դողամ։ Բայց դուք մտեցած էք
Սիոն լերան, և կենդանի Աստուծոյ քաղաքին,
երկնաւոր Երուսաղէմի, և բիւրաւոր հրեշտակաց,
23 Եւ երկինքը գրուած անդրանկաց հաւկիսաւոր
ժողովին և եկեղեցւոյն, և Աստուծոյ որ ամե-
նուն դատաւորն է, և արդարոց հոգիներուն որ
24 կատարուած են, Եւ Յիսուսի որ նոր ուխտին
միջնորդն է, և սրսկուելու արեան՝ որ գան
պարէնն Աբելի աւելի լաւ կը խօսի։

---

*Կամ, չգլորի

†Ոմանք կը յաւելուն, կամ նետով զարնուէը

25 Զգուշացէք, որ չմերժէք զայն որ կը խօսի։ Ա-
վասն զի եթէ անոնք երկրի վրայ Աստուծոյ
պատգամները խօսողը մերժելով չազատեցան,
ո՛րչափ ևս աւելի մենք, եթէ յերկինէ Խօսո-
26 ղին դարձունենք. Որոյ ձայնը չարժէց զերկիր
յայնժամ, և հիմա խոստացած է և կ՛ըսէ, Մի՛ ա-
նգամ պիտի չարժեմ՝ ոչ միայն զերկիր, այլ և
27 զերկինս։ Եւ այն Մի՛ անգամը կը ցոյցէ չար-
ժուած բաներուն բարձումը չինուած բաներու
պէս, որ անշարժ բաները միտ հաստատուն։
28 Ուսանի անշարժ Թագաւորութիւնն առած ըլլա-
լով՝ պէտք բռնենք շնորհքը որով պաշտենք
զԱստուած հաճոյական կերպով, ակնածութեամբ
29 և բարեպաշտութեամբ. Քանզի մեր Աստուածը
մաշող կրակ է։

Գլ. ԺԳ

1 Եղբայրասիրութիւնը հաստատ մնայ ձեր մէջ։
2 Հիւրասիրութիւնը մի՛ մոռնաք, քանզի անով ո-
3 մանք հրեշտակներ ընկալան յանգիտաս։ Յիշեցէք
կապուածները, որպէս թէ դուք Ե՛ս կապուած
եք անոնց հետ. Ե՛ չարչարուածները՝ որպէս թէ
4 դուք ևս մարմնով եք։ Ամուսնութիւնը բոլորո-
վին պատուական է, և անկողինն անարատ է.
բայց պոռնիկները և շնացողները պիտի դատե
5 Աստուած։ Ձեր բարքն անարծաթասէր ըլլայ.
բաւական համարեցէք որչափ բան որ ձեր ձեռքը
կայ. քանզի ինք ըսաւ թէ Բնաւ պիտի չձգեմ
6 զձեզ, և բնաւ պիտի չլքանեմ զձեզ. Այնպէս որ
համարձակ ըլլանք ըսելու, Տէրը իմ օգնականս
է, և ես պիտի չվախնամ. մարդ ի՞նչ պիտի ընէ
7 ինձ։ Յիշեցէք ձեր առաջնորդները որ Աստուծոյ
խօսքը խօսեցան ձեզ, և նայելով անոնց վար-
ման վախճանին՝ նմանող եղէք անոնց հաւատոյն։

8 Յիսուս Քրիստոս նոյն է երէկ և այսօր և յա-
ւիտեանս։
9 Պէսպէս և օտարաձայն ուսմամբք մի՛ տարու-
բերիք. քանզի լաւ է որ սիրտը շնորհօք հաստա-
տուի, ոչ թէ կերակրովք, յորոց օգուտ չունե-
10 ցան անոնք որ այնպէս գնացին։ Սեզան ունինք
մենք, որմէ ուտելու իշխանութիւն չունին անոնք
11 որ կը ծառայեն խորանին. Քանզի ո՛ր անասնոց
արիւնը որ սրբարանը կը տարուի մեղաց համար
քահանայապետին ձեռօք՝ անոնց մարմինները
12 բանակէն դուրս կ'այրուին։ Ուստի և Յիսուս իր
արեամբ ժողովուրդը սրբելու համար դուռնէն
13 դուրս չարչարուեցաւ։ Ուրեմն անոր կելնենք բա-
նակէն դուրս, մեր վրայ առնելով անոր նախա-
14 տինքը։ Քանզի մենք հոս մնայուն քաղաք չու-
15 նինք, այլ կը փնտռենք հանդերձեալը։ Ուստի
անոր ձեռօք մատուցանենք Աստուծոյ հանապազ
օրհնութեան պատարագ, այսինքն զպտուղ
16 շրթանց որ անոր անունը կը դաւանին։ Իսկ բա-
րեգործութիւնը և խրատելը հաղորդակցութիւնը
մի՛ մոռնաք, քանզի Աստուած կը հաճի այսպիսի
17 պատարագներու։ Անսացէք ձեր առաջնորդնե-
րուն և հնազանդ կեցէք անոնց, քանզի անոնք
կը հսկեն ձեր հոգիներուն համար, որպէս թէ հա-
շիւ պիտի տան որ խնդութեամբ ընեն զայն, և
ոչ թէ հառաչելով, զի այն օգտակար չէ ձեզ։
18 Մեզի համար աղօթք ըրէք, քանզի համոզուած
ենք թէ բարւոք խիղճ ունինք, և ամէն բանի
19 մէջ կ'ուզենք բարի վարմունք ունենալ։ Ու-
մանաւանդ կ'աղաչեմ որ զայս ընէք, որպէս զի
վաղագոյն դառնամ առ ձեզ։
20 Ու Խաղաղութեան Աստուածը որ մեռելներէն
յարոյց զՏէր մեր Յիսուս, որ յաւիտենական ուխ-
21 տին արեամբ ոչխարներուն մեծ Հովիւն է, Զձեզ
ամէն բարի գործոյ մէջ հաստատէ անոր կամքն

ընելու, և ընէ ձեր մէջ ինչ որ հաճոյ է իրեն
առջև Յիսուսի Քրիստոսի ձեռօք, որուն փառք
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
22 Կ'աղաչեմ զձեզ, եղբարք, համբերել այս յոր-
դորական խօսքիս, քանզի համառօտիւ գրեցի
23 ձեզ։ Գիտցէք որ Ղեր եղբայրը Տիմոթէոս արձա-
կուած է, որոյ հետ, եթէ չուտով գայ, պիտի
24 տեսնեմ զձեզ։ Ողջոյն տուէք ձեր բոլոր առաջ-
նորդներուն և բոլոր սուրբերուն. ողջոյն կու-
25 տան ձեզ անոնք որ Իտալիայէ են։ Շնորհքը ձեր
ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅԱԿՈԲՈՒ Ա. ՈՒԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Յակոբոս, Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստո-
սի ծառայ երկոտասան ցեղերուն որ ՚ի Ցրո-
յսուած եք՝ ողջոյն։
2 Նեղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի
համարեցէք երբ պէսպէս փորձանաց մէջ իյնաք,
3 Գիտնալով որ ձեր հաւատոյն փորձը համբերու-
4 թիւն կը գործէ։ Բայց համբերութիւնը կատար-
եալ գործ թող ունենայ, որ կատարեալ և ամ-
բողջ ըլլաք, և բանի մը կարօտութիւն չունե-
նաք։
5 Ապա եթէ ձեզմէ ոք պակասած է խմաստութենէ,
թող խնդրէ Աստուծմէ որ կու տայ ամենուն ա-
ռատաձեռն և չնախատեր, և պիտի տրուի անոր։

6 Մինչեւ թէ հաւատով թող խնդրէ եւ չերկմտի,
վասն զի այն որ երկմիտ է՝ նման է հողմահարեալ
7 եւ տատանեալ ալեաց ծովու. Ա՛յն մարդը թող
8 չկարծէ թէ բան մը պիտի առնու Տէրոջմէ. երկմիտ մարդն անհաստատ է իւր բոլոր ճամբաներուն մէջ։
9 Խոնարհ եղբայրը թող պարծի իւր բարձրու-
10 թեան վրայ, Եւ այն որ հարուստ է՝ իւր խոնարհութեան վրայ, վասն զի պիտի անցնի իբրեւ ծա-
11 ղիկ խոտոյ. Քանզի արեւը կը ծագէ սաստիկ տապով եւ կը ցամաքեցնէ խոտը, և անոր ծաղիկը կը թօթափի, և անոր երեսուքին գեղեցկութիւնը ևս կը կորսուի. Նոյնպես և հարուստը պիտի թառամի իւր ճամբաներուն մէջ։
12 Երանելի է այն մարդը որ կը համբերէ փորձանաց, քանզի երբ փորձուելով ընտիր գտնուի, պիտի առնու կեանց պսակը, զոր Տէրը խոստա-
13 ցաւ անոնց որ կը սիրեն զնա։ Մի՛ ոք որ կը փորձուի՝ ըսէ թէ Աստուծմէ կը փորձուիմ. քանզի Աստուած անփորձ է չարեաց, և ոչ ինք կը
14 փորձէ զոք։ Սակայն իւրաքանչիւր ոք կը փորձուի իւր ցանկութիւններէն հրապուրուած և
15 խաբուած. Ա՛յնուհետև ցանկութիւնը յղանալով՝ կը ծնանի մեղք, և մեղքը կատարուելով՝ կը ծնա-
16 նի մահ։ Մի՛ խաբուիք, եղբարք իմ սիրելիք.
17 Ամէն բարի տուրք և ամէն կատարեալ պարգեւ ի վերուստ է, և կ'իջնէ լուսոյ Հօրմէն, յորում չկայ բնաւ փոփոխութիւն կամ դառնալու-
18 ստուերի կամելով. Ծնաւ զմեզ ճշմարտութեան խօսքովը, որ երախայրի ըլլանք անոր ստեղծուածներուն։ Ուստի, եղբարք իմ սիրելիք, ամէն մարդ թող արագ ըլլայ ի լսել, և դանդաղ ի խօսել, դանդաղ ի բարկանալ. Քանզի մարդուն բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չգործեր։
21 Ուստի մեկդի նետելով ամէն աղտեղութիւն և

չարութեան առատելութիւն, հեզութեամբ ընդունեցէք ՅԻՐ մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ փրկել ձեր հոգիները։
22 Բայց խօսքին ընողներ եղէք, և ոչ լսողներ մի-
23 այն՝ խաբելով զձեզ. Քանզի եթէ ոք խօսքին լսող է միայն և ոչ ընող, նման է նա մարդու որ
24 հայելւոյ մէջ կը դիտէ իւր բնական երեսը. Քանզի դիտելով անոնք զինք և անցաւ գնաց, և
25 վաղվաղակի մոռցաւ թէ որպիսի ոք էր։ Բայց այն որ յառնալ կը նայի ազատութեան կատարեալ օրինաց և կը կենայ անոր մէջ, Եւ ոչ լսող և մոռցող չըլլալով՝ այլ գործն ընող, երանելի
26 պիտի ըլլայ ընելուն մէջ։ Եթէ ոք կը կարծէ թէ բարեպաշտ է ձեր մէջ և սանձ չդներ իւր լեզուին, այլ կը խաբէ իւր սիրտը, ունայն է այնպիսւոյն
27 բարեպաշտութիւնը։ Աստուծոյ և Հօր քով մաքուր և անարատ բարեպաշտութիւն այս է, այցելել ըլլալ որբոց և այրեաց անոնց նեղութեան ատենը և անարատ պահել զանձն աշխարհէն։

Գլ. Բ

1 Եղբարք իմ, այս առաւելութեամբ մի՛ բռնեցէք զհաւատս Տէրոջն մերոյ Յիսուսի Քրիստոսի, փառաց
2 Տէրո՛ւն։ Քանզի եթէ ձեր ժողովին մէջ մտնէ մարդ մը որ ունի ոսկի մատանի և փառաւոր հանդերձներ, հոն մտնէ նաև աղքատ մը ապա-
3 ղի հանդերձիւք, Եւ նայիք անոր վրայ որ փառաւոր հանդերձներ ունի, և ըսէք թէ Դուն նստէ հոս պատուով, և աղքատին ըսէք թէ Դուն կեցիր հոդ ոտից վրայ, կամ թէ նստէ
4 պատուանդանիս քով, Ո՞չ ապաքէն խարխափեցաք ի ձեզ մէջ և դարձաք չար խորհուրդներու
5 դատաւորք։ Լսեցէք, եղբարք իմ սիրելիք. ո՞չ ապաքէն Աստուած ընտրեց աշխարհիս աղքատ-

Ները որ հարուստ են հաւատով և ժառանգաւորք արքայութեան, զոր խոստացաւ անոնց որ կը սի-
6 րեն զնա։ Բայց դուք անարգեցիք զաղքատս. ո՞չ ապաքէն հարուստները կը յաղթահարեն զձեզ,
7 և անոնք կը քաշեն զձեզ ի դատաստան։ Ո՞չ ապաքէն անոնք կը հայհոյեն բարի անունը որ
8 կոչուած է ձեր վրայ։ Արդ, եթէ դուք արքունական օրէնքը կը կատարէք ըստ Գրոյն թէ՝ Դու ընկերդ սիրես քու անձիդ պէս, բարւոք կ'ընէք։
9 Բայց եթէ անառութիւն կ'ընէք, մեղք կը գործէք, և կը յանդիմանուիք յօրինաց իբրև օրինա-
10 զանց։ Զի որ զամենայն օրէնքը պահէ և միոյն մէջ յանցաւոր ըլլայ, պարտական կ'ըլլայ ամե-
11 նուն։ Վասն զի այն որ ըսաւ թէ՝ Մի՛ շնար՝ ըսաւ նաև թէ՝ Մի՛ սպաններ։ ուստի եթէ չշնաս, բայց սպաննես, կ'ըլլաս օրինազանց։ Այնպէս խօսեցէք և այնպէս ըրէք, որպէս թէ պիտի
12 դատուիք ազատութեան օրինօք։ Վասն զի դատաստան անողորմ պիտի ըլլայ անոր որ ողորմութիւն չընէր. և ողորմութիւնը կը պարծի դատաստանին դիմացը։
14 Ի՞նչ օգուտ է, եղբարք իմ, եթէ ոք ըսէ թէ հաւատք ունի, և գործ չունենայ. միթէ հաւատ-
15 քը կրնա՞յ փրկել զնա։ Եթէ եղբայր կամ քոյր
16 մերկ է կամ օրուան կերակրոյն կարօտ, և ձեզմէ ոք ըսէ անոնց, գնացէք խաղաղութեամբ, ազ-
ցէք և յագեցէք, և մարմնոյն հարկաւոր բանե-
17 րը չտաք անոնց, ի՞նչ օգուտ է. Այսպէս և հաւատքը, եթէ էրէն հետ գործ չունի, ըստ ինքեան
18 մեռած է։ Նաև կրնայ ոք ըսել թէ Դուն հաւատք ունիս, և ես գործեր ունիմ. դուն ցուցուր ինձ քու հաւատքդ առանց գործոց, և ես
19 ցուցնեմ քեզ իմ հաւատքս գործերէս։ Դուն կը հաւատաս թէ մի է Աստուած, բարւոք կ'ընես.
20 դեւք ևս կը հաւատան և կը սարսին։ Բայց կ'ու-

զի՞ս գիտնալ, ով անսուտ մարդ, թէ հաւատք ա-
21 ռանց գործոց մեռեալ է։ Աբրահամ հայր մեր՝ գործերով չարդարացա՞ւ, երբ իւր որդին զիսա-
22 հակ սեղանին վրայ հանեց։ Կը տեսնե՞ս որ հաւատքն անոր գործերուն հետ գործեց, և այն
23 գործերով հաւատքը կատարեալ եղաւ. Եւ կատարուեցաւ Գիրքին Ըսածը որ կ'ըսէ, Աբրահամ Աստուծոյ հաւատաց, և այն համարուեցաւ անոր արդարութիւն, և կոչուեցաւ բարեկամ Աստու-
24 ծոյ։ Կը տեսնե՞ք որ մարդ գործերով կ'արդարանայ, և ոչ հաւատով միայն։ Նոյնպէս և Ռա-
25 խաբ պոռնիկ ո՞չ ապաքէն գործերով արդարացաւ, երբ լրտեսները առաւ ներս, և ուրիշ ճամ-
26 բով արձակեց։ Զի որպէս մարմին առանց հոգւոյ մեռած է, նոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ է։

Գլ. Գ

1 Եղբարք, շատ վարդապետներ մի՛ ըլլաք՝ գիտնալով թէ աւելի մեծ դատաստան պիտի ընդու-
2 նինք. Զի մեզմէ ամենքս շատ յանցանք կ'ընենք. Եթէ ոք խօսքով յանցանք չընէ, կատարեալ մարդ
3 է, որ կարող է բոլոր մարմինը ևս սանձել։ Ես որ ձիոց բերանը սանձ կը դնենք որ հնազանդին մեզ, և կը կառավարենք անոնց բոլոր մարմինը.
4 Ահա և նաւք ա՛րչալի մեծ են, և սաստիկ հովերէ կը տարուին, բայց փոքրիկ ղեկով մը կը կառավարուին, ո՛ր կողմ և ուզէ ղեկավարին կամքը։
5 Այսպէս և լեզուն փոքրիկ անդամ է և մեծ բաներ կը խօսի. ահա փիլ մը կրակ ո՛րչափ նիւթ կը
6 հրդեհէ։ Լեզուն ևս կրակ է, տիեզերք անիրաւութեան. լեզուն այնպէս դրուած է մեր անդամներուն մէջ, որ կ'ապականէ բոլոր մարմինը, և կը վառէ բնութեան շրջանը, և ինք կը վառի

7 գՀհնեՀն, Քանզի բոլոր գաղանաց և թռչնոց և
սողնոց և անոնց որ ծովու մէջ են բնութիւնը կը
նուաճի և նուաճեալ է մարդկային բնութենէն,
8 բայց գԱզգուն ոչ ոք ի մարդկանէ կրնայ նուա-
ճել. անզուսպ չար է, լի մահաբեր թունով.
9 Անով կ'օրհնենք գՄատուածն և հայր, և անով
կ'անիծենք գմարդիկ որ Աստուծոյ նմանութեամբ
10 ստեղծուած են։ Մէկ և նոյն բերնէն կ'ելլեն օրհ-
նութիւն և անէծք. եղբարք իմ, պէտք չէ որ
11 այս այսպէս ըլլայ։ Միթէ աղբիւր նոյն բերնէն կը
12 բղխէ՞ քաղցր և դառն։ Միթէ հնա՞ր է, եղբարք
իմ, որ թզենին բերէ ձիթապտուղ, կամ որթը՝
թուզ. նոյնպէս և ոչ աղբիւր մը կրնայ տալ աղ-
13 տաղին և քաղցր ջուր։ Ձեր մէջ իմաստուն և
հանճարեղ ո՞վ կայ. թող բարի վարմամբ ցուցնէ
14 իր գործերն իմաստութեան հեզութեամբ։ Ապա
եթէ դառն նախանձ և հակառակութիւն ունե-
նաք ձեր սրտին մէջ, մի՛ պարծիք և սուտ հա-
15 նէք ճշմարտութիւնը։ Այս իմաստութիւնը վե-
րէն իջած չէ, այլ է երկրաւոր, չնչաւոր, դիւա-
16 կան։ Քանզի ուր նախանձ և կռիւ կայ, հոն է
17 անկարգութիւն և ամէն չար բան։ Այլ վերէն ի-
մաստութիւնը նախ սուրբ է, ապա խաղաղարար,
հեզ, հլու, լի ողորմութեամբ և բարի պտուղնե-
18 բով, անաչառ և անկեղծ։ Եւ արդարութեան
պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի անոնց
որ խաղաղութիւն կ'ընեն։

Գլ. Դ

1 Ո՞ւսո՞ւ են պատերազմները, և ուսո՞ւ կռիւները
ձեր մէջ. ո՞չ ասպգէն ձեր ցանկութիւններէն որ
2 կը պատերազմին ձեր անդամներուն մէջ։ կը ցան-
կաք և չունիք. կը սպանենք և կը նախանձիք, և
չէք կրնար հասնիլ. կը պատերազմիք և կռ

3 կուիք, բայց չունիք, քանզի չէք խնդրեր. կը
խնդրէք և չէք առնուր, վասն զի չարաչար կը
խնդրէք, որպէս զի ձեր ցանկութիւններուն գոր-
4 ծածէք։ Շնացողներ, չէ՞ք գիտեր որ աշխարհի
սէրը թշնամութիւն է Աստուծոյ դէմ. ուստի ով
որ կ'ուզէ բարեկամ ըլլալ աշխարհի, թշնամի
5 կ'ընէ զինք Աստուծոյ։ Կամ կը կարծէք թէ
Գիրքն ի զո՞ւր կ'ըսէ թէ Նախանձու կը փափա-
6 քի հոգին որ կը բնակի ի մեզ՝։ Սակայն աւելի
շնորհք կու տայ. վասն որոյ կ'ըսէ, Ամբարտա-
հակառակ կը կենայ ամբարտաւանից, բայց շնորհք
7 կու տայ խոնարհաց։ Ուստի հնազանդեցէք Ա-
ստուծոյ. հակառակ կեցէք Սատանային, և պիտի
8 փախչի ձեզմէ. Մօտեցէք Աստուծոյ, և պիտի մօ-
տենայ ձեզ. սրբեցէք ձեր ձեռուքները, մեղա-
ւորներ, և մաքրեցէք ձեր սիրտերը, երկմիտներ.
9 Տառապեցէք, սգացէք և լացէք. ձեր ծիծաղը
դառնայ ի սուգ, և ձեր ուրախութիւնն՝ ի տրըտ-
10 մութիւն։ Խոնարհեցէք Տէրոջը առջև, և պիտի
բարձրացունէ զձեզ։
11 Ձերբա մի՛ բամբասէք, եղբայրներ. ով որ կը
բամբասէ իւր եղբայրը կամ կը դատէ իւր եղ-
բայրը, կը բամբասէ օրէնքը և կը դատէ օրէն-
քը. ապա եթէ օրէնքը դատես, այլևս դուն
12 օրէնքը կատարող չես, այլ դատաւոր։ Մի է
Օրէնսդիր [և Դատաւորը], որ կարող է փրկել և
կորուսանել. դուն ո՞վ ես որ կը դատես ուրիշը։
13 Հիմա լսեցէք, դուք որ կ'ըսէք, Այսօր կամ
վաղիւ երթանք այս ինչ քաղաքը, և հոն տարի
14 մը կենանք, և վաճառենք և չահինք. (Դուք որ
15 վաղիւը չէք գիտեր. Քանզի ի՞նչ է ձեր կեանքը.
արդարև չոգի է՝, որ քիչ մը առեն կ'երևայ և

---

*Ի՞սի, կը խօսի. Նախանձո՞ւ կը փափաքի Հոգին
որ կը բնակի ի մեզ †Ոմանք, եչ

յետոյ կ'անհետանայ.) փոխանակ ըսելու, ԵԹԷ
Տէրը կամենայ և ողջ մնանք, ընենք այս ինչ
16 կամ այն ինչ. Բայց հիմա ձեր ամբարտաւանու-
թեամբ կը պարծիք. բոլոր այսպիսի պարծանք
17 չարութիւն են։ Ուստի ով որ բարին ընել գիտ-
նայ և չընէ, այն մեղք է անոր։

Գլ. Ե

1 Ադէ հիմա, հարուստներ, լացէք և ողբացէք
Թշուառութեանց համար որ պիտի գան ձեր վրայ։
2 Ձեր հարստութիւնն ապականած է, և ձեր հան-
3 դերձները՝ կերակուր ցեցոյ։ Ձեր ոսկին և արծա-
թը ժանգոտած են, և անոնց ժանգը պիտի ըլլայ
վկայ ձեզի դէմ, և պիտի ուտէ ձեր մարմինը
կրակի պէս. գանձեցիք վերջին օրերուն համար։
4 Ահա ձեր արտերն հնձող մշակաց վարձքը որ
ետ պահեցիք՝ կ'աղաղակէ, և հնձողներուն բողո-
5 քը հասաւ յականջս Տէառն զօրութեանց։ Երկրի
վրայ ապրեցաք փափկութեամբ և հեշտութեամբ,
ձեր սիրտերը սնուցիք՝ որպէս թէ մորթուելու
6 օրուան համար։ Դատապարտեցիք և սպաննեցիք
արդարը՝ որ հակառակ չկենար ձեզ։
7 Ուստի համբերող եղէք, եղբարք, մինչև Տէ-
րոջը գալուստը. ահա երկրագործը կը սպասէ
երկրի պատուական պտղոյն, համբերելով անոր
համար, մինչև առնու առաջին և վերջին անձրևը։
8 Երկայնամիտ եղէք և դուք, հաստատ բռնեցէք
ձեր սիրտերը. քանզի Տէրոջը գալուստը մօտ է։
9 Իրարու դէմ մի՛ հառաչէք, եղբայրներ, որ չդա-
տապարտուիք. ահա Դատաւորը կեցած է դրան
10 քով։ Եղբարք իմ, չարչարանաց և համբերու-
թեան օրինակ առէք մարգարէները, որ խօսեցան
11 յանուն Տէառն։ Ահա երանի կու տանք համբերո-
ղաց. լսեցիք Յոբայ համբերութիւնը, և տեսաք

Տէրոջը վախճանն ու Նա, Թէ Տէրը բազմագութ
և ողորմած է։
12 Մէկ յառաջ քան զամենայն ինչ, եղբարք իմ,
մի՛ երդնուիք, ոչ յերկինս, ոչ յերկրի, և ոչ ու-
րիշ երդումի. այլ ձեր այն ըլլայ այո, և այո՝ ոչ,
որ դատապարտութեան տակ չկենաք։
13 ԵԹԷ ոք ձենէ նեղութեան մէջ է, թող աղօթէ.
14 ԵԹԷ ոք ուրախ է, սաղմոս թող երգէ, ԵԹԷ ոք
ձենէ հիւանդ է, թող կոչէ եկեղեցւոյն երէցները,
և աղօթեն անոր վրայ, և իւղով օծեն զնա յա-
15 նուն Տէառն. Ու աղօթքը որ հաւատալ է պիտի
փրկէ հիւանդը, և Տէրը պիտի կանգնէ զնա. և
16 ԵԹԷ մեղք գործած է, պիտի ներուի անոր։ Ձեր
յանցանքները խոստովանեցէք իրարու, և աղօթք
ըրէք իրարու համար՝ որ բժշկուիք. շատ զօրաւոր
17 է արդարոյն եռանդուն աղօթքը։ Եղիա իրրև
մեզ մարդ էր ընդ կրիւ, և աղօթք ըրաւ որ
անձրև չգար, և երեք տարի և վեց ամիս անձրև
18 չեկաւ երկրի վրայ։ Ու գարձեալ աղօթք ըրաւ,
և երկինք անձրև տուաւ և երկիրը բուսոյց իւր
պտուղը։
19 Եղբարք, ԵԹԷ ոք ձենէ մոլորի ճշմարտութենէ,
20 և դարձուէ ոք զնա, Գիտնայ Թէ այն որ կը գար-
ձուէ մեղաւորն իւր մոլորութեան ճանապարհէն,
հոգի մը կ'ազատէ մահուանէ, և կը ծածկէ բազ-
մութիւն մեղաց։

ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պետրոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի, օտարա-
կանացդ ցրուհլոց ի Պոնտոս, ի Գաղատիա, ի Կա-
2 պադովկիա, ՅԱսիա և ի Բիւթանիա, ընտրելոց
ըստ կանխագիտութեանն Աստուծոյ Հօր, Հոգւոյն
սրբացուներովք ի հնազանդութիւն և ի սրսկու մն
արեան Յիսուսի Քրիստոսի. Շնորհք ձեզ և խա-
զաղութիւն բազմանայ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ ըստ իւր առատ ողորմու-
թեան ծնաւ զմեզ վերստին ի յոյս կենդանի,
4 ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի ի մեռե-
լոց, Անեղծ և անարատ և անթառամ ժառան-
5 գութեան որ պահուած է ձեզ յերկինս, Որ զո-
րութեամբն Աստուծոյ պահպանեալ եք հաւա-
տով այն փրկութեան որ պատրաստուած է յայտ-
6 նուել վերջին ժամանակ։ Որով կ'ուրախանաք,
թէև հիմա, ինչպէս հարկ է, սակաւ ինչ տրտմած
7 եք պէսպէս փորձութիւններով. Որպէս զի ձեր
հաւատոյն փորձը (որ պատուականն է քան զկո-
րըստական ոսկի, թէև սա հրով կը փորձուի,)
գտնուի գովութեամբ և պատուով և փառաւո

8 Յիսուսի Քրիստոսի յայտնուելու ժամանակը։ Զոր
զոր դուք չտեսած՝ կը սիրէք, զոր հիմա չէք տես-
ներ, բայց կը հաւատաք, և ուրախ եք անպատ-
9 մելի և փառաւորեալ խնդութեամբ. Ընդունելով
ձեր հաւատոյն վախճանը, այսինքն ձեր հոգի-
10 ներուն փրկութիւնը։ Որ փրկութեան համար
ի խնդիր եղան և քննեցին մարգարէք որ մար-
գարէացան շնորհաց համար որ պիտի ըլլար ձեզ.
11 Ու կը քննէին թէ երբ կամ որպիսի ժամանակ
կ'ի մացուներ Քրիստոսի Հոգին որ ի նոսա, որ
կանխաւ կը վկայէր Քրիստոսի չարչարանաց, և
12 յետ սոցա՝ փառացը համար։ Որոց յայտնուեցաւ,
որ ոչ թէ իրենց՝ այլ մեզ մատակարարեցին այն
բաները, որ հիմա պատմուեցան ձեզ անոնց ձե-
ռօք որ աւետարանը քարոզեցին ձեզ Հոգւով
Սրբով որ յերկինից ղրկուեցաւ. որ բաներուն կը
ցանկան ակնկառոյց նայել հրեշտակները։
13 Ուստի ձեր մտաց մէջքը գօտեւորած, արթուն
կեցած, կատարեալապէս յուսացէք ձեր վրայ հաս-
նելու շնորհաց՝ Յիսուսի Քրիստոսի յայտնուելու.
14 աւանիր, Հնազանդ որդիներու պէս, ոչ թէ ձեր
ագիտութեան ժամանակին առաջին ցանկութիւն-
15 ներով վարուելով. Այլ զձեզ կոչող Սրբոյն պէս
և դուք սուրբ եղէք Ձեր բոլոր վարմանց մէջ.
16 վասն զի գրուած է թէ Սուրբ եղէք, քանզի ես
17 սուրբ եմ։ Ու եթէ Հայր կը կոչէք զայն որ ա-
ռանց այսուհետեւ կը դատէ ըստ գործոց իւ-
րաքանչիւրին, ուրեմն ձեր պանդխտութեան ժա-
18 մանակն անցուցէք երկիւղիւ, Գիտանալով թէ դուք
ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկւով
փրկուեցաք ձեր հայրենասուր ունայն ճամբանե-
19 րէն, Այլ Քրիստոսի պատուական արեամբ, իբրև
20 առիթի և անարատ գառին. Որ յառաջագոյն ճանչ-
ցուած էր նախ քան զաշխարհի, և ի ե-
21 տին ժամանակս յայտնուեցաւ ձեզի համար, Որ

անոր մէջեցաւ հաւատացիք Աստուծոյ, որ զնա
մեռուցիներէն յարոյց, և տուաւ անոր փառք, որ-
պէս զի ձեր հաւատքը և յոյսն ըլլան յԱստուած,
22 Ձեր անձերը մաքրած ըլլալով հնազանդութեամբ
ճշմարտութեան ի ձեռն Հոգւոյն յեղբայրսիրու-
թիւն անկեղծաւոր, ի սուրբ սրտէ միրար սիրե-
23 ցէք սերտիւ, վերստին ծնած ըլլալով ոչ թէ ա-
պականացու սերմանէ, այլ անապականացուէն
Աստուծոյ կենդանի և յաւիտենական խօսքովը·
24 Վասն զի ամէն մարմին իբրև զխոտ է, և մար-
դուն բոլոր փառքն իբրև զծաղիկ խոտոյ. խոտը
25 կը չորնայ և անոր ծաղիկը կը թօթափի· Բայց
Տէրոջ խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն՝ այն
խօսքը որ աւետարանով քարոզուեցաւ ձեզ։

Գլ. Բ

1 Ուրեմն ի բաց թօթափելով ամէն չարութիւն և
ամէն խարէութիւն և կեղծաւորութիւն, և նա-
2 խանձ և ամէն չարախօսութիւն, Նորածին ման-
կանց պէս փափաքեցէք բանական՝ անխարդախ
3 կաթին, որով մեծնաք [ի փրկութիւն], Եթէ ճա-
4 շակեցիք Թէ քաղցր է Տէր· Առ որ մօտենալով,
առ վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ ա-
նարգուած, բայց Աստուծմէ ընտրուած և պա-
5 տուական է, Դուք ևս իբրև կենդանի քարեր շի-
նուիք հոգևոր տաճար, սուրբ քահանայութիւն,
մատուցանել հոգևոր պատարագներ հաճոյ Աս-
6 տուծոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօքս· Ուանի Գիր-
քին մէջ ևս կայ Թէ Ահա Սիոնի մէջ կը դնեմ
վէմ անկեան, ընտիր, պատուական. և ով որ
7 հաւատայ անոր՝ բնաւ պիտի չամչնայ· Ուստի ձեզ
հաւատացելոցդ պատուական է, բայց անհաւատ-
ներուն՝ քարը զոր անարգեցին շինողք, նա եղաւ
8 գլուխ անկեան, Եւ գլորման վէմ և գայթակ-

ղութեան քար անոնց՝ որ չհաւատալով կը գայ-
թակղին խօսքին, առ որ և սահմանուած էին,
9 Բայց դուք ընտիր ցեղ էք, թագաւորական քա-
հանայութիւն, սուրբ ազգ, անպիսական ժողո-
վուրդ, որ քարոզէք անոր առաքինութիւնները,
որ զձեզ կոչեց խաւարէն իւր սքանչելի լոյսը·
10 Որ երբեմն ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստու-
ծոյ ժողովուրդ էք· որ առանց ողորմութեան
էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք։
11 Սիրելիք, կ'աղաչեմ, իբրև պանդուխտ և օտա-
րական մեկնէք կոչեցէք մարմնաւոր ցանկութիւն-
12 ներէ՝ որ հոգւոյ դէմ կը պատերազմին, Ձեր
վարքն հեթանոսաց մէջ բարի պահելով, որպէս
զի այնու որով կը բամբասեն զձեզ իբրև չարա-
գործ, տեսնելով ձեր բարի գործերը, փառաւո-
13 րեն զԱստուած այցելութեան օրը, Ուստի հնա-
զանդեցէք ամէն մարդկային սահմանադրու-
թեան Տէրոջը համար, Թէ թագաւորին՝ իբրև
14 վերնագունի, Թէ կուսակալաց՝ իբրև անոր կող-
մանէ զրկուածներու, ի պատիժ չարագործաց,
15 և ի գովութիւն բարեգործաց· Քանզի Աստուծոյ
կամքն այսպէս է որ բարեգործ ըլլալով պապան-
16 ձեցունէք անմիտ մարդոց տգիտութիւնը· Ազատ-
ներու պէս ըլլալով, և ոչ Թէ գործածելով ա-
զատութիւնն իբրև ծածկոց չարութեան, այլ
17 իբրև Աստուծոյ ծառաներ· Պատուեցէք ամէն-
քը· սիրեցէք եղբայրութիւնը· վախցէք Աս-
տուծմէ· պատուեցէք թագաւորը։
18 Ծառայք ամէն բանի մէջ ահիւ հնազանդին
տէրանց, ոչ միայն բարեբարոց և հեզոց, այլ և
19 ժանտաբարոյից· Քանզի այս շնորհք է, եթէ ոք
խղճիւ առ Աստուած համբերէ վշտաց զորս կը
20 կրէ յանիրաւի· վասն զի ի՞նչ գովութիւն է,
եթէ մեղք գործելով ծեծուիք և համբերէք·
այլ եթէ բարի գործերով չարչարուիք և համ-

21 բերէք, այս է ընորհք Աստուծոյ փոխ. Քանզի
ասոր համար կոչուեցաք. վասն զի և Քրիստոս
ձեզի համար չարչարուեցաւ և թողուց ձեզ օրի-
22 նակ որ հետեւիք անոր չափերուն. Որ մեղք
չգործեց, և անոր բերանը նենգութիւն չգտա-
23 նուեցաւ. Որ կը նախատուէր, և փոխարէն չէր
նախատեր. կը չարչարուէր, և սպառնալիք չէր
ըներ. այլ զինք կը յանձնէր արդարութեամբ
24 դատողին. Որ մեր մեղքերը իւր մարմնովը վեր-
ցուց խաչափայտին վրայ, որ մենք ազատնք
ի մեղաց, և ապրինք արդարութեան համար. որոյ
25 վիրօք բժշկեցաք. Քանզի մոլորեալ ոչխարներու-
պէս էիք, բայց հիմա դարձաք ձեր հոգիներուն
Հովուին և Տեսչին,

Գլ. Գ

1 Նմանապէս կանայք հնազանդին իւրեանց ա-
րանց, որ եթէ ոմանք չհնազանդին ևս խօսքին,
2 չհոգուին առանց խօսքի կանանց վարմամբը, Տես-
3 նելով ձեր երկիւղած պարկեշտ վարքը։ Որոց
զարդը չըլլայ արտաքուստ մազերու հիւսուածք
և ընդելուզեալ ոսկիներ կամ հանդերձներուն
4 զգեցումն, Այլ ըլլայ սրտին ծածուկ մարդը՝
անեղծութեամբ հեզ և հանդարտ հոգւոյ, որ
5 Աստուծոյ առջև պատուական է յոյժ։ Քանզի
ժամանակաւ սուրբ կանայք որ իրենց յոյսը
դրած էին Աստուած՝ այսպէս կը զարդարէին
6 զիրենք, իրենց արանց հնազանդելով. Ինչպէս
կը հնազանդէր Աբրահամու և Տէր կը կոչէր զնա
Սառա, որոյ կ'ըլլաք զաւակներ՝ ըլլալով բարե-
գործ և ոչ մի երկիւղ վախնալով։
7 Նմանապէս արք խոհեմութեամբ բնակին ա-
նոնց հետ, իբրև տկար անօթոյ պատիւ տալով
կանանց, իբրև ժառանգակիցք կենաց չնորհաց,
որպէս զի չխափանուին ձեր աղօթքները։

8 Վերջապէս ամէնքդ համամիտ ըլլաք, կարեկից,
9 հղեայրասէր, ողորմած և *քաղցրաբարոյ։ Չհա-
տուցանէք չարութիւն փոխանակ չարութեան,
կամ նախատինք՝ փոխանակ նախատանաց. այլ
ընդ հակառակն օրհնեցէք, գիտնալով թէ յայն
սակս կոչուեցաք, որ օրհնութիւն ժառանգէք։
10 Վասն զի այն որ կ'ուզէ սիրել զկեանս և տես-
նել բարի օրեր, թող դադրեցնէ իւր լեզուն
չարութենէ, և իւր շրթունքը՝ նենգութիւն խօ-
11 սելէ. Զարութենէ եւս կենայ և բարութիւն ընէ,
խաղաղութիւն խնդրէ և անոր եւեւէն երթայ։
12 Քանզի Տէրոջը աչքը արդարներուն վրայ են, և
անոր ականջներն անոնց աղօթիցը. բայց Տէրոջը
13 երեսը չարագործներուն վրայ է։ Եւ ո՞վ պիտի
հատուցնէ ձեզ չարիք, եթէ դուք նմանող ըլլաք
14 բարւոյն։ Բայց եթէ չարչարուիք ևս արդարու-
թեան համար, երանելի էք. և մի՛ վախնաք անոնց
15 սէնն և մի՛ չիրիմք, Այլ սուրբ ըրէք զՏէր Աս-
տուած ձեր սիրտերուն մէջ. և միշտ պատրաստ
եղէք հեզութեամբ և երկիւղածութեամբ պա-
տասխան տալ ամէնուն որ կը հարցնեն ձեզ ձեր
16 յուսոյն պատճառը. Եւ բարի խիղճ ունենաք, որ
ինչ բանով որ կը բամբասուն զձեզ իբրև չարա-
գործ, ամչնան անոնք որ կը պարսաւեն ձեր բարի
17 վարքը որ ի Քրիստոս։ Քանզի լաւ է բարիք գոր-
ծելով չարչարուիլ, եթէ այն է Աստուծոյ կամքը,
18 քան չարիք գործելով։ Վասն զի և Քրիստոս մե-
ղաց համար մի անգամ չարչարուեցաւ, Արդարն
անարդարներուն համար, որ զմեզ մատեցնէ
առ Աստուած. որ թէպէտ մեռաւ մարմնով, բայց
19 կենդանի եղաւ հոգւով. Որով և հոգիներուն որ
20 բանտի մէջ էին՝ գնաց և քարոզեց. Որ երբեմն
ապստամբ էին, երբ Աստուծոյ երկայնմտութիւնը

*Ոմն+, խոնարհ

կը համբերեր անոնց նոյն օրերը, մինչ տապանը
կը չինուէր, յորում ջիւ անձինք, այսինքն ութ
21 հոգի, ապրեցան ընդ ջուր. Որ և զմէդ այն օ-
րինակին պէս կ'ապրեցուցանէ հիմա մկրտութիւնը,
(ոչ թէ մէկդի նետելը մարմնոյն աղտը, այլ
բարի խղճին վկայութիւնն առ Աստուած,) յա-
22 րութեամբն Յիսուսի Քրիստոսի, Որ երթալով
յերկինս՝ է ընդ աջմէ Աստուծոյ հրեշտակաց և
իշխանութեանց և զօրութեանց հնազանդելովլի
անոր։

Գլ. Դ

1 Արդ որովհետև Քրիստոս չարչարուեցաւ մեզի
համար մարմնով, դուք ևս նոյն մտօք զինուե-
ցէք. վասն զի այն որ մարմնով չարչարուեցաւ,
2 դադարած է ի մեղաց։ Որ ոչ ևս մարդոց ցան-
կութիւններուն պէս՝ այլ ըստ Աստուծոյ կամաց
3 ապրիք ի մարմնի մնացեալ ժամանակը։ Քանզի
հերիք է մեզ կենաց անցեալ ժամանակը, յո-
րում կատարեցինք հեթանոսաց կամքը, և վար-
ուեցանք գինութեամբք, ցանկութեամբք, գի-
նեհարութեամբք, անառակութեամբք, արբե-
ցութեամբք և անօրէն կռապաշտութեամբք։
4 Եւ սոսը կը զարմանան որ դուք նոյն անառա-
կութեան զեղումներուն մէջ չէք վազեր անոնց
5 հետ, և կը հայհոյեն. Որք պատասխան պիտի
տան անոր որ պատրաստ է դատել զկենդանիս
6 և զմեռեալս։ Քանզի վասն այսորիկ մեռելոց ևս
աւետարան քարոզուեցաւ, որ դատուին ըստ
մարդկան՝ մարմնով, և կենդանի ըլլան ըստ Աս-
տուծոյ՝ հոգւով։
7 Սակայն ամէն բանի վախճանը մօտեցած է.
ուստի զգաստ եղէք և արթուն կեցէք յաղօթս։
8 Եւ յառաջ քան զամենայն ինչ սիրոիւ սէր ու-

Նեցէք առ միմեանս, քանզի սէրը կը ծածկէ մե-
9 ղաց բազմութիւնը։ Իրարու հիւրասիրութիւն
10 ցուցէք առանց տրտնջելոյ։ Իւրաքանչիւրը ինչ
շնորհք որ առաւ, զայն մատակարարեցէք իրա-
րու իբրև Աստուծոյ պէսպէս շնորհացը բարի
11 անանձներ։ Եթէ ոք խօսի, Աստուծոյ պատգամ-
ներուն պէս խօսի։ Եթէ ոք մատակարարէ,
ըստ ըշխ որպէս թէ Աստուծմէ շնորհուած զօրու-
թենէն, որպէս զի յամենայնի փառաւորուի Ա-
ստուած Յիսուսի Քրիստոսի միջոցաւ, որում փառք
և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
12 Սիրելիք, մի՛ ատոփուիք համարիք Նեռը-Բիւռ
բորբոքը, որ կ'ըլլայ զձեզ փորձելու, որպես
13 թէ օտար բան մը հանդիպած է ձեզ։ Այլ
ըստ որում հաղորդ եք Քրիստոսի չարչարանաց,
ուրախացէք, որ անոր փառաց յայտնութեան
14 ատեներ ևս ուրախանաք ցնծութեամբ։ Եթէ նա-
խատիք Քրիստոսի անուանը համար, երանելի
եք. քանզի փառաց [և զօրութեան] և Աստու-
ծոյ Հոգին հանգչած է ձեր վրայ. [արդարև կը
հայհոյուի նա անունց կողմանէ, բայց կը փառա-
15 ւորուի ձեր կողմանէ։] Մի՛ ոք ձենէ չարչարուի
իբրև մարդասպան, կամ գող, կամ չարագործ,
16 կամ իբրև ուրիշի գործին միջամտող. Բայց եթէ
ըբբբբ իբրև Քրիստոնեայ, թող չամչնայ, այլ
17 յայսմ թող փառաւ տայ Աստուծոյ։ Քանզի ժա-
մանակ է որ դատաստանն սկսի Աստուծոյ տու-
նէն. և եթէ նախ մեզ կ'սկսի, ապա ինչ պիտի
ըլլայ անոնց վերջը որ չեն հնազանդիր Աստու-
18 ծոյ աւետարանին։ Եւ եթէ արդարը հազիւ կը
փրկուի, ամբարիշտը և մեղաւորն ո՞ւր պիտի
19 գտնուին։ Ուստի անոնք որ ըստ Աստուծոյ կա-
մաց կը չարչարուին, բարիք գործելով թող
յանձնեն իրենց հոգիները հաւատարիմ Ստեղծողին։

ԳԼ. Ե

1 Երիցանց որ ձեր մէջ են՝ կ՚աղաչեմ իբրև երիցակից, և Քրիստոսի չարչարանաց վկայ, և մասնակից հանդերձեալ փառաց որ պիտի յայտնուի.
2 Աստուծոյ հօտը որ ի ձեզ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ոչ ակամայ, այլ կամաւ, ոչ թէ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ, ոչ թէ վիճակներուն վրայ տիրելով, այլ օրինակ ըլլալով հօտին. Եւ երբ երևնայ Հովուապետը, պիտի ընդունիք փառաց անթառամ պսակը։
5 Նմանապէս դուք, երիտասարդք, հնազանդ եղէք ծերոց. և ամէնդդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. քանզի Աստուած հակառակ կը կենայ ամբարտաւանից, բայց շնորհք
6 կու տայ խոնարհաց։ Ուրեմն խոնարհեցէք Աստուծոյ հզօր ձեռացը տակ, որ բարձրացունէ
7 զձեզ ի ժամանակին. Ձեր ամէն հոգը նետեցէք անոր վրայ, վասն զի նա կը հոգայ ձեզի համար։
8 Արթուն եղէք, հսկեցէք, քանզի ձեր հակառակորդը Սատանան իբրև մռնչող առիւծ կը
9 շրջի և կը խնդրէ թէ զով կլանէ. Որուն դէմ կեցէք հաւատով հաստատուած, գիտնալով թէ ձեր եղբայրներն աշխարհի մէջ կը կրեն նոյն չարչարանքը։
10 Եւ ամէն շնորհաց Աստուածը որ կոչեց զձեզ իւր յաւիտենական փառաց Քրիստոսի Յիսուսի ձեռօք՝ ձեր սակաւժամանակեայ նեղութենէն
եաթը, կատարեալ ընէ զձեզ, հաստատէ, զօրա-
11 ցունէ, ընէ հաստահիմն։ Նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռօք, (ինչպէս կը կարծեմ,) համառօտիւ գրեցի ձեզ, յորդորելով և վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմա-

բիտ շնորհքը, յորում հաստատ կեցած էք։
13 Ողջոյն կու տայ ձեզ ի Բաբելոն ընտրեալից ևիւ-
14 վդէն, և Մարկոս որդի իմ։ Ողջոյն տուէք իրարու համբուրիւս սիրոյ. խաղաղութիւն ձեր ամենուն հետ որ էք ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Շմաւոն Պետրոս, Յիսուսի Քրիստոսի ծառայ և առաքեալ, ևիւ՚ որ մեզի հետ նոյն պատուական հաւատոց հասաք մեր Աստուծոյն և Փրկչին Յի-
2 սուսի Քրիստոսի արդարութեամբը. Շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ աւելնայ Աստուծոյ և
3 Տէրոջն մերոյ Յիսուսի գիտութեամբը, ինչպէս անոր աստուածային զօրութիւնը տուաւ մեզ կենաց և աստուածպաշտութեան վերաբերեալ ամէն բան գիտութեամբ նորա որ հրաւիրեց զմեզ փա-
4 ռօք և առաքինութեամբ, Որով մեծամեծ և պատուական խոստմունք տրուած են մեզ, որպէս զի ասոնցմով հաղորդ ըլլաք աստուածային բնութեան փախչելով ապականութենէն որ աշ-
5 խարհի մէջ է ցանկութեամբ. Եւ սոյն այս բանին համեմատ ամէն փոյթ՝ աւելցուցէք ձեր հաւատոյն վրայ առաքինութիւն, առաքինութեան վրայ՝

6 գիտութիւն, եւ գիտութեան վրայ՝ ժուժկալու-
թիւն, և ժուժկալութեան վրայ՝ համբերութիւն,
և համբերութեան վրայ՝ աստուածպաշտութիւն,
7 եւ աստուածպաշտութեան վրայ՝ եղբայրսիրու-
8 թիւն, և եղբայրսիրութեան վրայ՝ սէր։ Վասն զի
մինչ սոսնք կը գտնուին ձեր վրայ և կ'աճին, ու-
նգնան և անպտուղ չեն ըներ զձեզ Տեառն մերոյ
9 Յիսուսի Քրիստոսի գիտութեան մէջ։ Բայց ով որ
չունի սոսնք, կոյր է և զայրացու, և մոռցած է
10 թէ մաքրուեցաւ իր առաջին մեղքերէն։ Վասն
որոյ, եղբարք, չնացեք մանաւանդ հաստատել
ձեր կոչումը և ընտրութիւնը, քանզի ընելով զայս՝
11 ընաւ պիտի չվրիպիք։ Քանզի այսպէս առատօրէն
պիտի շնորհուի ձեզ մտնել Տեառն մերոյ և փրկչին
Յիսուսի Քրիստոսի յաւիտենական թագաւորու-
թիւնը։
12 Ուստի ես զանց պիտի չընեմ յիշեցունել ձեզ
միշտ սոսնք, թէև գիտէք և հաստատուած էք
13 յառաջիկայ ճշմարտութեան։ Եւ իրաւունք կը հա-
մարիմ, ցորչափ այս *մարմնոյս մէջ եմ, յիշե-
14 ցունելով արթնցունել զձեզ։ Քանզի գիտեմ թէ
վազ պիտի մերկանամ այս մարմինս, ինչպէս Տէրն
15 մեր Յիսուս Քրիստոս յայտնեց ինձ։ Ուստի պիտի
չնանամ որ իմ ելլելէս ետքը ես աշխարհէ՝ միշտ
կարող ըլլաք յիշել զայսոսիկ։ Քանզի ոչ թէ ծար-
ուարութեամբ չհնուած առասպելներու նման եր-
թալով ցուցնեմ ձեզ Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի զօրութիւնը և գալուստը, այլ ականատես
17 լինելով անոր մեծվայելչութեանը։ Վասն զի առաւ
նա Հօր Աստուծմէ պատիւ և փառք, երբ այնպիսի
ձայն եկաւ մեծվայելչութեան փառքին, թէ Դուն է
18 Որդի իմ սիրելի, որուն հաճած եմ, և այս ձայնը
որ յերկինից եկաւ՝ լսեցինք մենք որ անոր հետ

*Յոյն. վրանիս

19 էինք սուրբ լերան վրայ։ Եւ ունինք նաև մար-
գարէական խօսքը որ աւելի հաստատուն է, որուն
լաւ կ'ընէք եթէ մինչ դնեք, իբրև ճրագի որ կը
ծագէ մութ տեղ, մինչև որ լուսնայ և արու-
20 սեակը ծագէ ձեր սիրտերուն մէջ։ Բայց նախ սա
գիտնաք, թէ Գրոց ամեն մարգարէութիւն չունի
21 իւր ուրոյն մեկնութիւնը։ Քանզի մարգարէութիւն
չարուեցաւ երբեք կամաց մարդկան, այլ Աս-
տուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժեալ՝
խօսեցան։

Գլ. Բ

1 Բայց սուտ մարգարէները ևս կ'ըլլային ժողովրդեան
մէջ, ինչպէս ձեր մէջ ևս սուտ վարդապետներ
պիտի ըլլան, որ գաղտ պիտի մուծանեն կորուսիչ
հերձուածներ, և զերկունք գնող Տէրն ուրանալով՝
իրենց վրայ պիտի բերեն արագաչաս կորուստ։
2 Եւ շատեր պիտի երթան զհետ *կորստական ըն-
թացից՝ նոցա, որոց համար պիտի հայհոյուի ճըշ-
3 մարտութեան ճամբան. Եւ առ ագահութեան
խարեական խօսքերով չահավճառ պիտի ընեն
զձեզ. որոց ի վաղուց դատապարտութիւնը չյա-
լեհնար, և անոց կորուսը չնիրհեր։
4 Վասն զի եթէ Աստուած չխնայեց մեղուցեալ
հրեշտակաց, այլ խաւարին կապանօք նետելով
5 տարտարոսը պահել տուաւ դատաստանի. Եւ ա-
ռաջին աշխարհի ևս չխնայեց, այլ պահեց †ու-
թերորդն, զնոյ արդարութեան քարոզիչ, երբ
բերաւ ջրհեղեղ ամբարիշտներուն աշխարհին վրայ։
6 Եւ Սոդոմայ և Գոմորայ քաղաքները մոխիր դար-
ձունելով կործանման դատապարտեց, օրինակ

*Որ-ն., անառակութեանց
†Այլ-ն., ընտանեօք՝ ութ

կացուցանելով զՆոյ՝ մարդոց որ պիտի մա-
7 բարչաբին առ յապայ. Եւ ապառնեց զարդարն
զՂովտ որ ձանձրացած էր անօրէններուն անառակ
8 վարքէն. (Քանզի այն արդարը կենալով անոնց
մէջ ականատես և ականջալուր, կը տանջէր օր
ըստ օրէ Է՞ր արդար հոգին անոնց անօրէն վար-
9 մունքը.) Տէրը գիտէ ապառնել բարեպաշտները
փորձութենէն, և անիրաւները պահել տանջանաց
10 համար դատաստանի օրուան. Մանաւանդ զա-
նոնք որ պղծութեց ցանկութեամբ կ'երթան մարմնոյ
եռեւ կ'անարգեն տէրութիւնը. ինքնահաճանք,
յանդգնունք, չեն վախնար մեծափառութեանց
11 դէմ հայհոյել. Մինչ հրեշտակներ որ գոն զնոսա
մեծ են զօրութեամբ և կարողութեամբ՝ չեն բե-
րեր Տէրոջը առջև անոնց դէմ հայհոյութեան
12 դատաստան. Բայցասոնք անբան անասուններու
պէս՝ (որ եղած են ի բնէ որսոյ և սպանման
համար,) կը հայհոյեն այն բաներուն դէմ զորս
չեն գիտեր, և իրենց ապականութեամբը պիտի
13 սպառին, Անիրաւութեան վարձքն ընդունե-
լով. որ ցերեկուան զեղխութիւնը զուարճութիւն
կը համարին. արատ և բիծ են, իրենց խաբէու-
թիւններովը զուարճանալով՝ երբ ձեզի հետ խրա-
14 խտութեանց կը նստին. Ունին աչուքներ լի շնու-
թեամբ, որ չեն դադարիր ի մեղաց. կը խաբեն
անհաստատ հոգիներ. ունին ագահութեան սովո-
15 րած սիրտեր. անիծեալ որդիք են. Թողլով ու-
ղիղ ճամբան մոլորեցան՝ հետեւելով ճանապարհին
Բաղաամայ Բէովրեան, որ սիրեց անիրաւութեան
16 վարձքը. Բայց առաւ իր անօրէնութեան յան-
դիմանութիւնը. անխօս էշը մարդկային ձայնիւ
խօսելով՝ արգելից մարգարէին յիմարութիւնը.
17 Ասոնք աղբիւրք են անջրդիք. և փոթորկէ
մղուած մէգեր, որոց համար պահուած է թանձր
18 խաւարն յաւիտեան. Քանզի ունայնութեամբ մե-

ծաբանելով կը խաբեն դիմութեամբք, մարմնոյ
ցանկութեամբք զանոնք որ փիլ մը առաջ փա-
խած էին անոնցմէ որ կը չբլին ի մոլորութեան.
19 Կը խոստանան անոնց ազատութիւն, և ինքեանք
ծառայ են ապականութեան. վասն զի ինչ բանէ
20 որ կը յաղթուի ոք, անոր ծառայ կ'ըլլայ. Քանզի
եթէ Տէրոջն և Փրկչին Յիսուսի գիտութեամբ
աշխարհս պղծութիւններէն հրա-
ժարելէ ետքը դարձեալ այն բաներէն բռնուած
յաղթուին, անոնց յետինը չար կ'ըլլայ քան
21 զառաջինը. Քանզի լաւ էր անոնց որ չնա-
ճանչցած չըլլային արդարութեան ճամբան, քան թէ
ճանչնալով ետ դառնային այն սուրբ պատուի-
22 րանէն որ յանձնուեցաւ անոնց. Սակայն անոնց
հանդիպեցաւ ըստ ճշմարիտ առակին, Թէ շուն
կը դառնայ անդրէն ի փսխած իւր, և խոզ լուա-
ցեալ՝ տղմի մէջ թաւալելու.

Գլ. Գ

1 Սիրելիք, այս երկրորդ թուղթը հիմա կը գրեմ
ձեզ, որովք արթնցնելեմ ձեր անկեղծ միտքն ի
2 յիշել, Որպէս զի միաք բերէք սուրբ մարգարէ-
ներէն յառաջագոյն ըսուած խօսքերը, և մեր,
այսինքն Տէառն և Փրկչին առաքելոց, պատուէր-
3 ները. Բայց նախ զայս գիտնաք, որ պիտի գան
վերջին օրերը ծաղր ընողներ, որ պիտի քալեն
4 իրենց ցանկութիւններուն համեմատ, Եւ պիտի
ըսեն, Ո՞ւր է անոր գալստեան խոստումը. վասն
զի յորմէ հետէ հայրերը քնացան, ամէն բան
այնպէս կայ և կը մնայ արարածոց սկիզբէն հե-
5 տէ. Քանզի անոնք կամելով կը մոռնան զայս Թէ
երկինք յառաջագոյն եղաւ, և երկիր ջուրէ և
ջրով հաստատ կեցած է Աստուծոյ խօսքովը,
6 Որով հին աշխարհը ջրհեղեղով ապականեալ կոր

7 եւս. Եւ այժմեւ երկինք և երկիր պահպանուած
են նոյն խօսքով, մինչև դատաստանին և մա-
բարիչ մարդոց կորստեան օրը հրոյ համար
8 պահուած։ Սակայն ձեզնէ ծածուկ չլինայ այս, սի-
րելիք, որ Տէրոջը քով մի օր իբրև հազար տարի
9 է, և հազար տարին իբրև մի օր։ Տէրը չյապա-
ղեր խոստումը, ինչպես ոմանք յապաղեալ
կը համարին, այլ երկայնամիտ կ'ըլլայ մեզ. քանզի չուզեր որ կորսուի ոք, այլ որ ամենքն ա-
10 պաշխարութեան գան։ Սակայն իբրև *գող պիտի
գայ Տէրոջը օրը, յորում երկինք սաստիկ շա-
ռաչմամբ պիտի անցնին, և տարերք վառած պի-
տի լուծուին, և երկիրս և ինչ գործեր որ կը
11 գտնուին անոր մէջ պիտի այրին։ Արդ որովհետև
այս ամենը պիտի լուծուին, ձեզ որպիսի՛ մարդիկ
ըլլալ կը վայելէ սուրբ վարուք և բարեպաշտու-
12 թեամբ, սպասելով Եւ փութալով Աստուծոյ օր-
ուան գալստեան, յորում երկինք կրակով այ-
րած պիտի լուծուին, և տարերք վառած պիտի
13 հալին։ Սակայն անոր խոստման համեմատ կը սպա-
սենք նոր երկնից և նոր երկրի, որոց մէջ կը
բնակի արդարութիւն։
14 Ուստի, սիրելիք, ասոնց սպասելով ջանացէք
որ ձեզ ամբիծ և անարատ գտնէ նա խաղաղու-
15 թեամբ. Եւ Տէրուն մերոյ երկայնմտութիւնը
փրկութիւն համարեցէք. ինչպես և մեր սիրելի
եղբայրը Պօղոս իրեն տրուած իմաստութեամբ
16 գրեց ձեզ. ինչպես նաև կը խօսի այս բաներուն
վրայ բոլոր Թուղթերուն մէջ. յորս կը գտնուին
ինչ ինչ դժուարիմաց, զորս տգէտք և անհաս-
տատք կը թիւրեն, ինչպես նաև ուրիշ գիրքերն
17 ի կորուստ անձանց իւրեանց։ Ուրեմն դուք, սի-
րելիք, յառաջագոյն գիտնալով զգոյշ եղէք, որ

*Ոմանք, գիշերուան գող

անօրէններուն խաբէութենէն բռնուած՝ չյինաք
18 ձեր հաստատութենէն. Այլ աճեցէք Տեառն մե-
րոյ և փրկչին Յիսուս Քրիստոսի շնորհօք և գի-
տութեամբը։ Նմա փառք և՛ այժմ և՛ մինչև յա-
ւիտեանական օրն։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Այն որ ի սկզբանէ էր, որոյ համար լսեցինք,
զոր տեսանք մեր աչօք, որուն նայեցանք և զոր
մեր ձեռուընները չօշափեցին կենաց բանին վրայ,
2 (Եւ կեանքը յայտնուեցաւ, և տեսանք և կը
վկայենք և կը պատմենք ձեզ այն յաւիտենական
կեանքը, որ Հօր քով էր և յայտնուեցաւ մեզ,)
3 Այն զոր տեսանք և լսեցինք՝ կը պատմենք ձեզ,
որ և դուք հաղորդութիւն ունենաք մեզի հետ.
և մեր հաղորդութիւնն է Հօր հետ և անոր Որդ-
4 ւոյն Յիսուսի Քրիստոսի հետ։ Եւ կը գրենք ձեզ
սասնդ, որ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։
5 Եւ այս է պատգամը զոր լսեցինք անկէ և կը
պատմենք ձեզ, թէ Աստուած լոյս է, և բնաւ
6 խաւար չկայ ի նմա։ Եթէ ըսենք թէ անոր հետ
հաղորդութիւն ունինք, և խաւարի մէջ չքայինք,
7 կը ստենք և չենք ըներ ճշմարտութիւնը, իսկ

եթէ լուսոյ մէջ քալենք, ինչպէս նա լուսոյ մէջ
է, կ'ունենանք իրարու հետ հաղորդութիւն, և
անոր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի արիւնը կը սրբէ
8 զմեզ ամէն մեղքէ։ Եթէ ըսենք թէ Չունինք
մեղք, կը խաբենք զմեզ, և չկայ ճշմարտութիւն
9 մեր մէջ։ Եթէ խոստովանինք մեր մեղքերը, հա-
ւատարիմ և արդար է նա ամէն թողութիւն մեր
մեղաց, և սրբել զմեզ ամէն անօրէնութենէ։
10 Եթէ ըսենք թէ Չմեղանչեցինք, կ'ընենք զնա
սուտ, և անոր խօսքը չէ մեր մէջ։

ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, կը գրեմ ձեզ ասոնք, որ չմեղան-
չէք. և եթէ ոք մեղանչէ, ունինք Հօրը քով բա-
2 րեխօս զՅիսուս Քրիստոս զարդարն. Եւ նա քա-
ւութիւն է մեր մեղաց, և ոչ միայն մերոցներուն,
այլ և բոլոր աշխարհին։
3 Եւ ասով գիտենք թէ ճանչցանք զնա, եթէ
4 անոր պատուիրանները պահենք։ Ով որ կ'ըսէ թէ
ես ճանչցայ զնա, և չպահեր անոր պատուիրան-
ները, սուտ է, և ճշմարտութիւն չկայ ի նմա։
5 Բայց ով որ կը պահէ անոր խօսքը, ստուգիւ կա-
տարեալ եղած է ի նմա Աստուծոյ սէրը. ասով
6 կը ճանչնանք թէ ենք ի նմա։ Ով որ կ'ըսէ թէ
կը բնակի ի նմա, պարտի քալել այնպէս ինչպէս
նա քալեց։
7 *Եղբարք, ոչ թէ նոր պատուիրան կը գրեմ
ձեզ, այլ հին պատուիրան զոր ի սկզբանէ ու-
նեիք. հին պատուիրանն այն խօսքն է, զոր
8 ի սկզբանէ լսեցիք։ Դարձեալ նոր պատուիրան
կը գրեմ ձեզ, և այս ճշմարիտ է ի նմա և ի ձեզ.
քանզի խաւարը կ'անցնի, և ճշմարիտ լոյսն արդէն

*Ոմն., Սիրելիք

9 կ'երևի։ Ով որ կ'ըսէ թէ լուսոյ մէջ է, և կ'ատէ
10 իւր եղբայրը, խաւարի մէջ է տակաւին։ Ով որ
կը սիրէ իւր եղբայրը, կը բնակի լուսոյ մէջ, և
11 գայթակղութիւն չկայ ի նմա. Բայց ով որ կ'ատէ
իւր եղբայրը, խաւարի մէջ է և կը քալէ խաւարի
մէջ, և չգիտեր թէ ուր կ'երթայ, քանզի խա-
ւարը կուրացուցած է անոր աչուքները։
12 Կը գրեմ ձեզ, որդեակք, քանզի թողուած են
13 ձեր մեղքերն անոր անուանը համար։ Կը գրեմ
ձեզ, հարք, քանզի ճանչցաք զայն որ ի սկզբանէ
է։ Կը գրեմ ձեզ, երիտասարդք, վասն զի յաղ-
14 թեցիք չարին. Կը գրեմ ձեզ, մանկունք, քանզի
ճանչցաք զՀայր. Գրեցի ձեզ, հարք, քանզի ճանչ-
ցաք զայն որ ի սկզբանէ է։ Գրեցի ձեզ, երիտա-
սարդք, քանզի հզոր եք, և Աստուծոյ խօսքը
15 կը բնակի ի ձեզ, և յաղթեցիք չարին. Մի՛ սիրէք
16 զաշխարհն, և մի՛ ինչ որ յաշխարհի է։ Եթէ ոք
կը սիրէ զաշխարհ, Հօր սէրը չկայ ի նմա. քանզի
ամենայն ինչ որ յաշխարհի է, ցանկութիւն մարմ-
նոյ և ցանկութիւն աչաց և ամբարտաւանութիւն
17 կենաց, չէ ի Հօրէ, այլ աշխարհէն է։ Եւ աշխարհս
կ'անցնի, և անոր ցանկութիւնը. բայց ով որ Աս-
տուծոյ կամքը կը կատարէ՝ կը մնայ յաւիտեան։
18 Որդեակք, վերջին ժամանակ է. և ինչպէս լսե-
ցիք թէ Նեռը պիտի գայ, և արդէն շատ նեռներ
եկած են, ասկէ կ'իմանանք թէ վերջին ժամա-
19 նակ է։ Մեզնէ ելան, *բայց չէին մեզնէ. քան-
զի եթէ մեզնէ եղած ըլլային կը մնային մեզի հետ.
այլ դէմ ելան, որ յայտնի ըլլայ թէ ամենք ա-
20 մենքը չէին մեզնէ։ Բայց դուք օծութիւն ունիք
21 Սուրբէն, և գիտէք զամենայն։ Չգրեցի ձեզ իբր
թէ չգիտեր ճշմարտութիւնը, այլ թէ գիտէք
զնա, նաև թէ՝ և ոչ մի սուտութիւն ճշմարտութե-
22 նէ է։ Ո՞վ է սուտասօս, եթէ ոչ այն որ կ'ըսէ թէ
Յիսուս չէ Քրիստոս. Նեռ է այն որ կ'ուրանայ

23 զՀայր և զՈրդի, Աւետ՝ն որ կ'ուրանայ զՈրդի,
չընդունիր նաև զՀայր։ [Բայց ով որ կը խոստո-
24 վանի զՈրդի, կ'ընդունի նաև զՀայր։] Ուրեմն
ինչ որ լսեցիք դուք ի սկզբանէ, թող բնակի
ի ձեզ. եթէ այն զոր լսեցիք ի սկզբանէ՝ բնակի
25 ի ձեզ, դուք ևս կը բնակիք յՈրդին և ի Հայր։ Եւ
այս է խոստումն զոր խոստացաւ Նա մեզ, այսինքն
26 յաւիտենական կեանք։ Ասոնք գրեցի ձեզ՝ զձեզ
27 մոլորեցուցողներուն համար։ Եւ օծութիւնը զոր
ընկալաք անկէ՝ կը մնայ ի ձեզ, և պէտք չէ որ
մարդ սորվեցնէ ձեզ, այլ ինչպես նոյն օծու-
թիւնը կը սորվեցնէ ձեզ ամէն բանի վրայ, և
ճշմարիտ է և սուտ չէ, և ինչպես սորվեցուց
ձեզ, կեցէք ի Նմա։
28 Եւ հիմա, որդեակք, կեցէք ի Նմա, որ երբ
յայտնուի, համարձակութիւն ունենանք, և
29 չամչնանք անկէ, երբ գայ։ Եթէ գիտէք թէ ար-
դար է, կ'իմանաք թէ ամէնը որ արդարութիւն
կը գործէ՝ ծնած է անկէ։

Գլ. Գ

1 Տեսէք որպիսի՛ սէր շնորհեց մեզ Հայր, որ որդիք
Աստուծոյ կոչուինք. վասն այնորիկ չճանչնար
2 զմեզ աշխարհ, քանզի չճանչցաւ զնա։ Սիրելիք,
հիմա որդիք Աստուծոյ ենք, և տակաւին յայտնի
չէ թէ ինչ պիտի ըլլանք. բայց գիտենք թէ երբ
Նա յայտնուի, Նման պիտի ըլլանք անոր. վասն
զի պիտի տեսնենք զնա ինչպես որ է։
3 Եւ ամէնը որ ունի այս յոյսն անոր վրայ, կը
4 մաքրէ զինքը, ինչպէս Նա մաքուր է։ Ամէնը որ
կը գործէ մեղք, Նա անօրէնութիւն ևս կը գոր-
5 ծէ, և մեղքն անօրէնութիւն է։ Եւ գիտէք թէ
վասն այնորիկ յայտնուեցաւ Նա, որ վերցնէ
6 մեր մեղքերը. և մեղք չկայ ի Նմա։ Ամէնը որ

կենայ ի Նմա՝ չմեղանչէ. ամէնը որ կը մեղանչէ՝
7 տեսած չէ զնա և ճանչցած չէ զնա։ Որդեակք,
չխաբէ ոք զձեզ. այն որ արդարութիւն կը գոր-
8 ծէ՝ արդար է, ինչպես և Նա արդար է։ Եւ
այն որ կը գործէ մեղք՝ Սատանայէն է, քանզի
ի սկզբանէ հետէ Սատանան կը մեղանչէ. վասն այ-
նորիկ յայտնեցաւ Աստուծոյ Որդին, որ ջախէ
9 Սատանային գործերը։ Ամէնը որ Աստուծմէ ծնած
է չգործեր մեղք, քանզի անոր սերմը կը մնայ
ի Նմա, և չկրնար մեղանչել, քանզի ծնած է Աս-
10 տուծմէ։ Ասով յայտնի են որդիք Աստուծոյ և
որդիք Սատանային։ Ամէնը որ արդարութիւն
չգործեր՝ չէ Աստուծմէ, և ով որ չսիրեր իւր
11 եղբայրը։ Քանզի այս է պատուիրանը զոր լսեցիք
12 ի սկզբանէ, որ զիրար սիրենք։ Ոչ թէ Կայենի
պէս որ չարէն էր և սպաննեց իւր եղբայրը. և
ինչո՞ւ համար սպաննեց զնա. վասն զի իւր գոր-
13 ծերը չար էին, և եղբօրը ՝ջեղեր՝ արդարք մի՛
զարմանաք, եղբարք իմ, եթէ աշխարհ ատէ
14 զձեզ։ Մենք գիտենք թէ փոխուեցանք մահ-
ուանէ ի կեանս, քանզի կը սիրենք եղբայրները.
ով որ չսիրեր եղբայրը՝ կը մնայ մահուան մէջ։
15 Ամէնը որ կ'ատէ իւր եղբայրը՝ մարդասպան է.
և գիտէք թէ և ոչ մի մարդասպան ունի յաւի-
16 տենական կեանք բնակել յինքեան։ Ասով գիտ-
ցանք Քրիստոսի սէրը, որ Նա իւր կեանքը դրաւ
մեզի համար, մենք ևս պարտիմք դնել մեր
17 կեանքը Ֆէ եղբայրներուն համար։ Բայց ով որ
ունի աշխարհիս բարիքը, և կը տեսնէ իւր եղ-
բայրը կարօտ իմիք և կը փակէ անկէ իւր գութը,
18 ինչպէ՞ս Աստուծոյ սէրը կը բնակի ի Նմա։ Որ-
դեակք իմ, ոչ թէ խօսքով և լեզուով սիրենք,
այլ գործով և ճշմարտութեամբ։
19 Եւ ասով կը ճանչնանք թէ ճշմարտութենէն ենք,
և մեր սիրտերուն համարձակութիւն պիտի տանք

20 անոր առջև. Քանզի եթէ մեր սիրտերը կը մեղադրեն զմեզ, այլ Աստուած քան մեր սիրտերը
21 մեծ է և գիտէ ամենայն բան։ Սիրելիք, եթէ մեր սիրտերը չմեղադրեն զմեզ, համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջև։ Եւ ինչ որ
22 խնդրենք կ'առնունք անկէ, քանզի կը պահենք անոր պատուիրանները, և կ'ընենք ինչ որ հաճոյ է անոր առջև։ Եւ այս է անոր պատուիրանը, որ հաւատանք անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի անուան և զիրար սիրենք, ինչպէս պա-
24 տուէր տուաւ մեզ։ Եւ ով որ կը պահէ անոր պատուիրանները կը կենայ ի նմա, և նա ի սմա. և այսու գիտենք թէ կը կենայ ի մեզ, այսինքն՝ ի Հոգւոյն զոր տուաւ մեզ։

Գլ. Դ

1 Սիրելիք, ամէն հոգւոյ մի՛ հաւատաք, այլ փորձեցէք հոգիները թէ Աստուծմէ՞ են. քանզի շատ
2 սուտ մարգարէներ ելած են յաշխարհ։ Ասով կրնանք ճանչնալ զՀոգին Աստուծոյ. ամէն հոգի որ կը խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով ե-
3 կած՝ Աստուծմէ է. եւ ամէն հոգի որ չխոստովանիր զՅիսուս Քրիստոս մարմնով եկած՝ չէ Աստուծմէ. և այս նեռին հոգին է, որոյ համար լսեցիք թէ պիտի գայ, և արդէն իսկ յաշխարհի է։
4 Դուք Աստուծմէ էք, որդեակք, և յաղթեցիք անոնց. քանզի մեծ է այն որ ի ձեզ է, քան
5 զայն՝ որ յաշխարհի է։ Անոնք աշխարհէ են. վասն որոյ կը խօսին աշխարհի վրայ, և աշխարհ կը լսէ
6 անոնց։ Մենք Աստուծմէ ենք. ով որ զԱստուած կը ճանչնայ՝ կը լսէ մեզ. ով որ Աստուծմէ չէ՝ չլսեր մեզ. ասով կը ճանչնանք ճշմարտութեան հոգին և խաբէութեան հոգին։
7 Սիրելիք, սիրենք զիրար, քանզի սէրն Աստուծմէ է. և ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած

8 է, և կը ճանչնայ զԱստուած։ Ով որ չսիրեր՝ զԱստուած չճանչնար. քանզի Աստուած սէր է։
9 Աստուծոյ սէրը յայտնի եղաւ մեր վրայ յայսմ, որ Աստուած իւր միածին Որդին զրկեց յաշ-
10 խարհ, որպէս զի ապրինք անոր միջոցով։ Յայսմ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, այլ նա սիրեց զմեզ, և զրկեց իւր Որդին քա-
11 ւութիւն ըլլալ մեր մեղաց։ Սիրելիք, եթէ Աստուած այսպէս սիրեց զմեզ, ուրեմն մենք և
12 պարտիմք սիրել զիրար։ Ոչ ոք երբեք տեսած է զԱստուած. եթէ կը սիրենք զիրար, Աստուած ի մեզ կը բնակի, և անոր սէրը կատարեալ է ի
13 մեզ։ Ասով գիտենք թէ կը բնակինք ի նմա և նա
14 ի մեզ, որ իւր Հոգիէն տուաւ մեզ։ Եւ մենք տեսանք և կը վկայենք թէ Հայր զրկեց Որ-
15 դին փրկիչ ըլլալ աշխարհի. Ով որ կը խոստովանի թէ Յիսուս Որդի Աստուծոյ է, Աստուած կը
16 բնակի ի նմա, և նա՝ յԱստուած։ Եւ մենք ճանչցանք և հաւատացինք սէրը զոր Աստուած ունի մեր վրայ։ Աստուած սէր է, և ով որ սիրոյ մէջ կը բնակի՝ կը բնակի յԱստուած, և Աստուած ի
17 նմա։ Ասով սէրը կատարեալ կ'ըլլայ մեր վրայ, որ համարձակութիւն ունենանք դատաստանին օրը. վասն զի ինչպես է նա, այնպես և մենք ենք
18 յաշխարհիս։ Սիրոյ մէջ երկիւղ չկայ, այլ կատարեալ սէրը կը մերժէ երկիւղը. քանզի երկիւղն ունի տանջանք. ուստի այն որ կը վախնայ՝
19 կատարեալ չէ սիրոյ մէջ։ Մենք կը սիրենք զնա, քանզի նախ նա սիրեց զմեզ։ Եթէ ոք ըսէ թէ
20 կը սիրեմ զԱստուած, և ատէ իւր եղբայրը, ստախօս է. քանզի այն որ չսիրեր իւր եղբայրը զոր կը տեսնէ, զԱստուած զոր չտեսներ ինչ-
21 պէս կրնայ սիրել։ Եւ անկէ ունինք այս պատուէրը, թէ այն որ զԱստուած կը սիրէ՝ սիրէ նաև իւր եղբայրը։

Գլ. Ե

1 Ամէնը որ կը հաւատայ Թէ Յիսուս է Քրիստոսն՝ Աստուծմէ ծնած է. և ամէնը որ կը սիրէ ծնողը՝ կը սիրէ նաև անկէ ծնածը։ Ասով կը ճանչնանք
2 Թէ կը սիրենք Աստուծոյ որդիները, երբ զԱստուած սիրենք և անոր պատուիրանները պահենք։
3 Քանզի այս է Աստուծոյ սէրը, որ անոր պատուիրանները պահենք. և անոր պատուիրանները
4 ծանր չեն։ վասն զի ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ կը յաղթէ աշխարհի. և այս է յաղթութիւնը որ կը յաղթէ աշխարհի, այսինքն մեր հաւատքը։
5 Ո՞վ է որ կը յաղթէ աշխարհի, եթէ ոչ այն որ կը հաւատայ Թէ Յիսուս է Որդի Աստուծոյ։
6 Սա է որ եկաւ ջրով և արեամբ, այսինքն՝ Յիսուս Քրիստոս. ոչ միայն ջրով, այլ ջրով և արեամբ, և Հոգին է որ կը վկայէ, քանզի Հո-
7 գին ճշմարտութիւն է։ վասն զի երեք են որ կը վկայեն [յերկինս, Հայր, Բանն և Սուրբ Հոգին,
8 և այս երեքը մի են։ Եւ երեք են որ կը վկայեն յերկրի], Հոգին ջուրը և արիւնը, և երեքը միա-
9 բան են։ եթէ մարդոց վկայութիւնը կընդունինք, Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է. քանզի այս է Աստուծոյ վկայութիւնը զոր վկայեց իր
10 Որդւոյն համար։ Ով որ կը հաւատայ Աստուծոյ Որդւոյն՝ վկայութիւնն ունի ինքնիան. ով որ չհաւատար Աստուծոյ՝ ստախօս կ'ընէ զնա, քանզի չհաւատար վկայութեանը զոր Աստուած վկա-
11 յեց իր Որդւոյն համար։ Եւ վկայութիւնն այս է, որ Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզ,
12 և այս կեանքն անոր Որդւոյն մէջ է։ Ան որ ընդունած է զՈրդին՝ ունի կեանք, և ան որ ընդունած չէ Աստուծոյ Որդին՝ չունի կեանք։
13 Ասոնք գրեցի ձեզ որ կը հաւատաք Աստուծոյ Որդւոյն անուանը, որպէս զի գիտնաք Թէ ունիք

14 յաւիտենական կեանք՝։ Եւ այս է համարձակութիւնը զոր ունինք անոր քով՝ որ զինչ և խնդրենք անոր կամաց համեմատ՝ կը լսէ մեզ։
15 Եւ եթէ գիտնանք Թէ կը լսէ մեզ ինչ որ խնդրենք, կը գիտնանք Թէ կ'առնունք մեր խնդրուածները զոր կը խնդրենք անկէ։
16 Եթէ ոք տեսնէ Թէ իւր եղբայրը կը մեղանչէ մեղք ոչ մահացու, Թող խնդրէ, և Աստուած կեանք պիտի տայ անոր, այնոցիկ մեղանչողաց ոչ մահացու. կայ մեղք որ մահացու է, չեմ ըսեր
17 Թէ անոր համար խնդրէ։ Ամէն անիրաւութիւն մեղք է, և կայ մեղք որ մահացու չէ։
18 Գիտենք Թէ այն ամէնը որ Աստուծմէ ծնած է, չմեղանչեր. այլ այն որ Աստուծմէ ծնած է՝ կը
19 պահէ իւր անձը, և չարը չդպչիր անոր։ Գիտենք Թէ Աստուծմէ ենք և բոլոր աշխարհ ի չարի է։
20 Եւ գիտենք Թէ Աստուծոյ Որդին եկաւ, և տուաւ մեզ միտք, որ ճանչնանք ճշմարիտը. և ենք ի ճշմարտին, յիւրմէն Որդւոյ նորա ի Յիսուս Քրիստոս. նա է ճշմարիտ Աստուած և յաւիտենական
21 կեանք։ Որդեակք պահեցէք զձեզ ի կռոց։†

---

*Որոնք իշ յաւելուած, և որպէս զի հաւատաք Աստուծոյ Որդւոյն անուանը

†Որոնք իշ յաւելուած, Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա.ՈՒԱՔԵԼՈՅՆ

——

1 Երէց՝ առ ընտրեալ տիկինն և առ որդեակս իւր,
զորս ես կը սիրեմ ճշմարտութեամբ, (և ոչ ես
միայն, այլ և ամենքը՝ որ կը ճանչնան ճշմարտու-
2 թիւնը) վասն ճշմարտութեան որ կը մնայ
մեր մէջ, և յաւիտեան պիտի ըլլայ մեզի հետ.
3 Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն կ'ատու-
ծոյ Հօրէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, Հօրը
Որդիէն, ձեզի հետ ըլլայ ճշմարտութեամբ և սի-
րով։
4 Շատ ուրախ եղայ, որ քու որդիներէդ
գտայ որ ճշմարտութեամբ կը քալեն ըստ պա-
5 տուիրանին զոր առինք ի Հօրէ։ Ու հիմա կ'աղա-
չեմ զքեզ, օվ տիկին, ոչ իբր թէ նոր պատուի-
րան կը գրեմ քեզ, այլ զոր ունէինք ի սկզբ-
6 բանէ, որ սիրենք զիրար։ Ու այս է սէրը որ
քալենք անոր պատուիրաններուն համեմատ. Ե
պատուիրանն այս է որ, ինչպէս լսեցիք ի սկզբ-
7 նէ հետէ, անոր համեմատ քալէք։ Քանզի եղան
չաչխարհի շատ մոլորեցուցիչներ, որ չեն խոստո-
վանիր զՅիսուս Քրիստոս մարմնով եկած. այն-
8 պիսին մոլորեցուցիչ է և նեռն։ Զգուշացէք ձեր
անձերուն, որ չկորսնցունենք մեր աշխատանքը,
9 այլ որ լի վարձք առնունք։ Ամէն որ յանցանք
կը գործէ և չկենար Քրիստոսի վարդապետու-
թեան մէջ, չունի զԱստուած. այն որ կը կենայ
Քրիստոսի վարդապետութեան մէջ՝ ունի թէ՛
10 Հայր և թէ՛ Որդին։ Եթէ ոք գայ առ ձեզ և

չբերէ այս վարդապետութիւնը, մի՛ ընդունիք
զնա ձեր տուներդը, և մի՛ ըսէք անոր Ողջոյն։
11 Քանզի ով որ կ'ըսէ անոր Ողջոյն, հաղորդ կ'ըլ-
լայ անոր չար գործերուն։
12 Շատ բան ունէի գրել ձեզ, բայց չուզեցի
թղթով և մելանաւ ձեզի. քանզի կը յուսամ
գալ առ ձեզ, և բերան առ բերան խօսիլ, որ
13 մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։ Ողջոյն կու-
տան քեզ որդիք քու ընտրեալ քրոջդ։

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա.ՈՒԱՔԵԼՈՅՆ

——

1 Երէց՝ առ Գայիոս սիրելի, զոր ես կը սիրեմ
2 ճշմարտութեամբ։ Սիրելի, աղօթք կ'ընեմ որ
ամէն կողմանէ յաջողութեան մէջ և առողջ ըլ-
3 լաս, ինչպէս հոգիդ կաս ի յաջողութեան կ։ Քան-
զի չատ ուրախացայ, երբ եղբայրներէն ունանք
եկան, և վկայեցին քու ճշմարտութեանդ համար,
4 ինչպէս դուն կը քալես ճշմարտութեամբ։ Քան
զայս մեծ ուրախութիւն չունիմ, որ կը լսեմ թէ
իմ որդիներս կը քալեն ճշմարտութեան մէջ։
5 Սիրելի, հաւատարմութեամբ կ'ընես, ինչ որ կ'ը-
6 նես եղբայրներուն և օտարներուն, որք եկեղե-
ցւոյ առջև վկայեցին քու սիրոյդ. զորս յուղար-
կելով ըստ արժանի Աստուծոյ լաւ պիտի ընես։
7 Քանզի Անուանդ անունը համար ելան, և հե-
8 թանոսներէն բան մը չեն առներ։ Ուստի մենք

*Որոնե՛ք [ը յուելուն, Ամէն։

պարտիմք ընդունել այնպիսիները, որ գործակից
ըլլանք ճշմարտութեան։
9 Եկեղեցւոյն գրեցի. բայց Դիոտրեփէս՝ որ անոնց
մէջ կ՚ուզէ առաջին ըլլալ, չընդունիր զմեզ։
10 Վասն որոյ եթէ գամ, պիտի յիշեմ անոր գոր-
ծերը, որ չարաչարանքով չարախօսութիւն կ՚ընէ
մեզի դէմ. և այսու ևս զոհ չըլլալով՝ ինք չըն-
դունիր եղբայրները, և զանոնք որ կ՚ուզեն ըն-
դունել կ՚արգելէ, և եկեղեցիէն ևս կը հանէ։
11 Սիրելի, նմանողի՛ ըլլար չարին, այլ բարւոյն.
այն որ բարի կը գործէ՝ Աստուծմէ է. բայց այն
12 որ չար կը գործէ՝ տեսած չէ զԱստուած։ Դե-
մետրիոսի համար ամէնքը կը վկայեն, և բուն
իսկ ճշմարտութիւնը. և մենք ևս կը վկայենք, և
դուք գիտէք թէ ճշմարիտ է մեր վկայութիւնը։
13 Շատ բան ունէի գրել, բայց չեմ ուզեր մելա-
14 նաւ և գրչով գրել քեզ։ Սակայն կը յուսամ իս
մօտոյ տեսնել զքեզ, և պիտի խօսինք բերան
15 առ բերան։ Խաղաղութիւն քեզ. բարեկամները
ողջոյն կու տան քեզ. ողջոյն տուր դէպ բարե-
կամներուն ի բրաքանչիւր յանուանէ։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Յուդա, Յիսուսի Քրիստոսի ծառայ և եղբայր
Յակոբայ, ձեզ՝ որ սրբուած էք յԱստուծոյ Հօրէ
և ի Յիսուսէ Քրիստոսէ պահուած և կոչուած.
2 Ողորմութիւն և խաղաղութիւն և սէր բազմանայ
ձեր վրայ։

3 Սիրելիք, ամէն ջան յանձն առնելով գրել ձեզ
հասարակաց փրկութեան համար, հարկ անձին
համարեցայ գրել ձեզ և յորդորել որ մրցիք այն
հաւատոյն համար որ անգամ մը աւանդուեցաւ
4 սուրբերուն։ Քանզի գիտի մը մարդիկ մտան
գաղտ, յառաջագոյն որոշուած
էին այս դատապարտութեան համար, ամբարիշտ-
ներ, որ մեր Աստուծոյ շնորհքը դարձուցին անա-
պատութեան, և ուրացան մի միայն *Իշխանը և
5 Տէրը մեր Յիսուս Քրիստոս։ Արդ կ՚ուզեմ յիշե-
ցնել ձեզ, թէև արդէն գիտէք զայս, Քէ Տէրը
որ ազատեց ժողովուրդը եգիպտոսի երկրէն, յե-
6 տոյ կորոյս չհաւատացողները։ Եւ այն հրեշտակ-
ները որ չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ
թողին իրենց բնակութիւնը, մշանջենաւոր կապա-
նօք պահեց խաւարի մէջ մեծ օրուան դատաս-
7 տանին, ինչպէս Սոդոմ և Գոմոր և անոնց չրջա-
կայ քաղաքները՝ որ ասոնց նման պոռնկեցան օ-
տար մարմնոյ հետևից երթալով, մեր առջև օրի-
նակ կեցած են՝ ընդունելով յաւիտենական հրոյն
8 դատապարտութիւնը։ Նմանապէս և ասոնք յա-
նուրջս կը պղծեն մարմինը, կ՚անարգեն տէրու-
թիւնը, և կը հայհոյեն մեծափառութեանց դէմ։
9 Բայց Միքայէլ հրեշտակապետ, երբ Սատանային
դէմ դնելով կը վիճէր Մովսիսի մարմնոյն հա-
մար, չհամարձակեցաւ հայհոյութեան դատա-
պարտութիւն բերել՝ ՏԷՐ ՎԱՅ, այլ ըսաւ, Տէ-
10 րը յանդիմանէ զքեզ։ Իսկ ասոնք ինչ բաներ որ
չեն հասկնար՝ կը հայհոյեն. և ինչ բաներ որ բերե-
անբան անասուններ գիտեն բնականապէս, այն
11 բաներուն մէջ կ՚ապականին։ Վայ անոնց, վասն
զի գնացին Կայենի ճանապարհաւ, և գնացին
վարձուց հետէ ըստ մոլորութեան Բաղաամա-

*Ուրիշ, Աստուած իշխանը

ցանկութեամբ, և կորսուեցան ըստ հակառակու-
12 թեան կորխայ։ Ասոնք արատներ են ձեր սիրոյ
ինծոյից մէջ, և երբ կը նստին ձեզի հետ խրախու-
թեանց, աներկիւղ կը կերակրուին զինքեանս. ան-
ջրդի ամպեր հողմակոծեալք. պտղակորոյս ծա-
ռեր, անբերք, կրկնամեռք, արմատաքի խլեալք.
13 Ծովու անասուն ալիք, որ կը փրփրեցուցնեն իրենց
անձերուն ամօթը. մոլորական աստղեր, որոց
համար խաւարին մէգը պահուած է յաւիտեան։
14 Անոնց վրայ մարգարէացաւ և Ենովք՝ որ եօթ-
ներորդ էր յԱդամայ, և ըսաւ, Ահա Տէրը եկաւ
15 իր բիւրաւոր սուրբերովը, Դատաստան բնել
ամենուն, և յանդիմանել բոլոր ամբարիշտներն
անոնց ամբարշտութեան բոլոր գործերուն հա-
մար զոր ամբարշտեցան, և բոլոր խիստ խօսքե-
րուն համար զոր ամբարիշտ մեղաւորք խօսեցան
16 անոր դէմ։ Ասոնք արտնիղներ և գրքնիչներ
են, որ կ'երթան ըստ իւրեանց ցանկութեանց, և
անոնց բերանները կը խօսին ամբարտաւանու, և
17 աչառութեան կ'ընեն չահու համար։ Բայց դուք,
սիրելիք, յիշեցէք խօսքերը որ Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի առաքեալներէն կանխաւ բսուե-
18 ցան. Որ կ'ըսէին ձեզ Թէ ի յետին ժամանակս
պիտի լլան ծաղր ընողներ, որ պիտի երթան ըստ
իւրեանց ամբարիշտ ցանկութեանց։
19 Ասոնք են զիրենք զատող, չնչաւորներ, որ Հո-
20 գին չունին։ Բայց դուք, սիրելիք, ձեր անձերը
չինելով ձեր ամենասուրբ հաւատոյն վրայ, և ա-
21 ղօթելով Սուրբ Հոգւով, Պահեցէք ձեր անձերն
Աստուծոյ սիրոյն մէջ, սպասելով Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ողորմութեանը յաւիտենա-
22 կան կենաց համար։ Եւ ոմանց ողորմեցէք խըտ-
23 րանօք, Եւ զոմանս երկիւղիւ ապահեցէք՝ յա-
փրշտակելով կրակէն, ատելով մարմնէն աղտեղ-
եալ հանդերձըն։

24 Եւ անոր՝ որ կարող է պահել զձեզ սխրթէ և
իր փառաց առջև կեցուցանել անարատ ցնծու-
25 թեամբ, Միայնոյն *Աստուծոյ մեր Փրկչին [Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք] փառք և մե-
ծութիւն, զօրութիւն և իշխանութիւն [յաւել-
քան գյաւիտեանս,] և այժմ և յամենայն յա-
ւիտեանս Ամէն։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնը, զոր տուաւ
նմա Աստուած ցուցնել իր ծառաներուն ինչ որ
վաղվաղակի պարտի ըլլալ. և իր հրեշտակին ձե-
ռօք ղրկելով՝ իմացուց իր ծառային Յովհաննու,
2 Որ վկայեց Աստուծոյ խօսքին, և Յիսուսի Քրիս-
3 տոսի վկայութեանը, ինչ որ տեսաւ։ Երանի ա-
նոր որ կը կարդայ, և անոնց որ կը լսեն այս
մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ
գրուած է անոր մէջ. քանզի մօտ է ժամանակը։
4 Յովհաննէս առ եօթն եկեղեցիս որ են յԱսիա,
շնորհք և խաղաղութիւն ձեզ Անկէ որ է և որ
էր և որ պիտի գայ, և եօթն Հոգիներէն որ են
5 անոր աթոռին առջև, Եւ Յիսուսէ Քրիստոսէ
հաւատարիմ վկայէ, որ է անդրանիկ ի մեռելոց
և երկրի թագաւորներուն իշխան։ Անոր որ սի-
րեց զմեզ, և իր արեամբ լուաց զմեզ մեր մեղ-

*Ոմանք իմաստնոյն Աստուծոյ

6 քերթին, եւ ըրաւ զնոյն թագաւորներ և քահանաներ Աստուծոյ և իւր Հօրը, նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
7 Ահա կու գայ ամպերով. և ամէն աչք պիտի տեսնէ զնա, և անոնք որ խոցեցին զնա. և կոծ պիտի ընեն անոր վրայ երկրիս բոլոր ազգերը՝ Այո, Ամէն։
8 Ես եմ Ալիփա և Օմէգա,* կ'ըսէ Տէր [Աստուած], որ կ և որ էր և որ պիտի գայ, Ամենակալն։
9 Ես Յովհաննէս, եղբայր ձեր, և Յիսուսի Քրիստոսի նեղութեան և արքայութեան և համբերութեան մէջ ընկերակից, էի կղզին որ կը կոչուի Պատմոս Աստուծոյ խօսքին համար և Յիսուսի
10 Քրիստոսի վկայութեանը համար։ ե՝ †կիրակի օր Հոգին եկաւ իմ վրաս, և հետևէս լսեցի ձայն մեծ
11 նման փողոյ որ կ'ըսէր, ‡Ինչ որ կը տեսնես՝ գրէ գիրքի մէջ, և դրկէ եօթն եկեղեցւոց՝ || որ են յԵփեսոս, և ի Զմիւռնիա, և ի Պէրգամոն, և ի Թիւատիր, և ի Սարդիկէ, և ի փիլադելփիա, և
12 ի Լաոդիկիա։ Եւ դարձայ տեսնել ձայնը որ կը խօսէր առ իս։ և երբ դարձայ, տեսայ եօթն ոս-
13 կեղէն աչտանակ։ Եւ եօթն աչտանակներուն մէջ ումն, նման Որդւոյ մարդոյ, պճնեալ պատմուճան հագած և կուրծքին վրայ ոսկի գօտի կա-
14 պած։ Եւ անոր գլուխը և մազերն սպիտակ իբրև զասր՝ իբրև զձիւն, և անոր աչուըներն իբրև
15 զբոց հրոյ։ Եւ անոր ոտուըները՝ ոսկեզաղնձի նման, որպէս թէ հնոցի մէջ հրացեալ, և անոր
16 ձայնը՝ չատ լուրերու ձայնի պէս։ Եւ իւր աջ

*Ո՛նման+ ἐς յաւիտեան, Առաջինն և Վերջինն,
†Այլ+ի՛ն, տէրունական
‡Ո՛նման+, Ես եմ Ալիփա և Օմէգա, Առաջինն և Վերջինն, և ինչ
||Ո՛նման+ ἐς յաւիտեան, որ յԱսիա

ձեռքին մէջ ունէր եօթն աստղ, և անոր բերնէն կ'ելլէր սուր երկայրի սրեալ, և անոր երեսն էր իբրև զարեգակն որ կը շողայ իւր զօրութեամբ։
17 Եւ երբ տեսայ զնա, ինկայ անոր ոտքն իբրև մեռեալ. և դրաւ իւր աջ ձեռքն իմ վրաս և ըսաւ ինձ, Մի՛ վախնար. ես եմ Առաջինն և Վերջինն. Եւ կենդանի եմ, և ես նոյն եմ որ մեռայ,
18 և ահա կենդանի եմ յաւիտենից.* և ունիմ մահուան և դժոխոց բանալիները։
19 [Ուստի] գրէ ինչ որ կը տեսնես, ինչ որ կայ և
20 ինչ որ յետոյ պիտի ըլլայ։ եօթն աստղոց խորհուրդը զոր տեսար աջ ձեռքիս մէջ և եօթն ոսկեղէն աչտանակները. այն եօթն աստղք եօթն եկեղեցւոց հրեշտակներն են, և եօթն աչտանակները՝ եօթն եկեղեցիներն են։

Գլ. Բ

1 Առ հրեշտակ եկեղեցւոյն որ յԵփեսոս՝ գրէ. Այսպէս կ'ըսէ այն որ ունի եօթն աստղ իւր աջ ձեռքին մէջ, և կը շրջի եօթն ոսկեղէն աչտանա-
2 կաց մէջ. Գիտեմ քու գործերդ և քու աշխատութիւնդ և քու համբերութիւնդ, և որ չես կրնար տանել չարերուն, և փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ առաքեալ են, և չեն, և գտար
3 թէ սուտասոս են. Եւ համբերութիւն ունենալով՝ կրեցիր Անունիս համար՝ և չես
4 լացար։ Բայց ունիմ քեզի դէմ քան զի, որ քու
5 առաջին սէրդ թողուցիր։ Ցիշէ հիմա ուսան ինկար, և ապաշխարէ և երկ առաջին գործերդ. եթէ ոչ՝ կու գամ առ քեզ վաղվաղակի, և պիտի

*Ո՛նման+ ἐς յաւիտեան, Ամէն.
†Ո՛նման+ ἐς յաւիտեան, զորս տեսար
‡Ո՛նման+, և աշխատեցար իմ անուանս համար

չարչեմ քու ալտանակդ իւր տեղէն, եթէ չա-
6 պաշխարես։ Բայց զայս ունիս, որ Նիկոլայտանց
7 գործերը կ'ատես, զորս և ես կ'ատեմ։ Այն որ
ականջ ունի՝ թող լսե թէ ի՞նչ կ'ըսե Հոգին եկե-
ղեցիներուն։ Այն որ կը յաղթե, անոր պիտի
տամ ուտել կենաց ծառէն որ Աստուծոյ դրախ-
տին մէջ է։

8 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Զմիւռնիա՝
գրէ։ Այսպէս կ'ըսե Առաջինն և Վերջինն, որ մե-
9 ռաւ և կենդանացաւ։ Գիտեմ քու գործերդ և
նեղութիւնդ և աղքատութիւնդ, (բայց հարուստ
ես,) և անոնց հայհոյութիւնը որ կ'ըսեն թէ
10 Հրեայ են, և չեն, այլ ժողով Սատանայի։ Ինաչ-
միչ վախնար այն բաներուն զորս պիտի կրես։ Ահա
Բանսարկուն պիտի նետէ քանի մը ձեր զնամանս որ
փորձուիք, և պիտի ունենաք նեղութիւն տասն
օր։ Հաւատարիմ եղիր մինչև ի մահ, և պիտի տամ
11 քեզ կենաց պսակը։ Ով որ ականջ ունի՝ թող
լսե թէ ի՞նչ կ'ըսե Հոգին եկեղեցիներուն։ Այն
որ կը յաղթե՝ պիտի չվնասուի երկրորդ մահէն։

12 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Պերգաման՝
գրէ։ Այսպէս կ'ըսե այն որ ունի երկայրի սրբա-
13 կաւ սուրը։ Գիտեմ քու գործերդ, և ի՞ր ուր կը
բնակիս, այսինքն՝ ուր է Սատանայի աթոռը, և
կը պահես իմ անունս, և չուրացար իմ հաւատ-
քիս այն օրերն անգամ յորս Անթիպաս իմ հա-
ւատարիմ վկաս սպաննուեցաւ ձեր մէջ, ուր Սա-
14 տանան կը բնակի։ Բայց ունիմ քեզի դէմ քիչ
մը բան, թէ ունիս հոն զոմանս որ կը բռնեն
զվարդապետութիւնն Բաղաամայ, որ սորվեցուց
Բաղակայ գայթակղութիւն դնել Իսրայէլի որ-
դւոց առջև, որպէս զի կուռց զոհուածները ու-
15 տէին և պոռնկութիւն ընէին։ Այսպէս և դուն
ունիս զոմանս որ կը բռնեն զվարդապետութիւն
16 Նիկոլայտանց, բան մը զոր կ'ատեմ՝ [Ուսուի]

ապաչխարէ. եթէ ոչ՝ կու գամ առ քեզ վաղվա-
զակի և բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց
17 հետ։ Այն որ ականջ ունի՝ թող լսե թէ ինչ կ'ըս-
ե Հոգին եկեղեցիներուն։ Անոր որ կը յաղթե՝
պիտի տամ ուտել պահուած մանանայէն, և պի-
տի տամ անոր սպիտակ խեճ, և այն խեճին վրայ
գրուած նոր անուն, զոր ոչ ոք գիտէ բայց միայն
այն որ կ'ընդունի։

18 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Թիւատիր՝
գրէ։ Այսպէս կ'ըսե Աստուծոյ Որդին որ ունի
աչքերը կրակի բոցի պէս, և անոր ոտքերը
19 նման են ոսկեզօդնոյ։ Գիտեմ քու գործերդ և
սէրդ և հաւատքդ և հաւատարմութիւնդ, և հաւատքդ և համ-
բերութիւնդ, և թէ քու վերջին գործերդ բա-
20 զում են քան զառաջինն։ Բայց ունիմ քեզի
դէմ տան մը՝ որ կը թողուս Յեզաբէլ կինը, որ
ինք մարգարէ կ'անուանէ, և իմ ծառաներս
մոլորեցնելով՝ կը սորվեցունէ ընել պոռնկու-
21 թիւն և ուտել կուռց զոհուածներէ։ Եւ ատի՛ա-
նոր ժամանակ ապաչխարել իւր պոռնկութեան
22 վրայ, և չապաչխարեց։ Ահա ես պիտի նետեմ
զնա անկողին, և անոր հետ շնութիւն ընողները՝
մեծ նեղութեան մէջ, եթէ չապաչխարեն իրենց
23 գործերուն վրայ։ Եւ պիտի սպաննեմ անոր որ-
դիքը մահուամբ։ Եւ բոլոր եկեղեցիները պիտի
գիտնան թէ ես այն եմ որ կը քննեմ զերիկա-
մունս և զսիրտս։ ԵՒ պիտի հատուցանեմ ձեզի
24 իւրաքանչիւրին ըստ իւր գործոց։ Բայց կ'ըսեմ
ձեզ մնացեալդ որ եք ի Թիւատիր, և չունիք
այս վարդապետութիւնը, որ չճանչցաք զխոր-
25 Սատանայի (ինչպէս կ'ըսեն), Զեմ դներ ձեր վրայ
ուրիշ ծանրութիւն, բայց զոր զոր ունիք պա-
26 հեցէք մինչև գամ։ Եւ անոր որ կը յաղթե և կը

---

¹Ոմանք, քեզ մը բան

պահէ իմ գործերս մինչև ի վախճան, պիտի տամ
27 իշխանութիւն ազգերուն վրայ, (Եւ պիտի հովուէ
զանոնք երկաթէ գաւազանաւ. իբրև բրտի ա-
28 նօթներ պիտի փշրուին.) ինչպէս և ես առի իմ
Հօրմէս. և անոր պիտի տամ առաւօտեան աստ-
29 ղը: Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ
Հոգին եկեղեցիներուն։

Գլ. Գ

1 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Սարդիկէ՝ գրէ.
Այսպէս կ'ըսէ այն որ ունի Աստուծոյ եօթն Հո-
գիները և եօթն աստղերը. Գիտեմ քու գործերդ՝
որ ունիս անուն թէ կենդանի ես, և մեռած
2 ես։ Արթնուն կեցիր և հաստատէ մնացածները որ
մեռնելու մօտ են, քանզի չգտայ քու գործերդ
3 կատարեալ Աստուծոյ առջև։ Հիմա յիշէ թէ ինչ-
պէս ընկալար և լսեցիր, և պահէ և ապաշխարէ.
Եթէ չկենաս արթուն, պիտի գամ վրադ
իբրև գող, և բնաւ պիտի չգիտնաս թէ ո՛ր ժամ
4 պիտի գամ վրադ։ Սակայն ունիս ի Սարդիկէ
զոմանս, որ չաղաղեցին իրենց հանդերձները,
և սպիտակներով պիտի չյլին ինծի հետ, քանզի
5 արժանի են։ Ով որ կը յաղթէ՝ պիտի հագնի
սպիտակներ. և պիտի չչկլեմ անոր անունը կե-
նաց գիրքին և պիտի դաւանիմ անոր անունը իմ
6 Հօրս առջև և անոր հրեշտակներուն առջև։ Այն
որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին
եկեղեցիներուն։

7 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Փիլադելփիա՝
գրէ. Այսպէս կ'ըսէ Սուրբը, Ճշմարիտը, այն որ
ունի Դաւիթի բանալին, այն որ կը բանայ և չկայ
ոք որ փակէ, և կը փակէ և չկայ ոք որ բանայ.
8 Գիտեմ քու գործերդ, (ահա դրի քու առջևդ
բացուած դուռ մը, զոր ոչ ոք կրնայ փակել,)

թէ ունիս փիլ մը կարողութիւն, և պահեցիր իմ
9 խօսքս և չուրացար իմ անունս։ Ահա ես կու-
տամ քեզ զանոնք որ Սատանայի ժողովէն են,
որ կ'ըսեն թէ Հրեայ են և չեն, այլ կը սուտն-
ահա պիտի ստիպեմ զանոնք որ գան և երկրպա-
գեն քու ոտիդ առջև, և ճանչնան թէ ես սիրե-
10 ցի քեզ։ Որովհետև պահեցիր իմ համբերու-
թեան խօսքը, ես ալ պիտի պահեմ զքեզ փոր-
ձութեան ժամանակէ, որ գալու մօտ է բոլոր աշ-
խարհի վրայ՝ փորձել երկրիս երեսը բնակողները։
11 Ահա կու գամ վաղվաղակի. ինչ որ ունիս՝ պինդ
12 բռնէ, որ ոչ ոք առնու քու պսակդ։ Այն որ
կը յաղթէ՝ պիտի ընեմ զնա սիւն իմ Աստուծոյս
տաճարին մէջ և այլ ևս դուրս պիտի չելլէ. և
պիտի գրեմ անոր վրայ իմ Աստուծոյս անունը,
և իմ Աստուծոյս քաղաքին անունը, այսինքն՝
նոր Երուսաղէմի, որ կ'իջնէ յերկինից իմ Աս-
13 տուծմէս, և իմ նոր անունս։ Ով որ ականջ ունի՝
թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն։
14 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Լաւոդիկէ՝
գրէ. Այսպէս կ'ըսէ Ամէնը, հաւատարիմ և ճըշ-
մարիտ վկայն, Աստուծոյ արարածոյ Սկիզբը.
15 Գիտեմ քու գործերդ որ ոչ ցուրտ ես և ոչ
ջերմ. երանի թէ ցուրտ ըլլայիր կամ ջերմ։
16 Ուստի դուն որ գաղջ ես, և ոչ ջերմ և ոչ
ցուրտ, պիտի փսխեմ զքեզ բերնէս դուրս։
17 Զանգի կ'ըսես թէ Հարուստ եմ և մեծացայ, և
բանի մը կարօտ չեմ. և չես գիտեր թէ դուն ո-
զորմելի ես և թշուառ և աղքատ և կոյր և
18 մերկ։ Խորհուրդ կու տամ քեզ. գնե ինէ կրակի
մէջ փորձուած ոսկի որ հարստանաս, և սպի-
տակ հանդերձներ՝ որ հագնիս, որպէս զի ամօ-
թալի մերկութիւնդ չերեւի. և դիր դեղ աչերը-
19 նդրդ որ տեսնես։ Ես կը յանդիմանեմ և կը խրա-
տեմ ամէնը զոր կը սիրեմ. ուստի նախանձաւոր

20 հղիր և ապաշխարէ՛, Ահա կայնած եմ դուռը և
կը բաղխեմ. եթէ օր լսէ իմ ձայնս և բանայ
դուռը, պիտի մտնեմ անոր քով և ընթրիք պի-
21 տի ընեմ անոր հետ, և նա իմ հետս։ Անոր որ
կը յաղթէ՝ պիտի տամ նստիլ ինծի հետ իմ ա-
թոռս, ինչպէս ես յաղթեցի և նստայ իմ Հօրս
22 հետ անոր թոռը։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ
Թէ Հոգին ինչ կ՚ըսէ եկեղեցիներուն։

Գլ. Դ

1 Ետ այսորիկ տեսայ, և ահա բացուած դուռ մը
կար յերկինս, և առաջին ձայնը զոր լսեցի՝ փողոյ
նման էր, որ ինծի հետ կը խօսէր և կ՚ըսէր, Հա-
րա՛ և ցուցնեմ քեզ ինչ որ պիտի ըլլայ այսու հետև։
2 Եւ վաղվաղակի Հոգին եկաւ իմ վրաս. և ահա
3 աթոռ դրուած էր յերկինս. Եւ աթոռոյն վրայ
նստած էր մին. և նստողը նման էր յասպիս և
4 սարդիոն քարերու երեւութին, Եւ աթոռոյն շուրջը
ծիածան զմրխտոյ երեւութի նման. և աթոռոյն
շուրջը քսան և չորս աթոռներ, և այն աթոռնե-
րուն վրայ քսան և չորս երիցունք *նստած էին՝
սպիտակ հանդերձներ հագած, և ունէին ոսկիէ
5 պսակներ իրենց գլուխներ։ Եւ փայլակներ և ձայներ
և որոտումներ կ՚ելլէին աթոռէն, և աթոռոյն
առջև կային եօթն բորոտած կրակի ջամբար-
6 ներ, որ Աստուծոյ եօթն Հոգիներն են։ Եւ ա-
թոռոյն առջև իբրև ապակեղէն ծով, նման ակա
մանի, և աթոռոյն մէջ և աթոռոյն շուրջը՝ չորս
կենդանիք, որ լի էին ա՛յնօք յառաջով և յետոյ։
7 Եւ առաջին կենդանին նման էր առիւծու, և
երկրորդ կենդանին՝ նման զուարակի, և երրորդ
կենդանին ունէր մարդու երես, և չորրորդ
8 կենդանին՝ Թռչող արծուոյ նման։ Եւ չորս կեն-

*Որոնք, նստած տեսայ

դանեաց իւրաքանչիւրն ունէր չուրջանակի վեց
վեց թեւ, և ներքոյ լի էին աչօք. և չէին
հանգչեր օր ու գիշեր ըսելով, Սուրբ
Սուրբ, Սուրբ, Տէր Աստուած Ամենակալ, որ էր
9 և որ է և որ պիտի գայ։ Եւ երբ այն կենդանիք
կու տային փառք և պատիւ և գոհութիւն աթո-
ռոյն վրայ նստողին որ կենդանի է յաւիտեանս
10 յաւիտենից, Քան և չորս երիցունք աթոռոյն
վրայ նստողին առջև կ՚իյնային և կ՚երկրպագէին
անոր որ յաւիտեանս յաւիտենից կենդանի է,
և իրենց պսակները կը նետէին աթոռոյն առջև՝
11 ըսելով, Արժանի ես, Տէր, առնուլ փառք և
պատիւ և զօրութիւն, քանզի դու ստեղծեցիր
ամենայն, և քու կամքդ եղան և ստեղծուե-
ցան։

Գլ. Ե

1 Եւ աթոռոյն վրայ նստողին աջ ձեռքը տեսայ
գիրք մը ներքոյ և արտաքոյ գրուած, և կնք-
2 քուած եօթն կնքով։ Եւ տեսայ զօրաւոր հրեշ-
տակ որ մեծ ձայնիւ կը գոչէր, Ո՞վ արժանի է
բանալ այդ գիրքը և քակել անոր կնիքները։
3 Եւ ոչ յերկինս, ոչ յերկրի և ոչ երկրի տակ չէր-
նուէր ոք որ կարող էր բանալ այն գիրքը, և
4 ոչ նայիլ անոր։ Եւ ես սաստիկ կու լայի որ ոչ ոք
արժանի գտնուեցաւ բանալ՝ այն գիրքը, և ոչ
5 նայիլ անոր։ Եւ երէցներէն մին ըսաւ ինձ, Մի՛
լար. ահա առիւծը որ Յուդայի ցեղէն է, Դաւիթի
արմատը, յաղթեց բանալ այն գիրքը և քակել
6 անոր եօթն կնիքը։ Եւ տեսայ որ աթոռոյն և
չորս կենդանիներուն մէջ և երէցներուն մէջ կը
կենար Գառն իբր մորթուած, որ ունէր եօթն

*Որոնք կը յարուցանեն, և կարդալ

հղջիւր և հօթն աչք, որ Աստուծոյ հօթն Հոգիներն են, որ կը ղրկուին բոլոր երկիր։ 7 Եկաւ և առաւ գիրքը աջառաջին վրայ նստողին ձէ 8 ախոռքէն։ Եւ երբ առաւ գիրքը, չորս կենդանիները և քսան և չորս երիցունք Գառին առջև իննկան, և ամէնքն ունէին քնարներ, և ոսկէ խնկամաններ լի խնկով, որ է սուրբերուն աղօթքը։ 9 Եւ նոր երգ կ'երգէին ըսելով, Արժանի ես առնուլ այդ գիրքը և բանալ անոր կնիքները. քանզի մորթուեցար, և գնեցիր զմեզ Աստուծոյ քու արեամբդ ամէն ցեղէ և լեզուէ 10 և ժողովուրդէ և ազգէ։ Եւ ըրիր *մեզ մեր Աստուծոյն թագաւորներ և քահանաներ, և պիտի †թագաւորենք երկրի վրայ։ Եւ նայեցայ և լսեցի չատ հրեշտակներուն ձայն, որ աթոռոյն և կենդանիներուն և երիցանց բոլորտիքն էին. և անոնց թիւն էր բիւրք բիւրուց և հազարք հազարաց։ 12 Որ մեծ ձայնիւ կ'ըսէին, Այդ մորթուած Գառն արժանի է առնուլ զօրութիւն և հարստութիւն և իմաստութիւն և կարողութիւն և պատիւ և փառք և օրհնութիւն։ 13 Եւ բոլոր արարածք որ են յերկինս և որ յերկրի և որ երկրի տակ և ծովու մէջ, և ամէն ինչ որ անոնց մէջ կայ՝ լսեցի որ կ'ըսէին, Աթոռոյն վրայ նստողին և Գառին օրհնութիւն և պատիւ և փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ 14 Եւ չորս կենդանիները կ'ըսէին, Ամէն. և ‡երիցունք ինկան և երկիր պագին‖։

---

*Ո՛ռն+, ասոնք

†Ո՛ռն+, թագաւորեն

‡Ո՛ռն+, քսան և չորս երիցունք

‖Ո՛ռն+ ԸՆ յաւիտեանս յաւիտենից, անոր որ յաւիտեանս յաւիտենից կենդանի է

Գլ. Զ

1 Եւ տեսայ, երբ Գառնուկը *կնիքից մին՝ բացաւ, և չորս կենդանիներէն մէն լսեցի իբրև որոտման ձայն որ կ'ըսէր, եկ և տես։ Եւ տեսայ, և 2 ահա սպիտակ ձի և անոր վրայ հեծնողն ունէր աղեղն. և պսակ տրուեցաւ անոր, և նա յաղթող էր և երթալ յաղթելէ։

3 Եւ երբ երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կեն- 4 դանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկ։ Եւ ուրիշ ձի ելաւ չատագոյն, և անոր վրայ հեծնողին տրուեցաւ առնուլ խաղաղութիւնը երկրէ, որպէս զի սպանեն զիրար և անոր տրուեցաւ սուր մեծ։

5 Եւ երբ բացաւ երրորդ կնիքը, երրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, եկ և տես։ Եւ տեսայ, և ահա սեւ ձի և անոր վրայ հեծնողն ունէր իր 6 ձեռքը կշիռ։ Եւ լսեցի չորս կենդանիներուն մէջէն ձայն որ կ'ըսէր, Մի կապիճ ցորեան մի դահեկանի, և երեք կապիճ գարի՝ մի դահեկանի. և ձիթոյ և գինւոյ մի՛տաս չընես։

7 Եւ երբ բացաւ չորրորդ կնիքը, չորրորդ կեն- 8 դանիէն լսեցի ձայն որ կ'ըսէր, եկ և տես։ Եւ տեսայ, և ահա դեղին ձի, և անոր վրայ հեծնողին անունն էր Մահ, և դժոխք կ'երթար անոր ետևէն. և տրուեցաւ անոնց իշխանութիւն երկրի չորրորդ մասին վրայ սասանակել սրով և սովով և մահու և երկրի գազաններով։

9 Եւ երբ բացաւ հինգերորդ կնիքը, սեղանին ներքև տեսայ այն մարդոց հոգիները, որ սպանուած էին Աստուծոյ խօսքին համար, և վկայութեանը համար զոր ունէին։ 10 Եւ մեծ ձայնիւ աղաղակեցին և ըսին, Ով սուրբ և ճշմարիտ Տէր, մինչև երբ չես դատեր և պահանջեր մեր արեան

---

*Ո՛ռն+, հօթն կնիքը

†Ո՛ռն+, եկ և տես

11 վրէժը երկրի բնակիչներէն, ու սպիտակ հանդերձ-
ներ տրուեցան անոնց, և ըսուեցաւ անոնց սա-
կաւ մ՚ալ ժամանակ ևս հանգչիլ, մինչև ամբողջ
ըլլան անոնց ծառայակիցներուն և անոնց եղբայր-
ներուն, որ պիտի սպաննուէին անոնց պէս։
12 Ու տեսայ երբ բացաւ վեցերորդ կնիքը, և
մեծ երկրաշարժ եղաւ, և արեգակը սեւցաւ իբրև
մազեղէն քուրձ, և լուսինը [բոլորովին] եղաւ
13 իբրև արիւն։ Ու երկնից աստղերը թօթափեցան
գետին, ինչպէս սաստիկ հովէ չարժուած թզե-
14 նին կը թափէ իր անսուն պտուղները։ Ու եր-
կինք կը քաշուէր իբրև մոմ գալարուել. և
բոլոր լերինք և կղզիք չարժեցան իրենց տեղ-
15 րէն։ Ու երկրի թագաւորները և մեծամեծները
և հարուստները և հազարապետները և զո-
րաւորները և բոլոր ծառայք և բոլոր ազատք
այրերու և լերանց ապառաժներուն մէջ թա-
16 քուեան։ Ու կ՚ըսէին լերանց և ապառաժներուն,
Ինկէք մեր վրայ և ծածկեցէք զմեզ անոր երես-
էն որ աթոռոյն վրայ կը նստի և Գառնին բար-
17 կութենէն. Քանզի եկաւ անոր բարկութեան մեծ
օրը, և ո՞վ կրնայ հանդուրժել։

Գլ. Ը

1 Ու այսուհետև տեսայ չորս հրեշտակ որ կեցած
էին երկրի չորս անկիւնները, և բռնած էին երկրի
չորս հովերը, որպէս զի չփչէր հով երկրի վրայ,
2 և ոչ ծովու վրայ, և ոչ ծառի վրայ։ Ու տեսայ
ուրիշ հրեշտակ որ երաւ յարեւելից, և ունէր կեն-
դանի Աստուծոյ կնիքը. և մեծ ձայնիւ աղաղա-
կեց այն չորս հրեշտակներուն, որոց տրուած էր
3 վնասել երկրի և ծովու, Ու ըսաւ, Մի՛ վնասէք
երկրի, ոչ ծովու, և ոչ ծառոց, մինչև կնքենք
4 մեր Աստուծոյն ծառաներուն ճակատները։ Ու

կնքուածներուն թիւը լսեցի որ էր հարիւր քա-
ռասուն և չորս հազար կնքուածներ Իսրայէլի որդւոց
5 բոլոր ցեղերէն. Յուդայի ցեղէն՝ երկուտասան հա-
զար կնքուած, Ռուբինի ցեղէն՝ երկուտասան հա-
զար կնքուած, Գադի ցեղէն՝ երկուտասան հազար
6 կնքուած, Ասերի ցեղէն՝ երկուտասան հազար կնք-
ուած, Նեփթաղիմի ցեղէն՝ երկուտասան հազար
կնքուած, Մանասէի ցեղէն՝ երկուտասան հազար
7 կնքուած, Շմաւոնի ցեղէն՝ երկուտասան հազար
կնքուած, Ղեւիի ցեղէն՝ երկուտասան հազար
կնքուած, Իսաքարայ ցեղէն՝ երկուտասան հազար
8 կնքուած, Զաբուղոնի ցեղէն՝ երկուտասան հազար
կնքուած, Յովսեփայ ցեղէն՝ երկուտասան հազար
կնքուած, Բենիամինի ցեղէն՝ երկուտասան հազար
կնքուած։
9 Այսուհետև տեսայ, և ահա մեծ բազմութիւն
որոյ թուիլ ոչ ոք կարող էր, բոլոր ազգերէ և
ցեղերէ և ժողովուրդներէ և լեզուներէ, որ կե-
ցած էին աթոռոյն առջև և Գառնին առջև սպի-
տակ հանդերձներ հագած, և արմաւենիները ա-
10 նոնց ձեռքը։ Ու մեծաձայն կ՚աղաղակէին ըսե-
լով, Փրկութիւն մեր Աստուծոյն որ աթոռոյն
11 վրայ կը նստի, և Գառնին։ Ու բոլոր հրեշտակները
կեցած էին աթոռոյն և երիցանց և չորս կենդա-
նիներուն չուրջը, և իրենց երեսներուն վրայ ին-
կան աթոռոյն առջև և երկիր պագին Աստուծոյ,
12 Ըսելով, Ամէն. օրհնութիւն և փառք և իմաս-
տութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն
և կարողութիւն մեր Աստուծոյն յաւիտեանս յա-
13 ւիտենից, Ամէն։ Ու երիցանց մին պատասխան
տալով ըսաւ ինձ, Ասոնք որ սպիտակ հանդերձներ
14 հագած են՝ ո՞վ են, և ուստի՞ եկան։ Ու ըսի անոր,
Տէր, դուն գիտես։ Ու ըսաւ ինձ, Ասոնք են որ
կու գան մեծ նեղութենէ, և որ լուացին իրենց
հանդերձները, և սպիտակացուցին զանոնք Գա-

15 ան՚ին արեամբը, վասն որոյ Աստուծոյ աթոռոյն առջև են, և կը ծառայեն անոր տիւ և գիշեր անոր տաճարին մէջ. և աթոռոյն վրայ նստողը
16 պիտի տարածէ իւր վրանն անոնց վրայ. Ա՚յսու՚հետև ոչ պիտի անօթենան և ոչ ծարաւին, և ոչ արեգակը կամ տապ պիտի իյնայ անոնց վրայ.
17 վասն զի Գառնուկը որ աթոռոյն մէջ է՚ պիտի հովուէ զանոնք և պիտի առաջնորդէ զանոնք կենդանի յուերու աղբիւրները. և Աստուած պիտի սրբէ ամէն արտասուք անոնց աչուըներէն։

Գլ. Ը

1 Եւ երբ բացաւ եօթներորդ կնիքը, լռութիւն եղաւ յերկինս իբրև կէս ժամ։
2 Եւ տեսայ եօթն հրեշտակները, որ Աստուծոյ առջև կը կենային, և տրուեցաւ անոնց եօթն
3 փող։ Եւ ուրիշ հրեշտակ եկաւ սեղանին առջև, և ունէր ոսկեայն խնկանոց. և անոր տրուեցաւ շատ խունկ, որ մատուցանէր բոլոր սրբոց աղօթներուն հետ ոսկի սեղանոյն վրայ որ
4 աթոռոյն առջև էր։ Եւ խունկերուն ծուխը ելաւ սրբոց աղօթներուն հետ հրեշտակին ձեռքէն
5 Աստուծոյ առջև։ Եւ հրեշտակն առաւ խնկանոցը և լեցուց զայն սեղանոյն կրակէն, և նետեց երկրի վրայ. և եղան ձայներ և որոտումներ և
6 փայլատակունք և երկրաշարժ։ Եւ եօթն հրեշտակք որ ունէին եօթն փողերը՝ պատրաստուեցան հնչեցնելու։
7 Եւ առաջին հրեշտակն հնչեցուց փողը, և եղաւ կարկուտ և հուր արեամբ խառն, և նետուեցաւ երկրի վրայ, [և երկրի երրորդ մասն այրեցաւ,] և ծառերուն երրորդ մասն այրեցաւ, և ամէն կանաչ խոտ այրեցաւ։

8 Եւ երկրորդ հրեշտակն հնչեցուց փողը, և որպէս թէ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝ նետուեցաւ ծովը, և ծովուն երրորդ մասն եղաւ
9 արիւն. Եւ ծովուն մէջ հոգեաւոր արարածներուն երրորդ մասը մեռաւ, և նաւերուն երրորդ մասը կորսուեաւ։
10 Եւ երրորդ հրեշտակն հնչեցուց փողը, և ինկաւ յերկնից մեծ լուսաւոր աստղ մը, որ կը վառէր իբրև ջահ, և գետերուն և ջրոյ աղբիւրներուն երրորդ
11 մասին վրայ։ Եւ այդ աստղուն անունն էր Ողինդը. և ջուրերուն երրորդ մասն եղաւ ողինդ, և շատ մարդիկ մեռան ջուրերէն, քանզի դառն եղան։
12 Եւ չորրորդ հրեշտակն հնչեցուց փողը, և զարնուեցաւ արեգական երրորդ մասը և լուսնին երրորդ մասը և աստղերուն երրորդ մասը, որպէս զի անոնց երրորդ մասը խաւարէր, և օրուան երրորդ մասը չտար լոյս, նոյնպէս և գիշերուան։
13 Եւ նայեցայ, և լսեցի երկնից մէջ թռչող *հրեշտակ մը որ կ՚ըսէր մեծ ձայնիւ, վա՚յ, վա՚յ, վա՚յ բնակիչոց երկրի վրայ՝ մնացեալ ձայներէն փողոյն երեք հրեշտակաց որ պիտի հնչեցնեն։

Գլ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն հնչեցուց փողը, և տեսայ որ աստղ մը յերկնից երկրի վրայ, և
2 տրուեցաւ անոր բանալի գոյն անդնդոյ. Եւ բացաւ անդնդոյն գուբը, և կ՚ելլէր գուբէն ծուխ, իբրև մեծ հնոցի ծուխ. և խաւարեցաւ արեգակը և օդը գոյն ծուխէն։
3 Եւ ծուխէն մարախներ կ՚ելլէին երկրի վրայ, և տրուեցաւ անոնց զօրութիւն երկրի կարճձներուն
4 զօրութեան պէս. Եւ ըսուեցաւ անոնց չվնասել

*Ոմանք, արծուի

խաղայ երկրի, և ոչ բանչարայ և ոչ ծառայ, այլ միայն այն մարդոյ որ իրենց ձակատներուն վրայ
5 չունին Աստուծոյ կնիքը։ Եւ արուեցաւ անոնց հրաման չսպաննել զանոնք, այլ չարչարել հինգ ամիս. և չարչարանքն էր իբր չարչարանք կարծի,
6 երբ կը խայթէ նա մարդը։ Եւ այն օրերը մարդիկ պիտի խնդրեն մահ և պիտի չգտանեն. և պիտի ուզեն մեռանիլ, և մահը պիտի փախչի անոնցմէ։ Եւ
7 մարախներուն նմանու թիւնն էր իբրև պատերազմի պատրաստուած ձիոց, և անոնց գլուխներուն վրայ՝ *ոսկեզոյն պսակներու պէս, և անոնց
8 երեսները՝ մարդոց երեսներու պէս. Եւ անոնք ունէին մազեր կանանց մազերուն պէս, և անոնց
9 ատամունքն էր առիւծներու ժանիւ պէս։ Եւ ունէին զրահներ երկաթէ զրահներու պէս. և անոնց թևերուն ձայնը՝ նման ձայնի կառաց պա-
10 տերազմի վազող չատ ձիերու։ Եւ ունէին պոչեր իբրև կարիճներու և ոտնց վրայ՝ խայթոց. և իշխանութիւն ունէին հինգ ամիս վնասել մար-
11 դոց։ Եւ իրենց վրայ թագաւոր ունէին անդնդոյն հրեշտակը, որուն անունը Եբրայեցերէն †Աբադոն, և Յոյն լեզուով կ'ըսուի †Ապողղիոն։ Մէկվայն
12 անցաւ. այսուհետև ահա երկու վայ կու գան։
13 Եւ վեցերորդ հրեշտակն հնչեցուց փողը, և լսեցի չորս եղջիւրաց ոսկի սեղանոյն որ էր առաջի Աստուծոյ՝
14 ձայն, Որ կ'ըսէր վեցերորդ հրեշտակին որ ունէր փողը, Արձակէ մեծ գետոյն Եփրատայ վրայ կապուած չորս հրեշտակները։ Եւ արձակուեցան այն
15 չորս հրեշտակները, որ պատրաստուած էին ժամու և օրուան և ամսոյ և տարւոյ համար մեռցունել մարդոց երրորդ մասը։ Եւ ձիուոց զօրաց
16

*Ոմն, ոսկւոյ նման
†Այլն, կորուսիչ

Թիւն էր երկու բիւրք բիւրուց, և լսեցի անոնց
17 Թիւը։ Եւ տեսայ ձիերը այսպէս տեսայ ձիերը, և անոնց հեծեալները որ ունէին հրեղէն և յակինթեղէն և ծծմբեղէն զրահներ. և ձիերուն գլուխները էին առիւծներու գլխոյ պէս, և անոնց բեր-
18 նէն կ'ելլէր կրակ և ծուխ և ծծումբ։ Այս երեք [հարուած]էն մեռաւ մարդոց երրորդ մասը, այսինքն կրակէն և ծուխէն և ծծմբէն որ կ'ելլէին
19 անոնց բերնէն. Քանզի *անոնց զօրութիւնն անոնց բերաններուն մէջ է և պոչերնուն մէջ. քանզի անոնց պոչերը նման էին օձերու տոնոց, և
20 ունէին գլուխներ որովք կը վնասէին։ Եւ մարդոց մնացեալներն որ չսպաննուեցան այս հարուածներն՝ չապաշխարեցին իրենց ձեռաց գործերէն, որ չերկրպագեն դիւաց, և ոսկիէ և արծաթէ և պղնձէ և քարէ և փայտէ չկռուած կուոց, որ ոչ կրնան
21 տեսնել և ոչ լսել և ոչ քալել. Նաև չապաշխարեցին իրենց սպանութիւններէն, և ոչ իրենց կախարդութիւններէն, և ոչ իրենց պոռնկութենէն և ոչ իրենց գողութիւններէն։

Գլ. Ժ

1 Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ որ կ'իջնէր յերկնից, և ամպ հագած էր և անոր գլխոյն վրայ կար ծիածան. և անոր երեսն էր արեգական պէս,
2 և անոր ոտքերը՝ կրակի սեանց պէս։ Եւ ձեռքն ունէր գրքոյկ մը բացուած. և դրաւ իւր աջ ոտքը
3 ծովուն վրայ, և ձախը՝ ցամաքին վրայ։ Եւ աղաղակեց մեծ ձայնիւ, ինչպես կը մնձէ առիւծ. և երբ աղաղակեց, եօթն որոտմունք խօսեցան իրենց
4 ձայներովը։ Եւ երբ †խօսեցան եօթն որոտմունք,

*Ոմն, այն ձիերուն
†Ոմն, իրենց ձայներովը խօսեցան

պիտի գրէի. և լսեցի ձէրկինէ ձայն որ *կ'ըսէր, Կնքէ այն բաները զորս Եօթն որոտմունք խօսե-
5 ցան, և մի՛ գրեր զանոնք։ Եւ հրեշտակը զոր տե-
սայ կանգնած ծովուն վրայ և ցամաքին վրայ՝
6 վերցուց իւր [ալ] ձեռքն ձերկինս. Եւ երդուաւ
անոր վրայ որ կենդանի է յաւիտեանս յաւիտե-
նից, որ ստեղծեց ձերկինս և զորս ի նմա, և զեր-
կիր՝ և զորս ի նմա, և ձծով և զորս ի նմա, թէ
7 այլ ևս ժամանակ պիտի չըլլայ. Այլ ՚Եօթներորդ
հրեշտակին ձայնին օրերը՝ երբ փողն հնչեցուն-
էր, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի, ինչպես
աւետեց իւր ծառաներուն մարգարէից։
8 Եւ ձայնը զոր ձերկինէ լսեցի՝ դարձեալ խօսե-
ցաւ առ իս և ըսաւ. Գնա, առ այն բաց գրքոյկը
որ ծովուն և ցամաքի վրայ կեցող հրեշտակին
9 ձեռքն է։ Եւ ես գնացի հրեշտակին և ըսի անոր,
Տուր ինձ այդ գրքոյկը. և ըսաւ ինձ, Առ զայս
և կեր. և պիտի դառնանայ փորիդ մէջ, բայց
10 բերնիդ մէջ պիտի ըլլայ քաղցր իբրև զմեղր։ Եւ
առի գրքոյկը հրեշտակին ձեռքէն և կերայ զայն,
և բերնիս մէջ էր քաղցր իբրև զմեղր, և երբ կե-
րայ, դառնացաւ փորիս մէջ։ Եւ ըսաւ ինձ,
11 Պարտ է դեղ դարձեալ մարգարեանալ յա-
ժողովրդեանս և ազգերու և լեզուներու և
թագաւորներու *վրայ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ տուաւ ինձ եղէգ նման գաւազանի, և
հրեշտակը կեցած էր և կ'ըսէր, Ել և չափէ Աս-
տուծոյ տաճարը և սեղանը, և անոր մէջ երկրպա-
2 գողները։ Եւ գաւիթը որ տաճարին դուրսն է՝
թող, և մի՛ չափեր, քանզի այն տուած է հե-

*Ոմն՚, կ'ըսէր ինձ

թանոսաց, և անոնք պիտի կոխտան սուրբ քա-
3 ղաքը քառասուն և երկու ամիս։ Եւ պիտի տամ
իմ երկու վկաներուս ընդ՚Ընդ՚, և անոնք քուրձ
հագած պիտի մարգարէանան հազար երկու հա-
4 րիւր և վաթսուն օր։ Ասոնք են այն երկու ձի-
թենիները և երկու աշտանակները, որ կը կենան
5 երկրին Տէրոջը առջև։ Եւ եթէ ոք կամի վնաս
ընել անոնց, կրակ կ'ելլէ անոնց բերաններէն, և
կ'ուտէ անոնց թշնամիները. և եթէ ոք կամի
վնաս ընել անոնց, այսպէս պարտի սպանուիլ։
6 Ասոնք իշխանութիւն ունին փակել ձերկինս որ
անձրև չգայ անոնց մարգարէութեան օրերը, և
իշխանութիւն ունին՝ դարձուցանել
զանոնք յարիւն, և ամէն պատուհասներով զար-
7 նել ձերկիր, քանիցս անգամ որ ուզեն։ Եւ երբ
կատարեն իրենց վկայութիւնը, անդունդէն ելլող
գազանը պատերազմ պիտի ընէ անոնց հետ, և
պիտի յաղթէ անոնց և պիտի սպաննէ զանոնք։
8 Եւ անոնց դիները ՚Ի՚ն ՚ն՚Ի՚Ի՚ն՚ Ճառ այն մեծ քա-
ղաքին հրապարակին մէջ, որ հոգևորապէս կ'ըսուի
Սոդոմ և Եգիպտոս, ուր և Տէրն *մեր խաչուե-
9 ցաւ։ Եւ ժողովուրդներէն և ցեղերէն և լեզու-
ներէն և ազգերէն պիտի տեսնեն անոնց դիները
երեք և կէս օր. և պիտի չթողուն անոնց դիները
10 թաղել գերեզմաններու մէջ։ Եւ անոնք որ երկրի
վրայ կը բնակին՝ ուրախ պիտի ըլլան և խնդան
անոնց վրայ, և իրարու ընծաներ պիտի ղրկեն,
քանզի այս երկու մարգարէք չարչարեցին զբնա-
կիչս երկրի։
11 Եւ երեք և կէս օրէն հոգի Աստուծմէ կեն-
դանութեան հոգի մտաւ անոնց մէջ, և իրենց
ոտից վրայ կանգնեցան. և մեծ վախ եկաւ ա-
12 նոնք տեսնողներուն վրայ։ Եւ լսեցին ձերկինէ

*Ոմն՚, նոցա ՚Ի՚Ի՚ն՚, լսեցի

ձայն մեծ, որ կ'ըսէր անոնց, վե՛ր ելէ՛ք հոս՝ եւ
անոնք ամպով վերացան յերկինս, և անոնց
13 թշնամիները տեսան զանոնք։ Եւ նոյն ժամուն
մեծ երկրաշարժ եղաւ, և քաղաքին տասներորդ-
մասը կործանեցաւ, և այն երկրաշարժէն մեռան
եօթն հազար մարդիկ, և միւսացածները լցան ա-
14 հիւ և փառս տուին երկնից Աստուծոյն։ Երկրորդ
վայն անցաւ. ահա երրորդ վայը կու գայ վաղ-
վաղակի։
15 Եւ եօթներորդ հրեշտակն հնչեցուց փողը. և
եղան երկնից մէջ մեծ ձայներ որ կ'ըսէին, Աշ-
խարհի թագաւորութիւնները Տէառն մերոյ և ա-
նոր Օծեալին եղան, և նա պիտի թագաւորէ յա-
16 հետեան յաւիտենից։ Եւ քսան և չորս երիցանքն
որ իրենց աթոռներուն վրայ նստած էին Աստու-
ծոյ առջև, ինկան իրենց երեսներուն վրայ և եր-
17 կիր պագին Աստուծոյ ըսելով, Գոհութիւն կը
մատուցանենք քեզ, Ամենակալ Տէր Աստուած,
որ ես և որ էիր՝, որ քու մեծ զօրութիւնդ ա-
18 ռիր և թագաւորեցիր։ Եւ ազգերը բարկացան,
և եկաւ քու բարկութիւնդ, և ժամանակը՝ դատուելու, և տալու քու ծա-
ռաներուդ մարգարէից և սրբոց և երկիւղածաց
անուան քու, փոքրուն և մեծամեծաց, և սասա-
կելու զանոնք որ կ'ապականեն զերկիր։
19 Եւ Աստուծոյ տաճարը բացուեցաւ յերկինս,
և †անոր ուխտին տապանակն երեւեցաւ անոր
տաճարին մէջ. և եղան փայլակներ և ձայներ և
որոտմունք և երկրաշարժ և կարկուտ մեծ։

---

*Ոմանք կ'ըսեն՝ և որ պիտի գաս
†Ոմանք, Տէրոջը

ԳԼ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մը արե-
գակն իրեն վրայ առած, և լուսինը իր ոտուր-
ներուն տակ. և անոր գլխուն վրայ պսակ երկու
2 տասան աստղաց։ Եւ բլալով յղի, կը ցնծր
երկնելով և տանջուելով ծնանելու համար։
3 Եւ ուրիշ նշան երեւեցաւ յերկինս, և ահա մի-
չտ մեծ վիշապն, որ ունէր եօթն գլուխ և
տասն եղջիւր, և գլուխներուն վրայ եօթն թագ։
4 Եւ անոր պոչը կը քաշէր երկնից աստղերուն
երրորդ մասը, և նետեց զանոնք երկրի վրայ,
և վիշապը կեցած էր այն կնոջ առջև որ ծնանե-
լու վրայ էր, որ երբ ծնանէր, կլլէր անոր զա-
5 ւակը։ Եւ կ'ունենայ ծնաւ որդւ զաւակ, որ երկաթէ
գաւազանով պիտի հովուէր բոլոր ազգերը. և
անոր զաւակն յափշտակուեցաւ Աստուծոյ քով
6 և անոր աթոռոյն քով։ Եւ կինը փախաւ անա-
պատ, ուր պատրաստուած էր անոր տեղ Աս-
տուծմէ, որպէս զի կերակրուէր հազար երկու
հարիւր և վաթսուն օր։
7 Եւ եղաւ պատերազմ յերկինս. Միքայէլ և
անոր հրեշտակները պատերազմեցան վիշապին
հետ. և վիշապը իր հրեշտակներով պատերազ-
8 մեցաւ. Եւ չկրցան դէմ դնել, և ոչ տեղ գտա-
9 նուեցաւ անոնց այլ ևս յերկինս։ Եւ նետուեցաւ
մեծ վիշապն, հին օձը որ կը կոչուի Բանսարկու
և Սատանայ, որ մոլորեցուց բոլոր աշխարհ, նե-
տուեցաւ յերկիր, և անոր հրեշտակներն անոր
10 հետ նետուեցան։ Եւ լսեցի ձայն մեծ յերկինս
որ կ'ըսէր, Հիմա եղաւ մեր Աստուծոյ փրկութիւ-
նը և զօրութիւնը և թագաւորութիւնը, և ա-
նոր Օծեալին իշխանութիւնը. քանզի վար նե-
տուեցաւ մեր եղբայրներուն չարախօսը, որ կը
չարախօսէր անոնց դէմ մեր Աստուծոյն առջև

11 ասէ և գիշեր՝ եւ անոնք անոր յայտնեցին Դաւթի արեամբը, և իրենց վկայութեան խօսքովը։
12 և չսիրեցին իրենց կեանքը մինչև ի մահ՝ վասն որոյ ուրախացէք, ով երկինք և անոր մէջ բնակողներ։ վա՛յ երկրի և ծովո՛ւ, որ բանաստկուն իջաւ ձեզ, որ ունի մեծ բարկութիւն՝ գիտնալով թէ քիչ ժամանակ ունի։
13 Եւ երբ վիշապը տեսաւ որ նետուեցաւ երկրի վրայ, ննկաւ արու զաւակ ծնանող կնոջ հետևէն։
14 Եւ այն կնոջ արուեցան մեծ արծուոյ երկու թեւեր, թռչել անապատ իր տեղը, ուր պիտի կերակրուէր ժամանակ և ժամանակներ և կէս ժամանակի յերեսաց օձին։ Եւ օձը իր բերնէն ջուր վազցուց գետի պէս կնոջը հետևէն, որպէս զի
16 ընկղմէը զնա հեղեղով։ Եւ երկիրը օգնեց կնոջը, և երկիրը բացաւ իր բերանը և կլլեց գետը, զոր
17 վիշապը վազցուց իր բերնէն։ Եւ վիշապը բարկացաւ կնոջը դէմ, և գնաց պատերազմել անոր մնացեալ զաւակներուն հետ, որ կը պահէին Աստուծոյ պատուիրանները, և ունէին †Յիսուսի վկայութիւնը։
18 Եւ ‡կանգնած էի՛ ծովուն ափերին վրայ։

Գլ. ԺԳ

1 Եւ տեսայ որ գազան կ՚ելլէր ծովէն և ունէր եօթն գլուխ և տասն եղջիւր, և անոր եղջիւրներուն վրայ տասն թագ, և անոր գլուխներուն
2 վրայ հայհոյութեան անուններ։ Եւ գազանը զոր տեսայ՝ նման էր ընձառւ, և անոր ոտքերն՝ իբրեւ արջոյ, և բերանն՝ իբրև բերան առիւծու։ և

*Ոմն+ Հէյո-Էլոն, բնակչացդ
†Ոմն+, Յիսուսի Քրիստոսի
‡Ոմն+, կանգնեցաւ

վիշապը տուաւ անոր իր զօրութիւնը և իր աթոռը և մեծ իշխանութիւն։ Եւ անոր գլուխներէն մին որպես թէ մահու չափ վիրաւորուած էր։ և անոր մահուան վէրքն առողջացաւ։ և
4 բոլոր երկիր զարմացաւ գազանին հետևէն։ Եւ երկիր պագին վիշապին որ իշխանութիւն տուաւ գազանին, և երկիր պագին գազանին ըսելով, Ո՞վ նման է գազանին, և ո՞վ կրնայ պատերազմել ա-
5 նոր հետ։ Եւ տրուեցաւ անոր բերան խօսելու մեծամեծ բաներ և հայհոյութիւններ։ և քառասուն և երկու ամիս տրուեցաւ անոր իշխանու-
6 թիւն ը֊ւ֊ներ ընել։ Եւ բացաւ իր բերանն հայհոյութեամբ Աստուծոյ դէմ, հայհոյել անունը և անոր խորանը և բնակողներն յեր-
7 կինս։ Եւ տրուեցաւ անոր պատերազմ ընել սուրբերուն հետ և անոնց յաղթել։ և տրուեցաւ անոր իշխանութիւն բոլոր ցեղերու, [և ժողովուրդներու] և լեզուներու և ազգերու վրայ։
8 Եւ պիտի երկրպագեն անոր երկրի վրայ բոլոր բնակողները որոց անուններն աշխարհիս սկիզբէն հետէ գրուած չեն մորթուած Գառին կենաց
9 գիրքին մէջ, ով որ ականջ ունի՝ թող լսէ։
10 Ով որ ի գերութիւն վարէ, ինք գերի պիտի տարուի։ ով որ սրով սպաննէ, պարտի սպանուիլ սրով։ Հոս է սուրբերուն համբերութիւնը և հաւատքը։
11 Եւ տեսայ ուրիշ գազան որ կ՚ելլէր երկրէ, և ունէր երկու եղջիւր իբրև գառին, և կը խօսէր
12 վիշապի պէս։ Եւ կը վարէր առաջին գազանին բոլոր իշխանութիւնն անոր առջև, և կը տիրէր երկրիր և անոր բնակիչները երկրպագել առաջին գազանին որուն մահուան վէրքն առողջացաւ։
13 Եւ կ՚ընէր մեծամեծ նշաններ, մինչև կրակ ան-

*Ոմն+, տեսայ †Ոմն+, և բոլոր

գամ իջեցուցնել յերկինից յերկիր մարդոց առջև։
14 Եւ կը մոլորեցուցնէր երկրի վրայ բնակողները նշաններով զոր տրուած էր անոր ընել գազանին առջև, և երկրի բնակիչներուն կ'ըսէր չինել պատկեր գազանին, որ սրով վիրաւորուած էր և առողջացաւ։ Եւ տրուեցաւ անոր հոգի տալ գա-
15 զանին պատկերին, որպէս զի գազանին պատկերը խօսէր, և անոնք որ չերկրպագէին գազանին պատկերին՝ սպաննել տար զանոնք։ Եւ կը տա-
16 պէր ամէնքը, այսինքն փոքրերը և մեծ-ամեծնները, և հարուստները և աղքատները, և ազատները և ծառաները, որ ընդունէին գրոշմ իրենց
17 ալ ձեռաց վրայ կամ իրենց ճակտին վրայ։ Եւ որ ոչ ոք կարենար գնել կամ վաճառել բայց միայն այն որ ունէր գրոշմը կամ գազանին ա-
18 նունը կամ անոր անուան Թիւը։ Հոս է իմաստութիւնը. ով որ միտք ունի՝ թող հաշուէ գազանին Թիւը. քանզի մարդու Թիւ է, և անոր Թիւն է վեց հարիւր վաթսուն և վեց։

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսայ, և ահա Գառնուկը կանգնած էր Սիօն լերան վրայ, և անոր հետ հարիւր քառասուն և չորս հազարք, որ ունէին [անոր անունը և] անոր Հօրն անունը գրուած իրենց ճակատներուն
2 վրայ։ Եւ յերկինից լսեցի ձայն չատ յուրերու ձայնի պէս և մեծ որոտման ձայնի պէս, և լսեցի ձայն քնարահարաց որ կը հարկանէն իրենց
3 քնարները։ Եւ կ'երգէին *նոր երգ աթոռոյն առջև և չորս կենդանիներուն և երիցանց առջև. և ոչ ոք կարող էր սորվիլ երգը բայց այն հարիւր քառասուն և չորս հազարէն, որ փրկուած էին

*Ոմանք, որպէս Թէ նոր

4 երկրէն։ Ասոնք անոնք են որ չմատնահպեցան կանանց հետ, քանզի կոյս են. ասոնք կ'երթան Գառնին հետևէն ուր որ երթայ նա. ասոնք մարդոց միջէն գնուեցան իբրև երախայրի Աս-
5 տուծոյ և Գառին։ Եւ չգտնուեցաւ սուտ անոնց բերանը, քանզի ամբիծ են։
6 Եւ տեսայ ուրիշ հրեշտակ որ կը թռչէր յերկինս, և ունէր յաւիտենական աւետարան քարոզել բոլոր ազգերու և ցեղերու և լեզուներու.
7 և ժողովրդոց որ երկրի վրայ կը բնակին. Եւ մեծ ձայնիւ կ'ըսէր, վախցէք Աստուծմէ և փառք տուէք անոր, քանզի եկաւ անոր դատաստանին ժամը, և երկիր պագէք անոր որ ստեղծեց զերկինս և զերկիր և զծով և յուրեքուն աղբիւրները։
8 Եւ ապա ուրիշ հրեշտակ եկաւ և ըսաւ, Ինկաւ, ինկաւ մեծ †Բաբելոն, քանզի արբեցուց բոլոր ազգերը իր կատաղի պոռնկութեան գինիէն։
9 Եւ անոնցմէ երկրորդ հրեշտակ, և մեծ ձայնիւ ըսաւ, Ով որ կ'երկրպագէ գազանին և անոր պատկերին, և կ'ընդունի անոր գրոշմն իր ճակտուն վրայ կամ իր ձեռաց վրայ։
10 Պիտի խմէ Աստուծոյ սրտմտութեան գինիէն որ լցուած է անապակ անոր բարկութեան բաժակին մէջ, և պիտի տանջուի հրով և ծծումբով սուրբ հրեշտակներուն առջև և Գառին առջև։
11 Եւ անոնց տանջանաց ծուխը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից. և տիւ և գիշեր չունին հանգիստ անոնք որ կ'երկրպագեն գազանին և անոր պատ-
12 կերին, և կ'ընդունին անոր անուան գրոշմը։ Հոս

*Ոմանք՝ ի չորեքոտնեայն, Աստուծոյ աթոռոյն առջևը
†Ոմանք, Բաբելոն քաղաքը
‡Ոմանք, ուրիշ

է սուրբերուն համբերութիւնը, *որ կը պահեն
Աստուծոյ պատուիրանները և Յիսուսի հաւատքը։
13 Եւ լսեցի յերկինէ ձայն որ †կ՚ըսէր, Գրէ, Այ-
սուհետև երանելի են մեռեալք որ ի Տէր կը նըն-
ջեն. այո, կ՚ըսէ Հոգին, որպէս զի հանգչին իրենց
աշխատութիւնէն. և անոնց գործերը կ՚երթան
անոնց հետէն։
14 Եւ տեսայ, և ահա սպիտակ ամպ, և ամպին
վրայ նստած էր ոմն նման Որդւոյ մարդոյ. և
ունէր գլուխը պսակ ոսկի, և ձեռքը՝ սուր մանգաղ։
15 Եւ տաճարէն ի՛նկնէր ուրիշ հրեշտակ, որ մեծ
ձայնիւ կ՚աղաղակէր ամպին վրայ նստողին Ե՛ղ-
ծերը, երկնցուր մանգաղդ և հնձէ. քանզի ‡եկաւ
հնձելու ժամանակը, վասն զի երկրի հունձքն
16 հասած է։ Եւ այն որ կը նստէր ամպին վրայ՝
երկնցուց իւր մանգաղը երկրի վրայ, և երկիրը
հնձուեցաւ։
17 Եւ երկնից տաճարէն ելաւ ուրիշ հրեշտակ, և
18 սա ևս ունէր սուր մանգաղ։ Եւ սեղանէն ելաւ
ուրիշ հրեշտակ, որ ունէր իշխանութիւն կրակի
վրայ, և մեծ ձայնիւ գոչեց անոր որ ունէր սուր
մանգաղը, և ըսաւ, երկնցուր սուր մանգաղդ, և
կիթ երկրի պտղոյն ողկոյզները, քանզի անոր
19 խաղողներն հասած են։ Եւ հրեշտակը երկնցուց
իւր մանգաղը երկրի վրայ, և կիթեց երկրի այգ-
ւոյն խաղողները, և նետեց Աստուծոյ բարկու-
20 թեան մեծ հնձանին մէջ։ Եւ հնձանը կոխուեցաւ
քաղաքին դուրսը. և հնձանէն ի՛նկնէր արիւն,
մինչև ձիերուն սանձերը՝ հազար վեց հարիւր
ասպարէզ։

*Ոմն., Կամ են անոնք որ
†Ոմն., կ՚ըսէր լինի
‡Ոմն., եկաւ ի՛նչ

ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսայ ուրիշ մեծ և զարմանալի նշան յեր-
կինս, եօթն հրեշտակներ որ ունէին վերջին եօթն
հարուածները, վասն զի անոնցմով կը կատար-
2 ուէր Աստուծոյ բարկութիւնը։ Եւ տեսայ իբրև
ապակեղէն ծով կրակով խառնուած. և անոնք
որ յաղթեցին գազանին և անոր պատկերին *և
անոր անուան թուոյն՝ կանգնած էին ապակեղէն
ծովուն վրայ, և ունէին Աստուծոյ քնարները։
3 Եւ կ՚երգէին Աստուծոյ ծառային Մովսիսի երգը,
և Գառնին երգն՝ ըսելով, Մեծ և զարմանալի են
քու գործերդ, ով Տէր Աստուած Ամենակալ.
արդար և ճշմարիտ են քու ճամբաներդ, ով թա-
4 գաւոր †սրբոց։ Տէր, *ո՞վ պիտի չվախնայ քենէ,
և քու անունդ չի՛մեծարէ, վասն զի դո՛ւ միայն
սուրբ ես. քանզի բոլոր ազգերը պիտի գան և
երկրպագեն քու առջեւդ, վասն զի քու արդար
դատաստանները յայտնուեցան։
5 Եւ այսուհետև տեսայ, և բացուեցաւ վկայու-
6 թեան խորանին տաճարը որ էր յերկինս։ Եւ
եօթն հարուածներն ունեցող եօթն հրեշտակք
մաքուր և պայծառ կտաւ հագած, և իրենց կուր-
ծքնոց վրայ ոսկեղէն գօտի կապած, ելան տաճա-
7 րէն, Եւ չորս կենդանեաց մին տուաւ եօթն
հրեշտակներուն եօթն ոսկեղէն սկաւառակ, լե
բարկութեամբն Աստուծոյ որ կենդանի է յա-
8 րութեանս յաւիտենից։ Եւ տաճարը լցաւ ծխով
Աստուծոյ փառքէն և անոր զօրութենէն. և ոչ
ոք կարող էր մտնել տաճարը, մինչև կատար-
ուէին եօթն հրեշտակաց եօթն հարուածները։

*Ոմն., և անոր գրոշմին
†Ոմն., ազգաց

Գլ. ԺԳ

1 Եւ առաքին լսեցի ձայն մեծ որ կ'ըսէր եօթն հրեշտակներուն, Գնացէք Թափեցէք Աստուծոյ բարկութեան [եօթն] սկաւառակներն երկրի վրայ։

2 Եւ առաջին հրեշտակը գնաց և Թափեց իւր սկաւառակն երկրի վրայ. և չարաչար պալարներ եղան այն մարդոց վրայ որ ունէին գազանին դրոշմը և կ'երկրպագէին անոր պատկերին։

3 Եւ երկրորդ հրեշտակը Թափեց իւր սկաւառակը ծովուն վրայ, և եղաւ արիւն իբրեւ մեռելոյ, և մեռան բոլոր անասունք ծովուն մէջ։

4 Եւ երրորդ հրեշտակը Թափեց իւր սկաւառակը գետերու և ջուրերու աղբիւրներուն վրայ, և 5 եղան արիւն։ Եւ լսեցի ջուրերուն հրեշտակին որ կ'ըսէր, Արդար ես դուն, *որ ես և որ էիր, և սուրբ ես, որ ըրիր այսպիսի դատաստաններ։ 6 Քանզի անոնք Թափեցին սուրբերուն և մարգարէներուն արիւնը, և դուն խմել տուիր անոնց արիւն, քանզի արժանի էին։ Եւ †լսեցի սեղանէն որ կ'ըսէր, Այո, Ամենակալ Տէր Աստուած, արդար և ճշմարիտ են քու դատաստաններդ։

8 Եւ չորրորդ հրեշտակը Թափեց իւր սկաւառակն արեգական վրայ, և տրուեցաւ անոր այրել մարդիկ հրով. 9 և այրեցան մարդիկ այրումն մեծ, և հայհոյեցին Աստուծոյ անունը, որ ունի իշխանութիւն այս հարուածներուն վրայ. և չապաշխարեցին փառք տալ անոր։

10 Եւ հինգերորդ հրեշտակը Թափեց իւր սկաւառակը գազանին աթոռոյն վրայ, և եղաւ խաւար անոր Թագաւորութիւնը. և առ ցաւոյն կը ծամէին իրենց լեզուները, 11 մէկեն իրենց լեզուները, Եւ հայհոյեցին երկնից

*Ոմն՝, Ով Տէր, որ †Ոմն՝, ուրիշ մը լսեցի

Աստուածն իրենց ցաւերուն և իրենց պալարներուն պատճառաւ. և չապաշխարեցին իրենց գործերէն։

12 Եւ վեցերորդ հրեշտակը Թափեց իւր սկաւառակը մեծ գետոյն Եփրատայ վրայ, և անոր ջուրերը ցամքեցան, որ պատրաստուի արեւելից Թագաւորներուն ճամբան։ 13 Եւ տեսայ որ վիշապին բերնէն և գազանին բերնէն և սուտ մարգարէին բերնէն երեք պիղծ ոգիներ դ'Ելլէին գորտերու նման. 14 Քանզի անոնք դեւերու ոգիներ են որ կ'ընեն նշաններ, և կ'երթան *բոլոր աշխարհի Թագաւորներուն, որ ժողովին զանոնք Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուան պատերազմին համար։ 15 (Ահա գողի պէս կու գամ. երանի անոր որ արթուն կը կենայ և կը պահէ իր հանդերձները, որ մերկ չպտրտի և չերեւնայ իր ամօթը.) 16 Եւ զանոնք ժողովեցին տեղ մը որ կը կոչուի Եբրայեցերէն Արմագեդդոն։

17 Եւ եօթներորդ հրեշտակը Թափեց իւր սկաւառակն օդին վրայ. և երկնից տաճարէն, աթոռէն, ելաւ ձայն մեծ որ կ'ըսէր, Եղաւ։ 18 Եւ †փայլակներ և ձայներ և որոտումներ եղան. և մեծ երկրաշարժ եղաւ, այնպէս որ յորմէ հետ մարդիկ կան երկրի վրայ՝ այնպիսի մեծ երկրաշարժ եղած չէր։ Եւ մեծ քաղաքը եղաւ երեք մաս, և ազգերուն քաղաքները կործանեցան, և մեծ Բաբելոն յիշուեցաւ Աստուծոյ առջեւ՝ տալ անոր 19 իր մեծ բարկութեան գինւոյն բաժակը։ Եւ ամէն կղզի փախաւ, և լեռները չգտնուեցան։ 21 Եւ մեծ կարկուտ իրրև տաղանդի կշռով կ'իջնէր երկինքէն մարդոց վրայ. և մարդիկ հայհոյեցին զԱստուած կարկտոյ հարուածին համար, քանզի մեծ էր յոյժ հարուածը։

*Ոմն՝, երկրին և
†Ոմն՝, ձայներ և որոտումներ և փայլակներ

Գլ. ԺԷ

1 Եւ եօթն սկաւառակներն ունեցող եօթն հրեշտակաց մին եկաւ և խօսեցաւ ինծի հետ ըսելով, Եկ, և ցուցնեմ քեզ մեծ պոռնկին դատաստանը, որ կը նստի շատ ջուրերուն վրայ· 2 Որոյ հետ պոռնկեցան երկրի թագաւորները, և երկրի բնակիչները արբեցան անոր պոռնկութեան գինւով։ 3 Եւ տարաւ զիս հոգւով անապատ. և տեսայ կին որ նստած էր կարմիր գազանի վրայ, որ լի էր հայհոյութեան անուններով, և ունէր 4 եօթն գլուխ և տասն եղջիւր։ Եւ կինը ծիրանի և կարմիր հագած էր, և զարդարուած էր ոսկւով և պատուական քարերով և մարգարիտներով, և իր ձեռքն ունէր բաժակ ոսկի լի պղծութեամբը 5 և իր պոռնկութեան անմաքրութիւններով. Եւ անոր ճակատին վրայ գրուած էր անուն, խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկներուն և երկրի պղծութիւններուն մայրը։ 6 Եւ տեսայ կինը որ արբեցած էր սուրբերուն արեամբ և Յիսուսի վկաներուն արեամբ. և երբ տեսայ զնա, զարմացայ 7 զարմացումն մեծ։ Եւ հրեշտակն ըսաւ ինծի, Ընդէ՞ր զարմացար. ես քեզի կ'ըսեմ խորհուրդը, և գազանին որ կը կրէ զնա իր վրայ, և ունի 8 եօթն գլուխ և տասն եղջիւր։ Գազանը զոր տեսար՝ կար և չկայ, և անդունդէն ելլելու և ի կորուստ երթալու վրայ է. և երկրի վրայ բնակողներն որոց անունները գրուած չեն ի սկզբանէ աշխարհի կենաց գրքին մէջ՝ պիտի զարմանան, երբ տեսնեն գազանը թէ կար և չկայ, *թէ և կայ՝։ 9 Հոս է իմաստութիւն ունեցող միտք. եօթն գլուխ եօթն լերինք են, որոց վրայ կը նստի կինը. և 10 եօթն թագաւորներ են. հինգն ինկած են, մին

*Ոմանք, և մօտ է

կը կենայ, և միւսը դեռ եկած չէ, և երբ գայ, 11 փիլ ժամանակ պիտի մնայ։ Եւ գազանը որ կար և չկայ, նա ութերորդ է, և եօթնէն է, և կ'երթայ կորուստ։ 12 Եւ տասը եղջիւրք զոր տեսար՝ տասն թագաւորք են, որ դեռ առած չեն թագաւորութիւն, այլ գազանին հետ իրրև մի ժամ թագաւորներու պէս կ'առնուն իշխանութիւն։ 13 Անոնք մի կամք ունին, և իրենց զօրութիւնը և իշխանութիւնը կու տան գազանին։ Անոնք պատերազմին հետ պիտի պատերազմին. և Գառնուկը պիտի յաղթէ անոնց, քանզի նա է Տէր տէրանց և Թագաւոր թագաւորաց. և անոնք որ անոր հետ են՝ կանչուած և ընտրուած և հաւատարիմ են։ 14 Եւ ըսաւ ինծի, Ջուրերը զոր տեսար, որոց վրայ պոռնիկը նստած է, ժողովուրդներ են և 15 բազմութիւններ և ազգեր և լեզուներ։ Եւ տասն եղջիւրք զոր տեսար գազանին վրայ՝ պիտի ատեն պոռնիկը, և պիտի բնեն զնա մերկ և մերկ, և պիտի ուտեն անոր մարմինը, և այրեն զնա կրակով։ 16 Քանզի Աստուած անոնց սրտին մէջ դրաւ որ կատարեն իր կամքը և մի կամք ըլլան, և իրենց թագաւորութիւնը տան գազանին, մինչև 17 կատարուին Աստուծոյ խօսքերը։ Եւ կինը զոր տեսար՝ այն մեծ քաղաքն է որ կը թագաւորէ երկրի թագաւորներուն վրայ։

Գլ. ԺԸ

1 Եւ այսուհետև տեսայ [ուրիշ] հրեշտակ որ կ'իջնէր յերկնից, և ունէր իշխանութիւն մեծ, և 2 երկիրը լուսաւորեցաւ անոր փառքէն։ Եւ *զօրաւոր ձայնիւ աղաղակեց ըսելով, Ինկաւ, ինկաւ Բաբելոն մեծ, և եղաւ բնակարան դիւաց, և բո-

*Ոմանք, զօրութեամբ մեծ

լոր պիղծ ոգիներու արգելանոց, և բոլոր պիղծ
3 և ատելի թռչնոց վանդակ. Ռանգի անոր կատաղի պոռնկութեան գինիէն խմեցին բոլոր ազգերը, և թագաւորք երկրի պոռնկեցան անոր հետ, և վաճառականք երկրի հարստացան անոր չափազանց
4 զեղուածնէն. Եւ լսեցի յերկինց ուրիշ ձայն որ կ'ըսէր, Ելէք անոր մէջէն, իմ ժողովրդս, որ հաղորդ չըլլաք անոր մեղացը, և ի՛ֆէն չառնուիք
5 անոր հարուածներէն. Ռանգի անոր մեղքերը հասան կեցան մինչև յերկինս, և Աստուած յիշեց անոր անիրաւութիւնները. Հատուցէք նմա
6 չեց անոր անիրաւութիւնները, Հատուցէք նմա ինչպես նա *հատոյց. և կրկնեցէք նմա կրկինն ըստ գործոց նորա. Ի բաժակը զոր լցուց՝ լցէք
7 նմա կրկին. Որչափ փառաւորեց զինք և զկրքութեամբ ապրեցաւ, այնչափ տանջանք և սուգ հատուցէք նմա. քանզի կ'ըսէ իւր սրտին մէջ Թէ նս կը նստիմ թագուհի, և այրի չեմ, և բնաւ
8 սուգ պիտի չտեսնեմ. Վասն որոյ մի օրուան մէջ պիտի գան անոր հարուածները, մահ և սուգ և սով, և պիտի այրի հրով. քանզի հզօր է Տէր
9 Աստուած որ դատեց զնա. Եւ երկրի թագաւորները որ պոռնկեցան անոր հետ և հեշտացան՝ պիտի լան և կոծեն անոր վրայ երբ տեսնեն անոր
10 հրկիզութեան ծուխը. Եւ անոր տանջանաց ահէն հեռուն պիտի կայնին և ըսեն, Վա՛յ, վա՛յ քեզ, Բաբելոն մեծ քաղաք, հզօր քաղաք, որ մի ժա-
11 մու մէջ եկաւ դատաստանդ. Եւ երկրի վաճառականները պիտի ողբան և սգան անոր վրայ. քանզի այլ ևս ոչ ոք կը գնէ անոնց վաճառները,
12 Ոսկւոյ, և արծաթոյ, և ականոց պատուական, և մարգարիտներու, և բեհեզի, և ծիրանւոյ, և մետաքսի, և որդան կարմրոյ վաճառներ, և ամէն խնկոյ փայտ, և ամէն անօթ փղոսկրեայ, և ամէն

*Որ՛ն, հատոյց ձեզ

անօթ պատուական փայտէ և պղնձէ և երկաթէ
13 և մարմարիոնէ, Եւ կինամո՛ն [և համեմո՛ն] և խունկեր, և անուշահոտ իւղ, և կնդրուկ, և գինի, և ձէթ, և նաւիճ, և ցորեն, և արջառներ, և ոչխարներ, և ձիեր, և կառք, և մարմիններ, և
14 մարդոց հոգիներ. Եւ պատուղք որոց կը ցանկար քու անձդ՝ գնացին քենէ, և բոլոր չքեղ և փայլուն բաները կորսուեցան քենէ, և այլ ևս երբէք
15 պիտի չգտնես զանոնք. Այս բաներուն վաճառականները որ անկէ հարստացած էին՝ հեռուն պիտի կայնին անոր տանջանաց ահէն, լալով և
16 սգալով, Եւ պիտի ըսեն, Վա՛յ, վա՛յ, մեծ քաղաք, որ հագած էիր բեհեզ և ծիրանի և որդան կարմիր, և զարդարուած էիր ոսկւով և պատուա-
17 կան քարերով և մարգարտով. Ռանգի այնչափ հարստութիւնը մի ժամու մէջ կորնչաւ. Եւ ամէն նաւավար, և ամէնքը որ կ'երթան նաւով տեղ տեղ, և նաւաստիները և որ ծովու մէջ կը գոր-
18 ծեն՝ հեռու կեցան. Եւ տեսնելով անոր հրկիզութեան ծուխը՝ կ'աղաղակէին ըսելով, Ո՞վ նման է
19 այս մեծ քաղաքին. Եւ ցանցին հող իրենց գլուխներուն վրայ, և լալով և սգալով կ'աղաղակէին ըսելով, Վա՛յ, վա՛յ մեծ քաղաքին, ուր հարստացան անոր պատուականութենէն ամէնքը որ ունէին նաւեր ծովուն վրայ. վասն զի ամայացաւ
20 մի ժամու մէջ. Ուրախացիր անոր վրայ, երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք, քանզի Աստուած տուաւ ձեր վրէժն անկէ.
21 Եւ զօրաւոր հրեշտակ մը առաւ քար իբրև մեծ երկանաքար, և ծովը նետեց ըսելով, Այսպէս ուժով պիտի նետուի Բաբելոն, մեծ քաղաքը, և
22 այլ ևս պիտի չգտնուի. Եւ քնարահարաց և երաժշտաց և սրնգահարաց և փողահարաց ձայնն այլ ևս պիտի չլսուի ի քեզ. և ամէն արուեստի ճարտար ևս պիտի չգտնուի ի քեզ. և աղօրեայն

23 ձայնն այլ եւս պիտի չլսուի ի քեզ. եւ ձրագի լոյսն
այլ եւս պիտի չերեւնայ ի քեզ. և փեսային ձայնը
և հարսին ձայնը այլ եւս պիտի չլսուին ի քեզ.
քանզի քու վաճառականներդ էին երկրի մեծա-
մեծները. վասն զի բոլոր ազգերը մոլորեցան քու-
24 կախարդութեամբդ. եւ մարգարէներուն և սուր-
բերուն և երկրի վրայ բոլոր սպաննուածներուն
արիւնը գտնուեցաւ անոր մէջ։

ԳԼ. ԺԹ

1 Եւ յետ այնորիկ լսեցի յերկինս իբրեւ մեծ բազ-
մութեան ձայն մեծ որ կ'ըսէր, Ալէլուիա. փրկու-
թիւն և փառք և պատիւ և զօրութիւն *Աստու-
2 ծոյն մերոյ. վասն զի ճշմարիտ և արդար են ա-
նոր դատաստանները, քանզի դատեց մեծ պոռ-
նիկը, որ իւր պոռնկութեամբ ապականեց զերկ-
իրը, և պահանջեց իւր ծառաներուն արեան
3 վրէժն անոր ձեռքէն։ Եւ կրկին անգամ ըսին,
Ալէլուիա։ Եւ անոր ծուխը կ'ելլէ յաւիտեանս
4 յաւիտենից։ Եւ քսան և չորս երիցունք և չորս
կենդանիք իյնան և երկիր պագին Աստուծոյ որ
5 կը նստի աթոռը, և ըսին, Ամէն, Ալէլուիա։ Եւ
աթոռէն ելաւ ձայն որ կ'ըսէր, Մեր Աստուծոյն
օրհնութիւն տուէք, անոր բոլոր ծառաները, և
դուք որ անկէ կը վախնաք, փոքունք և մեծա-
6 մեծք։ Եւ լսեցի իբրեւ ձայն մեծ բազմութեան,
և իբրեւ ձայն չատ ջուրերու, և իբրեւ ձայն
սաստիկ որոտմանց որ կ'ըսէին, Ալէլուիա, քան-
զի Ամենակալ Տէր Աստուած [մեր] թագաւորեց։
7 Խնդանք և ուրախանանք և փառք տանք անոր,
քանզի Գառին հարսանիքն հասաւ, և անոր կինը
8 պատրաստեց զինք։ Եւ անոր տրուեցաւ հագնիլ

*Ոմանք, Տէր Աստուծոյն

մաքուր և լուսաւոր բեհեզ, (քանզի բեհեզը
9 սուրբերուն արդարութիւնն է։) Եւ ըսաւ ինձ,
Գրէ, երանելի են անոնք որ կոչուած են յընթ-
րիս հարսանեաց Գառնին։ Եւ ըսաւ ինձ, Ասոնք
10 են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը։ Եւ ինկայ անոր
ոտից առջեւ, որ երկրպագէի անոր. և ըսաւ ինձ,
Զգուշացիր, մի՛ ընէր. ես ալ քու և քու եղբայրներուդ, որ ունին Յիսու-
սի վկայութիւնը. Աստուծոյ երկրպագէ։ (Քանզի
Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հո-
գին է։)
11 Եւ տեսայ զերկինս բացուած. և ահա ապիտակ
ձի, և անոր վրայ հեծեալը կ'ըսուի Հաւատարիմ
և Ճշմարիտ, և արդարութեամբ կը դատէ և կը
12 պատերազմի. Եւ անոր աչքերն իբրեւ բոց
հրոյ, և անոր գլխուն վրայ շատ թագեր, և ու-
նէր գրուած անուն մը զոր ոչ ոք գիտէր, բայց
13 միայն նա։ Եւ հագած էր հանդերձ արեամբ ներ-
կուած. և անոր անունը կ'ըսուի Բան Աստուծոյ։
14 Եւ երկինքէ զօրքը կ'երթային անոր ետեւէն ապի-
տակ ձիերով, սպիտակ և մաքուր բեհեզներ հա-
15 գած։ Եւ անոր բերանէն կ'ելլէր սրած սուր, որ-
պէս զի անով զարնէր ազգերը. և պիտի հովուէ
նա զանոնք երկաթէ գաւազանաւ, և պիտի կո-
խէ նա Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկու-
16 թեան գինւոյն հնձանը։ Եւ իւր պատմուճանին
վրայ և իւր ազդր վրայ գրուած անուն,
ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԷՐ ՏԷՐԱՆՑ։
17 Եւ տեսայ հրեշտակ մը որ կանգնած էր արե-
գական մէջ, և մեծ ձայնիւ ազաղակեց յերկինս
թռչող բոլոր թռչնոց՝ ըսելով, Եկէք, ժողովեցէք
18 *ի մեծ ընթրիս Աստուծոյ, Որ ուտէք թագա-
ւորաց մարմինները, և հազարապետաց մարմիննե-

*Ոմանք, յընթրիս մեծ Աստուծոյ

րը, և զօրաւորաց մարմինները, և ձիոց և անոնց հեծելոց մարմինները, և ամենուն մարմինները, թէ՛ ազատաց և թէ՛ ծառայից, թէ՛ փոքունց և թէ՛ մեծամեծաց,

19 Եւ տեսայ գազանը և երկրի թագաւորներն և անոնց զօրքն ի մի ժողոված պատերազմ բնկել անոր հետ որ ձիուն վրայ հեծած էր, և ա-
20 նոր զօրաց հետ։ Եւ գազանը բռնուեցաւ, և անոր հետ սուտ մարգարէն որ անոր առջև բրաւ նշաններ, որովք մոլորեցուց գազանին դրոշմն ընդունողները, և անոր պատկերին երկրպագողները. երկուքն ալ ողջ ողջ ծծմբով վա-
21 ռած կրակին լիճը նետուեցան։ Եւ ուրիշներն սպաննուեցան ձիուն վրայ հեծելոյն սուրէն որ անոր բերնէն կ'ելլէր, և բոլոր թռչունք յագեցան անոնց մարմիններէն։

Գլ. Ի

1 Եւ տեսայ հրեշտակ որ կ'իջնէր յերկինից, և ունէր անդնդոյն բանալին և մեծ չղթայ իւր ձեռ-
2 քը։ Եւ բռնեց վիշապն, այսինքն հին օձը որ է բանսարկուն և Սատանան, և կապեց զնա հա-
3 զար տարի. Եւ նետեց զնա անդունդը, և փակեց և կնքեց վրայէն, որ այլ ևս չմոլորեցնէր ազգերը, մինչև որ հազար տարին լրանար, և անկէետև պարտ է նմա արձակուիլ փիչ մի ժամանակ։

4 Եւ տեսայ աթոռներ, և նստան անոնց վրայ. և արուեցաւ անոնց դատաւորութիւն. Եւ հոգիներ նաև Յիսուսի վկայութեանը համար և Աստուծոյ խօսքին համար զլխատուածներուն հոգիները, և անոնք որ երկրի չպագին գազանին և ոչ անոր պատկերին, և չառին անոր դրոշմն իրենց ճակատներուն վրայ և իրենց ձեռաց վրայ. և ապրեցան

և թագաւորեցին Քրիստոսի հետ հազար տարի։
5 Եւ ուրիշ մեռելք չապրեցան մինչև կատարուեցաւ հազար տարին. այս է առաջին յարութիւնը։
6 Երանելի և սուրբ է այն որ բաժին ունի առաջին յարութեան մէջ.ասոնց վրայ չունի իշխանութիւն երկրորդ մահն, այլ անոնք պիտի ըլլան Աստուծոյ և Քրիստոսի քահանաները, և անոր հետ պիտի թագաւորեն հազար տարի։
7 Եւ երբ հազար տարին լրանայ, պիտի արձակուի Սատանան իւր բանտէն. և պիտի ելլէ և մոլորեցնէ ազգերը որ երկրի չորս անկիւններն են, Գոգ և Մագոգ, որ զանոնք պատերազմի
8 ժողովէ, որոց թիւն է իբրև զաւազ ծովուն։ Եւ երկրի ընդարձակութեան մէջ ելան, և պատեցին սուրբերուն բանակը և սիրելի քաղաքը չորս
9 կողմէն։ Եւ յերկնից կրակ իջաւ Աստուծմէ և սպառեց զանոնք. և Բանսարկուն որ զանոնք մոլորեցուց՝ նետուեցաւ կրակի և ծծմբոյ լիճը,
10 ուր էին գազանը և սուտ մարգարէն. և պիտի չտրտնջուին օր և գիշեր յաւիտեանս յաւիտենից։
11 Եւ տեսայ աթոռ մեծ սպիտակ, և անոր վրայ նստողը, որոյ երեսէն փախան երկիր և երկինք,
12 և տեղ չգտնուեցաւ անոնց։ Եւ տեսայ փոքր և մեծ մեռելները որ Աստուծոյ առջև կանգնած էին. և գիրքերը բացուեցան, և ուրիշ գիրք մը բացուեցաւ, այսինքն կենաց [1]գիրքը. և գիրքերուն մէջ գրուածներէն մեռելները դատուեցան
13 իրենց գործերուն համեմատ։ Եւ ծով տուաւ իւր մեռելները, և մահ և դժոխք տուին իրենց մեռելները. և դատուեցան, իւրաքանչիւր իւր գոր-
14 ծերուն համեմատ։ Եւ մահ և դժոխք նետուե-
15 ցան կրակի լիճը. այս է երկրորդ մահը։ Եւ ով

[1] Ոմանք, աթոռոյն

որ գրուած չգտնուեցաւ կենաց գիրքին մէջ՝ նետուեցաւ կրակի լիճը։

Գլ. ԻԱ

1 Եւ տեսայ նոր երկինք և նոր երկիր. քանզի ա-
ռաջին երկինքն և առաջին երկիրն անցան, նաև
2 ծով չկար։ *Եւ տեսայ սուրբ քաղաքը, զնորն Ե-
րուսաղէմ, որ կ'իջնէր յերկնից Աստուծմէ, իբրև
զարդարուած հարսն, պատրաստեալ իւր երկանը
3 համար։ Եւ լսեցի յերկնից ձայն մեծ որ կ'ըսէր,
Ահա Աստուծոյ խորանը մարդոց մէջ, և պիտի
բնակի անոնց հետ. և անոնք պիտի ըլլան անոր
ժողովուրդը, և ինքն Աստուած պիտի ըլլայ անոնց
4 հետ էջէ անոնց Աստուածը. Եւ †նա պիտի սրբէ
անոնց աչուըներէն ամէն արտասու, և մահ ոչ ևս
պիտի ըլլայ, ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ
պիտի ըլլայ այնուհետև, քանզի առաջին բաներն
5 անցան։ Եւ այն որ աթոռոյն վրայ կը նստէր՝
ըսաւ, Ահա նոր կ'ընեմ ամէն բան։ Եւ ըսաւ ինձ,
Գրէ, քանզի ճշմարիտ և հաւատարիմ են այս
6 խօսքերը։ Նաև ըսաւ ինձ, եղաւ. ես եմ Ալփա
և Օմէգա, Սկիզբն և վախճան. ես ծարաւեացն ձրի
7 պիտի տամ կենաց ջրոյ աղբերէն։ Ով որ կը յաղ-
թէ, պիտի ժառանգէ ‡ամէն բան՝ և ես պիտի
ըլլամ անոր Աստուած, և նա պիտի ըլլայ ինձ
8 որդի։ Բայց երկչոտներուն, և անհաւատներուն,
և պիղծերուն, և մարդասպաններուն, և պոռ-
նիկներուն, և կախարդներուն, և կռապաշտնե-
րուն, և բոլոր սուտխօսներուն բաժինը պիտի ըլ-
լայ կրակով և ծծմբով վառած լճին մէջ, որ է
երկրորդ մահը։

*Ոմանք, Եւ ես Յովհաննէս

†Ոմանք, Աստուած ‡Ոմանք, այս բաները

9 Եւ եօթն հրեշտակներէն որ ունէին եօթն վեր-
ջին հարուածներով լի եօթն սկաւառակները՝ մին
եկաւ առ իս, և խօսեցաւ ինձի հետ և ըսաւ, Եկ,
10 ցուցնեմ քեզ հարսը, Գառին կինը։ Եւ տարաւ
զիս հոգւով մեծ և բարձր լեռ մը, և ցուցուց
ինձ սուրբ Երուսաղէմ *քաղաքը, որ կ'իջնէր
11 յերկնից Աստուծմէ. Եւ ունէր Աստուծոյ փառքը,
և անոր լուսաւորութիւնը նման էր չատ պատուա-
կան քարի, ակնվանայ երեւութով իբրև յասպիս
12 քար։ Եւ անոր պարիսպը մեծ և բարձր էր, և
ունէր երկոտասան դուռ. և դուռներուն վրայ
հրեշտակներ, և անուններ գրուած էին, որ են՝ Իսրայելի որդւոց
13 երկոտասան ցեղերուն անուններէն։ Արեւելեան
կողմէն երեք դուռ, և հիւսիսային կողմէն երեք
դուռ, և հարաւային կողմէն երեք դուռ, և ա-
14 րեւմտեան կողմէն երեք դուռ։ Եւ քաղաքին պա-
րիսպն ունէր երկոտասան հիմ, և անոնց վրայ
Գառնոյն էին Գառնին երկոտասան առաքելոց [եր-
կոտասան] անուններըը։ Եւ ինձի հետ խօսողն ու-
նէր չափ եղէգ ոսկի, որպէս զի չափէր քաղաքը
16 և անոր դուռները և անոր պարիսպները։ Եւ
քաղաքը քառակուսի էր, և անոր երկայնութիւնն
էր այնչափ՝ որչափ լայնութիւնը. և չափեց քա-
ղաքն †ի եղէգով երկոտասան հազար ասպարէզ.
անոր երկայնութիւնը և լայնութիւնը և բարձրու-
17 թիւնը հաւասար էին։ Եւ չափեց անոր պարիսպը
հարիւր քառասունչորս կանգուն, մարդու չա-
փով, այսինքն հրեշտակին։ Եւ անոր պարսպին
չինուածն էր յասպիս, և քաղաքը զուտ ոսկի էր
19 մաքուր ապակւոյ նման։ Եւ քաղաքին պարսպին
հիմերն էին ամէն թեւով պատուական քարերով
զարդարուած. առաջին հիմն էր յասպիս, երկ-

*Ոմանք, մեծ քաղաքը

բորդը՝ չափիւղայ, երբորդը՝ քաղկեդոն, չորբորդը՝ զմրուխտ, հինգերորդը՝ եղինգաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բիւրեղ, իններորդը՝ ազգաճոն, տասներորդը՝ քրիսոպրասոս, մեսասաներորդն՝ յակինթ, երկոտասաներորդն՝ ամեթովս։ Եւ երկոտասան դուռներն էին երկոտասան մարգարիտ, իւրաքանչիւր դուռն էր մի մարգարտէ. և քաղաքին հրապարակն էր մաքուր ոսկի, նման թափանցիկ ապակւոյ։ Եւ անոր մէջ տաճար չտեսայ, քանզի Տէր Աստուած Ամենակալ և Գառնուկն է անոր տաճարը։ Եւ քաղաքը չունի պէտք արեգական և լուսնի, որ լուսաւորեն զնա, քանզի Աստուծոյ փառքը կը լուսաւորէ զնա, և անոր ճրագը Գառնուկն է։ Եւ [փրկուածներուն] ազգերը պիտի քալեն անոր լոյսովը, և երկրի թագաւորները պիտի բերեն իրենց փառքը և պատիւն անոր մէջ։ Եւ անոր դուռները պիտի չգոցուին ցերեկ. (վասն զի հոն գիշեր պիտի չըլլայ·) Եւ ազգաց փառքը և պատիւը պիտի բերեն անոր մէջ։ Եւ հոն բնաւ *անմաքրութիւն պիտի չմտնէ, և ոչ պղծութիւն և սուտութիւն գործող մը, այլ միայն անոնք որ գրուած են Գառին կենաց գիրքին մէջ։

ԳԼ. ԻԲ

1 Եւ ցուցուց ինձ կենաց ջրոյ †գետ, պայծառ իբրև սպիտանի, որ կ'ելլէր Աստուծոյ և Գառնին
2 աթոռէն։ Եւ *հրապարակին մէջ, և գետոյն մի կողմը և միւս կողմը կար կենաց ծառ, որ կը բերէր երկոտասան պտուղ, և կը տար

*Ոմն., անմաքրութիւն ընող
†Ոմն., մաքուր գետ

իւր պտուղն ամէն ամիս. և ծառին տերևներն
3 էին ի բժշկութիւն ազգաց։ Եւ այլևս բնաւ նզովք պիտի չըլլայ. և անոր մէջ պիտի ըլլայ Աստուծոյ և Գառնին աթոռը, և անոր ծառաները պիտի
4 պաշտեն զնա. Եւ պիտի տեսնեն անոր երեսը, և անոր անունը պիտի ըլլայ անոնց ճակատներուն
5 վրայ։ Եւ հոն այլևս գիշեր պիտի չըլլայ, և ճրագ և արեգական լոյս չեն պիտոյ, քանզի Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք, և պիտի թագաւորեն յաւիտեանս յաւիտենից։

6 Եւ ըսաւ ինձ, Այս խօսքերն հաւատարիմ են և ճշմարիտ. և *սուրբ մարգարէներուն Տէր Աստուածը ղրկեց իւր հրեշտակը ցուցնել իւր ծա-
7 ռաներուն ինչ որ չուտով պարտ ըլլալ։ Ահա ես կու գամ վաղվաղակի. երանի անոր որ կը պահէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը։

8 Եւ ես Յովհաննէս լսեցի և տեսայ այս բաները. և երբ լսեցի և տեսայ, ինկայ որ երկրպագեմ առաջի ոտից հրեշտակին որ կը ցուցնէր ինձ այս
9 բաները։ Եւ ըսաւ ինձ, Զգուշացիր, մի՛ ընէր. քանզի ես քու և քու եղբայրներուդ մարգարէներուն և այս գիրքին խօսքերը պահողներուն
10 ծառայակից եմ։ Աստուծոյ երկրպագէ։ Եւ ըսաւ ինձ, Այս գիրքին մարգարէութեան խօս-
11 քերը մի՛ կնքեր, քանզի ժամանակը մօտ է։ Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ այլևս անիրաւութիւն թող ընէ, և այն որ ապտակի է՝ այլևս ապտակի թող ըլլայ, և այն որ արդար է՝ այլևս արդար ըլլայ, և այն որ սուրբ է՝ այլևս սուրբ ըլլայ։
12 Ահա ես կու գամ վաղվաղակի, և վարձքս ինձ հետ է՝ հատուցանել իւրաքանչիւրին իւր գոր-
13 ծոցը համեմատ։ Ես եմ Ալֆա և Օմէգա, Առա-
14 ջինն և վերջինն, Սկիզբն և վախճան։ Երանելի

*Ոմն., մարգարէից հոգիներուն

անունք որ կը կատարեն անոր պատուիրանները,
որպէս զի իշխանութիւն ունենան կենաց ծառին
15 վրայ, և մտնեն գուռներէն ներս քաղաքը։ Բայց
դուրս պիտի ձառ չուները և կախարդները և
պոռնիկները, և սպանողները և կռապաշտները
և այն ամէնը որ կը սիրէ և կ'ընէ սուտութիւն։
16 Ես Յիսուս իմ հրեշտակս ղրկեցի այս բաները
վկայելու ձեզ եկեղեցիներուն *մէջ։ Ես Դաւթի
արմատը և ցեղն եմ, և առաւօտեան պայծառ
17 աստղն։ Եւ Հոգին և հարսը կ'ըսեն, Եկ։ և ով
որ կը լսէ՝ թող ըսէ, Եկ։ և ով որ ծարաւի է՝
թող գայ, և ով որ կ'ուզէ՝ կենաց ջուրն առ-
նու ձրի։
18 †Ես կը վկայեմ ամէնուն որ կը լսէ այս գիրքին
մարգարէութեան խօսքերը. եթէ ոք աւելց վրայ
յաւելու բան մը, Աստուած պիտի յաւելու անոր
վրայ հարուածները որ գրուած են այս գիրքին
19 մէջ։ Եւ եթէ ոք այս մարգարէութեան գիրքին
խօսքերէն պակսեցունէ բան մը, Աստուած պի-
տի պակսեցունէ անոր բաժինը կենաց ‡գիրքէն
և սուրբ քաղաքէն ||որ գրուած են այս գիրքին
20 մէջ։ Այս բաներուն վկայութիւն առողը կ'ըսէ,
Այո, կու գամ ես վաղվաղակի։ Ամէն, եկ, Տէր
21 Յիսուս։ Շնորհք Տէրոջն մերոյ Յիսուսի Քրիստոսի հետ
ընդ **ձեր ամենուն։ Ամէն։

---

*Կամ, վրայ
†Ոմանք, Գանգի
‡Ոմանք, ծառէն
||Ոմանք, և այն բաներէն որ
**Ոմանք, բոլոր սուրբերուն

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL041171